

ԴԷՊԻ ՍԵՒՐԻ 100-ԱՄԵԱԿ. ԱՅԺՄԷԱԿԱՆ ՀՆՋԵՂՈՒԹԵԱՄԲ

Լիբանանեան տարին կը փակուի անորոշութեամբ եւ անձկութեամբ: Անհեռանկար իրավիճակ է հասարակութեան համար, եւ կարելի է ըսել՝ նաեւ պետութեան համար, որ գործընթացին ընդհանուր միտումներուն վրայ ազդեցիկութեան գործօն ունենալու համոզիչ գործողութիւններ չի կատարեր:

Լիբանանեան հանգոյցը միջազգայնացած է նաեւ բացայայտօրէն: Տարածաշրջանին մէջ գլխաւոր դերակատար-պետութիւնները յայտարարողական հարթութեան վրայ ուղղակի-անուղղակի իրար կ'արձագանգեն, կը հակազդեն եւ կ'արգելակեն բնական գործընթացները:

Տնտեսական պատերազմի կամ տնտեսական պաշարման տեսք ունի այն, ինչ որ տեղի կ'ունենայ Լիբանանի մէջ, յատկապէս ֆինանսական աննախընթաց ձգնաժամի բոլոր հետեւանքներով: Ըստ էութեան եւ աւելի հեռուէն կեդրոնացող հայեացք մը կը համոզէ, որ ընդհանուր հաշուով համաշխարհային տնտեսական պատերազմի մէջ է ամբողջ երկրագունդը: Որոշ երկիրներ ուղղակի ձակատումի մէջ են, ուրիշներ անմիջական ազդեցութիւնը կը կրեն, եւ կայ պետութիւններու դասակարգ մը, որ անուղղակի հետեւանքները կը կրէ այս բոլորին: Բայց պատերազմը համաշխարհային է եւ կլանած է աշխարհաքաղաքականութեան հիմնական դերակատարները:

Լիբանանը, կարելի է ըսել, անուղղակիէն մէկ աստիճան դէպի ուղղակի մարտադաշտի անցում կատարած է: Այն ինչ որ զինուորական առումով կարելի չեղաւ իրականացնել այս երկրին մէջ, հիմա փորձ կը կատարուի տնտեսական պաշարումով իրավիճակ յառաջացնելու:

Հետևաբար քաղաքական տրամաբանությունը կը յուշէ, որ նախքան պեղումներու, ուժանիւթի լիարժէք օգտագործման թէ իրանեան յենակէտերու չէզոքացման նպատակներով բացատրուող ձնշամիջոցները հուն չեն փոխեր, այնքան ատեն որ Լիբանանէն դուրս առնչուած գերտէրութիւններու ներկայացուցիչներուն միջեւ չեն կայանար համաձայնութիւններ:

Բախումներու հետեւանքները շատ արագ կրնան վերածուիլ համաձայնութիւններու հետեւանքներու, երբ ազդեցութեան գօտի ունեցող պետութիւնները կոճակները սեղմեն: Հանգուցալուծումը դեռ չ'երեւար:

Տարածաշրջանին մէջ Թուրքիան չի թաքցներ օսմանակաւնութիւնը վերականգնելու իր նկրտումները: Կարձատեւ նուաձումներով, դիւրաբեկ սերձեցման դաշինքներով Թուրքիան չի յաջողիր իրականացնելու այն, ինչ որ նպատակադրած է:

Անգարայի նկրտումները պատասխան քայլերու կ'արժանանան. այդ պատասխաններուն մէջ Յեղասպանութեան ձանաչման յաղթարշաւը նոր փուլեր կը նուաձէ: Թուրքիան յաւելեալ պատժամիջոցներու կրնայ ենթարկուիլ: Աշխարհաքաղաքական մակարդակի վրայ չէ բացառուած, որ Սերի համաձայնագիրին առնչուած որոշումներուն մասին միջազգային վերլուծական թէ պետական մակարդակներու վրայ յիշեցումներ եւ յղումներ կատարուին:

Սերի պատմական տրամաբանութիւնն ու որոշումներու առանցքները կրնան այժմէական հնչեղութիւն ստանալ: Հայկական կողմը բոլոր նախադրեալներն ու պատձառները ունի արժանատրապէս քաղաքական հնչեղութիւն տալու Սերի համաձայնագիրի 100-ամեակին առիթով կազմակերպուելիք բոլոր տեսակի նշումներուն:

**«Ազդակ»-ի 2020-ի բացառիկ
հրատարակութիւնը կը ստանձնեն
տեր եւ տիկին Ալեքքօ եւ Անի Պեզիբեաններ:**

2020-Ը ՄԱՐՏԱՀՐԱԻՐ Ի

ՃԳՆԱԺԱՄԻ ՄԷՉ՝ ԻՐԱՏԵՍՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ

Լ աւ յիշատակներով չէ, որ կ'աւարտենք 2019 տարին, եւ վստահաբար բարձր տրամադրութիւններով չէ, որ կը դիմաւորենք 2020 կոչուած Նոր Տարին:

Բարի տրամադրութիւններով ու հաւաքական ճիգերով 2018-ի յարաբերաբար աւելի լաւ տարի մը բոլորելու մեր բոլորին կամքը բաւարար չեղաւ, որ մենք 2019 տարին հանգիստ սրտով ճամբէինք:

Անկախ ներհայկական ճակատի տարբեր դաշտերու վրայ արձանագրուած յաջողութիւններէն, գոյատեւման ու երբեմն զարգացման բացառիկ ճիգերէն, փաստօրէն Լիբանանը մտաւ յորձանուտի մը մէջ, որուն ծանր նախանշաններն սկսած էին տարեսկիզբին, շարունակուեցան տարուան ընթացքին ու անոր աւարտին, երկիրը մուտք գործեց փակու-

ղի, որմէ դուրս գալու համար ցարդ ի գործ դրուած ջանքերը մեծ ակնկալութիւններու չեն առաջնորդներ:

Փաստօրէն այն ինչ որ պատերազմի արհաւիրքը չէր կրցած պարտադրել լիբանանցի ժողովուրդին, նորատեղծ կացութիւնը այսօր յաջողեցաւ հարուածել լիբանանցի քաղաքացիին տնտեսական կարողութիւնները, ընկերային տագնապներու դէմ կանգնելու խիզախութիւնը ու զայն վերածել սոսկ իր օրապահիկը ապահովելու եւ նուազագոյնով գոհանալու ձգտող թիւ-քաղաքացիի, որուն համար իր ընտանիքին հացը դարձաւ միակ նպատակակէտ, ճամբան լայն բանալով արժեքային համակարգի քանդումին, գաղափարական սնանկութեան եւ ընդհանրական հեղինակազրկումին:

Տասնամեակներու ընթացքին ըն-

կերային, տնտեսական, կենցաղային, ելեւմտական եւ կրթական մարզերու մէջ կատարուած բացթողումները, միտումնաւոր ու շահախնդիր անտեսումները, իշխանական սակաւապետութեան շահամոլութիւնն ու ընչաքաղցութիւնը, պետական հարստութեան ու մուտքերու իւրացումը, կաշառակերութիւնը, փտածութիւնը, դասակարգային հարստահարութիւնը փաստօրէն բաւարար էին, որ երկիրը հասներ իր այսօրուան վիճակին:

Իրերայաջորդ վարչակարգերու թէ կառավարութիւններու տնտեսական զարգացման անհաւասարակչիռ նախաձեռնութիւնները, ծառայողական տնտեսութեամբ փոխարինելու արտադրողական եւ արդիւնաբերական տնտեսութիւնը, հարկային անհաւասարութիւնն ու անարդար բաժանումը, երկիրը ներածման դրախտի վերածելով ճարտարարուեստի, փոքր արտադրութեանց թէ երկրագործութեան հարուածը եւ դեռ երկրի ենթակառոյցներուն, առողջապահական թէ ընկերային կարիքներու նկատմամբ անբաւարար հոգածութիւնն ու երբեմն անտարբերութիւնն ու պատասխանատուութեանց թօթափումը յարդեցին ճամբան ճգնաժամային այս հանգրուանին:

Եւ պատահեցաւ անխուսափելին:

Այլ բան ակնկալել կարելի չէր լիբանանցի ժողովուրդէն:

Դանակը հասած էր ոսկորին:

Բոլոր համայնքներէն, բոլոր խաւերէն բոլոր դասակարգերէն նոյնիսկ փտածութեան մաս կազմող եւ փտածութեամբ իրենց հարստութիւնը դիզած քաղաքայիններ 17 հոկտեմբե-

րին իջան փողոց ու իրենց հաւաքական պոռթկումը, ցասումը կամ ըմբոստութիւնը արտայայտեցին մերժելով ամէն հեղինակութիւն, կիսալուծում կամ ալալիբանանեան կարգադրութիւն:

Յեռու դաւադրական տեսութեան վարկածէն, թէ որոնք, ինչու, ինչպէս կը կանգնին նման ժողովրդային շարժումի մը ետին, հարցը չի դադիր տազնապ ըլլալէ եւ պոռթկումին տուն տուող պատճառներու առարկայականութիւնը վիճելի չի դարձրեր:

Այս բոլորը միաժամանակ մեր հարցերն են:

2020-ը կը դիմաւորենք խոր մտահոգութեամբ, տազնապահար տրամադրութեամբ եւ ոչ պայծառ ապագայի մը ուրախ կանխատեսութեամբ:

Ու հետեւաբար՝ ողբա՞նք:

Արտասուինք եւ մեր բա՞խտը անիծենք:

Խուճապ ստեղծենք:

Եղերամա՞յր դառնանք եւ շիրմաքա՞ր դնենք լիբանանահայութեան վրա՞յ:

Յոռետեսութեան ու լաւատեսութեան միջեւ այսօր մեզի համար անհրաժեշտը՝ իրատեսութիւնն է, ու պատասխանատուութիւնը քաջաբար վերցնելու մարտահրաւերը թէ՛ անհատական, թէ՛ հաւաքական իմաստով:

Իրատեսութիւնը՝ քննելու, թէ ո՞ր է լիբանանահայութիւնը այսօր եւ ի՞նչ մարտահրաւերներու առջեւ կը գտնուի ան:

Ի՞նչ են անոր կարիքները ճշգրիտ ձեւով եւ առանց շահագործումի:

Իրատեսությունը կը պահանջէ առաջնահերթութեանց ճշդում, նախապատուութեանց յստակացում, համեստութիւն մեր ծրագրաւորման մէջ:

Իսկ պատասխանատուութիւնը՝ հաւաքաբար:

Անցնող երեք շաբաթներուն, զանազան հաստատութեանց, բարերարներու թէ անհատ ազգայիններու լիբանանահայութեան ճգնաժամին հասնելու նուիրաբերումը բաւարար փաստ է այն հաւատքին, որ տակաւին գոյութիւն ունի մեր ուժին ամրապնդման անհրաժեշտութեան հանդէպ:

Այս ճիգը պիտի ու պետք է շարունակուի անկասկած, ոչ միայն Լիբանանի մէջ այլ մանաւանդ Հայաստան եւ սփիւռքեան միւս գաղութներուն մէջ, իբրեւ համահայկական հզօրութեան պահպանման հրամայական:

Բայց միաժամանակ խուճապէն անդին, մենք իբրեւ լիբանանահայեր պարտինք ըլլալ նաեւ զուսպ եւ չշահագործենք հաւաքական զօրակցութեան արտայայտութիւնները:

Առաջին օրինակը պիտի տանք մենք, կարիքը ունեցողը զիջելով ծայրայեղ կարիքաւորին, կարելոր նախաձեռնութիւն մը ունեցողը զիջելով աւելի կարելոր նախաձեռնութեան մը, խնայողութեամբ տնտեսելով մեր անհատական թէ հաւաքական առօրեան:

Եւ դեռ, իբրեւ լիբանանահայութիւն, վերատեսութեան ենթարկելով մեր առաջնահերթութիւնները, պարտինք առնել դժուար որոշումներ, երբեմն նաեւ ցաւցնող ու կարծր, թէ

եկեղեցական, թէ միութենական թէ հասարակական տարբեր բնագաւառներու մէջ: Առաջնահերթը՝ հայ դպրոցն է եւ հայ ընտանիքի պահպանումը:

Ընդունինք, որ 2020 տարին դժուար տարի մը պիտի ըլլայ բոլորիս համար:

Իրատեսութեամբ, պատասխանատուութեամբ ու հաւաքաբար կրնանք յաղթահարել այս տագնապը եւս.

Նախ՝ մենք մեր հետ ըլլալով:

Ապա արդար ակնկալութեամբ պահանջելով որ Հայաստանն ու սփիւռքը ըլլան մեր հետ:

Եւ բոլորս՝ իրարու հետ, միասնաբար:


Իրատեսութեամբ ու հաւաքական պատասխանատուութեամբ:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

105-ԱՄԵԱԿ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 130-ԱՄԵԱԿ ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Երբ Հայ յեղափոխական դաշնակցությունը ծնունդ առաւ 130 տարի առաջ, Հայ ժողովուրդը բազմահազար տարիներու ճամբայ կտրած էր ու պատմութիւն կերտած, իսկ Հայ դատ հասկացողութիւնը արդի ժամանակներու իր տարազաւորումը գտած էր քանի մը տասնամեակ առաջ, հակառակ անոր, որ մեր ժողովուրդը Դատ ունէր հարիւրաւոր տարիներէ ի վեր, սկսեալ այն օրէն՝ երբ մեր պատմական հայրենիքին մէջ կորսնցուցած էինք անկախ պետականութիւնը, մեր հայրենիքն ու ժողովուրդը բաժանումի եւ բռնադատութիւններու ենթակայ դարձած էին մօտակայ եւ հեռաւոր կայսրութեանց մրցակցութեան հետեւանքով:

Դաշնակցութեան ծնունդը բնական արդիւնքն էր 19-րդ դարու եւ մասնաւորաբար անոր երկրորդ կիսուն մեր շուրջ ստեղծուած աշխարհաքաղաքական, ընկերային ու տնտեսական պայմաններուն: Անիկա մեր ժողովուրդին ու բռնագրաւեալ հայրենիքի կեանքին մէջ մուտք գործեց՝ միաւորելու համար մեր Դատին ի խնդիր պայքարի դաշտ մտած ձեռքերը՝ Ֆետային, մտաւորականն ու հաւաքական կեանքի բոլոր կալուածներու մէջ գործ կատարողները: Ան բարձրացուցած էր դրօշ մը, որուն վրայ կ'երեւէին Իսրայէլ Օրիէն մինչեւ Խրիմեան Հայրիկի, հայկական քաղաքական կազմակերպութեանց ու կուսակցութեանց ստորագրութիւնները. հոն արձանագրուած էր նաեւ «Ազատութիւն կամ մահ» վճիռը, որովհետեւ ժողովուրդը մատուած էր այնպիսի դաժան պայմաններու,



որոնց մէջ պատուով մեռնիլը նախամեծար էր, քան անազատ եւ ստրուկ գոյութիւն մը քարշ տալը:

130 տարի առաջ, Դաշնակցութիւնը պատմութեան բեմը մտաւ ԾԱՌԱՅԵԼՈՒ համար մեր ժողովուրդին ու Դատին, իսկ երբ կ'ըսենք Դատ, ի մտի ունինք այս հասկացութեան ամենէն լայնածիր ու համապարփակ իմաստը, Դատ՝ որ իրերայաջորդ տասնամեակներու ապրեցաւ իր յեղափոխութիւնը, ժողովուրդի տարրական իրաւունքներու պաշտպանութենէն անցաւ հայրենի հողի կորուստի ու միլիոններու բնաջնջման փուլերէն, հասնելու համար լիարժէք պահանջատիրութեան հետագայի տարագումներուն, որոնք մեր կեանքին մէջ ներկայ են մինչեւ այսօր:

Կրկնենք. Դաշնակցութիւնը Հայ ժողովուրդի կեանքի բեմը մտաւ իբրեւ ծառայող զինւոր. առաջին օրէն իսկ, ան չեղաւ «ընթացիկ» կուսակցութիւն, որ կրնայ ժամանակի հովերուն հետ այլատեսակ փոփոխութիւններու ենթարկուիլ (հայկական ու միջազգային բեմին վրայ գործող այդպիսի կուսակցութիւն-

ներով կարելի է երկար ցանկեր կազմել), այլ ան իրեն համար գծեց անյեղի ուղեգիծ մը, որուն մարտավարական ու ռազմավարական գիծերը ճկուն ըլլալով հանդերձ, անշեղ պահեց ՀԻՄՆԱԿԱՆ սկզբունքներն ու առաջադրանքները, որոնք կաթիլ-կաթիլ բիւրեղացան կուսակցութեան առաջին տասնամեակներուն, կրակի ու արեան մկրտութեամբ թրծուեցան մարտական ու քաղաքական փոթորիկներու մէջ, ամրագրուեցան, եւ մինչեւ օրս իբրեւ ԱԶԳԱՅԻՆ աւանդ, եւ ո՛չ թէ սոսկ կուսակցական իւրայատուկ ժառանգութիւն, փոխանցուած են սերունդէ սերունդ:

Դաշնակցութեան ու զայն կանխած ազգային կուսակցութեանց եւ կազմակերպութեանց ծննդեան օրերուն, Յեղասպանութիւնը տեղի չէր ունեցած, սակայն կային մէկ կողմէ՝ սուլթանական Թուրքիոյ ու միւս կողմէ՝ ցարական Ռուսիոյ ճնշումներն ու հալածանքները, Հայաստանը առանց հայու տեսելու բացայայտ կամ քողարկեալ դաւադիր ծրագիրները: Հայ քաղաքական միտքն ու հասունացող պայքարը՝ բնական հակազդեցութիւններն էին զոյգ բռնադատութիւններուն, որոնցմէ աւելի քան դար մը առաջ, արեւելեան կողմն հայոց աշխարհի, կար պարսկական տիրապետութիւնը եւ յետոյ, իր տեղը ամբողջովին զիջած էր ցարականին: 19-րդ դարու մեր պատմութեան՝ մեր ժողովուրդի դիմագրաւած պայմաններուն վրայ ամենէն թեթեւակի ակնարկն անգամ ցոյց պիտի տայ, որ Հայը դրուած էր դանդաղ բնաջնջումի ճամբու մը մէջ, ենթակայ էր շարդի, բռնագաղթի, ձուլման եւ, մէկ խօսքով՝ ինքնութեան կորուստի: Նման հպանցիկ ակնարկ անմիջապէս պիտի հերքէ թրքական եւ նմանատիպ քարոզչութեանց այն «վարկածները», թէ հալածանքներն ու շարդերը հակազդեցութիւն ու պատժամիջոցներ էին «չար» ու ըմբոստ հայերուն շղթայագերծած «օրինա-



զակցութեանց», դաւաճանական ընթացքին, եւ այլն:

Սեփական ճակատագիրի տիրութեան ու գոյապայքարի առաջին տասնամեակներուն, հայկական կուսակցութեանց միջեւ գաղափարաբանական տարբերութիւնները շեշտակի բնոյթ չէին կրեր: Մարդկային, սեփականատիրութեան եւ նուազագոյն ինքնիշխանութեան, խտրականութենէ զերծ մնալու իրաւունքներն էին հայկական յեղափոխութիւնը յառաջ մղող շարժակները: Տարրական այս իրաւունքներուն հասնելու նպատակին շուրջ է, որ կը միանային հայութեան բազուկները, ֆետայիին մոսիւնն ու մտաւորականին գրիչը: Մասնաւորաբար Սան Սթեֆանոյի ու Պերլինի դաշնագիրներու հանգրուանէն ետք ձեւ-կերպարանք ստացած պայքարը պիտի գար յեղափոխելու հայութեան մտածողութիւնն ու կեանքը, յեղափոխականացնելով երիտասարդութիւնը եւ զայն բոլորելու միասնութեան հրաւիրող՝ Դաշնակցութեան դրօշին տակ:

Պայքարի առաջին փուլը իր դիմաց դրաւ հետզհետէ զօրացող ճնշումներու եւ հալածանքներու ալիքներ: Պոլսոյ մէջ յեղափոխական-ուժական քայլերուն կողքին, Երկրին մէջ արձանագրուեցան պատժական գործողութիւններ, արագ ծաւալ ստացաւ ֆետայական-ինքնապաշտպանական շարժումը, որուն դիմաց, սուլթանական պետութիւնը դիմեց իրեն ծանօթ միակ ձեւին՝ շարդերուն եւ ապատեղեկատուութեան: Այդ վարքագիծը յաջորդ տասնամեակներուն իբրեւ ոճրային «աւանդ» փոխանցուեցաւ իթիհատական-



ներուն ու քեմալականներուն, անհկա մինչեւ այսօր ալ տիրական ներկայութիւն է հանրապետական-մենատիրական թուրքիոյ պետութեան մտածողութեան ու գործելակերպին մէջ:

Հարցերը միայն արեան բաղնիքներու մէջ լուծել փորձելու թրքական պետական մտածողութիւնը մեր ու աշխարհի պատմութեան մէջ արձանագրեցին համիտեան բազմահանգրուան ջարդերը, որոնց ուղղակի արձագանգները եղան նախ՝ թուրքիոյ Սահմանադրութեան հռչակումէն հազիւ տարի մը ետք՝ Ատանայի ու Կիլիկիոյ ջարդերը, իսկ քանի մը տարի ետք ալ՝ Նոյնինքն Յեղասպանութիւնն ու Արեւմտեան Հայաստանի բռնագրաւումը, հայութեան արտաքսումը իր պատմական հայրենիքին մեծ մասէն: Թրքական ոճիրներէն անմասն չմնացին նաեւ այլ երկիրներ ու ժողովուրդներ:

Դաշնակցութիւնը, իբրեւ հայութեան ու անոր իրաւունքները մարմնաւորող առաջատար պաշտպան-դրօշակիրը՝ այդ տարիներուն մնաց մեր Դատի հետապնդման բոլոր ճակատներուն վրայ: Ֆետայական շարժումին յաջորդեցին կամաւորական գունդերը, ինքնապաշտպանական կռիւները, նախ՝ 1915-16 տարիներուն, իսկ աւելի ուշ, հայութեան Կիլիկիա կարճատեւ վերադարձէն ետք՝ ինքնապաշտպանութեան երկրորդ փուլի հերոսամարտերը: Ինչպէս յեղափոխական պայքարի սկզբնական տասնամեակներուն, Նոյնպէս ալ Յեղասպանութեան ու անոր յաջորդած՝ 20-ական տարիներուն, հայութեան պայքարը մղուեցաւ միացեալ ուժերով, որովհետեւ պայքարը իր կեանքին մէջ ապրող հա-

յը նկատած էր, որ թուրքին համար ՀԱՅՆ էր խոչընդոտը, անկախ գաղափարական, յարանուանական կամ այլ տեսակի տարբերութիւններէն:

Յետցեղասպանութեան առաջին փուլին, մեր ժողովուրդի կեանքը ապրեցաւ կարճատեւ փայլատակում մը՝ Հայաստանի անկախ հանրապետութեան ծնունդով: Կամաւորական շարժումին արձանագրած յաջողութիւններն ու ընկրկումները յանկարծ աւե-

տաբեր պայմաններ բերին մեզի, երբ Ա. Աշխարհամարտի աւարտին, արիւնաքամ ու հայրենակորոյս հայութիւնը պահ մը շօշափեց իր ազգային ու քաղաքական իրաւունքներուն կենսագործումը՝ պատմական Հայաստանի մէկ փոքր հողաշերտին վրայ: Ազատութիւնն ու անկախութիւնը երկինքէն ինկած պտուղներ չէին, այլ արդիւնքն էին ամբողջ ժողովուրդին մղած ճակատամարտերուն, գոյութեան ու հայրենիքի պահպանման վճռական մարտին: Այդ հանգրուանը մեր պատմութեան մէջ արձանագրած է Սարդարապատ, Բաշ Ապարան եւ Մայիս 28 անունները, որուն յաջորդած է Միացեալ Հայաստանի հռչակագիրը: Այդ բոլորը մասնիկներն էին մեր Դատին արդար հատուցման եւ կազմեցին մինչեւ այսօր մեր դիմաց տարածուող հորիզոններուն համայնապատկերը: Անհրաժեշտ չենք նկատեր այս բոլորին մէջ Դաշնակցութեան վճռորոշ ու դրօշակիրի դերակատարութիւնը, առանց անտեսելու ներդրումը բոլոր այն ազգային ուժերուն ու հաստատութիւններուն, որոնք լծակից-մասնակից էին այդ իրագործումներուն: Այդ բոլորը նաեւ փաստացի վկայութիւն էին, որ Դաշնակցութիւնը, ինչպէս նշեցինք՝ մեր ժողովուրդին կեանքին մէջ մուտք չէր գործած մասնակի ու հատուածական հաշիւներ հետապնդելու համար, այլ եկած էր ԾԱՌԱՅԵԼՈՒ ԵՒ ի հարկին բուռ-բուռ նահատակներ տալու վասն հայրենիքի պաշտպանութեան, ի խնդիր ժողովուրդի պահպանման: Օրուան բնական պայմանները չէին կրնար Դաշնակցութիւնը հեռու պահել հայութեան նաւուն նաւապետը ըլլալու դերակատարութենէն, գործ՝ որուն մէջ ան

միշտ ալ փնտռեց հայկական բոլոր ուժերուն, մինչեւ իսկ ազգային նկատումները ստորադաս ու անկարելորդ նկատողներու գործակցութիւնը: Սա կը մնայ Դաշնակցութեան անյեղլի գիծերէն մէկը...

Հայաստանի խորհրդայնացումը՝ համայնավար կայսրութեան կողմէ կուլ տրուելը, Դաշնակցութեան ու անոր հետապնդած Դատին դիտանկիւնէն, ստեղծեց նոր մարտահրաւերներ, որոնք կը գումարուէին Յեղասպանութեան ստեղծած ահաւոր հետեւանքներուն վրայ: Հայութիւնը կորսնցուցած էր անկախ պետականութեան յենարանը, որ կենսական էր սեփական ճակատագրի տիրութեան ու ինքնուրոյն պատմութիւն կերտելու համար: Համայնավար կայսրութեան մէկ մասնիկը ըլլալու վիճակը միայն ձեւականօրէն հանրապետութիւն մը կը թողոր հայութեան, որ յաջորդ տասնամեակներուն, այդ հողին վրայ ապրեցաւ որոշ նուաճումներ, սակայն միաժամանակ կորսնցուց շատ բան. կորսնցուց անկախութիւն, ազգային պատկանելիութեան բազմաթիւ թելեր, հայրենիքին կառչածութեան յատկութենէն շատ բան...

Դաշնակցութեան համար, բացուեցան Դատի պաշտպանութեան բազմաճակատ էջեր: Կար հարկադրաբար Սփիւռք դարձած հայութեան ֆիզիքական վերականգնումն ու կազմակերպումը, մշակոյթի, դպրոցի, ինքնութեան պահպանման յենարաններու ապահովումը: Այլ ճակատի մը վրայ՝ կորուսեալ հայրենիքին վերատիրացման մարտահրաւերը. նահատակները կարելի չէ ետ բերել, սակայն կատարուած ոճիրին դիմաց՝ կար արդար եւ լիարժէք հատուցման պահանջը: Խորհրդային Հայաստանին արգիւնուած էր շատ բան, սակայն Դաշնակցութիւնը չէր կրնար ընդունիլ որեւէ ձեռնակապ: Անմիջականօրէն, այն պահանջը արտայայտութիւն գտաւ թուրք ոճրագործ պետական մարդոց հետապնդումով ու ահաբեկումով, որուն բնական զարգացումն ու հետեւութիւնն էր ուժական արդարահատուցման կամքին պահպանումը: Տակաւին, կային Հայաստանի մէջ համայնավարութեան կործանարար ազդե-

ցութիւններուն ըստ կարելոյն դեմ կենալն ու Հայաստանի ու ընդհանրապէս խորհրդային սահմաններէն դուրս այդ ազդեցութեանց տարածման դեմ թումբ կանգնիլը: Պատմութեան անցած այդ տասնամեակները իրենց բացասական ներգործութիւնները ունեցան նաեւ սփիւռքի հայութեան հասարակական կեանքին մէջ, մեր պատմութեան մէջ արձանագրուեցան «հայաստանասերներու» «հակահայաստան թել» (ան)տրամաբանութիւնները: Այսօր, երբ փոշիները ըստ բաւականին փարատած են, ոեւէ մէկուն համար այլեւս կասկածելի չէ, թէ Դաշնակցութեան պահպանած անշեղ գիծը ինչ նպատակներ կը հետապնդէր եւ ինչպէ՛ս արդարացաւ անվիճելիօրէն: Հոն նեղ իմաստով կուսակցականութիւն չէր բաներ, այլ տիրական էր համազգային շահերու եւ անանդներու պահպանումը: Այլ խօսքով, Դաշնակցութիւնը ամուր մնացած է իր ծառայութեան ու զոհաբերումի առաքելութեան ուղիին մէջ, որքան ալ որ հզօր եղած են արգելակող փոթորիկները, որքան ալ որ փորձութիւններ ստեղծուած են անոր հետեւորդներուն համար:

130 տարի առաջ բարձրացած Դաշնակցութեան դրօշը շուրջ 30 տարի առաջ անգամ մը եւս վերականգնեց առաջնորդողի իր դերը, երբ սկսան փչել Խորհրդային Միութիւնը դէպի փլուզում տանող հովերը եւ առիթ տուին Արցախեան Պայքարի շղթայազերծման: Դաշնակցութիւնը եղաւ առաջիններէն, որ հնչեցուց «Դէպի Երկիր» հրաւերը, ընդառաջ վազեց դէպի Արցախի պաշտպանական ճակատները եւ հայրենի հայութեան մէջ վերընձիւղեց այն ոգին, որ անկէ աւելի քան 30 տարի առաջ, Երեւանի հրապարակները գրաւած էր «Մեր հողերը, մեր հողերը» պահանջատիրութեամբ: Հայաստանի անկախութեան վերականգնումէն ետք, Դաշնակցութիւնը փութաց իր կազմակերպական ներկայութիւնը վերականգնելու հայրենի հողին վրայ, մասնակից դարձաւ հայրենի կեանքին, պետութիւն վերակառուցելու աշխատանքին: Եթէ անկախական հովերը առաջին օրէն իսկ եղան տիրական, խորհրդային տարիներու



հոգեբանության որոշ գիծեր անմիջապես չփարատեցան (անոնք զգալի են նաեւ այսօր)։ Մօտիկ անցեալի պատմութիւնը ծանօթ է։ Դաշնակցութեան դէմ արգելքներ բարձրացան, մինչեւ իսկ հազարումէկ շինծու մեղադրանքներով ան պահ մը հռչակուեցաւ արգիլեալ կուսակցութիւն, որովհետեւ, եւ դժբախտաբար, մեր հայրենիքին ու բազմերես իրաւունքներուն ծառան ու դրօշակիրը ըլլալու Դաշնակցութեան դերակատարութիւնը լիարժէք հասկացողութիւն չգտաւ, աւելին՝ մեր աւանդներուն ամբողջական վերականգնումի մարտահրաւերը իր դիմաց գտաւ նա՛եւ արտաքին արգելակիչ ազդակներ։ Այս բոլորը պատճառ չեղան, որ Դաշնակցութիւնը ընկրկում ապրի եւ սակարկութեան դէմ այն հիմնական սկզբունքներն ու ազգային պահանջները, որոնք մեր ժողովուրդը կ'առաջնորդէին ու կոչւած են առաջնորդելու դէպի ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆի քաղաքական ժառանգութեան կենսագործումը։ Դաշնակցութիւնը ո՛չ մէկ ատեն սակարկած է այդ սկզբունքներուն շուրջ։

Դաշնակցութեան մղումով էր, որ հայրենի ժողովուրդը եւ անոր բարեփոխուած քաղաքական ուղին մերժեցին Արցախի ու Չանգեզուրի հողերը սակարկութեան դնելու ընտրանքը։

Դաշնակցութեան հայրենի ու արտերկրի շարքերուն ու համակիրներուն ստեղծած ճնշումին ճամբով էր, որ փրոթոգոլներու պարտադրեալ ուղին մնաց անվաղորդայն, Հայաստան ի վերջոյ դէմ դրաւ մեզի համար վնասաբեր «ճամբու քարտէս»-ին։ Այսօր ալ, Դաշնակցութիւնը վճռական է անփոփոխ շարունակելու նոյն վարքագիծը, եթէ պատահի, որ ներսէն

կամ դուրսէն ոչ-նպաստաբեր հովեր փչեն մեր իրաւունքներուն դէմ։

Դաշնակցութիւնը, իշխանութեան մասնակիցի թէ «դուրս եկած-մնացած»-ի դիրքերէն, նոյն հետեւողականութեամբ կը գործէ ի խնդիր հայրենիքի տնտեսական, ընկերային վիճակներուն բարօրութեան, մշակոյթի ու աւանդներու, ժառանգութեանց պահպանման, արտաքին քաղաքականութիւնը փոթորիկներու պատուհասներէն հեռու պահելու տրամաբանութեամբ։ Օրը օրին զարգացող դէպքերը կրնան մերթ ընդ մերթ

սխալ տպաւորութիւններ ստեղծել, մանաւանդ եթէ կան սխալ տպաւորութիւն ստեղծելու միտում ունեցողներ։ Սակայն երբ Դաշնակցութեան գործը դիտուի երկար ժամանակի վրայ, բոլոր աննպաստ շուքերը կը փարատին եւ ամպերը պատռող արեւուն պէս յստակ կը դառնայ, որ Դաշնակցութիւնը իր ուղին կը շարունակէ անշեղ հաւատարմութեամբ, ճիշդ այնպէս՝ ինչպէս ըրած էր ֆետայական ու կամաւորական շարժումներու օրերուն, անկախութեան կերտումին ու այդ արժէքին պահպանման բոլոր փուլերուն։

Տակաւին, Դաշնակցութիւնը ըստ եւութեան կը մնայ գլխաւոր դրօշակիրը՝ մեր Դատի աւանդական հասկացութեան պահպանման ու հետապնդման։ Գաղտնիք չէ, որ մեր Դատը միջազգային բեմ մտած էր Սան Սթեֆանոյով ու Պերլինով, երբ, ինչպէս նշեցինք սկիզբը, Դաշնակցութիւնն ու այլ կուսակցութիւններ տակաւին մարմին չէին առած։ Մեր Դատը միջազգային օրակարգի վրայ պահուեցաւ սուլթանական Թուրքիոյ վերջին տարիներուն, «Արեւելեան Նահանգներու ինքնավարութեան» եւ զայն կանխած՝ բարեկարգումներու հետապնդումով։ Ինչպէս այդ փուլերուն, նոյնպէս ալ Հայաստանի անկախութեան հռչակումէն ետք, միջազգային խորհրդրդաժողովներու, բանակցութեանց եւ համաձայնագիրներու գոյառման մէջ, Դաշնակցութիւնը անմնացորդ ծառայեց մեր Դատին եւ ազգային շահերուն։ Անկախութեան կորուստէն ետք ալ, երբ կարմիր զգեստ հագած Հայաստանը հարկադրաբար թողլքեց մեր իրաւունքներուն հետապնդումը, յաճախ նաեւ

Նոյն հարկադրանքներուն ենթարկուելով՝ դեմ գործեց ազգային իրաւունքներու պաշտպանութեան, Դաշնակցութիւնը շարունակեց պետական մակարդակով մեր դատի հետապնդումը, կապ պահեց Ազգերու Լիկային ու օսմանեան կայսրութիւնը բաժնեկցած աշխարհին հետ, ստեղծեց Հայ դատի յանձնախումբեր, հայութեան ներկայացուցիչը 70-ականներուն հասցուց ՄԱԿ, որպէսզի մարդու իրաւունքներու պաշտպանութեան յանձնաժողովին ճամբով քայլ առ քայլ ենթահող ապահովէ Ցեղասպանութեան ճանաչման: Այդ գիծը ապրեցաւ իր զարգացումը եւ այսօր, բազմատասնեակ պետութիւններ զօրավիզ են մեր Դատին, աշխարհի հզօրագոյն պետութիւնները, Միացեալ Նահանգներու պէս երկրի մը գրեթէ բոլոր նահանգները թուրքիոյ պետութեան երեսին կը շարտեն իր ոճրագործի հանգամանքը եւ կը պահանջեն արդարութեան վերականգնումը: Գլխաւորաբար Դաշնակցութեան քաղաքական բազուկներուն աշխատանքով կատարուած իրագործումները չեն կատարուած այս կուսակցութեան փառաբանութեան նպատակով, այլ նպատակ ունեցած են եւ ունին Հայաստանի ու հայութեան շահերը, ողջ հայութեան Դատին ճանաչումն ու կենսագործումը:

Այս սիւնակներուն նպատակը՝ մեր Դատին ի խնդիր Դաշնակցութեան գործին ու զոհաբերութեանց ամբողջական պատմականը ընել չէ. անոնք կրնան լեցնել բազմաթիւ հատորներ: Այս հակիրճ ու մասնակից ուրուագիծը նաեւ ըստ էութեան նորութիւններ չարձանագրեց, սակայն կը հաւատանք, որ նման ուրուագիծեր անհրաժեշտ են մերթ ընդ մերթ յիշեցնելու բոլորիս, ըլլանք դաշնակցական շարքային, թէ Դաշնակցութեան հաւատալիքներուն ու սկզբունքներուն համակիր հետեւող, թէ՛ 130 տարի առաջ ծնունդ առած Դաշնակցութիւնը էապէս հաւատարիմ է այն սկզբունքներուն եւ նպատակակետներուն, որոնց համար մարմին առաւ ինք, շօշափելի իրականութեան վերածեց իրմէ առաջ իսկ գոյութիւն ունեցող ազգային հաւատալիքներ, լծուեցաւ Ցեղասպանութենէն առաջ իսկ գո-

յութիւն ունեցող մեր Դատին հետապնդման, սերունդներ պատրաստեց ու բազմաճիւղ պայքարի դաշտ նետեց, մղում տուաւ Թեւիքեաններու, Շիրակեաններու արդարահատուցման, ապա, տասնամեակներ ետք, Նոյն ներշնչումը ներարկեց հայ երիտասարդութեան, որ լիզպոնեան եւ զուգահեռ խիզախումներով աշխարհի յիշողութեան մէջ վերականգնեց մեր արդարատենչութիւնը, ուժեղ յեւարան տրամադրելով քաղաքական դիւանագիտական աշխատանքներուն, վերջապէս, Նոյն ներշնչումով մղում տուաւ Արցախեան Պահանջատիրութեան ու մինչեւ օրս շարունակուող ինքնապաշտպանական պայքարներուն:

Դաշնակցութիւնը մեկուսացնելու, անոր գործունէութիւնը քողարկելու կամ անյարիր պիտակներու տակ դնելու փորձերը երկար կեանք չեն ունեցած, այսուհետեւ ալ չեն կրնար ունենալ: Մեր ժողովուրդը, ու ամենէն առաջ դաշնակցականները գիտեն, որ այս կուսակցութիւնը ունի իւրայատուկ նկարագիր: Դաշնակցութեան հիմնական նկարագիրը լիարժեքօրէն յարիր է հայութեան, հայրենիքի ու ժողովուրդի գերագոյն ու անսակարկելի նպատակներուն: Քաղաքական ու ընկերային կեանքին մէջ, նորանոր զարգացումներ միշտ ալ կրնան խոստանալ ու բերել դրական շրջումներ, սակայն հնագոյն դարերէն ի վեր կան անփոփոխ գիծեր, որոնք կ'իմաստաւորեն ժողովուրդ մը ու երկիր մը, կ'ապահովեն անոր գոյատեւումը:

Դաշնակցութիւնը այդպիսի անփոփոխ ու անփոփոխելի գիծերու պահապանն է ու պիտի մնայ: Պատմութիւնը ցոյց տուած է, որ այս կաղնին դիմագրաւած է սոսկալի փոթորիկներ, երբեմն դարձած է ճակատոր, սակայն հայրենի հողը, ժողովուրդը մնացած են զինք սնուցանողը, նոր սաղարթներ ծլարձակած են անոր բունէն ու ճիւղերէն, որոնց շուքը յաւելլեալ հովանի ապահովելու հայրենիքին ու ժողովուրդին, հասնելով սփիւռքեան օճախներ, մոռացութեան մատնելով մինչեւ իսկ համայնավարութեան «դարաշրջան»-ի մորմոքները, դարմանելով հետքերը:

Ս. ՍԱՀՄԵՐԵՃԵԱՆ

Նոյեմբեր 2019

ԱՆՑԵԱԼԻ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՑԵՈՂ ՄԻԿ ՏԱՐԻՆ)

2019 թուականը Հայաստանում քաղաքական վերադասաւորումների տարի էր՝ պայմանաւորուած 2018 ապրիլին սկիզբ առած իշխանափոխութեան աւարտով: 2018 թուականի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնների արդիւնքում օրէնսդիրի աթոռներից 88-ն զբաղեցրեց Փաշինեանի «Իմ քայլը» դաշինքը, 26-ը՝ Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւնը, 18-ը՝ Լուսաւոր Հայաստան կուսակցութիւնը: 2019 թուականի յունուարի 14-ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի կողմից Նիկոլ Փաշինեանն ինքնաբերաբար նշանակուեց Հայաստանի վարչապետ: Կառուցուածքային փոփոխութիւնների արդիւնքում Հայաստանի 17 նախարարութիւններից 5-ը լուծարուեցին եւ իրականացուեց գործառնոյթների վերաբաշխում: Ժողովրդային շարժման ալիքի վրայ հապճեպ անցկացուած այս ընտրութիւններով Հայաստանում ստեղծուեց քաղաքական նոր իրավիճակ. պետական իշխանութեան ողջ պատասխանատուութիւնը ստանձնեց մէկ ուժ՝ ղեկավարութեամբ Նիկոլ Փաշինեանի: Խորհրդարանական ընդդիմութեան աթոռները զբաղեցրեցին «Բարգաւաճ Հայաստան»-ը եւ «Լուսաւոր Հայաստան»-ը: Մնացեալը, այդ թւում նախկին իշխանական կուսակցութիւնները՝ Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը եւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը դարձան արտախորհրդարանական ուժեր:

Խորհրդարանի ընտրութիւններում ստա-



նալով շուրջ 70 առ հարիւր քուէ՝ իշխանական նոր ուժը խնդիր էր դրել լիարժէք իր ձեռքում կեդրոնացնել պետական լծակները՝ «Թաւշեայ յեղափոխութեան» խոստումներն իրականացնելու, «յեղափոխութիւն» անշրջելի դարձնելու եւ անցեալի վերադարձը բացառելու նպատակով: Արտախորհրդարանական որոշ ուժեր իրենց աջակցութիւնը յայտնեցին նրանց: Սակայն, արտախորհրդարանական ուժերի զգալի մասն իրեն յայտարարեց ընդդիմադիր՝ իշխանութիւն-ընդդիմութիւն պայքարի հիմնական հարթակը տեղափոխելով խորհրդարանից դուրս: ՀՀԴ-ն 2019 յունուարին, Արցախում անցկացրեց իր 33-րդ Ընդհանուր ժողովը, որտեղ առաջադրուեց՝ Հայաստանում յաջորդ իշխանութիւնը Դաշնակցութեան շուրջ ձեւաւորելու ռազմավարութիւնը: Ըստ էութեան, Դաշնակցութիւնը յայտարարեց, որ այս նոր իշխանութիւնների այլընտրանքը հէնց ՀՀԴ-ն է եւ կուսակցութիւնն առաջիկայում պետք է ընդդիմութեան դաշտում գործի այս տրամաբանութեամբ:

Իշխանափոխութեան աւարտով, ցաւօք, երկրում անհանդուրժողականութեան մթնո-

լորտը չհանդարտուեց, հասարակութիւնը «սեւերի» եւ «սպիտակների» բաժանելու իշխանութեան նախընտրական հռետորաբանութիւնը դրսեւորուեց նորովի՝ լրատուամիջոցներում եւ ընկերային ցանցերում վերածուելով խօսքի բռնութեան նոր ալիքի: Երկրում ստեղծուեցին փողոցային պայքարի տարբեր օճախներ, իսկ ողջ տարին անցաւ դեռեւս 2018 թուականին սկսուած Մարտի 1-ի գործով ձգձգուող դատավարութիւններով, նոր աղմկայարոյց, յաճախ՝ կասկածելի մեղադրանքներով եւ ձերբակալութիւններով:



Հայաստանի նոր իշխանութիւնների առաջին իսկ նախաձեռնութիւնները յարուցեցին հանրութեան տարբեր շերտերի դժգոհութիւնը. Ամուլսարի հանքավայրի շահագործման շուրջ հակասական գործընթացները, Սթամպուլեան ուխտի վաւերացման նախաձեռնութիւնները, Արցախեան հարցում իշխանութիւնների անյստակ մօտեցումները, Արցախի իշխանութիւնների եւ բանակի որոշ բարձրաստիճան հրամանատարների հետ հակասութիւնները, դաւադիր ուժերի փնտռտուքն ու աջ ու ձախ մեղադրանքները, վարչապետի կողմից «ասֆալթին փռելու», «պատերին ծեփելու» բառապաշարի շարունակաբար գործածումը, դատական իշխանութեան նկատմամբ աննախադէպ ոտնձգութիւնները, Երեւան քաղաքում տարաբնոյթ հիմնահարցերի, յատկապէս աղբահանութեան խնդրի սրացումը, իշխանութիւններին աջակցած տարբեր հանրայայտ պաշտօնեաների պաշտօնանկութիւններն ու փոխադարձ հնչեցուող քննադատութիւնները, հայ-ռուսական յարաբերութիւններում անհարթութիւնները, կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ոլորտներում ապագգային եւ հայ հանրութեան ընկալումներին անյարիր դրսեւորումները, Հայաստանում գործող տարբեր միջազգային կառոյցների, յատկապէս, Բաց հասարակութեան հիմնադրամի (այլ խօսքով՝ Սորոսի հիմնադրամի) Հայաստանի ներքին գործընթացներին միջամտելու նախկին եւ ներկայ քայլերը, ազգային արժէքների եւ հաստատութիւնների դէմ պարբերաբար

դրսեւորուող պայքարն ու անհանդուրժողականութիւնը, պետութեան անարդիւնաւետ կառավարումն ու պաշտօնեաների բարձր պարզեւազմարների սահմանումը, Ազգային ժողովի եւ նախարարների գերակշիռ մասի ցածր վարկանիշը, քննադատական խօսքի եւ բողոքի շարժումների դէմ անհանդուրժողականութիւնն ու իրաւապահների բռնի գործողութիւնները, ներդրումների սպասուած մեծ հոսքի բացակայութիւնն ու հռչակուած «տնտեսական յեղափոխութեան» ոչ յեղափոխական արդիւնքները հանրութեան շրջանում առաջ բերեցին հիասթափութեան ակընյայտ նշաններ: Որոշ հետազօտութիւնների արդիւնքներով, իշխանութեան ընդհանուր վարկանիշը տարեվերջին նուազել էր 10-15 առ հարիւրով, իսկ Ազգային ժողովը պետական հաստատութիւնների մէջ ուներ ամենացածր վարկանիշը: Այս բացասական իրավիճակին կողքին տեղի ունեցան նաեւ դրական որոշ տեղաշարժեր, մասնաւորապէս փտածութեան դէմ պայքարի, ճանապարհաշինութեան, տնտեսական վարչարարութեան, ստուերի որոշակի կրճատման, զբօսաշրջութեան աշխուժացման, նախորդ իշխանութեան կիսատ թողած շատ ու շատ ծրագրերի յաջողութեամբ շարունակելու, որոշները՝ աւարտելու, բանակում սպասարկման որակի բարելաման, բնակարանային վարկերու շուկայի աշխուժացման, ընկերային որոշ խմբերին ուղղուած ծրագրերի իրականացման ուղղութեամբ: Սակայն խնդիրն այն էր, որ ժողովրդային շարժումն ու նոր իշխանութիւնների խոստումները ստեղծել էին հանրային



սպասումների բարձր աստիճան եւ դրանց զգալի մասի չիրականացումը պատճառ հանդիսացաւ նաեւ իշխանութիւնների վարկանիշի կտրուկ անկման: Եւ այս անկումը դանդաղեցնելու, հանրային ուշադրութիւնը ձախողումներից շեղելու նպատակով իշխանութիւնները նոր թափ հաղորդեցին ձերբակալութիւններին, տարբեր ուժերի նկատմամբ յարձակումներին եւ նորանոր դատական գործընթացներին: Մեղադրանք առաջադրուեց նաեւ Հայաստանի երրորդ նախագահին, իսկ երկրորդ նախագահի կալանաւորման որոշումը մնաց անփոփոխ:

Գարնանը Հայաստանի ներքաղաքական կեանքը փոթորկուեց դատարանների շրջափակման **ալթըով**. վարչապետ Փաշինեանի կոչով եւ մասնակցութեամբ, մի խումբ քաղաքացիներ՝ որոշ պաշտօնեաների եւ պատգամաւորների ղեկավարութեամբ, մի քանի ժամով շրջափակեցին Հայաստանի դատարանների մուտքերը՝ կոպտօրէն խախտելով դատարանների անկախութեան եւ նրանց գործունեութեանը չմիջամտելու ժողովրդավարական հիմնարար սկզբունքը: Այս գործողութիւնները հիմնականում պայմանաւորուած էին դատարանի կողմից Ռոպերթ Զոչարեանին կալանքից ազատելու՝ Արցախի նախագահ Բակո Սահակեանի եւ նախորդ նախագահ Արկաղի Ղուկասեանի միջնորդութիւնը ընդունելու որոշմամբ, ինչպէս նաեւ Սահմանադրական դատարանի եւ Բարձրագոյն դատական խորհրդի շուրջ ստեղծուած՝ իշխանութիւններին անհաճոյ իրավիճակներով: Ակնյայտ էր, որ դատական համակարգում առկայ են բազմաթիւ խնդիրներ, որոնցից ամենացայտունը գործադիր իշխանութիւն-

ների կողմի դատական իշխանութեան գործերին մշամտելն էր, պատւերով արդարադատութիւնը, որի հիմքերը դրուել էին նախորդ իշխանութիւնների ժամանակ եւ շարունակուեցին գործող իշխանութիւնների կողմից: Իշխանութեան եկած ուժը, օրէնսդիր եւ գործադիր լծակներին տիրանալով, չէր հանդուրժում դատարաններում՝ իր համար կայացուած որեւէ անհաճոյ որոշում: Եւ դա էր պատճառը, որ իշխանութիւնները յայտարարեցին՝ դատական

համակարգում **վեթիկնկ** իրականացնելու մասին՝ յարձակում սկսելով անցանկալի դատաւորների, Սահմանադրական դատարան եւ Բարձրագոյն դատական խորհրդի դէմ: Սակայն Սահմանադրական դատարանը մնաց իր բարձրութեան վրայ եւ չենթարկուեց իշխանութեան ճնշումներին: Արդիւնքում իշխանութիւնները տարեվերջին փորձեցին օրէնսդրական ճանապարհով շահագրգռել Սահմանադրական դատարանի անդամներին վաղաժամ, արտօսեալ պայմաններով անցնելու կենսաթոշակի: Գործադիր իշխանութեան, եւ յատկապէս նրա ղեկավարի կողմից դատական իշխանութեան նկատմամբ այս աննախադէպ գործողութիւնները, տարբեր դրսեւորումներով ուղեկցուեցին ողջ տարուան ընթացքում՝ Հայաստանի ներքաղաքական կեանքը պահելով լարուածութեան մէջ:

Տարուան երկրորդ կարեւոր թեման Արցախն էր՝ Արցախեան հարցի շուրջ նոր իշխանութիւնների մօտեցումները, Հայաստան-Արցախ փոխյարաբերութիւնները, Արցախի շուրջ բանակցութիւններն ու Արցախում 2020 թուականի գարնանը նախատեսուած համապետական ընտրութիւնների շուրջ սկսուած գործընթացները: Արցախի հարցում Հայաստանի նոր իշխանութիւնների դիրքորոշումն անորոշ էր, երբեմն՝ հակասական: Ակնյայտ էր, որ Փաշինեանը Արցախում եւ Արցախեան շարժման վեթերանների շրջանում իւրային չէր, իսկ բանակցային գործընթացում չունէր փորձառութիւն: Ի սկզբանէ Փաշինեանը քննադատեց նախորդ իշխանութիւններին՝ բանակցութիւններում դիրքերի զիջման, ոչ

հայանպաստ մօտեցումներ քննարկելու հարցում եւ յայտարարեց նոր մեկնակետից սկսելու մասին: Որպեսզի շահի արցախցիների եւ, ընդհանրապես, հայ հանրության վստահությունը՝ Արցախի անկախության օրը, Ստեփանակերտում նա յայտարարեց՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ»: Սակայն մի քանի հարցեր խիստ մտահոգիչ էին. Ալիեւի հետ «վերելակային» պայմանաւորութիւններից յետոյ, չնայած նուազեց սահմանային լարութիւնը, սակայն հայկական կողմը դադարեց խօսել Վիեննայում եւ Սանթ-Փեթեսպուրկում ձեռք բերուած համաձայնութիւններից, ըստ որոնց պետք է սահմանին ներդրուէր դիտարկման արդիական համակարգ՝ միջադեպերը յայտնաբերելու եւ հետաքննելու նպատակով, եւ աւելանային ԵԱՀԿ դիտորդների թիւը. սա նշանակում էր եապես ամրացնել գոյութիւն ունեցող սահմանը: Այս համաձայնութիւնները հայկական դիւանագիտութեան լուրջ յաղթանակ էին: Կարծեք, այս բացթողումը փոխհատուցելու համար, Փաշինեանը յայտարարեց, որ Արցախը պետք է վերադառնայ բանակցային սեղան: Երրորդ կարեւոր քայլը մարդասիրական շփումների ուղղութեամբ ջանքերն էին, որոնց շրջանակում տեղի ունեցան լրագրողների փոխայցելութիւններ: Սակայն դեկտեմբերին, Պրաթիսլաւայում Հայաստանի Հանրապետութեան եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարների՝ Մինսքի խմբի համանախագահների միջնորդութեամբ ընթացող բանակցութիւնների նախօրեակին եւ նոյն ժամանակ Ազրայէճանն ու Հայաստանը հրապարակեցին իրենց «կարմիր գծերը»: Դրանցով ակնյայտ էր դառնում, որ Հայաստանի եւ Ազրայէճանի դիրքորոշումները շարունակում են մնալ խիստ հակոտնեայ՝ յատկապես Արցախի կարգավիճակի եւ անվտանգութեան խնդիրների շուրջ: Սակայն հայ հանրութեանը խիստ մտահոգեց, այսպես կոչուած, «Ղարաբաղի ազրայէճանական համայնքին» բանակցային սեղանի մօտ բերելու յաճախակի դարձած հրապարակումները: Եւ



Եթէ տարուան ընթացքում խօսում էին հանրութիւններին խաղաղութեան նախապատրաստելու անհրաժեշտութիւնից, ապա տարեվերջին արդէն ահագանգում էին պատերազմի վտանգի մեծացման մասին: Արցախի հարցում ընդդիմադիր ուժերից յատկապես աշխուժ էր Դաշնակցութիւնը. Արցախում կազմակերպուեցին երկու կարեւոր խորհրդածոյովներ, որոնցից «Հայաստան-Արցախ ռազմավարական ֆորում»-ին, մասնակցեցին Հայաստանի եւ Արցախի գրեթէ բոլոր դերակատար քաղաքական ուժերի ներկայացուցիչները, իսկ Արցախի արտաքին գործոց նախարարութեան հետ համատեղ կազմակերպուած «համագործակցութիւն յանուն արդարութեան եւ խաղաղութեան» Արցախի բարեկամների համաժողովին մասնակցեցին աշխարհի շուրջ 30 երկրներից աւելի քան 150 քաղաքական-հասարակական գործիչներ եւ մտաւորականներ՝ իրենց աջակցութիւնը յայտնելով արցախցիների եւ ողջ հայութեան արդարացի պայքարին: Այս երկու խորհրդածոյովներով Դաշնակցութիւնը մեկ անգամ եւս փաստեց «Չարգանալ՝ չգիշելով» իր թեզին հաւատարիմ մնալու, Արցախի հարցում ազգային միասնականութեան խթանման եւ տարբեր երկրներում Արցախի միջազգային ճանաչման աշխուժ ջանքերի մասին:

Արտաքին յարաբերութիւնների ուղղութեամբ տարուան ընթացքում առանցքային մնաց հայ-ռուսական յարաբերութիւնների եւ ԵԱՏՄ-ի հետ համարկումի գործընթացների հարցը: Ժողովրդային շարժմամբ իշխանութեան եկած Հայաստանի նոր իշխանութիւն-



ներին Ռուսիան ի սկզբանե կասկածանքով էր վերաբերում եւ դա էր պատճառը, որ ինչպէս 2018-ին, այնպէս էլ 2019-ին խիստ յաճախակի էին հայ-ռուսական բարձր մակարդակի շփումներն ու փոխայցելութիւնները: Երեւանում տեղի ունեցաւ նաեւ ԵԱՏՄ անդամ երկրորդների ղեկավարների խորհրդաժողովը, իսկ Պրաթիսլաւայի հանդիպումից առաջ Ազրպէյճան եւ Հայաստան այցելեց Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը: Խիստ տրամաբանական էր Ռուսիոյ մտահոգութիւնը. չնայած Փաշինեանի հաւաստիացումներին՝ առ այս, որ արտաքին քաղաքականութեան ոլորտում որեւէ շրջադարձ տեղի չի ունեցել եւ Ռուսիան շարունակում է մնալ Հայաստանի ռազմավարական թիւ մէկ դաշնակիցը, Հայաստանում իշխանութեան տարբեր օղակներում պաշտօնները զբաղեցրել էին հիմնականում արեւմտեան կողմնորոշում ունեցող գործիչները, եւ չէին դադարում խօսակցութիւնները, որ Հայաստանում տեղի է ունենում «գունաւոր յեղափոխութիւն»՝ նպատակ ունենալով երկիրը դուրս բերել ռուսական ազդեցութիւնից եւ թեքել դեպի Արեւմուտք: Այս իմաստով, Հայաստանի իշխանութիւններն առանձնակի ջանասիրութեամբ փորձում էին ամէն առիթ օգտագործելով հաւաստիացնել ռուսական կողմին, թէ իրենք ցանկանում են էլ աւելի խորացնել Ռուսիոյ հետ փոխյարաբերութիւնները:

Արտաքին ճակատում մեծ յաջողութիւններ արձանագրուեցին Միացեալ Նահանգների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ: Յատկապէս ՀՀ-ի Հայ դատի յանձնախմբերի, հայկական այլ կազմակերպութիւնների եւ ամերիկահայութեան երկարատեւ յամառ ջանքերի արդիւնքում, նոյն-

բերին՝ ԱՄՆ ներկայացուցիչների պալատը՝ ձայների բացարձակ մեծամասնութեամբ, իսկ դեկտեմբերին՝ Մ. Նահանգների Ծերակոյտը՝ միաձայնութեամբ ընդունեցին Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող եւ դատապարտող գրեթէ նոյնաբովանդակ երկու բանաձեւեր: Այս կարեւոր ձեռքբերումները, ըստ էութեան նոր ազդակներ էին Հայ դատի պայքարին՝ նոր թափ հաղորդելու ցեղասպանութեան հետեւանքների վերացման եւ փոխհատուցման ուղղութեամբ ջանքերին:

Ողջ տարուան ընթացքում Հայաստանի ներքաղաքական կեանքն ալեկոծեցին մի քանի ուղղութիւններով տեղի ունեցող գործողութիւններն ու շարժումները՝ ուղղուած իշխանութիւնների կողմից վարուող քաղաքականութեան դէմ: Յատկապէս դժգոհութեան նոր ալիք սկսուեց Ամուլսարի հանքավայրի շահագործման շուրջ իշխանութիւնների հակասական քայլերի դէմ: Եկամտային հարկի համահարթեցման դէմ ՀՀ-ի երիտասարդները ձեռնարկեցին «Ահագանգ» նախաձեռնութիւնը, իսկ նոյեմբերից նրանք բողոքի գործողութիւններ սկսեցին կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան ոլորտում վարուող քաղաքականութեան դէմ՝ պահանջելով նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը: Բարձրագոյն ուսման հիմնարկների ոչ հայագիտական բաժանմունքներում հայոց լեզու, հայ գրականութիւն եւ հայոց պատմութիւն առարկաները՝ ոչ պարտադիր դարձնելու, Բարձրագոյն ուսման հիմնարկների ինքնավարութիւնն ու Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի գործունեութեան ոլորտները սահմանափակելու, դպրոցներում Հայ առաքելական եկեղեցու պատմութեան դասաւանդումը դադարեցնելու, մշակոյթի ոլորտում կասկածելի եւ հայ հանրութեան ընկալումներին անյարիր նախաձեռնութիւններն ոտքի հանեցին ոչ միայն դաշնակցական երիտասարդներին, այլեւ Երեւանի պետական համալսարանի բանասիրութեան եւ պատմութեան բաժանմունքների ուսանողներին եւ դասախօսներին, ուսանողական խորհրդին, մտաւորական եւ

քաղաքական որոշ շրջանակների եւ տարբեր Բարձրագոյն ուսման հիմնարկների ուսանողների: Գործողութիւններն ընթացան նստացոյցերի, բողոքի քայլերթերի եւ կառավարութեան դէմ բողոքի հաւաքների տեսքով: Վարչապետ Փաշինեանը հանդիպեց բողոքի ելած երիտասարդների, իսկ Արայիկ Յարութիւնեանը՝ դասախօսների հետ, սակայն արդիւնքում կրքերն աւելի շիկացան: Նախարարի հետ հանդիպում պահանջող ուսանողների նկատմամբ դեկտեմբերի 3-ին ոստիկանութեան եւ յատուկ ջոկատայինների մեծաթիւ ուժերը բռնի գործողութիւններ կիրառեցին՝ բերման ենթարկելով բողոքի 24 մասնակիցների: Մինչ այդ, դեռեւս մայիսին Դաշնակցութիւնը կազմակերպել էր՝ ժողովրդային շարժումից յետոյ ամենամարդաշատ հանրահաւաքը, որի ժամանակ ելոյթ ունեցողները խստօրէն քննադատեցին իշխանութեան կողմից վարուող քաղաքականութիւնը, հնչեցին սթափուելու կոչեր եւ իշխանութիւններին ցոյց տրուեցին դեղին քարտեր: Սեպտեմբերի 21-ին ՀՀԴ-ի կողմից կազմակերպուեց նաեւ Անկախութեան տօնին նուիրուած քայլերթ եւ հանրահաւաք, որի ժամանակ եւս իշխանութեան հասցէին հնչեցին խիստ քննադատութիւններ: Իրենց բողոքի գործողութիւններն էին շարունակում «Վեթօ» նախաձեռնութեան անդամները, որոնք նպատակադրուել էին Հայաստանում կասեցրնել Սորոսի հիմնադրամի գործունեութիւնը. Ռոպերթ Քոչարեանի աջակիցները եւս, յատկապէս Մարտի 1-ի գործով դատական նիստերի օրերին, աշխուժ գործողութիւններ էին կազմակերպում՝ երկրորդ նախագահի ազատման եւ արդար դատավարութեան կարգախօսերով: Աշխուժ գործունեութիւն ծաւալեցին նաեւ «ընդդէմ Սթամպուլեան ուխտի վաւերացման» նախաձեռնութեան անդամները, որոնք մայրաքաղաքում եւ հանրապետութեան տարբեր վայրերում կազմակերպեցին մի շարք միջոցառումներ ու ստորագրահաւաքներ: Այս ուխտի դէմ ծաւալուած ընդհանուր դժգոհութիւնների արդիւնքում իշխանութիւնները ստիպուած եղան վաւերացման գործընթացը յետաձգել յաջորդ տարուան:



Իշխանութիւնների դէմ ընդդիմութեան որոշակի համախմբման ազդակ էր «Վերնատուն» ակումբի կողմից հրաւիրուած խորհրդրդաժողովը: Ժողովրդային շարժումից յետոյ, թերեւս առաջին անգամ էր, որ ընդդիմութեան տարբեր ուժերն ու փորձագիտական շրջանակների ներկայացուցիչները նստեցին նոյն սեղանի շուրջ՝ փորձելով գնահատել Հայաստանում ստեղծուած իրավիճակն ու առաջադրել լուծումներ:

Ողջ տարուան ընթացքում իշխանութիւնը ընդդիմութիւն պայքարը համեմուտեց փոխադարձ սուր քննադատութիւններով, մեղադրանքներով եւ անհանդուրժողականութեամբ: Իշխանութիւնները շարունակեցին մեղադրել Հայաստանեան ընդդիմութեանը, յատկապէս նախկին իշխանական ուժերին՝ քիւնախնդրութեան եւ փտած անցեալ ունենալու մէջ, իսկ ընդդիմութիւնը շարունակաբար մեղադրում էր իշխանութիւններին փտածութեան նոր դրսեւորումների, փտածութիւնը օրինականացնելու, նախկին սակաւապետութեան ներկայացուցիչների հետ գործարքներ կնքելու, Արցախի հարցում, տնտեսական քաղաքականութեան ուղղութեամբ, սփիւռքի հետ յարաբերութիւնների հարցում ձախողումների, պաշտօնական անձանց շրջանում մեծաթիւ զինուորական ծառայութիւն չանցածների առկայութեան, ապագային կրթամշակութային քաղաքականութիւն վարելու, դատական իշխանութեան վրայ ճնշումներ բանեցնելու եւ քաղաքական դրդապատճառներով դատավարութիւնների եւ ձեռքակալութիւնների համար: Հայաստանում ստեղծուած այս լարուած մթնոլորտը հիմնականում պայմանաւորուած

Եր մի քանի հանգամանքներով.

1. Նախ Հայաստանում տեղի ունեցած փոփոխություններն ունեին ոչ միայն քաղաքական դրդապատճառներ, այլև քաղաքական սերնդափոխության բնոյթ, սակայն «նորերը» չունեին յստակ ազգային ծրագիր եւ շարունակում էին պայքարել «քաղաքացիական հասարակության» գործիքներով եւ անցեալի մերժման տրամաբանութեամբ:

2. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխություն, սակայն ոչ բովանդակային յեղափոխություն եւ նոր գաղափարները ծնունդ էին յընթացս, յախուռն, երբեմն՝ չհիմնաւորած: Բացը լրացնելու համար, նոր իշխանությունը շարունակում էր ամբոխահաճոյ հռետորաբանությունը, այն ուղեկցելով «կլատիաթորական մարտերի» տրամաբանութեամբ՝ աղմկայարոյց ձերբակալությունների ու դատավարությունների տեսքով:

3. Փողոցային պայքարով իշխանութեան եկածները կանգնած էին մի շարք մարտահրաւերների առջեւ. նախ նրանք չունեին պետական կառավարման փորձառութիւն, երկրորդ, նրանց դեմ կանգնած էին պետութեան երկարամեայ ղեկավարման փորձառութեամբ, մեծ ֆինանսատնտեսական եւ զանգուածային լրատուամիջոցներու աղբիւրներ ունեցող ուժեր, որոնք կրկակոխ հետեւում եւ բացայայտում էին նրանց սխալները: Երիտասարդ իշխանաւորների զինանոցում պետական լծակներն ու «հների» անցեալի բացթողումներն էին որոնք սրի նման ճօճում էին՝ «ասֆալտին փռելու» սպառնալիքով: Անմասն չմնաց նաեւ բանակը. Ապրիլեան պատերազմի օրերին ունեցած թերացումների պատճառներն ուսումնասիրելու նպատակով Ազգային ժողովի յանձնաժողովի ստեղծումը փորձ էր՝ նոր բաց վերջ գտնել «հների» գործունեութեան մէջ եւ անընդհատ «աղ լցնել վերջին»՝ հանրութեանը պահելով «յանցաւոր» անցեալի մտապատկերի մէջ:

4. Նոր ուժը խնդիր ուներ դառնալ լիարժէք իշխանութիւն, իսկ փորձառու ընդդիմութիւնը լաւ էր հասկանում պետական համակարգի թոյլ կողմերը, սակայն համակարգում առկայ էր նաեւ առարկայական դժգոհութիւն. բազմամեայ վաստակով աշխատողները փոխարինում էին «հում» քատրերով, որոնք յաճախ

ի վիճակի չէին կայացնել որոշումներ եւ արդիւնաւետ իրականացնել պետական ծրագրերը: Հետեւանքը եղաւ պիւտճէի ծախսերի թերակատարումը, իսկ տարեվերջին կառավարութեան նիստում վարչապետը բացայայտ խօսեց պետական համակարգի դիմադրութեան եւ այն կոտրելու իր վճռականութեան մասին: Ճշմարտութեան կարեւոր մասն այն էր, որ նոր քատրերը ոչ միայն անփորձ էին, այլև յաճախ խուսափում էին «աւելորդ» պատասխանատուութիւնից եւ մատնւում տեղապտոյտի:

5. «Հների հակայարձակումը» ճնշելու համար՝ «նորերը» յաճախ ընկնում էին ծայրայեղությունների մէջ. մասնաւորապէս, յայտարարելով, թէ դատական համակարգում դեռեւս մեծ է նախկինների ազդեցութիւնը, նոր իշխանութիւններն անթաքոյց քայլերով փորձեցին «զաւթել» դատական իշխանութիւնը՝ խախտելով օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների տարաբաժանման սկզբունքը:

Իշխանութեան «թաւշեայ» վարքագիծը ստեղծեց հակադրութեան եւ անհանդուրժողականութեան մթնոլորտ, եւ ընդդիմութիւնը դրան հակազդեց՝ տարբեր ուղղութիւններով եւ մեթոտներով ստեղծելով պայքարի օճախներ, որոնք մեկտեղուելու միտում ունեն: Ահա այս գործընթացը, թերեւս գերակշռող կը լինի արդէն յաջորդ տարի՝ 2020 թուականին, հաւանաբար յանգեցնելով մտքի յեղափոխութեան, քաղաքակիրթ մրցակցութեան եւ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների:

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Դեկտեմբեր, 2019

ԱՐՑԱԽԸ՝ ԻՔՐԵՒ ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԷՏ

Անցնող տարին իւրայատուկ նշանակութիւն ունէր ՀՀ Դաշնակցութեան համար, որովհետեւ կուսակցութեան 129-ամեայ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ՀՀ-ն իր բարձրագոյն՝ Ընդհանուր ժողովը գումարեց Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ: Արցախի մէջ ՀՀԴ ԼԳ. Ընդհանուր ժողովի կայացումը ինքնին ունէր իր խորհրդանշականութիւնը, այն իմաստով, որ անիկա ամրագրեց Արցախի տեղն ու դերը Դաշնակցութեան համահայկական օրակարգի առաջին հորիզոնականին վրայ, եւ Ընդհանուր ժողովին յաջորդած ամբողջ մէկ տարուան ժամանակաշրջանին մենք տեսանք, որ Արցախը ՀՀ Դաշնակցութեան կարելորագոյն նախաձեռնութիւններուն կիզակետն ու կեդրոնը հանդիսացաւ:

Տարբեր ալ չէր կրնար ըլլալ ՀՀԴ-ի մօտեցումը արցախեան հիմնահարցին վերաբերեալ: Ընդհանուր ժողովի որոշումներուն եւ յայտարարութիւններուն ընդմէջէն Դաշնակցութիւնը վերահաստատեց իր ծրագրի «Քաղաքական պահանջներ»-ու բաժինին Արցախի վերաբերող հատուածը, ուր կը նշուի, թէ պետք է «ապահովել արցախեան պայքարի յաղթական ելքը՝ իբրեւ Հայ դատի լուծման առաջնահերթ փուլ»: Այս հիման վրայ ալ 16-էն 24 յունուար 2019 տեւած Ընդհանուր ժողովը



ՀՀԴ 33-րդ Ընդհանուր ժողով
Արցախ, 2019

նաեւ վերահաստատեց Արցախի հիմնահարցին վերաբերեալ նախապէս կուսակցութեան կողմէ յայտարարուած դիրքորոշումները:

Ինչո՞ւ այս կեդրոնացումը արցախեան հիմնահարցին վրայ: 2018-ի ապրիլ-մայիս ամիսներուն Հայաստանի մէջ ծաւալած ժողովրդային շարժումը եւ իշխանափոխութիւնը բնականաբար նաեւ նոր փուլի մը մեկնարկը պիտի նախանշէին արցախեան բնակցային հոլովոյթին գծով: Այնպիսի փուլ մը, որ յատկանշուած է բաւական մեծ անորոշութեամբ: Եւ ՀՀ Դաշնակցութիւնը՝ իբրեւ արցախեան հարցը իր օրակարգին գլխաւոր առանցքներէն մէկը դարձուցած կուսակցութիւն, նախքան Ընդհանուր ժողովը բազմիցս իր մտահոգութիւնը արտայայտած էր այդ անորոշութենէն, նաեւ այն իրողութենէն, որ Հայաստանի Հանրապետութեան նոր իշխանութիւնները այդքան ալ յստակ պատկերացում չունէին արցախեան հիմնահարցի լուծման վերաբերեալ: Առ այդ, ՀՀԴ Ընդհանուր ժողովը եկաւ յստակացնելու այն ընդհանուր

ժողովը եկաւ յստակացնելու այն ընդհանուր գիծերը, որոնք պետք է որդեգրուին իր եւ Արցախի հիմնահարցին հետ առնչակից որեւէ կողմէ: Այս ծիրին մէջ ալ, Դաշնակցութիւնը վերաշեշտեց իր՝ «Չարգանալ՝ չզիջելով» սկզբունքը՝ թոյլ չտալու համար որեւէ շեղում ազգային ուղեգիծէն եւ ընդհանուր նպատակակետերէն, որոնց կառչած մնալէն կախում ունի արցախեան հիմնախնդիրի հայանպաստ լուծումը: «Չարգանալ՝ չզիջելով»-ը նոր սկզբունք չէ ԶՅ Դաշնակցութեան համար, անկախ նախապէս ներառուած էր նաեւ կուսակցութեան հրապարակած եօթը կետնոց օրակարգին մէջ, բայց Ընդհանուր ժողովին կողմէ անոր վրայ կատարուած շեշտադրումը եկաւ անելի եւս ընդգծելու անոր կարեւորութիւնը:

ՅՅԴ ԼԳ. Ընդհանուր ժողովէն ետք հրապարակուած առաջին յայտարարութիւնը բնական էր, որ նուիրուած ըլլար Արցախին: Դաշնակցութեան համար վերջնական նպատակը Արցախի միացումն է մայր Զայաստանի հետ: Բայց նախքան այդ, գոյութիւն ունին մարտավարական քայլեր, որոնց իրականացումը ուղին պիտի հարթէ այդ վերջնական նպատակի կենսագործման առջեւ: Այդ մարտավարական քայլերը ընդհանուր գիծերու մէջ նշուած էին Ընդհանուր ժողովի այդ յայտարարութեան մէջ: Այդ մարտավարական քայլերուն մէջ առանձին կարեւորութիւն կը զգենուն այն կետերը, ըստ որոնց՝ Արցախի անկախութեան հանրաքուէով եւ սահմանադրութեամբ ամրագրուած անկախ պետականութեան գաղափարը եւ անոր հողային ամբողջականութիւնը անսակարկելի սկզբունքներ են, ուստի եւ Դաշնակցութիւնը կը վերանորոգէ իր յանձնառութիւնը աջակցելու Արցախի Զանրապետութեան միջազգային ճանաչման աշխատանքներուն, ինչպէս նաեւ՝ «Չարգանալ՝ չզիջելով» սկզբունքին ծիրին մէջ կը շեշտուի հրատապ անհրաժեշտութիւնը Զայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն միջեւ ռազմաքաղաքական համագործակցութեան դաշինքին վերաբերող համաձայնագիրի՝ սեղմ ժամկետներու մէջ կնքումին: ՅՅԴ ԼԳ. Ընդհանուր ժողովը նաեւ արձանագրած էր անհրաժեշտութիւնը, որ Արցախի Զանրապետութիւնը իր լիարժեք

մասնակցութիւնը ունենայ տազնապի լուծման բանակցային հոլովոյթին մէջ, իսկ Զայաստանի իշխանութիւնները միջազգային հարթակներու վրայ շարունակեն հանդէս գալ Արցախի Զանրապետութեան անվտանգութեան եւ անկախութեան երաշխաւորի յանձնառութեամբ:

ՅՅԴ ԼԳ. Ընդհանուր ժողովի՝ Արցախին վերաբերող որոշումները եւ վերոնշեալ յայտարարութեան մէջ յիշատակուած մօտեցումները գործնականացնելու համար, Դաշնակցութիւնը Ընդհանուր ժողովէն անմիջապէս ետք գործի անցաւ եւ զոյգ առիթներով Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ կազմակերպեց մեծ հաւաքներ, որոնք ձեւով մը իրարու օրկանական շարունակութիւնն էին: Առաջին հաւաքը՝ «Զայաստան-Արցախ ռազմավարական դաշինք» ֆորում անունով, տեղի ունեցաւ 7 մայիսին: Օրակարգի գլխաւոր հարցը Զայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն միջեւ իրաւապայմանագրային յարաբերութիւնները նոր մակարդակի բարձրացնելն էր: Զաւաքին մասնակցեցան Զայաստանէն, Արցախէն եւ սփիւռքէն հասարակական, քաղաքական, փորձագիտական եւ ռազմական շրջանակներու, իշխանամետ եւ ընդդիմադիր ուժերու ներկայացուցիչներ: Նպատակն էր մեկնարկը կատարել Զայաստանի եւ Արցախի միջեւ համապարփակ համագործակցութեան համաձայնագիր կնքելու հոլովոյթին: Այս նպատակով ալ հաւաքը իր մասնակիցներէն կեանքի կոչեց կազմկոմիտէ մը, մասնակիցները ընդունեցին հռչակագիր եւ պարտք դրին Զայաստանէն, Արցախէն եւ սփիւռքէն անհատներէ բաղկացած կազմկոմիտէին վրայ հետապնդելու այդ հռչակագիրին մէջ ընդգրկուած սկզբունքներուն իրագործումը, ներառեալ՝ Արցախի Զանրապետութեան միջազգային ճանաչման յանձնարարութիւնը եւ Արցախի քաղաքացիներու իրաւունքներուն պաշտպանութիւնը:

Երկրորդ հաւաքը՝ «Զամագործակցութիւն յանուն արդարութեան եւ խաղաղութեան» անունով, տեղի ունեցաւ 11 հոկտեմբեր 2019-ին, դարձեալ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ: Զաւաքը կազմակերպուած էր ԶՅ Դաշնակցութեան եւ Արցախի Զանրա-

պետության արտաքին գործոց նախարարության համագործակցությամբ: Անիկա համախմբեց Արցախի բարեկամները աշխարհի չորս ծագերէն: Արցախի բարեկամներու համաժողովին գլխավոր նպատակն էր ընդլայնել ապակեդրոնացած համագործակցութիւնը Արցախի Յանրապետության եւ օտար պետութիւններու տարբեր շրջաններուն եւ քաղաքներուն միջեւ, նոր թափ հարդրել Արցախի արդէն առկայ միջազգային կապերուն, ինչպէս նաեւ ստեղծել Արցախին աջակցող կառոյցներու, քաղաքական գործիչներու եւ մտաւորականներու ու ակադեմականներու միաւորող ցանց: Համաժողովին մասնակցեցան շուրջ 30 երկիրներէ աւելի քան 150 քաղաքական-հասարակական գործիչներ ու մտաւորականներ: Արցախի բարեկամներու հաւաքէն ետք նոյնպէս հռչակագիր մը հրապարակուեցաւ: Այս հռչակագիրին ընդմէջէն համաժողովին մասնակիցները պատրաստակամութիւն յայտնեցին այսուհետեւ եւս զարգացնելու եւ խորացնելու երկխօսութիւնը Արցախի Յանրապետության հետ՝ հասարակական, քաղաքական եւ մտաւորական լայն շրջանակներու ներգրաւումով, անոնք կոչ ուղղեցին միջազգային հանրութեան ձեռնարկելու բոլոր քայլերուն՝ ժողովըրդավարութիւնը յառաջ մղելու, ինչպէս նաեւ շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման ուղղուած միջազգային համագործակցութեան մէջ Արցախի լիարժէք մասնակցութեան առջեւ դրուած խոչընդոտները չեզոքացնելու ուղղութեամբ, ինչպէս նաեւ յայտարարեցին Արցախի բարեկամներու միջազգային ցանց՝ «Փրօ Արցախ»-ը ստեղծելու մասին՝ միջազգային հարթակներուն վրայ Արցախի մասին տեղեկացուածութեան մակարդակը բարձրացնելու, արցախահայութեան օրինական շահերը պաշտպանելու եւ միջազգային հոլովոյթներուն մէջ Արցախի ներգրաւումին աջակցելու նպատակով:

Տորումները, համաժողովները, տարբեր ձեւաչափերու հանդիպումներն ու ժողովները շատ լաւ եւ յաջող նախաձեռնութիւններ էին, որոնք տեղի ունեցան անցնող տարեշրջանին ընթացքին: Նաեւ՝ չմոռնանք, անցեալ տարի շարունակուեցան ՀՀ-ի Հայ դատի աշխարհա-

տարած յանձնախումբերուն նախաձեռնութեամբ տարբեր երկիրներէ խորհրդարանականներու, քաղաքական գործիչներու եւ մտաւորականներու այցելութիւնները Արցախ: Այս բոլոր համաժողովներուն եւ ժողովներուն քննարկումները եւ առաջադրանքները կը գործնականանան, եթէ նաեւ նախաձեռնող կողմը՝ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, քաղաքական հոլովոյթին ընդմէջէն իր դիրքերը աւելի եւս ամրապնդէ Արցախի գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն մէջ: Այս նպատակը իրականութեան վերածելու համար լուրջ առիթ կայ յառաջիկայ տարի՝ 2020-ին, երբ մարտ ամսուան ընթացքին Արցախի մէջ միաժամանակ տեղի պիտի ունենան թէ՛ նախագահական եւ թէ՛ խորհրդարանական ընտրութիւններ: Ստեղծուած է բաւական բարդ իրավիճակ: Կան միտումներ, որ իշխանափոխութենէն ետք Հայաստանի մէջ ստեղծուած վիճակները՝ ներքին պառակտման խորացում, անհանդուրժողականութիւն եւ այլն, ներթափանցեն նաեւ Արցախ աշխարհ:

Այս ընդհանուր խորապատկերին մէջ Դաշնակցութիւնը ձեռնածալ չէր կրնար մնալ: Այս առումով ալ ՀՀ-ի Արցախի կառոյցը որոշեց յառաջիկայ տարուան ընտրութիւններուն իր մասնակցութեան ձեւաչափը ճշդելու համար հրաւիրել արտակարգ շրջանային ժողով, բայց մինչ այդ խորհրդակցութիւններու երկու փուլնոց շարք մը ունենալ Արցախի խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերուն ու նախագահի հաւանական թեկնածուներուն հետ: Խորհրդակցութիւններու երկփուլ ձեւաչափը կը միտեր նախ համաձայնութիւն գոյացնել միասնական օրակարգի մը շուրջ, երկրորդ՝ համախոհութիւն գոյացնել նախագահի համաձայնեցուած թեկնածուի շուրջ: Պետք է ըսել, որ միասնական օրակարգի հարցին շուրջ մասնաւոր տարակարծութիւն չկար, բոլոր կողմերն ալ ողջունեցին Դաշնակցութեան նախաձեռնութիւնը այդ օրակարգը առաջադրելու առումով: Սակայն համաձայնեցուած թեկնածուի բաժինով համախոհութիւն կարելի չէր գոյացնել, որովհետեւ, բնական է, անձնական փառասիրութիւններն ալ մեծ դեր կը խաղան այս մարզին մէջ, եւ իւրաքանչիւր յաւակնոտ թեկնա-

ծու պիտի ուզեր, որ քաղաքական ուժերը իր անձին շուրջ միասային:

Այս ընդհանուր մթնոլորտին մէջ էր, որ 15 դեկտեմբեր 2019-ին, ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի ներկայութեան, տեղի ունեցաւ ՀՀ Արցախի կազմակերպութեան արտակարգ Շրջանային ժողովը, ճշդելու համար Դաշնակցութեան դիրքորոշումը արցախեան համապետական ընտրութիւններէն:

Արտակարգ շրջանային ժողովը քննարկեց այդ ընտրութիւններուն Դաշնակցութեան մասնակցութեան հարցը եւ ամփոփեց վերոյիշեալ միասնական օրակարգին շուրջ համաձայնեցուած թեկնածու առաջադրելու հարցով ՀՀ Արցախի Կեդրոնական կոմիտէի նախաձեռնած բանակցութիւններուն արդիւնքները: Ժողովը որոշեց, որ Դաշնակցութիւնը առանձին ցանկով մասնակցի խորհրդարանական ընտրութիւններուն, իսկ նախագահական ընտրութեան համար առաջադրուեցաւ Դաշնակցութեան սեփական թեկնածուն: Որոշուեցաւ ՀՀ Դաշնակցութեան նախընտրական ծրագիրը հիմնել հետեւեալ դրոյթներուն վրայ. Արցախեան հիմնախնդիր լուծման հոլովոյթին մէջ ապահովել Արցախի Հանրապետութեան Սահմանադրութեան թիւ 175 յօդուածին անվերապահ իրականացումը, Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինքի իրաւապայմանագրային ամրագրումը կատարել, ընկերային արդարութեան, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ օրէնքի գերակայութեան վրայ հիմնուած ներազգային համերաշխութիւնը ապահովել, փտածութեան եւ հովանաւորչութեան դէմ անզիջում պայքար իրականացնել, զսպումներու եւ հակակշիռներու գործիքակազմերու ներդրումով պե-



տական համակարգի հաւասարակշռութեան, անմիջական ժողովրդավարութեան ամրապնդման եւ ընդլայնման ուղղուած՝ Արցախի Հանրապետութեան Նոր սահմանադրութիւն ընդունիլ, վերաբնակեցման համակարգուած, լայնածաւալ եւ հետեւողական աշխատանք իրականացնել եւ «Ազգ-բանակ» հայեցակարգին հիման վրայ պաշտպանութեան եւ անվտանգութեան համակարգերը կա-

տարելագործել:

Նախընտրական ծրագիրի վերոնշեալ դրոյթներուն իրականացման եւ այս առաջնահերթութիւններուն շուրջ հանրութեան համախմբման նպատակով ժողովը որոշեց Արցախի Հանրապետութեան նախագահական ընտրութեան առաջադրել ՀՀ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Արցախի Ազգային ժողովի «Դաշնակցութիւն» խմբակցութեան անդամ Դաւիթ Իշխանեանի թեկնածութիւնը:

Ահաւասիկ փորձեցինք ներկայացնել, թէ մէկ տարուան տեւողութեան ՀՀ Դաշնակցութիւնը ի՞նչ դիրքորոշումներ արտայայտեց եւ ինչպիսի՞ գործունէութիւն ծաւալեց արցախեան ուղղութեամբ: Մէկ բան յայտնի է, որ բոլոր դիրքորոշումները եւ գործունէութիւնները համահունչ են Դաշնակցութեան բարձրագոյն եւ շրջանային գերագոյն ժողովներուն տրամադրութիւններուն: Այլ բան ալ չէր կրնար ըլլալ ՀՀ Դաշնակցութեան նման գաղափարական կուսակցութեան մը մակարդակով:

ՅԱԿՈԲ ՈՒՌԱՅԵՅԻ



ԵՌԱՄԻԱՄՆԱԿԱՆ ՋԱՆՔԵՐՈՎ

Շուրջ երկու տարի առաջ «Ազդակ» օրաթերթի խմբագիր, մեր սիրելի ընկեր Շահան Գանտահարեան Արցախում էր, Ստեփանակերտում: ԶՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտեի հրաւերով ժամանել էր մասնակցելու ԶՅԴ 127-ամեայ տարեդարձի տոնակատարությանը՝ որպես բանախօս: Ընկերը ցանկութիւն յայտնեց այցելել Ապրիլեան քառօրեայ պատերազմում նահատակուած ընկեր Միքայել Զաքեանի որդու՝ կամաւորական Նորայրի շիրիմին: Ընկեր Զաքեանի հետ ուղեւորուեցինք գերեզմանատուն: Շահանը ցանկութիւն յայտնեց անձամբ գնել ծաղիկներ՝ շիրիմին խոնարհելու համար: Խանութ մտնելուց անմիջապէս յետոյ ծաղկավաճառն անսպասելի ճանաչեց ընկեր Շահանին, մի քիչ զարմացած ակամայ բացագանչեց. «Սա սփիւռքի մեր էն տղան ա: Վիճակը ոնցա՞յ Սիրիայում»: Մենք էլ զարմացանք, իսկ Շահանն ակնյայտ յուզուեց եւ իր իւրապատուկ ժպիտը դեմքին պատասխանեց. «Լաւ է, լաւ է»:

Դէ, ի հարկ է, այդ օրերին Սիրիայի մեր

հայրենակիցների վիճակը մեր բոլորիս մտահոգութեան առարկան էր, եւ այդ առիթով հայկական զանազան լրատուամիջոցներ կապուում էին «Ազդակ»-ի գլխաւոր խմբագրի հետ՝ տեղեկանալու համար Սիրիայի մեր հայրենակիցների կացութեան մասին:

Պէյրուքը, ժամանակին Միջին Արեւելքի «Յարսն» էր: Տեղի հայկական համայնքը եւ հաստատութիւնները համարուել են սփիւռքի կեդրոնը:

Դա ունի իր պատճառները: Նախ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաստատումը Անթիլիասում, ապա՝ տարիներ շարունակ ԶՅԴ Բիւրոյի նստավայրը Պուրճ Յամուտում, դրանց կողքին՝ Ճեմարանը, Զամազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը, ԶՄԸՄ-ը, հայակերտման ու հայապահպանման առաքելութիւնը ստանձնած միւս հաստատութիւնները:

1970-ական թուականների Լիբանանի

պատերազմը, տարածաշրջանի անկայուն կացութիւնը, իսրայելա-պաղեստինեան հակամարտութիւնն ու դեպի Արեւմուտք գաղթը անդամնալի վնասներ են հասցրել Լիբանանի հայ համայնքին:

Այս օրերին՝ լիբանանեան հայկական կառոյցները, եւ յատկապէս նրա տեղեկատուական ու գաղափարախօսական սիւներից մէկը՝ «Ազդակ» օրաթերթը, բոլորիս աջակցութեան կարիքն ունեն: Լիբանանի ներքաղաքական կացութիւնը վերջին ամիսներին բազում եւ բազմազան դժուարութիւնների դէմ յանդիման են կանգնեցրել աւելի քան 90 տարի հայկական ինքնութիւնը պահպանող, հայկական համայնքը համախմբող եւ նրա գաղափարական խօսափողներից մէկը հանդիսացող «Ազդակ»-ին:

Ինչպէս տեսանք՝ «Ազդակ»-ի գլխաւոր խմբագիրին ճանաչում են նաեւ Արցախում, Շահանին գիտեն հայկական օրակարգով հետաքրքրուող իւրաքանչիւր հայկական օճախում, ընդունում ու գնահատում որպէս մերձաւոր հարազատի: Եւ ինչպիսին ինքն է իր անուրանալի լաւագոյն արժանիքներով, նոյնպիսին եւ իր խմբագրած օրաթերթն է՝ «Ազդակ»-ը հայակերտումի եւ հայրենակերտումի, հայեցի ազգապահպանման ու համախմբման իր իմաստալի ու քաջալերիչ խօսքով՝ տոգորուած հայոց համազգային նուիրական իղծերի ու նպատակների իրականացման վճռականութեամբ ու լաւատեսութեամբ: Արցախցիներիս համար, բնականաբար, առանձնակի կարեւորում են «Ազդակ»-ի եւ նրա գլխաւոր խմբագրի քաղաքական անդրադարձերն ազրպէյճանա-արցախեան հակամարտութեան բանակցային կարգաւորման ընթացիկ եւ հնարաւոր զարգացումներին:

Ասուածը դրուատանքի խօսք չէ, այլ անժխտելի վկայութիւն առ այն, որ, չնայած մինչ այդ կրած կորուստներին ու մեր բարեկամ երկրի ներքաղաքական կեանքի վերջին շրջանի լարուածութեամբ պայմանաւորուած ընթացիկ դժուարութիւններին, Լիբանանի հայ համայնքը՝ շարունակում է

մնալ հայկական սփիւռքի կարեւորագոյն կեդրոնը, իսկ «Ազդակ»-ը՝ համահայկական լրատուական դաշտի պահանջուած պարբերականներից մէկը: Յետեւապէս, մենք բոլորս պարտաւոր ենք համատեղ, համակողմանի օժանդակութեամբ սատար կանգնել ծանր կացութեան մէջ յայտնուած մեր լիբանանահայ քոյրերին ու եղբայրներին, համայնքի հաստատութիւններին, այդ շրջածիրում մեծ եւ անուրանալի ազգային արժէք ներկայացնող «Ազդակ» օրաթերթին՝ որպէս մեզնից իւրաքանչիւրի հոգու պարտք եւ Հայաստան-Արցախ-սփիւռք եռամիասնութեան հերթական արտայայտութիւն:

ԱՐԱ ԴՈՒՆՈՒՉԵԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (ՄՊԱՍՈՒՄՆԵՐ ՄԱՍԼՈՅ ՄԵՐՕՐԵԱՅ ՄՊԱՍԱԴՈՐԷՆ)

Կար ժամանակ, երբ մամլոյ սպասաւոր ըլլալու համար կը բաւէր որ մարդ լրագրութեան վկայականի կողքին՝ մշակած լեզու, միտք ու զարգացում ունենար:

Կար նաեւ ժամանակ, որ մամլոյ սպասաւոր ըլլալու համար այդքանն ալ անհրաժեշտ չէր: Կը բաւէր, որ ենթական երկրորդական վարժարան մը աւարտէր, գրական որոշ հակումներ ունենար եւ քիչ մըն ալ «գրիչ շարժել» գիտնար:

Ի վերջոյ, իւրաքանչիւր խմբագրատան մէջ կար վաստակ ու կշիռ ունեցող հեղինակութիւն մը՝ խմբագիր մը, որուն կարմիր գրիչը կը ձեւաւորէր եւ կը վերամշակէր ամենէն անխնամ ձեռագիրը նոյնիսկ:

Այս բոլորը, սակայն, այն հեռաւոր օրերուն էին, երբ տակաւին համացանցի դարաշրջանը չէինք թեւակոխած, տեղեկատուական արհեստագիտութեան ծանօթ չէինք, ընկերային ցանցեր գոյութիւն չունէին եւ մարդոց կեանքը կ'ընթանար դանդաղ ու միօրինակ կշռոյթով:

Այսօր կ'ապրինք նոր ժամանակներու մէջ, ուր արմատական փոփոխութիւններ կը յեղաշրջեն արժէքներ եւ անսնդութիւններ, կառոյցներ եւ համակարգեր, եւ ինչպէս բոլոր մարդերու, մամլոյ պարագային եւս տիրապետողը կազմակերպ քառսն է: Այն խառնուրդը, որ ստեղծուած է անսնդական, էլեկտրոնային, քաղաքացիական եւ բջիջային մամուլի մէկտեղումով:

Եթէ անսնդական եւ էլեկտրոնային եզրերը ծանօթ հասկացողութիւններ են, քաղաքացիական եւ բջիջային մամուլ բնորոշումները համեմատաբար անելի նոր են: Քաղաքացիական մամուլը՝ Citizen journalism-ը կ'ակնարկէ անհատ մարդոց՝ քաղաքացիներու



կողմէ կայքէջերու, պլոկներու եւ համացանցի զանազան հարթակներուն վրայ տեղադրուող գրութիւններուն, մինչ բջիջային մամուլը՝ Mobile journalism-ը նկատի ունի հեռաձայնով ընկերային ցանցերու վրայ կատարուող կարճ ու դիպուկ գրառումները, որոնց կրկան ընկերանալ տեղւոյն վրայ նկարուած նկարներ եւ տեսանիւթեր:

Մամլոյ վերոյիշեալ տարբերակներուն միջեւ սահմաններ չկան այլեւս: Բոլորը կ'օգտուին իրարմէ: Մէկը կ'արտատպէ միւսէն: Իսկ թէ ո՞ր կը սկսի մէկը եւ ո՞ր կը վերջանայ միւսը այնքան ալ յստակ չէ. անոր համար ալ իրավիճակը բնորոշեցինք իբրեւ կազմակերպ քառս: Իսկ այս քառսին մէջ տեղ ունենալու եւ տեղը կարենալ պահելու համար անհրաժեշտ է աշխատանքի այնպիսի **տիկամիզմ**, որ ըլլայ իւրայատուկ, արագ եւ մասնագիտական:

Չետեւաբար, մամլոյ սպասարկուի մերօրեայ կերպարը, նորարար արհեստագիտութեան այս օրերուն, մեզի կը ներկայանայ անցեալէն բաւական տարբեր, վերոյիշեալ երեք յատկութիւններով ու պահանջներով:

Այդ պահանջներէն առաջինը, ինչպէս նշեցինք, իւրայատկութիւնն է: Այսօր չկան փակ ընկերութիւններ: Չկան մէկ թերթի ու մէկ



կարծիքի ընկերություններ, ուր ինչ որ ներկայացուի մարդիկ «**հալած իւղի նման**» ընդունին: Աշխարհագրական, քաղաքական, գաղափարական ու լեզուական պատնէշները քանդուած են եւ մարդիկ բացուած են աշխարհին ու անոր նորություններուն՝ օրէ օր դառնալով աւելի պահանջկոտ: Ամէն բան չի բաւարարէր այսօրուան դժուարահաճ ընթերցողը: Մարդիկ թերթի դիմելու կարիքը անգամ չունին, որովհետեւ այլեւս իրենք կը ճշդեն, թէ ո՞ր նիւթը, ուրկէ՞, ե՞րբ եւ ի՞նչպէս կրնան ստանալ, հետեւաբար անոնք պէտք չունին մամլոյ սպասաւորներու: Համացանցը կը վիստայ նիւթերով: Ընդհակառակն, մամլոյ սպասաւորներն են, որոնք կարիքը ունին ընթերցողներու եւ, հետեւաբար, այսօրուան նիւթերու անսահման տարափին մէջ, անոնք կոչուած են այնպիսի իւրայատուկ նիւթեր մշակելու եւ կամ՝ ծանօթ նիւթեր այնպիսի նորարար մօտեցումներով ներկայացնելու, որ անպայման անոնք քաջողականութիւն մը ունենան իրենց մէջ: Այլապէս, ի՞նչն է, որ ընթերցող մը պիտի մղէ հազարաւոր նիւթերու ընդմէջէն տուեալ նիւթ մը կամ ստորագրութիւն մը ընտրելու:

Ընթերցողներ մեր օրերուն թերթերէ աւելի նիւթեր կը փնտռեն եւ նիւթեր գտնելու համար նորարար արհեստագիտութեան միջոցներուն կը դիմեն: Հետեւաբար, կ'արժէ, որ ներկայացուած նիւթերը ըստ կարելիութեան յարմարին օրուան պահանջներուն՝ ըլլան

կարճ, կուռ, նկարներով կամ տեսանիւթերով հարուստ, որպէսզի անպայման յաւելեալ արժէք մը տան նիւթին:

«**Յաւելեալ արժէքի մամուլն է**» այսօր փնտռուածը, իսկ նման մամուլ կարելի է ունենալ միայն մամլոյ սպասաւորներու ստեղծագործական արտակարգ ճիգով, լաւագոյն տեղեկութիւնները ճիշդ ձեւով, ճիշդ տեղին ու ճիշդ ժամանակին մարդոց հրամցնելով:

Երբ ճիշդ ժամանակին կ'ըսենք, բնականաբար, կ'անդրադառնանք արագութեան, որ այսօրուան մամլոյ սպասաւորին յաջողութեան երկրորդ նախապայմանն է: Դանդաղիլ կը նշանակէ մրցունակ ըլլալէ դադրիլ:

Կը նշանակէ ժամանակավրէպ եւ անհրապոյր ըլլալ: Մինչդէռ պահանջուածը արագութիւն է. տեղեկահաւաքի արագութիւն, տեղեկութիւններու մշակումի արագութիւն եւ տեղեկութիւններու փոխանցումի արագութիւն, ինչ որ կ'ենթադրէ լայն պատրաստութիւն եւ փորձառութիւն, որպէսզի արագութեան հեւքին մէջ ճշգրտութիւնն ու ճշմարտութիւնը չկորսուին, յաջողութեան եւ ժողովրդականութեան սիրոյն՝ բարոյական արժէչափերն ու լրագրական սկզբունքները չտուճակոխուին:

Ծանր է այսօրուան մամլոյ սպասարկուին պարտականութիւնը, որովհետեւ անկէ կ'ակնկալուի անցեալէն աւելի պատրաստութիւն եւ պատասխանատուութիւն, որպէսզի ան կարենայ շատ արագ հակազդել շրջապատի երեւոյթներուն, իր տեղեկատուութեան միացնելով վերլուծութիւնը, իսկ խօսքի ազատութեան՝ մտքի հասունութիւնը:

Մէկ կողմէ պէտք է բաւարարել միայն վերնագիրներ եւ գլխաւոր տեղեկութիւններ փնտռող ընթերցողները, իսկ միւս կողմէ պէտք է գոհացնել ամբողջական եւ լայն տեղեկատուութիւն պահանջողները: Իսկ կարելի՞ է նման բան: Այսօրուան մամլոյ-տեղեկատուական քաոսին մէջ կարելի՞ է, եթէ մամլոյ սպասարկու մը բազմակողմանի հմտութիւններով իր նիւթը մշակէ այնպէս մը, որ ան հետաքրքրէ բոլոր ճաշակներու տեր ընթերցողները: Իսկ նման վարպետութիւն կը պա-

հանջե մասնագիտական մօտեցում, որ մերօրեայ մամուլյ սպասարկուին բնորոշ երրորդ յատկութիւնն է:

Սիրողական մօտեցումը, բարի կամեցողութիւնը եւ «գրիչ շարժելու» տրամադրութիւնը տեղ չունին մերօրեայ մամուլին մէջ: Չեն կրնար ունենալ նաեւ ապագային, որովհետեւ այսօր Multimedia մամուլի ժամանակն է եւ մամուլյ ներկայացուցիչներ պարտին լաւապէս տիրապետել արդի արհեստագիտութեան միջոցներուն եւ անոնց օգտագործման ձեւերուն, մանաւանդ որ անոնք տեղեկութիւն արտադրողներ չեն միայն, այլ՝ տեղեկութիւն փոխանցողներ են նաեւ: Անոնք միաժամանակ կը գրեն, իրենց նիւթին գեղարուեստական ձեւաւորումը կը կատարեն, համապատասխան լուսանկարները եւ տեսանիւթերը կը պատրաստեն, նիւթը ելեկտրոնային, քաղաքացիական թէ բջիջային մամուլի հարթակներուն կը պատշաճեցնեն, ընկերային ցանցերով կը տարածեն եւ, ի վերջոյ, ընթերցողներու արձագանգներուն կը պատասխանեն:

Իսկ այս բոլորը առանց մասնագիտական պատրաստութեան եւ մնայուն վերապատրաստութեան կարելի չէ կատարել:

Անշուշտ, արդարօրէն կրնան գտնուիլ առարկողներ, թէ քաղաքացիական եւ բջիջային մամուլի ներկայացուցիչները կրնան մասնագետներ չըլլալ: Սովորական համակարգիչ մը կամ հեռաձայն մը ունեցողը կրնայ դիրտութեամբ նիւթ փոխանցել եւ հանրային կարծիք ձեւաւորել:

Առարկութիւնը տեղին է եւ մեզի կը վերյիշեցնէ այն քառսը, ուր կը գործեն շատերը, սակայն կը փայլին քիչերը:

Այսօր, այդ քառսը հիմնովին փոխած է մամուլյ աշխարհը: Աւանդական թերթերը դադրած են ամենէն տարածուն տեղեկատուական աղբիւրները ըլլալէ: Նորութիւններու ներկայացման բովանդակային եւ **թեքնիք** փոփոխութիւններուն հետ փոխուած են ընթերցանութեան ձեւերն ու սովորութիւնները: Փոխուած են նաեւ ընթերցողներու սպասումներն ու պահանջները՝ մամուլյ սպասաւորներէ:



Փոփոխութեան տեւական ընթացքով, մէկ կողմէ քաղաքացիական եւ բջիջային մամուլը կը զարգանայ, իսկ միւս կողմէ՝ ելեկտրոնային եւ աւանդական մամուլը կատարելագործման նոր ուղիներ կ'որոնէ: Առաջին երկուքը թիրախ ընտրած են թուային արհեստագիտութեան օրերուն ծնած սերունդը: Ելեկտրոնային մամուլը կը հետաքրքրէ միջին սերունդը, իսկ աւանդական մամուլը՝ համեմատաբար տարեցները, որոնք տարիներու վարժութեամբ մինչեւ վերջ կառչած կը նման թուղթին ու մելանին:

Յեղաշրջումը մամուլյ աշխարհին մէջ կը շարունակուի անվերջ եւ յեղաշրջումին առաջնորդները լաւապէս կը գիտակցին, որ փոփոխութիւնը անխուսափելի է, յառաջդիմութիւնը՝ պարտադիր: «Այն օրը որ փոփոխութենէ կը դադրիս, կը նշանակէ թէ վերջացած ես», պիտի ըսեր Պենճամին Ֆրանքլին:

Յետեւաբար, այսօր հարցը այլեւս այն չէ, թէ՛ կա՛մ կը յարմարիս կա՛մ կը մեռնիս: Հարցը այն է, թէ՛ կա՛մ կը փոխուիս կա՛մ կը մեռնիս:

Իսկ այս հարցը մամուլյ մերօրեայ սպասաւորին դիմագրաւած մեծագոյն մարտահրաւերն է, որովհետեւ հայ մամուլը ծնած է ո՛չ թէ մեռնելու, այլ՝ երկար ապրելու համար:

Վ. ԱՄԱԳԵԱՆ

ԱՆՑՆՈՂ ՏԱՐՈՒԱՆ ՄԵՐ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

Այսօր, ալեյի քան երբեւէ, հին տարին՝ 2019-ն աւարտուում է աշխարհի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, ազգային ինքնութեան պահպանման անհանգիստ, վտանգուած վիճակով:

Տարբեր երկրամասերում բռնկած ժողովրդային շարժումները, իրենց ազգային, մարդկային եւ քաղաքական իրաւունքների պահպանման համար, խօսուն վկայութիւնն են համատարած այն բոլոր դժգոհութիւններին, որոնք երկար տարիներ լռութեամբ դիմագրաւել են այդ ժողովուրդները:

Անցնող տարում, ահազանգիչ թուերով ժողովուրդներ տեղահան եղան, մատնուելով անյայտ ճակատագրի: Իշխող մեծ տերութիւնները արդէն քանիեորդ անգամ, իրենց շահերին ի նպաստ, փոփոխում են երկրագրւորի քաղաքական քարտեւը: Ժամանակակից գաղութատիրութիւնն ու դրամատիրութիւնը, ստեղծել են այնպիսի մի քառս, ուր շարունակուում է ոտնակոխ լինել ժողովրդային, մարդկային եւ տարածքային իրաւունքները:

Մեծ տերութիւնները օգտագործում են



իրենց տնտեսական հզօրութիւնը փոքր ժողովուրդներին իսպառ ոչնչացնելու, նրանց տեղանքային հարստութիւններին տիրելու համար: Նախկին գաղութատիրութիւնը շարունակուում է հրամցուել նոր միջոցներով ու նոր անուանումով, որպէս աշխարհաքաղաքականացում:

Այդ նոյն տերութիւնների կողմից պարտադրուած անհիմն պատերազմները, արտաքին ուժերի ազդեցութեան հետեւանքով ստեղծուած ներքին պառակտումները, տնտեսական պատժամիջոցները, հիմնովին քայքայում են տուեալ երկիրը:

Տեղահանութիւնները, արտագաղթողների օրէ օր աճը, փախստականների, ապաստան փնտռելու համար իրենց կեանքը վտանգողների անհաւատալի չափերի հասնող թիւը, այլեւս այնքան սովորական երեւոյթ է դարձել, որ մինչեւ իսկ հաղորդագրութեան նիւթ չի դառնում: Ալեյին, այդ վիճակը ստեղծող քաղաքական գործիչները բացայայտօրէն այն դարձրել են իրենց ընտրութիւնների եւ վերընտրութիւնների հիմնական խայծը, իսկ Միջին Արեւելքում այդ իրավիճակը ստեղծողներից գլխաւորը՝ Թուրքիան, գաղթականների հոսքը օգ-



տագործում է Երրոպական Միութիւնից միլիամետր կորգելով:

Սուլեյման դրամատիքուրները, պարտադրուած լռութիւնը, յօրինուած մեղադրանքները, անհիմն պատերազմները, իրականութեան աղաւաղումը, այսօրուան տիրող քաղաքական ուժի շարժման լծակն է դարձել:

Քարիւղի կողոպուտին աւելացել է արդիական զենքերի խելայեղ առ ու ծախը, անհաւատալի եկամուտ բերելով տուեալ երկրին, գնող երկրներին էլ հրահրելով հարեւան երկրները ոչընչացնելուն:

Յեցի նման երկրները քայքայում են ներքին խլրտումներից: Անապահովութեան, վտանգուած կեանքի ալիքը մարդկանց դուրս է նետում իրենց երկրից, որի հետեւանքով ժողովուրդները կորցնում են իրենց երկիրը, լեզու, մշակոյթը, ազգային անհոյստ-արժէքները եւ այս ամէնի հաւաքածուն՝ ազգային դիմագիծը:

Վառ օրինակը քաղաքակիրթ հռչակուած մարդկութեան աչքի առջեւ անհիմն պատերազմով ոչնչացուող, 21-րդ դարում սովամահութեան մատնուող Եմէնի ժողովրդի, կամ հարիւր հազարաւոր բաց երկնքի տակ մազապուրծ ապաստանած ռոհինկանների վիճակն է:

Միայն Սիրիայից փախստական գաղթականների թիւը մօտակայ երկրներ՝ Յորդանան, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Թուրքիա, ըստ ՄԱԿ-ի տուեալների հասնում է 1.6 միլիոնի:

23 միլիոնից աւել արտագաղթած կայ Երրոպայի տարածքում, որը նշանակում է այդքան ազգային դիմագծի, լեզուի, ինքնութեան կորուստ: Ժամանակի ընթացքին այս արտագաղթածները, յատկապէս նրանց յաջորդող սերունդը, աստիճանաբար ձուլուելով տեղական բարքերին, կորցնելու են մայրենի լեզուից սկսած, իրենց ազգային ինքնութեան բոլոր յատկանիշները:

Այս օրինագծում նոր արհեստագիտութեան արագընթաց աճը՝ աշխարհի տարբեր անկիւններում կատարուող աննշան երեւոյթներն անգամ մարդկութեանը հաղորդակից



դարձնող նորագոյն միջոցները, ազդում են յարակից երկրների քաղաքական իրավիճակի փոփոխմանը: Ազդում են յատկապէս նոր սերունդի մտածելակերպի, գործելակերպի վրայ: Աւելի ուսումնական, տեղեկացուած եւ աւելի անհանդուրժող, աշխարհի տարբեր ծայրերում նրանք ուղի են ելել իրենց երկիրն ու ստեղծուած արժէքներին տեղ կանգնելու, անընդունելի համարելով այլեւս ոչ միայն իրենց ծնողների, այլ նաեւ իրենց շահագործուած վիճակը, պահանջելով արդարադատութիւն: Պահանջելով ի օգուտ իրենց երկրի ու ժողովրդի շահերը պաշտպանող օրէնքներ, մինչեւ իսկ երկրագնդի բնութեան, կենսոլորտի մաքրութեան պահպանում: Այս բոլորի փայլուն օրինակը տեսնում ենք՝ Յոնկ Զոնկում, Իրաքում, Չիլիում, Սոմալիայում, Լիբանանում, Յարաւային Ամերիկայում, ափրիկեան եւ մի շարք այլ երկրներում:

Բնականաբար աշխարհում տիրող այս մթնոլորտում մեր բոլորի մտածումը մեր երկրի ու մեր աշխարհասփիւռ ժողովրդի կեցութեան ու ապահով շարունակման վրայ է կեդրոնացած:

Մեր երկիրը թէեւ մէկ տարի առաջ, այդ շարժման արդիւնքում իշխանափոխութիւն ձեռք բերեց ողջ հայութեան զօրակցութեամբ եւ բարեբախտաբար աշխարհի այս խառնաշփոթութեանը մաս չի կազմում, սակայն դեռ բաւական հեռու է լիրիւրաւ անկախ, համայն հայութեան իրաւունքները պաշտպանող պետութիւն դառնալու տեսլականից:

Տարեվերջի վերլուծման ընձեռած հնարաւորութիւնից օգտուելով, ուզում եմ անդրադառնալ այն բացթողումներին, որոնք ակընյայտ են այսօրուան մեր կեանքում եւ որոնք



շարունակման դեպքում մենք նույնպես կուլ կը գնանք աշխարհում ստեղծուած իրավիճակին:

Մեր երկրում տարիներ կուտակուած տնտեսական քայքայուածութիւնը, բոլոր բնագաւառներում տիրող փտախտը, իշխանութեան եւ ժողովրդի մէջ արմատացած նախկին մտածողութիւնը, ներքաղաքական ուժերի ճնշումը, տարածքային անապահովութիւնը եւ յատկապէս արտաքին քաղաքականութեան մէջ ազգային հեռանկարի բացակայութիւնը, ազդում են երկրի եւ ժողովրդի վերելքին:

Որպէս անկախ երկիր դեռ լիովին ինքնէրս մեզ չհաստատած, մեր երկրի ամբողջական սահմանները չամրագրած, Արցախի ամբողջականութիւնը չապահոված, գործում եւ որդեգրում ենք օրէնքներ Եւրոպական հարիւրաւոր տարիներ իրենց հաստատած երկրներին համահաւասար, աւելի ճիշդ կապկելով նրանց: Թւում է օտար պետութիւններն են ղեկավարում երկիրը: Արդիւնքում տեսնում ենք մեր յեղեղուկ, անկայուն վիճակը: Դեռ հին սահմանադրութեամբ է մեր նոր իշխանութիւնը ղեկավարում, դեռ անկախ օրէնսդիր մարմին չունենք:

Առանց հզօր ռազմական ուժի եւ բանակի, պարտադիր զինծառայութիւնը առաջարկուում է դարձնել ինքնակամ, կապկելով հզօր պետութիւններին, որոնք իրենց կողոպտած երկրների դրամով են բանակ ապահովում ցանկացած պահին:

Երկրաշարժային աշխուժ գօտի լինելով եւ 31 տարի առաջ անհաւատալի կորուստներ

տալուց յետոյ անգամ դեռ շինարարութեան ամրութեան եւ դրա հսկողութեան խստագոյն օրէնքներ չունենք: Դեռ այդ աղէտից անօթեւան մնացած ընտանիքներին հոգալու անմիջական ծրագրեր չունենք: Բացակայում է նաեւ ժողովրդին նախապատրաստելու, աղէտի դեպքում անմիջական օգնութիւն հասցնելու ծրագրերը:

Շարունակում է խօսքի, անձնական գաղափար ունենալու արգելք ոչ միայն վերնախաւի, այլ նաեւ կուրորէն այդ նոյն վերնախաւին հետեւողների կողմից, մոռանալով, որ այդ բարձրաձայնողներն էլ նոյնքան իրաւունք ունեն, գուցէեւ աւելի մտահոգ են իրենց երկրի ապագայով:

Միատեսակ եւ միեւնոյն ուղղութեամբ նայելն ու մտածել-վերլուծելը դարձել է երկրի հիմնական դիմագիծը:

Ցաւով պիտի նշեմ, որ չի առաջադիմում մեր ժողովրդի մտածելակերպը: Մենք դեռ մեր երկրի արտաքին եւ ազգային հարցերին մօտենում ենք հարիւր տարի առաջուան գաղափարներով եւ վերլուծում-մտածումներով: Ողջ աշխարհը ծայրահեղ քաղաքական ծրագրուած որոշումներով է պաշտպանում իր երկրի ե՛ւ տարածքները, ե՛ւ շահերը, իսկ մենք մեր խաղաղասիրութիւնն ենք հրամցնում մեր դէմ պատերազմի պատրաստող թշնամուն, դեռ շարունակում ենք բանակցել տարածքային զիջումների համար: Բայց չէ՞ որ մեղադրանքի սիւնին էինք գամում նախկին իշխանութիւններին իրենց վարած այդ նոյն քաղաքականութեան համար: Այսօր էլ, ինչպէս նախկինում, լուռ ունկնդրում ենք վերջերս Պրաթիսլաւայում ԵԱՀԿ-ի նախարարների համաժողովին մեր արտաքին գործոց նախարարի ներկայացրած բանակցութիւնների արդիւնքին: Ոչ մէկ բաց ժողովրդային քննարկում, ոչ մէկ արձագանգ, միայն լռութիւն, ինչպէս նախկին տարիներում էր: Բայց չէ՞ որ ժողովուրդն էր այլեւս իր երկրի համար որոշում կայացնողը:

Մեր կրած ամենածանր ժողովրդային, տարածքային, իրաւունքային կորուստները անխախտելի պահանջարկ դարձնելու փո-

խարեն, դեռ դնեդուռ ընկած ուրիշների ամենակալ ողորմածութեանն ենք սպասում: Հայ Դատը իր ամբողջ կարողութիւնը ներդնում է Միացեալ Նահանգներու կառավարութեանը համոզելու պաշտօնապէս ընդունելու Թուրքիոյ գործած Ցեղասպանութիւնը: Իսկ ո՞վ է համոզելու մեր իսկ կառավարութեան գործնական նախագիծ ձեւաւորելու եւ հաստատելու Թուրքիոյ դէմ մեր պահանջները:

Քաղաքական մտածողութիւնը իր տեղը զիջել է ամենօրեայ քաջքշուքներին, ներքին պառակտումներին: Տնտեսական բարուք կեցութիւնը, որը իւրաքանչիւր անձի իրաւունքն է, դարձել է մեր երկրի ժողովրդի միակ գերխնդիրը, մոռանալով, որ դրան հասնելու համար ամէնից առաջ տարածքային ապահովութիւն, մարդկային թիւ, անձի իրաւունքները պաշտպանող ու ամրագրող օրէնքներ, արդարադատ համակարգ պիտի ունենալ:

Այսօր մենք ականատես ենք ազգային դիմագծի եւ այն պահպանող կարելորագոյն գործօնների՝ լեզուի, պատմութեան, մշակութի աստիճանական կորուստին: Թէեւ մեր ժողովուրդը միշտ էլ անտարբեր է եղել իր պատմութեան ճշգրիտ իմացութեան հանդէպ, նոյնիսկ անկախութիւնից յետոյ չի էլ ձգտել ճշդելու աղաւաղուած իր պատմութիւնը: Արդիւնքում իր պետականութեան, իր ժողովրդի միւս կէսի պատմութիւնն իսկ չիմացող ժողովուրդը հեշտօրէն տրամադրուում է ատելութեան եւ թշնամանքի իրեն թելադրուող իրավիճակներում, տեղի տալով անիմաստ ներքին պառակտումների:

Եթէ մինչեւ օրս միայն մեր արեւմտահայերէնն էր վտանգուած, այսօր դրան անելանում է նաեւ արեւելահայերէնը: Մեր լեզուն բեռ ենք դարձրել եւ ժամ առաջ օտար լեզուի փայլուն իմացութեամբ ենք ուզում ազատել նրանից: Գրական, կամ իմացական հայերէնը իր տեղը զիջել է բարբառային այնպիսի հաւաքածուի, որ թարգմանչի կարիք ես զգում մինչեւ իսկ երկրի վարչապետին հասկանալու: «Պլստալն ու օպտիմալացումը», նոյնիսկ օտար երկրների բեմերից են հրամցւում, որպէս երկրի հիմնական լեզու: Այս



իրավիճակում համապատասխան մարմինները դեռ ուզում են միայն դպրոցական ուսուցմամբ սահմանափակել լեզուի լիիրաւ տիրապետումը: Մենք լեզուին տիրապետում ենք դպրոցում, բայց զարգացնում, հարըստացնում ենք բարձրագոյն հաստատութիւններում: Մինչեւ իսկ մեծ տերութիւնների համալսարանների առաջին տարիներում է պարտադիր իրենց մայրենի լեզուի ուսուցումը: Եթէ ընդօրինակում ենք նրանց, ապա պիտի ճիշդ ընդօրինակենք:

Թէեւ խոստովանեմ, որ մեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններն ու գիտական կեդրոնները, մինչեւ իսկ Ակադեմիան երկար տարիներ է հիմնական լուրջ փոփոխութեան կարիք ունեն:

Մենք մեր ունեցած հարստութիւնների յարգը այդպէս էլ երբեք չիմացանք եւ մեր անտարբերութեամբ քայքայում ենք եղածը: Նոյնիսկ մեր բնական հարստութիւնները չենք կարողանում պահպանել, վկան Ամուլսարի հանքի դեռ չվճռուած ճակատագիրը, այն դէպքում, երբ մեր պէս սահմանափակ ունեցւածքի եւ կարողութեան տեր երկիրը, ի սկզբանէ, որպէս երկրի կարելորագոյն օրէնք իր ընդերքի, այսինքն իր ժողովրդի, հարըստութիւնը առ ու ծախի չի կարող ենթարկել: Նոյնը վերաբերում է մեր անտառներին, մեր գետերի ու լճերի, մեր քաղաքների ու գիւղերի պահպանմանը:

Իրապէս դժուար, ամենօրեայ միասնական, երկարատեւ աշխատանք է երկիր պահելն ու զարգացնելը: Միայն իշխող կառավարութեան չի պատկանում այն, եւ միայն իրենց չի վերաբերում այս խնդիրների լուծումը: Իւրաքանչիւրիս իրաւասութիւնն է



խօսքով, գործով, ներդրումով, քննադատութեամբ, օրէնքների յարգմամբ ու պահպանմամբ, ազգային զարգացմամբ, ողջ հայութեան ներգրաւմամբ մեր երկրի բարգաւաճումը:

Վերը թուարկած բացթողումները, որը տարիների կուտակումներ են, բնականաբար գալիք տարում ամբողջովին լուծուող գործեր չեն, բայց եւ անմիջական մեր բոլորի միջամտութեան ու գործունէութեան առանցքում պիտի լինեն, որպէսզի այն չդառնայ մի նոր բեռ գալիք տարուան աւարտին:

Այսօր ամենահրատապ խնդիրը մեր բարեկեցութիւնից էլ առաջ, մեր Արցախի անգիջում, ամբողջական պահպանումն է, որը իրականացնելու համար անհրաժեշտ է մեր ժողովրդի միասնականութիւնը, իրար հանդէպ հանդուրժողականութիւնը եւ ամենակարեւորը՝ ոչ թէ զիջումով խաղաղութիւն մուրանք, այլ ազգային հեռանկարով շահենք այդ վերջնական խաղաղութիւնը:

Տարեսկզբի հնարաւորութիւնից օգտուելով շնորհաւորում եմ մեր եւ Արցախի սահմանները պաշտպանող բոլոր զինուորներին գալիք՝ նոր տարին: Մաղթում եմ նրանց բոլորին իրենց սխրագործութիւնների հետ համահաւասար կեանքի ապահովութիւն եւ նոյնքան ապահով վերադարձ իրենց ընտանիքներին, իրենց սիրելիներին: Ողջ ազգով շնորհակալ ենք, որ իրենց կեանքի ներդրումով մեզ ապահով կեանք են պարգեւում:

Մեծ ակնածանքով ու խոնարհումով շնորհաւորում եմ իրենց երիտասարդ կեանքը մեր երկրի համար գոհաբերած բոլոր հերոսների

ընտանիքների գալիք նոր տարին, հաւաստիացնելով, որ իրենց զաւակների, իրենց հայրերի, ամուսինների մեզ նուիրաբերած կեանքը ոչ թէ անցած, այլ մնայուն թանկագին ներկայութիւն են իւրաքանչիւրիս համար եւ ազգովին յաւետ շնորհակալ ենք իրենց:

Սիրելի ընթերցող առիթից օգտուելով շնորհաւորում եմ նաեւ բոլորիդ գալիք տարին եւ մաղթում, որ աշխարհի այս դժուար, յեղեղուկ կացութեան մէջ չկորցնենք մեր ուղին, մեր երկիրը չդարձնենք օտար ազդեցութիւնների քառուղի, որ վերջապէս ձեռք բերենք այն յատկանիշները, որոնք մեծացնում ու հզօրացնում են ազգերին: Որ գալիք տարուան աւարտին խօսենք միայն ապագայի ծրագրերի մասին:

Շնորհաւորում եմ նաեւ աշխարհասփիւռ հայութեան նոր Տարին եւ մաղթում, ամրութիւն, օտար հոսանքներին կուլ չգնալու կայունութիւն, որ պահենք ու զարգացնենք մեր լեզուն, մեր միութիւնները, դպրոցները, մշակութային հաստատութիւնները: Սուրիոյ, Լիբանանի, Միջին Արեւելքի շրջաններում ապրող մեր հայրենակիցներին մաղթում եմ ապահովութիւն, համբերութիւն եւ կորով դիմագրաւելու քաղաքական, տնտեսական իրենց պարտադրուած այս կործանարար խառնաշփոթութիւնն ու պատերազմները: Ոչ մէկ հայրենակցի կորուստ ունենանք, տարին աւարտենք ողջ տարածաշրջանի վերջնական խաղաղութեամբ ու ապահովութեամբ:

Բարի, առողջ, ողջ աշխարհի եւ մեր երկրի խաղաղութեամբ եւ յաջողութեամբ լի նոր՝ 2020 թուական:

ԴՊԿՏ. ՄԱՐԻ ՌՈՉ ԱՐՈՒՄԷՏԵԱՆ

*9 դեկտեմբեր 2019
Սիտնի, Աւստրալիա*

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ի ՊԱՏԱՄԽԱՆ ՕՐՈՒԱՆ ՊԱՀԱՆՁՔԻՆ

1890-ին ծնունդ առաւ ԶՅ Դաշնակցութիւնը՝ ի պատասխան օրուան պահանջքին՝ միացնելու բոլոր յեղափոխական ուժերը՝ «նպատակ դնելով Թիւրքաց Զայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը», ինչպէս յայտարարեւ Է ԶՅԴ **մանիֆեստը**՝ հռչակագիրը կուսակցութեան ծնունդէն անմիջապէս ետք: Իր այդ նպատակը իր անունով իսկ բանաձեւուած՝ «ան մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար»:

Դաշնակցութեան ծրագիրը կազմուել է երկու տարի ետք միայն՝ 1892-ի Ընդհանուր ժողովին, անդրանի՛կ Ընդհանուր ժողովին, երբ արդէն ծայր տուած էր իր գործունէութիւնը: Այսինքն, խօսքը յաջորդած էր գործին՝ ծրագիրը մէջտեղ եկած էր հետեւելով կենդանի իրականութեան, եւ ոչ թէ գործունէութիւնը ձեւաւորուած էր համաձայն ուղեցոյցի մը: Կռի՛ւ էր, կարելի չէր սպասել, որոշումները պիտի տրուէին ու գործադրուէին օրը-օրին: Յետոյ պիտի գար ժամանակը բանաձեւելու անոնց տուն տուող գաղափարականն ու հայեցակարգը:

Այդպէս էր ի սկզբանէ, այդպէս եղաւ անկէ ետք մինչեւ օրս:

1907-ին՝ Դ. Ընդհանուր ժողովին ռուսահայ դատը եւս մաս կազմեց ԶՅԴ ծրագիրին եւ բանաձեւուեցաւ կուսակցութեան ընկերվարական աշխարհահայեացքը, երբ արդէն իսկ պայքար կը տարուէր Արեւելեան (Ռուսաց) Զայաստանի մէջ ալ՝ ընդդէմ ցարական ճնշումներուն եւ ի պաշտպանութիւն բան-



ւորներու մարդկային իրաւունքներուն:

1919-ին, արդէն կայացած Զայաստանի Զանրապետութեան մայրաքաղաք Երեւանի մէջ գումարուած Թ. Ընդհանուր ժողովն էր, որ նուիրագործեց Ազատ եւ Միացեալ Զայաստանի իտեալը:

1933-ին, Փարիզի մէջ, ԺԲ. Ընդհանուր ժողովն էր, որ պաշտօնապէս դադրած յայտարարեց ԶՅԴ գործունէութիւնը արդէն 1920-1921-էն խորհրդրդային բռնատիրութեան ենթարկուած մեր երկրին մէջ, որմէ արտաքսուած էին դաշնակցական յայտնի դէմքերը կամ հալածուած ու սրածուած: Վերընձիւղումը Զայաստանի մէջ յայտարարուեցաւ միայն 1990-ի օգոստոսին, երբ սկսած էր արցախեան շարժումը, համայնավար լուծը կը տատանէր եւ հայրենահայութիւնը տարի մը անց պիտի քուէարկեր ի նպաստ անկախացման:

1998-ին էր, որ ԶՅԴ ծրագիրով այս իրողութիւնն ալ պիտի որդեգրուէր ԻԷ. արտակարգ Ընդհանուր ժողովին կողմէ: Այդ կը հանդիսանայ վերջին վերամշակումը մեր ծրագիրին՝ միշտ հաւատարիմ «նախ գործել յետոյ խօսիլ» սկզբունքին:

Կ'արժէ այստեղ մէջբերել այդ ծրագիրի անվերնագիր ներածականը, իր չորս պարբերութիւններով, որոնք լաւապէս կը բանաձեւեն կուսակցութեան էութիւնը: (Գլխագրերու գործածութեան տեսակետէն կը պահեմ բնագրին ուղղագրութիւնը).

«Զայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհայեացքով եւ անանդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ յեղափոխական կուսակցութիւն է:



«Չայ Յեղափոխական Դաշնակցությունը իր բոլոր ուժերով կը պայքարի հայ ազգի քաղաքական-տնտեսական, ընկերային-մշակութային բովանդակ շահերու պաշտպանության համար:

«Չայ Յեղափոխական Դաշնակցությունը հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարը կը հիմնաւորէ իր գաղափարաբանութեամբ: Ան կ'առաջադրէ անհատի ազատութեան, ազգային ինքնորոշման, անկախ պետականութեան, ընկերութեան համերաշխութեան եւ բարօրութեան ճամբով ապահովել հայ մարդու ու հայ ազգի անկաշկանդ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը:

«Չայ Յեղափոխական Դաշնակցությունը կը ձգտի Չայ Դատի լուծման, - ամբողջական հայութեամբ, ամբողջական հայրենիքի կերտումին»:



Ահա բանաձեւում մը, որ երկար ժամանակ կրնայ մնալ Նոյնը, Նոյնիսկ եթէ ի հարկին լեզուական բարեփոխություններու ենթարկուի:

Ծրագիրը, սակայն աւելին է, քան՝ իր ներածականը, եւ կասկած չկայ, որ աւելի քան քսան տարի ետք եկած է ժամանակը զայն վերանայելու, բարեփոխելու եւ ամբողջացնելու: Եկած է, որովհետեւ այս երկու տասնամեակներուն մեծ վերիվայրումներ ու փոփոխություններ եղած են ըլլա՛յ աշխարհի մէջ, ըլլա՛յ

մեր երկրի, Նոր փորձություններէ անցած է հայութիւնը, Նոր փորձառություններ ձեռք ձգուած են թէ՛ Դաշնակցութեան եւ թէ՛ հայ կեանքի մէջ գործող այլ կուսակցություններու կողմէ՝ ե՛ւ հայրենիքի մէջ ե՛ւ ի սփիւռս աշխարհի:

Չամաշխարհային առումով բնապահպանութիւնը այլեւս անխուսափելի մարտահրաւեր է բոլոր՝ ազգերուն եւ հայրենահայութեան համար: Մարդկային իրաւանց ոտնակոխումները ստացած են աննախընթաց տարողություն, փոքր ազգերու իրաւունքներու անտեսումը եւ անոնց բնական հարստություններու զաւթումը հետզհետէ կը խորանան, կը շարունակուին ցեղասպանություններն ու զանգրւածային տարագրությունները: Այս բոլորը չեն կրնար չհարուածել նաեւ մեր պետականութիւնը հայրենի մեր գոյգ տարածքներուն վրայ՝ Չայաստանի Չանրապետութեան եւ Արցախի Չանրապետութեան, որուն արդար Դատի լուծումը յաւերժօրէն կը ձգձգուի:

Միջին Արեւելքի անկայունութիւնը կը սպառնայ քանդել ոչ միայն մեր վերջին ամբողջությունները տեղույն մեր գաղթօճախներուն, այլեւ՝ մեր հայրենիքին իսկ մէջ:

Այս բոլորին առումով աւելի քան կենսական կը դառնայ ազգային միասնականու-

թեան ամրապնդումը սփիւռքի թէ հայրենիքի մէջ: Կը ծանրանայ Դաշնակցութեան դերակատարութիւնը՝ ապահովելու համար մեր ժողովուրդի ամբողջական ներուժը՝ դիմակայելու համար գալիք սպառնալիքները:

Տակաւին, անցնող երեսնամեակը առիթ ընծայեց հայութեան ձեռք ձգելու սեփական պետականութիւնը վարելու փորձառութիւնը: Ամբողջ 70 տարի այդ առիթը գրեթէ զլացուած էր մեր ժողովուրդին, որ ենթակայ էր միակուսակցական եւ օտարամուտ իշխանութեան: Կ'ըսեմ գրեթէ, քանի որ որոշ չափով ներքին կեանք մը կար Խորհրդային Չայաստանի մէջ, եւ որոշ ազգային փորձառութիւն մը ձեռք ձգուած էր ի հեճուկս բռնապետութեան: Դաշնակցութիւնը եւս անցնող երեսուն տարիներուն իր ներդրումը ունեցաւ Չայաստանի ու Արցախի պետական կեանքին մէջ՝ իբրեւ ընդդիմադիր կամ գործակից կուսակցութիւն:

Ատենն է, ուրեմն, այս բոլորին հաշուեկշիռը ընելու եւ մեր ծրագիրին մէջ ներմուծելու համաշխարհային իրավիճակները դիմագրաւելու եւ ազգային փորձառութիւնը արժեւորելու հասկացութիւնները:

Այլեւ՝ ծրագիրը, ինչու չէ՛՝ նաե՛ւ կանոնագիրը անդրադառնալու են այն իրողութեան ալ, որ ՀՀ Դաշնակցութիւնը կը գործէ ոչ միայն իր սեփական շարքերու ճամբով, այլ նաեւ իր ուղեկից կազմակերպութիւններու շարքերուն, որոնք մէջ դաշնակցականներու կողքին կը գործեն նաեւ, ու յաճախ աւելի մեծ թիւերով համակիրներ, որոնք կը բազմապատկեն այս կուսակցութեան ազդեցութիւնը հայ կեանքին մէջ, - խօսքս կը վերաբերի ՀՕՄ-ին, ՀՄԸՄ-ին ու Համազգայինին:

Ծրագիրը ամփոփելու է Դաշնակցութեան պահանջները ոչ միայն քաղաքական ու տնտեսական-ընկերային գետնի վրայ, այլեւ



կրթական-մշակութային: Վերջերս մշակուեցաւ ՀՀԴ տնտեսական հայեցակարգը: Անոր նման միւս մարզերն ալ պետք է օժտուին այդպիսի ուսումնասիրուած հայեցակարգերով ու այդ բոլորին խտացումը ստանայ ծրագրային բնոյթ:

ՀՀԴ Ընդհանուր ժողովներու ընթացքին ռազմավարական քաղաքականութիւնը ճշդելու ատեն, յաճախ կը բանաձեւուին այնպիսի հիմնական սկզբունքային հասկացութիւններ, որոնք փոխանակ մէկ ժողովէն միւսը վերաորդեգրուելու, կրնան նոյնպէս ընդգրկուիլ ծրագիրին մէջ:

Մարդկային ու ազգային իրաւունքներու պաշտպանութեան նուիրուած այս կուսակցութեան ծրագիրը նոյնը կը մնայ իր գաղափարական հէնքով, սակայն ժամանակ առ ժամանակ կը պատշաճի մեր ժողովուրդի կեանքի նոր հրամայականներուն:

Ահա թէ ինչու պիտի վերանայուի ան, ի պատասխան օրուան պահանջին:

ՎՐԵԾ-ԱՐՄԵՆ

ԱՐՑԱԽԻ «ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՔՈՒԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ»

«Ղարաբաղը վերակառուցման փորձաքարն է»:

ԱՆԴՐԵՅ ՍԱԽԱՐՈՎ

Խաղաղության Նոպելեան մրցանակի դափնեկիր

Արցախի իրաքանչիւր քաղաքացի, անկասկած, հրաշալի գիտէ, որ Ազրպէյճանի կողմից մեր ժողովրդին առաջարկուող ինքնավարութիւնը մեռելածին եւ առարկայազուրկ մի պատրանք է եւ իրականութեան հետ կապ չունենալու պատճառով՝ քննարկման ոչ ենթակայ: Բայց քանի որ Ազրպէյճանի ղեկավարութիւնը պարբերաբար բարձրաձայնում է, թէ փոխզիջման տակ ընդունում է միայն մէկ՝ Արցախին «լայն ինքնավարութիւն» Ազրպէյճանի կազմում՝ տարբերակը, ուստի մեր հարեւան երկրի որդեգրած դիրքորոշման պարունակում աւելորդ չէ անդրադառնալ ազրպէյճանա-արցախեան հակամարտութեան իրաւա-քաղաքական կարգաւորման մի քանի փաստարկների:

Համայնավարական ազգային քաղաքականութեան արդիւնքում, Խորհրդային Ռուսաստանի կուսակցական մարմնի իրաւական փաստաթղթի ուժ չունեցող 1921թ. յուլիսի 5-ի որոշմամբ, պատմական Արցախ գաւառի մի մասին տրուեց ինքնավար մարզի կարգավիճակ՝ Խորհրդային Ազրպէյճանի սահմաններում: Սակայն Ազրպէյճանը դժկամութեամբ ընդունեց այդ գաղափարը եւ պատեհ առիթն օգտագործում էր ինքնավարութիւնը վերացնելու կամ դրա չափը նուազեցրնելու համար: Նախ, Ազրպէյճանը դիմեց Խորհրդային Ռուսաստանի Համայնավար կուսակցութեան Կովկասեան բիւրոյին՝ Ղարաբաղին ինքնավարութիւն տալու հարցը վերանայելու խնդրանքով: Չստանալով դրական պատասխան, Ազրպէյճանն ինքնավար

մարզի սահմանները որոշեց այնպէս, որ մարզն աշխարհագրական առումով շփման եւ ոչ մի կէտ չունենայ Խորհրդային Հայաստանի հետ: Այնուհետեւ, Ազրպէյճանի իշխանութիւնները 1924-ին ինքնավար մարզի համար մշակեցին մի փաստաթուղթ, որին տուեցին «սահմանադրութիւն ինքնավար Լեռնային Ղարաբաղի շրջանի» անուանումը:

Խորհրդային իրաւագիտութիւնը Սահմանադրութեան տակ նկատի էր ունենում պետութեան հիմնական օրէնքը, որն արտայայտում էր տիրապետող դասակարգի շահերը եւ հասարակութեան մէջ դասակարգային ուժերի յարաբերակցութիւնը: Ի հարկէ, սահմանադրական մշակոյթի տեսանկիւնից Արցախի համար Պաքում գրուած «սահմանադրութիւնը» հեռու էր իրական սահմանադրութիւն լինելուց, քանի որ գոնէ այն պէտք է ամրագրէր «ինքնավար մարզի»՝ որպէս Խորհրդային Միութեան ժողովուրդների ընկերակրական ազգային պետականութեան ձեւերից մէկի, իրաւական կարգավիճակը: Բայց Ազրպէյճանը հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում: Պաքուի փաստաթղթով Լեռնային Ղարաբաղին տրուում էր ոչ թէ «մարզի», այլ «շրջանի» կարգավիճակ: Այդ այն դէպքում, երբ քաղաքական ինքնավարութեան **ենթաթեքստում**, Խորհրդային Միութեան պետական շինարարութեանը խորթ էր «ինքնավար շրջան» ձեւը եւ նոյնիսկ նրա ստորին օղակը կոչւում էր «ինքնավար **օկրուգ**»: Սխալը շտկուեց միայն 1936-ին Խորհրդային Միութեան Սահմանադրութեամբ, որում նշուած էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ԼՂԻՄ) անուանումը:

Խորհրդային Միութեան տարիներին ԼՂԻՄ-ը երբեք չի համակերպուել իր կարգավիճակի հետ եւ Ազրպէյճան-Խորհրդային Միութիւն վարած հակահայկական քաղաքա-

կանութեան պատճառով նրա կազմից դուրս գալու խնդրանքով քանիցս դիմել է Խորհրդային Միութեան կեդրոնական մարմիններին: Ամբողջատիրական համակարգը նման քայլերն ազգայնական էր որակում եւ հալածանքի ենթարկում նախածեռնողներին: Դրանք պայքարի խուլ տարիներ էին:

Ինքնավար մարզի կարգավիճակի վերաբերեալ վերջին փաստաթուղթը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» Խորհրդային Ազրայեյճանի 1981-ի օրէնքն էր, որի 3-րդ յօդուածն արձանագրում էր, որ «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխուել առանց ժողովրդական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Խորհրդի համաձայնութեան»: Այդ կարգավիճակը Ազրայեյճանի համար գրոշի արժէք չունէր:

Կորպաչովեան վերակառուցման տարիներին արցախեան հարցը շեշտակի զարթօնք եւ վերելք ապրեց. Արցախը, իր քայլերը համապատասխանեցնելով գործող օրէնսդրութեանը, դուրս եկաւ Ազրայեյճանի կազմից եւ հռչակեց իր անկախութիւնը: Սակայն Ազրայեյճան-Խորհրդային Միութիւն հարցի լուծման իր տարբերակն ընտրեց, նրա պետական իշխանութեան բարձրագոյն մարմինը՝ Գերագոյն խորհուրդը, ոտնահարելով իր իսկ կողմից ընդունած օրէնքները, 26 նոյեմբերի 1991-ին ընդունեց որոշում՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լուծարման մասին, որով «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմակերպելու մասին» Ազրայեյճանի Կեդրոնական գործադիր կոմիտէի 7 յուլիսի 1923-ի հրամանագիրը եւ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» 16 յունիսի 1981-ի օրէնքն ուժը կորցրած ճանաչուեցին: Այդ փաստաթղթով Ստեփանակերտ, Մարտակերտ եւ Մարտունի քաղաքները վերանւանուեցին համապատասխանաբար Խանքենդի, Ադդարայ եւ Խոջաւենդ թրքախունջ անուններով, իսկ նախկին ինքնավար մարզի տարածքը մտցուեց Ադդարայի (Մարտակեր-



տի), Խոջալուի (Ասկերանի), Խոջաւենդի (Մարտունու եւ Յադրութի) եւ Շուշիի շրջանների մէջ: Հայկական ինքնավարութեան լուծարումն Ազրայեյճանը հիմնաւորեց նրանով, որ այն հակասում է ազրայեյճանական ժողովրդի ազգային շահերին՝ հանդիսանալով հայ եւ ազրայեյճանական ժողովուրդների միջեւ հակամարտութեան աղբիւր: Ի դէպ, ինքնավար մարզը լուծարելու մասին օրէնքն ընդամենը 2 օրուան կեանք ունեցաւ: Այն ճանաչուեց հակասահմանադրական եւ Խորհրդային Միութեան սահմանադրական հսկողութեան կոմիտէի 28 նոյեմբերի 1991-ի որոշմամբ վերացուեց:

Հետագայ դէպքերը ցոյց տուեցին, որ Ազրայեյճանը, հաւատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին, գործող Սահմանադրութեան (1995) մէջ Լեռնային Ղարաբաղին վերաբերող որեւէ կարգավիճակ կամ դրոյթ չյատկացրեց, դրանով իսկ իւրովի լուծուած համարելով արցախեան հարցը: Այդքանից յետոյ Ազրայեյճանի իշխանութիւններին ինչ իմաստ ունի Խորհրդի թմբկահարել հին երգը, թէ պատրաստ են Լեռնային Ղարաբաղին տալ անհրաժեշտ չափով ինքնավարութիւն, բայց՝ միասնական ազրայեյճանական պետութեան շրջանակներում: Մեծ հաշուով, դա նոյնն է, ինչ ժողովրդական առաձն է ասում՝ արջը եօթ երգ գիտէ, եօթն էլ տանձի մասին: Թէ ինչպիսին է նրանց կողմից Արցախին առաջարկուող ինքնավարութեան տեսլականը, այն արձանագրուած է Ազրայեյճանի «ազգային անվտանգութեան հայեցակարգը» եւ «ռազ-

մական սկզբունքի մասին» փաստաթղթերում, ըստ որոնց՝ Ազրայեյճանի հիմնական արտաքին սպառնալիքը Հայաստանի Հանրապետությունն է, որը բռնազավթել է Ազրայեյճանի տարածքը, ուստի հակամարտությունը պետք է լուծուի բռնազավթած տարածքներից Հայաստանի Հանրապետության գինուած ուժերի դուրսբերմամբ, այդ տարածքների վրայ Ազրայեյճանի ինքնիշխանության վերականգնմամբ եւ հայրենի բնակավայրերն ազրայեյճանցի փախստականների վերադարձով, որից յետոյ նոր միայն որոշուի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի կարգավիճակը՝ բարձր ինքնավարութեամբ ապահովելով ազրայեյճանական եւ հայկական համայնքների խաղաղ գոյակցութիւնն Ազրայեյճանի սահմաններում:

Կիրառելի եւ իրատեսակա՞ն են, արդեօք, ազրայեյճանական կողմի մօտեցումները հակամարտութեան կարգաւորման համար եւ ի՞նչ նպատակներ են թաքնուած այդ փաստաթղթերի հիմքում, որից էլ ելնելով Ազրայեյճանի ազգային գաղափարախօսութիւնը աճարարութիւններ է անում՝ «Լեռնային Ղարաբաղին բարձր ինքնավարութիւն» տրամադրելու իր պատրաստակամութեան մասին: Ակնյայտ է՝ ինչպէս հալուա-հալուա ասելով, մարդու բերանը չի քաղցրանում, այնպէս էլ ինքնավարութիւն-ինքնավարութիւն ասելով, Արցախն Ազրայեյճանի մաս չի կազմի: Այդ այն դէպքում, երբ Ազրայեյճանը որեւէ փաստաթղթով ինքնավարութեան տեսակը (ազգային-տարածքային թէ ազգային-մշակութային), նրա բովանդակութիւնը եւ ծաւալը չի բացայայտում, չի որոշակիացնում, նրա տեսլականի վերաբերեալ որեւէ հայեցակարգ չի ներկայացնում, այլ սահմանափակում է միայն ընդհանուր եւ հռչակագրային ձեւակերպումներով: Այդ փաստաթղթերով եւ յայտարարութիւններով Պաքուն անթաքոյց ձգտում է վերադառնալ ոչ թէ 1988-ի կարգավիճակին, որը նրան նոյնիսկ չի էլ բաւարարում, այլ հասնել նրան, որ ինքնորոշման իրաւունք վերապահուի Արցախի տարածքը լքած նախկին ազրայեյճանցիներին՝ դրանով իսկ փոխելով հակամարտութեան գօտու ժողովրդագրական կազմը: Ազրայեյճանը նոյնիսկ չի խորշում յայտարարել, որ Արցախը

լքած ազրայեյճանցիների քանակը ներկայում կազմում է 80 հազար, իսկ Արցախում ապրող հայերինը՝ 60 հազար: Դրանով իսկ Ազրայեյճանը միջազգային հանրութեանը խեղաթիւրուած կերպով Արցախի ժողովրդին ներկայացնում է որպէս հայկական եւ ազրայեյճանական համայնքների բնակիչներ ու երկու համայնքների միջեւ հաւասարութեան նշան դնում: Ազրայեյճանը, հայերին մեղադրելով երկու անգամ ինքնորոշուելու մէջ, կարծես չի տեսնում, որ իր քայլերով ցանկանում է ազրայեյճանական ժողովուրդին երրորդ անգամ ինքնորոշման իրաւունք վերապահել (Ազրայեյճանական Հանրապետութիւն, Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւն եւ հիմա էլ՝ Լեռնային Ղարաբաղը լքած ազրայեյճանցի բնակչութեան պարագայում):

Հարց է ծագում. Ազրայեյճանի օրէնսդրութեամբ հնարաւոր է, արդեօք, երկրում բնակուող բնիկ ժողովուրդներից ոեւէ մէկին քաղաքական ինքնավարութիւն շնորհել: Պատասխանը միանշանակ է՝ միայն երկրի սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ կատարելու դէպքում, այն էլ՝ համաժողովրդական հանրաքուէի միջոցով: Ներկայ դրութեամբ Ազրայեյճանը, ըստ պետական կառավարման եւ կառուցուածքի՝ ամբողջատիրական եւ միատարր պետութիւն է եւ նման պետութեան կազմում չի կարող որեւէ ազգային-տարածքային միաւոր լինել: Ինչ վերաբերում է Նախիջեւանի ինքնավար հանրապետութեանը, որտեղ հայերին վտարելուց յետոյ միայն ազրայեյճանցիներ են բնակուում, ապա այդ երկրամասի իրաւական կարգավիճակի հարցն առաջին հերթին կարգաւորուած է Մոսկուայի եւ Կարսի միջազգային պայմանագրերով:

Ամէն դէպքում, ո՞ր միամիտ մարդը կարող է հաւատալ մի առաջարկութեան, որի հեղինակների հայրերը 28 տարի առաջ հայկական ինքնավարութիւնը համարել են ազրայեյճանական ժողովրդի շահերին հակասող գործօն եւ այն բարձրացրել օրէնքի աստիճանի, իսկ ներկայումս բարբանջում են՝ Արցախի հայկական եւ ազրայեյճանական համայնքներին հաւասար իրաւունքներով ինքնավարութիւն տալու գաղափարի մասին:

Հետեւաբար, Պաքուի մատուցմամբ առա-

շարկուող ինքնավարությունը մի շղարշ է՝ Արցախի կլանումը դիւրացնելու, նրա տարածքը հայերից մաքրելու փանթուրքական ցնորամիտ ծրագրի իրագործման հեռանկարում՝ լինի դա ուժային մեթոտներով կամ ժողովրդագրական կազմը փոփոխելու միջոցով: Այդ է վկայում Ազրայեյճանի՝ 2016 ապրիլի սկզբին Արցախի դեմ սանձագերծած քառօրեայ պատերազմը, որը մարդկային կորուստների առումով ծանր հետեւանքներ ունեցաւ: Այդ է վկայում նաեւ, որ Ազրայեյճանը իւրաքանչիւր տարի մեծացնում է սպառազինութեան ծաւալը, նորագոյն զինամթերք ձեռք բերում եւ ռազմատենչ յայտարարութիւններ անում՝ հակամարտութիւնը ռազմական ճանապարհով կարգաւորելու մասին:

Իսկ հակահայկական երկրորդ **պլանը** խոստովանել է հենց ինքը՝ Ազրայեյճանի ղեկավարը, նոյեմբերի 22-ին Սումկայիթ քաղաքի հիմնադրման 70-ամեակին նուիրուած միջոցառմանն իր ելոյթում, որում նշել է, թէ Զայտար Ալիեւի կառավարման տարիներին Լեռնային Ղարաբաղում ազրայեյճանցիների թիւը կրկնակի աճել է եւ հասել 30 տոկոսի: Եւ եթէ իր հայրը 1982-ին չմեկնէր Մոսկուա ու շարունակէր աշխատել Ազրայեյճանում, ապա, հնարաւոր է, ազրայեյճանցիների քանակը այնտեղ 10 տարում հասներ 50 տոկոսի: Այս յայտարարութիւնը վկայում է, որ Ազրայեյճանի ղեկավարութեան մօտ փոխզիջման միջոցով հակամարտութեան կարգաւորման պատրաստակամութիւնը բացարձակապէս բացակայում է: Ուրիշ ինչ սպասել մի ղեկավարից, ով Սումկայիթում ազրայեյճանական իշխանութիւնների կողմից պետական մակարդակով կազմակերպուած հայ բնակչութեան զանգուածային սպանողը եւ բռնատեղահանութիւնը վերագրել է հենց հայերին:

Զայաստանի Զանրապետութեան ազգային անվտանգութեան ռազմավարութեան համաձայն՝ «արցախեան հարցի վերաբերեալ Զայաստանն ընդունելի է համարում կարգաւորման միայն այն տարբերակները, որոնք ուղղուած կը լինեն Արցախի Զանրապետութեան փաստացի գոյութեան անշրջելի իրողութեան ամրագրմանը: Արցախը պետք է աշխարհագրական կապ ունենայ Զայաստանի հետ: Անվտանգութիւնը պետք է երաշխա-

ւորուած լինի: Զայաստանի Զանրապետութեան դեմ ուղղուած անմիջական ռազմական սպառնալիք է արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացում Ազրայեյճանի վարած ռազմատենչ քաղաքականութիւնը, այն է՝ այդ հիմնախնդիրը լուծել Զայաստանի նկատմամբ ռազմական գերազանցութեան հասնելու միջոցով: Ուստի, այս գործում Զայաստանի զինուած ուժերի գլխաւոր խնդիրն է Զայաստանի Զանրապետութեան սահմանների անձեռնմխելիութեան, ինչպէս նաեւ Զայաստանի Զանրապետութեան եւ Արցախի Զանրապետութեան բնակչութեան ֆիզիքական անվտանգութեան ապահովումը»: Կարծում ենք՝ Արցախի համար հրատապ է՝ ժամանակահոունչ պատկերացումներով եւ ապագայի տեսլականի տրամաբանութեան վրայ հիմնուած նման փաստաթուղթ ունենալու անհրաժեշտութիւնը: Այն գերծ կը պահի ամենօրեայ խօսակցութիւնների ժամանակ հիմնախնդրին վերաբերող իրերամերժ կարծիքներ յայտնելուց:

Արցախի Զանրապետութեան հռչակման պատմական - քաղաքական եւ իրաւական հիմքերն ամուր եւ անխոցելի են: Անկախութեան 28 տարիների փորձը յուշում է, որ վերադարձ անցեալին բացառում է, որ Ազրայեյճանի կազմում ինքնավարութեան ժամանակաշրջանն արհւնաժոր վերք է եղել մեր ժողովրդի համար, ինչն էլ յանգեցրել է ազգային-ազատագրական պայքարի, ուստի պետք չէ հաւատալ Ազրայեյճանի մերկապարանոց խոստումներին, պետք չէ վախենալ «Գորշ գայլեր»-ից, նրանց կատարած ոչ մի քայլից: Խնդրի կարգաւորման ամենակարճ եւ իրական ուղին՝ Արցախի ժողովրդի՝ արդէն իսկ իրողութիւն դարձած ինքնորոշման իրաւունքի ճանաչման հրամայականն է:

ՎԼԱԴԻՄԻՐ ՅՈՎԱՏՔԵԱՆ
*Զանրապետութեան
վաստակաւոր իրաւաբան*

*Յատուկ «Ազդակ»-ի բացառիկի համար
Արցախ*

ՀԱՅ ԴԱՏԸ 2019-ԻՆ

2019-ի Հայ դատի տարին սկսաւ փետրուարին Միւնիխի մէջ անվտանգութեան խորհրդաժողովի գլխաւոր նիստին, Եգիպտոսի նախագահ Ապտելֆաթթահ Սիսիի, Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու նախաքայլով՝ գաղթականութիւն յառաջացնող պետութիւններու քայքայման մասին խօսքին մէջ հարիւր տարի առաջ տեղի ունեցած ջարդերու պատճառով յառաջացած հայ գաղթականութեան յիշատակումով:

Անոր հետեւեցան շարք մը քաղաքներու, մարզերու եւ նահանգներու կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման քայլերը. Իտալիոյ Լացիո մարզի մարզային խորհուրդը 18 մարտին միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը, քանի մը օր ետք Միացեալ Նահանգներու Ալապամա նահանգը դարձաւ Միացեալ Նահանգներու Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած 49-րդ նահանգը:

10 ապրիլին, Իտալիոյ խորհրդարանը որդեգրեց բանաձեւ մը՝ երկրին կառավարութեան կոչ ուղղելով՝ «պաշտօնապէս ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը, եւ անոր տալու միջազգային արժեւորում: Քանի մը օր ետք յայտնի դարձաւ, որ Սպանիոյ Պուրկոս քաղաքի քաղաքային խորհուրդը միաձայնութեամբ ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը:

Սուրիոյ խորհրդարանի անդամ, ցեղասպանագետ, պատմաբան, դոկտ.Նոր Արիսեանի երկարամեայ աշխատանքին շնորհիւ, եւ Սուրիոյ կրթական ծրագիրին մէջ կատարած փոփոխութեան ծիրին մէջ, 14 ապրիլին հաղորդուեցաւ, որ Հայոց ցեղասպանութիւնը կը ներառուի Սուրիոյ երկրորդական վարժարաններու պատմութեան դասագիրքերուն մէջ:

Եգիպտոսի եւ Սուրիոյ մէջ կատարուած նախաքայլերէն ետք, արաբական մէկ այլ երկրի մը՝ Լիպիոյ արեւելեան շրջանի ժամանակաւոր կառավարութիւնը ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը: Հաղորդուեցաւ, որ Լի-

պիոյ նախարարներու խորհուրդի օրէնսդրական տնօրէնութիւնը աշխատանք կը տանի բանաձեւելու որոշում մը, որուն համաձայն, Լիպիոյ մէջ այսուհետեւ ամէն տարի 24 ապրիլին պիտի ոգեկոչուի Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը:

Ապրիլ 24-ին, Միացեալ Նահանգներու Քոլորադո նահանգի ծերակոյտը որդեգրեց Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւ մը եւ առանձին կէտով մը ճանչցաւ Արցախի անկախութիւնը: Երկու օր ետք, Փորթուգալի խորհրդարանը ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը:

Սպանիոյ Սորիայի քաղաքապետարանը, մայիսի սկիզբին, միաձայնութեամբ ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը: 7 մայիսին Մեքսիքայի մէջ արձանագրուեցաւ աննախադէպ զարգացում մը՝ Միչոաքան նահանգի քոնկրետը որդեգրեց Օսմանեան Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող յայտարարութիւն մը: Սպանիոյ քաթալոնական Սանթ Իլարի Սաքալմ քաղաքը հոկտեմբերին ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը:

2019-ին Հայ դատի վերաբերեալ ամենէն նշանակալից զարգացումը արձանագրուեցաւ Միացեալ Նահանգներու մէջ: Հոկտեմբեր 29-ին, Միացեալ Նահանգներու 435 անդամներէ բաղկացած Ներկայացուցիչներու տունը 405 թեր, 11 դէմ, 3 ձեռնպահ քուէներով որդեգրեց Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող թիւ 296 բանաձեւը: Անոր համահունչ եղող Ծերակոյտի թիւ 150 բանաձեւի որդեգրումը 13 նոյեմբերին Սպիտակ տան մէջ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի միջեւ կայացած հանդիպումէն ետք, երեք անգամ արգելակումի ենթարկուեցաւ, սակայն ի վերջոյ միաձայնութեամբ որդեգրուեցաւ:

Արգելակման երեք արարքներն ալ կատարուեցան թուրք-ամերիկեան յարաբերու-



թիւններուն չվնասելու հիմնաւորումով: Սակայն իսկութեան մէջ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը այն հարցը չէ, որ պիտի վնասէ Միացեալ Նահանգներու կամ որեւէ այլ երկրի Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն: Ներկայացուցիչներու տունը 1975-ին եւ 1984-ին ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը, սակայն երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները շարունակւեցան, աւելի քան երկու տասնեակ երկիրներ, որոնց շարքին ՕԹԱՆ-ի անդամ 11 երկիրներ ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը, սակայն Թուրքիոյ հետ անոնց յարաբերութիւնները կը շարունակուին:

Նոյեմբերի 8-ին, Միացեալ Նահանգներու Զուլումպիա շրջանի խորհուրդը միաձայնութեամբ որդեգրեց Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը:

2019-ի երկրորդ նշանակալից զարգացումը 11 հոկտեմբերին Արցախի հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ ՀՀ-ի եւ Արցախի արտաքին գործոց նախարարութեան կազմակերպած՝ «Համագործակցութիւն յանուն արդարութեան եւ խաղաղութեան» խորագիրը կրող Արցախի բարեկամներու քառօրեայ խորհրդաժողովն էր, որուն կը մասնակցէին 30 երկիրներէ 150 մտաւորականներ եւ հասարակական ու քաղաքական գործիչներ, որոնց շարքին Լիբանանէն մտաւորական Ղասսան Շամի, Լիբանանէն համալսարանի դասախօսներ դոկտ. Մոհամետ Նուրէտտին եւ դոկտ.Լէյլա Նիքուլա, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Ասորիներու լիկայի ընդհանուր քարտուղար Ժորժ Ասիօ:

Խորհրդաժողովի գումարումը հարուածեց Արցախը միջազգային մեկուսացման ենթարկելու Ազրայէճանի քաղաքականութիւնը:

Բացման նիստին արտասանուած պաշտօ-

նական խօսքերուն մէջ լուսարձակի տակ առնուեցաւ Արցախի գերիշխանութեան պահպանման անհրաժեշտութիւնը, միջազգային մակարդակի վրայ անոր ներկայութեան կարելորութիւնն ու այս առումով Արցախի բարեկամ բարձրաստիճան անձնաւորութիւններուն ունեցած մեծ ու օգտաշատ ներդրումը:

Խորհրդաժողովի մասնակիցները իրենց խօսքերուն մէջ նշեցին, որ Արցախը ինքնորոշուելու իրաւունքն ունի, իսկ իրենք պարտաւորութիւնն ունին գտնուելու Արցախ եւ զօրակցելու անոր ժողովուրդին՝ ի հեճուկս ազրայէճանական «սեւ ցուցակ»-ին վրայ առնուելու սպառնալիքին: Ղարաբաղեան քաղաքներու քոյր քաղաքներու քաղաքապետեր նշեցին, թէ այդ կապի ստեղծումը ճիշդ որոշում է եւ կարելի չէ մարդոց արգիլել բարեկամներ ըլլալ:

Խորհրդաժողովի մասնակիցները տուն վերադարձան Արցախի ժողովուրդին օգնելու եւ անոր մեկուսացման վերջ տալու առաքելութեամբ:

Խորհրդաժողովի աւարտին որդեգրուեցաւ հռչակագիր միջազգային հարթակի վրայ Արցախի մասին տեղեկացուածութիւնը բարձրացնելու, անոր ժողովուրդի օրինական շահերը պաշտպանելու, միջազգային հոլովոյթներուն մէջ Արցախի ներգրաւման աջակցելու նպատակով Արցախի բարեկամներու միջազգային ցանց՝ «Փրօ Արցախ» ստեղծելու մասին:

ՎԱՀՐԱՄ ԷՍՄԻԵԱՆ

ԹՈՒՐԻԱ. ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԸ՝ ԱՐԻԱՆ ՊՈՆՉՈՆ

Արդարադատությունը միշտ եղած է այս իշխանական աւանդութիւն ունեցող երկրին տկար կէտը: Ըստ Եւրոպական Մարդկային Իրաւանց Ատեանի 2015-ի տեղեկագիրի մը (CEDH), Թուրքիոյ դէմ կայացուած են առնուազն 2900 որոշումներ, հիմնուելով առնուազն մէկ դէպքի վրայ ինչ կը վերաբերի Մարդկային Իրաւանց խախտումներու՝ 1959-էն ի վեր:

Թուրքիա, ճշմարտութեան ժամը, Արիան Պոնչոն, էջ 267



Արիան Պոնչոն

Արիան Պոնչոն, անստեղծ կերպով կատարած է ժամանակակից Թուրքիոյ քաղաքական-գաղափարախօսական շողանկարը (radioscopie): Անմիջական պատմութեան արտակարգ պատկեր մը: Գիրքը. 320 էջ. լոյս տեսած է 2019-ին: Գիրքին անունն է՝ La Turquie, L'heure de verite, հրատարակութիւն՝ Editions Empreinte, temps present, հեղինակ՝ Ariane Bonzon, ֆրանսական կարեւոր քաղաքական հրատարակութիւն «Լը Մոնտ տիփլոմաթիք» ամսագրի անձնակազմի անդամ:

Միջազգային քաղաքական բեմ ներխուժած Թուրքիոյ նոր ինքնակալ Ռեճեփ Թայիփ Էրտողան, կ'ուզէ վերականգնել օսմանեան մեծութիւնը՝ ընդդէմ ազատ աշխարհի: Թէեւ ինք կ'ուզէ ներկայանալ որպէս ազատական եւ ժողովրդավարական, բայց սկսնակ քաղաքագետներն անգամ հասկցած են, որ ան իսլամական-ազգայնական ինքնակալական վարչակարգ մը հաստատած է, տարիներէ ի վեր մէկ քայլ առաջ-մէկ քայլ ետով հետապնդող Թուրքիոյ Եւրոմիութեան անդամակցութիւնը անկարելի դարձնելով, բայց շարունակելով նիւթապէս լիաբումն օգտուիլ: Թուրքիան կառավարող արժեքները անյարիր են Եւրոմիութեան եւ անկարելի կը դարձնեն

Թուրքիոյ անդամակցութիւնը: Մերժումը արմատականացման կրնայ մղել Թուրքիան:

Ա. Պոնչոն, գիրքի 47 գլուխներուն տակ եւ եզրակացութեամբ կը ներկայացնէ Թուրքիան իր բոլոր երեսներով, բնակչութեան բազմազանութեամբ, տնտեսութեամբ, անցեալով, պայքարներով, երիտասարդութեամբ, կասկածելի յարաբերութիւններով Իսլամական պետութեան՝ ՏԱՅԵՇ-ի հետ, բարքերով: Կը քակէ թրքական թնճուկը, ինչպէս պիտի ըներ ախտաճանաչում ընող վիրահատողը: Պաղ պատերազմէն մնացած դասական դիւանագիտութեամբ, Թուրքիան կը շոյէին, այսօր ճշմարտութիւններու մասին կը խօսին: Թուրքիան Արեւմուտքի ծանծաղութիւնները չսպասեց, դիմաշրջում ունեցաւ, դէպի Ռուսիա եւ Ասիա, երբ իր առջեւ փակ գտաւ Եւրոմիութեան դուռը:

Արեւմուտքը Թուրքիա-Իսլամական պետութեան (ՏԱՅԵՇ) հետ գործակցութեան մասին ինչ որ կ'ըսէր շրթներու ծայրով, Ա. Պոնչոն կ'ըսէ փաստերով: Թուրքիոյ անցեալի եւ ներկայի բազմաբնոյթ բաց վերք խնդիրները, հայկական, քրտական, ալեւիական, յունական, կը տողանցեն, բռնութեան եւ անհանդուրժողութեան անթաքոյց ճնշման տակ: Կը խօսի Թուրքիոյ ինքնակալական (autocra-

tique) վարչաձեռնը եւ ծաւալապաշտական միտումը Եւրոպա արտածելու ցանկութեան մասին, որուն համար Եւրոպայի թուրք եւ արաբ աշխատաւորները կրնան միջոց ըլլալ:

Գիրքը զգուշացում է: **Ապագային ո՛չ ոք իրաւունք պիտի ունենայ ըսելու, որ չէր նախատեսած, չէր գիտեր**, ոչ միայն հայերը, քիւրտերը, յոյները, ալեւիները, այլ նաեւ արաբները, Եւրոպան, նաեւ՝ Ռուսիան եւ Չինաստանը:

Լաւ պիտի ըլլար գիրքը թարգմանել հայերէնի, անգլերէնի եւ այլ լեզուներու, քան զայն ծանօթացընել գրախօսականով մը:

47 գլուխներուն մէկ առ մէկ կարելի չէ անդրադառնալ: Ա. Պոնզոն քանի մը տասնամեակէ ի վեր հետեւած է Թուրքիոյ կեանքին: Գիրքին մէջ առանցքային դէմք է Թուրքիոյ ինքնակալը, բայց ինչ եւ նաեւ այլ դէմքեր, որոնց վրայ կեդրոնացաւ միջազգային հանրութիւնը, ինչպէս «սպաննուած հայ լրագրող Յրանդ Տիւրքը», քիւրտ քաղաքական պարագլուխ Սալահէտտին Տեմիրթաշը, աշխարհիկ զօրավար Զեմալ Եաւուզը, Ամերիկա ապաստանած Ֆեթիւլլա Կիւլէնը (Էրտողանի նախկին դաշնակիցը), գրող եւ հրապարակագիր Ահմետ Ալդանը:

Կը կարդանք. «Յուլիս 2016-ի զինուորական ձախողած յեղաշրջման հետքերով, ան (Էրտողան), զսպումի քաղաքականութեան ձեռնարկեց բոլոր մակարդակներու վրայ եւ հաստատեց քաղաքական վարչաձեռն մը, որ իրեն կը շնորհէ ամբողջ իշխանութիւնը, որուն կը ձգտեր տարիներէ ի վեր... Այնուհետեւ կրնայ յուսալ անցնիլ յաջորդ հանգրուանին, իր առաջնորդութեամբ, հաստատել Թուրքիոյ վրայ օսմանեան նախկին խալիֆայութիւնը, իսլամական աշխարհի վրայ, միջոցին արդէն թրքական բանակը ոտք կը դնէ սուրիական հողի վրայ: Ահա այս բոլորին համար Էրտողան կը դիմակայէ



ճշմարտութեան ժամ մը»: (Էջ 16-17):

Ա. Պոնզոն ցոյց կու տայ, թէ ինչպէս, տնտեսական ծանրակշիռ նահանջի եւ փտածութեան մթնոլորտի մէջ, անատոլուցի-իսլամ լուռ մեծամասնութիւնը կը խլրտայ, որ պիտի ըլլայ ենթահողը Ռ. Էրտողանի ինքնակալութեան: Երկիրը անոր պատրաստուած է Իմամ Յաթիպ հանրային-կրօնական դպրոցներու ցանցով: 2018-ին անոնց թիւը եղած է 4000, ուր կը պատրաստուէր Թուրքիոյ իսլամ քաղաքական ընտրանին, համատեղելով սիւննի իսլամութիւնը եւ թուրք ազգայնականու-

թիւնը:

Յետաքրքրական է արդարադատութիւնը: Երիտասարդ դատաւորները կը ղրկուին երկրի քրտական ծայրամասերը, 1400 քիլոմէթր հեռու: Անոնք գիտեն, որ եթէ փորձեն անկախ ըլլալ կեդրոնական իշխանութենէն, իրենց ապագան կը խափանուի: Ֆեթիւլլա Կիւլէնի կուսակից վեց դատաւորներ ձերբակալուեցան եւ դատի տրուեցան: Հաւատարիմներ կը գլխաւորեն այսօրուան դատական համակարգը:

Ա. Պոնզոն քրտական շարժման առաջնորդ Ապտիւլլա Օճալանի մասին, զոր ձերբակալած էին հեռաւոր Զենիոյ մէջ, կ'ըսէ, **ամերիկեան, իսրայելեան եւ թրքական գաղտնի սպասարկութիւններու համագործակցութեամբ:** 2000-ին, երեսուն քիւրտ պատանիներ Պոլիս կը բերուին բանակին կողմէ. «Բանակը կ'ուզէ ցոյց տալ այս տողոց, որ գիրենք կը սիրեն, որ իրենք մաս կը կազմեն մեծ երկրի մը, անբաժանելի, Թուրքիոյ, որ յաջորդած է Օսմանեան կայսրութեան: Երկիր մը, որ պետք է նայի դէպի Արեւմուտք եւ որուն տնտեսական ապագան խոստմնալից է»: Եւ սերունդը սիրաշահելու եւ տպաւորելու համար, այդ խեղճ հագուած պատանիները կը տարուին

պալատներ եւ առեւտրական կեդրոններ, որոնց համար կը գնուին վերարկուններ:

Բանակը օրին անդրադարձած է վտանգին: 1971-ի յեղաշրջման ղեկավարներէն եւ 1980-ին նախագահութեան թեկնածու զօրավար Մուսիսին Պաթուրի խօսքը կը մեջբերէ Ա. Պոնզոն. «Թուրքիան կը դիմակայէ երկու վտանգ, առաջինը իսլամականութեան տարածումն է եւ երկրորդը քրտական անջատողականութիւնը» (էջ 35): Եւ ապա զօրավարը կ'եզրակացնէ. «Եթէ զանոնք ազատ ձգէք, իսլամականները իշխանութեան կը տիրանան» (նոյն տեղը): Եօթը տարի վերջ, բանակը կը փորձէ ընդդիմանալ Ապտիլլա Կիլի նախագահ ընտրութեան, տեղի կ'ունենան բանտարկութիւններ եւ դատեր: 15 յուլիս 2016-ի յեղաշրջման փորձէն ետք՝ կրկին ձերբակալութիւն եւ դատեր: 2002-ին իշխանութեան տիրացած Ռ. Էրտողան բանակի եւ ապահովութեան ուժերը չէր հակակշիռը: «Այդ իրեն ներկայացող մեծագոյն մարտահրաւերն էր», կ'ըսէ Ա. Պոնզոն:

Գիրքի Դ. գլուխի խորագիրն է. «Յրանդ Տիւք, լրագրող, հայ եւ թուրք քաղաքացի» (էջ 38-43): Վեց էջերով կը խտացուին մեզի ծանօթ դէպքերը:

Շիշլիի «Ակօս» թերթի խմբագրատան մէջ գրոյցի մը կ'անդրադառնայ Ա. Պոնզոն: Կը մեջբերէ Յրանդ Տիւքի երկսայրաբանութիւնը. «Մենք, Թուրքիոյ հայերս, կ'ապրինք ածելիի շեղքին վրայ: Կամ կ'իյնանք այս կողմ, որ պիտի նշանակէ ուրանալ մեր ժառանգութիւնը (հայկական), կամ կ'իյնանք միւս կողմ, որ պիտի նշանակէ դաւաճանել երկրին (Թուրքիոյ), ուր կ'ապրինք բոլորս»: Ինչպէս Ա. Պոնզոն դիտել կու տայ, որ «...խնդրոյ առարկան **Ցեղասպանութիւն** եզրի գործածութիւնն է, զոր Յրանդ Տիւք գրեթէ բնաւ հրապարակաւ չի գործածեր: Բայց ինք կ'ըսէ հետեւեալը. «Պատասխանատու 1915-ի հայոց տեղահանութիւններուն եւ լայնածաւալ ջարդերուն, թրքական ազգայնականութիւնը քեմալական պետութեան հիմքին կը գտնուի: Յրանդ Տիւք այդ չի դրժեր: Գիտէ, որ հայերը ներկայացնել այնպէս, որ զոհ եղած են, եւ ոչ դաւաճաններ, կը նշանակէ քանդել Թուրքիոյ գաղափարաբանական սիւներէն

մին: Գերագանց **թապու** մը: Այնուամենայնիւ, լրագրողը կ'ըսէ, որ օտար պետութիւնները չէ, որ պետք է օրէնք ընդունին Յայոց ցեղասպանութեան իրողութեան մասին, այլ թրքական խորհրդարանը: Այդ անկարելի կը թուի այս երկրին մէջ, որ կառուցուած է ազգային ինքնութեան առասպելի մը վրայ, թուրք եւ մահմետական միաժամանակ, ջնջելով դարերու հայկական ներկայութիւնը: Որովհետեւ, տարբեր սփիւռքի հայերէն, որոնք կը պայքարին որպէսզի ճանչցուի իրենց նախահայրերու ապրած ողբերգութիւնը, Թուրքիոյ հայերուն ներկայացող մարտահրաւերն է մերուիլ թրքական ընկերութեան մէջ առանց անոր մէջ լուծուելու»:... «Ինչպէս կ'ըսէ առեւտրական մը. ատոր համար հարկ է նախ կարենալ շարունակել հայերէն խօսիլ»: (էջ 39):

Ա. Պոնզոն կը խօսի Յրանդ Տիւքի հետապնդած քաղաքական վարքագիծին, Լոզանի դաշնագրի (1923) գործադրութեան պահանջի մասին: Կը մեջբերէ Յ. Տիւքը. «Եթէ նայիք Լոզանի դաշնագրի փոքրամասնութիւններու վերաբերող յօդուածներուն, պիտի նկատէք, օրինակ, որ անոնք իրաւունք ունին դպրոցներ բանալու, եկեղեցիներ կառուցելու եւ նոյնիսկ պետութիւնը պարտաւոր է օգնելու, եթէ եկեղեցիները միջոցներ չունին: Բայց ոչինչ փոխուած է, մենք ոչ մէկ նոր բան կրցած ենք կառուցել: Անգարան ոչինչ կ'ընէ»:

Ա. Պոնզոն կը գրէ. «2018-ին, Պոլսոյ դատախազութիւնը յայտնած էր, որ **Ցեղասպանութեան** մասին խօսիլ կը վերաբերէր արտայայտուելու ազատութեան: Բայց նոյն ամիսն իսկ, Անգարայի դատախազութիւնը հետապնդումի ձեռնարկեց Կարօ Փայլանի, հայկական ծագումով թուրք երեսփոխանի մը դէմ, քանի որ ան խորհրդարանին մէջ գործածած էր Ցեղասպանութիւն բառը: Եւ պատժական օրէնսգիրքի թիւ 301 յօդուածը միշտ կը սահմանէ 6 ամիսէն 2 տարի բանտարկութիւն, բոլոր անոնց, որոնք **կ'անարգեն թուրք ժողովուրդը, թուրք պետութիւնը, թուրք խորհրդարանը, կառավարութիւնը, արդարադատութիւնը, բանակը կամ ոստիկանութիւնը**, ինչպէս Յայոց ցեղասպանութեան յիշեցումը» (էջ 43):

Չարմանալի օրէնք եւ ազատութեան ըմբռնում: Պետութիւնները Ա. Պոնզոնի այս հաս-

տատումը չէին սպասեր գիտնալու համար: Սպասարկութիւններ ունին: Բայց...

Տարբեր էջերու մէջ, կը խօսուի Թուրքիոյ Եւրոմիութեան անդամակցութեան յոյսին եւ յուսախաբութեան մասին: Դեպի Եւրոպա բացուելու հակամետ երիտասարդութիւնը մտահոգուած է: «Երբ միայն Թուրքիան կը քննադատուի, թուրքերը իրենք իրենց վրայ կրնան փակուիլ եւ ազգայնականութիւնը կրնայ վերայայտնուիլ»: 1 մայիս 2004-ին, 10 նոր երկիրներ անդամ դարձան Եւրոմիութեան, եւ Թուրքիան դուրս մնաց:

Կրօնական-պահպանողականներու ընտրական յաղթանակով, նոյեմբեր 2002-ին, ժամանակակից պատմութիւնը կը սկսի, Երտողան կը դառնայ վարչապետ: Սկզբնական շրջանին բարեկարգումները կը շարունակուին, ընդունելի ըլլալու համար Եւրոմիութեան կողմէ, նաեւ խուսափելու համար բանակի ճնշումէն: 2007-ին բանակ եւ աշխարհիկ դասը կը փորձեն ընդդիմանալ Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան (AKP) թեկնածուի նախագահ ընտրուելուն, բայց Երտողան կանխահաս ընտրութիւն կը կազմակերպէ եւ կը յաղթէ:

Ա. Պոնզոն կը նկարագրէ Թուրքիոյ ներքին կացութիւնը, կը խօսի «պատուոյ ոճիր»-ներու մասին: Մարդիկ կ'ըսեն. «Մեր պատիւը աւելի կարելոր է մնացեալէն, մեր պատիւը գերադաս է թրքական օրէնքէն», արդարացրելով **մեղանչած կանանց** սպանութիւնը: «Երբ ընտանիքի պատիւը արատաւորուած է, զայն պէտք է լուալ սխալ գործած կնոջ արիւնով» (էջ 59): Արիան Պոնզոն կը մէջբերէ թուրք լրագրողուհի Այշէ Էօնալի վկայութիւնը. «Այս մշակոյթին մէջ կանանց շնորհն է ըլլալ արժանաւոր եւ առաքինի, եւ այրերու պարտականութիւնն է հսկել անոնց վրայ, որպէսզի այդ շնորհները պահեն: Երբ կին մը չի պահեր այդ իտէալները, հարկ կ'ըլլայ զայն սպանել: Այն այրը, որ կը մերժէ այդ ընել, չի կրնար բնական կերպով ապրիլ, ան կը ստորնացուի, կ'արհամարհուի ամբողջ գիւղին, դրացիներուն, ընկերներուն, ընտանիքին կողմէ: Պատուի համար գործուած ոճիրները ընտանեկան բռնարարքներ չեն, անոնք ընկերային են եւ վեր՝ ընտանիքներէն» (էջ 60): Ոճ-

րագործը կը դատապարտուի բանտարկութեան, բայց ընկերութիւնը կը մնայ այնպէս, ինչպէս որ է, կրօնական ըմբռնումի եւ օրէնքի ճնշման տակ:

Ա. Պոնզոն կ'անդրադառնայ ոստիկանութեան, որ կը սպառնայ բրտութեամբ եւ խենէշ արտայայտութիւններով, տանջանքներով: Ոստիկանները ընդհանրապէս չեն դատապարտուիր: Եւրոպական արդարադատական ատեան դիմողներ կ'ըլլան: Երտողան միշտ զգուշ ըլլալով բանակէն, կը կռնի ոստիկանութեան վրայ, որուն յատկացուած վարկերը բազմապատկուած են: Բայց պայքարողներ կան: Էջ 71, կը կարդանք. «Շրջանին մէջ, երեսուն տարուան ընթացքին, 284 գիւղեր, որոնց բնակիչները մերժած են գործակցիլ բանակին, աւերուած են»:

Թրքական կամայականութեան պատկեր է գիրքի 11-րդ գլուխը, էջ 78: Խորագիրը թելադրական է. «Ուղղափառներու (օրթոտքս) ուրուական դպրոցը»: Կը կարդանք. «Յէյպելի կղզին, սեպտեմբեր 2004: Այս հշխանաց կղզիի բլուրներէն մէկուն վրայ, Մարմարա ծովուն մէջ, ուրուական դպրոց մը, շրջապատուած ծառերով, հանրութեան առջեւ փակ, տօնուած եւ ցանկացուած աշխարհի բոլոր ուղղափառներուն կողմէ: Պոլիսէն նաւով մէկ ժամ հեռու, Յալքիի աստուածաբանական դպրոցը ԺԹ. դարու վանական հսկայ կառոյց մըն է, կարմիր կղմիտրէ կտուրով: Հիմնուած 1844-ին, ուղղափառութեան մեծաւորներ պատրաստելու համար, հաստատութիւնը գործած է 127 տարի, փակուելէ առաջ 1971-ի յեղաշրջումէն ետք: Բայց յարակարծութիւն մը (paradoxe). մէկ կողմէ Անգարա կը պահանջէ, որ տիեզերական պատրիարքը ըլլայ Թուրքիոյ յոյներէն, միւս կողմէ թոյլ չի տար, որ Թուրքիոյ մէջ կրօնական հաստատութիւն մը նուիրուած ըլլայ ուղղափառ աստուածաբանութեան ուսուցման» (էջ 78): Հակառակ Պրիքսելի եւ պատրիարք Պարթոլեոմոյի դիմումներուն, այդ ուսումնարանը փակ կը մնայ:

Թուրքիոյ մէջ, հակառակ անոր, որ ալեւիները կը պատկանին իսլամական կրօնին, կը հալածուին, մանաւանդ, նոյնացուելով Սուրիոյ ալեւիներուն հետ:

Գլուխ 14. **Գորշ Գայլերը. ծայրայեղ ազգայնականներ. այս Երոպայի որ մեզ կը նուաստացնէ:** «Այսօր, թուրք ծայրայեղ ազգայնականները բաւականաչափ ներկայ են ոստիկանութեան մէջ: Անոնք կ'արտայայտեն, առանց հակակշռի եւ բրտութեամբ, զգայնութիւնը հպարտ ժողովուրդի մը, յետնորդները օսմանեան կայսրութեան, բայց նաեւ Յոներու, Կեդրոնական Ասիոյ թուրքերուն, Էրկենեքոնի, Օրխոնի, Մոնկոլիոյ եւ տափաստաններու, պարզ՝ ամբողջ թրքութեան: Եւ միշտ ունին հոգեխոցը Կայսրութեան դար մը առաջ տեղի ունեցած անդամահատման» (Էջ 90): Կ'ըսուի նաեւ, որ ամեն անգամ, որ յիշուի Սելիկի դաշնագիրը եւ Երոպայի պաշտպանէ քիւրտերը, բուն կերպով կը հակազդեն:

Ա. Պոնզոն կը գրէ. «Եւ, 1915-ի ջարդերու 90-ամեակին առիթով, Երոպացի կարգ մը պատասխանատուներ ցանկութիւն կը յայտնեն, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը չափանիշ ըլլայ Թուրքիոյ (Երոմիութեան, Յ. Պ.) անդամակցութեան» (Էջ 92): Շարունակութիւնը. «Այս իսկական նուաստացում է: Ամբողջ թուրք ազգի պատմութեան մէջ աւելի վատ նուաստացում չէ եղած, ըստ ինծի», կը յայտարարէ երիտասարդութեան ուրիշ պատասխանատու մը, Մետեհան Էօզքան, այս յայտարարութիւններուն եւ դիրքորոշումներուն Թուրքիոյ դէմ, մինչ Եուզէյ Չոքքուն կը պնդէ. «Այս անտանելի է, որ Երոմիութիւնը մեզի վերաբերի որպէս երկրորդ դասի քաղաքացիներ, ինչպէս Երրորդ Աշխարհի երկրի մը»:

Ա. Պոնզոն երկարօրէն կը խօսի արմատական ձախերու պայքարին եւ հալածանքներուն մասին: Բանտարկեալ քիւրտ կնոջ մը պատմածը. «Սարսափելի բաներ ապրած եմ բանտին մէջ: Երբ դեպք մը պատահէր, ծեծի կ'ենթարկուէինք: Իրենց ուզածը այն է, որ յոգնիս, կ'ուզեն որ հրաժարիս պայքարէն: Հարկ է, որ հաւատաս քու արժէքներուդ: Այդ է որ քեզի ուժ կու տայ եւ կ'օգնէ որ դիմանաս» (Էջ 94):

Կրօնքը միջոց է իշխելու: Ա. Պոնզոն կը խօսի կրօնից տեսչութեան (**Տինայէթ**) գործելաճի մասին. «Տինայէթն է, կրօնական հար-

ցերու նախագահութիւնը, որ ամեն ուրբաթ կը յայտնէ իմամներուն, ինչ որ պիտի ըսեն **մինայարէն**» (Էջ 101): **Մինայարը** ամպիոնն է ուրկէ կը խօսի կրօնաւորը:

Գլուխ 17. խորագիր. «**Սուրին մնացորդացը.** թաքուն հայերը»: Ա. Պոնզոն կը խօսի Ֆեթիհէ Չեթինի մեծ մօր՝ Հրանուշ Կատարեանի մասին: Կը նկարագրէ գաղթը դեպի մահ: Ինչ տարեկան Հրանուշ կը փրկուի առեւանգուելով անգաւակ յիսնապետ Հիւսէյնի կողմէ, բայց անոր կեանքը արմատապէս կը փոխուի: Կը մէջբերէ Ֆ. Չեթինը. «Անոր կու տան սոր անուն մը. Շեհեր: Ան կը մոռնայ իր կրօնը եւ լեզուն, դառնալու համար պզտիկ մահմետական մը: Տասնհինգ տարեկանին զայն կ'ամուսնացնեն մեծ հօրս հետ» (Էջ 105): Մարդու իրաւունքի պաշտպան Ֆեթիհէ Չեթին այս պատմութիւնը լսած է իր մեծ մօրմէն եւ ցնցուած: «Նախ ընդվզեցայ, կը գրէ ան:- Զանի որ մեզի սուտ խօսած էին: Եւ ուզեցի դուրս ելլել, փողոցին մէջ պոռալ: Պետութիւնը այս մասին մեզի ոչինչ պատմած էր: Կ'ապրէինք այնպէս, որ կարծէք պատմութեան այդ էջը եղած չըլլար» (Էջ 105-106): Ֆ. Չեթին գրած է գիրք իր մեծ մօր մասին:

Ա. Պոնզոն կը գրէ. «Արդէն քանի մը տարիէ ի վեր, բազմաթիւ թուրքեր կը յայտնաբերեն, որ հայկական արմատներ ունին: Կը տեղեկանան, որ իրենց ընտանիքը, զոր հաստատապէս գիտէին թուրք եւ մահմետական, ուներ քրիստոնեայ նախնի մը, Տեղասպանութենէն ճողոպրած, որ ստիպուած եղած է իսլամանալու կարենալ ապրելու համար: Բայց ահա, յանկարծ, այս յայտնաբերման դիմաց, հակառակ իրենց կամքին, Հայեր»:... «Այս թուրքերուն թոյլ տալ իրենց հայկական արմատները վերագտնել, այս էր իսկապէս յաճախանքը հայ լրագրող Հրանդ Տինքի, սպաննուած յունուար 2007-ին, քանի որ խախտած էր թրքական ինքնութեան առասպելը: Թրքահայկական «Ակօս» թերթի աշխատակազմը այսօր կը շարունակէ իր հիմնադիրին աշխատանքը, եւ կը հրատարակէ կոչերը անոնց, որոնք կասկածներ ունին եւ կ'ուզեն գիտնալ իրենց պատմութիւնը: **Հոն, անձ մը գտած է, որ իր մեծ հայրը հայ էր: Կը**

փնտռե հեռաւոր զարմիկներ, որոնք թերեւս կ'ապրին սփիւռքի մէջ, Լիբանան կամ Միացեալ Նահանգներ: «Ահա թէ ինչու ան մեր թերթով կը հրատարակէ ծանուցում մը, կը բացատրէ լրագրող Մարգար Եսայեան, իր մատը դնելով Էջատակի կոչերէն մէկուն վրայ» (Էջ 106): ... **«Եւ յետոյ կան անոնք, որոնք գիտեն որ հայ են, բայց այդ կը պահեն իրենց հարեանէն:** Կը ճանչնամ շատ մը հայեր, որոնք կ'ապրին գիւղերու մէջ, ուր իրենց ընտանիքները իսլամացած են ընդունելի ըլլալու համար», կը շարունակէ արհեստաւոր մը: Ձեռով մը թաքուն հայեր: **Բայց եթէ գաղթէն Պոլիս, իրենք գիրենք աւելի ազատ կը զգան եւ կ'ուզեն վերագտնել իրենց քրիստոնէական ինքնութիւնը: Ուստի անոնք վերստին հայ կ'ըլլան** (Էջ 107):

Կը նկարագրուին յատուկ պարագաներ: «Այն օրէն որ Սատիք Իսթանպուլ կը բնակի, տեր է իր հայկական ինքնութեան: Ան վերջապէս առաջին անգամ ոտքը դրած է հայկական եկեղեցի մը: Եւ գացած է Զայաստան հայ կին մը գտնելու համար: **Կնոջս հոն հանդիպեցայ եւ հոն ամուսնացայ: Զայկական անուն մը տուինք մեր զաւակին: Ան կը կոչուի Քրիստափոր: Ան կը յաճախէ մասնաւոր վարժարան մը, ուր հայերէն եւ թրքերէն կը խօսի: Զիմա հայերէն կը սորվիմ շնորհիւ զաւակիս», կը ճշդէ ան (Էջ 109):**

Գլուխ 18. Ա. Պոնզոն կը խօսի **Վարլիք Վերկիսի** կոչուած 1942-ի եկամտահարկի մասին, որ միաձայնութեամբ ընդունուած էր Ազգային ժողովին կողմէ, եւ ուղղուած էր ոչ մահմետականներու դէմ, որուն համար, օրւան վարչապետը, Շիւքրի Սարաճօղլու յայտարարած է. «Բացառիկ պատեհութիւն մը կը ներկայանայ ձեռք բերելու համար մեր տնտեսական անկախութիւնը: Այս ձեռով պիտի կարենանք ոչնչացնել օտարները, որոնք շուկային տեր են, եւ զայն պիտի տանք թուրքերուն» (Էջ 113): Եւ օրէնքին գինը կը վճարեն իրեան, յոյնը եւ հայը:

Քաղաքակիրթ աշխարհին կը մնայ դատել, եթէ շահախնդրութիւններով եւ սոսկ զբօսաշրջութեամբ չէ կուրացած:

Ներկայի Ռ. Էրտողանի հակահրեայ քաղաքականութեան մասին կը գրէ. «Երբ կա-

ռավարութեան փառասիրութիւնը եղաւ արաբ-մահմետական աշխարհին ինքզինք պարտադրել, Էրտողան իւրացուց եւ շարունակեց **Միլլի Կիւրիշի** հակասեմականութիւնը միախառնելով Թուրքիոյ եւ աշխարհի հրեաները իսրայէլացիներու հետ» (Էջ 117): Եւ Ա. Պոնզոն կը յիշէ պետական անձերու անուններ, որոնք հակասեմական արտայայտութիւններ ունեցած են: 2013-ին 8000 հրեաներ հեռացած են Թուրքիայէն, մնացած են 17.000, որոնք իրենց գրպանին մէջ Իսրայէլ, Ամերիկա, կամ Սպանիա գաղթելու պատրաստ անցագիր ունին: Ընթերցողը կը հասկընայ, որ պետութիւնը կը ձգտի միատարրութիւն ստեղծել, այդ պատճառով գործած էր Զայոց ցեղասպանութիւնը, որ կը շարունակուի որպէս քաղաքականութիւն:

Առարկայական տուեալներով, ցոյց կը տրուի, թէ ինչպէս Թուրքիան գացած է դէպի **իսլամական-կրօնական պահպանողական ինքնակալութիւն**, բանտարկելով եւ չեզոքացնելով ընդդիմութիւնը, նաեւ՝ դէպի Արեւմուտք նայող քեմալականները եւ անոնց յաջորդները: Կը գրէ. «Իսլամական-պահպանողականները իրենց առջեւ կը գտնեն մայրուղի մը, քաջալերուած Էրտողանի 24 նոյեմբեր 2014-ի յայտարարութիւններով, ըստ որոնց այր եւ կին հաւասար չեն եւ պէտք է որ ունենան երեք զաւակ: Այս խօսքերը, ըսուած իր աղջկան կողմէ հիմնուած **Կանայք եւ Ժողովրդավարութիւն Միութեան** (KADEM) միութեան առջեւ, չեն հիմնուիր իրաւական անհաւասարութեան վրայ, այլ ենթադրեալ բնական անհաւասարութեան» (Էջ 149-150):

Էրտողան կայսերական վերաբերում ունի արաբական-իսլամական աշխարհին նկատմամբ, կ'ըլլան յաճախակի միջամտութիւններ: 2012-ին, ան տուն կանչեց իր Գահիրէի դեսպանը, յունուար 2016-ին, կառավարութիւնը տեղ տուաւ **Իսլամ Եղբայրներու Աքսորական խորհրդարանին**, իր յարաբերութիւնները զօրավար Ապտիլ Ֆաթթահ Սիսիի հետ զգալապէս վատացան: Բայց Թուրքիան Եգիպտոսի չորրորդ առեւտրական գործընկերն է, եւ փետրուար 2017-ին, չորս տարուան դադարէ ետք, թուրք-եգիպտական համաժողովը գումարուած է Գահիրէի մէջ» (Էջ 169):

Երտողանի կառավարությունը կանանց իրաւունքներու ձեռքբերման գծով ետդարձ է: Կը կարդանք. «2011-Էն ի վեր, **Կանանց նախարարութիւնը վերակոչուած է Ընտանիքի եւ ընկերային հարցերու նախարարութիւն: Յաջորդ օրուան դեղահատը** այլեւս չի տրուիր առանց դեղատոմսի, ինչ որ անոր գործածութիւնը գրեթէ անկարելի կը դարձնէ պզտիկ քաղաքներու մէջ, ուր բժիշկի մը դիմել բարդ է, նոյնիսկ անկարելի, մանաւանդ եթէ ան խորհրդապահական պիտի ըլլայ: Ընտանեկան խորհրդատուական գրասենեակներու մեծ մասը փակուած է: 2012-ին, Երտողան վիժեցումը բաղդատած է **ոճիրի** մը: Ան օրինական էր 1983-Էն ի վեր, բայց Արդարութեան եւ Չարգացման կուսակցութիւնը կ'ուզէր արտօնութիւններու ստացումը խստացրնել կարենալ այդ գրեթէ անկարելի դարձնելու համար» (Էջ 172):

Ա. Պոնզոն կը գրէ Ֆեթիլլա Կիւլէնի մասին, գլուխ 29, խորագիր՝ «**Պետութիւն պետութեան մէջ**», որ 1990-Էն վերջ տարածուած է նաեւ երկրէն դուրս: Միտքը նոյնն է. «Աւելի դպրոցներ կառուցել քան մզկիթներ», որոնց թիւը, տարբեր երկիրներու մէջ, 500-է աւելի է (Էջ 175): Կիւլէնականներ կը գործակցին Երտողանի, հալածուելէ եւ լուծարքի ենթարկուելէ առաջ: Երտողանի դաշնակից կիւլէնականներ, յեղաշրջում կատարելու ամբաստանութեամբ չէզոքացուեցան, եւ իսլամ-ազգայնական-պահպանողական Երտողան միաիեծան կ'իշխէ, բանտարկելով, խօսքի ազատութիւնը վերացնելով, նպատակ ունենալով օսմանի կայսրութիւնը վերականգնել՝ որպէս խալիֆայութիւն, ընդդէմ Արեւմուտքի եւ անոր դաւանած արժէքներուն:

Գիրքի 30-րդ գլուխը կ'անդրադառնայ Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան եւ ՏԱՅԵՇ-ի **մէկ քայլ առաջ մէկ քայլ ետի** յարաբերութիւններուն: 31-րդ գլխուն տակ Ա. Պոնզոն կը բացատրէ Թուրքիոյ պղտոր խաղը ՏԱՅԵՇ-ի հետ: Կը կարդանք. «Իսլամական պետութիւնը Անգարայի աչքին երկու առաւելութիւն ունի. ան Պաշտար Ասատի հակադրուող ուժ մըն է, որուն վերացումը թուրք կառավարութեան համար առաջնութիւն կը ներկայացնէ, եւ ան կ'ուղղուի Սուրիոյ քիւր-

տերու Ժողովրդավարական Միութիւն կուսակցութեան դէմ (Ժողովրդավարական միութեան կուսակցութիւն, Քրտական Աշխատաւորական կուսակցութիւն եղբայր կազմակերպութիւն),- այլ առաջնութիւն մը,- որուն ընթացքը դէպի ինքնավարութիւն կ'ուզէ կասեցնել, վախնալով, որ ան կ'ըլլայ թիկունքի խարխիւ Քրտական Աշխատաւորական կուսակցութեան քիւրտերուն, որոնք 1984-Էն ի վեր կռիւ կը մղեն թուրք իշխանութեան դէմ: Այս կը բացատրէ, որ 2012-Էն ի վեր **Թուրքիա օժանդակած է Իսլամական պետութեան յառաջընթացին, աչք գոցելով հազարաւոր Ժիհատական թեկնածուներու իր տարածքով Սուրիա անցքին:** (Էջ 186-187, ընդգծ. Յ.Պ): Ամբողջ գլուխը կը ներկայացնէ Թուրքիոյ եւ թուրքերու բազմաթիւ կապերը ՏԱՅԵՇ-ի հետ: 2014-ին Թուրքիան ՏԱՅԵՇ-ը կը յայտարարէ ահաբեկչական կազմակերպութիւն:

Թուրք մտաւորականութիւնը, երկրին մէջ թէ դուրս, սկիզբը յուսացած էր, որ Երտողան եւ Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը կ'ըլլան ժողովրդավարական ուժ, **իսլամական երանգով** (Էջ 192), մանաւանդ անոր համար, որ անոնք կը վախնային իսլամ պահպանողականներէն եւ բանակէն (Էջ 193): Մտաւորականութիւնը խաբուած է խորհելով, որ Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը պիտի բարեփոխէր համակարգը, բայց ան իրացուցած է գաղափարաբանական մեքենան, ինչպէս կ'ըսէ մտաւորական մը, Աքլէօնիլ (Էջ 199):

Նոյն միամիտ հաւատքը ունեցած է հայ հասարակութեան ծանօթ դէմք Ռակրայ Չարաքոլուն, որ յետոյ ըսած է, թէ՛ «Երտողանը փոխուած է եւ ոչ ես», որ 2008-ին «դատապարտուած է տուգանքի, զօրակցած ըլլալու համար Յայոց ցեղասպանութեան ճանաչման, յետոյ 2011-2012-ին բանտարկուած՝ ապակեդրոնացման եւ քիւրտերուն համար ինքնավարութեան հարցերով իր յանձնառութեան համար» (Էջ 199): Այդ մտաւորականները հիմա կամ բանտարկուած են կամ կ'ապրին աքսորի մէջ:

Ա. Պոնզոն ուշագրաւ էջ մը ունի Ե. Միութիւն-Թուրքիա յարաբերութեան մասին: Ե. Միութիւնը հսկայական գումարներ կը յատ-

կացնէ, շատ ալ որոշ չէ թէ ինչո՞ւ, Եւրոպական Միութեան քաղաքացիներու տուրքերը ինչո՞ւ յումպետս կը վատնուին: Կը գրէ.

«Ուստի ինչո՞ւ, թուրք նախագահին դիմաց, անոր սպառնալիքներուն եւ ինքնակալական կեցուածքի շեշտաւորման, անոր չեն յիշեցներ միլիոնաւոր եւրոները, զորս Պրիւքսել վճարած է եւ դեռ կը վճարէ Թուրքիոյ: Այս դրամական օժանդակութիւնը մի՞թէ անհասկնալի հակասութիւն մը չէ: Արդարեւ, ան գրեթէ անփոփոխ մնաց, նոյնիսկ երբ Եւրոմիութեան անդամակցութեան բանակցութիւնները կը գտնուին **յառաջացած մահաքունի** (coma) վիճակին մէջ, ըստ համալսարանական Սոլի Եօզալի տարագումին: Այլեւս ոչ ոք կը հաւատայ Թուրքիոյ լիիրաւ Եւրոմիութեան անդամակցութեան: Ֆրանսայի նախկին արտաքին գործոց նախարար Յիւպեր Վետրին բացորոշ կերպով այդ կ'ըսէ հիմա, բայց վճարումները կը շարունակուին: ... ՌԷՆ-1 համալսարանի քաղաքագիտութեան մասնագետ մը, Զլէր Վիզիէ, փորձած է հասկնալ այս հակասութիւնը: Չարմացնող է ինչ որ յայտնաբերած իր ուսումնասիրութեամբ. Եւրոմիութեան Թուրքիոյ կատարած օժանդակութիւնը ունի իր իւրայատուկ տրամաբանութիւնը: Ան ամբողջովին անկախ է քաղաքականութենէ, բոլորովին անջատ՝ Թուրքիոյ անդամակցութեան բանակցութիւններէն: Ես իրապէս զարմացած եմ գտնելով իրարու դիմաց երկու փակ աշխարհներ. դրամական համագործակցութիւնը եւ դիւանագիտական բանակցութիւնները: **Անոնք իրարու հետ չեն խօսիր: Թուրք գործիչները, ինչպէս Եւրոպացի, պատասխանատու կամ աշխատողներ Եւրոպական յատկացումներով ծրագիրներու համար, չեն գիտեր անգամ թէ ո՞ր գլխուն տակ բացուած են բանակցութիւնները եւ չեն գիտեր անոնց քաղաքական չափանիշները, կը բացատրէ Զլէր Վիզիէ: ...Թուրքիան իր բարեկարգումներուն մէջ, յառաջդիմէ թէ ոչ, դրամ կը ստանայ: Կ'եզրակացնէ, որ այդ գումարները չեն ծառայեր իրենց նպատակին եւ կը զօրացնեն իսլամ-պահպանողական ինքնակալական իշխանութիւնը: (Էջ 224-226)**

Կրնանք եզրակացնել թուրք Սահմանադրական օրէնքի մասնագետ Իպրահիմ Գա-

պաքօղլուի հետեւեալ հարցադրումով, թէ Թուրքիան այսուհետեւ ժողովրդավարակա՞ն է, մենատիրակա՞ն, թէ՞ **Ֆաշական**, այսինքն՝ մենիշխանական:

Այս գիրքին իմաստութիւնը կը յուշէ, մտածելու՝ թէ ժողովուրդները դեռ ատա՞կ են մարդկայնութեան, զբօսէն տարբեր իրաւ **հիւմանիզմի**, զգացումներու խորութեան: Մենք մեզմէ դո՞ւրս բանտարկուած ենք եւ այդ վիճակէն ալ գո՞հ ենք:

Հայուն, յոյնին, քիւրտին, ասորիին եւ ալեւիին անցեալը եւ ներկան լուսաւորող այս գիրքը կարդալ, թարգմանել եւ տարածել:

Ինչո՞ւ Արիան Պոնզոնը չիրաւիրել, որպէսզի ան տեղական եւ միջազգային հանրութեան ներկայացնէ, ինչպէս կ'ըսէին իրապաշտ գրողները, **Թուրքիան ինչպէս որ էր եւ ինչպէս որ է:**

Յ. ՊԱԼԵԱՆ

*3 նոյեմբեր 2019,
Նուազի-լը-Կրան*

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԵՐԸ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՇՏՈՒՄ

«**Ի** վերջոյ, ո՞վ է հիմա յիշում հայերի բնաջնջումը»: Ինչպէս յայտնի է՝ այս հեզնական արտայայտութիւնը պատկանում է Գերմանիայի երրորդ ռայխի տխրահռչակ առաջնորդ Ատոլֆ Յիթլերին: Այդ յայտարարութիւնը նա կատարել է 80 տարի առաջ՝ 1939 թուականին, երկրի բարձրագոյն զինուորական հրամանատարութեանը հրամայելով յարձակուել հարեւան Լեհաստանի վրայ՝ հող նախապատրաստելով հրեաների, սլաւոնների եւ, նացիստական այլատեսաց գաղափարախօսութեան բնորոշմամբ, Եւրոպայի եւ աշխարհի ոչ արիական ցեղախմբին պատկանող այլ ազգերի ու ժողովուրդների բնաջնջումին համար:



յայտ իրողութեան նկատմամբ: Նա առաւել քան վստահ էր, որ ինչպէս հայկական ջարդերի պարագայում էր, միջազգային հանրութիւնը դարձեալ յանցաւոր, առաւել եւս՝ յանցակից անտարբերութեամբ լռութեան կը մատնի մարդկութեան հանդէպ իր ծրագրած

զանգուածային բնաջնջման քաղաքականութեան աղէտալի հետեւանքները:

Մինչդեռ ժողովուրդների յիշողութիւնից իրականում ոչինչ չի ջնջուում ու մոռացուում, առաւել եւս՝ մարդկութեան դէմ գործուած հրեշաւոր յանցագործութիւնները, այդ յանցանքներում մեղաւոր բոլոր անձինք՝ անկախ զբաղեցրած հանրային-պետական դիրքից ու գործած ոճիւրի վաղեմութեան ժամկետից:

Ինչպէս չեն մոռացուել եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ձեռնարկած «Նեմեսիս» պատժիչ գործողութեան շրջանակներում հայ քաջարի վրիժառուների արդար դատաստանին են ի վերջոյ արժանացել Հայոց ցեղասպանութիւնը պետականօրէն կազմակերպած եւ իրագործած երիտթուրքական կառավարիչներ Թալէաթ, Էնվեր, Ճեմալ փաշաները, Պեհաետտին Շաքիրը, Ճեմալ Ազմին, Սայիտ Հալիմը, Օսմանեան Թուրքիայի ցեղասպան կառավարութեան միւս գրեթէ բոլոր պարագլուխները:

Ինչպէս չեն մոռացուել եւ դարձեալ միեւնոյն անխուսափելի ճակատագրին են արժանացել Պաքուի եւ Արեւելեան Անդրկովկասի

այլ բնակավայրերի հայութեան կոտորածները 1918-1920-ին կազմակերպած եւ իրագործած Ֆաթհալի Խան Խոյսկին, Պեհպուր Ճիւանշիր Խանը, Նասիբ Եուսիֆպէյլին, Յասան բէկ Աղան, արհեստածին «Ազրաբէյճանի դեմոկրատական հանրապետութեան» կառավարութեան անդամ այլ բարձրաստիճան յանցագործներ:



Ինչպէս չեն մոռացուել եւ 1945-ի Նիւրնպերկեան դատավարութեան վճիռներով մահապատժի են դատապարտուել հրեայ եւ այլ ժողովուրդների զանգուածային բնաջնջման ենթարկած Նացիստական յանցագործները: Իսկ ահա նրանց դիւահար պարագլուխը՝ Յիթլերը ժողովուրդների պատմական յիշողութեան մէջ մնացել է ոչ աւելին, քան որպէս նորագոյն ժամանակների եւս մէկ անփառունակ Յերոստրատ, ով, ինչպէս վկայում է անտիկ պատմագրութիւնը, իր անունն անմահացնելու համար հրկիզել էր Եփեսոսի Արտեմիսի տաճարը՝ աշխարհի եօթ հրաշալիքներից մէկը:

Իրաւական գնահատական տալով 20-րդ դարում մարդկութեան դէմ իրագործուած յանցագործութիւններին, միջազգային հանրութիւնը՝ ի դէմս ՄԱԿ-ի գլխաւոր վեհաժողովի, 1948-ին դեկտեմբերի 9-ին ընդունել է «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժի մասին» համաձայնագիրը, որի մէջ առաջին անգամ ամրագրուել ու հետագայ շրջանառութեան է դրուել «ցեղասպանութիւն» եզրոյթը: Միջազգային յանցագործութեան այդ իրաւական սահմանումը, ինչպէս յայտնի է, առաջարկել էր փաստաթղթի մէջ ամրագրել ազգութեամբ հրեայ, Լեհաստանի քաղաքացի, իրաւագետ Ռաֆայել Լեմքինը: Այն հանգամանքը, որ համաձայնագիրի 2-րդ յօդուածում նշուած՝ ցեղասպանութեան իրագործման համար հիմք հանդիսացող բոլոր 5 գործողութիւնները առկայ էին Յայոց ցեղասպանութեան իրագործման ժամանակ, ինչպէս նաեւ այն, որ Լեմքի-

նը մեծ դեր է ունեցել այդ փաստաթղթի մշակման գործում, փաստում են, որ այն կազմելիս ցեղասպանութեան դասական օրինակ է դիտարկուել հէնց Յայոց ցեղասպանութիւնը:

Ի լրումն՝ որպէս յատկանշական իրողութիւն, հարկ է նշել, որ իր ահռելի գիտական ժառանգութեան մէջ Ռաֆայել Լեմքինը յատուկ տեղ է յատկացրել Յայոց ցեղասպանութեան իրագործման խնդրի ուսումնասիրութեանը՝ այն ուշադրութեան կենտրոնում պահելով ողջ գործունեութեան ընթացքում: Յիշեցման կարգով նշեմ նաեւ, որ միջազգային իրաւունքի տեսակետից ցեղասպանութիւնը բնորոշող, ինչպէս նաեւ ցեղասպանութիւնը կանխող ու դրա համար պատիժ սահմանող այդ փաստաթուղթն ուժի մէջ է մտել 1951-ի յունուարի 12-ին եւ նրան միացել է 149 երկիր:

Արդեօք, ՄԱԿ-ի գլխաւոր վեհաժողովի ընդունած համաձայնագիրը փրկե՞ց մարդկութեանը ցեղասպանութեան համախտանիշից:

Արդեօք, Օսմանեան Թուրքիայի երիտթուրքական կառավարութեան իրագործած Յայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ծայր աստիճան դանդաղ ընթացքը, տարբեր երկրների, առանձնապէս ժամանակակից Թուրքիայի Յանրապետութեան իշխանութիւնների կողմից չճանաչումը եւ կամ բացարձակ ժխտումը յղի՞ չեն մարդկութեան դէմ ուղղուած համարժէք նոր յանցագործութիւնների:

Ինչպէս յայտնի է՝ սկսած 1915-ից տարբեր պետութիւններ ընդունել են բանաձեւեր՝ դատապարտելով հայկական շարժերն Օսմանեան Թուրքիայում: Միայն Միացեալ Նահանգները երեք անգամ՝ 1916, 1919, 1920-ին ընդունել են նմանատիպ բանաձեւեր: Բացի այդ՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան եւ Ռուսական կայսրութիւնը 1915-ին մայիսի 25-ին հանդես են եկել համատեղ հռչակագրով՝ նոյնպէս քննադատելով այդ կոտորածները: «Յաշուի առնելով մարդկութեան եւ քաղա-



քակրթության դեմ Թուրքիայի նոր յանցագործությունները՝ Դաշնակից պետությունների կառավարությունները հրապարակայնօրեն յայտարարում են Բարձր դրանը այս յանցագործությունների համար Օսմանեան կառավարության բոլոր անդամների անձնական պատասխանատուության մասին, ինչպես նաև այն գործակալների, որոնք ներգրավուած են այդ սպանություններում», նշում է հռչակագրում:

Սակայն, աւաղ, այդ դատապարտումները չեն կարողացել կասեցնել Օսմանեան կայսրության ցեղասպան գործողությունները: Աւելին՝ դրանք պարբերաբար կրկնուել են նաև հետագայ տասնամեակներում՝ արդէն իսկ հանրապետական Թուրքիայում: Վերջին շեք զագաների եւ տերսիմցի հայերի կոտորածները 1937-1939, ոչ մահմետականների եւ, առաջին հերթին՝ յոյների եւ հայերի 1955 սեպտեմբերի 6-7-ը պետականօրէն իրականացուած ջարդերը Պոլսում եւ այլն: Այլ կերպ ասած՝ արտաքուստ «բարեփոխումների ենթարկելով» պետական համակարգը եւ այն «յարմարեցնելով» եւրոպական արժեքային չափանիշներին, հանրապետական Թուրքիան իրականում դոյզն իսկ չի փոխել իր ցեղասպան եութիւնը:

Մեծ եղեռնից յետոյ կես դար անց միայն երկրորդ փուլ է թելակոխել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը: Այդ նոր փուլում՝ 1965-ին, այն առաջինը պաշտօնապէս ճանաչել ու դատապարտել է Ուրուկուէյը: Դրան յաջորդած աւելի քան կես դարում լատինամերիկեան այդ երկ-

րի օրինակին հետեւել են եւս մի շարք երկրներ՝ նոյնպէս ընդունելով Օսմանեան Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան փաստը՝ որպէս մարդկութեան դեմ ուղղուած յանցագործութիւն. ընդհանուր առմամբ, 2019-ին նոյեմբերի դրութեամբ, 34 պետութիւն՝ խորհրդարանի կամ կառավարութեան մակարդակով, ինչպէս նաև տարբեր միջազգային կազմակերպութիւններ: Եւս մի շարք պետութիւններում էլ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչուել է վարչատարածքային միաւորների՝ նահանգների,

շրջանների ու քաղաքների մակարդակով: Այս առումով յատկանշական է, որ Միացեալ Նահանգների Քոնկրեսն ընդամենը վերջերս է ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը՝ Ներկայացուցիչների պալատի եւ Ծերակոյտի ընդունած համապատասխան բանաձեւերով: Եւ դա՛ այն պարագայում, երբ երկրի 49 նահանգ, կարելի է ասել, վաղուց են այն ճանաչել: Մանաւանդ, դեռ պարզ էլ չէ՛ կը ճանաչի՞, արդեօք, ամերիկեան վարչակազմը եւ եթէ անգամ՝ այո, ապա դեռ հարց է մնում՝ իսկ ե՞րբ:

Ի վերջոյ, 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը միայն մեզ՝ հայերիս պատուհասած աղետը չէ: Չարժե մոռանալ, որ Օսմանեան իշխանութիւնը չի սահմանափակուել միայն հայերի ջարդերով: Չուզահեռաբար երիտթուրքերի կառավարութիւնը բնաջնջման է ենթարկել կայսրութեան այլ բնիկ ժողովուրդների եւս: Հայերի դեմ ցեղասպան գործողութիւններից մեծապէս տուժել են նաև պոնտացի յոյները, ասորիները, խալդերը, սիրիացիները, արամեացիները, մարոնիթները, Օսմանեան Թուրքիայի տարածքի այլ փոքրաթիւ ազգութիւններ ու կրօնական համայնքներ:

Այսպէս, ասորիների ցեղասպանութիւնը, որի ընթացքում մօտ 700 հազար մարդ է սպաննուել, ճանաչել է աշխարհի 5 երկիր, այդ թւում՝ Հայաստանը:

Պոնտացի յոյների ցեղասպանութիւնը, որի զոհերի թիւը տարբեր գնահատականներով կազմել է 600 հազարից մինչեւ 1 միլիոն մարդ, այդ թւում՝ 350 հազարը Պոնտոսում, ճանաչել է 6 պետութիւն, եւ կրկին՝ Ներառեալ

Հայաստանը: Ժամանակակից յունական գրականության մեջ 1919-1923-ի դեպքերը կոչվում են յունական ողբակիցում կամ Պոնտոսի ցեղասպանություն, եւ պատմության մեջ այն արձանագրուել է իբրեւ 20-րդ դարի երկրորդ եղեռն:

Օսմանեան կայսրութիւնում մեկուկէս միլիոն հայերի կոտորածը եւ դրա անպատժելիութիւնը խթան են դարձել 20-րդ դարի նոր ցեղասպանութիւնների համար: Մեծ տէրութիւնների անգործուն պահուածքը, այս ծաւալուն ողբերգութիւնը կանխելու հարցում դրանց ոչ վճռական լինելը հետագայում մարդկության դէմ նոր յանցագործութիւնների են յանգեցրել: Ցաւօք, ՄԱԿ-ի վերոյիշեալ փաստաթղթի ընդունումից յետոյ անցած տասնամեակները նոյնպէս յազեցած են այդ համամարդկային աղետի դրսեւորումներով՝ այլ ժողովուրդների եւ ազգերի հանդէպ ցեղասպան գործողութիւններով:

Որպէս ասուածի վկայութիւններ վերոյիշեալ առաւել ակնյայտ իրողութիւնները:

Եւ այսպէս, 1975-ին Քամպուտիայում իշխանութեան եկան Կարմիր հմերները՝ Փոլ Փոթի գլխաւորութեամբ: Քամպուտիոյ համայնավար կուսակցութեան ղեկավարութեամբ 1975-1977-ին երկրում գործում էր «Մահուան մեքենան», իրականացում էր Ցեղասպանութիւն, որի ընթացքում զոհուել է 1,7 միլիոնից մինչեւ 3 միլիոն մարդ: Սպաննում էին բարձրագոյն կրթութիւն ունենալու, ակնոց դնելու, օտար լեզուներ իմանալու, արտասահմանցիների հետ շփուելու համար, սպաննում էին բժիշկներին եւ ուսուցիչներին: Աղքատ երկ-



րում փամփուշտները պակասութիւն էին անում, ուստի սպաննում էին ձեռքի տակ ընկած ցանկացած իրով՝ քլունգով, բրիչով, մուրճով:

Ռուանտայում՝ խուտու կառավարութեան հրամանով 1994-ի ապրիլի 6-ից յուլիսի 18-ն իրագործուել է թութի ցեղի զանգուածային ոչնչացում: Այդ իրագործութիւնների ժամանակ տարբեր գնահատականներով 500 հազարից մինչեւ մէկ միլիոն մարդ է սպաննուել: Չոհերի ընդհանուր թիւը կազմում էր երկրի բնակչութեան 20 տոկոսը: Ցեղասպանութիւնը ծրագրել էր Ռուանտայի քաղաքական վերնախաւը եւ իրագործուել անմիջապէս բանակի, ժանտարմների, տարբեր յանցագործ խմբաւորումների ուժերով:

Սուտանի արեւմուտքում գտնուող Տարֆուր գաւառում 2003-ին ազգամիջեան հակամարտութիւն էր ծագել՝ ափրիկեան նստակեաց բնակչութեան եւ արաբալեզու քոչուորների միջեւ: Ապստամբների դէմ պայքարի պատրուակով Սուտանի կառավարութիւնը գործի էր դրել տեղացի արաբալեզու քոչուորների «ճանճաւիտ» աշխարհագործը, որի մարտիկներն ափրիկեան քաղաքացիական բնակչութեան դէմ պատժիչ արշաւներ էր իրականացնում: Չոհուել են հազարաւոր մարդիկ: ՄԱԿ-ի գնահատմամբ՝ բռնի տեղահանութեան թիւը գերազանցում է երկու միլիոնը, իսկ զոհերի թիւը՝ 180 հազարը, իսկ ահա փորձագետների տուեալներով՝ աւելի իրական է 300 հազարը: Տար-





Ֆուրում տեղի ունեցածը պաշտօնապես չի ճանաչուել որպես ցեղասպանություն, սակայն բազում մասնագետների կարծիքով, տեղացի բնակչության կոտորածը համապատասխանում է այդ սահմանմանը:

Հիւսիսային Իրաքում «Իսլամական պետություն» առաջակային խմբաւորման գրոհայիններին 2014-ի ամրանը յաջողուել էր գրաւել Սինճար քաղաքը, որից յետոյ նրանք սկսել են տեղացի եզիտի ժողովրդի զանգուածային ջարդերը: Որոշ տուեալներով՝ 50-ից 60 հազար եզիտի ստիպուած էր փախչել Շենկալի լեռներ: Իսլամական գրոհայինները պաշարել էին եզիտիների լեռնային ապաստանները: Նրանց գործողութիւնների հետեւանքով այդտեղ մի քանի հազար եզիտի մահացաւ: Մարդու իրաւունքների գծով ՄԱԿ-ի խորհուրդը 2016-ին դա պաշտօնապես անուանեց ցեղասպանութիւն: Ի դէպ, եզիտիների ցեղասպանութիւնը ճանաչել է նաեւ Հայաստանի խորհրդարանը:

Եւ, վերջապէս, արդեօք, ցեղասպա՞ն չէր խորհրդային, ապա եւ անկախ պետականութիւն հռչակած Ազրպէյճանի բնիկ հայ ազգաբնակչութեան նկատմամբ այդ հանրապետութեան վարած գտման, ահաբեկման ու բնաջնջման քաղաքականութիւնը 1988-1992 թուականներին, այդ թւում՝ զանգուածային ջարդերը Սումկայիթում, Գանձակ-Կիրովապատում, Պաքում, միւս քաղաքներում ու շրջաններում: Ձեռնարկուած զանգուածային բռնութիւնների հետեւանքով տեղահանուել է

շուրջ կէս միլիոն հայ բնակչութիւն, հազարաւորները յօշոտուել, նահատակուել են գազազած ամբոխի ճիրաններում: Բռնատեղահանուած հայերի գրեթէ ամբողջ շարժական եւ անշարժ գոյքը մնացել է այնտեղ, առանց թէկուզէ խորհրդանշական փոխհատուցման:

Այլ կերպ ինչպէ՞ս, եթէ ոչ՝ ցեղասպանութիւն կարելի է անուանել «Օղակ» ռազմագործողութիւնը, որ խորհրդային ներքին գորքերի աջակցութեամբ Պաքուն 1991-ի ապրիլի վերջերից մինչեւ օգոստոսի վերջերն իրագործում էր Արցախում՝ Գետաշէնում ու են-

թաշրջանի միւս հայկական գիւղերում, համաժամանակ նաեւ Հատրութի շրջանում: Այդ պատժիչ, իրականում ցեղային զտման ռազմագործողութեան ընթացքում բռնութեամբ տեղահանուել է 23 գիւղ, իսկ բնակիչների ողջ ունեցուածքը դարձել է միացեալ զօրական ուժին ուղեկցած ազրպէյճանական խաժամուժի թալանի առարկայ: Գումարած դրան՝ հարիւրաւոր մարդիկ զոհ են գնացել ասպատակիչների խժոժութիւններին:

Այլ կերպ ինչպէ՞ս անուանել Մարաղա գիւղի նախճիրը 1992-ի ապրիլին, որի ընթացքում դաժան, անմարդկային խոշտանգումներով սպանուել է 57 մարդ, իսկ 45-ը պատանդ է վերցուել, այդ թւում՝ 9 երեխայ, 18 կին, 3 տարեց: «Այն, ինչ որ մենք տեսանք՝ նկարագրութեան ենթակայ չէ,- գրել է Մեծն Բրիտանիայի Լորտերի պալատի այն ժամանակ փոխխօսնակ, պարոնուհի Քարոլայն Քոքսը, ով այցելել էր մէկ օր առաջ ազրպէյճանցի հրոսակներից կարճատեւ ժամանակ ազատագրուած Մարաղա: «Գիւղն ամբողջովին աւերուած էր: Մարդիկ թաղում էին զոհուածներին, աւելի ճիշդ՝ այն, ինչ հնարաւոր էր թաղել՝ տանջամահ արուած, կենդանի այրուած, կտրտուած կամ սղոցուած դիակի մասեր: Մի մասին թաղել էին նախորդ օրը, նկարահանելու համար նրանց հանեցինք, թէեւ հասկանում էինք, թէ ինչքան ծանր է հայերի համար: Այդ օրերին Մարաղայում նկարահանուածը փաստում է այդտեղ իրագործուած սոսկալի կոտորածի մասին՝ գլխատ-

լած եւ կտրտուած դիակներ, երեխաների դիակներ, արիւնոտ հող, որտեղ սղոցել էին նրանց եւ մարմնի մասեր: Մենք տեսանք արիւնոտուած մանգաղներ, որոնցմով կատարել էին այդ եղէտնագործութիւնը, հաւանաբար դրանք պետք էր վերցնել մեզ հետ՝ որպէս վկայութիւն, բայց ես դա չկարողացայ: Բնակիչներին սպաննելուց յետոյ ագրայեյճանցիները թալանել եւ այրել էին գիւղը: Չինուորներից յետոյ յայտնուել էին քաղաքացիներ եւ շարունակել թալանը: Մենք տեսանք մի քանի լիքը լցուած պայուսակներ, որ դիակապտիչները չէին հասցրել տանել», ըսաւ Քոքս:



Այլ կերպ ինչպէ՞ս անուանել Շահումեանի շրջանի շուրջ 20 հազար հայ բնակչութեան բռնատեղահանումը հայրենի բնակավայրերից՝ դաձեալ խորհրդային զօրքերի անմիջական աջակցութեամբ, աւերուածութեան ու թալանի ենթարկելով մարդկանց տները՝ նրանց ստիպելով լքել հայրենի բնօրրանը եւ սփռուել աշխարհով մէկ:

Փաստօրէն, Ագրայեյճանում հայերի նկատմամբ անցեալ դարավերջին գործադրուած զանգուածային բռնարարքները նոյն այն ձեռագիրն էր կրում, ինչ դարասկզբին օգտագործուած էր օսման թուրքերի իրականացրած հայկական ջարդերի ժամանակ: Ու դարձեալ՝ այդ ամէնը տակաւին միջազգայնօրէն չի ստացել իր իրաւական գնահատականը, քանզի, ինչպէս Յայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացի պարագայում է, միջազգային հանրութիւնն այս անգամ եւս շարունակում է իր անանդական դարձած ջայլամային քաղաքականութիւնը՝ առաջնահերթ համարելով իր տնտեսական եւ ռազմաքաղաքական շահերը Յարաւային Կովկասում

եւ, առանձնապէս, իր շահագրգռուածութիւնն Ագրայեյճանից նաւթի եւ կազի անխափան մատակարարումն ինդրում: Աւելին՝ անպատիժ մնացած Ագրայեյճանին բարեհոգաբար թոյլատրում է սեթեւեթել բազմամշակութային եւ հանդուրժողական պետութեան՝ իրականում եւ ոչ մի միջազգային իրաւական չափանիշի չհամապատասխանող, կեղծ ու պատիր կեցուածքով:

Պատմութեան ընթացքը ցոյց է տալիս, որ մարդկութեան յիշողութեան դաշտն ամենեւին էլ դպրոցական գրատախտակ չէ, որի վրայի կաւճէ գրառումները, ըստ անհրաժեշտութեան, կարելի լինի ցանկացած պահի ջնջել, մոռացութեան մատնել: Մարդկային յիշողութիւնն իրականում անջընջելի է՝ ի գօրու վեր հանելու եւ նոր ժամանակների իրատես, արդար դատին յանձնելու այն ամէնը, ինչ երբեւէ կամայ, թէ ակամայ մոռացութեան է մատնել պատմագրութիւնը:

ՄԻԲԱՅԵԼ ԶԱԶԵԱՆ
Քաղաքական վերլուծաբան

*Արցախ
Յատուկ «Ազդակ»-ի համար*

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիրելի ընկերոջս՝ Զրանդ Տիկին: Նա երագում էր ճշմարտության ու արդարության հողի վրայ հաշտեցնել հայ եւ թուրք ժողովուրդները: Այդ երագանքը չմեռաւ, երբ 2007-ին սպաննեցին Զրանդը, հակառակը՝ հարիւր հազարաւոր մարդոց ոգեշնչեց շարունակել իր գործը: Կը ձօնեմ նաեւ աղջկանս՝ Զելինին: Ան ինձի յոյս կու տայ, որ յաջորդ սերունդը ի գորու է իրականացնել Զրանդին երագանքը եւ կերտել աւելի լաւ ապագայ: ՓՐՈՖ. ԹԱՆԵՐ ԱԶՉԱՍ


Փրոֆ. Թաներ Աբջամի նորագոյն աշխատասիրութեամբ լոյսին եկած պատմագիտական ակադեմական հրատարակութիւն մը եւս՝ «ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ-ԹԱԼԷԱԹ ՓԱՇԱՅԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ», որ իր փաստագրական անվիճելի, անհերքելի եւ մանաւանդ ուղեցուցալին տուեալներով՝ մէկ անգամ ընդմիշտ կու գայ հաստատելու՝ լռութեան ու մոռացութեան աւելի քան մէկդարեայ փուլի աւարտը:

2019-ին, DIGITIAN-ի գլխաւոր հովանաւորութեամբ, Անդրանիկ Անդրեասեանի անգլերէն կատարած շնորհաւորելի թարգմանութեամբ, Երեւանի Newmag հրատարակչատան տիտղոսաթերթի ընդգծումով. «Այս գիրքը երկրաշարժի ազդեցութիւն ունի Զայոց ցեղասպանութեան հետազօտութեան բնագաւառին մէջ: Ներքին գործերու նախարար Թալէաթ փաշայի ստորագրած սպանութեան հրամաններու եւ օսմանեան պաշտօնեայ Նայիմ Էֆենտիի յուշերու իսկութիւնը երկար ժամանակ անվիճելի թեմաներէն էր: Ժխտողականները կը պնդեն, որ այս փաստաթուղթերը ամբողջութեամբ կեղծիք են եւ հայերը ստեղծած են այդ բոլորը, պարզապէս իրենց մեղադրանքները հիմնաւորելու համար: Թաներ Աբջամի ներկայացուցած ապացոյցներ կը հերքեն այդ պնդումները ու յստակօրէն ցոյց կու տան, թէ ինչու այս փաստաթուղթերը, որպէս հայերու դէմ օսմանա-թրքական կառավարութեան ցեղասպան մտադրութեան ապացոյց, պետք է համարել իրական: Այս առումով աշխատութիւնը կը ջախջախէ ժխտողականութեան հիմնաքար պնդումները ու անգամ մը եւս կ'ապացուցէ Զայոց ցեղասպանութեան պատմական իրողութիւնը»:

Գիրքին առաջին կողքին վրայ տեղադրուած ցեղասպանագետ Մարկ Լեւինի լակոնական ակնարկը ինքնին՝ կը բնութագրէ 406 վաւերագրական էջերու մէջ խտացած անոր բովանդակութեան միտք բանին՝ «Արտակարգ կարեւորութեան գործ է: Աբջամը թրքական պատմագիտութիւնը դարձուցած է Ֆէյք նիւզի... »:

Մինչ աշխատասիրութեան հեղինակը՝ Աբջամ իր գիրքին պատմագիտական հետազօտութիւններով ձեռք բերած արխիւային անհերքելի փաստերու հաւաքագրումը՝ հիմք կը համարէ թրքական այն ասացուածքին, ըստ որուն՝ «Ճշմարտութիւնները վատ սովորութիւն ունին, օր մը ջուրին երեսը կ'ելլեն...», դիտել տալով, որ «...տասնամեակներէ ի վեր թրքական իրերայաջորդ կառավարութիւնները փորձած են պատմութեան էջերէն թաքցնել կամ ամբողջապէս անհետացնել հայերու բնաջնջման իրողութիւնը, եւ այս նպատակի իրականացման համար մշակուած ու գործադրութեան դրուած են տարբեր ռազմավարութիւններ, որոնցմէ գլխաւորը՝ «Այլընտրանքային փաստեր ներկայացնելու փորձն էր, այլ խօսքով՝ խեղաթիւրելով ճշմարտու-

թիւնը յօրինել էլ ներկայացնել «Այլընտրանքային իրականութիւն»: Այս ռազմավարութեան ուղղութիւններէն մէկը Երիտթուրքերու կառավարութեան՝ հայերու բնաջնջումը ծրագրելու էլ իրականացնելու արդիւնքները ապացուցող փաստաթուղթերու ոչնչացումն է, իսկ միւս ուղղութիւնը փրկուած իւրաքանչիւր ապացոյց հետեւողականօրէն վարկաբեկելու կոչուած ջանքերու գործադրումն է»:



Սակայն դարձեալ ըստ հեղինակին, «...Ակնյայտ է, որ հակառակ պատմութիւնը լռեցնելու Թուրքիոյ ի գործ դրած բոլոր ջանքերուն, վերջին տասնամեակներու գիտական ծանրակշիռ աշխատասիրութիւնները ցնցած են ժխտողականութեան այս ապակեայ դղեակին պատերը, ապացուցելով, որ օսմանեան հայերու բնաջնջումը պատմական անբեկանելի ճշմարտութիւն է...»:

Աքջամ մասնաւորաբար ցեղասպանագիտութեան եւ ընդհանրապէս միջազգային պատմագիտութեան մատոյցներուն մէջ, գերազանցապէս հաւաստի աղբիւրներ հանդիսացող իր այս հատորով կը ներկայացնէ «Թալէաթ փաշայի հեռագիրները» ամփոփող փաստաթուղթերը եւ Նայիմ Էֆէնտիի համապատասխան ծանօթագրութիւններով գրուած յուշերը, որոնք Յեղասպանութիւնը հաստատող նիւթական ամենէն կարեւոր «Երկու ապացոյցներն» են: Առաջին ապացոյցը նախկին Օսմանեան կառավարութեան Թալէաթ փաշային ուղարկուած հեռագիրներն են, որոնք ցոյց կու տան ամբողջ հայ բնակչութիւնը բնաջնջելու կոչուած կառավարութեան ծրագիրը: Այդ փաստաթղթային բնոյթի «ձեռագիր» հեռագիրներու եւ օսմանեան 24 համապատասխան փաստաթուղթերու բնօրինակները, 1918-ին, մամուլի մտաւորական գործիչ Արամ Անտոնեանին վաճառած էր Յալէպի գաղթականներու գրասենեակի տեղահանութեան տնօրէնութեան (Sevkiyat mudurlugu) քարտուղար՝ Նայիմ Էֆէնտին, որ (1915-1916) եղած է ինդրոյ

առարկայ հրամաններու գործադրութեան պատասխանատուն: Արամ Անտոնեան, որ հրաշքով փրկուած էր պոլսահայ մտաւորականներու սահմանուած սարսափելի ճակատագիրէն եւ հասած Յալէպ, այդ փաստաթուղթերու եւ յուշերու յոյժ կարեւոր հաւաքածոն «Մեծ ոճիրը» վերնագիրով հրատարակած էր 1921-ին Պոսթընի մէջ, որ նախքան այդ, 1920-ին լոյս տեսած էր ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով Փարիզի եւ Լոնտոնի մէջ⁽¹⁾: Հետագային «Յուշերը»⁽²⁾

յայտնաբերուած են կաթողիկէ հոգեւորական Գրիգոր Կերկերեանի անձնական արխիւէն:

Նայիմ Էֆէնտիի «Յուշերը» դասական յուշեր չեն, այլ օսմանեան 52 փաստաթուղթերու ձեռագիր պատճեններ, որոնց կցուած են Նայիմի գրած համապատասխան ծանօթագրութիւնները: Հաւաքածոյի նիւթերուն մեծ մասը կը վերաբերի երիտթուրքերու ղեկավար-եռեակի անդամ եւ ներքին գործոց նախարար Թալէաթ փաշայի հայերը վերացնելու հրամաններուն: Փաստաթուղթերու վաճառքը տեղի ունեցած է 6 նոյեմբեր 1918-ին, 10-ին եւ 14-ին Յալէպի նշանաւոր «Պարոն» պանդոկին մէջ, ուր Անտոնեան Նայիմ Պէլէն գնած է Թալէաթի հեռագիրներու կողքին, նաեւ օսմանեան 24 փաստաթուղթերու բնօրինակներ, որոնց 16 ձեռագիր պատճենները կը վերաբերին Նայիմ Պէլի յուշերուն, 6 փաստաթուղթեր կ'առնչուին հայ պատգամաւոր Գրիգոր Չոհրապին եւ 2 փաստաթուղթ, որոնք «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» (Ittihad ve Terakki) կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամ՝ Պեհաետտին Շաքիրի նամակներն են:

Աքջամի գիրքին բովանդակութեան մեծագոյն արժէքը կը կայանայ Թալէաթ փաշայի ուղարկած նամակներուն մէջ, որոնք հայերը ոչնչացնելու կոչուած պետական հրամաններ էին, օրինակ՝ 22 սեպտեմբեր 1915-ի հեռագիրով Թալէաթը կը հրահանգէ. «Թրքական հողի վրայ հայերուն բոլոր իրաւունքները, օրինակ՝ կեանքի եւ աշխատանքի իրաւունքները

վերացուած են: Ոչ ոք, օրօրոցի բարուրէն սկսած պէտք չէ ողջ մնայ: Կառավարութիւնը պատասխանատուութիւն կը ստանձնէ այս իրավիճակին համար»:


29 սեպտեմբեր 1915-ին Յալէպի նահանգապետին ուղարկուած այլ հեռագիրով մը, կը հաղորդուի հետեւեալը. «Արդէն հաղորդուած է, որ կառավարութիւնը ճեմիյէթի (երիտթուրքերու կոմիտէ) հրամանով որոշած է լիովին բնաջնջել Թուրքիոյ տարածքին բնակող հայերը: Այս հրամանին ու որոշումին ընդդիմացողները չեն կրնար մնալ պետական համակարգին մէջ:

Կանայք, երեխաներն ու հաշմանդամները պէտք է ոչնչացուին անխտիր՝ առանց խղճմտանքի, անկախ այն հանգամանքէն՝ թէ որքա՞ն ողբերգական են սպանութեան ձեւերը»:

Չթուագրուած այլ հեռագիրով մը ուշաբուրթեան կը յանձնուի այլ հրահանգ մը.

«Երկար ժամանակէ ի վեր մտադրութիւն կար ոչնչացնել կայսրութեան հայկական տարրը, որ դարեր շարունակ ջանացած է սասանել մեր պետութեան ամուր հիմքերն ու լուրջ սպառնալիք հանդիսացած կառավարութեան: Մեր սուրբ պարտքն իրագործելու յարմար պայմաններ չեն եղած: Այժմ այլեւս խոչընդոտներ չկան ու հայրենիքը այս վտանգաւոր տարրէն փրկելու ժամանակն է: Անհրաժեշտ է գիտակցաբար ու լիարժէք նուիրումով գործել, Թուրքիայէն վերացնել «հայ» անունը, առանց խիղճին ու կարեկցանքին տրուելու՝ վերջ ղնել անոնց գոյութեան»:

16 հոկտեմբեր 1915-ի հեռագիրէն կը տեղեկանանք հետեւեալ տեղեկանքին. «Գաղթի ճանապարհին որոշ յայտնի տեղահանուողներու հանդէպ տեղւոյն բնակչութեան գործած յանցանքներն ու զանցանքները միայն կը հաստատեն կառավարութեան նպատակներու իրագործումը, եւ կարիք չկայ այս թեմայով իրաւաբանական հետաքննութիւն սկսելու: Անհրաժեշտ հաղորդագրութիւնը



արդէն փոխանցուած է Տեր Չօրի եւ Ուրֆայի վարչական շրջաններուն»:

14 դեկտեմբեր 1915-ին Յալէպի ղեկավարութեան ուղղուած հեռագիրը կը նշէ. «Բնաջնջման ենթակայ ամենակարեւոր խումբը հոգեւորականութիւնն է, մեծ սիալ է անոնց թոյլ տալ, որ հեռանան եւ բնակութիւն հաստատեն Սուրիոյ եւ Երուսաղէմի նման վտանգաւոր շրջաններու մէջ: Կառավարութեան դէմ չարամիտ դաւադրութեան հակաւած այս անձերուն վերջնական հաստատման լաւագոյն վայրը այն է, ուր անոնք կը կոտորուին»:

Փրոֆ. Աքչամի պատմագիտական հիմնաւորումներով յագեցած հատորներու, նմանատիպ բովանդակութեամբ այլ հրատարակութիւններ, Ե՛ւս լուրջ վտանգ կը ներկայացնեն Թուրքիոյ հանրապետութեան ստեղծած պաշտօնական պատմագրութեան, իմա՝ պատմաշինութեան քաղաքական ռազմավարութեան, հետեւաբար բոլորովին ալ պատահական չէր պատմական ծանրակշիռ ճշմարտութիւնները ոչ միայն հակակշռելու, այլեւ սքօշելու կոչուած՝ «Թրքական պատմագիտական ընկերութիւն»-ը 1983-ին, պետական յատուկ պատուերով հրատարակած Շինասի Օրելի եւ Սիւրբէյյա Եուճայի «Eremenilerce Talat Pasaya Aftedilen Telegrafarin Gercek Yuzu» «Թալէաթ փաշայի հեռագիրները պատմական փա՞ստ, թէ՞ հայկական յօրինածք» աշխատութիւնը, որ 1986-ին թարգմանուած է անգլերէնի՝ «The Talat Pasha Telegrams, Historical Fact or Armenian Fiction?»: Գիրքին համահեղինակներուն պնդումով՝ կասկածի տակ կը դրուի նոյնիսկ Նայիմ Պէյի գոյութիւնը, նպատակ ունենալով Արամ Անտոնեանի իբրեւ թէ ենթադրեալ յուշերուն կից փաստաթուղթերը համարել կեղծիքի վրայ հիմնուած զուտ մտացածին յօրինում, որոնք խորքին մէջ անբեկանելի, անժխտելի ապացոյցներ են, Թալէաթ Փաշայի ձեռագիր հեռագիրներու վկայակոչութեամբ դատա-

պարտելու կառավարության ուղղակի հրահանգով ոչնչացնելու տեղոյն հայերը:

Ստեղծուած էր այնպիսի տպաւորութիւն, որ Շ. Օրէլի եւ Ս. Եունայի պետական հովանաւորութեամբ հրատարակած եւ որպէս այդպիսին՝ լայն տարածում գտած աշխատութեան անդրադարձումներու ունեցած ազդեցութեան պատճառով, կարծես փակուած էին հարցին քննարկումները, սակայն Աքչամի այս կոթողային գործով նոր էջ կը բացուի անհերքելի փաստարկներու ու ճշմարտութիւնը հիմնաւորող վաւերաթուղթերու լոյսին տակ, Յայոց ցեղասպանութեան հարցի քննարկումները այդ տեսանկիւնէն վերանայելու...

Աքչամ իր գիրքի նախաբանով, ուշադրութեան կը յանձնէ փաստերու եւ ճշմարտութեան միջեւ յարաբերութեան հասարակական գիտութիւններու ամենավիճելի հարցերէն մէկը ըլլալու դրոյթը, ճշմարտութեան ժխտումը համարելով հաստատուած փաստերու հերքում: Այս մասին վկայակոչելով գերմանացի պատմաբան, 20-րդ դարու քաղաքական փիլիսոփայութեան ամենէն կարեւոր դէմքերէն մէկուն՝ Յանսա Արէնթի (1906-1975) տեսակէտը, «...նախ փաստերը պէտք է ընտրուին իրադարձութիւններու քառսէն ապա յարմարցուին տուեալ պատմութեան, որ իր հերթին կրնայ շարադրուիլ միայն որոշակի տեսանկիւնէ, ոչ մէկ կապ ունենալով իրական անցուդարձերուն հետ, սակայն կարելի չէ հերքել ոչ միայն իրողութիւնները, ջնջել փաստի, կարծիքի ու մեկնաբանութեան սահմանները, այլ նաեւ պատմաբանին արդարացնող փաստերը ըստ ցանկութեան շահարկել...»: Եւ ահա այս տեսանկիւնէն դիտելով Յայոց ցեղասպանութեան շուրջ ծաւալած բանավեճը եւ քննութեան առարկայ դարձնելով (1915-1918) հայ ժողովուրդի Յեղասպանութեան յաջորդած՝ Թուրքիոյ իրերայաջորդ կառավարութիւններու որդեգրած ժխտումի քաղաքականութիւնը, Թ. Աքչամ կ'ըսէ, որ «... անոնք մէկը միւսին ետեւէն յաջողութեան հասած են ստեղծելով իրենց «պաշտօնական պատմութեան» սեփական տարբերակն ու «պատանդ պահելով» պատմութիւնը՝ ի շահ սեփական փաստաթղթային ապացոյցներու եւ ճշմարտութիւններու, անոնց յաջողութիւնը գոնէ ակնյայտ է իրենց

սեփական «պատմական տեսակէտը» լայնօրէն տարածելու եւ մեծ թիւով կողմնակիցներ ունենալու իմաստով: Այս իրականութիւնը ինքնին՝ կը հաստատէ, որ Ա. Աշխարհամարտի իրադարձութիւններու նկատմամբ թրքական ժխտողականութիւնը հանրային քննարկումներու ասպարէզին մէջ, իր կանխամտածուած, լաւ կազմակերպուած ու համակարգուած կեղծիքի տարածումով, կը հանդիսանայ «կեղծ ճշմարտութեան» մատուցման ամենայաջող օրինակներէն մէկը...» անելցնելով, «... անոնք, որոնք կ'ընդունին, թէ «ամէն ոք կրնայ ունենալ սեփական կարծիք, բայց ո'չ սեփական փաստեր» կարգախօսը, զարմանքով հետեւած են նախորդ տասնամեակներուն Յայոց ցեղասպանութեան վերաբերող հանրային ու պատմագիտական քննարկումներուն, երբ փաստերու վրայ հիմնուած ճշմարտութիւնները վարկաբեկուած են եւ հաւասարեցուած «կարծիքի» մակարդակի, ռազմավարութիւն մը, որուն հիմքային գործօնները կը հանդիսանան ճշմարտութիւնը թաքցնելը, զայն լռութեան մատնելն ու առանցքային փաստաթուղթերու ոչնչացման կամ հերքումի յարատեւ ջանքերը...»:

Թ. Աքչամի հետազօտական յայտնաբերումները կը մատնանշեն պատմական «իրականութեան» բաղկացուցիչ բազմազան տըլեալներ, ըստ որոնց՝

- Յայոց ցեղասպանութեան հերքում-ուրացումը սկսած է ոչ թէ կոտորածներու նախօրէին, այլ ի սկզբանէ ցեղասպանութեան ծրագիրին անբաժան մասը հանդիսացած է:

- Իրողութիւն է նաեւ, որ օսմանեան հասարակութեան մէջ բացակայ էր ցեղասպան քաղաքականութեան գաղափարապէս աջակցող զանգուածային շարժումը, հետեւաբար կառավարութիւնը կը հրահրէր ու կը քաջալերէր տեղոյն բնակչութիւնը անպաշտպան հայերը թալանելու, ձգտելով ապահովել հասարակութեան աջակցութիւնը Յեղասպանութեան քաղաքականութեան:

- «Փաստերու ստեղծման պահը» սկիզբ առած է առնուազն 24 ապրիլ 1915-ին: Ամբողջ տեղահանութիւնն ու բնաջնջումի ծրագիրը՝ օրինական վերաբնակեցում ներկայացնող պաշտօնական փաստաթուղթերը կազմուած են տեղահանութեան առաջին

օրերուն: Պոլսոյ մէջ ապրիլ 23-ին ձերբակալուած 200 հայ մտաւորականներու մասին օսմանեան արխիւները լի են փաստաթուղթերով, որոնց յօրինող-ձեւակերպողներէն մին՝ օսմանեան արխիւներու երկարամեայ գլխաւոր քարտուղար Եուսուֆ Սարընայ կը գրէ⁽³⁾, թէ «... Չանդըրըի մէջ արգելափակուած 155 մտաւորականներէն միայն 29-ը բանտարկուած, 35-ը կառավարութեան հրամանով վերադարձուած են Պոլիս, 31-ը ներումի արժանանալով՝ իրաւունք ստացած հաստատուելու իրենց ցանկացած քաղաքին մէջ, 57-ը քշուած են Տեր Չօր եւ երեք օտարերկրացիներ վտարուած են երկրէն...»: Այսինքն, ըստ Ե. Սարընայի պնդումներուն՝ 200 հայ մտաւորականներէն ոչ ոք սպաննուած է...: Աքջամ փաստերու ստեղծումի եւ պատումի ձեւաւորման այս գործընթացը դրսեւորող գեթ երեք օրինակներ կը ներկայացնէ գիրքին նախաբանին բաղկացուցիչ՝ «փաստեր, ճշմարտութիւններ եւ ժխտում» հատուածին մէջ, ընդ որուն՝

ա) ⁽⁴⁾ Օսմանեան խորհրդարանի ականաւոր հայ պատգամաւոր Գրիգոր Չոհրապ ձերբակալուած է 20 յունիս 1915-ին Պոլսոյ մէջ եւ ռազմական դատարանին ներկայանալու պատրուակով զինք ուղարկած են Տիարապէքիր, բայց ճանապարհին, 19 յուլիսին Ուրֆայի մօտակայքը քարերով սպաննուած է⁽⁵⁾: Պետք է ըսել, որ անոր սպանութենէն առաջ եւ ընթացքին արդէն կը պատրաստուէին պաշտօնական փաստաթուղթեր, որոնք կը հաւաստիացնէին անոր սրտի տագնապով մահացած ըլլալը, Չոհրապի մահուան նշեալ պատճառը հաստատուած է Ուրֆայի քաղաքապետարանի բժիշկին ստորագրութիւնը կրող զեկուցագիրով⁽⁶⁾:

Կառավարական այլ տեղեկագիրով մը, հայկական եկեղեցիի հոգեւոր դասի անդամ Զիւրքչիւ Վանեսի որդի Յայրապետի վկայութեամբ՝ Չոհրապ «մահացած է սրտի հիւանդութեան» պատճառով եւ թաղուած «իր կրօնական աւանդոյններով», Յայրապետին ստորագրութեան կողքին, համապատասխան զեկուցագիրը հաստատուած է նաեւ օսմանեան իշխանութիւններու կնիքով⁽⁷⁾:

Ներքին գործոց նախարարութեան 17 հոկտեմբեր 1915-ին Յալէպ ուղարկած 516 թիւը

կրող պաշտօնական փաստաթուղթի մը համաձայն՝ Չոհրապ Տիարապէքիրի ճանապարհին մահացած է ոչ թէ սպանութեամբ, այլ դժբախտ միջադէպի մը հետեւանքով⁽⁸⁾:

Գրիգոր Չոհրապի մահուան նշեալ պարագաները, իմա՝ պաշտօնական «փաստերն ու ճշմարտութիւնը» կը վկայեն անոր սրտի տագնապով մահացած ըլլալը, որ ինքնին փաստաթղթային բաւարար հիմք կը հանդիսանան, հարցը մասնագիտական ոլորտներու մէջ քննարկման նիւթ դարձնելու պարագային:

Սակայն հետագային Չոհրապի մահուան բուն պատճառի հերքումը՝ չէ օգտագործուած որպէս ժխտողական քաղաքականութեան բաղկացուցիչ մաս, որովհետեւ Չոհրապը սպաննող Երիտթրքական յատուկ կազմակերպութեան (Teskilati Mahsuse) անդամներ Չերքեզ Աիմէտն ու իր յանցակիցները ձերբակալուելով մահապատիժի ենթարկուած են, որովհետեւ հաւանաբար օգտագործուելով նաեւ ուրիշ հայ մտաւորականներու սպանութիւնը գործադրելու ծրագիրին մէջ, այլեւս վտանգ կը ներկայացնէին կուսակցութեան ղեկավարութեան համար. այս մասին կը վկայէ կուսակցութեան իշխող եռեակի անդամ Ճեմալ փաշայի օգնականը՝ Ալի Ֆուատ Էրտէն, նշելով. «...Միջոցները՝ անհրաժեշտ էին «գտնումներ» իրականացնելու «կեղտոտ գործի» համար, երբ անոնց կարիքը կար, իսկ օգտագործուելէն ետք պէտք է շարտուէին, այնպէս ինչպէս զուգարանի թուղթը...»:

բ) Փաստաթուղթերու ստեղծման երկրորդ օրինակը կ'առնչուի «Դաշնակցութիւն» կուսակցութեան ղեկավարներէն Ակնունիին (Խաչատուր Մալումեան), որ 24 ապրիլ 1915-ին ձերբակալուելով⁽⁹⁾ ուղարկուած է կեդրոնական Անատոլ, Անգարայի մօտակայքը գտնուող Այաշի բանտը, 5 յունիսին, Նոր հրահանգով մը հինգ ընկերներու հետ ճամբայ հանուած է դէպի Տիարապէքիր, տեղույն ռազմական դատարանին մէջ դատուելու: Խումբը Յալէպ հասած է Գրիգոր Չոհրապէն առաջ եւ յունիս 24-ի հրահանգով⁽¹⁰⁾ Տիարապէքիր: Ամենայն հաւանականութեամբ, ինչպէս Չոհրապին, անոնց ալ սպաննած են Նոյն անձինք, յուլիսի սկիզբը⁽¹¹⁾, սակայն օսմանեան որոշ «փաստաթուղթերով» կը նշուի, որ Ակնունիին

եւ ընկերները չեն սպանուած, այլ Տիարպեքի հասնելէ ետք յաջողած են փախչիլ եւ անցնիլ Ռուսաստան, այս մասին արտաքին գործոց նախարար Յալիլ Մենթեշէն 19 յուլիս 1915-ին, Թալէաթ փաշային յղած իր տեղեկագիրով կը նշէ, թէ «կասկած չկայ, որ Տիարպեքի ռազմական դատարանի ճանապարհին, Ակնունին եւ իր ընկերները «խաբած են իրենց պահապանները» ու փախած Ռուսաստան»:

զ) Փաստաթուղթերու ստեղծման երրորդ օրինակը կը վերաբերի Երիտթուրքերու հետ իր մտերմութեամբ յայտնի «Սապահ» թերթի գլխաւոր խմբագիր Տիրան Զելեկեանին, որ նոյնպէս ձերբակալուած է 24 ապրիլ 1915-ին եւ ազատ արձակուած 8 մայիսին, այն պայմանով⁽¹²⁾, որ բացի Պոլիսէն, իր հայեցողութեամբ ընտրէ բնակութեան այնպիսի վայր մը, ուր հայեր չկան, սակայն Զելեկեան կը մնայ իր աքսորավայրը՝ Չանղըրը: Ապա նոր հրամանագիրի մը տրամադրութիւններուն համաձայն⁽¹³⁾ դատաքննութեան պատրուակով կ'ուղարկուի Տիարպեքի, ճանապարհին սպանուելով զինեալ աւագակախումբերու կողմէ 2 նոյեմբեր 1915-ին: Մինչ ըստ Եուսուֆ Սարընայի յօդուածին⁽¹⁴⁾ Տիրան Զելեկեան «ներում ստացած է ներքին գործերու նախարարութեան 4 օգոստոս 1915-ի հրամանով եւ պետք է մեկնի Իզմիր»⁽¹⁵⁾:

Փրոֆ. Թ. Աքչամի ընդգծումով՝

- «... այս եւ բազմաթիւ այլ փաստաթուղթեր կը վկայեն, որ Յեղասպանութեան ժամանակ կերտուած է «զուգահեռ ճշմարտութիւն» եւ այդ «ճշմարտութիւնը» հիմնուած է կեղծ փաստերու վրայ... ստեղծուած է այլընտրանքային տեսակետ, հետեւաբար Յեղասպանութեան ընթացքին ստեղծուած այս «փաստերը» ճշմարտութիւնը վերածած են սոսկ բազում «կարծիքներէն» մեկը...»:

- «... չնայած հետքերը մաքրելու բոլոր ջանքերուն՝ զանգուածային սպանողը կը թողէ ապացոյցներ, եւ սա կը վերաբերի նաեւ Յայոց ցեղասպանութեան, որուն մասին կան բաւականաչափ նիւթեր՝ ցոյց տալու օսմանաթրքական կառավարութեան ցեղասպան մտադրութիւնը: Յաշուի առնելով ադ հանգամանքը՝ պատմութիւնը «լռեցնելն» ու զայն «պատանդ պահելը» չեն սահմանափակուած

միայն փաստերը կեղծելով, այլ անհրաժեշտ էր նաեւ ոչնչացնել գոյութիւն ունեցող մեղադրական նիւթերը, կամ զանոնք անվաւեր հռչակել, այսինքն՝ «առանցքային փաստաթուղթերու ոչնչացում կամ անոնց կեղծ ըլլալը ապացուցում»: Այս ուղղութեամբ գաղտնիք չէ արդէն, որ թրքական ժխտողականութիւնը շատոնց յայտնի է «իրական ճշմարտութեան» նիւթական հիմքերը ոչնչացնելու իր եւութեամբ:

- «... այժմ մենք ունինք հանգամանակից ապացոյցներ, որ Յայոց ցեղասպանութեան առնչուող օսմանեան առանցքային փաստաթուղթերը կանխամտածուած կերպով ոչնչացուած են...»:

- «... Թաքցնելէ եւ ոչնչացնելէ ետք, մնացած էր ընելիք մը եւս, որ մեղադրական ամէն փաստաթուղթ կեղծ է, կամ բնօրինակը չէ, ասոր լաւագոյն ապացոյցը Թալէաթ փաշայի հեռագիրներն են, որոնք կը համակարգեն հայերու ոչնչացումը: Եւ ահա այս գիրքի թեման այդ հեռագիրներու բացայայտումն է...»:

- «... իրականութեան մէջ, անհրաժեշտ է ե՛լ Եղեռնէն փրկուածներու յուշերուն հանդէպ վերաբերիլ որպէս կարելոր օսմանեան փաստաթուղթեր ու հարց բարձրացնել թէ ի՞նչ պատահած է 1919-1922-ի դատավարութիւններու ընթացքին ի յայտ եկած փաստաթուղթերուն, եթէ կառավարութիւնը զանոնք թաքցուցած կամ ոչնչացուցած է, ապա միայն անոնց բովանդակութիւնը հասանելի չդարձնելու պատճառով, այս մէկը ինքնին կը վկայէ, որ տուեալ փաստաթուղթերը Թուրքիոյ իշխանութիւններուն համար մեղադրական բնոյթ ունին...»:

Յուսկ,

Մեկնելով այս իրավիճակէն, մե՛նք՝ պատմաբաններս պետք է ի յայտ բերենք կորած կամ թաքցուած փաստաթուղթերու տեղեկութիւնները եւ ապացուցենք, որ անոնք ի հեճուկս ժխտողներու իրական են:

Ժամանակն է, որ անոնց ձեւակերպած փաստերով եւ անոնց «ճշմարտութեան» տարբերակի վրայ կառուցուած պատումը հերքուի:

Այս գիրքին նպատակն է բացայայտել լռութեան մատնուած ճիշդ տեղեկութիւնները եւ ցոյց տալ, որ «կարծիքի» ու «մեկնաբանու-

թեան» թնճուկէն հնարաւոր է դուրս բերել 1915-ի իրադարձութիւններու ապացոյցներն ու փաստերը...:

* * *

Եւ վերջապէս պէտք է ըսել, որ մասնագիտական մեկնաբանութիւններն ու համապատասխան վերլուծութեամբ կատարուող անդրադարձումները, դեռ բաւարար չեն, կամ դեռ չեն արտացոլացներ Թ. Աքչամի գերազանցապէս փաստագրական այս կոթողային հատորի բովանդակութիւնն ու անոր առաջադրանքը, որ իբրեւ պատմագիտական ակադեմական ուղեցոյց՝ կոչուած է «փաստագրուած ճշմարտութիւններ»-ու լոյսին տակ կատարելու Հայոց ցեղասպանութեան քննարկումները, բնականաբար փակագիծը միշտ բաց ձգելով առնչակից թղթածրարը վաւերական նոր ապացոյցներով համալրող աշխատասիրութիւններու...

ՍԱԼԲԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ծանօթագրութիւններ:

1- *Aram Andonian, Documents officiels les massacres Armeniens (Paris: Imprimerie H. Turabian 227, Boulevard Raspail, 1920)-Andonian, The Memories of Naim Bey, Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians, compiled by Aram Andonian with an introduction by Viscount Gladstone (London: Hodder and Stoughton, 1920): Արամ Անտոնեան, Մեծ Ռճիրը (Boston: Bahag Printing House, 1921:*

2- *Գրիգոր Կերկերեանի արխիւ, օսմանեան փաստաթուղթեր, թիւ 3, Գրիգոր Չոհրապ, 3-րդ փաստաթուղթ:*

3- *Yusuf Srinay, «What happened on April 24, 1915, the circular of April 24, 1915 and the Arrest of Armenian Committee Members in Istanbul», International Journal of Turkish Studies, 14, nos. 1&2 (Fall 2008): 75-101,80:*

Յօդուածի քննադատութեան համար տե՛ս Ara Sarafian, «What happened on 24 April 1915? The Ayash Prisoners», (Accessed 22 April 2013):

4- *Գրիգոր Չոհրապը (1861-1915) հայ նշանաւոր աշխուժ գործիչ էր, փաստաբան, ճարտարագէտ, ճարտարապետ եւ գրող: 1908, 1912 եւ 1914-ին ան Պոլսոյ մէջ ընտրուած է օսմանեան խորհրդարանի պատգամաւոր: Աւելի հանգամանաւոր տե՛ս Nesim Ovadya Izrail, 1915 Bir Olum Yolculugu Krikor Zohrab (Istanbul: Pencere Yayinlari, 2013):*

5- *Չոհրապին մահն հաստատած է անոր սպաննողը եւ ընդունած Չոհրապին գլուխը քարով ջախջախելու փաստը: Տե՛ս Ahmet Refik Altinay, Iki Komite Iki kital (Istanbul: Bedir Yayinlari, 1999), 51-52:*

6- *Գրիգոր Կերկերեանի արխիւ, օսմանեան փաստաթուղթեր, թիւ 13, Գրիգոր Չոհրապ, թիւ 03 փաստաթուղթ:*

7- *Նոյն, թիւ 04 փաստաթուղթ:*

8- *Նոյն թիւ 02 փաստաթուղթ:*

9- *BOA.SFR., 53/211, ներքին գործերու նախարար Թալէաթի գաղտնագրուած հեռագիրը Անգարա, 3 յունիս, 1915:*

10- *BOA.DH.SFR., 54/132, ներքին գործերու նախարար Թալէաթի գաղտնագրուած հեռագիրը Հալէպ, 24 յունիս, 1915:*

11- *Հալէպի մէջ Գերմանիոյ հիւպատոս Ռոսլերը 1915, յունիս 29-ի հեռագիրով հաղորդած է, որ Ակնունին իր ընկերներուն հետ դեռ Հալէպ է: (DE/PA-AA/Bokon/169):*

Ըստ Ռայմոնտ Գերրգեանի՝ սպանութիւնը գործած է Հաճի Թելալի յանձնախումբը: Տե՛ս R. Kevorkian, Armenian Genocide A Complete History (London: I.B. Tauris, 2011), 524:

12- *BOA.DH.SFR., 52/266, ներքին գործերու նախարար Թալէաթի գաղտնագրուած հեռագիրը Քասթամոնուլի նահանգ, 8 մայիս, 1915:*

13- *BOA.DH.SFR., 54-A/183, ներքին գործերու նախարար Թալէաթի գաղտնագրուած հեռագիրը Քասթամոնուլի նահանգ, 29 յուլիս 1915:*

14- *Yusuf Sarinay, «What Happened on April 24, 1915», 97:*

15- *Grigoris Balakian, Armenian Golgotha (New York: Alfred A. Knoph, 2009), 301-304:*

ՀԱՅ «ՆԵՄԵՍԻՍ»-Ն ՈՒ ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆԸ

Յայ ժողովուրդի հերոսական ծնունդներու անմոռանալի փառանգին մէջ յաճախ կը հանդիպինք յանձնառու առաքելութիւններ ստանցնող անձնուրացներու. ճառագայթող անուններու:

Այս յօդուածով լոյս աշխարհ կը բերենք վերոնշեալ փառանգին մաս կազմող առասպելական անձ մը, որ իր կեանքը ամբողջութեամբ նուիրաբերեց իր ազգին:

Արժանի գնահատական ու համընդհանուր ճանաչում ստանալու համար թուղթին կը յանձնենք անոր խիստ կարեւոր ու անփոխարինելի դերը, նաեւ անհատալի հնարագիտութիւնը, իբրեւ ընդատակեայ աշխատանքներու կազմակերպիչ, վիթխարի հետախոյզ, իրազեկող գործիչ ու պատասխանատու:


Անձնուէր մը, որուն անունը գլխատառերով գրուած են Հայոց եւ Սուրիոյ արաբական հանրապետութեան ժամանակակից պատմութեան մէջ:

Անհատ մը, որ երկար ծառայութիւն ունեցաւ ազգին, կուսակցութեան՝ Հայ յեղափոխական դաշնակցութեան ճամբով: Իր ամբողջ կեանքի տեւողութեան գիտակցաբար խուսափեցաւ իր մասին խօսիլ տալէ:

Շրջահայեաց, գաղտնապահ, սակաւախօս, համեստ ղեկավարի բոլոր յատկութիւններու տէր անձ մը:

ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆ:

Բնականաբար ամէն անհատ իր անունով



կը ճանչցուի եւ իր անունով կը զանազանուի եւ իր անունով կը ստանայ իր ինքնութիւնը: Եւ ուրեմն մարդկային կեանքին ու մանաւանդ ընկերային-հասարակական կեանքին մէջ անունը որոշիչ, կարեւոր դեր մը կը խաղայ: Ինքնութիւնը անունով կը կազմուի, անունով արժէք կը ստանայ եւ ընկերութեան մէջ անո՛ւնով կ'արտայայտուի: Ուստի Հրաչ Փափագեան, նուիրական արժէք ներկայացնող իր ինքնութիւնը հերոսական գործի ծածկանունով դրոշմուեցաւ ու ճանչցուեցաւ:

Մեր երեց ընկերներէն ու անմիջական պարագաներէն յաճախ լսած ենք անոր մասին: Բոլորն ալ կը պատմէին անոր, ազնուական ըլլալուն մասին թէ՛ արտաքնապէս իր նիստ ու կացով ու արտայայտութեամբ, թէ՛ իր հոգիով: Կը նկարագրէին անոր պատկառելի դէմքը, իր սրճագոյն ամերիկեան գլխարկին տակ՝ այնքան խորհրդաւոր ու հմայող... Մեհմեթ Ալին: Կը խօսէին կուռքի մը նման, բայց ոչ իբրեւ կուռք, անոր երկարամեայ յեղափոխական ու քաղաքական գործունեութեան մասին, զոր իր մահէն ետք նոյնիսկ, դաստիարակող անձնուիրութիւն եղած է մեզի:

Իսկական անունը՝ Կարապետ-Կարպիս, Հրաչ Փափագեան ծնած է Եոզկատ, 19 յունիս 1892 թուականին:

Եօթը տարեկանին կը փոխադրուի Սեբաստիա, ուր հինգ տարի մնալէ ետք, 1904 թուականին կը ղրկուի Կ. Պոլիս իր ազգա-

կաններուն մօտ. հոն կը ստանայ իր կրթութիւնը՝ աւարտելով Կ. Պոլսոյ համալսարանի իրաւաբանական բաժանմունքը:

1910 թուականին կը մտնէ Հայ յեղափոխական դաշնակցութեան կուսակցութեան շարքերը:

Ա. Աշխարհամարտի անմիջական վաղորդայնին, երբ ՀՀ Դաշնակցութեան ուշադրութիւնը կեդրոնացած էր Պոլիսէն փախստական կամ Պոլիս պահուըտած եղեռնագործներուն հետքերը գտնելու եւ զանոնք պատժելու անհրաժեշտութեան վրայ, կը փնտռուէին նուիրեալներ, որոնց պիտի վստահուէին այդ հետապնդումները եւ անոնց յաջորդելիք ահաբեկումները: Ուրիշներու կարգին, Հրաչ Փափագեան եւս կ'ըլլայ ընտրեալներէն մէկը:

Պատերազմի հռչակումէն ետք կը դրկուի գինուորական վարժարան՝ պահեստի սպայ դառնալու համար: Հազիւ սպայի աստիճանը ստացած՝ կը փախչի եւ կը պահուըտի Նախ՝ Պոլիս եւ ապա, պատերազմի վերջին տարին, թուրք սպայի մը ինքնութեան թուղթով կը յաջողի հասնիլ Հալէպ եւ դարձեալ կորսնցնել իր հետքը: Չինադադարին Հալէպ է եւ 1919 թուականին կը վերադառնայ Պոլիս: Աջքերով կը տեսնէ Մեծ եղեռնը եւ սիրտը կը լեցուի արդարահատուցման տենչով:

Այսպէ՛ս. սեպտեմբեր 1919 թուականին, Երեւանի մէջ գումարուած ՀՀԴ 9-րդ Ընդհանուր Ժողովին, տրուեցաւ որոշումը ցեղասպանութեան պատասխանատուներու մահապատիժին: Այս գործողութիւններուն տրուեցաւ «Յատուկ գործ» եւ «Նեմեսիս» անունը:

Արմէն Գարոյի եւ Շահան Նաթալիի գլխաւորութեամբ կազմուեցաւ յատուկ Մարմին՝ ծրագրելու, կազմակերպելու եւ գործադրելու համար ՀՀ Դաշնակցութեան որոշումը: Եւ կեանք առաւ հայ ժողովուրդի դէմ թրջական պետութեան գործադրած ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատուները պատուհասող «Նեմեսիս» գործողութիւնը:

Հրաչ Փափագեանի, իր առաջարկով իսկ, իրեն կը վստահուի ամենէն պատասխանատու աշխատանքներէն մէկը, Պերլինի մէջ:

Թալէթի ահաբեկումէն ետք անցած էր շուրջ վեց ամիս: Պերլինի մէջ, ուր խմբուած էր շարդարներու խումբը, անկարելի կը դառնար գտնել հետքը տողթ. Պեհաետտին Շաքիրին:

Պերլին գտնուող հայ հետախոյզները կրցած էին երեւան հասնել հետքը Տրապիզոնի հայերու ջարդարար կուսակալ Ճեմալ Ազմիին, որ ծխախոտի խանութ մը բացած էր: Կրցած էին գտնել նաեւ հետքերը Պոլսոյ ոստիկանութեան տնօրէն եւ ապա Պէյրութի կուսակալ Ազմիին եւ նաեւ ուրիշներու, բայց տակաւին անյայտ կը մնար Պեհաետտինի թաքստոցը: Յապաղումը կրնար ձախողեցնել անոր դէմ արձակուած մահաւճիռին գործադրութիւնը, որովհետեւ մէկ օրէն միւսը ան կրնար հեռանալ Պերլինէն: Ասկէ զատ, կարելոր էր բուն իսկ ոճրագործներուն շրջապատէն իմանալ անոնց մշակած ծրագիրները եւ տեղեկանալ անոնց շարժումներուն մասին, որպէսզի ըստ այնմ ձեռք առնուէին անհրաժեշտ միջոցները:

Եւ Հրաչն է, որ կ'առաջարկէ Պոլսոյ պատասխանատու մարմինին. թուրքի ծպտումով երթալ Պերլին եւ հոն ստեղծել ջարդարարներու շրջանակին մօտենալու եւ անոնց հետ մտերմանալու պատեհութիւնը: Լաւ թրջագետ եւ թրջախօս, մօտէն ծանօթ թրջական բարքերուն եւ կրօնական սովորութիւններուն, այդ պատճառով ալ նոյնիսկ թլփատուած: Մեծապէս պաղարիւն եւ շրջահայեաց, ան կը ցուցաբերէ առաջադրուած գործը լաւագոյն արդիւնքով գլուխ հանելու ինքնավստահութիւնը: Առաջարկը կ'ընդունուի:

Հրաչ Պոլիսէն կը մեկնի Պերլին, կը վերածուի «թուրք» Մեհմեթ Ալիի եւ թուրք ջարդարարներու շրջանակը թափանցելով իր մեծ ներդրումը կ'ունենայ Պեհաետտին Շաքիրի եւ Ճեմալ Ազմիի ահաբեկման: Փաստօրէն ան հող պատրաստեց այս վրիժառութեան: Հետեւաբար, Մեհմեթ Ալի (Հրաչ Փափագեան) յաջողութեամբ ներթափանցած էր Իթթիհատ վէ Թերաքքիի շարքերը եւ զանոնք յայտնաբերած իրենց թաքստոցներէն:

Հետագօտական մեր աշխատութեամբ, ինչպէս նաեւ անմիջական բանաւոր պատմութեամբ ու յիշողութեան տեղեկութեամբ, չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք, որ Հրաչ Փափագեանի ձեռքին մէջ եղած է միշտ նեմեսիսեան բազմաքայլ գործողութիւններու գլխաւոր բանալին:

Ահա թէ ի՞նչ կը գրէ Արշաւիր Շիրակեան անոր մասին. «Վայելչակազմ ու կենցաղա-

գետ, սալոնի տղայ, որուն հոգիին խորը սակայն ցեղին վրեժխնդրութեան կրակը կը վառէր: Իրաւաբանական ուսանող Կարպիս Փափագեան, կամ մեր ընկերական շրջանակներուն մեջ ծանօթ՝ Զրաչ ծածկանունով, որ բուն անունն էր մեր Մեծ Նահատակներէն մէկուն, ընդունած էր Մեհմեթ Ալի թրքական անունը եւ ան ալ անբաւարար նկատելով, թլփատւած էր, որպէսզի մեր ճամբան ապահով կերպով յարդարէ:

«Մեզմէ երկու ամիս առաջ հասած էր Պերլին եւ յաջողած էր մտերմանալ ճեմալ Ազմիի տղուն Էքմելին հետ եւ դառնալ անոր գուարճութեան ընկերը, տան փնտռուած բարեկամը կամ հիւրը, որուն ներկայութեան ամէն ինչ կարելի էր խօսիլ: Ներկայացած անոնց իբրեւ կեսարացի մեծահարուստի մը գաւակ եւ սիրելի դարձած էր այդ գազանի որջը այցելող շարք մը բարձրաստիճան թուրքերուն, որոնք հոն հաստատուած էին կամ կու գային կ'անցնէին, ինչպէս նաեւ սիրելին՝ հանրմներուն: «Մեհմեթ Ալի»-ն քանիցս «քավալիէ» եղած էր նոյնիսկ Թալէաթ փաշային այրիին:

«Արտաքնապէս անխռով, սրտին քար դրած, օրերով մտիկ կ'ըներ ջարդարարներուն անմարդկային պատմութիւններուն, հայկական կոտորածի անլուր դէպքերուն եւ գազանավայել մանրամասնութիւններուն: Օր մը, դահլիճին մէջ, այդ անխիղճ հանրմներն ու գազան պէյ ու էֆենտիները հաճոյքով ու ծիծաղներ արձակելով կը պատմեն, թէ ինչպէս ճեմալ Ազմիին հպարտութեամբ իրենց հաղորդած է սա աներեւակայելի հրեշուծիւնը:

«Տրապիզոնի հայերուն երկսեռ առողջ ու սիրուն մանուկները զատեցի, մէկ քանին, 10-13 տարեկան, նուէր տուի տղուս, իսկ միւսներն ալ կողովներու եւ սնտուկներու մէջ տեղաւորել տալով ծովը թափել տուի:

«Պու սենէ խամսի չօղալըն», աւելցուցած էր ճիւղաղը ծիծաղելով:

«Զրաչը կամ Մեհմեթ Ալին այդ ամէնը կը լսէր անխռով արտաքնապէս, այլ ներքնապէս չարչարուելով ու տանջուելով: Ջիղերը քայքայուած էին, ինչպէս կը զգայի ու կը տեսնէի, ամէն հանդիպումիս:

«Տարիներ անցած են այդ ահաւոր օրերուն վրայէն: Երբեմն կ'անդրադառնամ, որ

առանց «Մեհմեթ Ալի»-ի կամաւոր զոհողութեան, հաւանաբար հրեշները չգտնէինք եւ անոնք ազատէին մեր վրիժառու գնդակներէն, ինչպէս ազատեցան շարք մը արիւնարբու իթթիհատականներ՝ Նազըմը, Մուսամմերը, եւ այլն»:

Զրաչ 1922-ին կը հեռանայ Պոլիսէն եւ կ'անցնի Յունաստան, ուր կը զբաղի ազգային, քաղաքական եւ կուսակցական աշխատանքներով:

Ընդմիջումներով կը մնայ Աթէնք եւ Սելանիկ, մինչեւ 1926-ի վերջերը եւ ապա կուսակցական գործով կը հաստատուի Զալէպ:

Շրջան մը, Յակոբ Սիմոնիի (Տասնապետեան) հետ, ան կը զբաղի Տերսիմի քրտական ապստամբութեամբ, նկատի առնելով, որ այդ շարժումը ուղղուած էր թուրքին դէմ:

Սուրիոյ՝ Զալէպի մէջ Զրաչ Փափագեան կ'ապրի ամբողջ երեսնամեակ մը եւ կ'ունենայ պատկառելի գործունեութիւն մը՝ քաղաքական, ազգային, կուսակցական եւ հասարակական բոլոր ճակատներուն վրայ:

Անոր խօսքը կշիռ ուներ ըլլա՛յ սուրիական դիւանագիտական-քաղաքական աշխարհին մէջ, ըլլա՛յ նաեւ Ազգային Իշխանութեան մէջ, Գաւառական, Քաղաքական (Ազգային վարչութիւն), եւ Ազգ. Ընդհանուր Ժողովներուն մէջ, Զալէպէն մինչեւ Պէյրութ եւ Անթիլիաս:

Զալէպի մէջ մեծ ներդրում կ'ունենայ ազգային կեանքի անկիւնադարձային շատ մը ծրագիրներուն: 1930 թուականին, ան մեծ դեր կ'ունենայ Զալէպի Զամազգայինի հիմնադրութեան մէջ:

1932 եւ 1943 թուականներուն ան կ'ընտրուի երեսփոխան սուրիական խորհրդարանին, Զալէպի շրջանին կողմէ: Ան միշտ սերտ կապեր ունեցած է սուրիական պետական վերնախաւին հետ, գործակիցն էր Սուրիոյ հանրապետութեան օրուան նախագահ Շուքրի Քուաթլիին: Անոր խօսքը կշիռ ուներ սուրիացի արաբին մօտ եւ սերտ գործակից մըն էր Ազգային կուսակցութեան (Զըթլէթ կամ Զըզպալ-Ուաթանի): Այս պատճառով ալ գլխուն միշտ կը կրէր արաբական ֆէսը:

Վստահելի ու յարգուած դէմք մը Սուրիոյ պետական ու քաղաքական շրջանակներէն ներս: Փափագեան, Սուրիոյ Խորհրդարանի սահմանադրական երդիքին տակ արժանա-

ւորապէս ներկայացնելով հայ համայնքը, լուռ ու անաղմուկ պաշտպանած է հայոց շահերը: Միւս կողմէ, իւրայատուկ կշիռ ունեցաւ իր դատողութիւնն ու խօսքը սուրիացի ժողովուրդին մղած ազատագրական պայքարներու ժամանակաշրջանին մասնաւորաբար:

Այդ պատճառով ալ սուրիացի արաբ մեծ ղեկավար մը՝ իր մասին առիթով մը խոստովանած էր. «Առանց Յրաչին կարծիքները առնելու, երկրին համար կենսական կարեւորութիւն ներկայացնող որեւէ որոշում չենք տար»:

Յրաչ ամենէն մօտիկ գործակիցը կ'ըլլայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Չարեհ Ա.-ին, երբ ան Բերիոյ թեմի առաջնորդ էր:

Յրաչ Փափագեան մեծ դեր կ'ունենայ «Քարէն Եփփէ» Ազգային Ճեմարանի հիմնադրութեան մէջ 1947 թուականին, երկար ժամանակ նաեւ մասնակցելով անոր ինամակալութեան: Սրտին շատ մօտիկ այս հաստատութեան ամենօրեայ այցելուն էր: Ճեմարանի ետեւի ծաղկաստանին առաջին ծաղիկները, իր ձեռքերով տնկուած են, Յետեւաբար, ան մեծ գուրգուրանքով կը ինամէր այդ ծաղիկները:

Յրաչ Փափագեան հիմնադիրն ու արտօնատերն էր նաեւ Յալէպի մէջ լոյս տեսնող «Արեւելք» օրաթերթին, շրջան մը վարելով նաեւ թերթի տնօրէնի պաշտօնը: «Արեւելք» օրաթերթի անունի կողքին փոքր քառակուսիի մէջ կը կարդանք. «Արտօնատեր եւ պատասխանատու տնօրէն Յրաչ Փափագեան»:

Տպարան «Արեւելք»-ը իբրեւ շէնք, ուր որ ալ փոխադրուած է անոր վարչական գրասենեակներէն մէկուն պատին վրայ անպայման մեծ տեղ կը գրաւէ Յրաչ Փափագեանի իւղանկար պատկերը, որ մինչեւ օրս կը յուշէ այդ հաստատութեան իր ներկայութիւնն ու հովանաւորութիւնը:

Ան, ըլլալով մարգասեր, մեծ եղած է կապաւածութիւնը ՅՍԸՄ-ի հետ, միշտ ներկայ եղած է ՅՍԸՄ-ի միջմասնաճիւղային հանդիպումներուն, միջազգային ֆութպոլի մրցումներուն: 1958-ին, Գահիրէի մէջ նոյնիսկ, ներկայ եղած է ՅՍԸՄ-ի Յալէպի մասնաճիւղի ֆութպոլի խումբի մրցումներուն:

Յրաչ Փափագեան յաճախ այցելած է Լի-

բանան, Եգիպտոս, Իրան, Իրաք, Եւրոպա եւ այլն, գլխաւորաբար կուսակցական գործերով: 1947-1959 կ'անդամակցի ՅՅ Դաշնակցութեան Բիւրոյին. ան մասնակցած է կուսակցութեան գրեթէ բոլոր ընդհանուր ժողովներուն՝ 1923-1959:

Յալէպի մէջ Թիլէլի ՅՍԸՄ-ի ակումբը, որ քանի մը տասնեակ տարիներ յետոյ յանձնուեցաւ ՅԵՄ-ի. 1988-1989, յատկապէս սրահը հիմնովին վերանորոգուելէ ետք վերանանուած է ազգային-հասարակական գործիչ, ՅՅԴ-ի անդամ, Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխան Յրաչ Փափագեանի անունով:

Յրաչ Փափագեան կամքէ անկախ պատճառներով Պէյրութ կը փոխադրուի 1957-ին, երբ անողոք հիւանդութիւնը սկսած էր արդէն գործել իր աւերը: Իր կեանքին վերջին ամիսները ծանր տառապանք մը կ'ըլլան իրեն համար: Այդ տառապանքով ալ ան աչքերը կը փակէ 16 օգոստոս 1960 թուականին, Լիբանանի այդ օրերուն հայաբնակ ամարանոցներէն՝ Շթորայի մէջ:

19 օգոստոսին ազգային յուղարկաւորութիւն կը կատարուի, նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Չարեհ Ա. վեհափառին, որ այդ առիթով կ'արտասանէ յուզիչ դամբանական մը.- «Ծանր պարտականութիւն է ինծի համար, այս եկեղեցիին մէջ, խօսիլ դամբանականը մէկու մը, որ իր ամբողջ կեանքին տեւողութեան գիտակցաբար խուսափեցաւ իր մասին խօսիլ տալէ: Ծանր պարտականութիւն, որովհետեւ հանգուցեալ Փափագեանը եղաւ այնպիսի մեծութիւն մը մեր ազգին մէջ, որ իր մասին գաղափար յայտնելը, կը վախճամ, կարելի չըլլայ եւ պակսեցնէ իր բնական արժանիքները», այսպէս կը սկսէր իր դամբանականը երջանկայիշատակ Չարեհ Ա. վեհափառը Յրաչ Փափագեանի դագաղին առջեւ, Ս. Նշան եկեղեցւոյ մէջ:

Իսկ մտաւորական, ազգային գործիչ Կարօ Գեորգեան, իր դամբանականին մէջ հետեւեալ տողերը պիտի արասանէր. «Ազգային գործիչի եւ քաղաքական մարդու իր բոլոր ընդունակութիւնները ի սպաս դրաւ ան հոն եւ տասնամեակներով գործեց ժողովուրդի ծոցին մէջ, ժողովուրդին համար, թէ՛ իբրեւ ներկայացուցիչը իր պատկանած կուսակցու-

թեան, թէ՛ իբրեւ ազգային մարմիններու ժողովական եւ թէ՛ իբրեւ պարզ անհատ մը, իբրեւ Հրաչ Փափազեան: Սիրուեցաւ եւ յարգուեցաւ ոչ միայն ազգային շրջանակներէ, այլ Սուրիոյ ղեկավարութենէն»:

Եռագոյնով ծածկուած դագաղը Պէյրութի Ֆրըն Շըպպեքի Ազգային գերեզմանատան մէջ կը յանձնուի հողին: Տարիներ ետք, 27 մայիս 2012-ին, անշուք պատի մը տակ գտնուող Հրաչ Փափազեանի քարուքանդ շիրիմը փոխարինուեցաւ պատշաճ դամբարանով մը:

Հրաչի մահուան գոյժը բնականաբար ցնցած էր ազգային, կուսակցական եւ սուրիական պետական ասպանին: Անոր մահուան յաջորդող օրերուն բազմաթիւ գործիչներ, արաբական եւ հայկական թերթեր մեծ բաժին տուին անոր մասին:

Այսպէս, օրինակ 1960 թուականի օգոստոսին, Հալէպ լոյս տեսնող, ազգայնական հակում ունեցող «Ալ-Սանապել» արաբատառ շաբաթաթերթը, Հրաչ Փափազեանի մահուան մասին հետեւեալը գրած էր. «... Ան մասնակցած էր սուրիական Ազգային բոլոր գործերուն երկու մեծ ղեկավարներ՝ Իպրահիմ Հանանոյի եւ Սաատալլա ժապրիի կողքին: Հրաչ Փափազեան եղաւ սուրիական խորհրդարանի մէջ, արաբ ժողովուրդի Ազգային ազատագրական դատին համար նուիրեալ պայքարող մը, արաբ մեծ ղեկավարներու կողքին»:

Իսկ Շաւարշ Միսաքեան «Յառաջ»-ի (1960 թուականին) մէջ կը գրէր. «...Հրաչ Փափազեան չէր սիրեր իր մասին խօսիլ: Իր բերնէն չէ որ պիտի լսէինք այն պատասխանատու պաշտօնները, զորս ստանձնած էր յաջողութեամբ գլուխ հանած: Ինք չէ որ պիտի պատմէր այն դերը, զոր խաղացած է ճեմալ Ազմիի եւ Պեհաւետին Շաքիրի ահաբեկումներուն մէջ»:

Հրաչ Փափազեանի պետական գործընկերներէն եւ սուրիական խորհրդարանի պատգամաւոր, ինչպէս նաեւ Սուրիոյ նախարար եղած բժիշկ Ապտիլ Ռահման Բէյեալի, անոր մահուան առթիւ այսպէս արտայայտուած է. «Հրաչ Փափազեանի մահով ոչ միայն հայ ժողովուրդը, այլ Սուրիան ու ամբողջ արաբ աշխարհը կորսնցուց մեծ ղեկավար

դէմը մը: Անանձնական էր Հրաչը, ուշիմ հեռատես, գործունեայ եւ ուղղամիտ, մենք զինքը ճանչցանք 1943-ին, Սուրիական խորհրդարանին մէջ եւ անոր մէջ տեսանք ղեկավար մը բարձր արժէքներով օժտուած, որ անհուն նուիրումով փառած էր հայրենիքի ազատագրութեան եւ վերելքին»:

Միւս կողմէ, բժիշկ Յարութիւն Տէր Ղազարեան 24 սեպտեմբեր 1960-ին, Հալէպի մէջ լոյս տեսած «Արեւելք»-ին մէջ, Հրաչ Փափազեանի բնաւորութեան մասին այսպէս կ'արտայայտուէր. «Հրաչը փայլուն դիւանագետ, քաղաքական հասունութեան տէր, ազնիւ, բարեհամբոյր հանրային գործիչ մը եղաւ»:

Օրին, Արաբ Միացեալ Հանրապետութեան դատական կեդրոնական նախարար Ֆախեր Բէյեալի իր կարգին ըսած է. «... Հրաչ Փափազեան, առաքինութիւններով օժտուած մեծ ղեկավար մըն էր»:

Իսկ Աթէնքի մէջ լոյս տեսնող «Ազատ օր»-ի (1960) մէջ Վազգէն Եսայեան կը գրէր. «Ո՞վ կրնար մտածել, որ եւրոպացի ազնուականի տիպարով այս մարդը մէկն էր անոնցմէ, որոնք 15 մարտ 1921, Պերլինի սալայատակներուն վրայ հայակեր հրէշը դիտապաստ ընող Թեհլիրեանի մատը դրին Սուրբ ատըր-ճանակի բլթակին վրայ...»:

Բանաստեղծ, հասարակական գործիչ Մուշեղ Իշխան Հրաչ Փափազեանի մասին կը հաստատէ. «Ո՞ւր էր գաղտնիքը իր հեղինակութեան, իր ուժին եւ իր յաջողութեան: Ինչպէ՞ս բացատրել այն իրողութիւնը, որ ընկ. Հրաչ առաւելաբար դժուարին կացութիւններու մէջ ապահովելի ճամբայ գտնող առաջնորդը եղաւ, «դժուարութեանց մարդը», ինչպէս կը կոչէին զինք: Իր ո՞ր յատկութեան շնորհիւ անոր անձը վստահութիւն ներշնչեց միշտ շրջապատին, նոյնիսկ իր գաղափարական հակառակորդներուն:

«Գաղտնիքը պէտք է փնտռել ընկեր Հրաչի բացառիկ խառնուածքին մէջ: Զիչ անգամ մարդու մը անձը այդքան գեղեցկօրէն իրարու կը միացնէ մտքի, սրտի եւ կամքի հաւասարագոր արժէքներ, ստեղծելու համար նկարագիրի այն հազուագիւտ ներդաշնակութիւնը, որ մեծ մարդու տիպարը կը յատկանշէ: Բոլոր անոնք որ քիչ թէ շատ մօտէն ճանչցած են զինք, պիտի վկայեն անպայման որ

հաւասարակշռութեան մարմնացումն իսկ էր ընկ. Յրաչ Փափազեան: Որքան սառնարիւն դատողութեան մարդ, նոյնքան նուրբ եւ խորունկ զգացումներու տէր, ան գիտցաւ, ամբողջ կեանքի ընթացքին, ըլլալ հեռատես, վճռական, ուժեղ, բայց նոյն ատեն գերազանցօրէն մարդկային, պարկեշտ ու շիտակ»:

Վերջապէս, Յրաչ Փափազեանի անունը անքակտելի կերպով եւ ոսկեայ տառերով գրուած ու ամուր կապուած կը մնայ երկու կարելոր բնագաւառներու մէջ, մէկը յեղափոխական՝ 1920-ական թուականներու, Յայոց ցեղասպանութեան պատասխանատու թրքական պետութեան ներկայացուցիչները պատուհասող դաշնակցական արդարագործներու «Նեմեսիս»-ի գործունեութեան իբրեւ գլխաւոր կազմակերպիչներէն մէկը: Քաջ գիտակցելով կը հաստատենք, որ առանց իրեն՝ այդ ահաբեկումները հաւանաբար գլուխ կրնային չելլել:

Իսկ երկրորդը՝ դիւանագիտական-քաղաքական. երկու շրջան ընտրուած երեսփոխան սուրիական խորհրդարանին: Քաղաքագետ, ճկուն ու հեռատես իւրայատուկ այս դէմքը, իր առաքելութեան ընթացքին ամբողջական գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ գործեց:

Անոր եութեան մէջ գոյութիւն ունէր երեք հիմնական յատկանիշներ՝ արդարադատ մարդը, ազգանուէր հայը եւ գաղափարապաշտ կուսակցականը:

Իբրեւ սուրիացի ազգային գործիչ, Յրաչ Փափազեանի գործունեութիւնը, Սուրիական հանրապետութեան քաղաքական, հասարակական կեանքին մէջ, անոր շահած փորձառութիւնը, ինչպէս նաեւ բարձր արժանիքները եւ անոր դիւանագիտական իմաստութիւնն ու խելքը անկասկած երաշխիք մըն էին փայլուն ու հռչակաւոր դառնալու Սուրիոյ պետական վերնախաւին մօտ: Այդ իսկ պատճառով անոր վարկը նոյնիսկ իր մահուընէ ետք, բաւարար եղաւ, որ դիւրութիւն ընծայէ շատ մը կարելոր իրագործումներու գործընթացի մէջ: Այստեղ, բաւական է նշել միայն մէկ օրինակ. 1967-ին, Սուրիոյ կառավարութեան կողմէ հրապարակուեցաւ հրամանագիր մը, որով բոլոր մասնաւոր վարժարաններու տնօրէնները պիտի նշանակուէին Կրթական նախա-

րարութեան կողմէ ու անոնք պիտի հսկէին պետական կրթական ծրագրի լրիւ գործադրութեան: Նոյն հրամանագրով ամբողջովին կ'արգիլուէր հայերէնի դասաւանդութիւնը:

Սուրիոյ հայկական վարժարաններու դիմագրաւած տագնապի առնչութեամբ Բերիոյ Յայոց Թեմի օրուան Ազգային իշխանութիւնը զօրաշարժի ենթարկեց ազգային ու պետական գործիչները, ազգային սրբութեան պահպանման՝ հայերէն դասաւանդութեան պահերու վերատիրանալու համար: Այդ կարելոր աշխատանքը օրին վստահուած էր պետական երեսփոխան մէթր Գրիգոր Էպիղաթեանի, որ ոգի ի բռին պայքարեցաւ հայապահպանման արմատական հիմք ծառայող հայերէնի դասաւանդութեան պահերու վերատիրացումին:

Այդ գործընթացի մէջ, կարելոր հանդիպումի մը ընթացքին օրուան սպայակոյտի պետ զօր. Մուսթաֆա Թլասի եւ յատկապէս վերջինի տիկնոջ՝ Լեմիա Ալ-ժապիրիի շեշտակի հարցումը. «Դուն հանգուցեալ Յրաչ պէյի կողմնակիցներէ՞ն ես, թէ իր հակառակորդներէն» ու մէթր Էպիղաթեանի դրական պատասխանէն ետք, տիկին Ալ-ժապիրի զօրավարին ըսած է. «Մուսթաֆա, ասոնք իրական **ուաթանիներ** են (ազգայնական) եւ պետք է իրենց օգնես»: Անշուշտ արդիւնքին, քաջածանօթ ենք, եղած է բաւական դրական ու արդիւնաւետ, հայկական վարժարաններէն ներս հայերէն դասապահերը վերականգնած են: Անկասկած շնորհիւ մէթր Էպիղաթեանի իրաւաբանի հմտութիւններուն, սակայն Յրաչ պէյ Փափազեանի, յետմահու շարունակուող վաստակի միջնորդութեան: Վերոնշեալ դէպքին մէջ սուրիական պետական գործիչ Փափազեանի անուան յիշատակումը բաւարար էր ոչ թէ արագընթաց ուժ տար ապահովուելու ճշդուած հայերէն քանի մը դասապահերը, այլ ձեռք ձգելու քանի մը պահ ալ աւելին:

Ահաւասիկ երեսփոխան Յրաչ Փափազեանի տեսակի զօրութիւնը, իւրայատկութիւնը:

Ընկեր Յրաչ իր ամբողջ կեանքի ընթացքին գործեց միայն հաւատարմօրէն, եղաւ ուղղամիտ, անկաշառ, հանրային պարկեշտ գործիչ եւ ճշմարիտ հայրենասէր: Իր գործերուն մասին երբեք արտայայտուիլ չսիրող, ուրիշներու կողմէ իր ներկայութեան իր մասին եղած

գովեստները մերժող, յոգնիլ չգիտցող, գործի մարդու առաքիլություններով օժտուած յեղափոխական գործիչն էր Յրաչ Փափագեան: Աննախընթաց դեմք մը մեր յեղափոխական պատմութեան մէջ:

Ան, երկար տարիներ նախանձախնդրօրէն եւ անձնուիրաբար իր բաժինը բերաւ սուրիական օրինեալ հայրենիքի հողային ամբողջականութեան, ազատութեան, խաղաղութեան, ապահովութեան, եւ զարգացման ու բարգաւաճման առաքելութեան:

Յրաչ Փափագեան, պատկառազրու անուն մը, որ ոչ թէ սուրիահայ կեանքին մէջ միայն ուրոյն իր տեղ ունի, այլ ժամանակակից Յայոց պատմութեան մէջ քանդակուած է, հպարտութեան, գօտեպնդիչ եւ դաստիարակիչ իր բաժինը ունի: Այդ պատճառով ալ շատեր, յատկապէս անմիջական կապ ունեցողներ, անոր հանդէպ իրենց տաճած սերէն ու անհուն համակրանքէն, Յրաչ անունը տուած էին իրենց զակին: Մէկ կողմէ յաւերժացնելու հերոսի անունը, իսկ միւս կողմէ կը հաւատային որ այդ անունով նաեւ պիտի ձեւաւորէ մանուկին ինքնութիւնը եւ նկարագիրը, մեծ մասամբ: Քանի որ անունը կրողին վրայ ազդեցութիւն կը գործէ եւ անոր նկարագրի կազմաւորման նկատմամբ դեր կը խաղայ:

Քաղաքական, ազգային եւ կուսակցական իրատեսութեամբ երբ վերլուծենք Յրաչ Փափագեան անունը մեր մօտ պիտի յառաջանայ անկորնչելի բարոյական հարստութիւն մը, զոր ժառանք թողած է մեզի, որուն արժէքը կը շօշափենք մինչեւ օրս:

Վերջապէս պէտք է արձանագրել, որ Յրաչ Փափագեան եղաւ ազգային-կուսակցական գաղափարախօսութեան կարեւորագոյն հիմնադրոյթը մարմնաւորող ղեկավարը: Անոր լայնածաւալ ու լայնածիր հասարակական գործունեութիւնը յատկանշուած է պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, օրէնսգիտական եւ իրաւագիտական մասնագիտութեամբ զինուած հաւասարակշռութեան եւ իրաւախոհական տրամաբանութեան լրջախոհ մօտեցումներով, որուն համար արժանացաւ ազգային եւ պետական շրջանակներու բարձր գնահատանքին:

Յրաչ Փափագեանի ազգային-կուսակցական, հասարակական, քաղաքական գործու-

«ՆԵՄԵՍԻՍ» ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆ

**Խօսք՝ Աւօ Գաթրճեանի
Երաժշտ.՝ Չարեհ Բէշիշեանի**

**Յետախոյզ ու կազմակերպիչ,
Պատասխանատու վեհ գործիչ,
Արտաքնապէս անխռով միշտ,
Անշէշ վրեժը սրտիդ վիշտ:**

Կրկներգ.-

**Պայծառ արեւ անկրկնելի,
Անզուգական «Մեհմէթ Ալի»,
Կայծը մէկ ու կէս միլիոնի,
Դարձար հաւատքը մեր ցեղի:
Մեծ Եղեռնի դահիճներուն,
Ճարտար սարսափն էիր թաքուն,
Լուսաւոր փարոս մարտական,
«Նեմեսիս»՝ Յրաչ Փափագեան:**

**Քալեցիր հաստատ քայլերով,
Յաւերժ ու պայծառ ուղիով,
Երեսփոխան Դաշնակցական,
Պարծանքն ես ամբողջ հայութեան:**

Կրկներգ.-

Պայծառ արեւ անկրկնելի...

15 յունիս 2002

նեութեան մասին կարելի է երկար գրել ու խօսիլ, սակայն հոս վերապահ մնալով զանց կ'առնենք անոր հետ առնչութիւն ունեցող բազմաթիւ իրադարձութիւններ, դէպքեր ու որոշումներ:

Յրաչ Փափագեան, զմայլելի, անայլայլ անձնուիրութեամբ մը եւ երկարամեայ կուսակցական ու քաղաքական գործունեութեամբ՝ մէկ խօսքով իր ամբողջական եութեամբ. այս բոլորին, իբրեւ միաձուլուած անկրկնելի կերպարը՝ ներշնչման աղբիւր կը շարունակէ մնալ Յայ դատի պայքարին եւ պետական-քաղաքական գործունեութեան զինուորագրուած հայոց սերունդներուն:

ԱՌՕ ԳԱԹՐՃԵԱՆ

ԹՈՒՐԲ ԵՒ ԳԵՐՄԱՆ ՎԵՐՆԱԽԱՒԸ՝ ՀԱՅՈՑ ԴԱՀԻՃ ՈՒ ՎԵՐԱՑՆՈՂ

Իրեն հայ ազգի դահիճները՝ թուրք փաշաներու եւ գերմանացի արկածախնդիր քաղաքական ու «մտաւորական մեծամեծներ»-ու մասին Յայնրիխ Ֆիրպիլսեր իր հեղինակած՝ «Հայաստանը 1915-ին, թէ ինչ է թաքցրել կայսերական կառավարութիւնը գերմանահպատակներից, հին մշակոյթ ունեցող ժողովրդի կոտորածը թուրքերի կողմից» խորագրեալ գիրքին մէջ լոյս տեսած՝ Պերլին 1930-ին: Գերմաներէնէ հայերէնի թարգմանած է Յունան Ղուկասեան, Երեւանի Պետական համալսարանի հրատ., 2000, 112 էջ), մանրամասնօրէն կ'անդրադառնայ այդ նիւթին առանձին գլուխով մը՝ «Թուրք փաշաներն ու գերմանացի մուլագարները» խորագիրով, էջ 23-26: Սոյն աշխատանքը կը միտի ցոյց տալու հայասպանութիւն գործող թրքական եւ գերմանական վերնախաւին նկարագրի մուլագար գիծերը եւ բացայայտելու այդ ոճրագործին ու գերմանացի աշխարհակալատենչ մտաւորականին ու քաղաքագետին հոգեմտային մութ ծալքերը:

1923-1938 Մուսթաֆա Զեմալ Թուրքիոյ մէջ որոշ քաղաքական եւ ընկերային բարենորոգումներ կիրառեց, ընդ որում ան վերցուց «փաշա», «պէյ», «աղա» եւ այլն տիտղոսները թրքական ընկերային պաշտօնական եւ անպաշտօն շրջանակներէն, տեսնել համացանցային https://en.wikipedia.org/wiki/Atat%C3%BCrk%27s_Reforms կայքը: Ասոր մասին Ֆիրպիլսեր կ'ըսէ. «Անգարան այս օրերին հրաժարուեց փաշայի տիտղոսից եւ դրանով հերթական մի կտոր **ռոմանթիքա** շարտեց պատմութեան աղբադոյլի մէջ, մի կտոր արիւնաշաղախ, ահաւոր, մեզ՝ արեւմուտքիներիս համար առասպելական դարձած իշխանութեան կատարելութիւնից, որ անհատներին թոյլ էր տալիս ամէն տեսակ, թէկուզ եւ



Հայման Գիւկասեան
(1893-1939)

այնքան խելայեղ տրամադրութեան գոհացում»: Վերջին երկու բառերը՝ «տրամադրութեան գոհացում» մեզի կը յուշեն թուրք եւ քիւրտ փաշաներու, աղաներու եւ պէլերու հիւանդագին հոգեբանութեան լրիւ պատկերը իր մէջ ընդգրկելով ոճիրի, նախանձի, վախի, ձրիակերութեան եւ բռնատենչութեան գիծերը, բոլորն ալ ծագում առած անոնց մանկութեան ապրած անբաւարարուածութեան զգացում կոչուող եւ այլ հոգեբանական բարդութային ախտերէն: Այս տեսակի մարդոց ամէնէն կարկառուն դեմքերէն՝ Գերմանիոյ կայսր Վիլհելմ Բ.ը եւ Օսմանեան պետութեան սուլթան Ապտիլ Յամիտ Բ.ը, եւ այլ անձնաւորութիւններու խոհերն ու արարքները կը վկայակոչէ հեղինակը: Գերմանիոյ կայսրը զօրաւոր մղում ուներ իրեն հակառակող պատասխանատու պալատական անձերէն ոմանք գլխատել, եթէ արգելքներ գոյութիւն չունենային: Իր հիւանդագին տենչանքներուն գոհացում տալու մէջ Ապտիլ Յամիտ աւելի «բախտաւոր» եղած էր, երբ քանի մը անգամ առիթը ունեցած էր իր գլխատել տուած զոհերուն գլուխները ոտքով գլորելով զուարճանալ: Ֆրանսական յեղափոխու-

թեան մասին հակառակ անոր լսած մանրամասնութիւններուն, թէ ինչպէս իշխող դասակարգի պարագլուխները գլխատուած էին յեղափոխականներու կողմէ, տակաւին կը յանդգնէր Կ. Պոլսոյ փողոցները հայոց դիակներով լեցուած տեսելու հրաման արձակել:

Մեծամոլութենէ, անտեղի բարկութենէ, նախանձէ ու վախի զգացումներէ մղուած «Էնվեր փաշան սպաներին ապտակում էր հաւաքուած շարքային կազմի ներկայութեամբ», կ'ըսէ Զայնրիխ Ֆիրպիլիսեր: Ֆրանսացի թղթակից Լուիզ Պրիան, որ 1920-ական թուականներուն գտնուած է Մոսկուա, ուր Էնվեր ապաստան գտած էր, «Մոսկուայի հայելիներ» թերթի «Լենին եւ իր ստորականները-Էնվեր փաշա եւ մահմետականները» խորագրեալ յօդուածին մէջ Էնվերի մասին կ'ըսէ. «Մարդ մը, որ խելացի է եւ իր գործին նուիրուած, զօրաւոր անհատականութեան տէր է: Զակառակ իր բացայայտ պատեհապաշտութեան, դաժանութեան եւ անխղճութեան, ոմանք անով հրապուրուած էին: Ան չափազանց անձնասէր մարդ մըն էր»:

«Զայնական ժամանակակից ուսումնասիրութիւն» (Etudes Armeniennes Contemporaines) կայքի՝ <https://journalsopenedition.org/eac/2090> մէջ թուրք պատմաբան Սելիմ Տերինկիլ ճեմալ փաշայի եւ թուրք գրող Զալիտ Էտիպ հանրմի մասին կ'ըսէ. «Մեծ պատերազմին, որբացած հայ մանուկները իւրացրնելը Զայոց ցեղասպանութեան գործադրութեան մաս կը կազմէր: «Ամէն տեսակետով, հայերը», ինչպէս՝ Ռոնալտ Գրիգոր Սիւնի կծող ոճով կ'ըսէ, «որբացած ազգ» մը դարձան: Մասնայատուկ ուշադրութեան առարկայ է հայ որբերը իսլամացնելու եւ թրքացնելու նպատակով ճեմալ փաշայի հաստատած որբանոցը Լիբանանի Այնթուրա գիւղին մէջ: Իսլամացումի եւ թրքացումի գործընթացի իրականութիւնը կը հաստատուի Այնթուրայի որբանոցի սանուկներէն երեք հոգիի հետագայի յուշագրութիւններուն մէջ: Թուրք ազգայնական յայտնի գրող Զալիտ Էտիպ հանրմ այս ծրագիրին հիմնական գործունէայ մասնակիցներէն էր: Ճեմալ փաշայի կողմէ նշանակուած ըլլալով Սուրիոյ կրթական ընդհանուր տնօրէն, Զալիտ Էտիպ անձնապէս ներգրաւուած էր Այնթուրայի հայ որբերու իս-

լամացումի եւ թրքացումի գործին մէջ, թէեւ ինք հետագային հերքած է այս իրականութիւնը իր յուշերուն մէջ»:

Դամասկոս գտնուած միջոցին, ճեմալ փաշա փափաքեցաւ իր աթոռանիստ քաղաքը գեղեցկացնել: Ան նկատեց թէ փողոցները բաւական նեղ էին: Ուստի 1915-ի ամրան ճեմալ երկար եւ նեղ փողոցի մը բնակիչները առանց նախապէս իմացնելու, սուիներով քշել տուաւ տուններէն եւ իր զինուորներուն քանդել տուաւ շէնքերը... Ժողովուրդը բաց օդին մնաց անկարող պատսպարուելու... Ճեմալ փաշա երկար փողոցի բնակարան շէնքերը մէկ ժամէն սրբեց ու տարաւ...

Ականատես վկայ յուշագրող Զայնրիխ Ֆիրպիլիսեր կ'ըսէ. «1917 թուի ամառնային մի վաղ առաւօտ Դամասկոսի շուկայի հրապարակում ես տեսայ եօթ կախաղան: Դրանցից կախուած էին սիրիական երեւելի ու հարուստ ընտանիքների գլխաւորները: Այդ նոյն ժամին կախաղան հանուեցին Պէյրութում՝ քսանհինգ, Երուսաղէմում՝ եօթ, Զալէպում՝ եօթ, Զոմսում՝ չորս բարձրաստիճան անձինք: Ճեմալ փաշան կարգադրեց հաղորդել ապշած հասարակութեանը, որ մահապատիժի ենթարկուածները գերդաւաճաններ են եղել» (էջ 24): Ճեմալ փաշա կախաղան հանուած ազգասէր մարդոց ամբողջ ստացուածքը կը բռնագրաւէ, այդ մէկը իր գործած ահաւոր ոճիրին գլխաւոր նպատակը ըլլալով: Ֆիրպիլիսեր ճեմալ փաշայի համար կ'ըսէ. «Ճեմալի ենթակայութեան տարածքում այնքան շատ բռնութիւններ էին ծաւալուում բնակչութեան, որ դրանց նկարագրութեան համար հատորներ են պէտք» (էջ 25):

Զայնրիխ Ֆիրպիլիսեր թուրք փաշաներու եւ գերմանական վերնախաւի ջոջերուն Սիջին Արեւելքի մէջ կիրառած քաղաքականութիւնն ու զինուորական գործողութիւնները խստօրէն կը քննադատէ զանոնք անիմաստ եւ ծիծաղելի գտնելով. «Պերլինցիների համար ըստ երեւոյթին բաւական էր, որ փաշաները նրանց թոյլ էին տալիս հէնց Թուրքիայում անընդհատ ձեռնարկել երեւակայական ծրագիրներ: Պաղտատն ու Դամասկոսը դարձան էլման կետեր գերարկածային եւ ամէնէն անիմաստ արշաւախմբերի համար: Չինուած տոզած քսակներով՝ նրանք ձգուում էին դէպի

Պարսկաստան եւ Լոյսիսկ դէպի Աֆղանիստան (Յնդկաստան տանող ուղին) առանց գաղափար իսկ ունենալու, թէ մարդիկ, ի դէպ, ի՞նչ էին ուզում այդ երկրներում: Փաշաներն էլ սկսեցին կասկածել, որ Պերլինում կորցրել են բանականութիւնը» (էջ 25): Այդ օրերու ընդհանուր վիճակին եւ մթնոլորտին համար Ֆիրափիսեր կ'ըսէ. «Դա շողշողուն ժամանակ էր բոլոր հնարաւոր արկածախնդիրների համար» (էջ 25):



Վիլիելմ Բ.

Գերմանացիներու անմտութիւնը տեսակ մը նպաստաւոր պայմաններ կը ստեղծէին թուրք փաշաներուն համար եւ մանաւանդ ճեմալի: Հայնրիխ Ֆիրափիսեր ասոր մասին կ'ըսէ. «Այնչափով, որչափով փաշաները գիտակցեցին այն ծրագիրների անծրագրուածութիւնն ու անվճռականութիւնը, որով գերմանացիները հանդէս էին գալիս Թուրքիայում, իրենք փքուեցին իրենց ինքնիշխանութեամբ: Այդքան յարմարաւետ նրանք դեռ երբեք չէին կարողացել կառավարել: Պատերազմական դրութիւնն սկսելուն պէս նրանց համար վերացաւ արտաքին աշխարհի որեւէ կարծիք հաշուի առնելու ամէն մի հիմնաւորում» (էջ 26): Այս բոլորը արդիւնք էր այն իրողութեան թէ Գերմանիա ստանձնած էր թրքական ռազմական պետքերու ֆինանսաւորումը: Ասիկա պատճառ դարձաւ որ ինչպէս հեղինակը կ'ըսէ. «Նման գահավէժ հոսքի մէջ, ֆուստը, ֆրանքը եւ ռուբլին երբեք այնպէս չեն գալարուել, ինչպէս ահա մարքն էր գալարուում» (էջ 26):

Պերլին նստած գերմանական ղեկավարութիւնը որոշած էր իր բոլոր արկածախնդրութիւնները իրագործել, որոնց շարքին հիմնականը իրենց համար՝ հայասպանութիւնը: Այս մասին Ֆիրափիսեր կ'ըսէ. «Գործի անցան Թալէաթն ու Էնվերը: Նրանց մարտադաշտ տեղափոխեցին իրենց երկրի ներսը եւ այնտեղ յաղթեցին իրենց թշնամուն այնպիսի հնարաւորուածութեամբ, որը իրաւունք է տալիս նրանց անունները թուարկելու ընդամենը պատմութեան ամենայայտնի դահիճների շարքում» (էջ 26): Այս Թալէաթ կոչուած

իրէջը Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուին յայտարարեց 1916-ին, թէ ինք հայերը կոտորելու մէջ կրցաւ երեք ամսուան մէջ իրագործել ասելի քան, ինչ որ Ապտիլ Համիտ Բ.-ի համար երեսուն տարի ժամանակ պահանջեց:

Վերջ ի վերջոյ այս ընդարձակ աշխարհը խոշոր յիմարանցի վերածած են որոշ միջազգային վերնախաւեր: Անոնք իրենց ձեռքին մէջ ուժ ունենալով սանձարձակօրէն կը գործէն իրենց հիւանդագին հոգիներով եւ խանգարուած մտքերով ու կ'ընկճեն խաղաղօրէն ապրելու ձգտող ժողովուրդները: Ինչպէս անցեալին սուլթանները, փաշաները, պէյերն ու աղաները, ինչպիսին են Ապտիլ Համիտ Բ.-ը, Թալէաթն ու Էնվերը, ճեմալն ու Նազիմը, Վիլիելմ Բ.-ը, Փոլ Ռորպախն ու Հիթլերը եւ այլն, առիթը գտան իրենց հիւանդագին վայրենի տենչանքները իրականացնելու եւ զայն դրսեւորեցին հայասպանութեամբ, այսօր ալ Լոյսիսկ աշխարհի իշխող վերնախաւերը մէկը միւսին ձեռքէն կը խլէ խաղաղասէր ժողովուրդներու անդորրն ու կեանքը, պատառ մը հացն ու ջուրը... եւ աշխարհ գահավէժն ի վար կ'ընթանայ...

Կեանքի իսկական իմաստը կը կայանայ դիմադրելով գոյատեւելու մէջ: Այո՛, վճռականութեան եւ պայքարի միջոցով պետք է հասնիք մեր նպատակին: Այս բոլոր խելագարներուն դիմաց հայը պետք է դառնայ Սրբազան Խենթը եւ կարելի բոլոր միջոցներով՝ դիւանագիտական թէ ուժային ուղիով վերահաստատէ Ամբողջական Հայաստանը: Այս է միակ պատասխանը Հայոց ցեղասպանութիւնը ուրացող եւ Հայաստանի հողերը բռնագրաւող Թուրքիոյ եւ անոր մեղսակից վերնախաւերուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՅԱՏԵԱՆ

100-ԱՄԵԱԿ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԻՆ

ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԼՍԵՆԻ ԻՐԱՒԱՐԱՐ ՎՃԻՌԸ

Ա. Աշխարհամարտին (1914-1918) Թուրքիա հանդես եկաւ Գերմանիոյ եւ Աւստրեւիոնգարիոյ կողքին՝ ընդդէմ դաշնակից պետութիւններուն՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ: Պատերազմը յարմար առիթ էր Թուրքիոյ՝ միատարր պետութիւն ստեղծելու եւ հայկական հարցէն ձերբազատելու համար, եւ այդ նպատակով ալ 1915-ին ան ձեռնարկեց Յայոց ցեղասպանութեան: Թուրքիա նպատակ ունէր նաեւ ռուսերէն գրաւելու Կովկասը եւ միասալու Կեդրոնական Ասիոյ իր ցեղակիցներուն:

Իր կարգին, Ռուսիա նպատակ ունէր Թուրքիայէն գրաւել Արեւմտեան Յայաստանը, եւ այդ հիմամբ ալ որոշեց կովկասեան ճակատին վրայ ռուսական բանակի կողքին ստեղծել հայկական զինուած ջոկատներ, որոնք պիտի նպաստէին Արեւմտեան Յայաստանի գրաւման: Ցարական կառավարութիւնը անորոշ խոստումներ տուաւ Արեւմտեան Յայաստանի ապագայ ինքնավարութեան մասին: Կամաւորական ջոկատներու կազմութեան աշխատանքները ստանձնեց Թիֆլիսի մէջ գործող հայկական ազգային բիւրոն: կազմուեցան կամաւորական չորս գունդեր: Աւելի ուշ ստեղծուեցան նաեւ հին-



գերորդ, վեցերորդ եւ եօթներորդ գունդերը:

Յայ կամաւորական գունդերը 1914 նոյեմբերէն սկսեալ գործօն մասնակցութիւն բերին կռիւներուն, քաջութեամբ կռուեցան, սիրանքներ կատարեցին եւ յաղթական մարտեր մղեցին:

Սակայն ռուսական կառավարութեան ծրագիրներուն մէջ չէր մտնէր Արեւմտեան Յայաստանը ինքուրոյն տեսնելու հեռանկարը: Այդ պատճառով ալ գլխաւոր հրամանատարութիւնը 1915 դեկտեմբերին ցրուեց կամաւորական գունդերը եւ անոնց հիման վրայ ռուսական զօրամասերու կազմին մէջ ստեղծեց հայկական հրացանաձիգ գումարտակներ:

Իրերայաջորդ յաղթանակներէ ետք ռուսա-

կան բանակը 1916 փետրուարին գրաւեց Երզնկան: Ռուսական բանակի այլ զօրամասեր հասան Սեւ ծովու ափերը եւ գրաւեցին Տրապիզոնը:

* * *

Ռուսական զօրքերուն կողմէ Արեւմտեան Յայաստանի մեծ մասի գրաւման պայմաններուն տակ Անգլիա եւ Ֆրանսա շտապեցին իրենց նախագիծը համաձայնեցնել Ռուսիոյ հետ եւ 1916 մարտին յուշագիր յանձնեցին:

Ռուսիա պահանջեց իրեն յանձնել Թրքահայաստանը, Յաբեարիի մարզը եւ Սեւ ծովու հարաւային ափի մէկ մասը:

Թուրքիոյ բաժանման վերաբերեալ Ռուսիոյ համաձայնութիւնը առնելէ ետք Անգլիա եւ Ֆրանսա ընդունեցին ռուսական իրաւունքները Պոլսոյ եւ նեղուցներուն նկատմամբ, ինչպէս նաեւ անոր խոստացան Երզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի վիլայէթները եւ Քիւրտիստանի մէկ մասը:


* * *

Օսմանեան կայսրութեան ասիական տիրոջներու բաժանման վերաբերեալ համաձայնագրի նախագիծը պատրաստեցին անգլիացի Մարք Սայքս եւ ֆրանսացի Ժորժ Փիքո: Պատմութեան մէջ Սայքս-Փիքո անունով ծանօթ համաձայնագիրը, Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ, ստորագրուեցաւ 1916 մայիսին, Լոնտոնի մէջ:

Սայքս-Փիքոյի համաձայնագիրը կը նախատեսէր արաբական երկիրները բաժնել հինգ գօտիներու, որոնց մէջ կը մտնէին նաեւ Արեւմտեան Յայաստանի մէկ մասը, Կիլիկիան եւ Քիւրտիստանը:

1.- Կապոյտ գօտին, որ կ'ընդգրկէր արեւմտեան Սուրիան, Լիբանանը, Կիլիկիան եւ հարաւ-արեւելեան Անատոլուն, պիտի անցնէր Ֆրանսայի տիրապետութեան տակ:

2.- Կարմիր գօտին, որ կ'ընդգրկէր Իրաքի



Պօղոս Նուպար փաշա

կեդրոնական եւ հարաւային գօտին, ինչպէս նաեւ պաղեստինեան նաւահանգիստներ Յաֆա եւ Աքքա, պիտի անցնէին Անգլիոյ տիրապետութեան տակ:

3.- Դարչնագոյն գօտին կ'ընդգրկէր Պաղեստինի մնացեալ մասը, ուր պիտի հաստատուէր միջազգային կառավարում, որուն ձեւը պիտի որոշուէր Ռուսիոյ եւ միւս դաշնակիցներուն հետ համաձայնութիւն կայացնելէ ետք:

4.- Արեւելեան Սուրիան եւ Մուսուլի վիլայէթը Ֆրանսայի ազդեցութեան գօտի պիտի դառնային:

5.- Անդրյորդանան եւ Պաղեստինի վիլայէթին հիւսիսային մասը Անգլիոյ ազդեցութեան գօտի պիտի դառնային:

* * *

Դաշնակիցներու ներկայացուցիչներ Մարք Սայքսի եւ Ժորժ Փիքոյի, եւ հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար փաշայի միջեւ 27 հոկտեմբեր 1916-ին Լոնտոնի մէջ համաձայնագիր կնքուեցաւ:

Պօղոս Նուպար փաշա Գեորգ Ե. կաթողիկոսի կոնդակով կը գլխաւորէր ազգային պատուիրակութիւնը:

Ըստ համաձայնագրիին ֆրանսական բանակի կազմին մէջ հայ կամաւորներէ բաղկացած Արեւելեան լեգէոնը պիտի կազմուէր: Լեգէոնը պիտի մասնակցէր թրքական զօրքերու դէմ մղուող պատերազմական գործողութիւններուն, որուն դիմաց Ֆրանսա կը խոստանար պատերազմի աւարտէն ետք Կիլիկիոյ մէջ հայերուն ինքնավարութիւն տալ:

Կամաւորներու հաւաքագրումը սկսաւ 1916 նոյեմբերին, Եգիպտոսի մէջ:

Լեգէոնը 1918 սեպտեմբեր 19-ին, Պաղեստինի ճակատին վրայ, Արարայի ճակատամարտին ճեղքեց թշնամի ճակատը եւ անցաւ անոր թիկունքը: Այսպիսով դաշնակից բանակներուն առջեւ բացուեցաւ դէպի Դամասկոս եւ Պէյրութ ճանապարհը:

Արեւելեան լեգեոնը 1918 նոյեմբեր-դեկտեմբերին մտաւ Կիլիկիա եւ 1919 փետրուարին պաշտօնապէս Յայկական լեգեոն անւանումը ստացաւ:

* * *

Ռուսիոյ մէջ 1917-ի բոլշեւիկեան հոկտեմբերեան յեղափոխութենէն ետք, մէկ կողմէ հորհրդային Ռուսիոյ եւ միւս կողմէ Գերմանիոյ, Աւստրեւիոնգարիոյ, Օսմանեան կայսրութեան եւ Պուլկարիոյ միջեւ 3 մարտ 1918-ին կնքուեցաւ Պրեսթ-Լիթովսքի դաշնագիրը, որուն հիմամբ հսկայական տարածքային զիջումներով Ռուսիա դուրս ելաւ պատերազմէն:

Դաշնագիրի չորրորդ յօդուածի երկրորդ եւ երրորդ պարբերութիւններով բոլշեւիկները պարտաւորուեցան թուրքիոյ յանձնել Արեւելեան Անատոլիոյ նահանգները, ինչպէս նաեւ Ռուսական կայսրութեան մաս հանդիսացող Կարսի, Արտահանի եւ Պաթումի մարզերը:

* * *

Խախտելով զինադադարը, թրքական բանակը կովկասեան ճակատի վրայ անցաւ ընդհանուր յարձակման, եւ հայկական զօրամասերէն վերագրաւեց Արեւմտեան Յայաստանը, մտաւ Ալեքսանդրապոլ եւ հասաւ Սարդարապատ, Բաշ Ապարան եւ Ղարաքիլիսա:

Հայ ժողովուրդը, 1918 մայիս 21-էն 29, կէսաց մահու հերոսական գօտեմարտեր մղելով, յաջողեցաւ կասեցնել թրքական յառաջխաղացքը:

Անդրկովկասեան սէյմի լուծումէն ետք, հայոց Ազգային խորհուրդը 28 մայիս 1918-ին Թիֆլիսի մէջ Յայաստանի անկախութիւնը յայտարարեց:

Պաթումի մէջ, 4 յունիս 1918-ին կնքուած դաշնագիրով Թուրքիոյ անցան, Կարսէն ու Արտահանէն բացի, Սուրմալուի, Շարուրի եւ Նախիջեանի գաւառները եւ Էջմիածնի ու Ալեքսանդրապոլի գաւառներուն մեծ մասը:

* * *

Թուրքիա, պարտուած դուրս գալով համաշխարհային պատերազմէն, 30 հոկտեմ-

բեր 1918-ին ստորագրեց Մուտրոսի զինադադարը: Նոյեմբեր 3-ին Աւստրեւիոնգարիա սպիտակ դրօշ պարզեց, իսկ նոյեմբեր 11-ին զէնքը վար դրաւ Գերմանիա:

Պատերազմի աւարտէն ետք թրքական զօրքերը քաշուեցան Յայաստանի Հանրապետութեան տարածքէն եւ Կարսի մարզէն:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը չեղեալ յայտարարեց Պաթումի դաշնագիրը:

* * *

Միացեալ Նահանգներ դաշնակիցներու կողքին Գերմանիոյ եւ Աւստրեւիոնգարիոյ դէմ պատերազմին մէջ մտած էին 6 ապրիլ 1917-ին, սակայն Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմ չէին յայտարարած:

Միացեալ Նահանգներու նախագահ Վուոթո Ուիլսոնը 8 յունուար 1918-ին յայտարարած էր իր «14 կետեր»-ը: 12-րդ կետը անմիջականօրէն կը վերաբերէր հայ ժողովուրդի ապագային, ուր կ'ըսուէր.

«Օսմանեան կայսրութեան թրքական մասի համար պետք է հաւաստել անվտանգ ինքնիշխանութիւն, սակայն միւս ազգերու համար, որոնք ներկայիս կը գտնուին թրքական իշխանութեան տակ, պետք է ապահովել կեանքի աներկբայ անվտանգութիւն եւ ինքնավար զարգացման կատարելապէս անխափան հնարաւորութիւն»:

Նախագահ Ուիլսոնը Հռոմի Պենետիկտոս ԺԵ. պապին 24 դեկտեմբեր 1918-ին գրած նամակին մէջ կ'ըսէր.

«Կը վստահեցնեմ ձեզի, որ կը խօսիմ ոչ միայն իմ, այլեւ ողջ ամերիկեան ժողովուրդի անունով, երբ կ'ըսեմ, որ ոչ մէկ այլ ժողովուրդի տառապանք այնքան խորապէս խռոված է ամերիկացիները, որքան հայերուն տառապանքը: Վստահաբար, իմ ամենէն նուիրական ձգտումներէս պետք է ըլլայ կարողութեանս չափով մասնակցութիւն ունենալ, ապահովելու համար այդ անիրաւուած եւ տարաբախտ ժողովուրդի օրինաւոր եւ ամբողջական ազատագրումը անարդար լուծէն»:

Փարիզի խաղաղութեան վեհաժողովը բացուեցաւ 18 յունուար 1919-ին. հրաւիրուած էին յաղթական պետութիւնները՝ պարտ-



* * *

Սան Ռեմոյի մէջ (Իտալիա) 19-էն 26 ապրիլ 1920-ին տեղի ունեցած համագումարին, Գերմանիոյ եւ անոր զինակից ուժերէն իւրաքանչիւրին հետ դաշնակիցներու գերագոյն խորհուրդը խորհրդակցութիւններ կատարեց: Զննարկուեցաւ նաեւ Զայկական հարցը:

Սան Ռեմոյի համագումարը դիմեց Նախագահ Ուիլսոնի, Զայաստանի հոգատարութիւնը ստանձնելու եւ հանդէս գալու իբրեւ միջնորդ անոր վերջնական սահմաններու ճշման հարցով: Որոշուեցաւ Թուրքիոյ

հետ դաշնագիրի Զայաստանի վերաբերող մասին մէջ արձանագրել, որ Թուրքիա, Զայաստան եւ միւս պայմանաւորուող կողմերը համաձայն են դիմելու Միացեալ Նահանգներու Նախագահի միջնորդութեան՝ Թուրքիոյ եւ Զայաստանի սահմաններու հարցով եւ կ'ընդունին այդ առիթով անոր որոշումը, ինչպէս նաեւ՝ որեւէ պայման, որ ան կ'առաջարկէ Զայաստանի դէպի ծով ելք ունենալու մասին:

* * *

Սերի մէջ (Փարիզի մօտ), 10 օգոստոս 1920-ին, սուլթանական Թուրքիոյ կառավարութեան եւ դաշնակից պետութիւններուն միջեւ դաշնագիր կնքուեցաւ:

Դաշնագիրը բաղկացած էր 97 մասէ եւ 578 յօդուածներէ:

Դաշնագիրին համաձայն, Թուրքիոյ կը մնային Պոլիսը եւ շրջակայքը, նեղուցները ապառազմականացուած շրջաններ կը դառնային, Թուրքիա կը հրաժարեր իր գերիշխանութենէն Թրակիոյ նկատմամբ, Եգեական կղզիներէն, Կիպրոսէն, Եգիպտոսէն եւ արաբական տիրոջներէն: Յունաստան պիտի կառավարեր Իզմիրն ու իր շրջակայքը: Ասիական Թուրքիա կը սեղմուէր մինչեւ արեւմուտեան Անատոլիոյ սահմանը:

Դաշնագիրին 88-էն 93-րդ յօդուածները յատկացուած էին Զայաստանի:

լած պետութիւններուն հետ հաշտութեան դաշնագիր մշակելու եւ ստորագրելու նպատակով:

Վեհաժողովի 28 յունուարի նիստին հաստատուեցաւ Ազգերու լիկայի կանոնադրութիւնը:

Վեհաժողովին պաշտօնապէս չէր հրաւիրւած Զայաստանի Զանրապետութիւնը: Այսուհանդերձ, Փարիզ գտնուող Զայաստանի Զանրապետութեան պատուիրակութիւնը՝ Աւետիս Ահարոնեանի գլխաւորութեամբ եւ Պօղոս Նուպար փաշայի Ազգային պատուիրակութիւնը ներկայացան դաշնակիցներուն՝ խնդրելով ճանչնալ հայերու ազգային պահանջները:

Յաղթական դաշնակից երկիրները 1919 յունիս 28-ին, Վերսայի մէջ՝ Գերմանիոյ, իսկ սեպտեմբեր 10-ին, Սէն Ժերմէնի մէջ՝ Աւրստրիոյ հետ դաշնագիրներ ստորագրեցին:

Նախագահ Ուիլսոն 23 սեպտեմբեր 1919-ի իր ուղերձին մէջ կը նշէր.

«Զայաստան մէկն է այն շրջաններէն, որ պէտք է ըլլայ Ազգերու լիկայի խնամակալութեան ներքեւ: Զայաստան պէտք է ազատուի: Թուրքին պէտք է արգիլուի իշխանութիւն բանեցնել հոն»:

Ուիլսոնի առաջադրած սկզբունքները ճանչցուեցան իբրեւ խաղաղութեան բանակցութիւններու հիմք:

«Յօդուած 88 - Թուրքիա կը յայտարարէ, որ ինք կը ճանչնայ Յայաստանը, ինչպէս ատիկա ըրած են արդէն դաշնակից պետութիւնները, իբրեւ անկախ պետութիւն:

«Յօդուած 89 - Թուրքիա եւ Յայաստան եւ այլ ուրիշ բարձր դաշնագիրի կողմերը կը համաձայնին Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահի իրաւարար վճիռին յանձնել սահմանի որոշումը Թուրքիոյ եւ Յայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի վիլայէթներուն մէջ եւ ընդունիլ անոր վճիռը, այլ եւ բոլոր այն միջոցները, որ կրնայ ան հրահանգել Յայաստանի դէպի ծով ելք ունենալու եւ յիշեալ սահմանին կից գտնուող օսմանեան որեւէ հողի զինաթափման մասին:

«Յօդուած 90.- Այն պարագային, երբ սահմանի որոշումը 89-րդ յօդուածի հիման վրայ ունենայ այն հետեւանքը, որ Յայաստանի յանձնուի յիշեալ նահանգներու հողի ամբողջութիւնը կամ մէկ մասը, Թուրքիա անյապաղ կը յայտարարէ, որ ինք կը հրաժարի վճիռի օրէն սկսեալ բոլոր իրաւունքներէն ու իրաւահիմունքներէն յանձնուած հողի վրայ: Սոյն դաշնագիրի այն կէտերը, որոնք կիրառելի են Թուրքիայէն անջատուած հողերու վերաբերեալ, այդ վայրկեանէն պիտի կիրարկուին եւ այս հողերու վերաբերեալ:


«Թուրքիոյ ելեւմտական պարտաւորութիւններու այն բաժինն ու բնոյթը, որ կրելու է Յայաստանը, ինչպէս նաեւ բաժինն ու բնոյթը այն իրաւունքներուն, որոնց վրայ կրնայ յենիլ անիկա՝ իր գերիշխանութեան տակ տրուած հողի կապակցութեամբ՝ տնօրինուելու են համաձայն սոյն դաշնագիրի 8-րդ մաս յօդուած 241-244-ի (ելեւմտական դրութիւններ):

«Յետագայ համաձայնութիւնները կը կարգաւորեն, եթէ անհրաժեշտ ըլլայ, բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգաւորուած սոյն դաշնագիրով եւ որոնք կրնան յառաջ գալ յիշեալ հողամասի յանձնումով:

«Յօդուած 91.- Եթէ 89-րդ յօդուածին մէջ ցոյց տրուած հողի մէկ մասը յանձնուի Յայաստանի, այն ժամանակ սահմանագծող յանձնաժողովը, որուն կազմը կ'որոշուի հե-



Աւետիս Աղաքունեան



Վուստրո Ուիլսոն

տագային, կը կազմուի յընթացս երեք ամսուայ յիշեալ յօդուածով նախատեսուած վճիռէն ետք՝ նպատակ ունենալով տեղն ու տեղը գծել սահմանը Յայաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

«Յօդուած 92.- Յայաստանի սահմանները Ազրպէյճանի եւ Վրաստանի հետ համապատասխան կերպով կ'որոշուին շահագրգռուած պետութիւններու ընդհանուր համաձայնութեամբ:

«Երբ 89-րդ յօդուածով նախատեսուած վճիռը ընդունուի եւ եթէ այնուհետեւ շահագրգռուած պետութիւնները չկարենան ընդհանուր համաձայնութեամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կ'որոշեն գլխաւոր դաշնակից պետութիւնները, որոնք միաժամանակ պետք է հոգ տանին սահմանագատումը տեղւոյն վրայ գծանշելու մասին:

«Յօդուած 93.- Յայաստան կ'ընդունի, համաձայնելով մտցնել դաշնագիրին մէջ գլխաւոր դաշնակից պետութիւններու հետ այն որոշումները, որոնք այդ պետութիւնները անհրաժեշտ կը գտնեն՝ պաշտպանելու համար Յայաստանի մէջ շահերը այն բնակիչներուն, որոնք մեծամասնութենէն կը տարբերին ցեղով, լեզուով կամ կրօնքով:

«Յայաստան կը համաձայնի, հաւասարապէս, մտցնել դաշնագիրին մէջ գլխաւոր դաշնակից պետութիւններուն հետ այն որոշումները, որոնք այդ պետութիւնները անհրաժեշտ կը նկատեն՝ պաշտպանելու համար տարանցումի ազատութիւնը եւ այլ ազգերու առեւտուրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար»:

Հայաստանի Հանրապետության կողմէ դաշնագիրը ստորագրեց Ալետիս Ահարոնեան:

* * *

Նախագահ Վուրթո Ուիլսոնի իրաւարար վճիռը, որուն պաշտօնական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դէպի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ», ներկայացուցեալ 22 նոյեմբեր 1920-ին:

Ուիլսոնի իրաւարար վճիռին համաձայն, հայ-թրքական սահմանը կը սկսի Իրանի սահմանամերձ Կոտուր քաղաքէն, կ'անցնի Վանայ լիճէն հարաւ-արեւմուտք եւ Պիթլիս ու Մուշ քաղաքներէն հարաւ-արեւմուտք: Սահմանագիծէն դուրս կը մնան Վանի Նահանգին մօտաւորապէս կէսը եւ գրեթէ ամբողջ Սղերդ գաւառը: Այնուհետեւ սահմանը կ'երկարի դէպի հիւսիս, կ'անցնի Երզնկայէն քիչ հեռու, կ'որոշուի ըստ բնական աշխարհագրական պատնէշի եւ կ'ապահովէ Հայաստանի անվտանգութիւնը: Հայաստանի դէպի Սեւ ծով յարմար ելք ապահովելու համար սահմանը կ'անցնի Տերսիմէն հիւսիս:

Իրաւարար այս վճիռին համաձայն, Թուրքիայէն Հայաստանի կը տրուէր շուրջ 90 հազար քառակուսի քելոմէթր տարածութիւն, որ միաւորուելով արդէն գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութեան հետ, կ'ունենար 160 հազար քառակուսի քելոմէթր տարածութիւն:

* * *

Մուսթաֆա Զեմալ 1919-ին Անատոլուի մէջ սկսած էր ազգային շարժումը: 23 ապրիլ 1920-ին Անգարայի մէջ ստեղծուած էր Թուրքիոյ մեծ ժողովը՝ Մուսթաֆա Զեմալի գլխաւորութեամբ:

Դաշնակից պետութիւններուն եւ Թուրքիոյ սուլթանական կառավարութեան միջեւ կնքուած Սեւրի դաշնագիրը չճանչցաւ Անգարայի կառավարութիւնը:

Խորհրդային Ռուսիա մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք եւ անլի քան տասը թոն ոսկի անհատոյց տրամադրեց Զեմալի:

Զեմալական 30 հազարնոց բանակ մը, Զեազիմ Զարապէքիր փաշայի հրամանատարութեան տակ, 23 սեպտեմբեր 1920-ին ներխուժեց Հայաստանի Հանրապետութիւն եւ շարժեցաւ Օլթիի, Սարըղամիշի, Կաղզուանի եւ Իգդիրի ուղղութեամբ:

Թրքական զօրքերը սեպտեմբեր 29-ին գրաւեցին Սարըղամիշը եւ Կաղզուանը, հոկտեմբեր 30-ին՝ Կարսը, նոյեմբեր 7-ին՝ Ալեքսանդրապոլը:

Բոլշեւիկեան քարոզչութեան եւ համատարած դասալքութեան պատճառով հայկական բանակը մեծ մասամբ կազմալուծուցեալ:

Թրքական եւ բոլշեւիկեան սուլիներու միջեւ մնացած Հայաստանի Հանրապետութիւնը հարկադրաբար տեղի տուաւ, կորսընցուց ընդարձակ տարածքներ եւ 2 դեկտեմբեր 1920-ին դարձաւ Խորհրդային հանրապետութիւն:

Հայաստանի պարտութեան եւ խորհրդայնացման, իսկ այնուհետեւ ալ՝ Թուրքիոյ մէջ սուլթանական կառավարութեան անկման եւ քեմալականներու յաղթանակի պայմաններուն տակ, Սեւրի դաշնագիրը եւ Ուիլսոնի իրաւարար վճիռը, որ վերջնական է եւ պարտադիր բոլոր հայցուորներու համար, մնաց անիրագործելի:

Դաշնակիցները ճանչցան Մուսթաֆա Զեմալի կառավարութիւնը եւ անոր իրաւունքը այն տարածքներուն նկատմամբ, որոնք Սեւրի դաշնագիրով պիտի տրուէին Հայաստանի:

Սակայն Ուիլսոնի իրաւարար վճիռը միջազգային իրաւունքի հիմամբ անժամկետ է, անբեկանելի եւ պարտադիր՝ կատարման համար:

Սեւրի դաշնագիրը յուշագիր է Հայկական հարցի լուծման, հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման եւ տարածաշրջանին մէջ քաղաքական քարտէսի վերագծման համար:

ԱՍՊԵՏ ՄԱՆԾԻԿԵԱՆ

ՄԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ 100-ԱՄԵԱԿ՝ 1920-2020

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԵՒ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄՕՏ ԱՐԴԷՆ ՉԱՐԳԱՑԱԾ ԷՐ ԱԶԱՏ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ 1895-ԻՆ

Սերի դաշնագիրը Հայաստանի Հանրապետության կարելորագոյն իրագործումներէն է, իսկ միջազգային իրաւական առումով՝ կարելորագոյնը:


Միացեալ Նահանգներ-Թուրքիա յարաբերութիւնը պաշտօնապէս սկսաւ 1800 թուականին, երբ իբրեւ առաջին քայլ, Ճորճ Ուաշինկթըն մարտանաւը Պոլիս այցելեց: Ծիծաղելիօրէն, կարգ մը թուրք պատմաբաններ շփոթելով համանուն մարտանաւը Միացեալ Նահանգներու առաջին նախագահին հետ (1732-1799), որ բնա՛ւ երկրէն դուրս չէր ելած ու 1800-ին արդէն մահացած էր, կը գրեն, թէ ան էր Թուրքիա այցելողը:



Ճորճ Ուաշինկթըն
մարտանաւին գծագրութիւնը

Թէ ինչպէ՞ս սկսաւ ամերիկացի ժողովուրդին, եկեղեցիներուն եւ կառավարութեան խորացած ահազանգային եւ լո՛ւրջ հետաքրքրութիւնը՝ մտահոգութիւնը հայերուն

նկատմամբ, թարգմանաբար կը ներկայացնեմ օրուան մամուլէն եւ Փուլիցըր մրցանակակիր, ընկերային-մտաւորական հարցերու պատմաբան, համալսարաններու դասախօս եւ, իր անունով պատմութեան մրցանակ հաստատուած Մերլ Զուրթիի (1897-



Մերլ Զուրթի

1996) ⁽¹⁾ «Ամերիկեան արտերկիրի մարդասիրութեան պատմութիւնը» 670 էջ գիրքէն ⁽²⁾: Ստորեւ հատուածներ այս գիրքէն, որ պատրաստուած է արխիւային բազմաթիւ աղբիւրներէ:

Կարելորութեամբ պէտք է նշել, որ ընդհանրապէս հեղինակը, մամուլը, ամերիկացի ժողովուրդը եւ կարգ մը ծերակուտականներ ի՛ր անունով՝ «Հայաստան» կ'անուանեն Արեւմտեան Հայաստանը եւ ոմանք՝ «թրքական Հայաստան» ոչ թէ Անատոլիոս եւ այլն:

«... 1897-ին երաշտի եւ սովի մէջ գտնուող Ռուսիոյ կարիքներուն, ամերիկացիներուն կողմէ յաւելեալ օժանդակութիւն չկարենալ հասցնելը՝ սերտօրէն կապուած էր այլ շրջաններու օգնութեան պահանջներուն հետ, որ ներկայացուած էր ամերիկացիներու փոքր, սակայն ազդեցիկ խումբի մը կողմէ, յուզական եւ աւելի մեծ կոչ-պահանջներով:

Արդարեւ, Ռուսիոյ հարաւէն անդին, Ասիական Թուրքիոյ սիրտին մէջ (Արեւմտեան Յայաստան*) կային հարիւրաւոր հայկական քաղաքներ եւ գիւղեր, որոնք դարձան ամերիկեան բարեգործութեան ուշադրութեան կեդրոնը, ռուսական սովին օժանդակութեան ընդարձակումէն երկու տարի ետք, երբ լայնածաւալ օժանդակութիւնը հասած էր առաւելագոյնին:

«Կայսրութիւնը միաւորելու ձգտումով՝ թուրք սուլթան Ապտիւլ Յամիտը որոշ ժամանակէ ի վեր, կը քաջալերէր հողերու «անօթի» եւ մուլեռանդ քիւրտերը՝ բնաջնջելու քրիստոնէայ հայութեան բոլոր գիւղերը, որոնք կը մերժէին իսլամանաւ: Սակայն 1895-ի օգոստոսին, Սասունի մէջ տեղի ունեցած արհւնալի կոտորածը գերազանցեց այն տարողութիւնն ու սարսափը, որ ցարդ պատահած էր: Յայ գոհերուն տուները, խանութները եւ անասունները կը գրաւէին քիւրտերը կամ թուրք պաշտօնեաները, իսկ փրկուած հայերը՝ մերկ եւ սոված, ապաստան կը փնտռէին ամերիկեան միսիոնարական գործունեութեան կեդրոններուն մէջ⁽⁴⁾:

«Նիու Եորք Թրիպիւն» թերթը կը յայտնէ, որ Պոլսոյ ամերիկեան պատուիրակին (դեսպան*) համաձայն, երեսուն օրուան ընթացքին 10 հազար հայ սպաննուած է: Ամերիկացի ժողովուրդը շաբաթ առ շաբաթ, շարունակ օրաթերթերուն մէջ կը կարդար խեղած երեխաներու, բռնաբարուած կանանց եւ յաւելեալ կոտորածներու մասին:



Վերապատուելի Սայրըս Յեմլին



Ծերակուտական Ուիլքինսըն Բոլ

«Այդ ժամանակ ամերիկացիները կը տիրապետէին Թուրքիոյ մէջ Բողոքական առաքելութիւններուն, որովհետեւ արտաքին առաքելութիւններով զբաղող պաշտօնատարներու ամերիկեան խորհուրդը (American Board of Commissioners for Foreign Missions⁽⁵⁾) աւելի կանուխ նախաձեռնած էր աշխատանքի եւ ըստ երեւոյթին, Բարձր դուռը (օսմանեան կառավարութիւն*) աւելի նուազ մտահոգ էր, ամերիկեան միսիոնարական ներխուժումին միջոցով կայսրութեան մէջ ամերիկեան ծրագիրներէն՝ մտադրութենէն, քան՝ երոպական առաքելութիւններու պարագային:

«Ամերիկեան քուլեճներ կային Պոլսոյ, Չիւսիոյ, Սկիւտարի, Խարբերդի, Մարզովանի, Պէյրութի եւ Այնթապի մէջ, ուր նաեւ կար հիւանդանոց (ցարդ կանգուն*), նմանապէս Մարտիսի եւ Կեսարիոյ մէջ, եւ տղոց ու աղջկանց դպրոցներ Պուրսայի, Աֆանայի, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Մուսուլի, ու Վանի մէջ եւ այլուր (Օսմանեան կայսրութեան մէջ գործող*): Շուրջ 150 ամերիկեան առաքելութիւնները կը պնդէին, թէ իրենք չէզոք դիրքորոշում ունէին ազգայնական լարուածու-

«Նիու Եորք Թրիպիւն» օրաթերթին 13 նոյեմբեր 1895-ի հայերուն օգնելու կոչը: Նոյնպիսի կոչեր ամիսներով լոյս տեսան ամերիկեան եւ բրիտանական օրաթերթերուն մէջ, շուրջ 10 հազար անգամէն աւելի 1800 թուականէն սկսեալ⁽³⁾:

SOLICITS AID FOR ARMENIANS.
 The Armenian Relief Fund Committee of New-York has issued a circular appealing for funds for the aid of the starving, homeless and defenceless Armenians in Turkey. Contributions may be sent to Spencer Trask, the treasurer, No. 27 Pine-st. Among the members of the committee are the Rev. David J. Burrell, Archbishop Corrigan, Bishop Potter, the Rev. Edward F. Moldehnke, the Rev. Henry Van Dyke, Morris K. Jesup, the Rev. William H. Ward and the Rev. Theodore C. Williams. Everett P. Wheeler is chairman.

թեան հանդեպ եւ կը յորդորէին հայերուն իշխանութեան հնազանդիլ: Սակայն թուրքերը կը կասկածէին, որ միսիոնարները քաղաքական անհանդարտութիւն կը հրահրէին:

«1893-ին իսլամ ամբոխ մը հրոյ ճարակ դարձուց Մարգովանի միսիոնարական աղջկանց դպրոցը: Երեք տարուան ընթացքին, շուրջ մէկ միլիոն տոլար արժողութեամբ ամերիկեան հաստատութիւններ քանդուեցան: Աճող ու տարածուող այս քառսին մէջ, որ կ'ընկերակցէր հայերուն ջարդին, միսիոնարները յաճախ սարսափահար կը բանտարկուէին իրենց շրջափակերուն մէջ: Սակայն, անոնք կրնային եւ կրցան դուրսի աշխարհը տեղեակ պահել կատարածէն: Այս մէկը անշուշտ միայն անելցուց թուրքերուն գայրոյթը:

««Տի Աուբուրը»-ի (Նիու Եորը հրատարակող ամսաթերթ*) 7 դեկտեմբեր 1895-ի թիւին մէջ վերապատուելի Սայրըս Յեմլին՝ Պոլսոյ Ռոպերթ քոլեճի հիմնադիրը եւ առաջին Լախագահը («Հայկական ջարդերը» խորագիրով յօդուածին միջոցով), հայթայթեց բնագիրը՝ անելի լաւ հասկնալու այն ահռելի վայրագութիւնները, որոնք կը սպառնային ժողո-

վորդի մը ողնջացմանը, որ գրգռեց ամերիկացիներուն կրկնապատկուող վրդովմունքը: Համլինը նշած է Եւրոպական Ուժերուն կողմէ միջամտութեան դժկամութիւնը, կամ՝ հրաժարիլը, հակառակ այն խոստումներուն, որոնք Լախագահէս ապահոված էին Թուրքիայէն՝ հայ քրիստոնէայ փոքրամասնութեան հանդեպ արդար վերաբերմունք ցուցաբերելու համար:

«Ան յստակ կերպով կ'ըսէ, թէ՛ Սուլթանին հայերու ջարդերուն մէջ իր պատասխանատուութեան ուրացումը, շատ սնամիտ է եւ լուրջի չի կրնար առնուիլ: Ան նուազն 250 հազար հայեր մեռնելու ենթակայ էին ձմեռուան անարտէն առաջ՝ մի'այն ցուրտէն, անօթութենէն, թիֆոյիտէն եւ այլ հիւանդութիւններէ, բացի, եթէ մեծածաւալ օժանդակութիւն հասնի Հայաստան եւ տնօրինուի վստահելի ամերիկացի ողորմաբաշխներու կողմէ: Եզրակացնելով, ան կ'ըսէ, թէ՛ եթէ Ամերիկայի կառավարութիւնը անյօժար է միջամտելու եւ Եւրոպական Ուժերուն դերը վերցնելու, պաշտպանելու համար հայերը յաւելեալ բռնութեան դէմ, առ նուազն ամերիկացի ժողովուրդը իր ունեցած առատութենէն պէտք է 1 միլիոն տոլար իբրեւ նպաստ յատկացնէ (հայերուն*)»:

Այլ օրինակ մը՝ վերի նկար թիւ 6. «Նիու Եորը Թրիպլին» օրաթերթի 17 նոյեմբեր 1895-ի առաջին էջի գլխաւոր լրատուութիւնը՝ «Սարսափը կը տիրէ Հայաստանի մէջ» խորագիրով եւ «Կրակն ու սուրը գործի լծուած», «Խարբերդի մէջ քրիստոնէական առաքելութիւններ կողոպտուած եւ հրկիզուած», «500 մարդ մորթուած», «Զիրտերը կը խնայեն միսիոնարներուն կեանքերը» ենթավերնագիրներով: Գլխագիր վերտառութեամբ կը գրէ. «Թուրքերն էին Լախագահը, քանի որ անոնցմէ միայն տասն սպանուեցաւ Սվագի մէջ, մինչ 4000 սովահար հայեր ջարդուեցան...»: Այսպիսի յօդուածներ ընդվզում յառաջացուցին արդարամիտ ու մարդկայական զգացումներով տողորուած ամերիկացի ժողովուրդին, ներկայացուցիչներուն եւ ծերակուտականներուն մօտ:


Ուստի 10 դեկտեմբեր 1895-ին, Ֆլորիտայէն դեմոկրատ ծերակուտական Ուիլ-



«Նիու Եորը Թրիպլին» օրաթերթի 17 նոյեմբեր 1895-ի առաջին էջի գլխաւոր լուրը

քինսըն Գոլ (1834-1910, որ կը պատկաներ քաղաքական պաշտոններով նշանաւոր ընտանիքի մը*) ներկայացուց երկու կուսակցութիւններուն անունով համատեղ բանաձեւ մը (S.R. 107*), ուր կառավարութեան կոչ կ'ուղղէր խաղաղ բանակցութիւններու միջոցով, կամ՝ անհրաժեշտութեան պարագային զէնքի միջոցով, կանխել հայերուն հասցուած դաժանութիւնները: Ան բանաձեւը ներկայացուց, հռչակելով զայն՝ յանուն կրօնի, մարդկութեան եւ այն սկզբունքներուն վրայ, որ քաղաքակրթութիւնը հիմնուած է: Իր մտադրութեան ազդեցութիւն տալու համար, ան բանաձեւին մէջ ներառեց անկախ Զայկական պետութիւն հիմնելու առաջադրանքը, որուն գոյատեւումը պիտի երաշխաւորէր աշխարհի քաղաքակիրթ պետութիւնները»: Ներկայացուցիչներու տունը համաձայն գտնուեցաւ եւ բանաձեւը յղեց Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին:

«Այս մէկը չափազանց մտահոգիչ բանաձեւ էր Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին համար, որուն յղուած էր: 24 յունուար 1896-ին, յանձնաժողովի նախագահը Իլինոյ նահանգի հանրապետական ծերակուտական Շելլի Մուր Բալըմ (1829-1914*) Զոնկրեսին ներկայացուց երկու կուսակցութիւններուն անունով համատեղ բանաձեւ մը, որ նախագահին կը հաւաստէր, Զոնկրեսին աջակցութիւնը որեւէ քայլի, որուն միջոցով ան կրնար ստիպել Եւրոպական Ուժերուն՝ յարգելու հայ ժողովուրդին հանդէպ իրենց դաշնագիրով ճշդուած



Շելլի Մուր Բալըմ



Նիուրըն Բրեյն Պլանշարտ



Ուիլիէմ Ֆրայ

պարտաւորութիւնները՝ համապատասխան ճշում բանեցնելու Օսմանեան կառավարութեան վրայ: Չօրավիզ կանգնելով այս բանաձեւերուն, ծերակուտական Բալըմ ընդունելով հանդերձ Միացեալ Նահանգներուն չեզոքութիւնը, չմիջամտելու Եւրոպայի գործերուն, պնդեց, որ երկիրը մարդկութեան հանդէպ պարտաւորութեան տակ է եւ չի կրնար կոյր ձեւանալ:

«Ներկայացուցիչներու տան մէջ ճառախօսութիւնը ցոյց տուաւ, որ առ նուազն, բոլոր անոնց կողմէ, որոնք խօսք առին, թէ՛ բանաձեւը բաւարար չէր: Այս էր տեսակետը Լուիզիանայի ծերակուտական Նիուրըն Պլանշարտի եւ Ֆլորիտայի ծերակուտական Ուիլքինսըն Գոլի: Գոլ պնդեց, թէ Բալըմի բանաձեւը մեղկ է աննշան էր, որ (հայերուն*) ո՛չ ամոքում, ո՛չ ալ ապահովութիւն կու տար: Մէյնի հանրապետական ծերակուտական Ուիլիէմ Ֆրայ (1830-1911) նկատել տուաւ, որ Ամերիկայի ժողովուրդը 6 միլիոն տոլար ներդրում կատարած էր Թուրքիոյ մէջ, միակ նպատակ ունենալով բարելաւել ժողովուրդին վիճակը: Այդ հրաշալի բարեգործութեան աշխատանք մըն էր, որ այժմ հասած է բացարձակ անելի: Կառավարութիւնը ոչի՞նչ պիտի ըներ, բացի յորդորելէ Եւրոպական պետութիւնները կատարելու իրենց պարտաւորութիւնները:

«Միակ այլախոհ տեսակետը յայտնեց Մասաչուսեցի ծերակուտական Ճորճ Ֆրիզպի Զօրը (1826-1904), որ համակրելով հանդերձ պաշտօնակիցներուն տեսակետներուն եւ զգացումներուն


րուն, յայտնեց, թէ անխոհեմութիւն պիտի ըլլար Թուրքիոյ երեսին ծանր խօսքեր շարտել, մինչ Բլարա Պարթընը (1821-1912 հիմնադիրը Ամերիկայի Կարմիր Խաչին*) օգնութիւն պիտի մատակարարէր եւ տակաւին յստակ չէր, թէ՛ Դուռէն արտօնութիւն պիտի ստանա՞ր այս բարեսիրական առաքելութեան համար, թէ՞ ոչ: Ներկայացուցիչներու տունը ընդունեց բանաձեւը եւ Բոնկրեսին յղեց:

«Բոնկրեսին մէջ չորս ժամ տեւած ոգետրուած ճառախօսութիւններով զանազան կարծիքներ յայտնուեցան: Օհայոյէն Չարլզ Յենրի Կրոսվենըր (1833-1917) նկատեց, որ բանաձեւը ամենէն անզօր եւ ամերիկացի ժողովուրդին անվայել արտայայտութիւնն է: «Անոնք մեզմէ հաց խնդրեցին եւ մենք անոնց քար կու տանք: Անոնք մեզմէ ձուկ խնդրեցին քրիստոնէայ ժողովուրդի մը հզօր բողոքով, եւ մենք անոնց կու տանք օձաբարոյ գծուծ ներողամտութիւնով՝ թրքական կառավարութեան ոտքերուն»: Ինչո՞ւ պահանջեց ան, Միացեալ Նահանգները այլ ժողովուրդներէն պիտի խնդրէ ընել այն՝ ինչ որ մենք կատարեալ իրաւունքը ունինք կատարելու: «Նիւ Եորք Թրիպիւն»-ի թղթակիցը, որ ներկայ էր կ'ըսէ, թէ առնուազն ներկաներուն 8-էն 7-ն համաձայն էր բանաձեւին, եւ ի վերջոյ 143 թեր եւ 26 դէմ ձայնով, որոնց մեծամասնութիւնը դեմոկրատներ էին, բանաձեւը անցաւ»:


«Այս ճառախօսութիւններուն եւ Բոնկրեսին համատեղ ընդունուած բանաձեւին մէջ առաջին անգամ ըլլալով շեշտը դրուեցաւ պե-



Բլարա Պարթըն



Շորճ Հօր



Չարլզ Ֆ. Կրոսվենըր

տական, կառավարական քաղաքական ճնշումի վրայ, հարցին տուն տուող պատճառները վերցնելու, քան թէ՛ առժամեայ դարման՝ նպաստ բաժնելու»:

Հայկական հարցին նկատմամբ շատ անելի գործնական ու մարդկային արժէքներու եւ արդարութեան վրայ հիմնուած տեսակետեր դրսեւորուեցան 1895-ի Ներկայացուցիչներու տան եւ Բոնկրեսին մէջ: Այսօր, վերջապէս, նոյնը կրնանք ըսել 2019-ի Ներկայացուցիչներու տան եւ Բոնկրեսին մասին:

ՅԱՐՈՒԹ ՉԵՔԻՃԵԱՆ

* *Լուսարանութիւնները իմս* (1) https://en.wikipedia.org/wiki/Merle_Curti_Award

(2) *American Philanthropy Abroad: A History*, Merle Curti, Rutgers University Press, 1963, New Brunswick, New Jersey, 670 pp, Library of Congress Catalogue Card Number:

62-18950: «Ամերիկեան արտերկրի մարդասիրութեան պատմութիւնը»:

(3) <https://www.newspapers.com/image/78946844>

(4) *Contemporary American accounts-include Edwin M. Bliss*, «Turkey and the Armenian Atrocities» (London: T. Fisher Unwin, 1896); H. Allen Tapper, Jr., «Armenia:

Its Present Crisis and Past History» (Baltimore and New York: John Murphy, 1896) and Frederick D. Greene, «The Armenian Crisis in Turkey» (New York; G. P. Putnam, 1895:

(5) *Ամերիկեան միսիոնարական կազմակերպութիւն, հիմնուած 1810-ին:* https://en.wikipedia.org/wiki/American_Board_of_Commissioners_for_Foreign_Missions

ԽԵԼՔԻ ԳԱԼՈՒ ԵՒ ԱՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Վերջին տարիներուն բազմաթիւ յօդուածներով եւ այլեւայլ առիթներով յատուկ շեշտը կը դրուի հայապահպանման աշխատանքներուն եւ ծրագիրներուն վրայ:

Այնքան շատ կը խօսուի որ այլեւս միտքերուն արտադրելիք բան չմնաց, իսկ լեզուները չորցած են անդադար քարոզներէն: Սակայն եթէ սփիւռքի մէջ հայապահպանումը բնական երեւոյթ եւ անհրաժեշտ քայլ կը համարուի՝ հայաթափման սաստկացող հոսանքին դէմ պայքարելու համար, ապա Յայաստանի մէջ այդ ուղղութեամբ ծրագիրներ մշակելու երեւոյթը կը նշանակէ, որ երկիրը բարոյական եւ մշակութային իմաստով սնանկանանալու վրայ է: Յայ թերթերէն լուրեր քաղող կամ ընկերային ցանցերու անջրպետին մէջ մնայուն ներկայութիւն եղող հայը վերջին շրջանին անպայման նկատած կ'ըլլայ որ աննպաստ, չըսելու համար վտանգալից կացութիւն մը ստեղծուեցաւ հայրենիքին մէջ, եւ անիկա օրըստօրէ կը վատթարանայ եւ մօտալուտ լուծման ոչ մէկ նշոյլ կ'երեւի: Յայաստանը հայկականութեան աւազան ըլլալով, որ կոչուած է ազգային ինքնութիւն, գիտակցութիւն եւ արժէքներ հայթայթելու՝ մշակութային եւ բարոյական մաշումի տակ եղող սփիւռքի բոլոր գաղութներուն, այսօր ինք օգնութեան կարիք ունի: Մէկուկէս տարի առաջ ամբողջ հայութիւնը ցնծաց եւ ողջուեց հին իշխանութեան տապալումը եւ «Դուխով յեղափոխական»-ներու իշխանութեան գալը:

Բայց եւ այնպէս նորերու կառավարման երթը հազիւ սկսած, գայթակղութիւն գայթակղութեան կը հետեւի: «Նոր Յայաստան» ըսելով կը ջլատուի ազգային համերաշխութիւնը, կը զարգանան անհանդուրժողական երեւոյթները, հարցականի տակ կ'առնուին ազգային



դիմագիծ պահող արժէքները (լեզու, կրօնը, պատմութիւնը): Կառավարութեան հովանաւորութիւն կը վայելեն միասեռականներու, որձեւեզներու եւ սեռափոխուածներու իրաւունքներուն պաշտպանութիւնը քարոզող զազրելի նախաձեռնութիւններ: «Նոր Յայաստան» ըսելով կը խրախուսուին այլասերումին ծնունդ եղող ապագային երեւոյթները, կը քաշուին բեւեռացման գիծերը, կը հիւսուին եւ կ'ամրապնդուին բաժանարար

պատերը: «Յեղափոխական» իշխանութիւն ըսելով, նախարարական պաշտօններուն կը նշանակուին այնպիսի անձեր, որ եթէ անոնց քայլերէն դատենք, այն եզրակացութեան պիտի հասնինք, որ օտար օրակարգերը հետապնդելով ուրիշին շահերուն կը ծառայեն անոնք, ոչ թէ սեփական ժողովուրդի: Ո՞ր հասանք: Յայութեան Դատը պաշտպանած եւ իրենց արիւնով հայրենի հողը ոռոգած նահատակներուն գերեզմանները կը պղծուին, կ'անարգուի անցեալի հերոսներու յիշատակը, կը թունաւորուի ընդհանուր մթնոլորտը: Ա՞յս էին ակնկալութիւնները բարոյահոգեբանական խարխափումի մէջ ապրող Յայաստանի հայութեան: Ա՞յս էին սպասումները ահագնացող քայլերով դէպի ծուլում վազող եւ թթուածինի պէս վերաթարմացման եւ վերահայացման կարիք ունեցող սփիւռքի հայութեան: Ո՞չ եւ ո՞չ: Յայաթափումի անբացատրելի արշաւին լծուելու փոխարէն, հայրենի իշխանութիւնները հայապահպանման աշխատանքներուն նոր թափ հաղորդելու մասին պետք է խորհին: Գոնէ դրդալից ճառերը արտասանելու եւ վերածական ծրագիրներու մասին խօսելու փոխարէն, բուն գործին ձեռք պետք է զարնեն: Յայապահպանումը մեռեալ է, եթէ այսօր փոխգիշումներու մասին կը խօսուի Արցախի հարցով: Արդեօք Շուշին ազատագրող

տղաքը Զարինտակի բարձունքներեն մագըլ-
ցած ատեն զիջումներուն մասին կը խորհեի՞ն:
Ո՛չ: Հողերու յանձնումը հայաթափում մըն է,
հայապահպանում չէ:

Մենք յաղթական կողմ ենք եւ մեր սրբա-
զան իրաւունքն է պահել ու պաշտպանել ար-
դար պայքարով նուաճած մեր յաղթանակը:
Սակայն այս բոլոր հարցերէն աւելի լուրջ
խնդիր մը կայ, որ հարցականի տակ կ'առնէ
իբրեւ երկիր անկախ ապրելու մեր իրաւունքը:
Հայ ենք միշտ կ'ըսենք, որ թուրքերը կը խեղա-
թիրեն մեր պատմութիւնը, կ'աղաւաղեն դէպ-
քերուն եութիւնը, կը քանդեն եւ կը ջնջեն հայու
հետքը մեր բնագրաւուած հողերուն վրայ:

Սակայն մենք հայերս, թուրքերէն աւելի
վատ ենք, աւելի նենգ ու անգութ: Մինչ երբեմն
ցեղասպան Թուրքիայէն կը հասնին լուրեր, որ
հայ եկեղեցւոյ մը նորոգութեան հրաման
տրուած է, Հայաստանի մէջ կը շարունակեն
կիսաքանդ, աւերուած կամ խանութներու վե-
րածուած պատմական շէքեր մնալ:

Արամի տունը անտէր ու լքուած աղբանոցի
պատկեր մը կը պարզէ այսօր, երանի կու
տանք որ անառականոցի չվերածուեցաւ:

Արդեօք ազգ մը իրաւունք ունի՞ ազատ ու
անկախ հայրենիքի մէջ ապրելու, եթէ իր ան-
կախութեան կերտիչը մոռացութեան մէջ թաղ-
ւած է եւ անտեսուած կը մնայ անոր պետակա-
նակերտ գործունէութիւնը: Մինչ հայութեան
թշնամիները կ'աշխատին սեւ մուր քսել սար-
դարապատեան փառքը կերտած եւ անկախ
հանրապետութեան ծնունդ տուած հերոսնե-
րու յիշատակին, հայրենի ժողովուրդը ինք կը
զլանայ իր իսկ բնական հողերու ազատագ-
րումը ապահոված գործիչներուն հերոսացու-
մը:

Եթէ 28 մայիս 1918-ը ոսկեզօծ տառերով
չփորագրուի եւ իր արժանի պատուանդանը
չգրաւէ մարդոց միտքերուն եւ սիրտերուն մէջ,
հայապահպանումը պարապ խօսքի, իմաս-
տազուրկ կարգախօսի եւ անիրագործելի
ծրագիրի սահմաններէն դուրս պիտի չգայ եր-
բեք:

Վերջ պէտք է տրուի հայրենի տարածքին
կարմիր ժանտախտին՝ խորհրդային գաղա-
փարախօսութեան տարածման եւ հաստատ-
ման նուիրուած եւ ազատ ու անկախ Հայաս-
տանը կործանած ազգադաւ գործիչներու փա-
ռաբանութեան, փողոցները պէտք է դադրին

անոնց զգուելի անունները կրելէ, եւ երկրի
տարբեր մասերուն մէջ անոնց ի պատիւ
տնկուած արձանները եւ յուշատախտակները
պէտք է վերցուին:

Փառաբանութեան, յարգանքի եւ յիշատա-
կութեան արժանի բուն հերոսները Հայաստա-
նի եւ հայ ժողովուրդի ազատութեան եւ ան-
կախութեան համար պայքարած եւ իրենց մա-
քուր արիւնը նուիրաբերած մեր յեղափոխա-
կան գործիչներն են: Հայապահպանումը ան-
մատչելի երազ մը չէ, ոչ ալ «Դարու Ծրագիր»-ի
մշակումը կ'ուզէ, այլ ցանկութիւնն եւ կամքը
միայն:

Հետեւաբար, իմ մաղթանքս է, որ Հայաս-
տանի ներկայ իշխանութիւնները եթէ իրենք
գիրենք յեղափոխական կը կոչեն եւ իրապէս
կ'ուզեն Նոր Հայաստան կերտել, Հօգո Հայաս-
տան կերտել, տնտեսական ծրագիրներու եւ
ժողովրդավարական բարեփոխումներու կող-
քին, թող յանդուգն եւ իսկապէս յեղափոխա-
կան քայլ մը առնեն՝ լծուելով նախընթաց չու-
նեցող շատ պատասխանատու աշխատանքի
մը մէջ, որ կը նպատակադրէ. ա) յեղափոխա-
կանացնել հանրային կարծիքը, բ) յեղաշրջել
տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած
այլասեր մտայնութիւնը, գ) հաւատարմութիւն
ու յարգանք ներշնչել ազգային արժէքներու
հանդէպ, դ) չեզոքացնել օտարածին բարքե-
րուն եւ քաղաքական տրամադրութիւններուն
նուիրուելու պատրաստութիւնը, ե) մաքրել
երկրի եւ ժողովուրդի հետ կապուած պատմա-
կան իրադարձութեանց խեղաթիրուած
պատկերացումները եւ բնագրօսիկ վարկած-
ները, զ) հրաժարիլ բեւեռացման տանող քայ-
լերէն, եւ վերջապէս վերցնել վարկաբեկիչ քօ-
ղը անկախութեան սերունդէն՝ պատմական
ճշմարտութիւնները վերահաստատելով:

Այսպիսով միայն Հայաստանի իշխանու-
թիւնները երկրին նոր դիմագիծ մը պիտի տան
եւ ապահովեն անոր լիակատար ազատու-
թիւնը: Հակառակ պարագային, եզրակացու-
թիւնը շատ պարզ է. այնքան ատեն, որ Արամը
կը շարունակէ Կասեանի շուքին տակ մնալ
«Նոր Հայաստան» ըսուածը գոյութիւն չունի,
իսկ հայաթափումը կը շարունակէ երաշտի մը
պէս ցամքեցնել հայոց աշխարհը:

ՍԵՐԺ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

«Ճանչնալ այն ամենը, որ սխալ գործեր են՝ ըլլայ այդ սովորական կեանքի մէջ, ընտանիքի թէ բարեկամներու. ճանաչումը ուժ է»:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան նախագահ

Փտածութեան հայերէն հոմանիշները կամ բացատրութիւնները կուզան որպէս «նեխածութիւն», բայց նաեւ իբրեւ «անբարոյականութիւն»: Այս իմաստով՝ փտածութիւնը, պատմութեան ընթացքին եւ մինչեւ մեր օրերը, ստացած է ու տակաւին կը ստանայ տարբեր բովանդակութիւններ:

Եթէ անհկա մէկ կողմէ առնչուած է ղեկավարի կամ պետական կառոյցի անբարոյական կարգավիճակներուն, ուր անոնց ստացած հեղինակութիւնը կը գործածուի ապօրինի ձեւով հարըստութիւն դիզելու, կեղեքելու եւ օրինական կերպով իրենց տնօրինած լիազօրութիւնները գործածելու՝ սանձարձակ կերպով եւ յօգուտ իրենց:

Փտածութիւնը կ'ընդգրկէ նաեւ քաղաքական պիտակ, բայցեւայնպէս ան կը հարուածէ կրթական, աշխատատեղական ու բանուորական տարբեր կառոյցները, ինչպէս նաեւ այլ մարզեր, հասնելով մինչեւ ընկերային ու կրօնական մարզերուն:

Կրօնական փտածութիւնը՝ իմա անբարոյականութիւնը, պատմութեան ընթացքին, իր տարբեր երեւոյթներուն ընդմէջէն, նաեւ ճամբայ հարթած է եկեղեցական բաժանումներու պարագային:

Այս դիտանկիւնէն մեկնելով կրնանք հաստատել, թէ փտածութիւնը իրական է եւ ան իր մէջ միայն նիւթական-տնտեսական կեղեքում չի բովանդակեր: Անոր մէջ կ'իյնայ նաեւ բարոյական ու ընկերային իրաւունքներու անտեսում, մարդկային արժէքներու ոտնակոխում, ցեղապաշտական ու ընկերային դասակարգային խտրականութիւն եւ բաժանում: Փտածութիւնը, որ սկսած է մարդկային պատմութեան սկիզբէն մինչեւ օրս տակաւին կը շարունակուի:

Կրագ ակնարկ մը նետելով ներկայ աշխար-

հին կարելի է տեսնել, թէ ինչքան թոհուփոհ կայ ամենուրեք, եւ ամէն տեղ կը հնչեն մարդկային կեանքի բարուք արդարութիւն եւ առողջ կենսամակարդակ հաստատող պահանջներ:

Համաշխարհային հարթակի վրայ 2019-ի իրադարձութիւնները լաւ ցուցանիշներ են այս բոլորին: Հարաւային Ամերիկայէն սկսեալ մինչեւ Եւրոպա ու Ասիա, ինչպէս նաեւ Միջին Արեւելք, ու վերջապէս՝ Լիբանան: Այս վերջինը դարձաւ մէկ ապրող վկայութիւն մը, ուր ժողովրդային ընդվզումը փտածութեան դէմ չի բացառեր ոչ մէկ ղեկավար: «Բոլորը՝ այսինքն բոլորը» կարգախօսը վերածուեցաւ փտածութեան դէմ ըմբոստութեան մեծ ալիքի:

Բայց յատկանշականը այն էր, որ լիբանանեան ձայնասփիւռի կայանի մը երիտասարդ խօսնակը տիրող կացութեան մասին կ'արտայայտուէր ըսելով, որ երկրին ընդհանուր քաղաքակրթութիւնը «Փտածութեան քաղաքակրթութիւն» է:

Փտածութեան քաղաքակրթութիւն: Քաղաքակրթութիւնը, հոն ուր մարդկային կեանքերը կը բնորոշուին եւ կը կազմուի՞ն: Եւ այս՝ փտածութեան ընդմէջէ՞ն:

Մայր հայրենիքն ալ անպակաս չէր այս «ըմբոստութենէն»: Եթէ ըմբոստութեան եղանակը եղաւ «թաւշեայ», առանց մարդկային առճակատումի եւ զոհի, սակայն մնաց նոյն ընդվզումի բովանդակութեան մէջ: Բաւարար է այսքան փտածութիւն:

Սակայն փտածութիւնը ախտ է, յոռի վարք ու բարք, որ ուղղակիօրէն առնչուած է մարդկային ու հաւաքական, ինչպէս նաեւ ազգային-պետական ու անոր բարոյական՝ իմա բարոյագիտական հասկացողութեան: Թէ ո՞ր կը կայանայ նշեալ հաւաքականութեան-պետականութեան բարոյական չափանիշերու ռազմավարութիւնը՝ համընդհանուր դաստիարակութեան գործընթացին մէջ:

Երբ ուսանողներ էինք Պէյրութի հայկական վարժարաններու մէջ մեր կրթական ծրագրին մէջ ներմուծուած էր «Ազգային կրթութիւն» դասապահը՝ շաբաթական մէկ պահի դրութեամբ:

Այդ օրերուն հաւանաբար շատ չէինք կրնար ըմբռնել այդ դասապահի խորքային կարեւորութիւնը, սակայն այսօր՝ այո՛: Յոն էր, որ կը սորվեցնէին մեզի թէ ի՞նչ տեսակի քաղաքացիներ պէտք էր ըլլայինք, ինչպիսի՞ յարաբերութիւն եւ ներդրում ունենայինք մեր երկրին ու պետականութեան հանդէպ: Այս դասապահերուն մէջ չկար կրօնական բարոյագիտութիւն, բայց կար քաղաքացիական բարոյագիտութիւնը, ուր անհատը անկախ իր կրօնքէն եւ լեզուամշակութային ինքնութենէն պիտի սորվէր ըլլալ բարոյական չափանիշներով օժտուած քաղաքացի:

Բայց կ'արժէ նաեւ նայիլ ու վերանայիլ Աստուածաբանական ու Աստուածաշնչական հասկացողութիւններուն, նոյնիսկ փտածութեան ընդհանրական բացատրութիւններուն ընդմէջէն: Այս առումով երբեք մտահան պէտք չէ ընել, թէ Աստուածաբանութիւնն ու Աստուածաշունչը կը մտնեն մարդոց հաւաքական կեանքերուն մէջ եւ ունին ըսելիք ու կեցուածք՝ տիրող մտահոգութիւններուն նկատմամբ:

Աստուածաշունչին մէջ, փտածութիւնը մարդկային «մեղքի» ազդեցութիւններէն մէկն էր, որ հետեւանք էր նոյն մարդուն յանցագործութեան: Սկիզբէն Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, իմա՝ դրախտը, որ զուրկ էր ամէն նեղութենէ, հիւանդութենէ եւ մահէ: Բայց Ադամն ու Եւան «անհնազանդ» եղան Աստուծոյ ու «մեղքը» մտաւ «աշխարհին» մէջ: Այս մեղքն է, որ վարակեցաւ ու հիւծեց Ադամն ու Եւան, ինչպէս նաեւ բոլոր մարդկութիւնը, որ յաջորդեց անոնց: «Վասնզի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ եւ այն մեղքէն՝ մահը, այնպէս բոլոր մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնքն ալ մեղանչեցին» (Յռովմայեցիս 5:12): Փտածութիւնը Աստուածաշունչի մէջ բարոյական ու հոգեւոր «նեխածութիւն» եւ «անկում» է, որ կը բացատրուի ու կ'արտայայտուի Աստուծոյ նկատմամբ մարդուն «անհնազանդութեամբ»:

Այդ երեւոյթը կը շարունակուի: Նոյի ժամանակ փտածութիւնը շատ անելի սաստկացած էր: «Եւ երկիրը Աստուծոյ առջեւ ապականեցաւ եւ անիրաւութեամբ լեցուեցաւ: Աստուած երկրի վրայ նայեցաւ եւ տեսաւ ապականած էր, վասնզի երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան ապականեր էր»: (Ճննդոց 6:11-12):

Այս իմաստով, փտածութիւնը ուղղակիօրէն անչլուած է մահուան: Եթէ ոչ ֆիզիքապէս, բայց հոգեպէս: «Դուք յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած էիք...» (Եփեսացիս 2:1): Եւ կը շարունակէին քալել նոյն ընթացքով: «Անոնց մէջ ժամանակին կը քալէիք այս աշխարհին բռնած ճամբո-

վը, այս օրին իշխանութեանը իշխանին ուզածին պէս...» (Եփեսացիս 2:2):

Բայց կայ միախառնութիւնը եւ փտածութենէ դուրս գալու ելքը: «Բայց Աստուած, որ մեծ է ողորմութիւններով, իր առատ սիրովը, որով մեզ սիրեց, երբ յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ քրիստոսին հետ կենդանացուց»: (Եփեսացիս 2:4):

Եւ այս առումով պիտք է հասկնալ, թէ ինչպէս փտածութեան ուժը կ'անշարժանայ իմա՝ կը մեռնի, երբ Աստուծոյ ուժը ներմուծուի մեր կեանքերուն մէջ ու կեանք տայ մեզի:

Աստուծոյ ուժը՝ Բարին է, ու անոր ճամբան դժուար է: Բայցեւայնպէս կեանք կը պարգեւէ: Փտածութեան ուժը՝ չարն է ու անոր ճամբան դիւրին է...: Բայց եւ այնպէս կեանքեր կը քանդէ...:

Յայաստանի Յանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան, երբ հարց տրուեցաւ իրեն թէ ինչու՞ Թուրքիա տակաւին մինչեւ օրս Յայոց ցեղասպանութիւնը չէ ճանչցած, ըսաւ.

«Ճանչնալ այն ամէնը որ սխալ գործեր են՝ ըլլայ այդ սովորական կեանքի մէջ, ընտանիքի թէ բարեկամներու. ճանաչումը ուժ է: Եւ եթէ Թուրքիա ճանչնայ Յայոց ցեղասպանութիւնը, այդ իրականութիւնը ճամբայ պիտի բանայ Թուրքիոյ՝ դառնալու համար ժողովրդավարական երկիր»: Պետք է չարը ճանչնալը եւ զայն ընդունիլ իբրեւ սխալ, ինչպէս նաեւ բարին ընկալել իբրեւ ուժ է, որ կեանքեր կը պարգեւէ:

Ապահովութիւնը կամ խոստումը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ Աստուծոյ ուժը՝ Բարին, պիտի կարենայ յաղթել չարին, իմա՝ «վիշապին», որքան ալ դժուար ըլլայ անոր ճամբան: «Ուստի վար ձգուեցաւ մեծ վիշապը, այն առաջուան օձը, որ բանասարկու ու սատանայ կը կոչուի, որ բոլոր աշխարհը մոլորեցուց...» (Յայտնութիւն Յովհաննու 12:9):

Յետեւաբար, քիչ մը ամէն տեղ, որոնց մէջ նաեւ Լիբանան, տակաւին ոտքի կանգնած են անոնք, որոնք կ'ուզեն «վար ձգել վիշապը», իմա՝ չարը, փտածութիւնը, որովհետեւ անոնք կը ցանկան ունենալ Բարին՝ կեանք պարգեւողը:

Բարին կերտելու համար մենք պէտք ունինք քաղաքակրթութեան մը, որ փտած չէ: Այլ քաղաքակրթութիւն մը, որ Բարին է ու կեանք կը պարգեւէ:

Բարին կերտելը դժուար ճամբայ է: Բայց այս դժուար ճամբան մեզ կը գորացնէ: Չօրութիւն մը, որուն միջոցաւ կրնանք ըսել. «Ոչ՝ փտածութեան քաղաքակրթութեան»:

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԸԷՊԵՃԵԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Կեանքի երկարաձգումը՝ մահը ուշացրելու համար է: Իսկ բարենորոգումը՝ կեանքի բարելաումն է, անոր յառաջդիմութեան համար: Այլ խօսքով՝ անոր ժամանակին հետ քայլ պահելուն համար, որ ոչ թէ սոսկ կ'ուշացնէ մահը, այլ՝ կ'արգիլէ գայն, պտղաբեր կեանքը երկարաձգելով: Ինքնանպատակ երկարացուած կեանքը՝ անպտուղ է. անհոգի դիակ մըն է, կամ՝ անհիւթ պտուղ: Առանց յառաջդիմութեան, երկարաձգուած կեանքը, որ ժամանակի հետ քայլ պահելով չէ բարենորոգած ինքզինք, մահուան համազօր է: Անհոգի դիակի վերածելու դատապարտուած է, եթէ նոյնիսկ մեքենականօրէն գոյատեւէ, ինչպէս է պարագան կարգ մը եկեղեցիներու, որոնք կը մերժեն բարենորոգուիլ:

Աշխարհահռչակ բժիշկ ու կենսաբան Աննա Ասլան (ռումիլահայ բժշկապետը, որ հնարեց երկարակեցութեան շիճուկ մը), լրագրողներու հարցումին պատասխանելով ըսաւ. «Իմ նպատակս մարդոց կեանքին ինքնանպատակ ու մեքենական երկարաձգումը չէ, այլ՝ անոնց առողջ ու պտղաբեր կեանքին երկարաձգումը...»: Անոնց կեանքին յառաջդիմութիւնը:

Յառաջդիմութիւնը պարուրածէ գարգացումն է. միշտ՝ դէպի վեր բարձրացում...:

Յառաջդիմել կը նշանակէ գոյատեւել՝ բարձրանալով, բարենորոգուելով կամ փոխակերպուելով...: Նոյնը մնալով կամ տեղքայլելով կարելի չէ գոյատեւել, քանի որ ամեն իրական «գոյ» անսահման եւ անվախճան չէ եւ չի կրնար ըլլալ: Որովհետեւ ամեն իրական «գոյ», միմիայն՝ տարածութեան մը եւ ժամանակի մը մէջ կը գոյատեւէ, հոսսկ՝ մահանալու կամ փոխակերպուելու համար:

Մարդկային պատմութեան պարուրածէ գարգացումն ու ամեն իրական «գոյ»-ի սահմանափակումը՝ տարածութեան մը եւ ժամանակի մը մէջ, գիտական ճշմարտութիւններ են, համաձայն՝ պատմական եւ դիալեկտիկական մատերիապաշտ փիլիսոփայական ուսմունքին:

Յետեւաբար, կրօններու համար եւս, յառաջդիմելով գոյատեւելու համար, իբր դեռեւս ապրող կրօն, ան պարտի դիմագրաւել բարենորոգուելու հրամայականին մարտահրաւերը...:

Համօ Սահեան, գրած է սա կենսասիրական տողերը.
*Սպիտակել եմ՝
 Հոգսերի ձեռից,
 Տարիքի բեռից...
 Սպիտակել եմ՝
 Սակայն ծերանալ
 Չեմ կարողանում:*

Անշուշտ, ան դժգոհ չէ որ չի՛ կրնար ծերանալ... ասոր գաղտնիքը բացայայտած է սա պատճառով.
*Առ քո թելերին՝ տար ինձ ժամանակ,
 Ես ետ մնալուց շատ եմ վախենում:*

Ան՝ յետամնաց երկարակեցութիւն (ծերութիւն) չի սիրեր, եւ ուրեմն՝ կը դիմէ ինքնաբարենորոգումի... յառաջդիմելու եւ ժամանակին հետ քայլ պահելու համար:

Հայաստանեայց եկեղեցին, եթէ մտահոգութիւնը ունի ժամանակէն ԵՏ ՉՄՆԱԼՈՒ ԵՒ ՉԾԵՐԱՆԱԼՈՒ, թող հետեւի Համօ Սահեանի օրինակելի տիպարին:

Իսլամական կրօնը եւս պարտաւոր է դիմագրաւելու բարենորոգումի հրամայական մարտահրաւերը:

Թունուզի մեծ բարեկարգիչ նախագահ Հապիպ Պուրկիպայի կրօնամշակութային հարցերու խորհրդական դոկտ. Ճաաֆար Ալ-Պաքլի վկայեց թէ՛ նախագահը ջերմ փափաքողն էր իսլամական կրօնի բարենորոգումին, եւ պատմեց. «Հապիպ Պուրկիպա իր շուրջ բոլորուած արաբ եւ օտար լրագրողներու հար-

ցումներուն պատասխանելով ըսաւ. «Տուէ՛ք ինծի կարմիր մատիտ մը եւ ես ձեր բոլորին առջեւ ջնջեմ **Քորանի սխալ համարները...**»: (Ասիկա, երբ տողերս գրողը «**Չարթօսք**» օրաթերթը կը ներկայացնէր թունու-



զի մէջ գումարուող պաղեստինցի գրողներու եւ լրագրողներու Թ. համագումարին, 1977):

Կրօնի մը հազարամեակ մը առաջ կիրարկուող աստուածաբանութեան **բարենորոգումը** պահանջող մեծ անհատականութիւնները կրօնատեսաց չեն, նաեւ՝ այդ հինին ու ժամանցուածին **պահպանումը** պահանջողները՝ **կրօնասէր չեն...**: Այս վերջին «կրօնասէր»-ի կեղծաւոր դիմակաւորն էր Թոնի Պլէր, որ նոյնքան կեղծաւոր բրիտանացի «**աշխատաւորական**» մըն էր: Միացեալ Նահանգներ իր այցելութեան, Պլէր կը գործածէր «կրօնասէր»-ի դիմակը: Երբ ամերիկացի լրագրող մը իրեն հարց տուաւ թէ՛ ինչու ան իր այս կրօնապաշտութիւնը չէր ցուցաբերած Անգլիոյ մէջ մինչեւ հիմա, Պլէր պատասխանած է. «Միացեալ Նահանգներու բնակչութեան երեք քառորդը **կրօնասէր են**: Ես հոս կրնամ ըսել թէ՛ ես ամէն օր Աւետարանը կը կարդամ, նոյնիսկ օդանաւին մէջ: Բայց եթէ ասիկա Լոնտոնի մէջ ըսեմ, զիս անմիջապէս **մտային հիւանդութեանց** բուժարան կը տանին: Զոն **կրօնասէր չեն**»:

Տողերս գրողը **ապակրօն** մըն է, բայց ոչ՝ **անհաւատ**, որովհետեւ **կը հաւատայ մարդուն** եւ մարդկութեան: Եւ երբ կը խօսի կրօններու **բարենորոգումի հրամայականին** մասին, ատիկա **միակ անկեղծ** թելադրութիւնն է՝ **յօգուտ կրօնին**: Ան՝ կեղծիքով, ձեռնոցով ու վախուորած վերապահութեամբ չի գրեր ազգային կամ հասարակական հիմնախնդիրներու մասին, ինչպէս պատգամած են մեր երկու մեծ բանաստեղծները՝ Նահատակ Դանիէլ Վարուժանն ու Արմենական տեսաբան Վահան Թէքէեանը: Այս երկրորդը գրած է. «Ինծի ոչ հաճելի է, ոչ ալ իմ սովորութիւնս է **ազգը յուզող խնդրի մը մէջ՝ զգուշաւոր կամ վերապահ դիրք մը բռնել**: Ասիկա պատասխանա-

տուութենէ **վախցողի** կամ իր դատաստանին վրայ **անվստահ մարդու** դիրքն է: Այսպիսի մեղադրանքէն գոնէ՛ մինչեւ հիմա, ինքզինքս ազատ կը զգամ»:

«**Քորան**»-ը՝ միաժամանակ, «**Աստուծոյ**

խօսք»-ն է եւ Մոհամետ Մարգարէի «վարքը» (սուննահ). անոր ունեցած վարքն ու կատարած գործերը:

Իսլամական կենցաղը կ'ընդգրկէ երեք առանցքներ՝ **տին** (կրօն), **տիւնիա** (համայնք) եւ տաուլա (պետութիւն): Այլ խօսքով, այս երեք «Տ»-երը **սերտօրէն** իրարու զօդած են հաւատացեալ մարդուն **հոգեւոր, համայնքային եւ քաղաքացիական** կեանքը. եւ ուրեմն՝ **կրօն** ու **պետութիւն** անջատուած չեն իրարմէ... ինչ որ մեծագոյն խոչընդոտը կը նկատուի՝ որպէս ընդհանուր կանոն, իսլամական երկիրներու յառաջդիմութեան դէմ, **հրամայական դարձնելով՝** իսլամական կրօնի **բարենորոգումը**: Այս հրամայականին տուն տուող **գլխաւոր պատճառը** սակայն, իսլամական կրօնի ամրացումն է, յար եւ նման՝ քրիստոնեական կրօնի ամրացումին, որուն հետեւանքով՝ արդարադատ **Յիսուս** վերածուեցաւ բռնակալ Քրիստոսի: (Այս փոխակերպումին մասին մանրամասն տեսնել՝ Eric Fromm, «The Dogma of Christ» հատորը):

Իսլամական պետութեան օրէնսդրութիւնը կամ օրէնսգիրքը **Շարիաթն է՝** կրօնական ուսմունքի սկզբունքներն ու կանոնները, որոնք **ենթադրուած են** ըլլալ Աստուծոյ խօսքերը: Եւ՝ բարենորոգումի թշնամի հաստատումին (արդիական իմաստով՝ **դիւանակալութեան**, պիւրոքրաթիայի) մարդիկ կը չարաշահեն Քորանի համար 59.19 սուրաթը, որ կ'արգիլէ **ինքնամոռացումը**, եւ կ'ըսեն թէ՛ **եթէ պետութենէն անջատենք մզկիթը**, մոռցած կ'ըլլանք (կամ՝ մոռացութեան տուած կ'ըլլանք) Աստուծոյ խօսքը... որ համագոր է **ինքնամոռացումի...**

Սկզբունքով, իսլամներէն կը պահանջուի յարգել **Շարիաթը** համայնքին մէջ, հիմնելով իսլամական պետութիւն, որպէսզի իրագոր-

ծուի **արդարադատութիւնը**, համայնքային (**համայնական**) բարիքին համար: Քանի որ, իսլամական պետութեան **պարտականութիւնն է** հաստատել **ընկերային արդար կարգեր**, հիմնուած համերաշխութեան, յարգանքի, ազատութեան եւ արժանապատուութեան սկզբունքներուն վրայ, ուր բոլոր մարդէակները ընդունուած են՝ **իրենց բոլոր տարբերութիւններով հանդերձ**: Ուրեմն, **այլազանութիւնը**՝ ոչ միայն ընդունուած է եւ հանդուրժուած, այլեւ՝ գնահատուած է, ըստ **Շարիաթի**, իսլամական պետութեան մէջ:

Տակաւին, Քորանի թիւ 2.195 համարը կ'արգիլէ **անձնասպանական** գործողութիւնները, ըսելով. «Դուք ձեզ՝ ձեր ձեռքով մի՛ նետէք դէպի ինքնափճացում»: Եւ թիւ 4.29 համարին մէջ կ'աւելցնէ. «Ով որ կը գործէ այս օրինազանցութիւնը, չարամտութեամբ կամ գիտակցաբար, մենք զինք պիտի դատապարտենք դժոխքի»: Որովհետեւ՝ իսլամական ուսմունքին համաձայն, անձնասպանութիւնը չարամիտ մսխումն է Աստուծոյ նուիրած սրբազան նուերին:

Մաքրամաքուր իսլամական ուսմունքը՝ **մունետիկն է** խաղաղութեան, մարդոց եւ ժողովուրդներուն միջեւ, եւ անոր ողջոյնը՝ **«Սալամ Ալէյքում»** է...: Սակայն, միաժամանակ, չի բացառեր պատերազմի անհրաժեշտութիւնը ընդդէմ՝ նախայարձակումի, բռնակալութեան եւ անարդարութեան: **«Քիթալ»**-ը (պատերազմիլը, մարտնչումը) անհրաժեշտութիւն մըն է, ինչպէս՝ խաղաղութիւնը, հասարակութեան ու մարդոց կեանքին մէջ: Քորանի թիւ 60.8 համարը կ'արտօնէ **«Քիթալ»**-ը՝ բռնութեան, անարդարութեան եւ հաւատքի դէմ կռուող ուժերուն դէմ: Իսկ Քորանի թիւ 8.61 համարը կ'ըսէ. «Անոնք որոնք խաղաղութեամբ կը վարուին քեզ հետ, դուն պարտաւոր ես խաղաղութեամբ վարուելու անոնց հետ, **ապաւիսելով Աստուծոյ...**»:

«Քիթալ»-ը **երկրային** (այսինքն՝ **հողային** կամ **նիւթական**) նպատակ չի հետապնդեր, այլ՝ **անդենական կեանքին արժանանալու նպատակը ունի**: Քորանի թիւ 4.74 եւ թիւ 4.75 համարները կը բացատրեն թէ՛ **երկրային** շահադիտութիւններու համար պատերազմը համազօր է պատերազմելու՝ **Սատանայի** դատին, բռնատիրութեան եւ անարդարութեան

նպատակին համար: Իսկ Քորանի թիւ 28.83 համարը կ'ըսէ, թէ՛ **վերջնական յաղթանակը միշտ վերապահուած է՝ արդարութեան դատին**, Աստուծոյ դատին համար մարտնչողներուն **միայն...**:

Իսկ «Ճիհատ»-ը՝ հիմնովին տարբեր է **«Քիթալ»**-էն: Ան ունի երեք տարբեր ոլորտներ. անհատականը, խօսակցականը եւ ֆիզիքականը:

1. **Անհատական** ոլորտին մէջ, կը նշանակէ **հոգեւոր** պայքար՝ **ինք իր անձին դէմ**, իր հոգին մաքրելու համար սատանայական մտածումներէ եւ մեղաւոր գործեր կատարելու մղումներէ, փորձութեան մատուցելէ, տգիտութենէ եւ թուլութիւններէ...:

2. **Խօսակցական** ոլորտին մէջ, կը նշանակէ **ճշմարտախօս** ըլլալ՝ բռնատիրոջ դիմաց, անարդարին դէմ, եւ յանուն Աստուծոյ խօսիլ բարձրաձայն՝ արդարութեան ի խնդիր:

3. **Ֆիզիքական** ոլորտին մէջ, կը նշանակէ մարտնչիլ, պաշտպանելու համար իսլամները ընդդէմ՝ բռնութեան եւ Աստուծոյ թշնամիներուն: Յանուն Աստուծոյ այս տքնաջանութիւնը (**Ճիհատը**) բնաւ չի նշանակեր միւս կրօններուն դէմ պատերազմ: Սակայն, տիրող դասակարգերը՝ **երկրային** (հողային, տնտեսական) շահերու համար, նենգափոխած են, գլխիվայր շրջած են Քորանի թիւ 2.244 եւ թիւ 22.78 համարներու իմաստը, եւ «Ճիհատ» բառը ստացած է յարձակողական ռազմատենչութեան իմաստ՝ հայոց մօտ, երբ Մեծ եղեռնի մեծագոյն ոճիրին քարոզիչ շէյխուլ-իսլամները կը չարաշահէին **«Ճիհատ»**-ը...:

Իսլամական կրօնին սկզբունքներէն է նաեւ՝ ոչ միայն հանդուրժողականութիւնը այլազանութեան եւ այլ կրօններու նկատմամբ, այլ այն, որ կրօնի պարագային, չկայ, արգիլուած է՝ **բռնադատումը («լա՛ իքրահա ֆիլ-տին»)**: Այսինքն՝ կրօններու միջեւ տարբերութիւնները, կամ՝ տարակարծութիւններն անգամ, **պետք չէ լուծուին պատերազմով**, այլ՝ **խաղաղ՝ երկխօսութեամբ միայն...**: Այս հարցին շուրջ կարելի է յիշել, օրինակ՝ հեղինակաւոր իսլամագետ փրոֆ. Յանս Զուկի այն բանաձեւումը, զոր ան կատարած է 1993-ին, Շիքակոյի մէջ գումարուած, Կրօններու համաշխարհային խորհուրդի համաժողովի բեմէն, որ կ'ըսէ. **«Ազգերու միջեւ չկայ խաղաղութիւն»**

առանց կրօններու միջեւ խաղաղութան, եւ կրօններու միջեւ չկայ խաղաղութիւն՝ առանց կրօններու միջեւ խաղաղ երկխօսութան. **ա՛յս է իսլամի սկզբունքը**»:

Սակայն, դժբախտաբար, այս բոլոր մարդասիրական, արդարասիրական ու խաղաղասիրական սկզբունքները՝ գոյութիւն ունին, բոլոր կրօններու **սկզբնաղբիւրներու** մէջ ալ՝ **թուղթի վրայ միայն, գործնական գետնի վրայ** նենգափոխուած են, երբ կրօնները վերածուած են տիրող, շահագործող եւ բռնատիրող դասակարգերու **զինակիցները**՝ ժողովուրդին դէմ, փոխանակ՝ որպէս **հոգեւոր առաջնորդներ**, կանգնելու ժողովուրդի կողքին եւ շահագործող ու բռնատիրող դասակարգերու դէմ, ինչ որ կը կատարէ այսօր Ֆրանչիսկոս Ա. պապը Վատիկանի մէջ՝ **բարենորոգչական** յեղափոխութիւն մը ղեկավարելով: Նոյն Վատիկանը, միջնադարի խաւար տարիներուն, նոյնացած էր տիրող դաժան աւատապետական դասակարգին հետ, եւ դարձած դաժան **մենատեր մը, աստուածապետական միապետութիւն մը** (monarchie théocratique), հռչակելով՝ **«Արտաքոյ եկեղեցոյ՝ չիք փրկութիւն»** (Extra Ecclesiam Nihil Salus!), եւ նոյնիսկ՝ հաւատացեալները զրկեց Աստուծոյ հետ **ազատօրէն հաղորդակցելու իրաւունքէն**, եթէ ան **չենթարկուի** Վատիկանի արտօնութեան մենաշնորհին, որ կը հրամանագրէր. «To be in communion with God, one must pass by the Vatican»: Այս **մենաշնորհով յղփացումը** հասցուցած էր այն մոլուցքին, որով Վատիկանը՝ Աստուծոյ իրաւասութենէն խլած էր նոյնիսկ թողութիւն շնորհելու իշխանութիւնը, եւ ինք **կը վաճառէր «Թողութեան գիրեր»**...:

Իսլամական կրօնը, իր հերթին, շատ աւելի արագօրէն երկրայնացաւ, քանի որ արդէն՝ **ալ-իսլամու** տիկնոս ուա **տաուլա**, եւ կորսնցուց իր **հոգեւոր առաքելութիւնը**: Ան դարձաւ տիրող քաղաքական դասակարգին պաշտպանն ու զինակիցը, եւ Քորանի համարներու բարոյական արժեհամակարգը գլխիվայր շրջուեցաւ: Յանուն Աստուծոյ դատին **ճիհատը** վերածուեցաւ՝ ի խնդիր Սատանայի եւ անոր դաշնակիցներու դատին **Քիթալի**... ջնջելով այս երկուքին միջեւ գտնուող **կարմիր սահմանագիծը**, հասնելու համար մինչեւ **ՏԱՅԵՑ**-ի «խալիֆաթ»-ի **բարբարոսութիւնը**՝ ոչ միայն

անձնասպանութիւններու ճամբով **մարդասպանութեան**, այլեւ՝ **մարդակերութեան** (մարդու կուրծքը ճեղքելով՝ անոր սիրտը տաքտաք յօշոտելու հրէշութեան): (Այսպիսի հրէշային ոճիրներուն **նախընթացները** տեղի ունեցան Եւրոպայի մէջ, քրիստոնէայ յարանաւանութիւններու միջեւ 30 եւ 100 տարի տեւող բարբարոսային պատերազմներու ընթացքին, նաեւ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին, քրիստոնէայ խաչակիր զինեալներու հրէշային ոճիրները, զորս այստեղ մանրամասն նկարագրելն անգամ կը դժուարանայ տողերուս հեղինակին համար, որ չի զարմանար՝ թէ ինչու, նոյն «քրիստոնէայ» Եւրոպան պատրաստակամութիւն չուներ կանխարգիլելու, կամ գէթ՝ կասեցնելու Մեծ եղեռնի ընթացքին գործուած խենեշային, հրէշային ու բարբարոսային ոճիրները...:

Ֆրանսական յեղափոխութիւնը վերջ դրաւ կրօնական պատերազմներուն՝ թե՛ ներքին եւ թե՛ արտաքին ճակատներու վրայ, **սահմանադրականօրէն միայն** եկեղեցին անջատելով պետութենէն... այն յոյսով՝ թէ այսպիսով պետութիւնը չի չարաշահեր եկեղեցին, իր քաղաքական նպատակներուն համար, իսկ եկեղեցին այլեւս չի կրնար քաղաքական իշխանութիւն ունենալ... Սակայն, այս յոյսն ու ենթադրութիւնը անհիմն դուրս եկան, երբ եկեղեցին հրաժարեցաւ իր **հոգեւոր առաքելութենէն**. աւելի ճիշդ՝ չարափոխեց իր առաքելութիւնը եւ զինակցեցաւ երկրին տիրող դասակարգին հետ... **վերստին նոյնանալով անոր հետ**:

Վատիկանի պետութիւնը, տեսակ մը **համաշխարհային վերապետական աստուածապետութիւն էր**, մինչեւ Ֆրանչիսկոս Ա. իրաժարած է միջնադարեան խաւարի Վատիկանի դպրական (scholastique) աստուածաբանութենէն, եւ կը կիրարկէ **Ազատագրութեան Աստուածաբանութեան սկզբունքները**, որոնք **ժողովրդահայրենասիրական** ու **համայնական** հասարակարգի մը սկզբունքներն են...: Այսինքն, կը ջանայ եկեղեցիին վերադարձնել անոր **հոգեւոր առաքելութիւնը** եւ համամարդկայնական արժեհամակարգը: Այլ խօսքով՝ հիմնովին **կը բարենորոգէ** Վատիկանի եկեղեցին:

Այսպիսի **բարենորոգում** եւ **իսլամական**

ազատագրական աստուածաբանութեան մը որդեգրում կրնա՞նք սպասել իսլամական սիւննի եւ շիի **եսթապլիշմենթներէն...**:

Անցեալ դարերուն, **Քարամիթական շարժումէն** մինչեւ այսօր, եղան շարժումներ եւ անհատ շէյխեր ու աստուածաբաններ եւ աշխարհական մտաւորականներ ու հասարակական գործիչներ եւ պետական մարդիկ, որոնք պահանջեցին **բարենորոգումը** իսլամական Շարիաթին (ինչպէս տեսանք Թուլուզի նախագահ Յայիպ Պուրկիպայի օրինակը): Իսկ Նեկեւի շիի թեւին մէջ, Ալի Շարիաթին ձեռնարկած է շիի իսլամական բարենորոգումին Իրանի մէջ, ուր կը գործէ անոր շիիական Սոցիալիստ կուսակցութիւնը, զոր **տիրող իշխանութիւնը չի համարձակիր հալածել**, ասոր վայելած մեծ ժողովրդականութեան պատճառով, այլ՝ կը հալածէ կոմունիստական «Թուտեհ» կուսակցութիւնը, ասոր ապակրօնութեան պատճառով: Սակայն նախորդ բոլոր անհատ բարենորոգչականները հալածուեցան ու **մահուան դատապարտուեցան**, իսկ Յայկական Թուտուրակեան Բարենորոգչական Յեղափոխութիւնը արեան մէջ խեղդուեցաւ՝ Յայաստանեայց եկեղեցւոյ **եսթապլիշմենթին** ձեռամբ...:

* * *

Մեր ժողովուրդը իսլամական Չարիքը չտեսաւ, ո՛չ Արաբական Խալիֆաթի եւ ոչ ալ Օսմանական Խալիֆաթի առաջին դարերուն: Այդ դարերուն մենք վայելած ենք իսլամի **հանդուրժողականութիւնը**: Օսմանական Խալիֆաթի հանդուրժողականութիւնը, որ կը բխեր՝ ոչ միայն **Քորանի համարներէն**, այլեւ՝ **տնտեսական եւ հասարակական կեանքի կարիքներէն**, որոնք կը գտնուէին **բնիկ բնակչութեան** մօտ, եւ ոչ թէ **եկուոր** գրաւողներուն մօտ: Այս հանդուրժողականութեան առաջին դրսեւորումը՝ Յայոց Պոլսոյ պատրիարքութեան հաստատումն էր Սուլթանի ֆերմանով, որ կը ճանչնար **Էրմենի Միլլեթի** (Յայ ազգի) **կրօնակենցաղային ինքնավարութիւնը**: (Ուշագրաւ է, որ ճանաչումը Յայ ազգին է, եւ ոչ թէ կրօնական յարանուանութեան, որ կայ Լիբանանի մէջ... որ աննպաստ է մեզի համար): Յաջորդող սուլթաններու ֆերմանները՝ Երուսա-

ղէմի հայոց սրբատեղիները հաստատող, հիմնուելով Մոհամետ Մարգարէի, Ալլիի եւ Սալահէտտին Այուպի **հայաճանաչ** հրովարտակներուն վրայ, եւ մինչեւ 17-18-րդ դար, Օսմանեան Կայսրութեան վարչական բաժանումներու **քարտէսին** վրայ սահմանագծուած տարածքը՝ **Էրմենիստան Եյալեթին...**: (Ի դէպ, Յայ հողային դատին համար, եթէ մենք Սիջազգային Դատարանին կարենանք ներկայացնել՝ 17-րդ դարի քարտէսին մէջ սահմանագծուած այս **ERMENISTAN EYALETI**-ն, ուրիշ փաստերու կարիքը չի մնար: Ո՞վ եւ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ ձեռք բերել այս անհերքելի քարտէսէն վաւերական սմուշ մը...):

Մասնաւորաբար 19-րդ դարի վերջերուն է, որ Օսմանեան Խալիֆաթը սկսաւ **«իսլամ»**-ի անունով հալածել ու ջարդել հայերը, երբ կայսրութիւնը ներթափանցուած էր իր սրընթաց վերելքը ապրող Յամաշխարհային սիոնիզմով՝ Յերցելի ղեկավարութեամբ: 1894-1896 տարիներու **հայաջինջ** հալածանքները շարունակեցին **սիոնափանթուրք երիտթուրքերը** մինչեւ Մեծ եղեռն... դարձեալ՝ «իսլամ»-ի անունով:

Սիոնիզմն էր, որ Արեւմուտքի կայսերական տերութիւններուն դէպի Արեւելք ծաւալելու ծրագիր որպէս, մշակեց Փանթուրքիզմի ծրագիրը՝ Թուրքիայէն մինչեւ Չինաստան, անցնելով՝ Ազրպէյճանէն, Կասպից Ծովէն եւ Կեդրոնական Ասիայէն... ճամբէն աներելով՝ Արեւմտեան եւ Արեւելեան Յայաստանները, Ղարաբաղը, Իրանն ու Ռուսիան...: **Երիտթուրքերը** թքեր էին իսլամին վրայ. անոնք **թուրք ալ չէին**, այլ՝ **սիոնականներ...** ոչ՝ **անպայման հրեաներ**: Այս է գոյութեան պատճառը ոչ-թուրք փանթուրքիստներու, եւ՝ ոչ-հրեայ սիոնականներու, նաեւ՝ **հակա-փանթուրք** թուրքերու եւ **հակասիոնական** հրեաներու:

Սիոնիզմը եւ Փանթուրքիզմը **ոչ կրօն ունին** եւ **ոչ ալ ազգութիւն**: Անոնք կը ծառայեն բազմազգ եւ բազմակրօն **Արեւմուտքի կայսերապաշտութեան՝ Արեւելքի ժողովուրդներուն դէմ**:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

*Պէյրութ
17 դեկտեմբեր 2019*

ՄԵՐ ՍՐԱՀՆԵՐԸ

Յաճախ մտածած եմ սփիւռքեան գաղթածախներուն մէջ կառուցուած սրահներուն մասին, եւ փորձած վերլուծել անոնց մատուցած անգնահատելի դերակատարութիւնը հայապահպանման կամ հայակերտման գործին, յատկապէս երբ կը մտաբերեմ, թէ անոնք հանդիսացած են կրթամշակութային հանրային վայրերը, ուր մեր ժողովուրդին եւ մանաւանդ մատղաշ սերունդներուն փոխանցած են մեր ազգին պատկանող հոգեմտաւոր հարստութիւնները:

Չեմ կրցած գտնել չափանիշ մը, այդ դերը արժեւորելու, բացի մէկ բառ միայն՝ անգնահատելի, այդ՝ անգնահատելի:

Այդ սրահները դարձած են ազգային դարբնոցներ. գիր-գրականութիւն, մշակոյթ-երաժշտութիւն ու արուեստ մատուցելու վայրեր: Յաճախ անոնք դարձած են ու ծառայած որպէս վարժարաններ, մտքի լուսաւորութեան փարոսներ, հոգիի փարոսներով՝ եկեղեցիներուն հարեւանութեամբ ու թեւանցով:

Հոն փայլած են մշակոյթի, դպրութեան առաքելներուն հոգիները, իրենց հրամցուցած երկերուն եւ գործերուն ընդմէջէն, իրենց հոգիներուն՝ ներաշխարհներուն անհասանելի, անյատակ-յատակը բանալով:

Այնտեղ ելոյթներ ունեցած են ազգային, կրօնական ու կուսակցական ղեկավարներ: Հրապարակախօսներու «հրապարակները» հանդիսացած են մեր սրահները:

Դպրութեան ծարաւ հասարակութիւնը այնտեղ ճանչցած է իր ազգին բանաստեղծներուն, երգահաններուն, երգիչներուն, երաժիշտներուն, թատերագիրներուն, բեմադրիչներուն, ասմունքողներուն, խումբերուն թէ անհատներուն, մէկ խօսքով ազգին առաքելներուն...

Անգնահատելի...

Իմ կեանքիս տեսադաշտին վրայ հանդիպած սրահներուն մասին խօսելով, գրելով, այս սեղմ տողերով, չեմ յաւակնիր անելի բան

դար մը ազգին ծառայած սփիւռքի ամեն սրահներուն մասին արձանագրել, այլ այն սրահներուն մասին, որոնց ոչ միայն հանդիպած եմ, այլեւ այն սրահներուն մասին, որոնք իրենց անջնջելի դրոշմը ձգած են վրաս, ըլլան անոնք մեծ թէ փոքր:

Գրութեանս առաջին էջերուն մէջ կ'ուզեմ արձանագրել առաջարկ մը հմուտ ու փորձառու գրիչներուն, որ անոնք եւս իրենց կարգին գրեն ու գովերգեն իրենց շրջաններուն մէջ կայացած, գործած ու գործող սրահներուն մասին, անմահացնելով զանոնք, անմահացնելով անոնց առնչուած փաղանգներուն գործը:

Աճապարեմ անցնելու բուն նիւթին:

Սկսելով ծննդավայրիս՝ Քեսապի սրահներէն, կը սկսիմ «Սահակեան» սրահէն:

«Սահակեան» համեստ սրահը այն սրահն է, որ սրտիս, մտքիս ու հոգիիս մէջ ամենախոր յիշատակը ձգած է:

Երկու հարիւրէն նուազ նստատեղերով, 1990-ին վերանորոգուած, կղմինտրածածկ ու ամրաշէն «Սահակեան» սրահը կառուցուած է Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ: «Սահակեան» կոչուած ու անւանուած է, որովհետեւ անոր կառուցումը կը պարտինք երջանկայիշատակ ու եղեռնաբախտ, Սահակ Խապայեան կաթողիկոսին կատարած պարգեւին: Ան Ատանայի կոտորածէն ետք, Կիլիկիա կատարած շրջապտոյի մը ընթացքին կը հանդիպի Քեսապ, որ այդ աղետին տուած էր 163 զոհ, ի տես քեսապահայութեան կարիքին ու սիրոյն, կրթութեան ու մշակոյթին, այդ գարթօսքին կը նուիրէ քսակ մը լեցուն դեղին ոսկի, որպէսզի այդտեղ կառուցուի «Սահակեան» վարժարան-սրահը իր յարակից 2-3 սենեակներով:

Պետք է նշենք, թէ վարժարանը կը գործէ մինչեւ 1947 թուականը, երբ կը միանայ Ուսումնասիրաց միացեալ վարժարանին (այժմ Ճեմարան երկրորդական վարժարան):

Այդ կառոյցը, իմ կրթութեան մեկնած դող-

դոշուն քայլերով մանկապարտեզս հանդիսացած է իր տախտակամած յատակով:

Ինչպես ամեն դպրոցական ամավերջի հանդիսություն, այնտեղ, դպրոցական երգ-պար ու ասմունք հանդիսութեան մը ընթացքին ստացած եմ մանկապարտեզի թե նախակրթարանի վկայականներս:

Յոն, ներկայացուած են բազմաթիւ թատրոններ ու ներկայացումներ, որոնց մասնակցութիւն բերած է հանգուցեալ մայրս՝ Ռիթա Պասմաճեան-Մանճիկեանը, նախ իբրեւ դերասան, ապա իբրեւ բեմադրիչ, բեմադրելով աւելի քան քսան թատրոններ:

Անոր համեստ բեմը իմ յիշողութեանս մէջ ամրացած է, այնտեղ երեւակայելով հանգուցեալ մեծ հայրս՝ Ժոզեֆ Պասմաճեանը, որ քառասուն եւ աւելի տարիներ երիցս այդ բեմին վրայ բարձրացած է, որպէս ուսուցչապետ-տնօրէն Ուսումնասիրաց միացեալ վարժարանին, հանդեսները վարելու կամ վկայականները բաժնելու:

Այդ սրահին մէջ դայլայլած են մանկապատանեկան երգչախումբեր: Այդ բեմին վրայ տեսած ենք սփիւռքեան հանրածանօթ ասմունքող Խաչիկ Արարատեանը: Այնտեղ կը գումարուէին երբեմնի թատերական միութեան ժողովները: Այնտեղ կը շարունակուի գումարիլ Ս. Օ. Խաչի Զեսապի «Մեղրի» մասնաճիւղի, թե Յամագգայի Զեսապի «Յամօ Օհանջանեան» մասնաճիւղի անդամական ժողովները, հակառակ այն իրողութեան, որ «Սահակեան» սրահը իր բազմամարդ հանդիսութիւններուն առաջ իր տեղը զիջած է նորակառոյց «Սարդարապատ» սրահին:

2014-ին ահաբեկիչներուն կողմէ Զեսապ ներխուժումին պատճառով, մեր տան լուսանկարներուն (որոնք հրկիզուած են անոնց կողմէ), անոնց մէջ տեսած եմ լուսանկար մը «Սահակեան» սրահի աստիճաններուն վրայ, վարժարանին ուսուցիչները շրջապատած են Զեսապ այցելող Նիկոլ Աղբալեանը:

Նոյն այդ սրահին մէջ, ամառնային արձակուրդով Զեսապ եկած Բ. Կանաչեանը յաջողած է փոքրաթիւ երգչախումբով երաժշտական ելոյթ մը մատուցել:

«Սահակեան» սրահին մէջ քանիցս տեղի ունեցած են աջահամբոյրի արարողութիւններ, երբ Կիլիկիոյ Սուրբ Աթոռին հայրապետ-

ները Զեսապ այցելած են:

Յարիւրամեայ պատմութիւն է «Սահակեան» սրահը: Աւելի քան դար մը անցած է սրահը կառուցելու թուականէն, ու ան տակաւին պատնէշի վրայ կը շարունակէ իր առաքելութիւնը, գուցէ աւելի նօսր հանդիսատեսներով, նօսրացած գիւղին մէջ, իր տեղը մասամբ զիջած «Սարդարապատ» սրահին:

«Սարդարապատ» սրահը Ազգային Ուսումնասիրաց միացեալ ճեմարանի եւ «Զեսապ» հիւրանոցային համալիրի ամբողջութեան անբաժանելի մասն է «Սարդարապատ» սրահը, որուն ուսերուն բարձած է հիւրանոցին կառոյցը, որ նախապէս կը ծառայէր իբրեւ վարժարանի շէնք, կառուցուած՝ 1928-ին:

«Սարդարապատ» սրահի կառուցումը աւարտեցաւ անցնող դարուն (20-րդ) վերջին տարիներուն: Անոր գլխաւոր նուիրատուն էր Ս. Օ. Խաչի Զեսապի «Մեղրի» մասնաճիւղը, որուն երագն էր ունենալ մեծ սրահ մը, որ պիտի ծառայէր իբրեւ հանդիսասրահ, կամ այլ միջոցառումներու համար օգտագործուելիք վայր: Անոր հիմնադրամը արդիւնքն էր այդ միութեան բազմամեայ ճիգին:

Երկրորդ գլխաւոր նուիրատուն հանդիսացաւ ազգային-կուսակցական գործիչ, Զեսապի զաւակ՝ հանգուցեալ Երջանիկ Կարպուշեանը, իսկ երրորդը հեռաւոր Միացեալ Նահանգներէն, Ֆրեզնօքսթրակ, Զեսապի զաւակ Զեսապով ապրող Աբրահամ Սաղտըճեանը:

Սրահին կառուցումը սկսաւ 20-րդ դարու վերջին տասնամեակին, երբ Ուսումնասիրաց վարժարանի հնամենի շէնքին ծածկին վերանորոգումը հրամայական դարձած էր:

Այդ՝ վարժարանին շէնքն ալ ուներ իր վեց դասարաններուն վրայ բացուող փոքր սրահ մը, որ կը ծառայէր միջդպրոցական միջոցառումներուն (ատենամարզանքներ, դասարանամէջ հարց-պատասխանի մրցանքներ, երգի ու ասմունքի փորձեր...):

1928-ին կառուցուած շէնքին, որ ամառները իբրեւ հիւրանոց-պանդոկ կը գործածուէր, անոր առընթեր կառուցուեցաւ ոչ միայն սրահը, այլեւ նախակրթարանի նոր շէնքը: Եւ այս ամէնը դարձաւ հիւրանոցային համալիր, երբ օժտուեցաւ սրճարան-զբօսավայրով, փոքրերու խաղավայրով եւ ճաշարանով:

Վերոյիշեալ երկարապատումով կ'ուզեմ հաստատել, թէ համալիրին անբաժան մասն է «Սարդարապատ» սրահը:

Այժմ, այս ժամանակակից սրահին մէջն է, որ տեղի կ'ունենան Զեսապի միութիւններուն ձեռնարկները, տօնախմբութիւնները, թատերական ներկայացումներ, խորհրդաժողովները, խրախճանքները թէ հարսանեկան խրախճանքները:

Սօտ 500 հանդիսատես ընդունելու կարողութիւն ունեցող սրահին ետեւի կողմը կը գտնուին Ս. Օ. Խաչի թէ Զամազգայինի Զեսապի մասնաճիւղերուն վարչութեանց սենեակները:

Զեսապահայութեան 2014-ի տեղահանութեան վերադարձէն ետք սրահը ծառայեց նաեւ իբրեւ մթերանոց եւ կենսամթերքի սակառներու պատրաստութեան վայր սուրիահայութեան Շտապ օգնութեան եւ Վերականգնումի Զեսապի գործադիր մարմինին աշխատանքներուն համար:

Զեսապի սրահներուն մասին խօսելով, յիշարժան է Զեսապի Զայ անտարանական վարժարանին սրահը, որ կառուցուած է 20-րդ դարուն սկիզբը: Անտարանալի է նաեւ անոր անժխտելի դերակատարութիւնը հայակերտման գործին մէջ: Կը յիշեմ, որ այնտեղ ելոյթ ունեցած է լիբանանահայ սիրուած երգիչ Լեւոն Գաթրճեանը աշուղական-ազգային երգերով, հալէպահայ երգիչ Ճորճ Թիւթիւնճեանը ազգային-յեղափոխական երգերով, Զամազգայինի Լիբանանի «Գասպար Իփէկեան» թատերախումբը, Զամազգայինի Զեսապի թատերախումբը:

Այնտեղ ելոյթ ունեցած են հայրենի «Մարաթուկ» համոյթը, «Երեւանի սենեկային թատերախումբը»... (1990-ի թուականներուն եւ անելի առաջ) երբ տակաւին չէր կառուցուած «Սարդարապատ» սրահը:

Տողերուս հեղինակն ալ բախտը ունեցած է այնտեղ բեմ բարձրանալու՝ մօրս բեմադրած Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժուար է» թատերական ներկայացման ընթացքին:

Զեսապի մէջ, 2017-2018 թուականներուն վերանորոգուեցաւ Զայ կաթողիկէ համայնքապատկան սրահը, կառուցուած 19-րդ դարուն, որ երկար ժամանակ ծառայած է իբրեւ եկեղեցի:

Մատնանշելի են Զեսապի Ժողովրդային տան երկու փոքրիկ սրահները, կառուցուած 1910-ին: Գետնայարկի սրահը կը ծառայէ իբրեւ ակումբ, իսկ վերի յարկը՝ Սուրիոյ երիտասարդական միութեան Զեսապի, ինչպէս նաեւ «Քրիստափոր» պատանեկան միութեանց իբրեւ Ժողովարահ: Վերի սրահին կից կը գործէ գրադարանը, իսկ երկու սենեակներէն մէկը իբրեւ բնակավայր ծառայած է կարճ ժամանակով Զեսապ հաստատուած անզուգական հայդուկ Վարդան Շահպազին, որ Զեսապի մէջ վաստկած էր «Զայրիկ» մակդիրը:

Ստահան պէտք չէ ընել Զեսապի Գարատուրան գիւղի Ռուբէն Տէր Մինասեան ակումբի փոքրիկ սրահը: Սրահը ունի իր բեմը, գրադարանը, ան հայդուկապետ Ռուբէն Տէր Մինասեան անունը վաստկած է, որովհետեւ, հայդուկապետը անձամբ Զեսապ՝ Գարատուրան եկած է Լիբանանէն, Գեորգ հօրեղբօրս հետ որուն տան մէջ կը բնակէր նախ՝ Պաղեստին, ապա Պէյրութ, որոշ ժամանակ մը սրահը, իմա՝ ակումբը, ծառայած են իբրեւ Գարատուրանի Ուսումնասիրաց նախակրթարան:

Կեանքի անիւր, ուսման նպատակով զիս նետեց՝ Լիբանան, Զամազգայինի Նշան Փալանճեան Ճեմարան, իբրեւ գիշերօթիկ աշակերտ: Այնտեղ կեցութեանս հինգ տարիներու ընթացքին վայելած եմ Ճեմարանի «Վասպուրական» սրահի «բարիքները»:

Այնտեղ տեսած եմ գրագետ Արամ Զայկազը, գուցէ 1973-ին: Չայն հոն ճանչցած եմ. ճանչցած ու սիրած եմ իր երկերը: Այնտեղ ունկնդրած եմ գրագետ Կարօ Փօլատեանի գրախօսականը նուիրուած Դանիէլ Վարուժանի բանաստեղծութիւններու փունջի մը ֆրանսերէն լեզուով հրատարակութեան: Այս սրահին մէջ ծանօթացած եմ ֆիլմարուեստի գոհարներուն, որոնք մեզի կը հրամցուէին ֆրանսական դեսպանատան մշակութային առաքելութեան Ճեմարանի լսարանական միութեան կազմակերպութեամբ: Այնտեղ ներկայ գտնուած եմ երաժշտական դասական ելոյթներուն:

Կը յիշեմ նաեւ, որ 1974-ին այնտեղ գումարուեցաւ Դաշնակցութեան մէկ կարեւոր

խորհրդաժողովը, ուր ականատես եղայ հայոց գոյապայքարէն եկած ալեհեր Կարօ Սասունիին, Արժանթինէն եկած, սակայն համայնավարացած Հայաստանէն մազապուրծ դուրս եկած ընկ. Արծրունին, տոքթ. Բաբգէն Փափազեանին, որոնց ընթացքին Հրաչ Տասնապետեանին եւ ուրիշներուն դասախօսութիւններուն:

Անմոռանալի են նաեւ այն օրերը, երբ իբրեւ պահակ հարկադրուած էինք տէր կանգնելու մեր ճեմարանին, ինչպէս նաեւ ազգային ամէն կառոյցներուն նոր սկսող լիբանանեան քաղաքացիական պատերազմի անիշխանական տարրերէն, երբ նուաստացած, նոր ու դեղնակտուց անդամ ԼԵՄ-ի «Փոթորիկ» մասնաճիւղի, ինձի վիճակուեցան տասնեակ գիշերներ, իբրեւ պահակ՝ դիրք ունենալով «Վասպուրական» սրահի կիսակլոր սանդուխները, ուր անքուն, ժամեր ու օրեր անցուցի:

Անհուն յուզումով կը յիշեմ «Յակոբ Տէր Մելքոնեան» հանդիսասրահը, ուր առասպելական Կարօ Սասունիի կնքահայրութեամբ՝ հարիւրաւոր պատանի ընկերներ տուիք ՀՅԴ Պատանեկան Միութեան անդամակցութեան «Խոստում»-ը՝ ուխտը:

Այնտեղ հեղ մը ներկայ գտնուած եմ Հալէպէն Պէյրութ եկած «Չուարթնոց» երգչախումբի ելոյթին, ղեկավարութեամբ Պօղոս Ապաճեանի: Հոն ներկայ գտնուած եմ քանիքանի թատերական ներկայացումներու:

Անմոռանալի է նաեւ Յովակիմեան-Մանուկեան վարժարանի սրահը, ուր ներկայ գտնուած եմ հայրենի վաստակաւոր արուեստագետներ՝ Ռուբիկ Մաթեւոսեան, Պելլա Դարբինեան, Ռայսա Մկրտչեան եւ ջութակահար Ռուբէն Ահարոնեանի ելոյթներուն:

Մանաւանդ անմոռանալի է Պէյրութի արեւմտեան թաղերուն մէջ գտնուող, Հանրի Ֆարառնի պալատին մերձակայ, ՀՅ Դաշնակցութեան հնադարեան ակումբը՝ իր հսկայ սրահով: Այդ ակումբին սրահին ճակատը գտնուող փոքրիկ սենեակին մէջ ապրած էր վիպական հայդուկ՝ Վարդան Շահպազը, որ մերժելով բեռ դառնալ իր պաշտած կուսակցութեան ակումբին թաղերուն մէջ ծամոն եւ լուցկի ծախելով կ'ապահովէր իր կենսական պէտքերը:

Ինչպէս որ Լիբանանի քաղաքացիական պատերազմը զիս տեղափոխեց Հալէպ՝ ուսանելու, այժմ մտքով փոխադրուիմ այնտեղ:

Յիշողութեանս դեգերումը նախ կ'երթայ Ազգ. Չաւարեան վարժարանի «Չաւարեան» սրահ: Այնտեղ մնայուն գործունեութիւն կը տանէր Չաւարեան թատերախումբը, իր քանի մը տասնեակ տարիներու երթով: Տանս մօտ ըլլալով, բաց չէի թողուր որեւէ հանդիսութիւն, մանաւանդ թատերական ելոյթներ:

Այսօր, թէեւ վարժարանը, հալէպահայութեան թիւի նուազումին պատճառով, միացած է երեք այլ վարժարաններու, կոչուելով Ազգ. Միացեալ վարժարան, արդ վարժարանին կառոյցը յատկացուած է Համազգայինի Հալէպի կառոյցին, իբրեւ «Չաւարեան Մշակութային կեդրոն», իր թատերասրահով, եւ նորոգուած ու յարմարցուած սենեակներով, ուր պիտի գործեն «Չուարթնոց» երգչախումբը, «Սարդարապատ» եւ մանկապատանեկան պարախումբը, անշուշտ «Լեւոն Շանթ» թատերախումբը եւ Համազգայինի հայագիտական, նկարչական ու այլ միաւորները:

Հալէպ կեցութեանս տարիներուն, Նոր գիւղ թաղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հարեւանութեամբ «Մարտիկեան» սրահը դադրած էր օգտագործուելէ: Սակայն, անոր գրասենեակները կ'օգտագործուին Սուրիոյ երիտասարդական եւ պատանեկան միութեան իբրեւ ժողովասրահ:

Այժմ սրահը չկայ: Անոր տեղ բարձրացած է «Սիս» ազգային բնակավայրին համալիրը, ուր նաեւ տեղաւորուած է ազգային պատըսպարան-որբանոցը: Շէնքը մասնակի վնասներ կրեց երբ 2015-2017 տարիներուն հայաբնակ այդ թաղամասը բազմիցս հրթիռակոծուեցաւ:

Այս օրերուն, «Սիս» շէնքը, դիմացը գտնուող «Կիլիկիա» ազգային շէնքը, ինչպէս ամբողջ Նոր գիւղ թաղամասը կիսով բնակուած է:

Հալէպի հայկական սրահներուն համայնապատկերը թերի կը մնայ եթէ չնշեմք, Ս. Զառասնից Մանկանց մայր եկեղեցւոյ եւ Ազգային Հայկազեան վարժարանի շրջափակին մէջ գտնուող «Ահարոնեան» սրահը:

Եկեղեցին, վարժարանը եւ սրահը կը

գտնուին Հալեպի պատմական Սալիպե շրջանին մէջ, քարաշէն բնակավայրերով նեղիկ թաղերու մէջ:

Անցնող դարու ութսունական թուականներուն սրահը նորոգուեցաւ:

Այնտեղ ներկայ գտնուած եմ ՀՅ Դաշնակցութեան 100-ամեակին տօնակատարութեան, ուր խօսք առին հանգուցեալ Պօղոս Սնապեանը, Սօս Սարգսեանը, բանաստեղծ Ռազիկ Դաւոյեանը եւ արուեստաբան Հենրիկ Իգիթեանը:

Անոր բեմէն հնչեց Հենրիկ Իգիթեանի մէկ իմաստուն խօսքը, ՀՅԴ 100-ամեակին առիթով:

«Եթէ դուք, ՀՅ Դաշնակցութեան երդուած էք ըլլալ, հայ ազգի ծառաները, արդ ինձի հպարտանք է ըլլալ ծառային ծառան»:

Ափսոս, այսօր նուազած թիւով հալեպահայութեան տասնեակ տարիներ ծառայած «Ահարոնեան» սրահը, թէ Հայկազեան վարժարանը լուսանցքի վրայ մնացած, մեկուսացած ըլլալ կը թուին:

«Ահարոնեան» թէ «Չաւարեան» սրահները, Հալեպի պարզած իրավիճակին պատճառով իրենց տեղը զիջած են, Սիւլեմանիէ շրջանին մէջ գտնուող նորակառոյց (Սուրիոյ տազնապէն առաջ), «Եսայեան» սրահին, որ կը գտնուի Ազգային Միացեալ վարժարանին (Նախապէս Կիւլպէնկեան վարժարան) կայած:

Հալեպի տազնապալի՝ հրակոծման օրերուն, «Եսայեան» սրահին մէջ կանգ չառին մշակութային եւ հանդիսաւոր գործունեութիւնները: Այնտեղ կանգ չառին պատանիներուն եւ երիտասարդներուն նպատակադրած միջոցառումներուն փորձերը, երբեմն ռումբերու տարափին տակ...

Անուրանալի եւ անառարկելի է նաեւ ՀԲԸՄ-ի սրահին ունեցած դերակատարութիւնը, հայ-ազգային-մշակութային երթին ծառայութեան ճանապարհին: Սրահը, որ կը գտնուի Ազգիկէ թաղամասին մէջ, այնտեղ երկար տարիներ բեմ բարձրացած է ՀԵԸ-ի «Ադամեան» թատերախումբը: Զանի-քանի երգչախումբեր իրենց ելոյթները հայ հանրութեան հրամցուցած են...

Հիմա որ հասած եմ այլեւս վերջակէտ դնելու գրութեանս, մաղթանքս է, որ վերի տողերը յարգանքի տուրք ըլլայ յիշած եւ չյիշած սրահներուս հանդէպ: Մանաւանդ յարգանքի տուրք զանոնք մտայղացողներուն, կառուցողներուն, այնտեղ բեմ բարձրացած անհատներուն թէ խումբերուն՝ այլ խօսքով՝ հայ դպրութեան ծառաներուն: Մեր համոզումով, կրկնելու գնով, մեր սրահները, հայ եկեղեցիին եւ հայ վարժարանին հետ միատեղ հանդիսացած են հայ ազգին դարբնոցները. անոնք հիմնաքարն են հայ ազգութեան, եւ դրոշմը՝ հայկական ազգային նկարագիրին:

Այսօր, երբ ականատես թէ ականջալուր կ'ըլլանք սփիւռքի եւ մանաւանդ հայրենիքի մէջ ազգակործան քայլերուն, հայ ազգին դեմ դրուած մարտահրաւերներուն, եւ ի տես մեր ազգին մէջ աճած ազգակործան եւ ազգադաւցեցերուն, որոնք կը փորձեն լիցքաթափել հայ ազգը, իր պատմական գոյութենէն, ու մթազնել անոր ապագան... կամայ թէ ակամայ, կը գիտակցինք թէ անցնող 129 տարիներուն, յետեղեռնեան տարիներուն ինչ անգնահատելի դերակատարութիւն ունեցան, մանաւանդ սփիւռքեան ոստաններուն մէջ գտնուող, գործած թէ գործող սրահները, հայը, իսկապէս խորքով հայ պահելու առաքելութեան ճամբուն վրայ:

Կը խոնարհինք, այդ սրահներուն շեմին, եւ յիշատակը անմահ մնայ անոնց հեղինակներուն կամ անոնց «ծառաներուն»:

ԿԱՐՕ Վ. ՄԱՆՃԻԿԵԱՆ

ՃՆՃՂՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՐԱՆՉԱԻՒ ՎԱՐԱԳՈՅՐԷՆ ԱՆԴԻՆ

Դժուար է բարձրանալ մինչև բարձունք, մանաւանդ յոգնած ծունկերով: Զեւալով կը յաղթահարեմ դէպի քարանձաւ տանող երկարաձիգ աստիճանները: Յանկարծ, գորշ ու հնամենի նաւու մը դռներն ներս մտնելու զգացողութիւնը կ'ունենամ, կարծէք մէկը զիս դէպի ներս կը հրէ: Մութ, խոնաւ, քարքարոտ տարածութիւն է մեր առջեւ, ուր օդի խտութիւնը կը տարբերի դուրսինէն: Զսկայ խոռոչ մը կը բացուի տեսադաշտիս առջեւ, անհաւասար մակերեսով, փոսերով, անջատումներով, հողային ծածկոցով, գինիի հողէ կոտորումած կարասներով. հաւանաբար, ընդմիջտ պեղումներու մէջ եղող, տեղ-տեղ լուսամփոփներով լուսաւորուած միջավայր մը: Յատակի մեծամասնութիւնը, պարաններու բաժնեգիծերով իրարմէ անջատուած երեք տարածուն սրահներ, բացօթեայ, անառաստաղ, խորհրդաւոր խուցեր յիշեցնող հետազօտարան մը, որուն ընդհանուր երդիքը, հսկայ այրի մը մէկ մասն է միայն:

Ականջիս կը հասնի ուղեցոյց երիտասարդին ձայնը, որուն հետ քիչ առաջ ծանօթացած էինք: Բռնեղ կ'արձագանգեն մտքիս դարպասներուն, երբ ան կը շէշտէ. «Այստեղ տեղի էին ունենում ծիսական զոհագործութիւններ: Այս կարասի միջից գտնուել է մանկամարդ աղջիկների գանկոսկրներ»:

Վայոց Ձորի՝ Վայերու ձորի մէջ ենք: Կը հետեւցնեմ, արարողութիւններու հետ՝ զոհագործութիւն...: Այգեկութիւն եւ բերքահաւաքի ժամանակ՝ գինիի պաշտամունք. երախայրիքով լեցնել հնձանները, ոչ միայն խաղողի ողկոյզներով, որոնք լաւագոյնը եղած են շրջանի խաղողի տեսականիին մէջ, այլ նաեւ մարդկային արեամբ. գինին եւ արիւնը միեւնոյն խորհուրդը դրսեւորած են կեանքի գոյատեւման համար, ինչպէս քրիս-

տոնութեան, նոյնպէս՝ նախնադարեան հասարակութեան մէջ:

Գինին միշտ ալ ծիսական նշանակութիւն ունեցած է, որ կրնայ մեզ հաղորդակից դարձնել աստուածներուն եւ անդէնականին հետ:

Ուրեմն մենք այս պահուս կը գտնուինք ժայռափոր հսկայ բագինի մը, զոհասեղանի մը շեմին՝ կ'եզրակացնեմ մտածումներս:

Քարանձաւին մէջ, գինեգործական քարեդարեան համալիր է, պղինձէ եւ քարէ դարէն մեզի հասած ճմլարաններով: Եղեգնեայ ցողուններով ըմպուած գինի՝ եղեգները կը վկայեն այդ մասին, ինչպէս յոյն պատմիչ Քսենոֆոնը յիշատակած էր Զայաստանի մասին իր յիշատակութիւններուն մէջ: Իսկ Ե. դարու Եղիշէ պատմիչը քարանձաւը կը յիշատակէ Արբանեալ անունով:

Շատ հին ժամանակներէն գինին ու արիւնը նոյնացուած են իրենց նշանակութեամբ՝ մաքրելու, քաւելու, հեղուելու եւ իբրեւ ընծայ ու նոխազ մատուցուելու յատկանիշներով: Ոչ միայն բերքին երախայրիքը, լաւագոյնն ու առաջին պտուղը գետեղած են հնձաններուն, մէջ (համալիրի տարածքին խաղողի ողկոյզներն ու կորիզները այս մասին կը վկայեն), ապա նաեւ մարդկային տեսակի լաւագոյնը, մատղաշն ու Էզը, որ արարելու ծնունդ տալու իր յատկութեամբ՝ խորախորհուրդ իմաստաւորումը կու տայ այդ զոհագործութեան:

Քստմնելի կը թուի ամէն բան...

Սարսուռ մը կ'անցնի մարմինես ու միտք մը կը սուրայ մտածումներուս մէջէն. (ինչ լաւ է, որ այդ ժամանակներուն մէջ չենք ապրած: Մեր կեանքերը վախերով լեցուն պիտի ըլլային, անթերի տեսք, կազմուածք, կամ՝ կատարեալ կերպարանքով զաւակներ ունենալու պարագային): Ներկայի մեր վախերն ու սարսափները կը համեմատեմ այդ ժամանա-

կաշրջանին զոհագործուելու կամ խոշտանգուելու գաղափարին հետ...

Մարդկային մարմնի մասե՞ր, կաւէ կուժերու մէջ, ... այս մասին մտածելն անգամ սարսուռ կը պատճառէ...


Ներկայի մեր վախերը բոլորովին տարբեր կը գտնեմ նախամարդու վախերէն:

Ժամ մը ետք, ներքեւն եւք, մեր գլխավերեւին ձգած Արեւի գետի ձախափնեակի քարանձաւային համալիրը:

Քիչ մը աջին՝ ուրիշ քարայրի մը հաճելի կահաւորուած մթնոլորտը իբրեւ հանգստավայր, իջեւան՝ նախաճաշելու իր յարմարանքով, ձեւով մը կը փարատէ քիչ առաջուան տարտամ զգացումները, թէւ հոսկէ ալ նախամարդու, հազարամեակներու եւ մարդկային աճիւնի հոտ կը բուրէ՝ վերջինը անշուշտ հոգեբանօրէն եւ երեւակայութեամբ զգացւած ...

Կը պատկերացնեմ քարանձաւի բնակիչ ըլլալս, իմձմէ մասնիկ մը տեսնելով անոր մէջ. ուզենք կամ ոչ, սկիզբ մը ունեցած է մեր գոյութիւնը, մեր նախահայրերը կրած են մեր արեան մէկ մասը (մինչեւ մեզի հասնիլը), իսկ մենք անոնցը, իւրաքանչիւրս թէւ ունեցած ենք օրը ողջունելու մեր բարբառը կամ կեանքին նայելու ձեւը, բայց արեւը իր ոսկեգօծ լուսարձակները բացած է բոլորիս վրայ, նոյն ձեւով, նոյն զօրութեամբ: Ու մառանը իր կաւէ անօթներով, գինիի, ազնուամորիի եւ հաղարջի անուշահամ կամ ոգելից ըմպելիներու, հիւթերու պարունակութեամբ, գլխապտոյտ կը պատճառէ: Կը թուի, թէ նախամարդու ապրած միջավայրէն շատ հեռու չենք:

Դուրսի տօթէն ետք քարայրը իր զով տարածքով եւ հանգստանալու յարմարութեամբ, կը սրբէ կը տանի, դարերու փոշին, կը միանանք մարդ ու նախամարդ: Մթնոլորտը հիմա կը լեցուի, մեր՝ ես եւ ընկերակիցներուս շնչառութեամբ: Անցեալն ու ներկան կը շաղկապուին իրարու: Հազարամեակներու պատմութիւնը իր մէջ թաքցնող այրը, հիմա կը դառնայ մերը, իսկ մենք մօտաւորապէս վեց հազար տարի առաջ ապրող, այստեղի բնակիչին հոգեբանութիւնն ու զգացումները,



որ, արդեօք կրնա՞նք ունենալ:

Քարայրի խոռոչները, գորգերով վարագուրուած պատնէշներով, կ'անջատուին իրարմէ. թէւ գորգը արդի մարդուն ձեռքի գործն է, մշակոյթն ու գեղագիտական ճաշակը... Հաւանաբար նախամարդը ինքզինք ծածկելու կարիքը չէր ունեցած, ոչ ալ իր եւ իր նմանին միջեւ պատնէշի մը անհրաժեշտութիւնը զգացած:

Նախամարդու բնագոյները զգալ, թերեւս ալ շատ դժուար բան չէ: Իւրաքանչիւրիս մէջ արդէն իսկ քնացած է եւ գիշատողը եւ հրեշտակը. քիչ մը քրքրելով, իսկոյն մեր մէջ նախամարդը երեւան կուգայ, առանց մեծ ճիգ գործադրելու. մարդկային մտահորիզոնը, ուր որ երկարես կը հասնի այնտեղ՝ ուզած վայրդ ու ժամանակը...

Հազարամեակներու ընթացքին, անտառներն ու լեռները հաւանաբար չեն փոխուած իրենց հիմնական արտաքինով, գոյնով, հոտով ու տեսքով. միմիայն անոնց բանաւոր

բնակիչը՝ մարդը փոխուած է, իր կրթութեամբ, ներաշխարհով եւ արտաքին բարեմասնութիւններով: Նոյնիսկ, մեծամասնութեամբ անփոփոխ մնացած են, ցաւի, տառապանքի, վախի, սիրոյ եւ պատկանելիութեան զգացումները: Իսկ հինգ-վեց հազար տարուան յարդով լեցուն կօշիկը, որ վերի քարանցաւին մէջ ի յայտ եկած է, նոյնիսկ այդ կօշիկին տեսքը մեծ փոփոխութիւններու չէ ենթարկուած ... ուրեմն մարդը, առանց նկարագրային յղկումներու իր հիմնական շատ մը յատկութիւններով, ընդհանուր առմամբ, նոյն մարդն է, ներկայիս կամ քարանձաւային քարէ դարուն ապրած...

Ականջներուս մէջ անընդհատ կը հնչէ, առաջնորդող պատմաբանին փշաքաղող զարմանալի հարցումը. թէ՛ ինչո՞ւ էգ զոհին մարմնի միայն աջ մասը կտրատելով լեցուցած են կարասին մէջ, իսկ ձախը ձգած այնպէս ինչպէս որ է. արդեօ՞ք Աստուածները այդպէս ուզած էին...

Ժամանակներ.. երբ մարդը խժռած է իր նմանին մարմինը: Եթէ նոյնիսկ ծիսական դրդապատճառներով եղած է այդ մէկը, ուրեմն մարդկային բնագոյն հեռու չէ եղած կենդանական բնագոյն...

Նախամարդը քարանձաւէն դուրս եկած ու անգամ մըն ալ չէ՞ վերադարձած. մէկ ոտքը ներս իսկ միւսը դուրս մնացած է, ինչ որ կ'ըսէ մեզի այս վեց հազար տարուան կօշիկը, որ աշխարհի հնագոյն կօշիկն է ցարդ յայտնաբերուածներուն մէջ: Թերեւս ալ դէպի անդենական փոխադրուելէ առաջ, քարանձաւի մարդը փափաքած է իրմէ մաս մը ձգել այստեղ, ըլլայ անիկա կօշիկի մը կենտը կամ մարմնին մէկ մասը:

Յիշատակ ձգել՝ գոյատեւել յաւիտեան. մարդ տեսակի մեծագոյն բաղձանքը՝ անմահութիւն...

Դերատիներուն արիւնը գինիի կարասներուն խառնած, որ լաւագոյն տեսակը դարէ դար պահպանուի, գոյատեւէ եւ հասնի մեզի...

Արեւին կոչուած է նաեւ «Թռչուններու քարանցաւ»:

Շրջանը ամբողջ թռչուններու ճռուողիկով լեցուն է. կարծէք երկնային քիմիագործութեամբ մը վերի կարասներուն մէջի զոհերուն

մեզի տրտմութիւն առթող մարդկային արիւնը շոգիացած, վերացած եւ խնդութիւն պարզեւող գինիի վերածուած է: Արեւի անապակ գինին, դէպի հորիզոններ սփռուած, իւրայատուկ որթը լիութեամբ հագեցուցած է հայրենի երկրի այս բարեբեր տարածքը, իր որակով ու հոչակով...

Ժայռախոռոչներէն դուրս, հպարտ լեռներն էին, արեւի ոսկին ըմպած այգիներ, աչքերու լոյսը շոյող, ջերմութիւն եւ բերկրանք կար ամենուրեք:

Յոգին ուրախութեամբ լեցնող լոյս կար դարաշրջանին մէջ, որ կը բարեւեր մեզ դուրսէն, բարեւին մէջ բարի արեւ եւ արեւին մէջ կրկին բարի-ականութիւն՝ վերածուած բարոյականութեան: Հասկացողութիւնները ոչ թէ քուրմ մը, հեթանոսական ահեղ աստուածներէն Աստուած մը, կամ մարգարէ մը, յեղաշրջած էր, ապա՛ երկրագունդի արարումէն ի վեր սպասուած, բարի լուր ունեցող մը, լուր մը, մարդկութեան հոգեկան խաղաղութիւն եւ երազներու վսեմութիւն պարզեւող, անմահութեան հասկացողութեան գեղեցիկ ու վեհ իմաստաւորում տուող, եկած վերերկրային ոլորտներէն դէպի երկիր մոլորակ, որ փրկուի հոգիին հետ նաեւ մարմինը, խոշտանգումէ...

Անտրամաբանական զոհագործումները, ցաւերն ու խեղուած մտածելակերպը, փոխակերպուեցան նոր բանի մը՝ սիրոյ, իրար հասկացողութեան, յոյսի եւ խաղաղութեան՝ անարատ արեւան ճաշակումով՝ մաքրուիլ եւ քաւութիւն ստանալ: Վսեմագոյն արեւան գիւնով, զոհաբերմամբ մարդկային ցեղը շնորհք ստացաւ, պարգեւ մը, որ մեր շանքերով չէր:

Հազարաւոր տարիներ կ'ընդմիջէն մեր եւ մարդկային մարմնի զոհագործումներու ժամանակաշրջանը...

Մարդավաճառութիւն, մանկատուներէ եւ ծննդատուներէ երեխաներ անհետացնել, անդամները վաճառքի ենթարկելու միտումով, արիւնահեղութիւն, անչափահասներու ստրկութիւն ու չարաշահում եւ վեց հազար տարի առաջուան զոհագործութիւններու նմանութեան եզրերը կը մնան նոյնը՝ իբրեւ անգիտակից, կամակոր, կամ չար մարդու անասնային բնագոյն: Աստուածային գիտութեամբ լեցուն մարդը անկարող է այդպիսի բաներ ընել:

Մարդն ալ անասուններու նման գիշատիչ է, գազանաբարոյ եւ արիւնարբու, երբ անոր հոգին չէ լուսաւորուած Աստուածային լոյսով: Պատերազմներն ու արիւնահեղութիւնները յստակօրէն նոյն բանը կ'ըսեն մեզի: Յանգիստ, խաղաղ օթեակներէն պատերազմներ յօրինողներ, նաեւ անոնց ենթարկուողներն ու գործադրողները, չար են, մահ սփռող, որոնք ոչ մէկ բանով կը տարբերին քարանձաւի մարդակեր եւ արիւնահեղ նախամարդէն:

Անտեսանելի լոյսի զօրութեան մէջ կը բացայայտուի արեան եւ որթատունկին խորհուրդը...

Ժայռաբեկորի ստորոտի որթատունկերուն, (որոնց ստուերներուն տակ կը բնակէին Արեւիկի բնակիչները) սաղարթները, կը տարածուին կը բողբոջին ճիւղերը, ուրախութիւն պարգեւելով անոր հովանիին ներքեւ ապրողներուն: Իսկ երբ որթին բարիքը կը վերածուի գինիի՝ ըմպողները կը փոխադրւին գիրենք պատսպարող բարձր եւ խորին այրեր կատարելու համար իրենց գերագոյն ծեսը, ոգեղէն աշխարհին հետ մէկտեղուելու, անկէ զօրութիւն ստանալու համար:

Տաճարներուն բազիւններուն եւ մեհեաններուն մէջ այգեկութիւն, զոհերը կը վերածուին արեան հեղեղումի: Իսկ անոնց լաւագոյն ընծան, ամենակարող սեպուած զօրութեան նուիրելու՝ իրենց արիւնն է, գոյատեւման աւիշը, ընծայաբերուած այն Աստծոյն, որ բազմաթիւ տեսակներ եւ ձեւեր փոխելէ ետք կը հասնի մեզի, կատարելագործուած, Աստուծոյ որդւոյն միջոցով, մեզ ալ կատարելագործելու եւ վերածելու Աստուածային տաճարներու:

(Ինչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ: Արդարեւ մենք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ):

Մարդկային տեսակի վերջին կայարանին, գուցէ արարին՝ յայտնագործուած Աստուածն էր միայն, որ կրցաւ ըսել. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ ժողովուրդս: Բ. Կորնթ. 6.16»:

Միակ Աստուածութիւնը, որ ինքզինք հաւասարեցուց մեզի՝ սովորական մահկանա-

ցուներուս. իր անձը նուիրաբերեց իբրեւ անարատ եւ կենդանի զոհ մը, մեր մեղքերուն քաւութեան համար: Մաքուրն ու անթերին, արիւնարբու եւ գիշատիչ բնազդներ ունեցող պարզ գոյացութիւններուս եւ վերածուեցանք (է)ակներու՝ Է-ն, Աստուածայինն ու երկնայինը կրելով մեր ներսիդին. այն հոգիի զօրութեամբ, որ կը տարբերի մեհեաններուն ունեցածէն:

Գինին եւ արիւնը եթէ միեւնոյն խորհուրդը կը կրեն իրենց մէջ, անոնց հասկացողութեան, ընկալման եւ զոհագործութեան ձեւերը եթէ նոյնիսկ նմանութեան եզր ունենան, կը տարբերին անսիւթին եւ վերերկրայինին հետ ունեցած իրենց առնչութեամբ:

Խորհուրդին երկրային կամ երկնային ըլլալուն մէջ է հիմնական տարբերութիւնը:

Այն ինչ, որ վարագոյրին ետեւն էր, հիմա կը դառնայ տեսանելի: Արեւին իր գաղտնաբանները կը բանայ մեզի, կամաց-կամաց պարգեւով անցեալի մութ երեսները, կարելի դարձնելով ներկան այդ լուսարձակին ընդմէջէն դիտելու եւ հասկնալու:

Քրիստոնեական պատարագին, սովորական գինին կը փոխակերպուի փրկող արեան զօրութեան, իսկ հացը Քրիստոսի զոհագործուած անարատ մարմնին:

Արեւին կը մնայ ետեւ. կ'ողողուինք դէպի Տերմուկ, որ իր մաքրամաքուր ջուրի բուժիչ զօրութեամբ կրնայ մաքրել, սրբել թախծոտ եւ խոցելի մտածումները:

ՍԱՐԻԱՆԱ ՊԵՐԹԻՉԼԵԱՆ - ՂԱՉԱՐԵԱՆ

«ԺԱՄԱՆԱԿԸ ԱՐԱԳ Կ'ԱՆՑՆԻ, ԿԱՄ ԵՍ ՊԱՐԶԱՊԷՍ ԱՅԴՊԷՍ ԿԸ ԶԳԱՄ»

«Այս տարի շատ արագ անցավ»:

Այս խօսքը լսած ես տասնեակ անգամներ: Թերեւս դուրս ալ նոյնը ըսած ես, կամ նոյնաման խօսք մը, ինչպէս՝ «կարծես տարուէ տարի աւելի զբաղած կ'ըլլամ», կամ «օրուան մէջ բաւարար ժամանակ չկայ»:

Ի՞նչ է պատճառը, որ երբ կը մեծնանք, կամ կը դանդաղինք, կամ ալ ժամանակը բառացիօրէն արագ կ'անցնի:

Երբ փոքր էինք, ամառը անվերջ կը թուէր: Մենք շատ ժամանակ ունէինք եւ երբեք աճապարանք չէինք զգար: Հիմա կարծես երբ թարթենք մեր աչքերը, ժամանակը արդէն իսկ կ'անցնի: Տարօրինակ երեւոյթ:

Մինչ տարին կը մօտենայ իր աւարտին եւ կը սկսինք մտածել մեր յաջորդ տարուան ծրագիրներուն մասին, ահաւասիկ կարգ մը հետաքրքրական պատկերացումներ այս համաշխարհային երեւոյթին վերաբերեալ:

Կան երկու հիմնական դպրոցներ այս թեմային վերաբերեալ: Առաջին դպրոցը կը համարէ, որ ժամանակին արագ անցնելու պատճառը տարիքը առնելու հոգեբանական ազդեցութիւնն է, մինչ միւսը կ'ըսէ, որ ժամանակը իսկապէս շատ արագ կ'անցնի եւ ատիկա գիտական փաստուած իրողութիւն է:

Չմոռնանք նաեւ արիեստագիտութեան ազդեցութիւնը ժամանակը անցընելու մեր ընկալումին վրայ:

Ատիկա այդքան տարօրինակ չէ, որքան կը թուի: Այնչթայն հաշուած է, որ որքան արագ երթանք, այնքան նուազ արագ ժամանակը կ'անցնի եւ հակառակը՝ որքան կամաց եր-

թանք, այնքան արագ կ'անցնի ժամանակը: Երբ առարկայի մը արագութիւնը կը բարձրանայ լոյսի արագութեան դէմ, ժամանակը աւելի նուազ արագ կ'անցնի: Եթէ մենք կը գտնուինք տիեզերանաւի մը մէջ, որ կը շարժի լոյսի արագութեամբ քանի մը օրուան ընթացքին, եւ յետոյ Երկիր մուտրակ կը վերադառնայ, կը յայտնաբերենք, որ մեր բացակայութեան տասնամեակներ անցած են:



Ժամանակի արագանալուն վերաբերող գիտական տեսութիւնը քիչ մը տարօրինակ կը թուի: Կայ միւս տեսութիւնը, որ կապուած է ժամանակի մեր գնահատումին՝ տարիքը առնելու հետ:

Այս տեսութիւնը կը բացատրէ, թէ ինչպէս ժամանակի ընկալումը յարաբերական է մեր կեանքի երկարութեան եւ կրկնուող հանգըրաններու թիւին հետ: Այլ խօսքով՝ երբ բան մը առաջին անգամ ըլլալով կ'ընես եւ երբ աւելի երիտասարդ ես, այդ փորձառութիւնը մեծ նշանակութիւն կ'ունենայ եւ կը կազմէ զգալի տոկոս մը մինչեւ այսօր ապրած քու կեանքիդ մէջ:

Որքան մեծնաս, քու կեանքդ բնականաբար աւելի երկար կ'ըլլայ: Ուրեմն, կեանքիդ այն տոկոսը, որ առնուած է փորձառութիւններով, աւելի կը պզտիկնայ: Երբ նոյն բաները կ'ընես, դուն նաեւ կը ձեւաւորես այն ընկալումը, որ աւելի քիչ ժամանակ կ'առնես: Օրինակ, երբ մանուկ էիր, կաղանդի ժամանումը շատ երկար կը թուէր, սակայն այսօր ատիկա շատ շուտով կը հասնի:



Եղած են տարբեր փորձարկումներ, ուր 20 տարեկան երիտասարդէ մը եւ 70 տարեկան երեցէ մը պահանջած են գնահատել վայրկեանի մը անցնիլը: Ոչ մէկը ժամանակ չափելու միջոցներ ուներ, բացի իր միտքէն: 20 տարեկան երիտասարդը ճշգրիտ գնահատեց վայրկեանի մը անցնիլը, մինչ երեցը կարծեց, որ ժամանակը աւելի արագ անցաւ քան ինչ որ էր:

1960-ական թուականներուն, հոգեբաններ Ուալաս եւ Կրին ուսումնասիրեցին այս երեւոյթը: Անոնք երիտասարդներէն խնդրեցին նկարագրել ժամանակը: Երիտասարդները օ գ տ ա գ ո թ ե ց ի ն «յստակ» փոխաբերութիւններ, ինչպէս՝ «**ժամանակը լուր է**» եւ «**ժամանակը անշարժ ովկիանոս է**», մինչ երեց մասնակիցները օգտագործեցին փոխաբերութիւններ ինչպէս՝ «**ժամանակը արագացող շոգեկառքի կը նմանի**»:

2005-ին, Միւնիխի Մաքսիմիլիան համալսարանէն Մարթ Ուիթման եւ Սանտրա Լենհոֆ նոյնպէս ուսումնասիրեցին այս երեւոյթը: Անոնք զար-

մանալի շրջադարձ մը յայտնաբերեցին: 20-էն 50 տարիքի միջեւ գտնուող մարդիկ ճշուած զգացին ժամանակի անբաւարարութեան պատճառով, յատկապէս՝ չունենալ բաւարար ժամանակ օրուան մը մէջ կատարելու ինչ որ պետք է ընեն: Այս տարիքային հատուածին մէջ, բոլորը կը զգային, որ ժամանակը արագ կ'անցնի:

50-էն 95 տարիքի միջեւ գտնուող մարդիկ չհամարեցին, որ ժամանակը արագ կ'անցնի: Ատիկա կը համապատասխանէ այն փաստին, որ 20-էն 50 տարիքի միջեւ գտնուողները ամենէն շատ ճշում կը զգան իրենց գործերուն եւ անձնական պարտականութիւններուն պատճառով, որոնք «**ժամանակի ճշում**» կը պատճառեն, մինչ 50 տարեկանէն ետք մարդիկ հարցերուն հետ աւելի դիւրութեամբ կը վերաբերին: Ուսումնասիրութեան միւս զարմանալի բացայայտումը այն է, որ երբ տարբեր տարիքներու մարդոց-



մե ինդրուեցաւ ժամանակի անցնիլը գնահատել յետադարձ հայեացքով, բոլորը զգացին, որ ժամանակը արագ կ'անցնի:

Կարգ մը գիտնականներ կը զգան, որ ժամանակի անցնիլը կապուած է ուղեղին մէջ տոփամիկի մակարդակներուն հետ:

Հակառակ որ բոլորս կը զգանք, որ ժամանակը կ'արագանայ իւրաքանչիւր անցնող տարուան հետ, կը պարզուի, որ ատիկա ամբողջ ժամանակը չէ, այլ յստակ չափանիշներ են:

Ըստ երեւոյթին, կայ տարբերութիւն այն փաստին մէջ, որ որքան արագ կը զգանք ժամերուն եւ օրերուն արագ անցնիլը, հակադրուած՝ տարիներու արագ անցնելուն:

- Ժամերը եւ օրերը կը թուին, որ կ'անցնին համեմատաբար բնականոն արագութեամբ, կամ նոյնիսկ կամաց՝ կախեալ անկէ, որ մենք ինչ կ'ընենք:

- Բայց մենք որքան մեծնանք, այնքան կը զգանք, որ տարիները կը թռնին արագ եւ շատ արագ:

- Երբ շատ զբաղած ես, կը թուի, որ ժամերը եւ տարիները բնականոնէն շատ արագ կ'անցնին:

Քլոտիա Համոնտ, «Պի.Պի.Սի.»-ի կայքով հրապարակուած յօդուածի մը մէջ գրած է, որ ժամանակը կը գնահատենք երկու տարբեր ձեւերով: Մենք ժամանակը կը չափենք ապագայի եւ յետահայեաց նայուածքներով: Այլ խօսքով՝ կը նայինք ժամուն եւ կը գնահատենք, որ որքան արագ կ'անցնի այս պահուն, եւ նոյնպէս ետ կը նայինք եւ կը գնահատենք,

որ երեկ կամ յաջորդ շաբաթը որքան արագ անցած էր:

Շատ մը պարագաներու՝ բխող ընկալումները գրեթէ նման են: Բայց, մինչ կը մեծնանք, մեր կեանքի կրկնուող յատկանշական իրադարձութիւնները կը կուտակուին: Երբ կը նայինք այս իրադարձութիւններուն, անոնք կը թուին, որ արագ եւ արագ արագ կու գան: Տարեդարձը ամենէն հիմնական օրինակն է. **«Ես արդէն 50 տարեկա՞ն եմ: Ի՞նչ պատահեցաւ: Քանի մը տարի առաջ դեռ 25 տարեկան էի»:**

Հոգեբանները կ'ըսեն, որ ատոր պատճառը այն է, որ մենք որքան մեծնանք, կան արեւի նուազ «նոր» փորձառութիւններ մեր կեանքին մէջ, եւ շատ արեւի «հին» փորձառութիւններ: Կեանքը կը դառնայ շարք մը կրկնուող իրադարձութիւններու շուրջ, որոնք շատ քիչ կը տարբերին անոնց նախկին կրկնութիւններէն: Մէկ տարեդարձը կը նմանի յաջորդին եւ յաճախ չենք յիշեր նախորդ տարեդարձի մը յատկութիւնները:

Արհեստագիտութիւնն ալ նաեւ պատճառ կը դառնայ, որ մենք զգանք, որ ժամանակը արագ կ'անցնի:

Սմարթֆոնները, Թապլեթները, համակարգիչները մարզած են մեր ուղեղները՝ յանելալ տեղեկութիւններ ստանալու, մեզի խաբելով, որ կարծենք, թէ ժամանակը իսկապէս արագ կ'անցնի:

Մինչ արհեստագիտութիւնը մեզի կ'օգնէ արեւի արագ աշխատելու, ատիկա նաեւ մեզի կը զգացնէ, որ ճնշուած ենք ժամանակի ան-

բաւարարութեան պատճառով:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուին, որ անոնք, որոնք «փակած» են իրենց ելեկտրոնային պատառները գերազնահատած են անցած ժամանակի քանակը՝ համեմատած անոնց հետ, որոնք շատ քիչ ժամանակ կ'անցընեն համացանցին վրայ:



Բացի անկէ, այն անհատները, որոնք առօրեայ դրութեամբ կ'օգտագործեն արհեստագիտութիւնը, աւելի ճշուած կը զգան, որովհետեւ կը կարծեն, որ ժամանակը շատ արագ կ'անցնի:

Շաբաթը մէկ անգամ համացանցէն կտրուիլը կ'օգնէ ժամանակի ընկալումը դանդաղեցնելու համար:

Ամենէն կարելոր հարցումը անոնց, որոնք կ'ուզեն ամէն բան քիչ մը դանդաղեցնել. Կրնա՞նք: Կա՞յ ձեւ մը, որ կրնանք դանդաղեցնել ժամանակի անցումը մինչ կը մեծնանք: Կամ դատապարտուած ենք զարկարէն սահիլ եւ հարց տալ «ժամանակը ո՞րը գնաց» մինչեւ որ այլեւս ժամանակ չմնայ: Ի՞նչ դաժան կը թուի ասիկա:

Յոգեբանները կ'ըսեն, որ կայ բան մը որ կրնաս դուն ընել, եթէ կ'ուզես ժամանակի հանդէպ քու ընկալումդ փոխել:

Եթէ կ'ուզես, որ ժամանակը աւելի դանդաղ անցնի, պէտք է միշտ նոր փորձառութիւններու դիմես: Նոր փորձառութիւններ ունենալը քեզի կու տայ նոր յիշատակներ, յիշատակներ, որոնք տարբեր են քու նախապէս կուտակած յիշատակներէդ: Ասիկա կը նշանակէ, որ երբ ետեւ նայիս, կը տեսնես ժամանակի հանգրուան մը, որ լեցուն է նոր իրադարձութիւններով եւ քու յիշողութիւնդ լեցուած է բազմաթիւ մանրամասնութիւններով, որոնք չեն նմանիր քու ունեցած այլ փորձառութիւններուդ:

Վստահ չենք, եթէ կը համաձայնիք այս խորհուրդին հետ կամ ոչ: Ինչպէս ասացուածքը կ'ըսէ. «ժամանակը կը թռի երբ դուն հաճելի պահեր կ'անցընես», եւ հակառակը՝ եթէ ժամանակը արագ կ'անցնի, ուրեմն կը նշանակէ, որ դուն այդ փորձառութիւններէն շատ ալ հաճոյք չես առներ:



Ինչ ալ ըլլայ ժամանակի քու ընկալումդ, մենք ձեզի կը քաջալերենք քիչ մը դադար առնելու այս տօնական շրջանին եւ ժամանակ անցընելու ընտանիքիդ եւ ընկերներուդ հետ՝ ընելով այնպիսի բաներ, որոնք պիտի յիշես ամբողջ կեանքիդ ընթացքին: Մէկ բան որուն շուրջ կրնանք համաձայնիլ այն է, որ երբ ժամանակը անցնի, չենք կրնար ատիկա ետ բերել: Ուրեմն լաւ օգտագործէ եւ առաւելագոյն ձեւով ապրիր կեանքդ:

Պատրաստեց՝ **ՆԱՐԵ ԳԱԼԵՍԵՐԵԱՆ**

Օգտագործուած աղբիւրներ՝
«Ըոֆթօ», «Տէլի Մէյլ»

«ՇԱՔՑԷՊ ԷՐՄԷՆ». ԿՏՈՐ ՄԸ ՀԱՅ

Յաճախ սանդուղներուն կամ վերելակին մէջ իր անուշահոտին ձգած բուրմունքէն կը գիտնայի, որ քիչ մը առաջ Վիոլեթը իջած էր վար, կամ բարձրացած երրորդ յարկը՝ իր տունը: Մենք կը բնակէինք երկրորդ յարկի վրայ՝ այդ պատկառելի կառոյցին, որ ժամանակին պատկանած էր հալէպցի նշանաւոր Ղազէլիներու ընտանիքին:

Տարիներ միայն սանդուղներուն վրայ կը հանդիպէինք յաճախ: Ինք՝ Վիոլեթը, հալէպցի մեծ ընտանիքի մը զաւակը, այդ օրերուն քաղաքին աչքառու մեծահարուստներէն էր: Այդ օրերուն շինարարական զանազան ընկերութիւններու տէր էին:

Բարեձեւ՝ միջահասակէն վեր մարմին մը, որուն վրայ կու գար հանգչելու ազնուական գլուխ մը՝ բայց քիչ մը մարդոց վերէն նայող: Այդ օրերուն կը զգացուէր իր փարթամ քսակին թողած ազդեցութիւնը իր վրայ: Կարծես թէ ձեռով մը մեծամտութեամբ կը նայէր քիչ մը լաւ պայմաններ ունեցողներուն, խորհելով, որ իր մակարդակին չէին անոնք: Այսինքն վերջէն հարստացած՝ եթէ նոյնիսկ որոշ կալածներու տէր էին, անշուշտ իրեն հետ չէին կրնար հաւասարիլ: Վիոլեթին համար անոնք բոլորն ալ «nou veaux riches», **«նու վորիշ»**-ներ էին, այսինքն՝ վերջէն տեսած՝ ոչ թէ իրեն պէս ի ծնէ ամէն բան տեսած:

Կանուխ երիտասարդութեան տարիներուն զացած էր Իտալիա եւ հոն հետեւած գեղանկարչութեան ու վկայուած յայտնի ակադեմիայէ մը:

Եւրոպական կեանքի փափկութիւնն ու բարիքները իրացուցած՝ ուներ իր անձնական աշխարհը: Յեռու էր առօրեայ ժխորէն ու տաղտուկներէն: Յաճախ զբաղուած իր այցելութիւններով՝ անշուշտ իր դասակարգի մարդոց հետ:

Շաբթուան մէջ երկու-երեք օր թղթախաղի սեղանը կը լարուէր պատշգամը ու հոն կը տեսնէի իր ընկերուհիներն ու բարեկամները, որոնք ժամերով կը խաղային եւ իրենց ժամերը կը վատնէին կլանուած թղթախաղով:

Դրացնութեան այցելութիւններ չկային մեր միջեւ փոխանակուած բարեւէ մը զատ՝ միայն սանդուղներուն վրայ կամ շէնքին դրան առջեւ:

Երկար տարիներ ապրեցանք Ազիզիէ՝ այդ տան մէջ, որ հալէպցի մեծահարուստներու թաղամաս մըն էր շրջանը, ուր նախապէս շէնքեր ալ չկային այլ հսկայ առանձնատուներ: Այս ալ փառաւոր շէնք մըն էր՝ շինուած շատ բծախնդրութեամբ ու գեղեցկութեամբ: Վաթսունական թուականներուն ակնառու կառոյց մըն էր նաեւ իր դիրքով՝ հանրային պարտեզին մօտակայքը:

Շէնքին բնակիչները մեծամասնութեամբ մեծահասակ այդ մարդիկ կամ տարեց օրիորդներ էին: Ասոնց քով կեանքի օրէնքները կարծես շրջուած էին: Դեմի դրացիներս՝ երկուքն ալ առանձին այրեր էին:

Յաճախ ինծի հարցնողներ կ'ըլլային՝ եթէ այսինչին կամ այնինչին կինը անոնց մօտ գալը տեսա՞ծ եմ արդեօք:

- Փա՛ռք տիրոջ, որ ես հետաքրքրութեան այդ ախտը չունէի երբեք: Արդէն ժամանակ ալ չունէի:

Ընտանիք, անչափահաս զաւակներ եւ առօրեայ պարտաւորութիւններ լեցուցած էին կեանքս:

Յետոյ՝

- Ինծի ինչ ուրիշներու անձնական կեանքն ու անոնց սիրաբանութիւնները:

Բայց մէկ բան գիտէի, որ կեանքէն վրիպած անձեր էին, որոնք այդ մեծ ու շքեղ տուներուն մէջ՝ չէին կրցած ընտանիք մը ծաղկեցնել եւ իմաստ մը տալ իրենց կեանքին:

* * *

Յաճախ, երբ ընտանիքի մը մայր ես, չես անդրադառնար, որ ինչպես տարիները կը սահին ոտքիդ տակէն: Առօրեայի խճողութիւնը՝ զաւակներու դաստիարակութիւնը եւ անոնց հետեւելու ունակութիւնը մոռցնել կու տան քեզի ժամանակին թաւալումը: Յանկարծ կը տեսնես, որ զաւակներդ հասած են հասակիդ եւ կազմաւորուած՝ որպէս ապագայ մարդ:

Այդ նոյն շէնքին մէջ շարունակուեցաւ մեր բնակութիւնը, բայց հիմա երբ կը հանդիպէի Վիոլէթին, կը զգայի, որ այլեւս քալուածքը ծանրացած էր ու ինք շատ բան կորսնցուցած իր կայտառութենէն:

Անգամ մըն ալ ձեռքէս բռնելով խնդրեց, որ իրեն այցելեմ: Չկրցայ մերժել, խոստացայ անպատճառ շուտով այցելել իրեն:

* * *

Իսկական արուեստի, գեղանկարներու ցուցադրասրահի մը երեւոյթը ուներ Վիոլէթին տունը: Պատերը չորս կողմէն իրենց ընդարձակութեամբ, վերէն վար զարդարուած էին իր գծած պաստառներով: Իրաւ արուեստագետ մըն էր եւ յստակ յայտնի էր իր հմտութիւնը արուեստի աշխարհէն ներս:

Քիչ մը անդին հսկայ ապակեայ ցուցափեղկերով կահոյքներ, ուր տեղ գտած էին հնամեայ տեսակաւոր նախշերով զարդարուած արծաթեղէներ: Բայց անոնց սեւցած երեսները կորսնցուցած էին իրենց ազնուական մետաղի փայլքը եւ մնացած էին անխնամ, ճիշդ իրենց տիրոջ պէս:

Չէի կրնար պատկերացնել, որ այնքան ուրախութիւն պիտի պատճառէր այցելութիւնս իրեն, մանաւանդ որ շատ կանուխ մեր դրացնութեան տարիներէն՝ օր մը սպասուհիի մը բերնէն ինծի հասած էր մեզի համար եղած որակումը:

- «Շաքֆէդ էրմէն», կտոր մը հայ:

Անշուշտ այդ տարիներուն Յեղասպանու-

թենէն ետք՝ երբ հայեր գաղթեցին Յալէպ, այդ շատ մեծահարուստներուն համար այդ խեղճ ու ոտաբոսիկ եկած ժողովուրդին նկատմամբ իրենց նայուածքը ուրիշ բան չէր՝ եթէ ոչ «Շաքֆէդ էրմէն»: Կտոր մը հայ:

Վիոլէթը կը փորձէր ինծի տալ շատ ուշացած ջերմութիւն մը բարեկամութեան, երբ իր կեանքի արեւը դալկացած հասած էր իր մայրամուտին:

Իր ննջարանը առաջնորդելով զիս՝ առջեւս կը բանար իր մեծդի **շիֆոնիէրը**, հոն ինծի ցոյց տալու համար ամբողջ պարապ տուփերը իր ոսկեղէններուն եւ գոհարեղէններուն, որոնք անհետացած էին՝ իր տունը մտած սպասուհիներուն կողմէ:

Քիչ մը վերջ ինծի կը հարցներ, թէ ի՞նչ կ'եփէիք ամէն օր, թէ ի՞նչ կ'ուտէիք:

Իր խօսքերէն կը զգայի, որ տան ջերմութեան պակաս մը կար իր շքեղ տան մէջ եւ ինք կարօտը ուներ այդ մթնոլորտին՝ այդ կենսունակ կեանքին:

Այդ հարստութեան մէջ կ'ապրէր աղքատ առօրեայ մը: Անուշ ձեռքով եփուած՝ համով հոտով ճաշի մը կարօտը կը քաշէր:

Սիրտս ցաւեցաւ իր առանձնութեան տանջանքը տեսնելով:

- Ինչո՞ւ չամուսնացար Վիոլէթ, վստահ եմ, որ շատեր կը փափաքէին հետդ ամուսնանալ: Դուն գեղեցիկ էիր ու մեծահարուստ: Պէտք չէ՞, որ ընտանիք ունենայիր հիմա՝ չորս կողմդ զաւակներ շրջապատէին քեզ:

- Այո՛, չամուսնացայ, որովհետեւ մայրս ինծի կը պատուիրէր, որ չամուսնանամ: Մայրս շատ յոգնած էր հօրս աչքափայլութենէն ու արկածախնդրութիւններէն, անոր համար ալ կը թելադրէր ինծի չամուսնանալ:

Ինծի կ'ըսէր, դուն ամէն ինչ ունիս, դրամ, կալուած, հարստութիւն, մի՛ ամուսնանար, մի՛ ամուսնանար:

Յիմա շուարած կը նայէի Վիոլէթին կնճռոտած դէմքին ու խանգարուած հոգեբանութեան եւ կը զարմանայի՝ թէ ինչպէս այսօրւան հաշիւը չէր ըրած երբեք, ամէն բան

վստահելով իր նիւթական կարողութեան:

Արդեօ՞ք հարստութիւնը իրեն հարազատ անձեր կրցա՞ծ էր բերել: Ինչ որ յստակ էր ընչաքաղց ու ստահակ անձեր միայն շրջապատած էին իրեն: Վկայ իր **շիֆոնիէրին** հարիւրաւոր դատարկ տուփերը.

Քաջալերուած իր շատ տաքուկ ընդունելութենէն կը փորձեմ իրեն հասկցնել կեանքի երեւոյթ մը:

- Սխալած ես, Վիոլե՛թ, հոս այս կետին մէջ, դո՛ւն մանաւանդ պէտք է ամուսնանայիր: Գոնէ եթէ ամուսնանայիր հարազատ զաւակներ կ'ունենայիր, եթէ նոյնիսկ ամուսինդ այդ սպասուած անձը չ'ըլլար՝ արդէն դուն պիտի բաւարարուէիր զաւակներով, մանաւանդ որ ամէն յարմարութիւն ունէիր սիրասուն զաւակներ պահելու, երբ տնտեսական տագնապ չկար առօրեայիդ մէջ: Յետոյ ո՞վ ըսաւ, որ այդ լաւ ամուսինը պիտի չելլէր դեմդ: Ամէն մարդ իր բախտը պէտք է փորձէ ամուսնութեան մէջ: Թեկուզ լեղի կամ քաղցր: Տուն եւ զաւակներ ունենալը օրհնութիւն է՝ եւ աշխարհի գերագոյն պարգեւը: Առանձնութիւնը դժուար կեանք է ու տանջանք:

Վիոլեթ իր հարազատ տան մէջ օտարական մըն էր կարծես: Մնացած էր իր տեղացի մեքենավարին ձեռքը: Ան կու տար իր դեղերը եւ ան կ'որոշէր իր ուտելիքը: Մեքենավարը կը ծրագրէր այդ օրուան պտոյտը կամ տունը մնալը:

Հոն նստած իր տան մէջ ինծի կը թուէր, թէ Վիոլեթին հարստութիւնը, որ ուրախ պարիկի թելեր հագցուցած էր իրեն եւ ինք շլացած անոր տուած կախարդանքէն մարդիկը դիտած էր միշտ վերէն, հիմա յանկարծ այդ ուրախ պարիկի թելերը փշրուած էին ու չքացած՝ զինք թողելով անզօր ու անճար:

Երբ վար իջայ Վիոլեթին քովէն եւ տուն մտայ: Դեռ առաւօտեան եփած ճաշիս անուշ բոյրը լեցուցած էր մեր տունը: Հոս կարծես կեանք կար ու ջերմութիւն: Տուն մտնելով անզուսպ փափաք մը ունեցայ վազելու մօրս քով: Ներսը՝ տղոցս ննջարանին մէջ մայրս իր խոր ծերութեան օրերը կ'անցընէր քանի մը տարիէ ի վեր՝ յանձնուած իմ խնամքիս:

- Մամա՛, գիտես, որ դուն այդ մեծահարուստ, անհաշիւ միլիոններ ունեցող կնոջմէն շատ աւելի հարուստ ես հիմա, շրջապատւած զաւակներով ու թոռներով:

Չես մտածեր, թէ ինչ պիտի ուտես այդ օրը, եւ ամէն բան կը հասնի քեզի խնամքով, թէ սաւանդ պէտք է փոխուի կամ ոչ, մաքուր է թէ աղտոտ:

Այդ տարրական բայց անհրաժեշտ պետքերէն զրկուած Վիոլեթին այցելութիւնս զիս կը ձգէր, որ աւելի արժեւորեմ ընտանիքի մթնոլորտը եւ հոգեհարազատ զաւակները:

* * *

Տարիներ վերջ երբ քաղաքս փոխեցի, կարճ ժամանակ մը վերջ լսեցի Վիոլեթին մահը:

Այդ փարթամ տունը իր գերազանց պատառներով, զորս չէր ուզած նուիրել իր ողջութեանը մէկուն, մնացած էր զինք խնամող շարժավարին:

Այդ շարժավարը՝ իր հօրենական ընտանիքին մէջ ծառայած այլազգ ծառային տղան կ'ըլլար:

ՍԻՐՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ-ՀԱՃԷԹԵԱՆ

ԵՐԱՆԵԼԻ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԸ

**«Երանի մեռելոցն, որք ի Տեր նկշեցին,
զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա»
(Յայտնթ., ԺԹ 13)**

Հինաւուրց վանքի սրբատաշ եւ խնկաբոյր կամարներուն ներքոյ եւ սրբակեաց ու սրբակենցաղ հոգեւոր հայրերու խստաբարոյ հսկողութեան տակ հասակ առաւ եւ աճեցաւ անոր հոգեւոր, բարոյական ու գիտական ինքնութիւնը:

1 869 թուականին, հայ մօր արգանդը, ուշագրաւ էր բացառիկ արգասաբերութեամբ, ծնունդ տալով հոյլ մը տաղանդաւոր տիտաններու, որոնք պատիւ բերին ոչ միայն Հայաստանի եւ հայութեան, այլ՝ համայն աշխարհին:



1896-ին, զինուած փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսմանց գիտելիքներով, հարստացած հոգեւոր կրթութեամբ ան արժանացաւ քահանայական Սուրբ աստիճանին, որուն ճշմարիտ եւ հաւատարիմ կրողը դարձաւ իր վարած կենցաղով ու գործունեութեամբ:

Այնպիսի արժանաւոր գաւակներու ծնունդ ինչպիսիք են՝ հայոց Մեծն երաժիշտ Կոմիտաս վարդապետը, Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանեանը, Երանելի Իգնատիոս Մալոյեանը եւ այլ մտաւորականներ ու ազգային-հոգեւոր գործիչներ, որոնք ազգին համար պատմական շրջադարձ մը կատարեցին:

Չմամռու վանքին փարած միաբան վարդապետը, 1911-ին եպիսկոպոս օծուեցաւ, որպէս հոգեւոր հովիւ իր հայրենի Մարտին քաղաքին: Անմնացորդ նուիրումով եւ ուժերու գերագոյն լարումով լծուեցաւ հովուական առաքելութեան:

Հայկական միջագետքի հարաւը եւ հիւսիսային Սուրիոյ տարածքին գտնուող Մարտին պատմական քաղաքը, որ նախապէս հայ եւ ասորի քրիստոնեաներով բնակեցուած էր՝ 19-րդ դարու երկրորդ կեսին, երբ այս ազգային ու կրօնական խճանկարը գոյութիւն ունէր, աւելի ճշգրիտ 1869-ի ապրիլին՝ պատիւն ունեցաւ ծնունդ տալու հայ եկեղեցւոյ մեծագոյն մարտիրոս - երանելիներէն՝ Իգնատոս Մալոյեանին:

Շատ կարճ ժամանակաշրջանին իր եկեղեցանուէր եւ ազգանուէր գործունեութեամբ ականաւոր հոգեւորականի հռչակ ձեռք բերաւ: Նոյնիսկ պետական պաշտօնեաները կը վկայէին իր անսակարկ նուիրումին եւ գործունեութեան մասին, որուն շնորհիւ՝ Բարձր Դրան կողմէ պետական պարգէներու արժանացաւ:

Հաւատացեալ եւ բարեպաշտ ընտանիքի մը յարկին տակ հասակ առած եւ դաստիարակուած՝ աւագանի անունով Շիւքրալլա, իր հոգեւոր մղումներուն յագուրդ տալու միտումով 1883-ին անդամակցեցաւ Չմամռու Պատրիարքական կղերի միաբանութեան դպրեվանքը:

Սակայն այն ձեռքերը որոնք ակամայ պարգեւատրած էին Օսմանեան կայսրութեան արժանաւոր գաւակներուն, նոյն այդ ձեռքերը մեծ հաճոյքով եւ ցնծութեամբ ունակ էին չարչարանքի եւ մահուան ենթարկելու իրենց իսկ կողմէ պարգեւատրուած քաղաքացիներուն:

Այդպէս ալ եղաւ Երանելի նահատակ Իգ-

նատիոս Մալոյեանի պարագային: Ան եւ անոր 14 միաբանակից եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն, որոնք նախքան իրենց միաբանական խոստումը եւ քահանայական ձեռնադրութիւնը, ծնրադրելով խորանին առջեւ, ուխտած էին ցմահ հաւատարիմ մնալ քրիստոնէական հաւատքին, անխախտ պահել՝ եկեղեցւոյ դաւանանքն ու ավանդութիւնները եւ անձնուրացութեամբ ծառայել հայ ժողովուրդի ճշմարիտ իղձերուն ու սպասումներուն: 7 յունիս 1915-ին թրքական իշխանութիւնը մեր այսպիսի անբասիր անձնուեր միաբան հայրերը մեղադրեց զէնք-զինամթերք կուտակելով, ապստամբութիւն կազմակերպելու կեղծ մեղադրանքով եւ ձերբակալեց զիրենք: Կտտանքներու տակ աքսորի ճանապարհին Մալոյեանը 11 յունիս 1915-ին, նահատակութեան լուսապսակը գլխին փառաւորուեցաւ:

Վկայակոչուած փաստերուն երիցս իրաւացի ըլլալը կը հիմնաւորէ ասորի ականատես հոգեւորական՝ հայր Իսհակ Արմալէն հետեւեալ կերպ «Թուրքերը Մարտինի մէջ երանելի Մալոյեանին եւ իր հօտին դէմ կեղծ ապացոյցներով դատական ատեան կազմեցին կայսրութեան եւ անոր բարձր իշխանութեան դէմ զէնք ու զինամթերք կուտակելով զինեալ ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով: Սակայն երբ ատեանի առջեւ այդ բոլոր կեղծ մեղադրանքները Մալոյեան ի դերեւ հանեց, իսկ մեղադրող կողմը չկրցաւ որեւէ շօշափելի փաստ ներկայացնել, այս անգամ փորձեցին բռնութեամբ հասնիլ իրենց նպատակին, այդ պահուն Մալոյեան իր դէմ բռնութեան փորձ ձեռնարկողին դիմեց ըսելով. «Չանգիստ մնայ եւ չի փորձուիս սահմանդ անցնիլ, դուն իրաւունք չունիս ձեռք երկարելու անձի մը, որուն Բարձր դուռը ճանչցած է որպէս հոգեւորական եւ ունի պետական հովանաւորութիւն»:

Ամբաստանող կողմը լկտի ու հեզնական պատասխանով երբ կը փորձէր նուաստացրնել հայ հոգեւորականին, այդ պահուն նիստին ներկայ թուրք պաշտօնեաներէն մէկէն եկաւ անելի ստորնացուցիչ ու հեզնական առաջարկ-պահանջ ըսելով. «Թէեւ անիրաժեշտ է քեզ եւ քու համայնքիդ ստորնացնել, քանի որ կեղծ պատճառաբանութիւններ ներ-

կայացուցիր: Սակայն մեկնելով քեզի հանդէպ ունեցած սերես եւ գթալով քու այս վիճակիդ՝ առաջարկ մը ունիմ, եթէ գործադրես, ապա կը փրկուիս անխուսափելի մահէն եւ կը մնաս յարգուած ու պատուուած մեր մէջ, այն է՝ հաւատափոխ ըլլալով զայն ի լուր աշխարհին յայտնես»:

Յոգեւոր հօր պատասխանը համարժէք էր հարց դրուած անարգանքին. ան ըսաւ. «Երբեք, Աստուած մի արասցէ, որ ես հաւատափոխ ըլլամ կամ հաւատքս ուրանամ: Ես պատրաստ եմ իմ արիւնս հեղուլ յանուն հաւատքիս ու ազգիս, քանզի ճշմարտապէս գիտեմ, որ այն որուն սիրոյն համար պետք է չարչարուիմ: Ան ինքը խաչուեցաւ, որ ես ապրիմ: Եւ ես այն երջանիկ անձը կ'ըլլամ, եթէ ինք ինձի արժանի դարձնէ երկնքի բարձունքներու մէջ Տիրոջս հանդիպելու: Ուստի ձեզի կը մնայ զիս չարչարել, սուրերով-սուլիններով եւ զէնքերով մարմինս խոցել եւ բաժին-բաժին ընել, քանի որ ես երբեք չեմ ուրանար իմ հաւատքս»:

Կարելի չէ պատկերացնել այն վայնասունն ու խոշտանգումներու տարափը, որ հետեւեցաւ սոյն մենախօսութեան: Չինք մեկուսարանին մէջ բազում-բազմապիսի տանջանքներու մատնելէն ետք նահատակութեան արժանացուցին:

Ահա թէ ինչու 7 հոկտեմբեր 2001-ին, Յռմի Սրբազան Քահանայապետ՝ Սուրբ Յովհաննէս Պօղոս Բ.-ի կողմէ Իզնատիոս արք. Մալոյեանը երանելի հռչակուեցաւ, հանդիսանալով անթաքոյց վկան Յայոց ցեղասպանութեան:

Ուստի Մալոյեանի բարեխօսութեամբ մեր սրտագին աղօթքը կ'ուղղենք առ բարձրեալն Աստուած, թախանձագին խնդրելով, որ ան իր գթառատ մարդասիրութեամբ գեղեցիկ օր մը, հայազգի Երանելի Իզնատիոս Մալոյեանին իր սուրբերու օրհնեալ դասին կարգէ եւ անոր միջնորդութեամբ մեր ողջ ազգը իր մարդասեր ու բարերար խնամքին տակ պահէ ու պահպանէ:

ՏԻԳՐԱՆ ՎՐԴ. ՓԻԼԻՊՈՍԵԱՆ

Փոխտեսուչ՝ Ս. Միքայէլ Ընծայարանի եւ Երանելի Իզնատիոս Մալոյեան Դպրեվանքի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԸ

Դստեղի Յովհաննէս Թումանեանի շնորհիւ է, որ 19-րդ դարու արեւելահայ գրականութեան մէջ մուտք գործեց հայ գիւղը՝ իր բնակչութեամբ, կենցաղով, բարքերով եւ սովորութիւններով: Թումանեան, ծնած եւ մեծցած ըլլալով գեղջկական միջավայրի մը մէջ, իր հետ բերաւ հայրենի Լոռի աշխարհի չքնաղ բնաշխարհին ոգին՝ զայն ներարկելով հայ գրականութեան մէջ, իր արձակ եւ չափածոյ գլուխ գործոցներուն ընդմէջէն:

Գիւղէն ուսման նպատակով տեղափոխուելով Ներսիսեան վարժարան՝ Թիֆլիս, Թումանեան նկատեց այն ակնբախ հակասութիւնը, որ գոյութիւն ունի գիւղի եւ քաղաքի կենցաղներուն միջեւ: Այս ուժեղ հակասութեան խորապատկերին վրայ ան մեծ վարպետութեամբ համատեղեց եւ ստեղծեց իր նշանաւոր պատմուածքներէն մէկը՝ «Գիգորը»:

Աշխարհէն կտրուած, մեկուսացած շրջապատ մըն է փոքրիկ Գիգորի ապրած գիւղը, ուր կարծես սառած է ժամանակը: Այստեղ հերոսները գիւղացիներ են՝ յամառ, բայց չափազանց միամիտ եւ հաւատացեալ քրիստոնեայ մարդիկ: Իսկ անդին քաղաքը կը յատկանշուի իր կենցաղային արագ կշռոյթով բարքերու խաթարումով, սատանայական



խորամանկութիւններով եւ դաւադրութիւններով: Այսպէս, մէկ կողմէ ժամանակէն դուրս տգիտութիւն, պարզութիւն եւ միամտութիւն (բնածին բարութիւն), իսկ միւս կողմէ՝ համատարած անխղճութիւն, խաբէութիւն եւ նենգամտութիւն:

Թումանեանի արւեստին մեծութիւնը կը կայանայ հոն, որ ան իր հերոսները երբեք չի կաշկանդեր, անոնք ազատ են: Անոնց կեանքը նախախնամութեան կամքով գծուած հունով կ'ընթանայ, առանց հեղինակի միջամտութեան:

Այսպիսի ճակատագրապաշտ տրամադրութեանց զոհ է Անուշը «Անուշ» պատումին մէջ, ուր Յամբարձման օրուան վիճակախաղին ժամանակ բախտագուշակին կողմէ կատարուած ողբերգական կանխագուշակութիւնը «Ճիկարին կիւլլէ դիպչի, ով որ քեզ սիրի աղջի» ճակատագրական եւ վճռորոշ եղաւ Անուշին համար:

Իւրաքանչիւր անհատ արդիւնք է իր միջավայրին: Թումանեանի գործերուն մէջ նախախնամութիւնն է, որ կը գործէ:

Անուշն ու Սարոն սիրեցին զիրար: Որոշեցին փախչիլ: Փախան եւ կործանումի ենթարկուեցան, որովհետեւ ի վերուստ այդպէս ծրագրուած էր. «Աղջէ ես գիտեմ, որ ես



բախտ չունեմ, ես միշտ էլ եսպես անբախտ եմ եղել, մանուկ օրից էլ ծերն ինձ անիծեց»: Անոնք կորստեան պիտի մատնուէին, որովհետեւ միջավայր չկար, օդ չկար, տարածութիւն չկար: Իրենք նոր ժամանակներն ու նոր բարքերը կը ներկայացնէին, իսկ Մոսին հինի ներկայացուցիչն էր, այդ միջավայրին իսկական արդիւնքը: Ուստի անպայման տեղ մը հինն ու նորը պիտի բախէին:

Երբ Սարոն ու Մոսին աւանդութեան համաձայն Համբարձման օրը իրար հետ խաղցան, Սարոն խաղի պահուն նկատելով սի-

րած աղջիկը՝ Անուշը, մոռցաւ ամէն բան (վասնզի ան նորն էր, եւ չունէր կաշկանդող կապանքներ), մոռցաւ, որ այդ խաղին օրէնքին մէջ յաղթողներ եւ պարտուողներ պիտի չըլլային, ինքնամոռացութեան մէկ պահուն առաւ եւ գետին զարկաւ Մոսին, վերջիսս, որ հինի իսկական ներկայացուցիչն էր, երբ ոտքի ելլելով ուշքի եկաւ, նկատեց, որ ամբողջ գիւղը կը ծիծաղի «Վա՛յ... պարտուեց» անմիջապէս թշնամացաւ իր մտերիմ ընկերոջ՝ Սարոյին հետ: Հարցը աւելի բարդացաւ, երբ Սարոն այսքանին վրայ յանդգնեցաւ փախցնել աւանդապաշտ Մոսիին քոյրը. «Փախցրել է Սարոն, Սարոն Անուշին, ամօթ իկիտին, ամօթ Սարոյին»:

Այսպիսով սկսաւ պայքարը հինի ու նորի միջեւ, մինչեւ գործի ողբերգական աւարտը՝ Սարոյին սպանութիւնը, Անուշի խելագարութիւնն ու ինքնասպանութիւնը. ամբողջ երկնային սիրոյ մը արտայայտութեան աւարտը: Փաստօրէն Մոսի զոհն էր գիւղական՝ նահապետական բարքերուն եւ սովորութիւններուն, իսկ մտերիմ ընկերն ու հարազատ քոյրը գինն էին այդ զոհաբերութեան:

Ռոմանթիկ գրողներուն քով սերը միշտ մահ կը բերէ: Սիրահարները մահուան մէջ միայն իրարու կը հասնին, ուր սիրոյ անվիճելի յաւերժութիւնն է:

Ռոմանթիկներու ամէնէն շատ սիրած թեման ողբերգական սիրոյ թեման է: Իւրաքանչիւր ստեղծագործութիւն ունի իր կառուցուածքը, բաղկացած տեղեկատուական կեդրոնէ մը եւ իր բաղադրամասերէն՝ միտքեր, յոյզեր, սերեր...

Տեղեկատուութիւնը կը ստեղծուի բնագիրին միջոցով եւ կը տարածուի ամբողջ հա-



մակարգին մէջ: Բանաստեղծութեան կառուցուածքին մէջ իւրաքանչիւր բառ իր դերն ունի, ամէն ինչ պայմանաւորուած է, արդ՝ եթէ բանաստեղծութենէն տուն մը ջնջուի, ապա բանաստեղծութիւնը կը մեռնի:

Այսպիսով, բանաստեղծութիւնը ինքզինք կառուցելով եւ զարգանալով կը հասնի իր տրամաբանական աւարտին: Ահա թէ ինչու, մեծ վարպետութեամբ գրուած «Անուշ» պատումը ստեղծագործական կատարելութիւն է: Ան 19-րդ դարու հայ գիւղաշխարհին ոգին է արեւելահայ գրականութեան մէջ:



Ընդգրկուն են Թումանեանի գեղոսներու (Ballad) բովանդակութիւնները, սկսած բարոյական հարցեր շօշափող՝ «Յսկան», «Ախ Թամար», «Փարւանան», «Թմկաբերդի Առումը» գեղոսներէն մինչեւ գաւառական բնոյթի գեղոսները՝ «Մի Կաթիլ Մեղր», «Թագաւորն ու չարչին», հասնելով մինչեւ կերպարանափոխութեան վերաբերեալ գեղոսներ, երբ երեւոյթ մը կը փոխարինուի մէկ այլ՝ աւելի բարձր երեւոյթով մը՝ «Պօղոս-Պետրոս», «Աղաւնու Վանքը»: Աւանդութեան համաձայն, Աղաւնու Վանքի ալեհեր վանահայր Օհանը՝ ապաւինած Աստուծոյ, գերմարդկային ճիգով մը կը փորձէր իր հօտին սպառնացող վերահաս կոտորածը կանխել:

**«Գնում են տեսնում մարդիկն իր դրկած,
Մեր հայր Օհանը՝ աղօթքի չոքած,
Աչքերն երկնքին, միրուքն արցունքոտ,
Ով որ Յայ ազգից մտել է իր մօտ,
Իր սուրբ աղօթքով, կամքով Վերինին,
Փոխել է իսկոյն, դարձրել աղանի,
Բաց պատուհանից թողել՝ ամենքին,
Թոցրել դէպ իրենց լեռները՝ կրկին»:**

Գրականութեան մէջ աղանակերպ մարդը մարդկային նոր որակ մըն է՝ աւելի ազնիւ, աւելի կատարեալ ու անարատ: Այստեղ աղանիներու վերածուած ժողովուրդը

խորհրդանիշն է ազգի ոգիի յարատեւման եւ իր հողին վրայ վերընծիւղման գաղափարին:

Կերպարանափոխութեան գաղափարը մեր գրականութեան մէջ պահպանուած է բանահիւսութեան միջոցով: Ըստ այդպիսի աւանդութեան, սիրահարած աղջիկը լալով իր կորսուած սիրահարի ճամբուն, վերածուած է լալկան ուռնեմի:

Այսպիսի գաղափար կայ Թումանեանի, «Փարւանա» ստեղծագործութեան մէջ, երբ թագաւորին աղջիկը իր թեկնածուներուն մէկը միւսին ետեւէն ոչնչացման եւ կերպարանափոխման ի տես, աղի արցունք թափելով կը յառաջացնէ Ջաւախք աշխարհի նշանաւոր Փարւանա լիճը:

Լոռի աշխարհի յարակից Ջաւախք աշխարհի պատմական նիւթին նոյնպէս անդրադարձած է Թումանեան իր «Թմկաբերդի Առումը» պատումին մէջ, ուր պարսից Նատիր շահը դաւով եւ խաբէութեամբ տիրացաւ Ջաւախքի անառիկ Թմկաբերդ ամրոցին:

«Սասունցի Դաւիթ» պատումը «Սասնոյ ծռեր» դիւցազներգութեան մէկ հատուածին իւրովի մատուցումն է:

Թումանեանի ամենէն բնորոշ գործն է «Հին Օրինութիւն»-ը: Պատումնային ոճով գրուած այս գլուխ գործոցը ունի ներքին խոր իմաստ: Բանաստեղծութիւնը ունի բնաբան, կերպարներ, քանի մը սերունդի կենսագրութիւն:

«Կանաչ վիթխարի ընկուզենու տակ» (Ըն-



կուզենին յաւերժութեան խորհրդանիշն է) տողով, սկսող պատմութիւնը կը նկարագրէ Թումանեանի գիւղին կեանքը, ուր մարդիկ կտրուած իրենց ամօրեայ մտահոգութիւններէն հաւաքուած են համընդհանուր՝ «ԲԷՖ» ընելու:

«Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը՝ գիւղի տերերը», անոնք հսկաներ չէին, այլ՝ գիւղի երեցները, որոնք գիւղի ոգին եւ անանութեանց պահապաններն էին: Անոնք սերած էին այդ վիթխարի ընկուզենիի արմատներէն:

«Մենք ամոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ, երեք դասընկեր». Երեքը դասական թիւն է, ամողջ եւ կենսունակ նոր սերունդն է, որ ընդամաջ երթալով աւագներուն, եկած է հաստատելու, որ ինք տերն է ու պատրաստ է ենթարկուելու այն բոլոր իսկական արժէքներուն, որոնք սերունդէ սերունդ փոխանցուելով հասած են իրենց:

Սակայն «երբ զուարթածայն մեր երգը լռեց, մռայլ թամադան պեխերն ոլորեց». յանկարծ այս զուարթածայն երգերուն կը հակադրուի մռայլ թամադայի տխուր բաժակաճառը, որուն կարծէք միաձայնութեամբ կ'արձագանգեն գիւղի միւս մեծերը. «Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէք»:

Ի՞նչ էր պատահածը: Ինչո՞ւ զուարթածայն երգերը յանկարծ մռայլացան, բառերը պատահական չեն դրուած: Աւագները՝ ինչէ՞ն դժգոհ էին: Ահա այստեղ է բանաստեղծութեան գաղտնիքն ու հմայքը: Կեանքէն չբարարուած մարդու եութեան մէջ կայ դժգո-

հութիւնը, եւ այդ դժգոհութիւնը իւրաքանչիւր սերունդի հետ կը թարմանայ եւ կը վերականգնի ժամանակներու կապը. «Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր, ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել»: Սկիզբը պապերը կ'օրհնեն երեխաներուն, իսկ վերջը՝ թոռները պապերուն, անցեալը՝ կ'արտացոլայ ներկային մէջ, ետքը ներկան՝ անցեալին մէջ:

«Այժմ տխրութեան թէ քէֆի ժամին, մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝ ձեր խօսքն ենք ասում. «Ապրէ՛ք, երեխէ՛ք, բայց մեզ պէս չապրէք...»:

Ժամանակը կը շարունակուի, առանց ինքն իր մէջ հակասելու, սակայն մարդիկ դարձեալ դժգոհ կ'ապրին: Ժամանակը կը շարունակուի բայց չի զարգանար, կը մնայ իր նախկին դիրքին մէջ, կը մնայ դժգոհութիւնը, վասնզի ցաւն ու տառապանքը մարդու հոգիի, մարդկային եութեան անբաժան մէկ մասն են: Իսկ ուրկէ՞ կու գան այդ ցաւն ու դժգոհութիւնները: Մարդն ու իրականութիւնը երբեք չեն համընկնիր իրար, քանզի մարդը հոգի է, ոգի, իսկ ոգին աւելի բարձր է քան իրականութիւնը, քան բնութիւնը: Բնութիւնը ամբողջութեամբ խտացուած է մարդուն մէջ: Մարդը ունի այն ինչը չունին անասունները, այդ մէկը ինքնագիտակցութիւնն է: Այդ իսկ պատճառով միայն մարդն է, որ ծնունդ եւ մահ ունի: Անասունները մահուան երկիւղը չունին, անոնք մորթուելու պահուն իսկ միայն ցաւ կը զգան: Իսկ մարդը, որ բաղկացած է ոգիէ, հոգիէ եւ մարմինէ մահուան վիշտէն առաջ կ'ապրի անոր ահն ու երկիւղը:

Ոգին հոգիին միջոցաւ մարմին թափանցուելով անոր կենդանութիւն եւ ինքնագիտակցութիւն կը պարգեւէ: Այս իսկ պատճառով մարդը բնագանցութեան տեսակետէն միշտ դժգոհ է եւ անբարարուած: Ուստի այստեղ Թումանեանին նկարագրած ցաւը, տառապանքն ու դժգոհութիւնը բնածին երեւոյթներ են մարդու համար: Կեանքի ընթացքին մարդը յարատեւ կը փորձէ յաղթահարել այդ դառնութիւններն ու տառապանքները, սա-

կայն (անհնար է լրիւ յաղթահարել) այդ յատուկ է միայն Աստուծոյ, չէ որ մարդը Աստուած չէ: Եւ այսպէս անլուծելի կը մնայ մարդոց դժգոհութեան գաղտնիքը եւ կը փոխանցուի սերունդէ սերունդ: Թումանեանի ստեղծագործութիւններուն մէջ խորքով այսպիսի հարցեր դրուած են:

Ըստ Լեոյի, Թումանեանի գործերուն մէջ միտք գոյութիւն չունի: Եթէ պահ մը ընդունինք, որ միտք չկայ, ապա հոն աւելի կարելոր հանգամանք մը կայ, այդ ալ՝ մտածողութիւնն է, եւ մտածողութիւնը աւելի բարձր վիճակ է, քան նոյնիսկ միտքը: Առանց մտածողութեան կեանք գոյութիւն չունի: Մարդկութիւնը մէկ ակնթարթ իսկ չի կրնար դադրեցնել մտածողութիւնը: Ուստի կեանքի եւ մտքի միաձուլումէն ծնող մտածողութիւնը անհրաժեշտութիւն է կեանքի, առաւել եւս արուեստի համար:

Թումանեանի գործերը ո՛չ թէ գիտութիւն են կեանքի մասին, այլ՝ նոյնիսկ կեանքն են: Այնտեղ, ուր Թումանեան չի խօսիր բնութեան մասին, հոն բնութիւնը աւելի ուժգին հանդես կու գայ: Թումանեանի հերոսները անհատներ չեն, այլ՝ կերպարներ, անոնք՝ հերոսները ամբողջովին միաձուլուած են բնութեան հետ եւ անոր մէկ մասնիկը կը կազմեն:

Լեռնաշխարհի բարքերուն մասին առաջինը Թումանեան անդրադարձաւ: Իւրաքանչիւր հերոս մէկ լեռ է, եւ անոր ճակատագիրը խորապէս կապուած է լեռան հետ: Յայրենի (ծննդավայր) Լոռին ունեցաւ իր յատուկ նշանակութիւնը Թումանեանի ստեղծագործութեան մէջ: Յայոց աշխարհի այդ գողտրիկ շրջանի (Լոռին Պորչալու գաւառի վիճակներէն մէկն էր: Մեծ դեր խաղցած է պատմութեան մէջ, մասնաւորաբար իր բերդով: Լոռին շատ տէրեր ունեցած է, պարսիկները, վրացիները, թաթարները, դարձեալ՝ վրացիք: ԺԸ դարու վերջերը հնդկաբնակ Շամիր անուն հայ մը Լոռին գնած է վրացիներէն) մասին երբ կը գրէր Թումանեան, համոզիչ ըլլալու համար լեզուն բնականաբար գիւղական պի-



տի ըլլար: Ան իր գործերուն մէջ պահած է գիւղական բարբառը, եւ անով իսկ ստեղծած է գրականութեան մէջ պատկերաւոր բառեր: Սեղմ ամփոփ լեզու եւ հազուադէպ գործածուող մակդիրներ, ահաւասիկ Թումանեանի լեզուն:

Թումանեանի գրականութիւնը չափազանց շարժուն է: Նկարագրութիւնը շատ քիչ է, նոյնիսկ երբ բնութիւնը կը նկարագրէ, այդ ալ շարժման մէջ է:

Շարժումը, ներքին հոսքը, լարուածութիւնը անոր գրական ստեղծագործութեան հիմքերը կը կազմեն:

Թումանեան իր ազգի ոգին բերաւ գրականութեան մէջ: Մինչեւ Թումանեան, ազգին մարմինը կազմող ժողովուրդը խորթ էր գրականութեան համար: Ան գրելով հայ գիւղացիին, հայ շինականին մասին, գրեց իր ժողովուրդին մասին: Ապրեցաւ ու տառապեցաւ իր ժողովուրդով, անով իսկ նուաճելով Ամենայն հայոց բանաստեղծի պատուաւոր կոչումը:

Թումանեանով եւ Իսահակեանով ամբողջացաւ շրջան մը, որ ծնունդ առած էր Խաչատուր Աբովեանով, եւ որ կ'անուանուէր 19-րդ դարու արեւելահայ ռոմանթիկ գրականութիւն, ուր անհնար էր այլեւս որեւէ աւելորդ խօսք ըսել: Անոնք եզրափակեցին դարաշրջանը, ճամբայ հարթելով Տերեանին, որ բանայ մէկ այլ նոր՝ իրապաշտ շրջան մը, որ ցայսօր կ'ապրի եւ կը գոյատեւէ արեւելահայ գրականութեան համար:

ՍՕՍԷ ՓԻԼՈՒՃԵԱՆ

ԵՐՈՒԱՆՈՒ ՕՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆԻՆ

1 989-ին Հայաստան լոյս տեսած Օտեանի «Ընկեր Փանջունի»-ի գիրքի նախաբանին մէջ Լեւոն Հախվերտեան կը գրէ հետեւեալը՝ «Պոլսում եղած ժամանակ, 1921-ին, «Վերջին լուր» թերթին տուած հարցազրոյցին մէջ Յովհաննէս Թումանեան յայտնել է, որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը կենսաթոշակ է յատկացրել գրականութեան եւ արուեստի գործիչներին, նրանց մէջ նաեւ Երուանդ Օտեանին, «որուն Փանջունին կարդացուեր եւ գնահատուեր է Երեւանի կոմիտէներու կողմէ»:

Քանի մը անգամ կարդացի, որ աչքերս զիս խաբած չըլլան. նոր հաստատուած Խորհրդային Հայաստանի ղեկավարութիւնը «Ընկեր Փանջունի»-ն կարդացեր, հաւնէր է եւ որպէս պատուոգին, կենսաթոշակ որոշեր է... Այդ որքան լայնախոհ մարդիկ եղած են կոմիտէները, որ կրցած են գնահատել բաւական աղմուկ հանած Օտեանի այդ գլուխ-գործոցը: Այդ որոշումը գործադրուած է, թէ՛ ոչ, կ'անգիտանամ, սակայն, վստահ եմ որ յաջորդող շրջաններու ղեկավար մարմինները ոչ միայն միեւնոյն գնահատականը չչնորհեցին հեղինակին, այլեւ տասնամեակներ ամբողջ գիրքը չիրատարակուեցաւ Հայաստանի մէջ, որովհետեւ համայնավար իշխանութիւնը Փանջունիի մէջ ծաղրուած համայնավար կուսակցականը տեսաւ, ինչպէս որ այլ կուսակցութիւններու պարագային ալ նոյնը պատահեցաւ՝ իւրաքանչիւրը ինքզինք տեսաւ Փանջունիին մէջ ու այդպէս ալ մարդ չգիտցաւ թէ ո՞ր կուսակցութեան կ'ակնարկէ Օտեան:

Ժամանակը ցոյց տուաւ, որ իւրաքանչիւր կուսակցութեան մէջ ալ կան Փանջունիներ, որոնք յօնք շինելու տեղ, աչք կը հանեն, երբ գեղեցիկ գաղափարները զոհ կ'երթան անոնց տգիտութեան, իմաստակութեան ու անճարակութեան:

Լ. Հախվերտեան կ'ըսէ. «Քաղաքական իմաստակութեան եւ ամբոխավարութեան դէմ հայոց լեզուով ոչինչ չի գրուել աւելի զօրեղ, քան Օտեանի Ընկեր Փանջունին»: Շիրվանզադէ զինք «Ծիծաղի համար ծնած մեծագոյն հայ երգիծաբանը» կը նկատէ:

Երգիծանքը, երգիծաբանութիւնը դիւրին մշակուող գրական սեռ մը չէ, ատոր համար ալ մեր մէջ, եւ ինչու չէ աշխարհի մէջ ալ երգիծագիրներու թիւը ամենաքիչն է, համեմատելով գրական այլ սեռերու հետ: Մեր մէջի երգիծագիրները թուելու համար երեւի մէկ ձեռքի մատները բաւարար են. քիչ մը բարեացակամ եթէ ըլլանք, շատ-շատ երկրորդ ձեռքերնիս ալ օգնութեան կը կանչենք, եւ այդքան միայն: Երգիծանքը միայն մարդ խնդացնելը չէ, միմոսներն ալ կը խնդացնեն, երգիծանքը շատ աւելի նուրբ արուեստ է, որուն «կշռաչափը» եթէ քիչ մը պակաս ըլլայ, անլի կերակուրի կը նմանի, իսկ եթէ քիչ մը աւելի ըլլայ, կը դառնայ ճապաղ բան մը:

Այս տարի 19 սեպտեմբերին լրացաւ հայերու երկրորդ մեծ երգիծագիրին՝ Երուանդ Օտեանի ծննդեան 150-ամեակը, ի շարս Կոմիտասին, Թումանեանին, Շանթին եւ այլոց:

Ծնած է Պոլիս, 1869-ին, բեղմնաւոր տարի մը, որ հարուստ եղած է հայ եւ օտար անուանի մարդոց ծնունդներով: (Թէեւ մեր նիւթին հետ կապ չունի, սակայն օգտակար տեղեկութիւն մը հաղորդելու համար, յիշենք, որ նոյն տարին բացումը կատարուեցաւ Եգիպտոսի Սուէզի ջրանցքին, որուն առթիւ կառուցուեցաւ Գահիրէի օփերայի շէնքը, ուր ներկայացուեցաւ յատուկ պատուերով հեղինակուած Վերտիի «Այտա» օփերան):

Օտեան, համիտեան ջարդերէն խուսափելու համար 1896-ին հեռացաւ Պոլիսէն, անցաւ Եւրոպական քաղաքէ քաղաք, անընդհատ գրելու կողքին, գանազան գործեր ու պաշտօններ վարեց յանուն ապրուստի ու իր

այս աստանդական կեանքը ամփոփեց «12 տարի Պոլսեն դուրս» գիրքին մէջ, (գոր իր մահէն ետք ամբողջացուց Մելքոն Կիրճեան):

1908-ի Երիտթուրքերու յեղաշրջումէն ու Սահմանադրութեան հռչակումէն ետք, շատերու նման վերադարձաւ Պոլիս: Տարի մը ետք Ատանայի կոտորածին զոհ գացին 30.000 հայեր, իսկ 1915-ին հայ մտաւորականներու թրջական հաշուեյարդարին Օտեան արքայութեան Տեր Չօր: Հրաշքով փրկուեցաւ ու 1918-ին, Համաշխարհային Ա. պատերազմի աւարտին, վերադարձաւ Պոլիս, զայն վերջնականապէս լքելու համար 1922-ին: Անցած է Պուրէշ, 1924-ին Տրիպոլի եւ վերջապէս 1925-ին հաստատուած է Գահիրէ, ուր շրջան մը խմբագրած է «Արեւ» թերթը: Երուանդ Օտեան 1926-ին վերջնականապէս կը փակէ իր աչքերն ու կը թաղուի Գահիրէի մէջ, իր ետին ձգելով բաւական պատկառելի գրական ժառանգ մը: Յիշենք գլխաւորները.

«Յեղափոխութեան մակաբոյծները», «Պատերազմ եւ խաղաղութիւն», «Ընկեր Փանջունի», «Միջնորդ Տեր պապան», «Ընտանիք, պատիւ, բարոյական», «Թաղական կնիկը», «12 տարի Պոլսէն դուրս», «Ապտիլ Համիտ եւ Շերլոք Հոլմզ», «Թիւ 17 Խաֆիէն», «Զարշըլը Արթին աղա» եւ այլն:

Օտեան ֆրանսերէնի տիրապետութեան շնորհիւ կատարած է թարգմանութիւններ միջազգային գրականութենէ: Օտեանի գործերէն շատեր թարգմանուած են տասնեակ մը լեզուներով:

Այս բոլորին մէջ սակայն «Ընկեր Փանջունին» իր երեք մասերով՝ «Ընկեր Փանջունի ի Ծապլվար», «Ընկեր Փանջունի ի Վասպուրական» եւ «Ընկեր Փանջունի տարագրութեան մէջ» կը մնայ իր գլուխ գործոցը:

Այստեղ, չեմ կրնար չիշել այն հետաքրքրական դէպքը, որ պատահեցաւ ինծի հետ. Դամասկոսի համալսարանի աւարտական դասարանի ուսանող էի, երբ Պէյրութի մէջ լոյս տեսաւ «Ընկեր Փանջունի»-ի արաբերէն թարգմանութիւնը. անմիջապէս կրցայ օրինակ մը ունենալ եւ հետաքրքրութեամբ կարդալէ ետք, զայն նուիրեցի անգլիական գրականութեան արաբ դասախօսիս, որուն յաճախ հայկական գրականութենէ նմուշներ կը

ներկայացնէի, քանի որ գաղափար իսկ չունէր մեր գրականութեան մասին, ու միշտ ալ կ'արժանանայի իր անվերապահ հիացմունքին, անշուշտ, ոչ թէ ես, այլ՝ իմ թարգմանածները: Ամիս մը ետք, երբ ամառնային արձակուրդէն վերադարձայ, արդէն մոռցած էի նուիրած գիրքիս մասին, երբ համալսարանի բակին մէջ զիս հեռուէն նկատելով դէպի ինծի ուղղուեցաւ ու առանց բարեւի, կամ յառաջաբանի, ձեռքի պայուսակէն հանելով նուիրած գիրքս, ըսաւ. «Յակոբ, այս ինչ հիանալի գործ է, ուղղակի շշմած եմ, այն ինչ որ մենք այսօր, մեր երկրին մէջ կը դիմագրաւենք, Օտեանը արդէն վաթսուն տարի առաջ գրած է այդ մասին»:

Անշուշտ հպարտացայ եւ շոյուած զգացի Օտեանի հաշուոյն: Պարոնեանի նման, ինք ալ իր գրիչին թիրախ դարձուցած է պոլսահայ անձնաւորութիւններ, կենցաղային դատապարտելի իրավիճակներ, միշտ նպատակ ունենալով թերութիւնները սրբագրել, քաղաքացիները զգաստութեան հրաւիրել, ցոյց տալով անոնց գլխուն նստած աղաներուն փուչիկութիւնը: Փանջունիի պարագային գերնպատակը նոյնն է՝ ժողովուրդին աչքերը բանալ, որպէսզի չխաբուին արկածախնդիր մարդոց կեղծաւոր վարքէն, կուսակցականները իրենց շարքերէն դուրս վանեն մակաբոյծները, որոնք իրենց ապաշնորհութեամբ կրնան գեղեցիկ գաղափարները աղաւաղել:


Օտեանի «Ընկեր Փանջունի»-ն անմահ է. Փանջունիներ եղած են անցեալին, կան այսօր եւ անպայման պիտի ըլլան նաեւ վաղը: Իսկ Օտեաններ միշտ պիտի ըլլա՞ն:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎԵԱՆԻ ԾՆՆՌԵԱՆ 210-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ազգային, հայրենասիրական ու այլ բարձր արժեքներու ձեւաւորման գործընթացին մէջ իր աւանդը բերաւ Խաչատուր Աբովեանը:

Ան իրեն յատուկ խանդավառութեամբ լուսաւորութեան գործին լծուեցաւ ստեղծելով նոր լեզու, ներմուծելով նոր գաղափարներ, ինչպէս՝ Չարթօնքի սերունդին պատկանող միւս դէմքերը: Անոր գործերը արտացոլացումը հանդիսացան արեւելահայ կեանքին, որուն ընդհանուր պատկերին մէջ կը տեսնենք այդ կեանքը՝ ամենայն մանրամասնութեամբ եւ խորագննին վերլուծութեամբ: Ան նոր գրականութեան հիմնադիրն է, նոր ուղիներ ցոյց տուած է հայ ժողովուրդի վերածնունդի եւ հայ գրականութեան զարգացման համար: Ամենակարեւոր նորութիւնն այն էր, որ հրաժարելով ժողովուրդի համար արդէն անհասկնալի գրաբարէն՝ Աբովեան իր վեպը գրած է աշխարհաբարով, այսինքն՝ ժողովուրդի խօսակցական լեզուով:



պարզեր շատ խեղճ վիճակ մը: Ընտրիլու ուսումնազէն այդ երիտասարդներուն, որոնք իրենց կրթութիւնը ստացած էին Եւրոպայի այլազան երկիրներու մէջ, իրենց հետ բերելով լուսաւորութիւնը պայծառացուցին մեր լեզուն, հասնելու համար այսօրուան բիւրեղեայ կերպարանքին: Վերոյիշեալ խօսքերը հաստատելու համար կը մէջբերենք Աւետիք Իսահակեանի հետեւեալ արտայայտութիւնը. «Աբովեանը խտացումն եղաւ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցաւերի ու տառապանքի, նրա հոգու եւ իմաստութեան. նա եղաւ հայ ժողովրդի լեզուն»:

Խաչատուր Աբովեան ծնած է Երեւանի մօտ Զանաքեռ գիւղը, 1809-ին: Ան տասը տարեկանին կ'ուղարկուի Էջմիածինի վանքը՝ ուսանելու:

1821-ին կը մեկնի Թիֆլիս, ուր կ'ուսանի մասնաւոր դպրոցի մը մէջ, ապա կ'ընդունուի նորաբաց Ներսիսեան դպրոցը, զորս կ'աւարտէ 1826-ին: Այդ թուականին կը սկսի ռուսապարսկական պատերազմը, որ վերջ կը գտնէ 1828-ին Ռուսիոյ յաղթանակով եւ Արեւելեան Հայաստանը կ'անցնի Ռուսիոյ տիրապետութեան տակ: Նոյն օրերուն Դորպատի համալսարանի փրոֆեսոր Ֆրետերիք Պարոտ, Էջմիածին կը ժամանէ, իր գիտական արշաւախումբի հետ Արարատի գագաթը բարձրանալու համար: Աբովեան կը խոստանայ անոր օժանդակել՝ որպէս թարգմանիչ: Երիտասարդ Աբովեանը անոր հետ կը բարձրանայ


Պիպլիական լեռան գագաթը եւ իր իմացութիւններով, ուսման բուռն ծարաւով մեծ տպաւորութիւն կը ձգէ օտարազգի փրոֆեսորին վրայ: Անոր օգնութեամբ ալ Աբովեանը յաջորդ տարին կը մեկնի Դորպատի համալսարանը: Հակառակ հոգեւոր իշխանութեանց արգելքներուն, 6 տարի ուսանելէ ետք կը վերադառնայ հայրենիք ժողովուրդին ծառայելու հեռանկարով:

Սակայն հայրենիքի մէջ ան կը հանդիպի օրւան իշխանութիւններու անբարեհաճ ընդունելութեան: Նախ կը պաշտօնավարէ Թիֆլիսի մէջ, որպէս տեսուչ եւ ուսուցիչ, ապա կը տեղափոխուի Երեւանի գաւառական դպրոցը: Անոր մէջ որքան աւելնայ ժողովուրդին ծառայելու եռանդը, այնքան կը մեծնան անոր ուղղուած հալածանքները: Այդ պայմաններուն մէջ, 1848-ի ապրիլ 15-ին առաւօտուն տունէն դուրս կ'ելլէ եւ չի վերադառնար:

Աբովեան գրած է պոեմներ «Աղասու խաղ», առակներ «Պարապ վախտի խաղալիք», պատմուածքներ «Թուրքի աղջիկ», «Առաջին սեր», թատերգութիւններ «Ֆետտորա կամ որդիական սեր», դասագիրքեր «Նախաշաւիղ»:

Վերոյիշեալ գործերը կ'ընդգրկեն հայ ժողովուրդին յուզող բոլոր հարցերը, ըլլան անոնք քաղաքական. ընկերային թէ մշակութային: Աբովեանի գրական տաղանդը հետըզհետէ կ'աճի, կ'ուռճանայ եւ իրեն գերագոյն ծաղկման կը հասնի «Վերք Հայաստանի» գործով:

«Վերք Հայաստանի»-ն, արեւելահայ աշխարհաբարով գրուած առաջին գեղարուեստական վեպն է, որ իր շօշափած նիւթով եւ ժողովրդական լեզուով կը խօսէր ժողովուրդի սրտին:



Վեպը կը ներկայացնէ ռուս-պարսկական պատերազմի ընթացքին պարսկական բռնակալութեան դէմ ըմբոստացող հայ խիզախ երիտասարդի մը տիպարը՝ Աղասին, որ խումբ մը ընկերներով կ'ըմբոստանայ պարսիկ իշխանութեան դէմ եւ կը քաշուի լեռները: Ապաւինած ռուսական բանակին, ան կը մտնէ Երեւան, բայց Երեւանի բերդին առջեւ կը սպաննուի դաւադրութեամբ:

Աղասին գիւղացի հերոս մըն է, որ կը մարմնաւորէ Աբովեանի մտքի արտայայտումը: Արմատական նոր գաղափարներու ջահակիր՝ ճշմարտութեան եւ արդարութեան պաշտպանն է ան, բոլոր առաքինութիւններով օժտուած առասպելական դիւցազնը:

«Վերք Հայաստանի»-ն կարելի է համարել մեր առաջին պատմական վեպը: Հոն նկարագրուած դէպքերը համապատասխան են Աբովեանի ժամանակաշրջանի պատմական իրողութիւններուն: Այս գործը գերյագեցած է ազգասիրական եւ բարոյագիտական գաղափարներով: Աբովեանի անձին մէջ գրագետը, բանաստեղծը եւ գաղափարախօսը մէկ ամբողջութիւն կը կազմեն:

Աբովեան եթէ միայն «Վերք Հայաստանի»-ն գրած ըլլար եւ չունենար այնպիսի հրաշակերտ գործեր, որոնք իր անունը անմահացուցին հայ գրականութեան մէջ, ապա այդ ալ բաւարար էր, որ ան իր նշանակալի հետքը ձգէր արեւելահայ գրականութեան մէջ:

Կիսասարկաւագ
ՖԱՏԻ (ՊԱՐԳԵՒ) ՊԱՇԵՆԸՆԾԻ

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ 2019-ԻՆ

Լիբանանահայ գաղութի ազգային կեանքը իր ստեղծման առաջին օրեն եղած է բեղուն: Գաղութը երկրի պատերազմական ու փոթորկոտ շրջաններուն ալ ամեն ճիգ ի գործ դրած է պահելու իր կենսունակութիւնը եւ պայծառութիւնը: Տասնամեակներ շարունակ լիբանանահայը իր ազգային կեանքով օրինակ դարձած է հայ ժողովուրդի նուիրական արժէքներուն եւ քրիստոնեական հաւատքին:

Այսօր լիբանանահայը աշխուժօրէն կը շարունակէ իր կեանքը: Լիբանանի մէջ գործող հայկական մարզական, մշակութային, կրթական, բարեսիրական, հոգեւոր եւ երիտասարդական կառոյցներն ու հաստատութիւնները անցնող տարուան ընթացքին շարունակեցին իրենց գործունեութիւնը, բայց տարուան երկրորդ կեսէն ետք, երկրի ներքաղաքական եւ տնտեսական բարդ ու ծանր պայմանները իրենց բացասական ազդեցու-

թիւնը ունեցան անոնց տարբեր ծրագիրներու իրականացման գործին մէջ: Բոլոր պարագաներուն ալ կազմակերպուած ձեռնարկները առաջին հերթին նպատակ ունէին հայ կեանքը վերաթարմացնել, ապա ազգային արժէքները եւ ձգտումները վառ պահել հայ ընտանիքներուն մէջ: Բոլոր նախաձեռնութիւնները կը հաստատեն այն իրականութիւնը, որ հայ ժողովուրդի գաւակները հակառակ ամեն տեսակ դժուարութեան, միշտ ալ ունին կենսունակ ու միասնական ըլլալու կամք, արժանապատիւ ու խաղաղ կեանք ապրելու վճռակամութիւն:

Ստորեւ ամփոփ ձեւով կը ներկայացնենք լիբանանահայութեան միամեայ իրագործումները.

Անցնող տարին յատկանշական էր, երբ 24 ապրիլին լիբանանահայութիւնը անգամ մը





Եւս փաստը տուաւ հայկական պահանջատիրութեան յառաջամարտիկը ըլլալու իրականութեան, երբ աւելի քան 20 հազար հոգիով, իրաւատեր ու վճռական շարքերով, Պուրճ Յամուտէն Անթիլիասի մայրավանք քալեց, ապա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքին մէջ կազմակերպուած ձեռնարկով յարգանքի իր տուրքը ընծայեց հայութեան մէկուկէս միլիոն սրբադասեալ նահատակներուն՝ ուխտելով աւանդապահը ըլլալ անոնց անմեռ կտակին:

24 ապրիլ 2019-ին, լիբանանեան իրաւապահ մարմիններուն տուեալներով, աւելի քան 20 հազար լիբանանահայեր, հայ քաղաքական կուսակցութիւններու կոչին ընդառաջելով, Պուրճ Յամուտէն ուղղուեցան Անթիլիաս: Շուրջ մէկուկէս ժամուան նախաձեռնութեան մասնակցեցան Լիբանանի բոլոր շրջաններէն հայորդիներ, որոնք ամբողջ օրը իրենց վաճառատուներն ու հաստատութիւնները փակ պահելէ ետք, ընտանիքներով մասնակցեցան ազգային իրենց պահանջատիրութիւնը արտայայտող ժողովրդային

քայլարշաւին: Բազմամարդ ու կարգապահ քայլարշաւով 24 ապրիլին լիբանանահայութիւնը լուրջ պատգամներ յղեց հեռուին ու մօտին՝ բարձրաձայն գոչելով, թէ ինք կը մնայ հզօր ու կազմակերպ, գիտակից՝ ազգային իր ինքնութեան, արժէքներուն եւ պարտաւորութեան: Լիբանանահայութիւնը յայտարարեց, թէ գիտէ տարեցով ու երիտասարդով, մանուկով ու պատանիով ոտքի կանգնիլ պետք եղած պահուն ու իր ձայնը լսելի դարձնել համայն աշխարհին, գիտէ տեր կանգնիլ իր արդար իրաւունքներուն եւ անկաշկանդ ու համարձակ քայլերով դիմակայել ամէն տեսակի խոչընդոտ, որ կու գայ ցցուելու իր ազգային կեանքին դիմաց: 24 ապրիլին լիբանանահայութիւնը քայլարշաւով վերահաստատեց, որ տէրն է իր արժանապատուութեան եւ արտայայտեց արդարութիւնը՝ ամէն գնով իրականացնելու իր տեսչը:

Այս տարի յատկանշական էր նաեւ Սուսա Լէրան հերոսամարտի 104-ամեակը եւ Սուսա լեռ - Այնճարի հիմնադրութեան 80-ամեա-



կը, որոնք իրականացան քանի մը օրուան վրայ երկարած ոգեկոչման ձեռնարկներով, որոնց հիմնականը հանդիսացաւ ժողովրդային տօնախմբութիւնը, որ տեղի ունեցաւ 14 սեպտեմբեր 2019-ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ շրջափակին մէջ: Օրուան պատգամը ուղղեց Նարեկ արք.: 80-ամեակի ձեռնարկները աւարտեցան 15 սեպտեմբերին, առաւօտեան Ս. պատարագով, զոր մատուցեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արք.: Անոր յաջորդեց սիրոյ սեղան, որուն ընթացքին խօսք առին զանազան անձնաւորութիւններ:

Բարձր հովանաւորութեամբ Արամ Ա. կաթողիկոսին, 4 յունուար 2019-ին, կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը Մոնոյի Սեն ժոզեֆ եկեղեցւոյ մէջ հանդես եկաւ Ս.



Ծննդեան համերգով՝ ձօնուած իր հիմնադրութեան 45-ամեակին:

«Ուալիտ պըն Թալալ» մարդասիրական եւ բարեսիրական հաստատութեան փոխնախագահ, նախկին նախարար Լէյլա Սոլի-Յա-



մատէ այցելեց Լիբանանի հայ համայնքի ընկերային ծառայողներու միութեան «Չուարթնոց» կեդրոնը, ուր բացումը կատարեց «Չուարթնոց» կեդրոն յաճախող յատուկ կարիքներ ունեցող անհատներու ներառական եւ զգացական կրթութեան ու դարմանումի յատուկ բաժանմունքի սարքաւորման:

11 յունուարին պատմական արժեք ներկայացնող «Պէյթ Պէյրութ» թանգարանին մէջ կատարուեցաւ շնորհահանդեսը «Ֆայիա»

երգչախումբի, «Սաութ» կոչուող ձայնասկալառակին՝ բաղկացած 11 երգերե, որոնք յատուկ այս ծրագիրին համար յօրինուած են նշանաւոր երգահան, արուեստագէտ Մարսել Խալիֆէի կողմէ, զանոնք մեկնաբանած են Ումայմա Խալիլն ու «Ֆայիա» երգչախումբը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Պարգեւ Թասլաքեանի, իսկ բոլոր երգերուն դաշնաւորումը կը պատկանի Էդուարդ Թորիկեանին:

17 յունուար 2019-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ համայնքի միջբարեսիրական հաստատութիւններու ժողովի կազմակերպած ամանորեան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, իրախճանքը՝ լիբանանահայ գաղութի կարիքաւոր ծերունիներուն համար:

Լիբանանի Մարաշի հայրենակցական միութիւնը՝ հաւատարիմ իր աւանդութեան եւ պանծացնելու համար իր նահատակներուն սուրբ յիշատակը, Մարաշի աղետին 99-րդ տարելիցին առիթով այս տարի եւս հրաւիրեց իր հայրենակիցները մասնակցելու Ս. պատարագի զոհին, պաշտամունքի եւ հոգեհանգստեան պաշտօնին՝ Պուրճ Համուտի համանուն Նոր Մարաշ թաղամասի հայ երեք յարանուանութիւններու՝ Սրբոց Զառասկից Մանկանց, Ս. Փրկիչ եւ Հայ աւետարանական եկեղեցիներուն մէջ: Յաւարտ եկեղեցական արարողութեանց, հայրենակիցները համախմբուեցան միութեան «Գերմանիկ» սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ ոգեկոչական պատշաճ ձեռնարկ:

Կազմակերպութեամբ «Նոր Սերունդ» մշակութային միութեան, 25 յունուար 2019-ին, Սին Էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Քատիր Աքընի «Ռեւտ» (մերժում) վաւերագրական ժապաւենի ցու-

ցադրութիւնը, որուն ներկայ էին ժապաւենի բեմադրիչ եւ արտադրող Քատիր Աքընը եւ Թուրքիոյ խորհրդարանի երեսփոխան Կարօ Փայլանը: Կազմակերպութեամբ «Կոկիկեան» հիմնարկին, 7 փետրուար 2019-ին, Հայկազեան համալսարանին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ վարժարաններու երկրորդական դասարաններու աշակերտութեան արաբերէն շարադրական մրցումի մրցանակաբաշխութիւնը: «Կոկիկեան հիմնարկ»-ը սոյն մրցանքը կը կազմակերպէ եօթներորդ տարին ըլլալով:

13 փետրուար 2019-ին, Մարաշի հայրենակցական միութեան «Գերմանիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ ԱՖՅԻԼ-ի կողմէ հայ համալսարանականներու, հայկական դպրոցներու եւ հաստատութիւններու տրամադրուած նպաստներու բաշխման պաշտօնական հանդիսութիւնը, որուն ընթացքին խօսք առնողները անդրադարձան մեր այսօրուան իրականութեան մէջ երիտասարդին դերակատարութեան, անոր ներդրումի կարելորութեան՝ կոչ ուղղելով այս գիտակցութեամբ ուսանելու եւ գործելու: ԱՖՅԻԼ-ի կողմէ 150 միլիոն լիբանանեան ոսկիի նպաստ տրուեցաւ 185 համալսարանականներու, 200 դպրոցականներու, հայկական վարժարաններուն եւ հաստատութիւններուն:

Կազմակերպութեամբ Ազգային իշխանութեան Ուսումնական խորհուրդին եւ մասնակցութեամբ Ազգային վարժարաններու աշակերտութեան 27 փետրուար 2019-ի կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Վարդանանց ճակատամարտին նուիրուած



ձեռնարկ: Օրուան խորհուրդը ներկայացուց «Ազդակ»-ի լիբանանեան լուրերու բաժնի խմբագիր Արշօ Պալեան:

Կազմակերպութեամբ Հանճոյ հայրենակցական միութեան, 22 փետրուար 2019-ին, տեղի ունեցաւ իւրայատուկ դասախօսութիւն մը՝ «Նոյեան տապանի հետքերը Արարատ լեռան վրայ» նիւթով: Դասախօսութիւնը կը հովանաւորէր գաղութի առաջնորդ Նարեկ արք. Ալեմեգեանը, զոր կը ներկայացնէր Նարեկ Ա. քեհ. Զեմինեանը:

Կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան Ուսումնական խորհուրդին, 2 մարտ 2019-ին, «Ազդակ» օրաթերթի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ նահատակ ազատա-



մարտիկ Սիեր Ջուլիաճեանի անուան շարադրական մրցանքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարանները:

3 մարտ 2019-ին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ հոգելոյս Չարեհ արք. Ազաւորեանի երաժշտական վաստակին նուիրած սրբազան համերգ՝ հովանաւորութեամբ Արամ Ա. կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ կաթողիկոսարանի քրիստո-



նեական դաստիարակութեան բաժանմունքին: Համերգին ելոյթ ունեցան կաթողիկոսարանի «Շնորհալի» եւ մանկապատանեկան «Նարեկացի» երգչախումբերը, որոնք երաժշտասեր հանրութեան ներկայացուցին Չարեհ սրբազանին ստեղծագործութիւններէն փունջ մը:

Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեանի հրաւերով Հայաստա-



նի դեսպանատան մէջ 5 մարտին տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում հայ մամուլի եւ ձայնասփիւռի կայաններու տնօրէններու եւ գլխաւոր խմբագիրներու հետ: Խորհրդակցութեան օրակարգը կը վերաբերէր Հայաստան-սփիւռք տեղեկատուական հարթութեան վրայ համագործակցութեան նոր ուղիներուն եւ համահայկական օրակարգերու ձեւաւորման առընթեր հայկական լրատուամիջոցներու համարժեք արձագանգումներու առաջադրանքին: Անհրաժեշտութիւն նկատուեցաւ նման ձեւաչափով խորհրդակցութիւնները շարունակելու:

5 մարտ 2019-ին, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս ընդունեց այցելութիւնը Թեզէ միջեկեղեցական միաբանութեան երկու եղբայրներուն՝ Էմիլի եւ Ժան-ժաքի, որոնք ապա մասնակցեցան Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբի Աստուածաշունչի սերտողութեան: Լիբանանի հայոց թեմը իր մասնակցութիւնը կը բերէ Լիբանանի մէջ առաջին անգամ ըլլալով կազմակերպուելիք Թեզէի երիտասարդական հաւաքին, որ տեղի պիտի ունենայ 23-25 մարտ 2019-ին: Թեզէ միաբանութիւնը հիմնուած է Ֆրանսայի մէջ, 1940-ին, եղբայր Ռոժէ Շուրթի կողմէ:

Կազմակերպութեամբ «Արցախ Ռուց ին-վեսթմընթ» (ԱՌԻ) ներդրումային ծրագիրներու կազմակերպութեան վարչութեան, 18 մարտ 2019-ին, «Մաթթօ, Այշթի Սիսայտ»-ի մէջ տեղի ունեցաւ ԱՌԻ-ի 9-րդ տարեկան Անդամական ընդհանուր ժողովը՝ ներկայութեամբ Արցախի Հանրապետութեան պատւիրակութեան, գլխաւորութեամբ պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեանի: 24 մարտ 2019-ին, Անթիլիասի մայր տաճարին մէջ սուրբ եւ անմահ պատարագին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի մէջ այս օրերուն գումարուող միջազգային միջեկեղեցական երիտասարդաց համագումարի մասնակիցներէն խումբ մը երիտասարդներ՝ զանազան երկիրներ ներկայացնող: «Պէյրութի մէջ տեղի ունեցող համագումարին մասնակցեցան աւելի քան 1500 երիտասարդներ՝ շուրջ 50 երկիրներէ: Համագումարին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Լիբանանի, Սուրիոյ եւ Թեհրանի թեմերը ներկայացնող երիտասարդներ:

Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի հրաւերով, 28 մարտ 2019-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ եւ Պուրճ Համուտի Ազգային առաջնորդարանի



«Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի եկեղեցիներուն մէջ ծառայող հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հոգեւորականներու Մեծ պահքի աղօթական հաւաք եւ ընթրիք:

Հայ աւետարանական քուլտուրայի 95-ամեակի նախաձեռնութիւններու ծիրին մէջ, հովանաւորութեամբ ԳՈՅԱՐ համոյթին, 31 մարտ

2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Հայ աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Արարատ» խորագրեալ լարային տպաւորիչ համերգ՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Մկրտիչ Միքայէլեանի, որ նաեւ նուագեց կիթառի վրայ, իսկ անոր ընկերակցեցաւ Լիբանանի ազգային ֆիլհարմոնիք նուագախումբի եւ ազգային երաժշտանոցի ուսուցիչներէ կազմուած «Արթոն» լարային քառեակը, որ կը բաղկանայ Օստին Պրիգիանոյէ, Սիլվիօ Կապրիէլ Կերասիմեսկուէ՝ ջութակ, Լուքազ Նովիքիէ՝ ջութակ եւ Մակտալէնա Սոքոլայէ (թաւջութակ):

6 ապրիլ 2019-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի «Կիլիկիա» ու Ժիպէլի Հայոց ցեղասպանութեան որբերու «Արամ Պէգիքեան» թանգարանները մասնակցեցան մշակոյթի նախարարութեան կազմակերպած «Թանգարաններու գիշեր» ձեռնարկին: Ինչպէս Լիբանանի բոլոր թանգարաններն ու պատմական վայրերը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թանգարանները եւս իրենց դռները լայնօրէն բացին 1200 այցելուներու դիմաց, որոնք եկած էին Լիբանանէն եւ օտար երկիրներէ՝ մասնակցելու այս իւրայատուկ համաշխարհային ձեռնարկին:

Սեն Ժոզեֆ համալսարանի Արեւելեան գրադարանի լուսանկարներու արխիւատան կազմակերպութեամբ եւ «Էմիլիէյթս-Լեպաւնըն» դրամատան ընդհանուր տնօրէն Վարուժ Ներկիզեանի հովանաւորութեամբ, 11 ապրիլ 2019-ին, տեղի ունեցաւ Լիբանանի փառքի տարիներու լուսանկարիչ՝ Վարուժան Մեթեանի լուսանկարներու ցուցահանդէսի բացումը: 12 ապրիլին կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս պատրիարքին նախագահութեամբ, Ճիւնիի քաղաքապետ ու Քեսրուան Ֆթուհի քաղաքապետարաններու համախմբումի նախագահ



Ժուան Յպէշի եւ բարերարներ տեր եւ տիկին Գրիգոր Ճապուրեանի մասնակցութեամբ պաշտօնական բացումը կատարուեցաւ Ճիւնի-Թրիփոլի մայրուղիին եւ Յարիսայի ճամբու խաչմերուկին վրայ տեղադրուած Լիբանանեան-հայկական բարեկամութեան յուշակոթողին, որուն հեղինակն է Աղասի Պօղոս Թասլաքեան:

13 ապրիլ 2019-ին տեղի ունեցաւ վերանորոգուած եւ բարեզարդուած «Գրատուն Լարեկացի»-ի վերաբացման պաշտօնական հանդիսութիւնը՝ ձեռամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Լարեկ արքեպիսկոպոսի: 13 ապրիլ 2019-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեւոր համերգ՝ կատարողութեամբ Յամազգայինի «Այգ» երիտասարդական երգչախումբին՝ մասնակցութեամբ «Կարկաչ» պատանեկան երգչախումբին, գեղարուեստական ղեկավարութեամբ եւ խմբավարութեամբ Չաքար Զէշիշեանի, դաշնակի ընկերակցութեամբ Լիանա Յարութիւնեանի: Կազմակերպութեամբ Ազգային իշխանութեան Ուսումնական խորհուրդին, 23 ապրիլին Յայոց ցեղասպանութեան 104-ամեակին առիթով Անթիլիասի մայրավանքի Ս. Ստեփանոս մատրան դիմաց տեղի ունեցաւ աշակերտական հաւաք՝ մասնակցութեամբ լիբանանահայ վարժարաններու աշակերտութեան, տնօրէններուն եւ ուսուցչակազմերուն: Օրուան պատգամը ուղղեց Լիբանանի թեմի քարոզիչ Անանիա Ծ. վրդ. Գունանեան: Ապրիլեան նահատակներու յիշատակին նուիրուած հսկումի երեկոյ մը տեղի ունեցաւ 23 ապրիլ 2019-ին, Յայ կաթողիկէ պատրիարքարանի շրջափակին մէջ տեղադրուած Նահատակաց յուշակոթողին շուրջ: Հսկումի մասնակիցներուն մէջ ուշագրաւ էր երիտասարդներու եւ պատանիներու ստուար ներկայութիւնը, որ կու գար փաստելու եւ հաստատելու, որ նոր սերունդը տէրն է իր դատին, հաւատարիմ է իր հայրերու կտակին, իր հայրենիքին ու մեծ հաւատքին, գիտէ իր յարգանքի տուրքը մատուցել Յայոց ցեղասպանութեան զոհ զացած անմեղ նահատակներու յիշատակին: Գիտէ իր ձայնը լսելի դարձնել ամբողջ աշխարհին ու աննկուն կամքով արդարութիւն պահանջել: Կազմակերպութեամբ հայ քաղաքական երեք կու-

սակցութիւններու երիտասարդական եւ ուսանողական միութիւններուն, 23 ապրիլ 2019-ին, Սեն Ժոզեֆ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական աղօթք՝ մասնակցութեամբ Լիբանանի համայնքապետներուն: Տերունական աղօթքով սկսած ոգեկոչման ձեռնարկին Յայոց ցեղասպանութեան մէկուկէս միլիոն սուրբ նահատակներուն հոգիներուն համար լիբանանահայ եւ Լիբանանի համայնքապետները կամ անոնց ներկայացուցիչները աղօթք բարձրացուցին առ Աստուած՝ նաեւ շնորհակալութիւն յայտնելով Անոր, որ այդ ցնցիչ արհաւիրքին կողքին ապրելու կամք տուաւ մեր մայրերուն եւ հայրերուն, որոնց գոյատեւելու վճռականութեան շնորհիւ յարութիւն առաւ ազգ մը, որուն գաւակները Յայոց ցեղասպանութենէն 104 տարի ետք տակաւին կը յիշեն ու կը պահանջեն:

Կազմակերպութեամբ Պէյրութի ամերիկեան համալսարանի Յայկական աստիճաններու ակումբին, 25 ապրիլ 2019-ին, նոյն համալսարանին «Մունիպ եւ Անժելա Մասրի» շէնքի ճարտարագիտութեան դասախօսութեան սրահին մէջ տեղի ունեցաւ Յայոց ցեղասպանութեան ոգեկոչման 104-րդ ամեակին նուիրուած ձեռնարկ մը, որուն ընթացքին Նիւ Եորք համալսարանին մէջ քաղաքական գիտութիւններու դասախօս, հրապարակագիր եւ խմբագիր ու «Ազատ ալիք» կայքի համահիմնադիր փրոֆ. Այտա Էրպալ տուաւ «Չղջում» հաշտութիւն, հատուցում, երբ արդարութեան կամարը կը թեքի յաւերժութեան կողմը (Apology, Re-conciliation, Restitution: when the Arc of Justice Bends towards Infinity) խորագիրով դասախօսութիւն մը, ուր անդրադարձաւ Թուրքիոյ մէջ Յայոց ցեղասպանութեան ճանաչման հոլովոյթին:

25 ապրիլին, հովանաւորութեամբ Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Ժահժահի, Լիբանանեան ուժերու գլխաւոր կեդրոնատեղիին՝ Մաարապի մէջ տեղի ունեցաւ Յայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ոգեկոչական ձեռնարկ՝ «Գողգոթան... Որ իբրեւ գարուն ծաղկեցաւ» խորագիրով:

26 ապրիլ 2019-ին, Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Լիբանանի մէջ ՖԻՆԻԷԼ-ի խաղաղապահ ուժերուն մաս կազմող հայկական



ջոկատը՝ գլխավորությամբ Լիբանանի մեջ Հայաստանի Հանրապետության դեսպան Վահագն Աթաբեկեանի:

Կազմակերպությամբ Փաղանգաւոր կուսակցութեան, 7 մայիսին, կուսակցութեան Սայֆիի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խորհրդաժողով մը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան, Սեյֆոյի եւ Լեռնալիբանանի սովի յիշատակներուն: Խորհրդաժողովը, որ կը կրէր «Եւ կը մնան ազատ» խորագիրը, կ'ընդգրկէր նաեւ վերոնշեալ երեք ահաւոր ցեղասպանութիւնները ներկայացնող լուսանկարներու եւ պատմական փաստաթուղթերու ցուցահանդէս մը:

ԲԱՅԼ-ի Տիկնանց օժանդակ յանձնախումբը կազմակերպեց Մայրերու օրուան նուիրուած ձեռնարկը, որ տեղի ունեցաւ 3 մայիս 2019-ին, «Պուսթան» պանդոկի «Քրիսթըլ կարտըն»-ին մէջ, Պէյթ Մերի, նախագահութեամբ Միլվա Սանոսեանի:

Նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի, 7 մայիս 2019-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայ աշակերտ հովանաւորելու ծրագիր»-ի չորս եւ չորսէ աւելի աշակերտ հովանաւորած նուիրատուներու յուշանուէրներ-



րու բաշխման հաւաք: Սոյն ծրագրի մեկնակետն է զօրակցիլ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներուն:

Կազմակերպութեամբ Ժիպէյլի քաղաքապետութեան, հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Ղանիոյ եւ Հայաստանի դեսպանատուներուն, ներկայութեամբ գրօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեանին եւ Լիբանանի մէջ հաւատարմագրուած շուրջ 20 երկիրներու դեսպաններու, 21 մայիս 2019-ին, Հայոց ցեղասպանութեան որբերու «Արամ Պէզիքեան» թանգարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութենէն վերապրած փոքրիկներուն հոգատար «Մամա»-ն հանդիսացող Մարիա Ճէյքըպսընի յիշատակին նուիրուած ձեռնարկ մը՝ անոր դամբարանին դիմաց: Հայ լեզուի եւ գրականութեան ջատագով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելող



«Խաչիկ Պապիկեան» հիմնադրամի եւ կրթական-հայագիտական բաժանմունքին կազմակերպած միջոցառական մրցաշարքը բոլորեց իր 10-րդ տարին: Հիմնադրամին մրցումները կ'ընդգրկեն հայ լեզուի ու գրականութեան, հայկական տպագրութեան եւ մամուլի, հայոց պատմութեան, հայ մշակոյթի ու կրօնագիտական նիւթերու եւ ասմունքի բաժիններ: 2 յունիս 2019-ի առաւօտուն, սուրբ եւ անմահ պատարագէն ետք, վեհարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ սոյն մրցումներուն մրցանակաբաշխութիւնը՝ նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին եւ ներկայութեամբ Խաչիկ Պապիկեանի դուստրերուն, ինչպէս նաեւ՝ միաբան հայրերու, ազգայիններու, տնօրէններու, հա-

յերենաւանդ սիւթերու դասատուներու, դատակազմերու անդամներուն, աշակերտներու ու անոնց ծնողներուն:

«Արմիս» երգչախումբին համերգը տեղի ունեցաւ 2 յունիս 2019-ին, Պէյրութի 3այ աւետարանական Ա. եկեղեցիին մէջ, խմբավարութեամբ վերապատուելի Նշան Պազալեանի եւ դաշնամուրի նուագակցութեամբ Յենրի Իշխանեանի: Մէկ ժամ տեւողութեամբ յայտագիրը կ'ընդգրկէր հայկական թէօտարի հոգեւոր երաժշտութիւն, ինչպէս նաեւ՝ հայկական ժողովրդական եւ հայրենասիրական երգեր:

Յովանաւորութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին, 6 յունիս 2019-ին, Նախկին Ազգային Զառաս-



նից Մանկանց վարժարանի երրորդ յարկին վրայ տեղի ունեցաւ Ազգային առաջնորդարանի ընկերային բաժանմունքի նոր կեդրոնի բացումը:

Կազմակերպութեամբ Մխիթարեան միաբանութեան եւ ՀՅԴ Լիբանանի 3այ դատի մարմինին, 14 յունիս 2019-ին, Ռաուտայի Մխիթարեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ «THE ARMENIAN GENOCIDE: Prelude and Aftermath» մատենաշարէ լոյս ընծայուած 5 հատորներու շնորհահանդես՝ ներկայութեամբ համահեղինակ Վահան վրդ. Օհանեանի: Կազմակերպութեամբ Ազգային առաջնորդարանի ընկերային բաժանմունքին, 24 յունիսին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ «Սեպուհ Շահպազեան կրթական ֆոնտ»-ի հիմնադրութեան 17-ամեակին նուիրուած հանդիսութիւն: Ձեռնարկի աւարտին Անանիա Ծ. վրդ. Գուճանեան կարդաց Նարեկ արքեպիսկոպոսի կողմէ Շահպազ-

եան ընտանիքին շնորհուած «Օրինութեան գիր»-ը, որմէ ետք հրաւիրեց Յարութ եւ Մանուշակ Շահպազեան ամուլը եւ անոնց յանձնեց գայն:

27 յունիս 2019-ին, 3այ կաթողիկէ Մեսրոպեան վարժարանի «Ֆարաճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Մեսրոպ 3այունիի «Յայասպանութեան նահատակներուն պերճաբան հռետորը՝ գերպծ. դոկտ. հ. Սահակ եպս. Կոզեան» գիրքին շնորհահանդեսը: Ձեռնարկը կազմակերպուած էր 3այ կաթողիկէ համալսարանականներու միութեան կողմէ եւ հովանաւորուած՝ հայ կաթողիկէ Պէյրութի պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գեորգ եպս. Ասատուրեանի կողմէ:

30 յունիս 2019-ին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուած Ս. եւ անմահ պատարագի ընթացքին տեղի ունեցաւ հայրապետական մաղթանք՝ Արամ Ա. կաթողիկոսին ընտրութեան եւ օծման 24-րդ տարեդարձին առիթով: Յայրապետական մաղթանքի ընթացքին միաբան հայրեր աւետարանական հատուածներու եւ աղօթքներու ու շարականներու ընդմէջէն աղօթեցին վեհափառ հայրապետին արելշատութեան, առողջութեան եւ երկար գահակալութեան համար, ինչպէս նաեւ վասն անսասանութեան՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան:

2 յուլիս 2019-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի յարկին տակ ի մի խմբուած էին Յայաստանէն, Արցախէն եւ սփիւռքի գանազան գաղութներէն եկած մամլոյ մշակներ՝ մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած 3այ մամուլի համահայկական համագումարին, որ տեղի ունեցաւ Նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին: Սոյն համագումարին պաշտօնական բացումը կատարուեցաւ առաւօտեան ժամը 9:30-ին, վեհարանի դահլիճին մէջ, ուր հաւաքուած էին մամուլի շուրջ 100 խմբագիրներ, լրագրողներ եւ աշխատակիցներ, իսկ 4 յուլիս 2019-ին համագումարը եզրափակեց իր աշխատանքները: Յովանաւորութեամբ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանին, 13 յուլիս 2019-ի երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

Տիւր Շուէրի մէջ կայացաւ հայկական իւրա-
յատուկ եւ անմոռանալի երեկոյ մը, նոյն
ատեն Պիքֆայայի քաղաքապետարանի
հանրային պարտէզին մէջ, երեկոյեան ժամը
5:00-ին բացումը կատարուեցաւ «Յմայիչ Յա-
յաստանը Պիքֆայայի մէջ» փառատօսին:
Փառատօսին ներկայ գտնուեցաւ հոծ բազ-
մութիւն, որ ծանօթացաւ հայկական մշակոյ-
թին իր բոլոր երեսներով՝ արուեստով, խոհա-
նոցով, պարով, նուագով եւ գորգագործու-
թեամբ:

17 յուլիսին, «Մեթրոփոլիս Ամփիր Սոֆիլ»
շարժապատկերի սրահին մէջ առաջին ան-
գամն ըլլալով ցուցադրուեցան Խաչատուր-
եան ընտանիքին նախաձեռնած եւ Աշոտ
Առաքելեանի բեմադրած «Կիլիկիա՝ առիծ-
ներու երկիր» եռամաս ժապաւենին նախագ-
ծային հատուածները (**մուտ ռիլ**)՝ լիբանանահայ
հիւրերու ներկայութեան: Հայկական երաժշ-
տութեան եւ մշակոյթի տարածման առումով
մեծ աշխատանք տանելէ ետք, Խաչատուր-
եանները այս անգամ ձեռնամուխ եղած են
շարժապատկերի ճամբով հայկական արժէք-
ները հանրութեան ներկայացնելու՝ Կիլիկիոյ
հայոց թագաւորութեան երեք հարիւր տար-
ուան պատմութեան ընդմէջէն: Կազմակեր-
պութեամբ Արցախի Հանրապետութեան
կրթութեան եւ գիտութեան նախարարու-
թեան եւ համագործակցութեամբ «Արցախ
ֆոնտ»-ին, լիբանանահայ 9 աշակերտներ 20
յուլիսին հասան Երեւանի «Չուարթնոց» օդ-
կայան եւ ուղղուեցան Արցախ՝ մասնակցելու
համար «Ասպետ» մարզահայրենասիրական
ճամբարին: 9-րդ տարին ըլլալով կազմա-
կերպուած ճամբարին լիբանանահայ աշա-
կերտները առիթ ունեցան կապ հաստատելու
իրենց տարեկից արցախցի եւ հայաստանցի
պատանիներու հետ, հետեւելու դաստիա-
րակչական ծրագրի մը, մասնակցելու գա-
նազան ձեռնարկներու, ծանօթանալու Արցա-
խի պատմական եւ մշակութային արժէքնե-
րուն, ինչպէս նաեւ հայ զինուորին առօրեա-
լին:

11 օգոստոս 2019-ին, Չմմառու մայրա-
վանքի երանելի Իգնատիոս Մալոյեանի ան-
ուան ամփոփատրոնին մէջ տեղի ունեցաւ
երանելիին ծննդեան 150-ամեակին նուիր-
ուած յուշ-երեկոյ: Յորելեանին նախագահեց

Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր
Պետրոս Ի. կաթողիկոս-պատրիարքը:

7 սեպտեմբեր 2019-ին, Մեծի Տանն Կիլի-
կիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի սրահին
մէջ, վեհափառ հայրապետին ներկայու-
թեամբ, իւրայատուկ հաւաք մը տեղի ունե-
ցաւ՝ նուիրուած ձեռագիրներու պահպան-
ման կարեւորութեան ու կարելիութեան: Ներ-
կայ էին միաբան հայրեր, դպրեվանքի սար-
կաւազներ, թանգարանի յանձնախումբի ան-
դամներ եւ օտար հիւրեր: Հաւաքին յաջորդա-
բար խօսք առին Անթիլիասի մայրավանքին
մէջ նոյն աշխատանքին լծուած գերմանացի
մասնագէտները: Անոնք ներկաներուն պար-
զեցին ձեռագիրները պահպանելու ազդու
միջոցները եւ միաժամանակ կաթողիկոսա-
րանին մէջ իրենց կատարած աշխատանքը:

6 դեկտեմբերին, «Շաղոյեան» կեդրոնին
մէջ, Հայկական երեսփոխանական պլոքին
հրաւերով հանդիպում մը տեղի ունեցաւ հայ-
րենակցական միութիւններու վարչութիւննե-
րուն հետ: Առաջին առիթով երեսփոխան Յա-
կոբ Բագրատունի զեկուցում մը ներկայա-
ցուց քաղաքական եւ գաղութային կացու-
թեանց մասին՝ անդրադառնալով այն մար-
տահրաւերներուն, որոնք ստեղծուած են այս
փուլին: Ան անդրադարձաւ նաեւ մօտիկ
ապագային կատարուելիք աշխատանքնե-
րուն:

Հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հա-
յաստանի դեսպանատան մշակոյթի բաժի-
նին, 10 հոկտեմբեր 2019-ին Համազգայինի
Լիւսի Թիւթիւնճեան սրահին մէջ բացումը
կատարուեցաւ հայրենի տաղանդաւոր գե-
ղանկարիչներ Ադասի եւ Արտաւազը Թալալ-
եաններու ցուցահանդէսին՝ 12 հոկտեմբեր
2019-ին, Լիբանանի հարաւը տեղակայուած
Ֆիւնիլ-ի միջազգային խաղաղապահ ուժե-
րուն հայկական ջոկատը, գլխաւորութեամբ
Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետու-
թեան դեսպան Վահագն

Աթաբէկեանի, այցելեց Արամ Ա. կաթողի-
կոսին: Վեհափառ հայրապետը ուրախութիւն
յայտնեց անգամ մը եւս հայոց բանակի զին-
ւորներուն հետ ըլլալուն համար եւ ընդգծեց,
որ իւրաքանչիւր հայ զինուոր հերոս մըն է՝
պատրաստ իր կեանքը զոհելու հայրենիքի
ազատութեան համար, եւ սա հայրենասի-

րութեան, հաւատքի, նուիրումի ու յանձնառութեան արտայայտութիւն է, ըսաւ ան՝ վկայակոչելով հայոց պատմութեան սրբագոյն պատերազմներէն Վարդանանց պատերազմը, ուր նոյնիսկ ուժերու անհաւասարակշռութիւնը եւ ֆիզիքական ծանր կորուստները արգելք չհանդիսացան գերագոյն յաղթանակ արձանագրելու: Վեհափառ հայրապետը աւելցուց, որ թերեւս այսօր եւս մեր դէմ կը պարզուին ծանր զէնքեր, ի մասնաւորի Ազրպէյճանի կողմէ, սակայն մենք ունինք մեր հաւատքը, կամքն ու վճռակամութիւնը:

Օրհնութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին, նա-



խագահութեամբ Պուրճ Յամուտի քաղաքապետական խորհուրդին եւ կազմակերպութեամբ Լիբանանի «Արցախ ֆոնտ»-ին, 29 նոյեմբեր 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացումը աւանդութեան վերածուած եւ հինգերորդ տարին ըլլալով կայացող «Արցախեան տօնավաճառ»-ին: Այս ցուցահանդեսն գոյացած հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի «Արցախ ֆոնտ»-ի ծրագիրներուն:

Մեկենասութեամբ ԳՈՅԱՐ համոյթին, անցնող շաբաթավերջին «Թեաթրոն» թատերախումբը «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերա-



սրահին մէջ երեք ելոյթներով հանդէս եկաւ «Կոմիտաս՝ Աստուծոյ պարգեւը» երաժշտախառն ներկայացումով՝ բեմադրութեամբ Սուրեն Խտըշեանի, հեղինակ՝ Լիլի Թոմասեան: Ներկայացումը կ'ընդգրկէր նաեւ անգլերէնով տողատակ՝ օտար հանդիսատեսին եւս ծանօթացնելու համար Կոմիտասը եւ անոր կեանքը, ստեղծագործութիւններն ու երգերը:

Յրաւերով ու նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին, 3 դեկտեմբերին Անթիլիասի մայրավանքին մէջ տեղի ունեցաւ մտաւորականներու հաւաք մը: Վեհափառ հայրապետը նախ պարզեց ներկաներուն Սիսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջով Թուրքիոյ դէմ կաթողիկոսարանի բացած դատին վերջին զարգացումները: Այս մասին անհրաժեշտ բացատրութիւններ տուաւ նաեւ Իրաւական յանձնախումբի անդամներէն դոկտ. Նորա Պայրազտարեան: Ապա, վեհափառ հայրապետը անդրադառնալով սփիւռքի պարզած ներկայ կացութեան, յիշեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու վերակազմակերպման աշխատանքը ընթացքի մէջ է: Միաժամանակ, ան շեշտեց ամբողջ սփիւռքի վերակազմակերպման ու վերաշխուժացման հրամայականը՝ ի



խնդիր Յայաստանի, Արցախի եւ ազգային պահանջատիրութեան առաւել հզօրացման: Վեհափառ հայրապետը յայտնեց, որ այս գծով ինք նախնական աշխատանքներու լծուած է: Մտաւորականներու հաւաքին երրորդ նիւթը Լիբանանը դիմագրաւած ներկայ տնտեսական տագնապն էր, յատկապէս՝ անոր հետեւանքները Լիբանանի հայութեան

կեանքին մէջ: Կաթողիկոսարանը հարիւր միլիոն լիբանանեան ոսկի Լիբանանի Ազգային առաջնորդարանի տրամադրութեան տակ կը դնէ, իբրեւ անմիջական օժանդակութիւն՝ յատկացուելու համար մեր կարիքաւոր ընտանիքներուն: «Արարատ», «Ազդակ» եւ «Չարթօնք» օրաթերթերուն կը յատկացնէ տասական միլիոն լիբանանեան ոսկի՝ առ ի գնահատանք ու զօրակցութիւն իրենց կատարած աշխատանքներուն:

6 դեկտեմբեր 2019-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի հրաւերով, հայ երեք համայնքապետներ՝ Նարեկ արքեպիսկոպոս, Պէյրութի Յայ կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական Գեորգ Եպս. Ասատուրեան եւ Մերձաւոր Արեւելքի Յայ աւետարանական եկեղեցիներու միութեան Կեդրոնական մարմինի ատենապետ վեր. Րաֆֆի Մսրըլեան հանդիպում մը ունեցան լիբանանահայ ընկերային, բժշկական եւ ծառայողական կառույցներու ներկայացուցիչներուն հետ:

10 դեկտեմբեր 2019-ին, Պուրճ Ճամուտի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, Լիբանանի հայ երեք համայնքապետներու գլխաւորութեամբ, հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հոգեւորականներու ու հաւատացեալներու մասնակցութեամբ եւ հայկական կուսակցութիւններու, մշակութային, բարեսիրական, առողջապահական ու մարզական կառույցներու եւ մեծաթիւ հաւատացեալներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Լիբանանի խաղաղութեան համար աղօթք:

ՊՈՒՐՃ ՅԱՄՈՒՏԻ ԸՊՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Պուրճ Ճամուտի քաղաքապետարանը անցնող տարուան ընթացքին բեղուն գործունէութիւն ծաւալեց: Ան ամէն միջոց օգտագործեց Պուրճ Ճամուտը վերածելու ապահով, խաղաղ եւ բազմաթիւ յարմարութիւններով օժտուած շրջանի մը: Բազմաթիւ հանդիպումներ ունեցաւ տեղական եւ օտարերկրեայ կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու հետ սերտելու համար այն բոլոր միջոցները եւ կարելիութիւնները, որոնք աւելի յարմարաւետ կը դարձնեն կեանքը Պուրճ Ճամուտի մէջ:

3 յունուար 2019-ին, աւելի քան 400 մանուկներ եւ պատանիներ, ընկերակցութեամբ իրենց ծնողներուն, եկած էին տօնելու «Սպիտակ ծնունդը» «Քազատու» խումբին եւ Ռիմին հետ: Պուրճ Ճամուտի քաղաքապետական խորհուրդին հովանաւորութիւնը վայելող եւ Լիբանանի հայոց թեմի կիրակնօրեայ վարժարաններուն կազմակերպութեամբ տեղի ունեցած այս աննախընթաց ձեռնարկը մեծ խանդավառութիւն ստեղծեց սրահին մէջ՝ ուրախ եւ հաճելի պահեր պարգեւելով բոլորին:

6 փետրուար 2019-ին, Պուրճ Ճամուտի մէջ փոքրիկներու խաղավայրի մը մէջ խաղալիք-



ներու տեղադրման բացումը կատարուեցաւ: Խաղավայրը պատրաստուած եւ հովանաւորած էր «Աքթըտ» կազմակերպութեան կողմէ, որ Լիբանանի մէջ կը գործէ տասնամեակէ ի վեր եւ գործակցութիւն ունի Պուրճ Ճամուտի քաղաքապետութեան հետ:

25 մարտ 2019-ին, Պուրճ Ճամուտի քաղաքապետարան այցելեց լեհական պաշտօնական պատուիրակութիւն մը՝ գլխաւորութեամբ Լեհաստանի Ազգային անվտանգութեան գրասենեակի նախագահ Փաւել Սոլոչի: Միջազգային օժանդակութեան լեհական կեդրոնի տնօրէն Ուոչեք Վիլք անդրադարձաւ Պուրճ Ճամուտին տրամադրուող լեհական օժանդակութիւններուն, որոնցմէ հիմնականօրէն կ'օգտուին Պուրճ Ճամուտի մէջ բնակող սուրիացի, իրաքցի եւ պաղեստինցի գաղթականները: Ան շեշտեց այդ օժանդակութիւններէն օգտուելու իմաստով զանոնք նաեւ շրջանին մէջ բնակող եւ աղքատութեան շեմէն վար գտնուող լիբանանցիներուն տրամադրելու անհրաժեշտութիւնը:

Քանատական կառավարական պատուիրակությունն մը՝ ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Քանատայի դեսպան Էմանուէլ Լամուրէոյի եւ Միջին Արեւելքի մէջ բարգաւաճման ծրագիրներու գործադիր տնօրէն Կավըն Պու-



խանի, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի բարգաւաճման ծրագրի ներկայացուցիչներու, որոնց շարքին՝ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի բարգաւաճման ծրագրի պատասխանատուի տեղակալ Սեյիւն Մոյրոյի եւ ընկերային հարցերու նախարարութեան ներկայացուցիչ Փիթըր Ֆարահի, այցելեց Պուրճ Ճամուտի քաղաքապետարան: Պուրճ Ճամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան եւ քաղաքապետական խորհուրդի անդամներ ընդունեցին քանատական պաշտօնական պատուիրակութիւնը, որուն հետ քննարկեցին շարք մը հարցեր:

4 ապրիլին Պուրճ Ճամուտ այցելեց գերմանական պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Քիրչիուստեմ փոքր աւանի քաղաքապետ Անտրեաս Ռէյների, Պաւարիոյ շրջանի Շթրաուպինկ քաղաքի քաղաքապետութեան զանազան բաժանմունքներու պատասխանատուներ, քաղաքաշինութեան եւ կոյաշուրերու հարցերու լուծման մասնագետներ ու խորհրդականներ: Գերմանական պատուիրակութեան այցելութիւնը կ'իյնար փոխժանօթացումի, փոխադարձ վստահութեան ամրապնդման, փորձի փոխանակման եւ փոխադարձ համագործակցութեան ամրապնդման ծիրին մէջ:

18 ապրիլ 2019-ին, Պուրճ Ճամուտի քաղաքապետական խորհուրդին նախաձեռնութեամբ քաղաքապետարանի երիտասարդական խմբակը Ս. Յարութեան տօնին առիթով, յատուկ առաքելութեամբ մը այցելեց ԲԱՅԼ-ի

տարեցներու տունը եւ համեստ յայտագիրով մը հանդէս եկաւ մամիկներուն եւ պապիկներուն: Կազմակերպութեամբ Պուրճ Ճամուտի քաղաքապետութեան, այս տարեշրջանին տեղի ունեցաւ «Ճամբադ տանդ պէս պահէ»



խորագիրով մաքրութեան արշաւը քանի մը հանգրուաններով, որուն մասնակցեցան Պուրճ Ճամուտի բնակիչներ, կրթական հաստատութիւններ, միութիւններ, կրօնաւորներ, հաստատութիւններ եւ շրջանին մէջ գործող տարբեր կուսակցութիւններ: Արշաւը ընթացք առաւ Պուրճ Ճամուտի կարգ մը թաղամասերուն մէջ: Այս արշաւին միտքը յղացաւ Պուրճ Ճամուտի քաղաքապետութիւնը, որպէսզի իւրաքանչիւր ամսուան առաջին կիրակին մաքրեն Պուրճ Ճամուտի տարբեր թաղամասերը՝ շրջանը մաքուր պահելու նպատակով, ինչպէս նաեւ ժողովուրդին մէջ մաքրութեան կարեւորութիւնը շեշտելով, որպէսզի ժողովուրդը այդ միասնական ոգիով մաքուր պահէ իր թաղամասերը:

13 յունիս 2019-ին, Պուրճ Ճամուտի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը՝ Հարաւային Ֆրանսայի քաղաքապետութիւններու ու «ԱԶԹԵՏ» միջազգային կազմակերպութենէն պատուիրակութիւններ:



րու եւ Պուրճ Զամուտի քաղաքապետութեան միջեւ. քննարկուեցան անցեալի աշխատանքները եւ ապագայ գործակցութեան հեռանկարները: «ԱԶԹԵՏ»-ը միջազգային կազմակերպութիւն մըն է, որ կը միտի օգնել մարդոց եւ կարիքաւորներուն՝ առանց խտրութեան, ապահով ապագայ մը կառուցելու համար:

Գործակցաբար ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերու ծրագիրին եւ Պուրճ Զամուտի քաղաքապետութեան, 19 յուլիս 2019-ի առաւօտեան ժամը 10:30-ին, ուշագրաւ ձեռնարկ մը տեղի ունեցաւ Պուրճ Զամուտի Նոր Մարաշ թաղամասին մէջ: Արդարեւ, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ Պուրճ Զամուտի եւ մօտակայքի շրջաններու հայ թէ ոչ հայ բնակիչներ հետզհետէ սկսան հասնիլ Պուրճ Զամուտի Մարաշ թաղամասէն դէպի Արաքս թաղ տանող փողոց, ուր երաժշտախառն խանդավառ մթնոլորտի մէջ անոնք ծանօթացան եւ տեղեկացան շրջանին համար նախատեսուող կանաչ տարածքները աւելցնելու ծրագիրին: Մասնակից կազմակերպութեանց ներկայացուցիչներ այցելուներուն ներկայացուցին անհրաժեշտ տեղեկութիւններ նախատեսուող ծրագիրին մասին:

22 յուլիս 2017-ին արտերկրի լիբանանցի երիտասարդներու պատուիրակութեան մը այցելութենէն 2 տարի ետք, Զամաշխարհային լիբանանեան մշակութային համախմբումը, համագործակցութեամբ Պուրճ Զամուտի եւ Այնճարի քաղաքապետութիւններուն, 25 յուլիս 2019-ին, կազմակերպեց այցելութիւն մը դէպի Այնճար եւ անոր բերդը՝ ծանօթանալու համար շրջանի զբօսաշրջական եւ մշակութային արժանաւորական դիմագիծին:

Պուրճ Զամուտի քաղաքապետութեան նախաձեռնած շրջանի բարեգարդման եւ մաքրութեան արշաւի շարունակման ծիրին մէջ 7 օգոստոս 2019-ին, հաւաք մը տեղի ունեցաւ քաղաքապետարանի ժողովրդային շէնքերու «Սերոբ Աղբիւր» ակումբին մէջ՝ Պուրճ Զամուտի քաղաքապետութեան պատուիրակութեան եւ նշեալ շէնքերու բնակիչներուն միջեւ, իսկ 6 օգոստոս 2019-ին հետաքրքրական եւ շահեկան հաւաք մը տեղի ունեցաւ Արագածի ակումբին մէջ՝ ներկայութեամբ քաղաքապետ Մարտիկ Պողոսեանի եւ շրջանի

բնակիչ ազգայիններու հոծ բազմութեան: Պողոսեան նշեց, որ Պուրճ Զամուտի քաղաքապետութիւնը, գործակցաբար բնակիչներուն հետ, պիտի վերացնէ անգործածելի եւ լքուած սարքերն ու գոյքերը եւ պիտի բարեզարդէ ու ներկէ շրջանի շէնքերուն ճակատները՝ ներդաշնակ գոյներով գեղատեսիլ պատկեր մը ունենալու համար: Ապա քաղաքապետ Մարտիկ Պողոսեան պարզեց Պուրճ Զամուտի ընդհանուր տեսքին գծով քաղաքապետութեան նախատեսած գունազարդ ու գեղատեսիլ համայնապատկերը՝ մաղթելով, որ անկա օրինակ դառնայ այլ շրջաններու:

19 օգոստոս առաւօտեան ժամը 10:30-ին, Ազգային միացեալ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին «Արտ» ընկերութիւնը ներկայացուց Պուրճ Զամուտ-Տորա շրջանին մէջ կառուցելիք կոյաջուրերու գտարանին ծրագիրը՝ կատարելով անոր ունենալիք կենսոլորտային ազդեցութեան եւ հետեւանքներուն արժեւորումը:

Պուրճ Զամուտի բարեգարդման ու մաքրութեան գծով շրջանի քաղաքապետութեան ցարդ արձանագրած իրագործումներու հետապնդման ու գնահատման նախանձախնդրութեամբ, ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Պուրճ Զամուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան, 1 սեպտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ շրջեցան Պուրճ Զամուտի, յատկապէս՝ Արագածի թաղամասերուն մէջ՝ հասնելով մինչեւ Ժողովրդային շէնքեր ու Պուրճ Զամուտը Տըքուանէին կապող կամուրջը: Պատուիրակութիւնը մերթ ընդ մերթ կանգ առաւ Արագածի, ինչպէս նաեւ Պուրճ Զամուտի կամուրջին եւ Ժողովրդային շէնքերու մուտքերուն՝ մօտէն ստուգելու եւ գնահատելու գունազարդուած բնակարաններու արտաքին տեսքը, տանիքներու թէ փողոցներու մաքրութիւնը, աղբերու վերացման աշխատանքի կարգաւորումները եւ յարակից իրագործումները՝ բարձր գնահատելով քաղաքապետութեան անձնակազմին ճիգերը:

Պուրճ Զամուտի բարգաւաճման եւ բարեգարդման ճիգերու ծիրին մէջ, 12 սեպտեմբեր 2019-ին, Բրիտանական միջազգային բար-

գաւաճման նախարարութեան Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի բաժանմունքի նախագահ՝ Մարք Պրայսըն Ռիչըրտսընի գլխաւորած պատուիրակութիւնը այցելեց Պուրճ Յամուտի քաղաքապետութիւն եւ հանդիպում ունեցաւ քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի հետ: Շուրջ մէկուկէս ժամ տեւած խորհրդակցութեանց առանցքը կազմեցին Պուրճ Յամուտի առեւտրական շրջանի եւ յատկապէս Արաքս թաղամասի բարգաւաճման ու բարեգարդման ծրագիրի ու այս գծով միջազգային կազմակերպութեանց, այս պարագային՝ ՄԱԿ-ի եւ բրիտանական նշեալ ծրագիրն երու մանրամասնութիւնները:

Պուրճ Յամուտի քաղաքապետարանն ու յարակից թաղամասերը, 11 հոկտեմբերին դարձեալ կիզակետը դարձան տեղական թէ միջազգային, յատկապէս՝ ՄԱԿ-ի պատկան մարմիններու ուշադրութեան: Արդար, եւ, ՄԱԿ-ի քաղաքական եւ խաղաղութեան հաստատման հարցերով ներկայացուցիչ Ռոզմարի Տիքարլօ եւ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի գործավար Ֆիլիպ Լազարիսի, 11 հոկտեմբեր 2019-ին,



պատուիրակութիւն մը գլխաւորելով, այցելեցին Պուրճ Յամուտի քաղաքապետարան եւ հանդիպում ունեցան քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի հետ: Խորհրդակցութեանց առանցքը կազմեցին 2016-էն ի վեր Պուրճ Յամուտի մէջ կիրարկուող ենթակառոցի նորոգման, կենցաղային պայմաններու բարելաւման, թաղամասերու բարեգարդման, գաղթականներու թէ ոչ լիբանանցի աշխատաւորներու հիւրընկալման եւ կեցութեան պայմաններու բարելաւման առումով քաղաքապետական նախաձեռնութիւնները:

Պուրճ Յամուտի Նոր Մարաշ շրջանի կարգ մը թաղամասերու բարգաւաճման եւ արդիականացման ծրագիրի կիրարկման զուգահեռ, 27 սեպտեմբերին Լեհաստանի արտաքին գործոց նախարարութեան արեւելեան քաղաքականութեան եւ տնտեսական ու բարգաւաճման գործակցութեան բաժանմունքի տնօրէն պատասխանատու Մարքին Փրզիտաչ այցելեց Պուրճ Յամուտի քաղաքապետարան եւ լայնածիր խորհրդակցութիւն ունեցաւ քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի հետ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»

«Վանայ Զայն»-ը այս տարի եւս իր հեռարձակումներով օգտաշատ յայտագիրներու եւ ծրագիրներու ընդմէջէն աշխատեցաւ լուսարձակի տակ առնել լիբանանահայութիւնը յուզող շատ խնդիրներ եւ նոյն ատեն հայ մշակոյթով յաջողեցաւ ստեղծել ուրախ տրամադրութիւն: Անցնող տարուան ընթացքին ուշագրաւ էր «Ձեռք երկարենք» յայտագիրը, որ յաջողեցաւ տեղական պայմաններով հասնիլ ու զօրակցիլ այն բոլոր մարդոց, որոնք կարիքը ունին նեցուկի թէ՛ նիւթապէս, թէ՛ բարոյապէս: Նկատի պէտք է առնել նաեւ «Տագնապը եւ մենք» յայտագիրներու շարքը, որ լուսարձակի տակ կ'առնէ ազգային մեր կառոյցներուն ունեցած դժուարութիւնները եւ հանրային քննարկումով կը ներկայացնէ անոնց դիմագրաւած գլխաւոր միջոցները:

4 մայիս 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ «Վանայ Զայն»-էն ուղղակի ձայ-



նասփումով տեղի ունեցան 9 տարեկան դարձած «Ճիշդ հնչենք» յայտագիրի աւարտական փուլն ու մրցանակաբաշխութիւնը՝

հովանավորությամբ Մարաշի հայրենակցական միության եւ կազմակերպությամբ «Վանայ Ձայն» ձայնասփիւռի կայանին:

Իսկ 24 մայիսին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ ընթացք առաւ «Վանայ Ձայն»-ի երիտասարդ խօսնակներու պատրաստութեան դասընթացը, կազմակերպությամբ ռատիոկայանի տնօրէնութեան, մասնակցութեամբ լիբանանահայ վարժարաններու երկրորդական բաժնի 17 աշակերտներու: Դասընթացը, ըստ կայանի տնօրէն Վիգէն Աւագեանի, պիտի երկարի քանի մը շաբթուան վրայ: Նիւթերը պիտի փոխանցեն «Վանայ Ձայն»-ի հանրաժանօթ, փորձառու խօսնակները: 31 յուլիսին, «Վանայ Ձայն»-ի տնօրէն Վիգէն Աւագեան Երեւանի մէջ այցելեց



Հանրային ռատիոյի կեդրոն եւ շուրջ մէկ ժամուան տեսակցութիւն մը ունեցաւ Նոր նշանակուած տնօրէն Գարեգին Խումարեանի հետ: Տեսակցութեան սկիզբը, Վիգէն Աւագեան Խումարեանը շնորհաւորեց Նոր պաշտօնին ստանձնման առիթով, եւ ներկայացուց «Վանայ Ձայն»՝ Հայաստանի Հանրային ռատիօ քանի մը տարուան գործակցութեան դրական արդիւնքները: Ան շեշտեց գործակցութեան շարունակման եւ ամրապնդման անհրաժեշտութիւնը՝ հարազատ հայ երգի ու երաժշտութեան տարածման, ազգային մշակոյթի եւ ինքնութեան պահպանման ի խնդիր:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը հաւատարիմ իր առաքելութեան եւ տեսլականին, շարունակեց իր ձեռնարկներով միշտ վառ պահել հայ մշակութա-

յին արժէքները հայ ազգի զաւակներուն եւ յատկապէս երիտասարդ սերունդին մօտ:

Անցնող տարուան ընթացքին կազմակերպությամբ Համազգայինի Գիր եւ գրականութիւն մասնաճիւղին, 7 փետրուար 2019-ին «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունե-



ցաւ Խաչիկ Տետեանի «Երազէն անդին» բանաստեղծութիւններու Ա. եւ Բ. հատորներու շնորհահանդէսը:

8 փետրուար 2019-ին, Համազգայինի «Ն. Փալանճեան» կեդրոնի «Վասպուրական» սրահին մէջ տեղի ունեցաւ Կամիլա Երկանեան-Քէշիշեանի «Ծաղկած ցաւ» գիրքին գի-



նեճօնը՝ կազմակերպությամբ Համազգայինի «Կոմիտաս» մասնաճիւղին:

Համազգայինի 90-ամեակը, 24 փետրուար 2019-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ նշուեցաւ տպաւորիչ հանդիսությամբ, որ լաւագոյն ապացոյցն էր միութեան առաքելութեան յաջողութեան, որովհետեւ բեմին վրայ գեղեցիկ ու խօսուն ներկայութիւն էին Համազգայինի «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնի աշակերտներն ու ուսուցիչները, հայրենի տաղանդաւոր արուեստագետներ, Համազգայինի պատասխանա-



տուններ, նաեւ, հպարտօրէն, այս միութեան տարբեր բնագաւառներուն ծառայած նուիրեալներ, որոնց պարգեւատրումը սիրտ լեցընող է բոլորին համար: Օրուան պատգամը փոխանցեց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, որ իր խօսքէն ետք Համազգայինի շքանշանով պարգեւատրեց Համազգայինի երթին մէջ իրենց ուրոյն ներդրումը, դրոշմը եւ վաստակը ունեցած Սուրէն Սարգիսեանը, Երուանդ Փամպուքեանը, Գեղանի Էթիմեմզեանը, Արմենակ Եղիայեանը, Սարգիս Արմենեանը եւ Յուլիա Թիւթելեանը:

21 փետրուար 2019-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ Համազգայինի «Սօս Սարգսեան»-ի անուան թատրոնի հայրենի տաղանդաւոր արուեստագետներ Արման Նաւասարդեանի եւ Տաթևիկ Ղազարեանի հանդէս եկան գեղեցիկ, հաղորդական, մերթ յուզիչ, մերթ խանդավառող, մերթ սիրոյ մեղեդիներով օրօրող ասմունքներով:

Իսկ 22 փետրուար 2019-ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահը անգամ մը եւս ժամադրավայրը հանդիսացաւ լիբանանահայ արուեստասեր հասարակութեան, որ եկած էր ունկնդրելու Ֆրանքա Ռամէի եւ Տարիօ Ֆոյի «Սովորական օր» իւրայատուկ մենաներկայացումը՝ կատարողութեամբ հայրենի վաստակաւոր դերասանուհի Տաթևիկ Ղազարեանի:

Հայ հասարակութեան մէջ գլխաւորաբար ֆիլմարուեստի աշխարհին համար յօրինւած իր երաժշտութիւններով ծանօթ Տիգրան Մանսուրեանը, 13 փետրուարին Համազգայինի մեծ ընտանիքին նախաձեռնութեամբ

մտերմիկ հանդիպում ունեցաւ լիբանանահայ արուեստասեր հասարակութեան ներկայացուցիչներուն հետ, Համազգայինի «Լէւոն Շանթ» մշակութային կեդրոնին մէջ: Համազգայինի հիմնադրութեան 90-ամեակի ձեռնարկները իրենց տարողութեամբ ուղղակի պատգամներ են հայ ժողովուրդին՝ տեր կանգնելու հայ մշակոյթին եւ իբրեւ աւանդ փոխանցելու զայն յաջորդող սերունդներուն: Այս առումով Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը, հաւատարիմ միութեան հիմնադիրներուն ուղեգիծին, շարք մը ձեռնարկներով մշակութային բուրաստան մը պարգեւեց լիբանանահայութեան՝ գեղեցկացնելով եւ ազնուացնելով ունկնդիր արուեստասերներու հոգիները: Արդարեւ, վերջին ձեռնարկը տեղի ունեցաւ 25 փետրուար 2019-ի երեկոյեան, «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ, ուր հանդէս եկան Հայաստանի վաստակաւոր արուեստագետ Չարուհի Պապայեան եւ երգի բազմաթիւ մրցանակներու դափնեկիր Սոնա Ռուբէնեան:

Համազգայինի գեղարուեստի դպրոցներուն կազմակերպութեամբ 20 մարտ 2019-ին, Հայ աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ երաժշտական երեկոյ մը՝ կատարողութեամբ հայրենի երգչուհի Սթեֆանի Զոչարեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Սիրվարդ Պոյաճեան-Սապունճեանի:

Կազմակերպութեամբ Լիբանանեւգերմանական մշակութային կեդրոնին (Kulturzentrum) եւ գործակցութեամբ Համազգայինի գեղարուեստի դպրոցներուն, 27 մարտ 2019-ին, Ճիւնիի Լիբանանեւգերմանական դպրոցի սրահին մէջ տեղի ունեցաւ

բարձրորակ համերգ մը՝ կատարողութեամբ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի Եռեակին, Սիրվարդ Պոյաճեան-Սապունճեան՝ դաշնակ, Յովհաննես Գարախանեան՝ ջութակ, Նայիրի Ղազարեան՝ թաւջութակ:

29 մարտին «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնի, «Գ. եւ Յ. Արմենեան» սրահին մէջ



տեղի ունեցաւ Նահապետ Զուլակի, անոր կեանքին, ստեղծագործութիւններուն եւ ժառանգին նուիրուած իւրայատուկ երեկոյ մը, որուն ընթացքին կատարուեցաւ Կարօ Աւետեանի «Երեք հայրէն Զուլակէն» ստեղծագործութեան գինեձօնը:

Համազգայինի «Թորոս Ռոսլին» կերպարւեստի դպրոցին կազմակերպութեամբ՝ ամենամեայ միջդպրոցական գծագրութեան մրցանքը տեղի ունեցաւ 6 ապրիլ 2019-ին, Համազգայինի «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնին մէջ: Մրցանքին իրենց մասնակցութիւնը բերին տարիքային երեք խումբերու բաժնուած (6-8, 9-12, 13-16 տարեկան) 44 մանուկներ եւ պատանիներ:

7 ապրիլ 2019-ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ եզրափակուեցաւ Սօս Սարգսեանի անուան Համազգային պետական թատրոնին լիբանանեան ներկայացումներու գեղարուեստական ծրագիրը՝ Յովհաննես Թումանեանի եւ Կոմիտաս վարդապետի ծննդեան 150-ամեակին նուիրուած ձեռնարկով: Անիկա կը վայելէր Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին նախագահութիւնը եւ իրականացաւ Լիբանանի Հայոց Ազգային առաջնորդարանին եւ Համազգայինի «Գ. Իփեկեան» թատերախումբի վարչութեան նախաձեռնու-

թեամբ: Նախորդող օրերուն լիբանանահայ արուեստասեր հանրութիւնը կարելիութիւնը ունեցաւ թատերական իւրայատուկ պահեր ապրելու Սօս Սարգսեանի ծննդեան 90-ամեակին եւ թատրոնի միջազգային օրուան առիթով Սօս Սարգսեանի անուան Համազգային պետական թատրոնին կողմէ մատուցուած 3 թատերախաղերուն ընդմէջէն՝ «Արի երագենք», «Յաղթանակի ծննդոց», «Թռիչք քաղաքի վրայով»:

Համազգայինի առաքելութիւնը արդիւնաւետ ձեւով իրագործելու նպատակով՝ 7-րդ Պատգամաւորական ժողովը ընդգծած էր անհրաժեշտութիւնը ստեղծելու արդիական շունչով առցանց բեմ մը՝ հասնելու համար սփիւռքահայութեան, յատկապէս՝ երիտասարդութեան: Մանրամասն ծրագրումէ եւ գործնական աշխատանքներէ ետք, h-pem.com-ը հանրութեան հասանելի դարձաւ 13 մայիս 2019-ին: Համազգայինի առցանց բեմին թիրախն է հասնիլ սփիւռքահայ համայնքներուն, կապ եւ լեզու ստեղծել՝ յարաբերելու համար հայերէնէն, հայկականէն եւ հայութենէն հեռացող բազմութիւններուն հետ, մասնաւորաբար՝ նոր սերունդներուն հետ, զանոնք հայ մշակոյթին եւ հայութեան երթին մօտեցնելու հեռանկարով:

Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ եւ Պէյրութի ամերիկեան համալսարանին հետ գործակցաբար 19 մայիս 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Պէյրութի ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ին մէջ, Համազգայինի «Կարկաչ» մանկական ու պատանեկան երգչախումբը հանդես եկաւ իր տարեկան ելոյթով՝ ղեկավարութեամբ եւ խմբավարութեամբ Չաքար Բէշիշեանի, ընկերակցութեամբ դաշնակահարներ Լիանա Յարութիւնեանի եւ Լիւսի Գոուզեանի:

24 մայիս 2019-ին, Սին Էլ Ֆիլի «Նեպիլ Բահիալէ» սրահին մէջ տեղի ունեցաւ Հա-



մազգայինի գեղարուեստի դպրոցներու պալէի դպրոցի աշակերտներուն հետաքրքրական ելոյթը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ պարուսոյց ժաքլին Մակինեանի:

30 եւ 31 մայիսին Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբը արդէն իսկ սկսաւ լիբանանահայ արուեստասերին հրամցնել իր այս տարուան ներկայացումը՝ Նիլ Սայմընի «Տը կուտ տաքթըր» կատակեր-



գութիւնը, զոր բեմադրած եւ անոր մէջ բեմագրական որոշ փոփոխութիւններ կատարած է Յակոբ Տէր Ղուկասեան:

Կազմակերպութեամբ Համազգայինի «Բ. Կանաչեան» երաժշտական քոլեճին, 2 յունիս 2019-ին, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Տաւիղ» նուագախումբի համերգը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ եւ խմբավարութեամբ Մկրտիչ Միքայէլեանի:

6 յունիս 2019-ին, Համազգայինի «Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի դպրոցի ամավերջի աշակերտական ցուցահանդէսն ու վկայականաց բաշխումը:

Կազմակերպութեամբ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան, 9 յունիս 2019-ին, «Սեն ժոզեֆ» համալսարանի «Փիեռ Ապու Խաթեր» թատերասրահին մէջ տեղի ու-



նեցաւ կիթառի եւ լարային քառեակի համերգ՝ գեղարուեստական խմբավարութեամբ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի շրջանաւարտ եւ ներկայիս ուսուցիչ Մկրտիչ Միքայէլեանի:

9 յունիս 2019-ին, Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի անդամներէն խումբ մը հասաւ Հայաստան, ուր ներկայացուց Նիլ Սայմընի «Տը կուտ տաքթըր» կատակերգութիւնը, զոր բեմադրած եւ անոր մէջ բեմագրական որոշ փոփոխութիւններ կատարած է Յակոբ Տէր Ղուկասեան: «Տը կուտ տաքթըր»-ի հայաստանեան առաջին ներկայացումը տեղի ունեցաւ 10 յունիսին, Գիւմրիի «Վարդան Աճեմեան»-ի անուան պետական դրամատիկական թատրոնին մէջ, անոր յաջորդեց վանաձորեան ներկայացումը՝ 12 յունիսին, «Յովհաննէս Աբէլեան»-ի անուան պետական դրամատիկական թատրոնին մէջ, իսկ 3-րդ եւ վերջին ներկայացումը եղաւ 13 յունիսին՝ Երեւանի «Սօս Սարգսեան»-ի անուան Համազգայինի պետական թատրոնին մէջ:

Համազգայինի գեղարուեստի դպրոցներուն կազմակերպութեամբ, 27-28 յունիսին տեղի ունեցաւ Համազգայինի «Գայեանէ» պարի դպրոցի տարեկան ելոյթը, որ անցնող տարուան ընթացքին բաղկացած էր երկու արարներէ. առաջին արարով դպրոցին աշակերտները հետաքրքրական ոճով հրամցուցին Մոկլին, իսկ երկրորդ արարով տպաւորիչ կերպով բեմականացուցին «Կաթիլ մը մեղր»-ը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Կարեն եւ Ժաքլին Մակինեաններուն:

Իսկ 5 յունիս 2019-ին, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի հովանաւորութեամբ, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցան Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի 2018-2019 կրթական տարեշրջանի ամավերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Համազգայինի «Գուսան» երգչախումբը 30 յունիս 2019-ին արժանավայել կերպով նշեց իր հիմնադիրին՝ Կոմիտասի ծննդեան 150-ամեակը: Համերգը տեղի ունեցաւ վարչապետարանին դիմաց գտնուող Ազգային աւետարանական եկեղեցւոյ մէջ, Չոքաթ

Պլաթ, ներկայութեամբ պաշտօնական, միութենական ներկայացուցիչներու եւ երաժշտասեր բազմութեան:

Տարբեր երկիրներէ Հայաստանի մէջ համախմբուած երիտասարդներու մասնակցութեամբ, Համազգայինի ուսանողական հաւա-



քի 2019-ի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 15 յուլիս 2019-ին: Ֆորումի բացման հաւաքին մասնակիցները ծանօթացան Համազգայինի առաքելութեան եւ գործունեութեան, ինչպէս նաեւ՝ ֆորումի ծրագիրին, նպատակին եւ օրէնքներուն:

Ատիս Հարմանտեանի յիսուն տարիներու վաստակը լուսարձակի տակ առնուեցաւ եւ արժանի յարգանք մատուցուեցաւ անոր 27 սեպտեմբեր 2019-ին, Ազգային միացեալ



վարժարանի, «Ժիրայր եւ Յովինէ Խաչատուրեան» սրահին մէջ: Սոյն գնահատանքի ձեռնարկը կազմակերպած էր Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը եւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի օրհնութիւնը կը վայելէր:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՅԷ ՍԵԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆ-ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏԱՐԱԾ,
ԳՐԱԽԱՆՈՒԹ**

Համազգայինի «Վահէ Սեթեան» հրատարակչատան-տպարան-գրատարած, գրախանութի եւ «Լիւսի Թիւթիւնճեան» ցուցասրահի կառոյցը այս տարեշրջանին նաեւ շարունակեց իր առաքելութիւնն ու աշխատանքները:

Համազգայինի հրատարակչատան գանձարանը հարստացաւ աւելի քան 20 նոր գիրքերով եւ վերահրատարակութիւններով՝ «Քաղաքավարութեան վնասները», «Չարթօնք», «Ճանապարհորդութիւն Արցախ», «Bible Engagement», «Աշոտ երկաթ», «Լեւրան ոգին», «Ազդակ բացառիկ 1957 նուիրած հայ ուսանողութեան», «Մեր երգարանը», «Ծաղկած փշալարեր», «Յուշեր եւ վկայութիւններ Կարօ Սասունի», «Մանուշակն ու Վարդիկը», «Յեքիաթներ», «Սիրոյ ուժը», «Առիւծ ձին», «Իշխանն ու դժոխքի տիրակալը», «Ընկ. Հրայր Մարուխեանի ծննդեան 90-



ամեակի եւ մահուան 20-ամեակի նուիրուած գրքոյկ», «Գրիգոր Ակոբեանի ալպոմ»:

Այս տարեշրջանը յատկանշուեցաւ բողբոջ դասարանի նոր դասագիրքին լոյս ընծայումով, որուն հովանաւորութիւնը ստանձնեց «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան հայկական բաժանմունքը, մասնակցութեամբ Համազգայինի հիմնադրամներու հրատարակչական ֆոնտին: Լոյս տեսաւ 2019-2020 տարեշրջանի «Հայ աշակերտին դասացուցակը»: Շարունակուեցան շրջուն ցուցահանդէսները:

Կազմակերպուեցաւ Արցախեան մշակութային շաբաթ գործակցաբար Համազգայինի



Արցախի գրասենեակին հետ, որուն ընթացքին տեղի ունեցաւ գիրքերու ցուցահանդես եւ արուեստի գործերու ցուցահանդես-վաճառք՝ Պէյրուսի եւ Այնճարի մէջ: Այս ծրագիրը կ'առաջադրէր քաջալերել Արցախի արուեստագետ երիտասարդ մարդուժը: Հարկ է նշել, որ բոլոր ձեռնարկներուն ժողովուրդին ընդառաջումը եղաւ գնահատելի:

Այս տարեշրջանը կը զուգահայէր Համազգայինի «Լիւսի Թիւթինճեան» ցուցասրահի 10-ամեակին, որուն մեկնարկը տրուեցաւ հայրենի 48 արուեստագետներու հաւաքական ցուցահանդեսով: Շարքը շարունակուեցաւ Աշոտ Յարութիւնեանի, Գրիգոր Ակոբեանի (ալպոմի մակագրութիւն եւ 50 տարիներու



ստեղծագործական աշխատանքին ցուցահանդես), Արցախիցի տաղանդաւոր նկարիչներու, Լիբանանահայ երիտասարդ արուեստագետներու եւ Թալալեան եղբայրներու ցուցահանդեսներով: Ցուցասրահը մասնակցեցաւ Միջին Արեւելքի մէջ առաջին արաբական արուեստի ցուցահանդեսին՝ «Արաբ Արթ Ֆեր»-ին:

Ցուցասրահի տասնամեակը նշուեցաւ նաեւ Հայաստանի մէջ: 8 հոկտեմբերին, Երեւանի «Խնկո Ապոր» անուան գրադարանին մէջ

տեղի ունեցաւ յոբելեական հանդիպում-ցերեկոյթ: Հանդիպում-ցերեկոյթին մասնակցեցան հայրենի բոլոր այն արուեստագետները, որոնք նախորդող տասը տարիներուն ընթացքին համագործակցած էին ցուցասրահին հետ: Հանդիսութեան ներկայ էին նաեւ Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամներ, Համազգայինի Հայաստանի հոգաբարձուներու խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ Համազգայինի Երեւանի գրասենեակի տնօրէնութիւնն ու անձնակազմը:



Համազգայինի գրախանութիւնը, մի՛շտ ալ, սփիւռքահայ հրատարակութիւններու կողքին, իր հաւաքածոն թարմացուց հայրենի ժամանակակից հրատարակութիւններով: Յայտնենք, որ գրախանութիւնը օժտուած է նաեւ պոլսահայ գրականութեան հարուստ հաւաքածոյով մը:

Համազգայինի էլեկտրոնային գրադարանը E-Library-ն, հարստացաւ Համազգայինի նոր հրատարակութիւններով: Այս ծիրէն ներս գործակցութիւն հաստատուեցաւ նաեւ Volume համագործակցութիւնը E-Library-ին հետ:

Գրախանութի եւ ցուցասրահի կից այս տարեշրջանին հանրութեան ներկայացուցիւք հայաստանեան արուեստագետներու ձեռնակերտը հանդիսացող արուեստի գործերէն եզակի նմուշներ:

Հրատարակչական եւ ցուցասրահի կարգ մը ծրագիրներ, վերջին 2 ամիսներուն ստեղծուած կացութեան բերումով, յետաձգուեցան յառաջիկայ տարուան:

ԼՕԽ

ԼՕԽ-ի Շրջանային վարչութիւնը այս տարի եւս իր ծաւալուն գործունեութեամբ մնաց հայ ժողովուրդի զաւակներուն կողքին հաս-

նելով անոնց ամենօրեայ կարիքներուն՝ տարբեր բնոյթի ծառայութիւններ մատուցելով անոնց: ԼՕԽ-ական ընկերուիները իրենց մասնաճիւղերուն մէջ եւ ապրած շրջաններուն մէջ նպաստեցին թեթեցնելու դժուարութիւններ, որոնք հարուածեցին գաղութը այս շրջանին: Օգտաշատ էին «Արաքսի Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի կազ-



մակերպած առողջապահական եւ այլ նիւթերով դասախօսութիւնները եւ ձեռնարկները, ինչպէս օրինակ՝ 23 յունուար 2019-ին մորթային հիւանդութեանց մասնագետ տորթ. Էլիօ Զէշիշեան ներկայացուց «Մորթի տարիքային փոփոխութիւններ» նիւթը:

26 յունուար 2019-ին, «Արաքսի Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկ-



եան» սրահին մէջ տեղի ունեցաւ ԼՕԽ-ի 26 մասնաճիւղերու պատմականը բովանդակող «Մեր պատմութիւնը» հատորին գինեձօնը:

28 յունուար 2019-ին, տորթ. Յովհաննէս Թաւաքեան դասախօսեց «Չայ դատը երէկ եւ այսօր» նիւթի մասին, 20 մարտ 2019-ին, հանրային առողջապահութեան մասնագետ դոկտ. Թամար Գապաքեան-Չաշէօլեան ներ-

կայացուց «Ախտաճանաչում. դրական մօտեցում՝ առողջ կեանքի մը համար» նիւթը, 20 փետրուարին, սննդագետ Սարին Շէկեանը ներկայացուց «Առօրեայ սննդականոնի գործնական թելադրանքներ եւ խորհուրդներ» նիւթը:

6 փետրուար 2019-ին, «Տարիքի յառաջացման հետ ֆիզիքական փոփոխութիւններէն յառաջացած բարդութիւններու կանխարգիւման միջոցները» նիւթը ներկայացուց տորթ. Կարապետ Չպուքճեանը: 6 փետրուար 2019-ին, Շաղիկ Կոկոնեան-Չամիչեան ներկայացուց «Ուղեղի կաթուածէ ետք խօսելու վերականգնման միջոցներ» նիւթը: 8 մայիս 2019-ին, տորթ. Յարութիւն Այնթապեան դասախօսեց արեան տկարութեան մասին: 4 դեկտեմբեր 2019-ին տորթ. Կարապետ Չպուքճեան դասախօսեց «Երակներու ընդլայնում (Varice)» նիւթը:

ԼՕԽ-ի յարաբերական յանձնախումբը, հաւատարիմ իր տարիներու աւանդութեան, դարձեալ կազմակերպեց տարեկան ճաշկերոյթ, որ տեղի ունեցաւ 7 մարտ 2019-ին, «Յիւթըն» պանդոկի ,«Լա Պուրսպուրում» սրահին մէջ: Սոյն ձեռնարկին ընդառաջեցին ԼՕԽ-ի գործին հաւատացող 265 բարերարներ, բարեկամներ եւ խաչուիիներ: ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան դաստիարակչական յանձնախումբը այս տարի, անգամ մը եւս պանծացուց Կիներու միջազգային օրը եւ կազմակերպեց պատշաճ ձեռնարկ 9 մարտ 2019-ին, «Արաքսի Պուլլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: Սոյն հանդիսութեան ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղեկատուական բաժանմունքի պատասխանատու Պետրոս վրդ. Մանուէլեան, ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Նելլի Վեքիլեան, ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան անդամներ եւ մեծ թիւով ԼՕԽ-ականներ: Այս ձեռնարկին «ԱՖՅԻԼ» իրերօգնութեան սնտուկի տնօրէն Յակոբ Լատոյեան Կիներու միջազգային օրուան առիթով դասախօսութեամբ հանդէս եկաւ:

22 մարտ 2019-ին, տեղի ունեցաւ Մանուէլներու միջազգային օրուան տօնակատարութիւնը, զոր կազմակերպած էր ԼՕԽ-ի Շրջա-



նային վարչութեան քարոզչական յանձնախումբը: Հանդիսութեան ներկայ էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս, Լիբանանի Մանուկներու ազգային մարմինի նախագահ դոկտ. Նուր Սալման, ԼՕԽ-ի Շրջանային վարչութիւնը, Լիբանանի Մանուկներու ազգային մարմինի անդամներ եւ հայկական վարժարաններու աշակերտներն ու ուսուցիչները:

Հովանաւորութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի, Ազգային առաջնորդարանի ընկերային յանձնախումբը եւ ԼՕԽ-ի Արաքսի Պուլղուրճեան ընկերաբժշկական կեդրոնը նախաձեռնած են քաղցկեղի կանխարգիլման նիւթով դասախօսութիւններու շարք մը, որուն առաջինը՝ «Աղիքներու քաղցկեղ» նիւթով, տեղի ունեցաւ 14 մարտին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:



Դասախօսն էր քաղցկեղի մասնագետ տոքթ. Համբիկ Զուրիէ: Տոքթ. Զուրիէ, «Թոքերու քաղցկեղ» նիւթը ներկայացուց 11 ապրիլին, «Միզամանի քաղցկեղ» խորագիրով դասախօսութիւնը՝ 9 մայիսին, «Կուրծքի քաղցկեղ» նիւթը 10 հոկտեմբերին, իսկ 13 յունիսին «Սննդականոն եւ քաղցկեղ» նիւթը ներկայացուցին քաղցկեղի մասնագետ տոքթ. Համբիկ Զուրիէ եւ սննդագետ Նարե Պուրսալեան:

Հովանաւորութեամբ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան եւ կազմակերպութեամբ ԼՕԽ-ի դաստիարակչական յանձնախումբին, 29 ապրիլ 2019-ին, ապրիլեան նահատակներու ոգեկոչման ձեռնարկ մը տեղի ունեցաւ «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: Օրուան բանախօսն էր «Ազդակ» օրաթերթի պատասխանատու խմբագիր Նորա Բարսեղեանը:

Վաղամեռիկ Զրիստափոր Օգնայեանին յիշատակը վառ պահելու միտումով իր ընտանիքը փափաքեցաւ ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ գործող ընկերային ծառայութեան գրասենեակը անուանել իրենց որդւոյն անունով, նկատի ունենալով, որ ան գործած է այս գրասենեակէն ներս: ԼՕԽ-ի Շրջանային վարչութիւնը իր հաւանութիւնը յայտնեց եւ «Զրիստափոր Օգնայեան» ընկերային ծառայութեան գրասենեակին բացումը կատարուեցաւ 10 մայիս 2019-ին, ներկայութեամբ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան եւ Զրիստափոր Օգնայեանի հարազատներուն: 17 յուլիս 2019-ին, «Առողջապահական օր» տեղի ունեցաւ ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ: Այս օրը կը կրէր «Հիմա՝ քննեցէք ձեր ճնշումը եւ վերջակետ» խորագիրը: «Առողջապահական օր»-ը ընդգրկեց արեան ճնշումի անվճար քննութիւն. 186 անձերու ճնշումը չափուեցաւ, եւ որոշ հարցումներ ուղղելէ ետք անհատներուն անոնցմէ խնդրայարոյց պարագաները փոխանցուեցան կեդրոնի հոգատարութեան: ԼՕԽ-ի «Նարօտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանը 1 յուլիս 2019-ին, մեկնարկը կատարեց ամառնային ծրագիրին: ԼՕԽ-ի «Նարօտ Արտալճեան» պարտեզ-գրադարանի երդիքին տակ աւելի քան 60 մանուկներ երկու ամիս շարունակ զարգացան, երգեցին, պարեցին, ուրախացան եւ առաւել հայօրէն կոփուեցան:

Ինչպէս ամէն տարի եւս 2 օգոստոս 2019-ին, Այնճարի ԼՕԽ-ի «Ալեքսան եւ Արաքսի Գլպաշեան» կազդուրման կայանի շէնքին մէջ 6-12 տարեկան մանուկներ իրենց պատասխանատուին եւ օգնականներուն հետ երկու շաբաթներու ընթացքին հետեւեցան մշակուած դաստիարակչական, ընկերային

եւ ազգային ծրագիրին: Անոնք հաճելի ժամեր անցուցին եւ Այնճարի կլիմայէն օգտուելով կազդուրուած վերադարձան Պէյրութ: Կազդուրման կայանի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ 18 օգոստոս 2019-ին:

20 սեպտեմբեր 2019-ին, «Սրտի մկանային անբաւարարութիւն» նիւթով դասախօսութիւնը ներկայացուց տորթ. Սահակ Քէշիշեանը ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ: 16 նոյեմբեր 2019-ին, ԼՕԽ-ի «Արաքսի Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի «Թնճուկեան» սրահին մէջ վարուելակերպի հարցերու մասնագետ Յասմիկ Դանիէլ ներկայացուց «Ինչպէ՞ս դիմագրաւել ճնշուածութիւնը» նիւթը:

Կազմակերպութեամբ ԼՕԽ-ի «Վարդուհի Տեկիրմենճեան» խոհանոցի յանձնախումբին, 25 սեպտեմբեր 2019-ին ԼՕԽ-ի «Եռլանտ Քերոբեան - Ճոմպալաքեան» սրտի ճաշարանին ծերունիները պտոյտ մը կատարեցին դէպի Ժիպէյլ: Անոնք նախ հանգստացան Ժիպէյլի հանրային պարտէզը, ապա ուղղուեցան «Թռչնոց բոյն»:

ՀՄԸՄ

ՀՄԸՄ-ը շարունակեց իր մարզական եւ սկաուտական ծրագիրները իրականացնել յաջողութիւններ արձանագրելով տարբեր



մարզերու մէջ: 5 յունուար 2019-ին, ՀՄԸՄ-ի ֆութպոլի ակադեմիային մարզիկները Ս. Ծննդեան տօնին առիթով յատուկ այցելութիւն մը տուին ԶԱՅԼ-ի ծերանոց՝ իրենց հետ տանելով տարբեր տեսակի նուէրներ եւ ուտեստեղէն: Անոնք ուզեցին իրենց ուրախութիւնը բաժնել հայ ծերունի պապիկներուն եւ

մամիկներուն հետ: Հանդիպումը ընթացաւ շատ ջերմ եւ ուրախ մթնոլորտի մէջ, որմէ ետք ակադեմիային մարզիկները իրենց հետ բերած նուէրները տուին ծերունիներուն: Այնուհետեւ անոնք միասնաբար կատարեցին կարկանդակի հատում եւ խոստացան այլ առիթներով ալ այցելել ԶԱՅԼ-ի ծերանոց:

26 յունուար 2019-ին բացումը կատարուեցաւ ՀՄԸՄ-ի ճիւղի՝ եղբ. Բաֆֆի Եսայեանի անուան ժողովասենեակին: Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին կազմակերպութեամբ, 26 եւ 27 յունուար 2019-ին, «Չմմառ Փալաս» պանդոկին մէջ տեղի ունեցաւ միամեայ ծրագրման ու կազմակերպական աշխատանքներու դաստիարակչական երկօրեայ սեմինար մը: Սոյն սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի անդամ եւ ՀՄԸՄ-ի Լիբանանի ներկայացուցիչ Վաչէ Նաճարեան, ՀՄԸՄ-ի Պուրճ Համուտի եւ Անթիլիասի մասնաճիւղերէ խմբապետներ Նարին Ադամեան, Սիմոն Տերտերեան եւ Մեղեդի Սնապեան:

Բարձր հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին, հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան, նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին, կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Լիբանանի



Շրջանային վարչութեան, 10 փետրուար 2019-ին, կէսօրէ առաջ ժամը 11:30-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ արժանավայել շուքով եւ պաշտօնականութեամբ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակի հանդիսութիւններու եզրափակիչ ձեռնարկը:

Կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային սկաուտական խորհուրդին եւ Շրջանային խմբապետութեան, 24 փետրուար 2019-ին, Ազգային Եղիշէ Մանուկեան քուլտուրի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկաուտի օր»-ը:

10 մարտ 2019-ին Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին



մէջ տեղի ունեցաւ պարգևատրումի հանդիսաւոր արարողութիւն՝ ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով:

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային սկաուտական խորհուրդին հովանաւորութեամբ,



Շրջանային խմբապետութեան կազմակերպած միօրեայ խմբապետական դաստիարակչական սեմինարը տեղի ունեցաւ 17 մարտ 2019-ին, «Աղբալեան ՀՄԸՄ»-ի մարզամշակութային համալիրին մէջ:

22 ապրիլ 2019-ին, հովանաւորութեամբ ՀՄԸՄ-ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպութեամբ ՀՄԸՄ-ի Անթիլիասի մասնաճիւղի սկաուտական խորհուրդին եւ խմբապետական կազմին, տեղի

ունեցաւ վերջին տարիներուն աւանդութիւն դարձած Հայոց ցեղասպանութեան յիշատակին նուիրուած մասնաճիւղային քայլարշաւը՝ Մզիերի «Աղբալեան-ՀՄԸՄ» մարզամշակութային համալիրէն դէպի Անթիլիասի մայրավանք: Քայլարշաւը առաջնորդեց մասնաճիւղին շեփորախումբը, անոր իրենց մասնակցութիւնը բերին սկաուտական բոլոր խումբերը, մասնաճիւղի ֆութպոլի եւ պասքեթպոլի դպրոցի մարզիկները, մասնաճիւղի վարչութեան եւ յանձնախումբերու անդամներ, մասնաճիւղի անդամներ, ծնողներ եւ բարեկամներ: Քայլարշաւին մասնակցեցան նաեւ պատկան մարմիններու ներկայացուցիչները, ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղի եւ «Աղբալեան» պատանեկան միութեան անդամներ:

23 ապրիլ 2019-ին, ՀՄԸՄ-ի Լիբանանի մասնաճիւղերու խմբապետական կազմերը, Շրջանային խմբապետութիւնը, մասնաճիւղերու սկաուտական խորհուրդն ու Շրջանային սկաուտական խորհուրդը, ինչպէս նաեւ Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ՝ ներկայացնելով ՀՄԸՄ-ի Լիբանանի բոլոր մասնաճիւղերը, այցելեցին Պիքֆայայի յուշարձան, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իրենց յարգանքի տուրքը մատուցելու Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակին:



24 ապրիլ 2019-ին, ՀՅԴ «Քրիստափոր» կոմիտէի եւ ՀՄԸՄ-ի, «Պէյրուք» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Հայաշէնի ժողովրդային տան առջեւէն ընթացք առաւ քայլարշաւ մը դէպի Ժեթթաուի՝ հայ կաթողիկէ պատրիարքարանին շրջափակը գտնուող Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշարձան:

29 ապրիլ 2019-ին, Նահր Մոթի «Անի» ակումբին դիմաց գտնուող պարտեզին մէջ

տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 104-ամեակի ոգեկոչում՝ հովանաւորութեամբ ՀՍԸՄ Ժտէյտիի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ ՀՍԸՄ Ժտէյտիի մասնաճիւղի սկաուտական խորհուրդին ու խմբապետական կազմին եւ ներկայութեամբ ՀՍԸՄ-ի Շրջանային վարչութեան:

ՀՍԸՄ-ի Կեդրոնական վարչութեան կազմակերպութեամբ եւ ՀՍԸՄ-ի Յունաստանի Շրջանային վարչութեան հիւրընկալութեամբ, 10 մայիսին Աթէնքի «Նովոթել» պանդոկի ժողովասրահին մէջ ընթացք առաւ միութեան երիտասարդական առաջին համագումարը՝ մասնակցութեամբ միութեան 17 շրջաններէ 18-30 տարիքի 39 երիտասարդ-երիտասարդուհիներու, ՀՍԸՄ-ի Կեդրոնական վարչութեան եւ Յունաստանի Շրջանային վարչութեան անդամներու:

26 մայիս 2019-ի երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, ուր տեղի ունեցաւ աւան-



դական դարձած մայիսեան փառատօնը, որ հոգեպարար ու յուսադրիչ էր արտասանուած խօսքերով, հպարտալի, յուզիչ եւ խոստմալից էր խորխտ կեցուածքով, վճռական քայլերով, բարձր ճակատներով տողանցող տարագաւորներով, մարզիկներով, աշակերտներով ու միութենականներով, ուրախութիւն եւ խանդավառութիւն սփռող էր պաշտօնական բաժինէն ետք կայացած տօնակատարութեամբ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ՀՍԸՄ-ի Պէյրութի երեցները, պարմանուհիները, արիւներն ու արեւուշները, գայլիկներն ու արծուիկները եւ, վերջապէս, մոկլիները հերթա-

բար ուղղուեցան բանակավայր, ուր գործադրութեան դրին բոլոր այն գիտելիքները, զորս ամբարած էին 2018-2019 տարեշրջանին ընթացքին: Անոնք 13 յուլիսին բաժնուեցան իրարմէ՝ լքելով Ռաս Մեթնը, ուր բնակած էին վերջին տասը օրերուն:

Կազմակերպութեամբ ՀՍԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպչական յանձնախումբին, 25 յուլիսին տեղի ունեցաւ վարչութիւններու միջդիւանական սեմինարը, «Ազատամարտ» ակումբի «Զուխատարեան» սրահին մէջ, մասնակցութեամբ ՀՍԸՄ-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Ճիւնիի, Անթիլիասի, Ժտէյտիի եւ Ռաուտայի մասնաճիւղերու վարչութիւններու դիւաններուն: Իսկ 28 յուլիս 2019-ին առաւօտեան 11:00-էն մինչեւ կէսօրէ ետք 6:30 «Նշան Փալանճեան» ճեմարանի շրջափակին մէջ նշուեցաւ ջրառատ Վարդավառ: Կազմակերպիչներուն նպատակը լիուլի իրականացաւ՝ վերակենդանացնել Վարդավառի հայկական ժողովրդային աւանդութիւնը եւ առիթ ու տեղ ընծայել լիբանանահայութեան՝ կարենալ հաւաքաբար նշելու համար Վարդավառը այնպէս, ինչպէս կը նշուի Հայաստանի մէջ: Շուրջ 350 ներկաներ՝ մեծ եւ փոքր, սկաուտ եւ ոչ սկաուտ, ծնողք, բարեկամ կամ պարզապէս տօնը սիրող հանրութեան անդամ, անցուցին իւրայատուկ օր մը՝ ոչ միայն իրարու վրայ ջուր սրսկելով, այլ նաեւ՝ պարելով, խաղալով եւ աճապարարութիւն դիտելով ու սորվելով:

Հովանաւորութեամբ ՀՍԸՄ Լիբանանի Շրջանային սկաուտական խորհուրդին, կազմակերպութեամբ Շրջանային խմբապետութեան, սկաուտական աշխատանքներու պաշտօնական վերամուտի սեմին, աշխուժ ու արդիւնաբեր տարեշրջանի մը հեռանկարով 6 հոկտեմբեր 2019-ին, ՀՍԸՄ Ճիւնիի ակումբին մէջ ընթացք առաւ միջմասնաճիւղային խմբապետական դաստիարակչական սեմինարը:

Նախաձեռնութեամբ ՀՍԸՄ-ի Կեդրոնական վարչութեան, 3 հոկտեմբեր 2019-ին, վարչապետ Սաատ Հարիրիի Կեդրոնական Պէյրութի բնակարանին մէջ տեղի ունեցաւ յատուկ հանդիսութիւն մը, որուն ընթացքին ՀՍԸՄ-ի Կեդրոնական վարչութիւնը «Արտակարգ» պատուանշանով պարգևատրեց



վարչապետ Ջարիրին: Վարչապետ Ջարիրի ՅՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետին կողմէ պարգևատրուեցաւ «Արտակարգ» պատուանշանով, իսկ Յրաչ Սիսեռեան իր կարգին վարչապետ Ջարիրին յանձնեց պատուանշանին վկայագիրը:

ՉՈՍ-ԼԵՍ-ԼՊՍ

ՀՀԴ Զաւարեան ուսանողական եւ երիտասարդական միութիւնները հաւատարիմ իրենց սկզբունքային աշխատելաոճին, գաղափարական նոյն թափով եւ աւելի լայն ծաւալով աշխատեցան իրագործել իրենց ծրագիրները: ՀՀԴ Զաւարեան ուսանողական միութեան Զաւարեան ուսանողական գրասենեակը 9 փետրուար 2019-ին Այնճարի Ազգային Յառաջ-Գ. Կիւլպէնկեան երկրորդական վարժարանի սրահին մէջ կազմակերպեց համալսարանական մասնագիտութիւններու արեւելում: Ներկայ էին վարժարանի եւ Հայ աւետարանական երկրորդական վարժարանի երկրորդական բաժիններէն աշակերտներ: Միջկուսակցական-ուսանողական յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով՝ ՀՀԴ Զաւարեան ուսանողական միութեան հրաւերով, 18 մարտ 2018-ին, «Աբրահամ Աշճեան» երիտասարդական-ուսանողական կեդրոնին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ ՀՀԴ Զաւարեան ուսանողական միութեան վարչութեան ու Բաղաքական-յարաբերական գրասենեակին եւ ՍԴՀԿ Տիւրուհի ուսանողական-երիտասարդական միութեան վարչութեան միջեւ: Հանդիպումին ընթացքին արծարծուեցան քաղաքական, գաղութային, ուսանողական եւ միութենական շարք մը հարցեր: 30 ապրիլ 2019-ին, «Ազդակ»-ի



«Փիւնիկ» սրահին մէջ ՀՀԴ Լիբանանի երիտասարդական միութեան եւ Զաւարեան ուսանողական միութեան անդամները հանդիպում մը ունեցան ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ: Կազմակերպութեամբ ՀՀԴ Զաւարեան ուսանողական միութեան (ՉՈՍ) եւ գործակցութեամբ «Ֆրետերիք Էպլըթ» հիմնարկին, 2 մայիս 2019-ին, «Մովեմփիք» պանդոկին մէջ տեղի ունեցաւ լսարանական ասուլիս մը, որ կը կրէր «Լիբանանի մէջ ժողովրդավարութիւնն ու ընկերային արդարութիւնը խոչընդոտող արգելքները» խորագիրը: Լսարանական ասուլիսին զեկուցաբերներն էին խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Մուսթաքպալ պլոքի երեսփոխան Ռուլա Թապըշ-Ժարուտի եւ քաղաքացիական ընկերութեան «Ամել» միջազգային կազմակերպութեան նախագահ Զամել Միաննա:

25 մայիս 2019-ին, հովանաւորութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետութեան եւ ԼՕԽ-ի «Արաքսի Պուլկուրճեան» ընկերաթղչկական կեդրոնին, կազմակերպութեամբ Զա-



ւարեան ուսանողական միութեան, տեղի ունեցաւ առողջապահական օր մը՝ Պուրճ Զամուտի քաղաքապետարանին կից: Առողջապահական օրը կ'ընդգրկէր արեան խմբաւորման, շաքարախտի, արեան ճնշման եւ սրտի զարկի, մարմնի ծանրութեան ցուցակի քննութիւններ: Այս աշխատանքին հսկեց բժշկական խմբակ մը՝ կազմուած ՉՈՄ-ականներէ ու համակիրներէ, ինչպէս նաեւ ԼՕԽ-ի անձնակազմէն օժանդակներէ:

24 մայիս 2019-ին, երեկոյեան ժամը 6:30-9:00, Ազգային միացեալ վարժարանին մէջ տեղի ունեցաւ ԶՅԴ Չաւարեան ուսանողական միութեան դաստիարակչական յանձնախումբին կազմակերպած՝ «My Grandmother is my Archive» անգլերէնով լսարան-աշխատանոցը, մասնակցութեամբ հայ եւ օտար աշակերտներու, ուսանողներու, միութիւններու ու մարմիններու ներկայացուցիչներու եւ հետաքրքրուած հանրութեան:

6 յունիս 2019-ի երեկոյեան, «Աբրահամ Աշճեան» ուսանողական-երիտասարդական կեդրոնին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ ԵՌԱԿ-ի «Մ. Փորթուգալեան» ուսանողական միաւորի եւ ԶՅԴ Չաւարեան ուսանողական միութեան ներկայացուցիչներուն միջեւ: Ընկերային մտերմիկ մթնոլորտի մէջ տեղի ունեցած հանդիպումը ծանօթացման նպատակ ունէր, անոր ընթացքին զոյգ միութիւնները ծանօթացուցին իրենց ներկայացուցած կառոյցները, տարած աշխատանքները եւ ապագայի ծրագիրները: Զննարկուեցան համագործակցութեան վերաբերող ծրագիրներ:

Կազմակերպութեամբ ԶՅԴ Չաւարեան ուսանողական միութեան Չաւարեան ուսանողական գրասենեակին (ՉՈԳ), 5 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին տեղի ունեցաւ «Ուսանողական-համալսարանական զարգացման մրցում», Ազգային Միացեալ վարժարանին մէջ: Մրցումին մասնակցեցան Լիբանանի



տարածքին գտնուող տարբեր համալսարաններ յաճախող հայ ուսանողներէ կազմուած խումբեր: Մրցակից 9 խումբերը կը ներկայացնէին հետեւեալ համալսարանները՝ Լիբանանեան-ամերիկեան համալսարանը («Էլ. Էյ. Եու.») իր երկու ճիւղերով՝ Պէյրութ եւ Ժիպէյլ, Պէյրութի ամերիկեան համալսարանը (Էյ. Եու. Պի.), Զայկազեանը (երկու խումբ), Լիբանանեան համալսարանը (երեք խումբ), եւ «Էն. Տի. Եու.»:

8 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-Էն սկսեալ տեղի ունեցաւ ՉՈՄ-ի հիմնադրու-



թեան 115-ամեակին նուիրուած ճաշկերոյթ մը՝ Նշան Փալանճեան ճեմարանի շրջափակին մէջ: Գալուցիները ներկայ գտնուեցան Նախկին եւ ներկայ զաւարեանականներ, ՉՈՄ-ի բարեկամներ:

16 յունիս 2019-ին, տեղի ունեցաւ «Աուրաֆ Չայլտիուտ» խորագիրով իրազեկման նախաձեռնութիւնը՝ Մար Մըխայէլի «Վանտոմ» աստիճաններուն վրայ: Չորրորդ տարին ըլլալով ՉՈՄ-ը կը կազմակերպէ այս տիպի ձեռնարկ մը: Այս ձեռնարկներուն նպատակն է Զայոց ցեղասպանութիւնը տարբեր ձեւով ոգեկոչել: Նախորդ տարուան ձեռնարկը անդրադարձած էր պատմութեան ընթացքին կատարուած տարբեր ցեղասպանութիւններու, մշակութային ցեղասպանութեան, ինչպէս նաեւ գաղթականներու հարցին: Այս տարուան ձեռնարկը, որ կ'ոգեկոչէ Զայոց ցեղասպանութեան 104-ամեակը, նուիրուած է մանուկներու իրաւանց:

4 յուլիս 2019-ին, «Աբրահամ Աշճեան» կեդրոնին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ ԶՅԴ Չաւարեան ուսանողական միութեան եւ

Հրգպալլայի ուսանողական-երիտասարդական վարչութեան ներկայացուցիչներու միջեւ: Այցելութիւնը նախաձեռնած էին Հրգպալլայի ներկայացուցիչները՝ նպատակ ունենալով վերահաստատել երկու կուսակցութիւններու եւ միութիւններուն միջեւ նախապէս ի գործ դրուած դաշինքն ու համագործակցութիւնը ուսանողական, երիտասարդական եւ յատկապէս համալսարանական օրակարգերու շուրջ:

ՀՅԴ Չաւարեան ուսանողական միութիւնը 31 յուլիսին Հայաստանի մէջ իրագործեց իր 15-րդ ամառնային ճամբարը, որ կը զուգահիւսէ ԶՈՄ-ի հիմնադրութեան 115-ամեակին: Ուր ընկերներ Հայաստանի եւ Արցախի չորս տարբեր շրջաններու մէջ գտնուած են՝ կազմակերպելու գիւղաքաղաքներու մանուկներուն կողմէ շատ սպասուած ճամբարները: Այս տարի 500-է աւելի պատանիներ՝ Հայաստանի Գառնիի, Աբովեանի, Հրազդանի եւ Ար-



ցախի Մարտունիի շրջաններուն մէջ մասնակցած են այս ճամբարներուն: Ծամբարները կը կազմակերպուին Հայաստանի եւ Արցախի պատանեկան միութիւններուն ընդհանուր վարիչ մարմիններուն եւ շրջաններու երիտասարդական միութիւններուն հետ համագործակցութեամբ: Իսկ այս տարի առաջին անգամ ըլլալով ԶՈՄ-ը գործակցեցաւ նաեւ ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան հետ՝ կազմակերպելու համար այս ճամբարները: ԶՈՄ-ի հիմնադրութեան 115-ամեակին առիթով, այս տարուան ճամբարները նուիրուած են ՀՅԴ-ի եւ ԶՈՄ-ի հիմնադիր Սիմոն Չաւարեանին՝ պատանիներուն առիթ մը եւս ընծայելով մօտէն ծանօթանալու Սիմոն Չաւարեանի կեանքին ու գործունեութեան:

6 դեկտեմբեր 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցած է հայկական երկրորդական վարժարաններու գերագանց աշակերտներու պարգեւատրումի հանդիսութիւնը՝ ներկայութեամբ պատկան վարժարաններու տնօրէններու, ներկայացուցիչներու, աշակերտներու, ծնողներու եւ հարազատներու:

13 օգոստոսին ՀՅԴ Ստեփանակերտի «Նիկոլ Դուման» կեդրոն այցելած են Արցախի Հանրապետութեան Մարտունի քաղաքին մէջ պատանեկան ճամբար իրականացնող ՀՅԴ Չաւարեան ուսանողական միութեան անդամներ Հրակ Գարամինասեանը եւ Սելին Գրիգորեանը: ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամներ Սերկէյ Շահվերդեանի եւ Աշոտ Պետրոսեանի հետ հանդիպումին ընթացքին ԶՈՄ-ի անդամները ներկայացուցած են Մարտունիի մէջ ընթացող ճամբարին ընթացքը, քննարկած ճամբարներու արդիւնաւետութիւնը բարձրացնելու հարցը: ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամները, ողջունելով պատանիներու ամառնային առօրեան յագեցնող եւ ուսուցողական բնոյթ ունեցող ճամբարներու կազմակերպումը Արցախի մէջ, կարելոր նկատած են յատկապէս անոնց կազմակերպումը շրջաններուն մէջ:

ԼԵՍ-ԼՊՍ

4 յունուար 2019-ին, ՀՅԴ Լիբանանի «Ռոստոմ», «Նաւասարդեան», «Գ. Նժդէհ», «Քրիստափոր», «Սերոբ Աղբիր», «Արշակ Ջամալեան» պատանեկան միութիւններէն 77 կրտսեր պատանիներ եւ 15 վարիչ-վարչուիներ Պնաշըի մէջ հիւրը դարձան Ռիմա Ֆրենժիէին: Պնաշըի լիճին շրջակայքը



գտնուող ճաշարանին մեջ կազմակերպուած հաւաքին ներկայ էին նաեւ՝ վարիչ-վարչուհիներ, ՀՀԴ Լիբանանի Պատանեկան միութիւններ, ընդհանուր վարիչ մարմինի անդամներ, ՀՀԴ «Բերդավայր» կոմիտէի ներկայացուցիչը, ինչպէս նաեւ՝ Ֆրենժիէ ընտանիքին մօտիկ այլ անձնաւորութիւններ:

30 մարտ 2019-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մեջ տեղի ունեցաւ ՀՀԴ Լիբանանի պատանեկան միութիւններու հիմնադրութեան 95-ամեակին նուիրուած խրախճանքը, որ միջոցա-



րոցական զարգացման մրցումին կողքին, երկրորդ ձեռնարկն էր, որ նոյն յարկին տակ կը համախմբէր հայկական վարժարաններու աշակերտներն ու պատանեկան միութիւնները: Այս խրախճանքին մասնակցեցեցան 300 պատանիներ, որոնք կը ներկայացնէին 13 հայկական վարժարաններու 7-րդ, 8-րդ եւ 9-րդ դասարաններու հայ աշակերտները, ինչպէս նաեւ Լիբանանի մեջ գործող տարբեր պատանեկան միութիւնները:

Կազմակերպութեամբ եւ նախաձեռնութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի «Արաբօ» մասնաճիւղին, 7 ապրիլ 2019-ին ոգեկոչուեցաւ նահատակութեան 30-ամեակը լիբանանեան քաղաքացիական պատերազմի օրերուն հայութեան պաշտպանութեան ու ծառայութեան լծուած եւ այդ ուղիին վրայ ալ իր մատաղ կեանքը ազգին ու հայութեան նուիրած Եղիկ Գայայեանի: Կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի «Հայաստան» մասնաճիւղին, 25 ապրիլ 2019-ին, «Աղբալեան-ՅՄԸՄ» մարզամշակութային համալիրի «Արա Զրճըլեան» պարտէզին մեջ տեղի ունեցաւ ձեռնարկ մը՝ «Նահատակներու կտակէն մինչեւ արդար հատուցում» խորագիրով: Օրուան բանախօսն էր Կարօ Յովհաննեսեանը:

17 մայիս 2019-ի երեկոյեան «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մեջ տեղի ունեցաւ հայկական վարժարաններու պրեզօլէի պետական



ընկութեանց բարձրագոյն նիշ ապահոված աշակերտներու պարգեւատրման ձեռնարկ՝ կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի դաստիարակչական յանձնախումբին:

18 մայիս 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մեջ տեղի ունեցաւ այժմեական նիւթով խորհրդածողով մը՝ «Հայ դպրոցը՝ հայ-



կական դիմագիծի պաշտպան» խորագիրով, կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան: Սոյն խորհրդածողովին մասնակցեցեցան գաղութի հայկական երկրորդական վարժարաններու տնօրէններն ու հայոց լեզու եւ պատմութիւն դասաւանդող ուսուցիչները, ինչպէս նաեւ՝ երկրորդական կարգերէն աշակերտներ:

Կազմակերպութեամբ ՀՀԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան Զարոզչական յանձնա-



խումբին, 12 մայիսի առաւօտեան ժամը 7:30-էն սկսեալ, Պուրճ Յամուտի մէջ տեղի ունեցաւ արցախեան ազատամարտի լիբանանահայ նահատակ, ԼԵՄ-ական եւ ՅՄԸՄ-ական հեծելանւորդ Վիգէն Չաքարեանի յիշատակին հեծելարշաւի մրցում մը՝ ներկայութեամբ Վիգէն Չաքարեանի հարազատներուն եւ մասնակցութեամբ շուրջ 40 երիտասարդներու:

21 յունիսի յետմիջօրէի ժամը 5:00-էն սկսեալ մինչեւ երեկոյեան ուշ ժամեր Պուրճ Յամուտի «Արին» կեդրոնին առջեւ հայկական իւրայատուկ մթնոլորտ կը տիրէր շնորհիւ ՅՅԴ-ԼԵՄ-ի Զարոզչական յանձնախումբին «Պահպանենք հայ մշակոյթը... Ապրինք հայ մշակոյթով» խորագիրը կրող նախաձեռնութեան: Հոն տեղադրուած տաղաւարներուն մէջ մեր ազգային իւրայատկութիւններն ու աւանդութիւններուն մէկ մասը ներկայացուած էր հանրութեան՝ ձեռարուեստ, ճաշատեսակներ, գորգագործութիւն եւ այլն: Հետաքրքրականը այն էր, որ ներկաները նաեւ առիթ ունեին սորվելու հայկական ճաշերու պատրաստութիւնը, գորգի արուեստին ծանօթանալու գործնական աշխատանքով:

26 յուլիս 2019-ի ՅՅԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան Զարոզչական յանձնախումբին կազմակերպութեամբ Լիզպոնի տղոց նուիրուած յիշատակի երեկոն տեղի ունեցաւ, երբ հարիւրաւոր պատանիներ եւ երիտասարդ-



ներ, հայորդիներ, ՅՄԸՄ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ, ԼՕԽ-ի «Արաքսի Պուլ-դուրճեան» ընկերաբժշկական կեդրոնին առջեւէն ջահերթով ուղղուեցան դէպի Պուրճ Յամուտի Ազգային գերեզմանատուն, ուր անոնց միացան նոյն նպատակին համար հոն գտնուող մեծաթիւ հայորդիները եւ միասնաբար ծաղիկներ գետեղեցին, մոմեր վառեցին անոնց շիրիմին վրայ:

Կազմակերպութեամբ ՅՅԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան, 16 օգոստոս 2019-ին, լիբանանահայ արուեստասէրները «Վասպուրական» սրահին մէջ ժամադրուած էին հայերէն սիրուած ստեղծագործութիւնները նոր յօրինուած իւրայատուկ մեղեդիներով ու



երաժշտութեամբ ներկայացնող իւրայատուկ խումբին՝ «Էլեմընթ»ին երկու անդամներուն հետ, որոնք անմոռանալի ու արժէքաւոր պահեր պարգեւեցին ներկաներուն: 19 սեպտեմբեր 2019-ին, «Թեւիլիբեան» ակումբին դիմաց տեղի ունեցաւ շրջանի նահատակներու՝ Գեորգ Աշճեանի, Վաչէ Տաղլեանի, Սիեր Ջուլիհաճեանի, Ժոզեֆ Պիլեզիկճեանի եւ Կարօ Գոլանճեանի նուիրուած ձեռնարկը՝ կազմակերպութեամբ ՅՅԴ-ԼԵՄ-ի «Րաֆֆի» մասնաճիւղին: Օրուան բանախօսն էր Համբիկ Պիլալեան:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարօ Փայլան հրապարակային բանախօսութիւն մը տուաւ Հայկազեան համալսարանին մէջ, 26 յունուար 2019-ի երեկոյեան: Հայ աւետարանական քուլտի սրահին մէջ տեղի ունեցած



այս բանախօսության ներկայ էր մեծաթիվ հանրութիւն մը, որոնք եկած էին լսելու Պէյրութի մէջ անոր առաջին հրապարակային ելոյթը: Անոնք յոտնկայս ծափահարութեամբ դիմաւորեցին երիտասարդ հիւրը:

«Սետր»-ի խորհրդաժողովի կայացման առաջին տարեդարձին առիթով Հայկազեան համալսարանը հիւրընկալեց տնտեսական հարցերով Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրիի խորհրդական Հազար Զարաքալան՝ դասախօսութեամբ մը ներկայացնելու «Սետր»-ի հիմնական որոշումներուն եւ Լիբանանի տնտեսութեան վրայ անոր ձգելիք ազդեցութիւններուն մասին: Կազմակերպութեամբ Հայկազեան համալսարանին, 18 ապրիլ 2019-ին համալսարանի «Մուկար» պարտէզին մէջ նշուեցաւ Հայոց ցեղասպանութեան 104-ամեակը:

Ապրիլ 24-ի Եղեռնի յիշատակը ոգեկոչելու ծիրին մէջ համալսարանի ուսանողները, անձնակազմը, շրջանի բարեկամներն ու դրացիները շրջագայելով մօտեցան «Մուկար» պարտէզին մէջ զետեղուած Հայոց ցեղասպանութեան նուիրուած յուշակոթողին (անմոռուկ ծաղիկ), ուր ծաղիկներ խոնարհեցնելով՝ տուին յարգանքի իրենց տուրքը: Նոյն առիթով 19 ապրիլ 2019-ին, Հայկազեան համալսարանը կազմակերպած էր «1,5 million reasons to bike for a cause» խորագիրով հեծելարշաւ, ուր 40 մասնակցողներ, Ցեղասպանութեան յատուկ **թի-շրթրներ** հագած, մօտաւորապէս 1 ժամ քշեցին կեդրոնական Պէյրութի փողոցները: Իսկ 17-24 ապրիլ 2019-ին Հայաստան գտնուող «Էքսթրիմ» ակումբի ուսանողները, որոնք Վայոց Ձորի մէջ լեռնագնացութիւն-քայլարշաւի մը միջոցով «Սետր» հաստատութեան դրամահաւաքի նպատակով գացած էին, 24 ապրիլին Հայկազեան համալսարանը ներկայացնելով՝ այցելեցին Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր, ուր ծաղիկներ զետեղելով՝ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշարձանին եւ անմար կրակին մօտ:

24 մայիս 2019-ին, Հայկազեան համալսարանը իր շրջափակին մէջ կազմակերպեց իր տարեկան վկայականաց բաշխման հանդիսութիւնը, որուն ընթացքին 130 ուսանողներ յաջողութեամբ ակադեմիան Պսակաւոր արժանացան եւ գիտութեանց, ինչպէս նաեւ մագիստրոսի աստիճանները՝ դառնալով Հայկազեանի 59-րդ հունձքի շրջանակարտները:

30 մայիս 2019-ի առաւօտեան պաշտօնական բացման հանդիսութեան Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին կազմակերպած «Յունաստանի եւ Կիպրոսի հայերը» գիտաժողովը ակադեմիան իր աշխատանքները:

10 յունիսին Պէյրութի Հայկազեան համալսարանի «Աւանդներու ակումբ»-ի ուսանողներու պատուիրակութիւնը այցելած է Արցախի պետական համալսարան (ԱրՊՀ) եւ հանդիպում ունեցած համալսարանի ուսանողութեան հետ: Հայկազեան համալսարանը 1000 միաւոր գիրք նուիրած է Արցախի պետական համալսարանին:



Անցնող տարին Այնճարի համար յատկանշական էր, որովհետեւ տարբեր բնոյթի ձեռնարկներ կազմակերպուեցան Այնճարի հիմնադրութեան 80-ամեակին առիթով: Այս ձեռնարկներէն կարելի է նշել հետեւեալները:

ԱՅՆՃԱՐ

Անցնող տարին Այնճարի համար յատկանշական էր, որովհետեւ տարբեր բնոյթի ձեռնարկներ կազմակերպուեցան Այնճարի հիմնադրութեան 80-ամեակին առիթով: Այս ձեռնարկներէն կարելի է նշել հետեւեալները:



հովանավորությամբ Մուսա Լեռ-Այնճարի հիմնադրության 80-ամեակի մարմինն էլ կազմակերպությամբ ՀՄԸՄ-ի Այնճարի մասնաճիւղին, 2 օգոստոս 2019-ին տեղի ունեցավ մարզամշակութային փառատոն, որ սկիզբ առավ ժամը 4:30-ին, պասքեթպոլի եւ ֆուտբոլի վեթերան խումբերու մրցումներով, ապա, առաջնորդությամբ փողերախումբին, տեղի ունեցավ սկաուտական շարքերու տողանցք, որուն յաջորդեց պաշտօնական ձեռնարկ՝ ՀՄԸՄ-ի համալիրին դիմաց:

ՀՅԴ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչության կազմակերպությամբ, Այնճարի մէջ տեղի ունեցավ Լիզպոնի գործողության 36-ամեակի ոգեկոչում՝ «Ս. Չէյթեան» կեդրոնի շրջափակին մէջ: Օրուան պատգամը տուաւ Արմէն Թաշճեան: Կազմակերպությամբ Համազգայինի Այնճարի «Պ. Սեւակ» մասնաճիւղին, 24 օգոստոս 2019-ին, «Ս. Չէյթեան» ժողովրդային տան շրջափակին մէջ տեղի ունեցավ «Մուսա Լեռան բարբառով եւ Մուսա Լեռ-Այնճար»-ին նուիրուած երգերու նորատիպ երգարանին գինեձօնը:

Յատկանշական էր նաեւ 1 սեպտեմբեր 2019-ին տեղի ունեցավ «Ժամանակի հրաշալիքը» անունը կրող ժամացոյցի աշտարակի բացումը, որ տեղի ունեցավ հովանավորությամբ Մուսա Լեռ-Այնճարի հիմնադրության 80-ամեակի յոբելեական մարմինն էլ Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան, կազմակերպությամբ Այնճարի Հայ աւետարանական եկեղեցւոյ, մասնակցությամբ ՀՅԴ «Կարմիր Լեռ» կոմիտէին, Այնճարի քաղաքապետութեան եւ սրտաբուխ նուիրատուներու:

Հովանավորությամբ Մուսա Լեռ-Այնճարի հիմնադրության 80-ամեակի մարմինն,



կազմակերպությամբ Համազգայինի Այնճարի «Պ. Սեւակ» մասնաճիւղին, 12 սեպտեմբեր 2019-ին, տեղի ունեցավ «Այնճար արթ կալըրի»-ի բացումը եւ մուսալեռցի-այնճարցի արւեստագետներու գեղանկարչական ցուցահանդէսը:

14 սեպտեմբեր 2019-ի երեկոյեան, Այնճարի մէջ տեղի ունեցավ ազգագրական թանգարանի բացումը: Մուսա Լեռան հերոսամարտի 104-ամեակի եւ Այնճարի հիմնադրության 80-ամեակի ձեռնարկներուն ծիրին մէջ 14 սեպտեմբեր 2019-ին Այնճարի մէջ բացումը կատարուեցավ Այնճարի Ազգային Յառաջ վարժարանի նախկին վաստակաշատ տնօ-



րէն Գրիգոր Գուտուլեանի հարթաքանդակին, որուն հեղինակն է ճարտարապետ-քանդակագործ Տիգրան Գալուստեան:

Հովանավորությամբ Մուսա Լեռ-Այնճարի հիմնադրության 80-ամեակի յոբելեական մարմինն էլ ԼՕԽ-ի Շրջանային վարչության եւ կազմակերպությամբ ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղի վարչության, 14 սեպտեմբեր 2019-ին ընթացք առաւ Այնճարի տոհմիկ երեկոն:



ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»-Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԼԵՒՈՆ ՆՈՐՏԻԿԵԱՆԸ**



Շքանշանով Պարգևատրեց Լեւոն Նորտիկեանը 3 փետրուար 2019-ին, վեհարանի դահլիճին մէջ, Արամ Ա. վեհափառ հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց արուեստագետ եւ հնագետ դոկտ. Լեւոն Նորտիկեանը:

Հայրապետական սրբատառ կոնդակին ընթերցումէն առաջ դոկտ. Նորտիկեանի կենսագրութիւնն ու իր մասին վկայութիւններ կարդացին Սեն Ժոզեֆ համալսարանի արուեստի եւ գիտութեան բաժանմունքի տնօրէն Զրիսթին Պապիկեան-Ասսաֆը եւ իր գործակիցներէն Գրիգոր Թերզեանը:

Վեհափառ հայրապետը հայերէնով եւ ֆրանսերէնով խօսք առնելով՝ բարձր գնահատեց Նորտիկեանի աւելի քան 35 տարիներու մտաւորական վաստակը հայագիտութեան մարզին մէջ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «Ս. ՄԵՍՐՈՊ
ՄԱՇՏՈՑ»-Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ
ԳՐԻԳՈՐ ԱԿՈՐԵԱՆԸ**



29 յուլիս 2019-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի դպրեվանքի հանդիսասրահին մէջ, յատուկ հանդիսութեան մը ընթացքին, Արամ Ա. վեհափառ հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց գեղանկարչութեան արուեստին մէջ նուաճումներ արձանագրած Գրիգոր Ակորբեանը:

**ԱՐՑԱԽԻ «ՄԱՅՐՈՒԹԻՒՆ» ՀԿ-Ի «ՄԱՅՐԱԿԱՆ
ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ» ՅՈՒՇԱՄԵՏԱԸ
«ԱԶԴԱԿ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆԻՆ**



Յուլիս 2019-ին, Արցախի «Ապառաժ» պարբերականի վերլուծաբան Միքայէլ Հաջեան Արցախի «Մայրութիւն» ՀԿ-ի «Մայրական երախտագիտութիւն» յուշամետալ յանձնեց Արցախով շնչող «Ազդակ»-ի գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեանին յիշելով, որ, Շահան Գանտահարեան միշտ սատար կանգնած է Արցախին ու Արցախի ժողովուրդին թէ՛ պատերազմի ժամանակ, թէ՛ յետպատերազմական տարիներուն, թէ՛ վերականգնման ու վերակառուցման շրջանին եւ թէ՛ այսօր:

**«ԱՐՄԵՆՈՖԱՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
«ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»-Ի ՆՇԱՆՈՎ**

26 մայիս 2019-ին, յետ Ս. եւ անմահ պատարագին, վեհարանի դահլիճին մէջ Արամ Ա. կաթողիկոս «Արմենոֆաս» հիմնադրամի



յանձնախումբի անդամներն վերապատուելի Ռուտովֆ Ռենֆերն ու փաստաբան Ֆրանսուա Փայոն պարգևատրեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկեան ասպետ»-ի շքանշանով:

**«ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»-Ի ՇՔԱՆՇԱՆՆԵՐ
ՀՄԸՄ-ԻՆ**



Արամ Ա. վեհափառ հայրապետը ՀՄԸՄ-ը պարգևատրեց հայ դպրոցի առաջին եւ մնայուն ուսուցիչ դարձած Մեսրոպ Մաշտոցի անունով մկրտուած, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, զոր յանձնեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանին՝ հաստատելով, որ ՀՄԸՄ-ը եղաւ նաեւ հայ դպրոց, որովհետեւ սփիւռքի մէջ պայմաններու բերումով ուր որ դպրոց չունեցանք, ՀՄԸՄ-ը դարձաւ դպրոց՝ տանելով մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի առաքելութիւն, նաեւ յուսալով, որ ՀՄԸՄ-ը վերանորոգ հաւատքով եւ նուիրումով շարունակէ իր հայակերտումի առաքելութիւնը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՇԽԱՐՀԱՅՈՉԱԿ
ԵՐԱԺԻՇՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԸ
ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ «ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳ»-Ի
ՇՔԱՆՇԱՆՈՎ**



17 փետրուար 2019-ի առաւօտեան, յետ սուրբ եւ անմահ պատարագին, վեհարանի դահլիճին մէջ, Արամ Ա. կաթողիկոս «Ասպետի կարգ»-ի շքանշանով պարգևատրեց աշխարհահռչակ երաժիշտ Տիգրան Մանսուրեանը: Վեհափառ հայրապետը նշեց, որ Մանսուրեան իր ամբողջ կեանքը նուիրած է երաժշտութեան ու անոր դասական թէ ժողովրդային յօրինումները հնչած են Հայաստանի ու համաշխարհային բեմերէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՏՈՒԵՑ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ԿԱՐՊԻՍ ԵՒ ԼԻՄԻ ԹԻԹԻՒՆՃԵԱՆ ԱՍՈԸ**



13 սեպտեմբեր 2019-ին, դարեկանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասարահին մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողի-

կոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց լիբանանահայութեան ազգային, եկեղեցական, մշակութային եւ ընկերային կեանքին մէջ իր ներդրումն ու մասնակցութիւնը բերած տեր եւ տիկին Կարպիս եւ Լիւսի Թիւթիւնճեան ամուլը:

ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԽՈՐԷՆ ԱՐՔ. ՏՈՂՐԱՄԱԾԵԱՆ ՊԱՐԳԵՒՏՐԵՑ «ԱԶԴԱԿ»-Ի ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՅՐԵԱՆԸ

11 հոկտեմբեր 2019-ին հովանաւորութեամբ Կիպրոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Խորէն արք. Տողրամաճեանի, նախագահութեամբ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի եւ կազմակերպութեամբ Ազգային վար-




չութեան, Կիպրոսի մէջ առաջնորդարանի «Վ. Իւթիւնճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ մասնաւոր ձեռնարկ մը՝ Արամ Ա. հայրապետի 2019 տարին «Յայ մամուլի տարի» հռչակելուն առիթով: Այս ձեռնարկին Կիպրոսի թեմին անունով Խորէն արք. Տողրա-

մաճեան պարգևատրեց Շահան Գանտահարեանը՝ իբրեւ հայ առաջատար մամուլի գործիչ, որ կը համակարգէ նաեւ մամուլի համահայկական աշխատանքները:

ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ

ՅՈՎՍԵՓ ՊԱՐԱԶԵԱՆ

Ս փ ի ւ ռ ք ա հ ա յ վերջին 50 տարիներու իրականութենէն ներս ազգային եւ հասարակական կեանքի հոգերով ու մտահոգութիւններով ապրողներուն համար օրինակելի տիպար մը եղաւ յունահայ գաղութի սիրուած խմբագիր եւ գործիչ հանգուցեալ Յովսէփ Պարազեանը, որ 13 յունիս 2019-ին իր աչքերը փակեց, կարճատեւ հիւանդութենէ մը ետք: Յովսէփին համար չկար բնագաւառ մը, ուր ան իր դրոշմը եւ իր զօրաւոր անհատականութեան հետքերը ձգած չըլլար: «Ազատ Օր»-ի բազմամեայ իր խմբագրի վաստակէն մինչեւ իր երիտասարդական, կուսակցական, մտաւորական, գրական ու միութենական գործունեութիւնը, ան ամէն տեսակի աշխատանք տարաւ՝ բացառիկ



խղճմտութեամբ, նուիրումի անսակարկ հաւատքով եւ ծառայութեան աննկարագրելի մեծութեամբ:

ՍՕՍԷ ԾԻՆՊԱՇԵԱՆ

24 յուլիս 2019-ին վաղաժամօրէն կեանքէն հեռացաւ գլխագիր եւ համեստ մարդ ու հայուհի մը Սօսէ Ծինպաշեանը: 1948-ին Բեսապ հայաւանին մէջ լոյս աշխարհ եկած է: Ան եօթը տարեկանին փոխադրուած է Պէյրութ եւ յաճախած՝ Մարաշ թաղի Ազգային Սրբոց Բառասնից Մանկանց վարժարանը: Այնուհետեւ իր ուսումը շարունակած է Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ: Իր ուսումը աւարտելէ ետք ան մանուկներուն հանդէպ ունեցած անհուն սերը դրսեւորած է պաշտօնավարելով նախ Ազգային Սուրէն Խանամիրեան քոլեճի ման-



կապարտեզի, ապա Պատարոյի «Ֆուլայե Նոթրը Տամ տե գ'անժ դպրոցին մէջ, ուր քանի մը տարի ետք կը դառնայ վարիչ մանկապարտիզպանուհի: Մանկապարտեզի իր մասնագիտութիւնը ստացած է օրին «Էքոլ տե Լէթր» ֆրանսական համալսարանին մէջ:

Սօսէ Սարգիսեան 1977-ին ամուսնացաւ Տիգրան Ճինպաշեանին հետ, եւ անոնք փոխադրուեցան Ֆրանսա: Ան Փարիզի մէջ առիթ ունեցաւ իր ուսումը շարունակելու «Փարիզ սենթ» համալսարանին մէջ, որ օրին հոգեբանութեան եւ մանկավարժութեան առաջատար համալսարաններէն մէկն էր: Ան վկայուեցաւ լիսանս վկայականով:

Հուսկ, կը սկսի Սօսէ Ճինպաշեանի ազգային ծառայութիւնը: Ան կ'անդամակցի Ֆրանսայի Կապոյտ խաչին՝ գործօն մասնակցութիւն բերելով միօրեայ դպրոցին եւ մանուկներու բանակումներուն: Ապա կը տեղափոխուի Զուէյթ: Հոն հայկական վարժարանին մէջ կը դառնայ մանկապարտեզի պատասխանատու: Օրին ան մանկապարտեզը հասցուց այնպիսի բարձր մակարդակի, որ գնահատուեցաւ Զուէյթի պետական կրթական նախարարին կողմէ: Իր ջանքերով եւ նուիրեալ աշխատանքով Զուէյթի Ազգային վարժարանի մանկապարտեզը բուրեց հայկականութեամբ: Ան դարձաւ նաեւ Համազգայինի նորակազմ վարչութեան անդամ: Իր ունեցած ազգային եռուն կեանքը իրովի գնահատուեցաւ քուէյթահայութեան կողմէ: Դժբախտաբար Զուէյթի գրաւումը ստիպեց զիրենք փոխադրուելու Հայաստան, 1990-ին: Հայաստանի մէջ իր ազգային ծառայութիւնը եւ գործօն մասնակցութիւնը մատուցեց ՀՕՍ-ի եւ գաղթականներու ու վիրաւորներու օժանդակութեան յանձնախումբի ճամբով: Անոր առընթեր, Սօսէ Ճինպաշեան Հայաստանի կրթութեան նախարարութեան մեթոտաբանական գրասենեակին մէջ դարձաւ աւագ գիտաշխատող: Ան ուսուցիչներու վերապատրաստման դասընթացքներ կատարեց: Դժբախտաբար Սօսէ Ճինպաշեան ուղեղային կաթուած մը կ'ունենայ եւ բուժումի համար կը ստիպուին վերադառնալ Լիբանան: Բուժումէն ետք Սօսէ Ճինպաշեան շարունակեց իր ազգային եռուն կեանքը: Մաս կազմեց Լիբանանահայ օգնութեան խաչին եւ գործօն

մասնակցութիւն բերաւ կազմակերպչական եւ արխիւային-պատմական, կանոնագրային յանձնախումբին, նաեւ՝ Ազգային իշխանութեան ուսումնական խորհուրդին մէջ:


ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ

18 ապրիլ 2019-ին վախճանեցաւ Գեորգ Ծ. Վ. Եղիայեան: Ան Մեսրոպեանի երբեմնի տնօրէնը եւ Չմմառու Տիրամօր վանքի մեծաւորը, իրեն վստահուած ամէն առաքելութիւն, պարտականութիւն, պաշտօն կամ որեւէ աշխատանք ծայր աստիճան բժախնդրութեամբ, աւելին՝ արքայավայել շուքով եւ մակարդակով հետապնդող եւ իրագործող մարդու տիպարն էր: Իրեն վստահուած ամէն աշխատանքի յաջողութեան համար ճիգ ու ջանք խնայել չգիտցող, ամէն դուռ բախել գիտցող, լաւագոյնին ձգտումով գործող անձնաւորութիւնն էր: Ան՝ իրեն վստահուած աթոռը, ինչ բարձրութեան վրայ ալ ըլլայ, արժեւորել գիտցող մարդն էր: Աթոռը չէ, որ զինք կ'արժեւորէր, ընդհակառակը: Գիտէր արժեւորել այն եզակի առիթները, տօնակատարութիւն կամ ամեակ, հոգեւոր, ազգային կամ ակադեմական նշում, որոնց մասին իր խօսքը ըսելու կը հրաւիրէր: Բեմբասաց էր: Ան միաժամանակ գնահատել գիտէր եկեղեցւոյ, ազգին կամ մշակոյթի ծառայութեան նուիրեալները:



ԱԲԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Իտալիոյ մէջ իր մ ա հ կ ա ն ա ց ու ն կնքեց երգահան Աւետիս Նազարեան: Երգահան Աւետիս Նազարեան ծնած է Խարբերդ, 7 յունւար 1930-ին: 1931-ին Նազարեանի ծնողքը կը փոխադրուի Հալէպ: Հալէպի մէջ աւարտելէ ետք իր երկրորդական կրթութիւնը, կը նուիրուի երաժշտու-



թեան: Իր առաջին ուսուցիչը կ'ըլլայ երաժշտահան Բարսեղ Կանաչեան:

Աւետիս Նազարեանի ստեղծագործական աշխատանքները կ'ընդգրկեն նուագախումբի, սենեկային երաժշտութեան, ձայնային, երգչախմբային ու զանազան գործիքներու համար գրուած գործեր: 1970-ական թուականներուն Փատովայի «Կ. Չանիպոն» երաժշտական հրատարակչատունը լոյս կ'ընծայէ իրմէ զանազան գործեր:

1971-ին կը հրատարակէ իր «Թրէ քանթի Արմենի»-ն՝ գրուած ձայնի եւ դաշնակի համար, ինչպէս նաեւ «Տիվերթիմենթօ»-ն՝ գրուած սրինգի եւ քլարինէթի համար:

1960-ական թուականներուն կը նուիրուի «Օտար երգահաններ հայ արուեստէն ներս» երաժշտագիտական իր պրպտումներուն: Ասոնց մասին գրութիւններու շարք մը տպուած է «Նայիրի»-ի մէջ: Ասոնցմէ զատ երաժշտական նիւթերու շուրջ աշխատակցած է հայ մամուլին: Գրած է բազմաթիւ մանկական երգեր:

ԱՏԻՍ ԶԱՐՄԱՆՏԵԱՆ

Միացեալ Նահանգներու մէջ 74 տարեկանին իր մահականացուն կնքեց սփիւռքահայ հռչակաւոր երգիչ Ատիս Զարմանտեան՝ 1 սեպտեմբեր 2019-ին, Սանթա Մոնիքա հիւանդանոցին մէջ: Ատիս Զարմանտեան, որ կը նկատուէր հայ ժողովրդային երգերու ռահվիրան, ծնած է 14 յունուար 1945-ին, Պէյրութի մէջ: Ան 1960-էն սկսեալ մեկնաբանած է աւելի քան 400 երգեր: Արժանացած է զանազան մրցանակներու: Իր երգած «Ծաղիկներ», «Նունէ», «Գարուն գարուն», «Այլ աչեր» եւ ուրիշ բազմաթիւ երգեր արժանացած են սփիւռքահայութեան գնահատանքին:



ՊՕՂՈՍ ՇԱՅՄԵԼԻՔԵԱՆ

Լոս Անճելըսի մէջ մահացաւ գրող, տարիներէ ի վեր «Ազդակ»-ի հետ կանոնաւոր աշխատակցութիւն պահպանած յօդուածագիր Պօղոս Շահմելիքեան: Շահմելիքեան եւ-

թարկուած էր սրտի ծանր կաթուածի, որուն պատճառով փոխադրուած էր Լոս Անճելըսի հիւանդանոցներէն մէկը, ուր քանի մը օրէ ի վեր մահ ու կենաց պայքար կը մղէր:



Ան հեղինակ է երկու հատորներու՝ «Յիշատակներ. անցած օրեր» (հայերէնով), որուն անգլերէն թարգմանութիւնն ալ լոյս տեսաւ հետազային, եւ անցեալ տարի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ռիչըրտ եւ Թիւնա Գարուլան» հիմնադրամէն լոյս տեսած ճամբորդութիւն յիշողութեան մէջ» հատորը, որուն գինեծօնը վերջերս տեղի ունեցաւ «Ազդակ»-ի խմբագրութեան եւ Զամազայինի գիր ու գրականութեան մասնաճիւղին կազմակերպութեամբ: Շահմելիքեանի մահով կիսատ մնաց վերջերս «Ազդակ»-ի մէջ լոյս տեսնել սկսած անոր «Լիբանանեան օրագրութիւն» յօդուածաշարը...

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ

93 տարեկանին կեանքէն հեռացաւ ամերիկահայ հանրածանօթ գիտնական, իրաւագետ, պատմաբան, ընկերաբան, ուսողագետ, ընկերաբանութեան դոկտոր, փրոֆեսօր, Զայաստանի Զանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) պատուոյ դոկտոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ, Զայոց ցեղասպանութեան պատմաբան եւ «Զօրեան» հաստատութեան Յեղասպանութեան ուսումնասիրման գծով տնօրէն Վահագն Տատրեանը:



Վահագն Տատրեան համեմատական ցեղասպանագիտութեան հիմնադիրներէն է: Յատկապէս արժեքաւոր են «Զայկական ցեղասպանութիւնը խորհրդային եւ պատմագիտական քննարկումներով» (հայերէն, 1995), «Զայոց ցեղասպանութեան մէջ գերմանական

պատասխանատուությունը: Պատմական ապացույցի ստուգաբանություն» (անգլերեն, 1996), «Ցեղասպանության երաշխիքը. Թուրք-հայկական հակամարտության գլխավոր բաղադրատարրեր» (անգլերեն, 1998) մենագրությունները: Միջազգային իրաւունքի ծիրին մէջ Հայոց ցեղասպանության վերլուծության նուիրուած է «Ցեղասպանութիւնը որպէս ազգային եւ միջազգային իրաւունքի հիմնահարց. Հայկական հարցը Ա. Աշխարհամարտի տարիներուն եւ անոր նկատմամբ ժամանակակից իրաւական վերաբերմունքը» (անգլերեն, 1989) աշխատութիւնը:

Վահագն Տատրեան պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի»-ի մետալով, «Վերիթաս» ոսկէ մետալով (Հարվըրտի համալսարան), Ռուսիոյ հայերու միութեան ոսկիէ մետալով, ՀՀ ԳԱԱ ոսկիէ յուշամետալով, Իտալիոյ «Ճշմարիտները հայերու համար» կոմիտէի Ֆրիտեոֆ Նանսենի ոսկիէ յուշամետալով (Ցեղասպանազետ գիտնականներու միջազգային ընկերակցութիւն), «Ս. Սահակ-Ս. Մաշտոց» մետալով, Հայաստանի նախագահի ոսկիէ մետալով:

ԵՐՈՒԱՆԴ ԴԱԶԱՆԶԵԱՆ

Մահացաւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արուեստագետ, բեմադրիչ Երուանդ Ղազանչեան: Ան ծնած է 2 յունիս 1937-ին, Երեւան: 1974-էն կը դասաւանդէ Երեւանի թատրոնի եւ շարժապատկերի պետական հաստատութեան մէջ (1991-էն՝ փրոֆեսոր): 1995-2007-ի ժամանակահատուածին եղած է Հայաստանի թատերական գործիչներու միութեան նախագահը: 1986-ին պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան Պետական մրցանակով, 2005-ին՝ «Երեւանի պատուաւոր քաղաքացի» կոչումով, 2008-ին՝ Հայ եկեղեցւոյ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանով: 1974-ին արժանացած է Հայաստանի արուեստի վաստակա-



ւոր գործիչի, 2004-ին՝ ժողովրդական արուեստագետի կոչման, 2015-ին՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի մրցանակին (Տ. Զուխաճեանի «Կարինէ» օփերէթին համար), 2017-ին՝ Հայաստանի Հանրապետութեան «Հայրենիքին մատուցած ծառայութիւններու համար» առաջին աստիճանի մետալին:

Երուանդ Ղազանչեան եղած է նաեւ ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Պէյրութի «Վահրամ Փափազեան» թատերախումբին բեմադրիչը:

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

63 տարեկանին մահացաւ Բրիտանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Արման Կիրակոսեան:



Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ նշուած է. «Ան առաջին իսկ օրէն կանգնած եղած է նորանկախ Հայաստանի դիւանագիտական ծառայութեան եւ արտաքին քաղաքականութեան կայացման ակունքներուն եւ իր անգնահատելի ներդրումը ունեցած է այդ գործին մէջ»:

ԿԱՐԻՆԷ ԱՇՈՒՂԵԱՆ

Յետ երկարատեւ հիւանդութեան, Երեւանի մէջ իր մահկանացուն կնքեց գրող, հրապարակախօս եւ լրագրող Կարինէ Աշուղեանը:



Ծնած է Հայաստանի Արարատի շրջանի (այժմ՝ մարզ) Տափերական գիւղին մէջ: Աւարտած է Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայութեան եւ ընկերաբանութեան բաժանմունքը, ապա՝ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի փիլիսոփայութեան եւ իրաւունքի հիմնարկի ասպիրանտուրան: Աշ-

խատած է նոյն հիմնարկին մէջ՝ իբրեւ հայ փիլիսոփայութեան պատմութեան բաժնի կրտսեր գիտաշխատող, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան «Հայ գիւտոր» պաշտօնաթերթին մէջ եւ իբրեւ լրագրող՝ տարբեր լրատուամիջոցներու մէջ: 1998-2008-ին եղած է «Արարատ» մարզային թերթի գլխաւոր խմբագիրը:

Պարգէւատրուած է Հայաստանի մշակութիւնի նախարարութեան «Գրիգոր Նարեկացի» յուշամետալով:

Լէնք, որ բանաստեղծութիւններու եւ արձակ գրութիւններու հեղինակ Կարինէ Աշուղեան ռուսերէնէն հայերէնի թարգմանած է ՀՀ ԴՅԿ-ի գործիչ, հանգուցեալ Վահան Յովհաննիսեանի «Մանտիլիոն» վեպը:

ՍՏԵՓԱՆ ՀԱՔԱՐԵԱՆ


Հայաստանի Կոմպոզիտորներու միութենէն տեղեկացուցին, որ մահացած է միութեան անդամ, Հայաստանի ժողովրդական արուեստագետ, յօրինող Ստեփան Հաքարեանը:



«Խորին ցաւով կը տեղեկացնենք, որ մահացած է Հայաստանի Կոմպոզիտորներու միութեան անդամ, Հայաստանի ժողովրդական արուեստագետ, յօրինող Ստեփան Հաքարեանը», նշուած է հաղորդագրութեան մէջ:

ՆԻՉԱՐ ԽԱԼԻԼԻ

8 մայիս 2019-ին իր մահկանացուն կնքեց քեսապաբնակ սուրիացի գրող, մանկավարժ եւ հայագետ, 93-ամեայ Նիգար Խալիլի: Ան ծնած է Հալէպ 1925-ին, բարձրագոյն կրթութիւնը ստացած է Պէյրութ, Լիբանան: 1943-1946 թուականներուն պաշտօնավարած է Հալէպի



Նոր Գիւղ հայկական թաղամասի «Չաւարեան» վարժարանին մէջ՝ իբրեւ արաբերէնի ուսուցիչ:

Հայերէնին տիրապետած է մանկավարժական իր աշխատանքին ընթացքին: Նիգար Խալիլի ուսումնասիրած է հայ ժողովուրդին պատմութիւնը, մշակոյթը եւ մասնաւորապէս՝ գեղարուեստական գրականութիւնը: Զանի մը անգամ այցելած է Հայաստան:

Նիգար Խալիլի հայ մշակոյթին եւ հայարաբական գրականութեան նուիրուած բազմաթիւ յօդուածներու հեղինակ է: Ան առանձին գրքոյկներով արաբերէնի թարգմանած ու հրատարակած է Յովհաննէս Թումանեանի, Գրիգոր Չոհրապի, Աւետիք Իսահակեանի եւ Յովհաննէս Շիրազի ստեղծագործութիւնները:

ԳԱՐԻԷԼ ԻՆՃԵՃԻԿԵԱՆ

Միացեալ Նահանգներու մէջ իր մ ա հ կ ւ ա ն ա գ ու ն կնքեց «Ֆերահեան» ամէսօրեայ վարժարանի հիմնադիր Գարիել Ինճեճիկեան: Ան ծնած է 1930-ին, Զեսապ: 15 տարեկանին կը հեռանայ ծննդավայրէն՝ ուսումը շարունակելու առիթը ձեռք ձգելու համար: Զանի մը տարի կ'ուսանի Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութեան մէջ, ապա կ'անցնի Պէյրութ եւ կը յաճախէ Պէյրութի ամերիկեան համալսարան:



1953-ին կը մեկնի Միացեալ Նահանգներ եւ կը յաճախէ Տիթթոյիթի «Ուէյն» համալսարանը, ուր կը հետեւի ընկերաբանութեան, մանկավարժութեան եւ դպրոցական տնօրէնութեան ճիւղերուն եւ կը ստանայ պսակաւոր արուեստից եւ մագիստրոսի տիտղոսները:

Ան տեսնելով ամերիկահայ նորահաս սերունդներու օրըստօրէ ահագնացող ճուլման ընթացքը, մտածումը կ'ունենայ Միացեալ Նահանգներու մէջ հիմնելու հայկական միօրեայ վարժարաններ: Այս մտածումը իր գործնական արտայայտութիւնը կը գտնէ 55 տա-

րի առաջ, երբ կը հիմնուի Ամերիկայի առաջին հայկական ամբաստանաբարձարանը՝ «Ֆերահեան» ազգային վարժարանը: Ինճեճիկեան վարժարանի տնօրէնութիւնը կը վարէ մինչեւ 1990:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՎՐԴ. ԶԵՇԻՇԵԱՆ

Սրբոց Յակոբեանց միաբանութիւնն ու Նուրհան արք. Մանուկեանը գումեցին Սրբոց Յակոբեանց միաբաններէն Համբարձում վրդ. Զէշիշեանի անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ 10 մարտ 2019-ին:



Լուսահոգի Համբարձում վրդ. Զէշիշեան ծնած է Պէյրուս՝ 1958-ին: 1972-1978 տարիներուն ուսանած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին եւ ընծայարանին մէջ: 1984-ին ստացած է մասնաւոր վարդապետութեան աստիճան: Իր բազմամեայ ծառայութեան ընթացքին եղած է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան աւագ թարգման:

ԼՈՒԻՉ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՍԻՄՈՆ

19 փետրուարին Միացեալ Նահանգներու մէջ մահացաւ բարերար Լուիզ Մանուկեան-Սիմոնը, որ ՀԲԸՄ-ի նախկին նախագահ, բարերար Ալէք Մանուկեանի դուստրն է:



Լուիզ Մանուկեան-Սիմոն ծնած է 19 մայիս 1933-ին, Տիթթոյի մէջ: Ան ամուսնացած է Արման Սիմոնին հետ եւ ապրած Մենիէթընի մէջ: 1989 թուականին դարձած է ՀԲԸՄ-ի նախագահ՝ իր հորը նախագահութենէն ետք: 1962-ին անոր ծնողները հիմնադրած են «Լուիզ Մանուկեան-Սիմոն» հիմնադրամը, որ հետագային վերանուանած է «Մանուկեան-Սիմոն» հիմնադրամ:

26 նոյեմբեր 2012-ին Ամենայն հայոց Գա-

րեգին Բ. կաթողիկոսը Լուիզ Մանուկեան-Սիմոնը պարգեւատրած է «Ասպետ Սուրբ Էջմիածինի» շքանշանով:

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Փարիզի մէջ երկարատեւ հիւանդութենէ ետք, 86 տարեկանին մահացաւ պատմաբան Անահիտ Տեր Մինասեանը: Վերջինս նշանաւոր գիտնական էր, Սորպոնի համալսարանի եւ Ընկերային գիտութիւններու բարձրագոյն դպրոցի դասախօս: Կ'ուսումնասիրէր Հայաստանի, հայկական հարցի, Անդրկովկասի մէջ ազգային յարաբերութիւններու պատմութիւնը: Զանի մը գիրքի, որոնցմէ նաեւ՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան նուիրուած ուսումնասիրութիւններու հեղինակ է:



Անահիտ Տեր Մինասեան աշխուժ դերակատարութիւն ունեցած է ֆրանսահայ հասարակական-քաղաքական կեանքին մէջ: Ան հայկական ազատագրական պայքարի երեւելի դեմքերէն մէկուն՝ Օսմանեան խորհրդարանի երեսփոխան Գեղամ Տեր Կարապետեանի թոռնուհին էր, նաեւ Հայաստանի Ա. Հանրապետութեան ռազմական նախարար, ազատագրական պայքարի երեւելի գործիչ Ռուբէն Տեր Մինասեանի հարսը:

ԺԱՔ ԳՈՃԵԱՆ

17 սեպտեմբերին, Կրանատա Հիլզի (Զալիֆորնիա) իր բնակարանին մէջ մ ա հ կ ա ն ա գ ու ն կնքեց հանրածանօթ երաժիշտ Ժաք Գոճեան, երկարամեայ հիւանդութենէ ետք, շրջապատուած ընտանիքին անդամներով եւ սիրելիներով:



Ժաք Գոճեան ծնած է Լիբանան, երաժշտասեր ընտանիքի մը մէջ եւ յատկանշական ներդրում ունեցած է արդի հայկական ժո-

ղվորդային երաժշտութեան զարգացման շանքերուն մէջ: Ան ելոյթներ ունեցած է Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ամերիկաներու, Աւստրալիոյ եւ Յայաստանի մէջ՝ ընկերակցելով յայտնի երգիչներու, ինչպէս՝ Մանուէլին, Ատիս Յարմանտեանին, Փոլ Պաղտատլեանին եւ Գառնիկ Սարգիսեանին: Ան նաեւ բազմաթիւ երգիչներու համար երաժշտական մշակումներ կատարած է:

Անոր գործերէն ամենայայտնին է՝ Թաթուլ Այնեճեանի բանաստեղծութեան հիման վրայ յորինուած «Վերջին կիրակին», որ կատարուած է քանի մը երգիչներու կողմէ:

1970-ականներուն ան հաստատուած է Զալիֆորնիա, ուր շարունակած է իր մշակութային գործունեութիւնը:

ԵՐՈՒԱՆԴ ԹԵՐԶԵԱՆ

Երկարատեւ հիւանդութենէ ետք մահացաւ Միացեալ Նահանգներու Քոռնելի համալսարանի փրոֆեսէօր, աստղագետ, Յայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ, Յայ աստղագիտական ընկերութեան համանախագահ Երուանդ Թերզեան:



Ծնած է 1939-ին, Եգիպտոս: Աւարտած է Գահիրէի Ամերիկեան համալսարանը, որմէ ետք տեղափոխուած է Միացեալ Նահանգներ, ուր ստացած է իր բարձրագոյն ուսումը եւ գիտական աստիճանները:

Ունի բազմաթիւ գիտական յօդուածներ, խմբագրած է գիտական գիրքեր:


1996-էն Քոռնելի համալսարանի գիտութեան եւ կրթութեան զարգացման Նիւ Եորքի նահանգի ՆԱՍԱ-ի տիեզերական դրամաշնորհներու ծրագիրի տնօրէն եղած է: 2002-ին Թերզեան ընտրուած է Քառակուսի քիլոմէթրը-նոց համալիր (SKA) հսկայ ռատիոգիտակի կառուցման Միացեալ Նահանգներու համալսարաններու եւ հիմնարկներու միաւորման նախագահ: 2001-էն ան Յայկական ազգային գիտակրթական հիմնադրամի գիտական

խորհուրդի նախագահն էր: Փրոֆեսէօր Թերզեանի գիտական բնագաւառները բազմաթիւ են:

2012-ին Յայաստանի Յանրապետութեան նախագահին հրամանագիրով պարգեւատրուած է «Անանիա Շիրակացի» մետալով:

ԵՈՒՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ

25 նոյեմբերին մահացաւ բանաստեղծ, թարգմանիչ, Յայաստանի մշակոյթի վաստակաւոր գործիչ Եուրի Սահակեան, որ իր հարուստ ժառանգութեան կողքին նաեւ հեղինակն է Յամագայինի «Կարկաչ» պատանեկան երգչախումբին համար Ստեփան Շաքարեանին կողմէ յորինուած երգերու:



Դիմատետրի իր էջին վրայ լուրը հաղորդեց Յայաստանի Գրողներու միութեան նախագահ Էդուարդ Միլիտոնեան:

«Վաստակաշատ գրողին, մանուկներուն եւ բոլոր ընթերցողներուն սիրելի բանաստեղծին ու բարեկամին, հրաշալի գործընկերոջ եւ մարդուն յիշատակը միշտ վառ պիտի մնայ զայն ճանչցողներուն ու մտերիմներուն սրտերուն մէջ», գրած է Միլիտոնեան:

Եուրի Սահակեան ծնած է 1937 թուականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չայլու գիւղը: Աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը: Աշխատած է Երեւանի պատկերասփիւռի կայանին, «Յայրենիքի ձայն» շաբաթաթերթին, Յայաստանի գրքասերներու ընկերակցութեան մէջ:

Յեղինակ է երեք տասնեակէ աւելի բանաստեղծական ժողովածուներու (մեծ մասը՝ գրուած մանուկներու համար): Անոր բանաստեղծութիւններուն հիման վրայ գրուած են բազմաթիւ երգեր:

Արժանացած է Յայաստանի մշակոյթի վաստակաւոր գործիչի եւ Արցախի Յանրապետութեան մշակոյթի եւ արուեստի վաստակաւոր գործիչի կոչումներու, «Ոսկէ եղէգ»

պետական գրական առաջին կարգի մրցանակի, «Մովսես Խորենացի» մետալի:

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմի առաջնորդարանը գումարաբանաստեղծ, դաստիարակ եւ մտաւորական Ժագ Ս. Յակոբեանի մահը, որ պատահեցաւ 2 նոյեմբեր 2019-ին:



Ժագ Ս. Յակոբեան ծնած է Երուսաղէմ, 1917-ին: Երկու տարեկանին ծնողքին հետ կը տեղափոխուի Գահիրէ, համալսարանական ուսումը ստացած է Պէյրութ, ապա կրկին մեկնած է Գահիրէ:

Միացեալ Նահանգներ վերջնականապէս գաղթելէ առաջ Պէյրութի մէջ երկար տարիներ կը զբաղի ուսուցչութեամբ, 1967-ին բնակութիւն կը հաստատէ Քալիֆորնիոյ Փասատինա քաղաքին մէջ, ուր ամբողջ 21 տարիներ (1967-1988), աշխատած է իբրեւ քիմիագետ՝ դեղորայքի գործարանի մէջ:

Իր ասպարեզին կողքին, կը պաշտօնավարէ նաեւ իբրեւ ուսուցիչ կիրակնօրեայ դպրոցներու մէջ:

Գիրքերու կողքին, ան հրապարակած է նաեւ հոգեշունչ եւ հայաշունչ ձայներիզներ («Յիսուսաբոյր», «Յոգին հայկական» եւ այլն):


Երկու տարբեր առիթներով ան կը պարգեւատրուի կաթողիկոսական շքանշաններով՝ ձեռամբ Գարեգին Բ. եւ Արամ Ա. կաթողիկոսներուն:

Արժանացած է Համազգայինի մշակութային բարձրագոյն շքանշանին:

ՅԱԿՈԲ ՄԱՆԾԻԿԵԱՆ

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն գումար իր շրջանի վաստակաւոր ընկերներէն՝ Յակոբ Մանճիկեանի մահը, որ պատահեցաւ 18 հոկտեմբեր 2019-ին: Յակոբ Մանճիկեան նշանակալի մասնակցութիւն ունեցած է Արեւմտեան Ամերիկայի շրջանին մէջ ՀՅ Դաշնակցութեան կազմակերպական

կառոյցի հզօրացման աշխատանքներուն եւ եղած է Կեդրոնական կոմիտէի անդամ: Իբրեւ հիմնադիր ատենապետ՝ Յակոբ Մանճիկեան ծառայած է Արեւմտեան շրջանի Հայ դատի յանձնախումբին մէջ, ինչպէս նաեւ ատենապետութեան պաշտօնը վարած է կեդրոնական դերակատարութիւն ունեցած է Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանի յանձնախումբին մէջ: Յիշատակելի է նաեւ Յակոբ Մանճիկեանի ներդրումը ՀՅ Դաշնակցութեան պատմագրութեան գործին մէջ: Արդարեւ, Յակոբ Մանճիկեան, իր կնոջ՝ Զնար Աւետեան-Մանճիկեանի հետ միասին, համահեղինակը եղած է ՀՅԴ Ալպոմ-Աթլասին, որ յետ տարիներու բժախնդիր ուսումնասիրութեան, հրատարակուեցաւ Դաշնակցութեան 100-ամեակին առիթով:



ԺՈՐԺԵՔ ԱՆԱԳԵԱՆ

Երկարատեւ հիւանդութենէն յետոյ մահացած է Երուսաղէմի Հայ դատի պայքարի երկարամեայ առաջամարտիկ, պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր Ժորժեթ Աւագեանը: Ան երկար տարիներ ղեկավարած է Դաշնակցութեան Երուսաղէմի Հայ դատի յանձնախումբը, մեծագոյն դեր ունեցած է իսրայէլական քաղաքական եւ պետական շրջանակներուն մէջ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործին մէջ:



Դեռ երիտասարդ տարիներէն ողջ գիտակցական կեանքը նուիրած է հայութեան իրաւունքներու պաշտպանութեանն ու ճանաչմանը:

Ժորժեթ Աւագեանը տարիներ շարունակ դարձած էր հայաստանեան մամուլի համար Հայոց ցեղասպանութեան խնդիրով Իսրայէլի մէջ քաղաքական զարգացումներու ներկայացնողն ու բանբերը:

ԼԵՒՈՆ ՃԵՐՄԱԿԵԱՆ

Լիբանանահայ գաղութը կորսնցուց ազգային հասարակական ծառայութեան մէջ թրծուած ու հանրածանօթ մտաւորական, ֆրանսերէն-հայերէն բառարանի, ինչպէս նաեւ «Կեսարիա, Նոր Կեսարիա եւ Ժառանգորդներ» գիրքի հեղինակ Լեւոն Ճերմակեանը:



Պէյրուսի Ս. Ժոզեֆ համալսարանէն վկայւած երիտասարդը երկար տարիներ պաշտօնավարած էր զանազան բարեսիրական հաստատութիւններու մէջ, ինչպէս նաեւ մաս կազմած է զանազան ազգօգուտ յանձնախումբերու: Ան իր փորձառութեամբ օգտա-

կար եղած է ԱՖԵՏ միջբարեսիրական յանձնախումբին, Ազգ. առաջնորդարանի կալուածոց յանձնախումբին ու Կեսարիոյ բարեսիրական ընկերակցութեան՝ բազմիցս ընտրուելով վարչութեան անդամ: Ան ձեռնհասօրէն վարած է վարչութեան ատենադպրութիւնը երկար տարիներ, մինչեւ իր մահը, միշտ ներկայացնելով շինիչ ու գործնական առաջարկներ, մանաւանդ՝ դպրոցական կրթանպաստի վերաբերեալ:

Ան հայ կամ արաբ ուսանողներուն բարեկամն էր ու անոնց կը հայթայթէր պէտք եղած գիրքերը՝ նուազագոյն շահաբաժինով. անոնց նաեւ կու տար հայրական խրատներ՝ լաւագոյնս օգտագործելու իրենց ընձեռուած ուսանելու թանկագին առիթը:

ՍԻԼՎԻ ԱԲԷԼԵԱՆ

«ՀԱՌԻԸՐՏ ԳԱՐԱԿԵՕՉԵԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 2019-Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Ես վստահ չեմ, թե դրախտը ինչպիսին կ'ըլլայ, բայց գիտեմ, որ երբ մեռնինք, եւ ժամանակը գայ, ու Աստուած մեզ դատէ, Ան պիտի չհարցնէ. «Քանի՞ լաւ բան ըրած էք ձեր կեանքի ընթացքին: Փոխարէնը պիտի հարցունէ. Որքա՞ն ՍԷՐ նկատի ունեցած էք ձեր աշխատանքներուն մէջ»:

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ

101 տարիներ առաջ 21 ապրիլին, Նիւ Եորքի մէջ Միհրան եւ Չապէլ Գարակեօզեաններ կորսնցուցին իրենց 14-ամեայ զաւակը՝ Զաուրըրտը: Որպէս որդեկորոյս ծնողք, հակառակ անոր որ ամէն պատճառ ունէին անիծելու իրենց բախտը, որ խաւարեցաւ Զաուրըրտի մահով, սակայն անոնք չարտօնեցին որ խաւարը պատէ իրենց ամբողջ կեանքը, այլ լեցուած հաւատքով եւ Աստուծոյ զօրութեամբ, կրցան վառել «Զաուրըրտ Գարակեօզեան» հաստատութեան ջահը:

101 տարիներ ետք, 5 յուլիս 2019-ին, Լիբանանի մէջ «Յ. Գարակեօզեան» հաստատութեան մուտքին, լիբանանահայ համայնքի երեք հոգեւոր պետերու, «Յ. Գարակեօզեան» հաստատութեան կեդրոնական եւ տեղական վարչութեան, ինչպէս նաեւ՝ գաղութի ղեկավարներու ներկայացուցիչներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Զաուրըրտ Գարակեօզեանի կիսանդրիի բացման արարողութիւնը:

Այսօր հաստատութիւնը արդէն իսկ 98 տարեկան է, եւ որովհետեւ անոր հիմերը հաստատուած են սիրոյ սկզբունքներու վրայ, ան ուռճացաւ եւ կաղնիացած հասակով իր ծառայողական թելերը ընդարձակեց եւ հասաւ ամենուրեք՝ լսելով մանուկին ճիչը, պատանիին կանչը, հայ մօր հառաչը եւ ծերունիին աղօթքը:

Ինչպէս ամէն տարի, 2019 թուականը եւս եղաւ մարտահրաւերներով լեցուն տարի մը, սակայն հետեւելով մեր հիմնադիրներուն ոգիին ու քայլերուն, կրցանք մարտահրաւեր-





ները վերածել օրհնութիւններու, եւ դժուարութիւնները՝ ծրագիրներու որոնք լաւագոյն թարգմանը հանդիսացաւ «Փարոս» ծրագիրը:

Այս ծրագրին հիմնական նպատակն է բժշկական խնամք հայթայթել տարեց հայրերու եւ մայրերու, որոնք անկարող են իրենց տուններէն շարժելու: Եւ շնորհիւ «Փարոս»-ի կազմին, որ կը բաղկանայ բժիշկէ, հիւանդապահուիիէ, բնաբոյժէ (ֆիզիօթերապիստ) եւ ընկերային ծառայողէ, մէկ տարուան ընթացքին այցելեցին 154 տարեցներու տուներ, կատարեցին բժշկական քննութիւն, արեան քննութիւն, բնաբուծութիւն (ֆիզիօթերապի) եւ հայթայթեցին դեղորայք եւ բժշկական սարքեր, ինչպիսին՝ անթացուպ, անուասայլակ (wheel chair), ջուրէ կամ օդով լեցուած անկողին...:

Այս նոր նուաճումի կողքին բեղուն գործունեութիւններ կատարուեցան նաեւ այլ մարզերու մէջ, այսպէս.

1. Հաստատութեան բժշկական բաժինը իր մասնագիտական տարբեր բաժանմունքներուն մէջ իւրաքանչիւր օր ընդունեց 150-էն 200 հիւանդներ: 2019-ին մեր գործող բժշկա-

կան կազմին վրայ աւելցուցինք նաեւ հոգեբուժ, մորթի մասնագետ, ֆիզիօթերապիստ, մանուկներու նեարդաբան (pediatric neurologist), աչք, քիթ, կոկորդի մասնագետ: (Այստեղ նշենք նաեւ, որ 20 պարագաներու, որոնք լսելու դժուարութիւն ունէին, տրամադրեցինք լսողական սարք):

2. Իւրաքանչիւր ամիս աւելի քան 1500 մանուկներ ստացան հիմնական պատուաստումներ:

3. 2018 դեկտեմբերին ներկայութեամբ թեմիս առաջնորդ գերշ. Տ. Նարեկ արքեպիսկոպոսին տեղի ունեցաւ Ֆանարի «Լէյլաւան» դարմանատան վերաբացումը: Դարմանատունը իւրաքանչիւր ամիս ընդունեց 80 պարագաներ: Դարմանատունէն ներս կը գործեն բժիշկ մը, հիւանդապահուի եւ ընկերային ծառայող: Բժշկական խնամքի կողքին անոնք այցելեցին նաեւ շրջանին մէջ գտնուող այն ծերունիներուն տուները, որոնք անկարող են շարժելու:

4. Դպրոցական առողջապահական քննութիւններ կատարեցինք (ընդհանուր մարմնի, աչքի եւ ատամներու) եւ դասախօսական շարքեր կազմակերպեցինք 15 հայկական եւ

3 տեղական (յատկացուած սուրիացի եւ իրաքցի գաղթականներու) վարժարաններու մէջ:

5. Ընկերային ծառայութեան բաժանմունքը իրաքանչիւր ամիս աւելի քան 500 պարագաներու մատուցեց բժշկական, դեղորայքի, հիւանդանոցային, ուստեստեղէնի օգնութիւն, 800 հայ աշակերտներու դպրոցական գիրքի օգնութիւն, եւ աւելին՝ լսեց իրաքանչիւրին տառապանքը, ցաւը, սրտի կսկիծը եւ տուաւ հարկ եղած ցուցմունքը, խրատը եւ լուծումը:

6. Շնորհիւ «Գործի հայթայթման» գրասենեակի մատուցած ծառայութիւններուն, մէկ տարուան ընթացքին 76 հայ անձերու գործ ապահովեցին:

7. Ուսումնական յատուկ կարիքներ ունեցող Մանկավարժական կեդրոնի կազմը կը բաղկանայ 21 հայ մասնագետներէ (5 speech and language Therapist, 4 Psychomotor Therapist, 8 Psychotherapist եւ 4 Special Educators) եւ երկու ընկերային ծառայողներէ: 2019 տարեշրջանին կեդրոնը 235 աշակերտներուն մատուցեց մանկավարժական մասնագիտական ծառայութիւն, ծնողներուն հա-

մար կազմակերպեց «Դրական դաստիարակութեան» վերաբերող դասախօսական ասուլիսներ, երեք հայկական վարժարաններու ուսուցչական կազմերու տուաւ «Դրական դաստիարակութեան» եւ «Ներառական կրթութեան մարզումներ:

8. Հոգեկան առողջութեան բաժանմունքը 733 այցելութիւններու ընդմէջէն հոգեբանական աջակցութիւն ցուցաբերեց 92 չափահասներու, որոնք կեանքի այլազան դժուարութիւններ կը դիմագրաւէին: Այս ծրագիրը իր մէջ ներառեց նաեւ խմբային եւ անհատական հիմունքներով ցուցմունքներ՝ հոգեկան առողջութեան, հոգեվերապատրաստման միջամտութեան խորհրդատուութեան եւ հոգեբանական աշխատանքներ:

Հոգեբուժական խնամք եւ միջամտութիւն ցուցաբերեց 93 հիւանդի՝ 249 այցով:

9. Ընկերային բարգաւաճման ծրագրին իրենց մասնակցութիւնը բերին 300 հայ տիկիներ, որոնք շաբաթական դրութեամբ (երեքշաբթի օրերը յատկացուած սուրիահայ տիկիներու, հինգշաբթի՝ լիբանանահայ, իսկ ուրբաթ՝ տարեց մայրերու եւ քոյրերու) կանոնաւոր կերպով մասնակցեցան ժողով-





ներու, լսեցին բժշկական, ընկերային, տնտեսական, մշակութային, մանկավարժական, հոգեբանական եւ կրօնական դասախօսութիւններ եւ կազմակերպեցին բարեսիրական աշխատանքներ:

10. Աւելի քան 98 հայ տիկիններ մասնակցեցան մասնագիտական դասընթացներու

մասնագիտացած ուսուցիչներու հսկողութեամբ սերտեցին իրենց առօրեայ դպրոցական դասերը:

12. Ամրան շրջանին եօթշաբաթեայ դրութեամբ 280 հայ աշակերտներ 28 առաջնորդներու հսկողութեամբ հետեւեցան «Ամառնային դպրոց»-ի ծրագիրին:



13. Դեկտեմբեր 2017-ին գործակցաբար ՍՈՒՍ-ի աւարտեցինք եւ բացումը կատարեցինք մեր շէնքի առաջին յարկի շինարարական աշխատանքներուն:

Արդարեւ, ծառայութեան դաշտի մէջ մէկ դարու վրայ տարածուած գործունեութեամբ, յաջորդական ինսամակալ մարմինները եւ տնօրէնները հետեւողական ծրագրումով եւ յանձնարարութեամբ ոչ միայն արդարացուցին բարերարներու տեսլականը, այլ նորանոր բաժանումներու հարստացումով «Յ. Գարակեօզեան» հաստատութիւնը դարձաւ

եւ փորձեցին կատարելագործել իրենց գիտութիւնը: Այդ առարկաներն էին՝ անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներու, վարսայարդարման, դիմայարդարման եւ տուրմի պատրաստութեան դասընթացքներ:

11. 80 հայ աշակերտներ կանոնաւոր դրութեամբ ամէն օր, յետդպրոցական ժամու, հետեւեցան Սերտարանի ծրագիրին եւ այնտեղ

բարեսիրական հիմնարկէ մը աւելին, մեր ժողովուրդին ամէնօրեայ ցաւերուն եւ կարիքներուն հետ տագնապող բայց միշտ յոյսի եւ կեանքի նոր արին սրսկող առողջ սիրտ մը:

ԺԱՆԻՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ-ՄԱՐԳԱՐԵԱՆ
«Յաւուրդոտ Գարակեօզեան»
հաստատութիւն

«ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՏԱՐԻ»-Ն՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆՑ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՎ ՅԱՏԿԱՆՇՈՒԱԾ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս 2019 տարին հռչակեց «Հայ մամուլի տարի»՝ լուսարձակի տակ առնելով հայ մամուլին դերակատարութիւնն ու անհրաժեշտութիւնը հայկական իրականութեան մէջ, բայց եւ այնպէս «Ազդակ»-ին համար տարին յատկապէս բնորոշուեցաւ տնտեսական տագնապին դէմ պայքարով: Արդարեւ, տարուան սկիզբէն հետզհետէ զգալի դարձող տնտեսական ճնշող պայմանները աւելի ծանրացան եւ մտահոգիչ դարձան ընդհանրապէս լիբանանեան մակարդակի վրայ տիրող ընկերային-տնտեսական սուր տագնապի ծայր առնելով, որ իր գագաթնակէտին հասաւ եւ չափազանց մտահոգիչ դարձաւ 17 հոկտեմբեր 2019-ին տեղի ունեցած ժողովրդային շարժումով, կառավարութեան հրաժարումով եւ պետական կառոյցներու անդամալուծութեամբ:

Ճիշդ է, որ մամուլը խօսքի դրսեւորման եւ արտայայտութեան միջոց է, անշօշափելի արժեքներու շատագովն ու տարածողը, բայց եւ այնպէս գոյատեւելու եւ շարունակելու համար անհկա անպայման կարիք ունի նիւթական միջոցներու, որոնք հետզհետէ սկսած են



նուազիլ: Այս իրողութեան դէմ յանդիման «Ազդակ» կոչով դիմեց իր ընթերցողներուն՝ նեցուկ կանգնելու օրաթերթին. զօրակցողներն ու օժանդակողները անպակաս չեղան, սակայն տագնապին սրութեան ոչ համապատասխան տարողութեամբ: «Հայ մամուլի տարի» յայտարարած վեհափառը եղաւ գործնական քայլ առնող առաջիններէն՝ «Ազդակ»-ին, «Արարատ»-ին եւ «Չարթօնք»-ին յատկացնելով տասական միլիոն լիբանանեան ոսկի՝ առ ի գնահատանք ու զօրակցութիւն անոնց կատարած աշխատանքներուն:

Բայց եւ այնպէս, օրաթերթը գործեց բնական ընթացքով, առանց ոչ մէկ փոփոխութեան, միեւնոյն թափով, կորովով ու վճռականութեամբ՝ հաւատարիմ իրեն յանձնուած ջանք միշտ լուսաւոր պահելու կոչին:

ՄԱՍՆՈՅ ԼՍԱՐԱՆՆԵՐ

տոսթեանի եւ «Ազգակ»-ի տնօրէն եւ խմբագրապետ Շահան Գանտահարեանի:

Այս տարի եւս շարունակուեցան «Ազգակ»-ի մամլոյ լսարանները, որոնք իրենց շուրջ համախմբեցին մտաւորականներ, մամլոյ գործիչներ, գրասերներ, երիտասարդներ եւ ներկայացւած նիւթերով հետաքրքրուողներ, եւ որոնք տեղի ունեցան «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ:



□ 4 յունուար 2019-ին տեղի ունեցաւ «Ազգակ»-ի մամլոյ 144-րդ լսարանը՝ Նոր տարուան բացառիկ ներկայացումով, ինչպէս նաեւ «Ապագայ լրագրողներ»-ու վարժողական ծրագիրին հետեւած երիտասարդներուն հաստատագիրներու տուչութեամբ: Խօսքեր արտասանեցին «Ազգակ-բացառիկ»-ի խմբագիր եւ «Ապագայ լրագրողներու» վարժողական ծրագրի պատասխանատու Արշօ Պալեան, «Ազգակ»-ի բացառիկներու նախկին խմբագիր եւ «Ապագայ լրագրողներ»-ու դասախօս Վիգէն Աւագեան, Հայկազեան համալսարանի նախագահ եւ «Ապագայ լրագրողներ»-ու դասախօս վերապատուելի դոկտ. Փոլ Հայտոսթեան, «Ազգակ»-ի աշխատակիցներէն Յարութ Զեքիճեան, «Ազգակ»-ի աշխատակիցներէն Սալբի Գասպարեան, Ազգակ»-ի «Ապագայ լրագրողներ»-ու վարժողական ծրագիրին հետեւած երիտասարդ աշխատակից Զրիստ Իսկէնտերեան, «Ազգակ»-ի նախկին տնօրէն, պատմաբան եւ «Ապագայ լրագրողներ»-ու դասախօս Երուանդ Փամպուրեան:

Հաւաքի աւարտին «Ապագայ լրագրողներ»-ը՝ Կալի Աւագեան, Ռուբէն Խաչատուրեան, Հուրի Հալէպլեան, Նանար Մինասեան, Նարեկ Քէշիշեան, Գոհար Եագուպեան, Սիլվի Սերայտարեան, Ալիսիա Իշխանեան, Լոռի Գորեսեան, Արենի Խաչատուրեան, Նանի Գալուստեան եւ Զրիստ Իսկէնտերեան ստացան իրենց հաստատագիրները՝ ձեռամբ Երուանդ Փամպուրեանի, վեր. դոկտ. Փոլ Հայ-

□ 14 յունուար 2019-ին՝ 145-րդ լսարանին, տեղի ունեցաւ շնորհահանդէսը «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1970» աշխատութեան, որուն հեղինակն է Հայաստանի



Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի գիտաշխատող դոկտ. Անի Ֆիշէնկճեանը: Գիրքը ներկայացուց Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն փրոֆ. Աշոտ Մելքոնեանը: Սրտի խօսքով հանդէս եկան պատմաբան Երուանդ Փամպուրեան եւ ՀՅԴ Լիբանանի

Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի: Խօսք առաւ գիրքի հեղինակ դոկտ. Ասի Ֆիշենկճեան:

❑ 27 փետրուար 2019-ին կայացաւ «Ազգակ»-ի 146-րդ մամլոյ լսարանը, որ նուիրւած էր Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակին, եւ որուն ընթացքին արուեստաբան դոկտ. Մովսէս Յերկելեան ներկայացուց Թումանեանը՝ հայ կերպարուեստին մէջ:



❑ 7 մարտ 2019-ին տեղի ունեցաւ «Ազգակ»-ի 147-րդ մամլոյ լսարանը, որ նուիրւած էր Կոմիտաս վարդապետի ծննդեան 150-ամեակին, եւ որուն ընթացքին արուեստաբան դոկտ. Մովսէս Յերկելեան ներկայացուց Կոմիտասը՝ հայ կերպարուեստին մէջ:

❑ 8 մարտ 2019-ին տեղի ունեցաւ մամլոյ 148-րդ լսարանը, որուն զեկուցաբերն էր Թոքիոյի օտար լեզուներու համալսարանի



Ասիոյ եւ Ափրիկէի լեզուներու եւ մշակոյթներու բաժանմունքի գիտաշխատող, հայագետ դոկտ. Թաքայուքի Եռչիմուրա, որ ներկայացուց ներկայիս ճափոնի մէջ հայագիտութեան վիճակը եւ հայ-ճափոնական յարաբերութիւնները:

❑ 4 ապրիլ 2019-ին տեղի ունեցաւ «Ազգակ»-ի խմբագրատան կազմակերպած մամլոյ թիւ 149-րդ լսարանը՝ «Յեղային քաղաքականութիւնը, Միացեալ Նահանգները եւ հայերը» սիւթով, զոր ներկայացուց Նիւ Եորքի Ազգային առաջնորդարանի ուսումնական խորհուրդի վարիչ տնօրէն՝ դոկտ. Վարդան Մատթեոսեանը:



❑ 5 ապրիլ 2019-ին տեղի ունեցաւ մամլոյ 150-րդ լսարանը, որուն սիւթն էր «Ղայաստանի թատերական կեանքը՝ այսօր»: Նիւթը ներկայացուցին Սօս Սարգսեանի անուան Ղամազգայինի պետական թատրոնի տնօրէն



Արման Նաւասարդեան եւ գեղարուեստական ղեկավար Նարինէ Գրիգորեան:

□ 11 ապրիլ 2019-ին տեղի ունեցավ մամլոյ 151-րդ լսարանը, որուն նիւթն էր «Յակոբ Օշականի փոքր արձակը»: Նիւթը ներկայացուց Երեւանի պետական համալսարանի հայ նորագոյն գրականութեան ամպիոնի դասախօս Մարինե Ղազարեան:



տասի, Շանթի եւ Օսեանի 150-ամեակ, Սիլվա Կապուտիկեանի եւ Գեորգ Էմիլի 100-ամեակ)» նիւթը: Ձեռնարկը կազմակերպած էր «Ազդակ»-ի խմբագրութիւնը՝ համագործակցութեամբ Համազգայինի Գիր ու գրականութեան մասնաճիւղին:



□ 17 ապրիլ 2019-ին տեղի ունեցավ մամլոյ 152-րդ լսարանը, որուն նիւթն էր «Հայ երգի ազգային նկարագիրը եւ ազատագրական ու հայրենասիրական գաղափարներու եւ կոտորածներու արտացոլումը Կոմիտասի երաժշտութեան մէջ», զոր ներկայացուց Սուրիոյ խորհրդարանի անդամ Ժիրայր Ռեյիսեանը:



□ 6 յունիս 2019-ին տեղի ունեցավ մամլոյ 154-րդ լսարանը՝ Սելրի համաձայնագիրի 100-ամեակին ընդառաջ նիւթով: Կլոր սեղան-



Կոմիտասեան կատարումներով լսարանին իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի «Գուսան» երգչախումբը՝ խմբավարութեամբ Գրիգոր Ալոզեանի: Այս առիթով «Ազդակ»-ի գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեանը նշեց, որ այս ձեռնարկով «Ազդակ» իր համեստ ներդրումը կ'ունենայ Կոմիտասի 150-ամեակին:

քննարկումի բնոյթ կրող մամլոյ լսարանին նիւթն էր «Սահմաններ՝ Սելրէն առաջ եւ ետք. Հայաստան եւ Միջին Արեւելք»:

Քննարկումը վարեց Պէյրութի ամերիկեան համալսարանի դասախօս դոկտ. Ժան Կեօքճեան, իսկ օրուան զեկուցաբերներն էին՝ Միշիկըն-Տիրպոռն համալսարանի դասախօս դոկտ. Արա Սանճեան՝ «Հայաստան. սահմաններ եւ պահանջներ (1828-1953) նիւթով, եւ Ժընեւի համալսարանի դասախօս դոկտ. Վիգէն Զթըրեան՝ «Սելրէն ետք՝ սահմանային խնդիրներ Միջին Արեւելքի մէջ» նիւթով:

□ 8 մայիս 2019-ին կայացաւ 153-րդ լսարանը, որուն ընթացքին Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի Մ. Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկի տնօրէն դոկտ. Վարդան Դեւրիկեան ներկայացուց «2019-ի յոբելեանները Հայաստանի մէջ (Թումանեանի, Կոմի-

□ Կազմակերպութեամբ «Ազդակ»-ի խմբագրութեան եւ համագործակցութեամբ Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբի վարչութեան, 5 յուլիս 2019-ին տեղի ունեցավ մամլոյ 155-րդ լսարանը, որուն

նիւթն էր «Փարիզի Հայ թատրոնի ընկերակցութեան յայտնաբերած թատերական գործերը», իսկ գեկուցաբերը՝ «Նոր Յառաջ» թերթի գլխաւոր խմբագիր Ժիրայր Զոլաբեան:



ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍՆԵՐ

❑ Գործակցաբար «Վանայ ձայն»-ին եւ «Ազդակ»-ի խմբագրութեան 10 յուլիս 2019-ին տեղի ունեցաւ մամլոյ 156-րդ լսարանը, որուն ընթացքին հայրենի լրագրող, հաղորդավար եւ Երեւանի պետական համալսարանի դասախօս Վահագն Չաքարեան խօսեցաւ «Մշակութային կեանքը այսօրուան Հայաստանի մէջ» նիւթին:



● Հովանաւորութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին, կազմակերպութեամբ «Ազդակ» օրաթերթին եւ Համազգայինի Գիր ու գրականութեան մասնաճիւղին, 13 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ Պօղոս Շահմելիքեանի «Ճամբորդութիւն յիշողութեան մէջ» գիրքին շնորհահանդեսը:

Բացման խօսքը արտասանեց «Ազդակ»-ի պատասխանատու խմբագիրներէն Ժագ Յակոբեան, «Ազդակ»-ի խմբագրութեան անունով խօսք առաւ «Ազդակ»-ի պատասխանատու խմբագիր Նորա Բարսեղեան, հատորը ներկայացուց Յունաստանէն յատկապէս այս առիթով Լիբանան գտնուող կրթական-հասարակական գործիչ Միհրան Զիւրաբեան, ապա ողջոյնի խօսք ուղղեց հատորի խմբագիր Արմէն Իւրնեշլեան:





կոպոս, կազմակերպած «Ազգակ» օրաթերթը եւ Գիրու գրականութեան մասնաճիւղը:

Համագային գիրու գրականութեան մասնաճիւղին անուսով բացման խօսքով հանդես եկաւ Սրբուկ Ճենետան: Վահե Թաշճեանի «Օրագիր

Համագայինի Կեդրոնական վարչութեան անդամ Սելլա Թնճուկեանին խօսքը կարդաց Սալբի Խաչատուրեան-Աւետիս: «Վանայ ձայն»-ի տնօրէն Վիգէն Աւագեան եւ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի ուղղեցին իրենց սրտի խօսքերը:

Ապա խօսքը տրուեցաւ հատորի հեղինակ Պօղոս Շահմելիքեանին, իսկ եզրափակիչ խօսքով հանդես եկաւ հեղինակին բարեկամը՝ Եփրեմ արք. Թապաքեան:

Աւարտին տեղի ունեցաւ գինեձօս եւ գիրքի մակագրութիւն:

եղեռնի ու պայքարի. Շողակաթի մահը Սալամիայի մէջ» հատորը ներկայացուց սփիւռքահայ մամուլի աշխատակից, բանասէր Աւօ Գաթրճեանը: Խօսք առաւ գիրքի հեղինակ դոկտ. Վահե Թաշճեան:

Սրտի խօսք արտասանեց «Օրագիր եղեռնի ու պայքարի. Շողակաթի մահը Սալամիայի մէջ» հատորով ներկայացուած կրթական գործիչ Գրիգոր Պողարեանի զաւակը՝ ազգային գործիչ Գրիգորիս Պողարեանը, իսկ եզրափակիչ խօսք արտասանեց Շահան արք. Սարգիսեան: Աւարտին տեղի ունեցաւ գիրքին գինեձօսը:

● 14 յունիս 2019-ին տեղի ունեցաւ դոկտ. Վահե Թաշճեանի «Օրագիր եղեռնի ու պայքարի. Շողակաթի մահը Սալամիայի մէջ» գիրքին շնորհահանդէսը: Ձեռնարկը հովանաւորած էր Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիս-



ԱՅԼ ՆԱԽԱԶԵՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐայ մամուլի տարի

➤ Արամ Ա. վեհափառ հայրապետին կողմէ 2019-ը «Չայ մամուլի տարի» հռչակելու առիթով, Անթիլիասի մէջ տեղի ունեցան խորհրդակցական հանդիպումներ՝ ապրիլ 2019-ին, զանգուածային լրատուամիջոցներու մէջ գործող գլխաւոր խմբագիրներու եւ մամուլի

սփիւռքի զանազան երկիրներու մէջ գործող տպագիր եւ էլեկտրոնային մամուլի շուրջ 100 տնօրէններ, գլխաւոր խմբագիրներ եւ մամուլի գործիչներ:

Կաթողիկոսին՝ «Չայ մամուլի տարի» հռչակման կոնդակին եւ համաժողովին բացման իր պատգամին, ինչպէս նաեւ համաժողովի ընթացքին ներկայացուած զեկոյցներու լոյսին տակ, ներկաները հանգամանօրէն քննարկեցին Չայաստան-Արցախ-սփիւռք



հեղինակաւոր գործիչներու՝ համահայկական համաժողով կազմակերպելու համար:

Խորհրդակցութեան մասնակցեցան Չայաստանի լրագրողներու միութեան նախագահ Սաթիկ Սէյրանեան, «Նոյեան Տապան» լրատու գործակալութեան տնօրէն եւ Լրատուամիջոցներու համահայկական ընկերակցութեան նախագահ Տիգրան Յարութիւնեան, «Ազդակ»-ի տնօրէն եւ գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեան, «Չարթօնք»-ի տնօրէն Սեւակ Յակոբեան, «Արարատ»-ի խմբագիր Ալետիս Փօշողլեան, կաթողիկոսութեան դիւանապետ Խաչիկ Տետեան, կաթողիկոսութեան հայագիտական-կրթական գրասենեակի պատասխանատու Ժիրայր Դանիէլեան, Տեղեկատուական բաժանմունքի տեսուչ Պետրոս վրդ. Մանուէլեան:

➤ Չայ մամուլի Համահայկական համաժողովը տեղի ունեցաւ 2-4 յուլիս 2019-ին, Անթիլիասի մայրավանքին մէջ, նախագահութեամբ ու ներկայութեամբ վեհափառ հայրապետին: Համաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Չայաստանի, Արցախի եւ

եռամիասնական հարթութեան վրայ ձեւաւորուելիք հայկական լրատուամիջոցներու համագործակցութեան ուղիները, նորարար արհեստագիտութեան ներմուծած մարտահրաւերները, ընկերային ցանցերու վրայ լրատուական գործունեութիւն ծաւալելու երեւոյթը, տեղեկատուական անվտանգութեան եւ հաւաստիութեան խնդիրները, միջազգային հանրային կարծիքի ստեղծման նպաստող գործօնները, մամուլ-ինքնութիւն եւ մամուլ-մշակոյթ կապը, մամուլի մէջ բազմակարծութեան եւ խօսքի ազատութեան դրսեւորման անհրաժեշտութիւնը, համագլխային պահանջատիրութեան մէջ մամուլին ունենալիք դերը եւ մամլոյ առաքելութեան առնչուած այլ խնդիրներ:

Չայ մամուլին նուիրուած համահայկական համաժողովին մասնակցեցաւ «Ազդակ»-ի խմբագրապետ եւ տնօրէն Շահան Գանտահարեան, որ ներկայացուց «Չայաստան-Արցախ-սփիւռք համագործակցութիւն. խնդիրներ եւ ընելիքներ» խորագիրով զեկուցում:

➤ Լիբանանի մէջ Չայաստանի Հանրապետ-



տութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբեկեանի հրաւերով, Յայաստանի դեսպանատան մէջ 5 մարտին տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում հայ մամուլի եւ ձայնասփիւռի կայաններու տնօրէններու եւ գլխաւոր խմբագիրներու հետ: Յանդիպումին ներկայ էին դեսպանութեան Գ. քարտուղար Դաւիթ Ալավերտեան եւ ռազմական կցորդ գնդապետ Ալեքսան Մուշեղեան: Խորհրդակցութեան օրակարգը կը վերաբերէր Յայաստան-սփիւռք տեղեկատուական հարթութեան վրայ համագործակցութեան նոր ուղիներուն եւ համահայկական օրակարգերու ձեւաւորման առընթեր հայկական լրատուամիջոցներու համարժէք արձագանգումներու առաջադրանքին:

➤ 16 մարտ 2019-ին Արցախի Յանրապետութեան պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեանի Լիբանան այցելեց՝ ընկերակցութեամբ Արցախի Շահումեան շրջանի վարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսեանի: Արցախի պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ նաեւ Լիբանանի մէջ գործող հայկական լրատուամիջոցներու ներկայա-

ցուցիչներուն հետ: Պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեան զեկուցեց Արցախի զարգացման ծրագիրներուն եւ կառավարութեան կողմէ ճշդուած առաջնահերթութիւններուն մասին՝ կարեւոր նկատելով ԱՌԻ-ի ներդրումային եւ յատկապէս բնակարանային ծրագիրներու իրականացումը: Իր հերթին, Շահումեանի վարչական շրջանի ղեկավար Գագիկ Մարտիրոսեան զեկուցեց իր ղեկավարած շրջանի ընձեռած զարգացման կարելիութիւններուն մասին՝ յատկապէս խօսելով գիւղատնտեսութեան, անասնապահութեան, մեղուաբուծութեան, վանքային համալիրներու եւ կրթողներու առումով զբօսաշրջութեան ոլորտներուն մասին:

Յանդիպումը առիթ եղաւ, որ Արցախի պետական հիւրերը պատասխանէն լրատուամիջոցներու ներկայացուցիչներու հարցումներուն:

➤ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած՝ Յայ մամուլի համահայկական համաժողովի Արցախի պատուիրակութիւնը այցելեց «Ազդակ» եւ Շահան Գանտահարեանին յանձնեց Արցախի «Մայ-



այն, ինչ որ կը կատարէ «Ազդակ»-ը՝ առհասարակ», շնորհակալութեան խօսքին մէջ նշեց «Ազդակ»-ի գլխաւոր խմբագիրը:

➤ Հայ մամուլի տարւան ծիրին մէջ, նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի, ուրբաթ, 12 ապրիլի երեկոյեան ժամը 6:30-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Հսկումի ժամերգութիւն, որուն աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ լիբանանահայ մամուլի ննջեցեալ մշակներու հոգիներուն համար:

րութիւն» հասարակական կազմակերպութեան «Մայրական երախտագիտութիւն» յուշամետալը: Չայն յանձնեց Արցախի «Ապառաժ» պարբերականի վերլուծաբան Միքայել Հաջեանը՝ նշելով, որ «Ազդակ»-ը՝ ի դէմս Գանտահարեանի, մնայուն կերպով սատար կանգնած է Արցախին ու Արցախի ժողովուրդին թէ՛ պատերազմի ժամանակ, թէ՛ յետպատերազմական տարիներուն, թէ՛ վերականգման ու վերակառուցման շրջանին եւ թէ՛ այսօր:

գութիւն, որուն աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ լիբանանահայ մամուլի ննջեցեալ մշակներու հոգիներուն համար:

«Լոյսի զաւակներու վայել կեանք պարեցեք, որովհետեւ լոյսի պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը», ըսաւ սրբազան հայրը իր պատգամի սկզբնաւորութեան՝ ասելցնելով, որ Մեծ պահքի այս վերջին ժամերգութեան ընթացքին, ընդամառեցելով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետի պատգամին, յարմար նկատած է, որ «Հայ մամուլի տարուան» առիթով մեր իմացական եւ հոգեւոր ուշադրութիւնը կեդրոնացնենք յիշատակին վրայ բոլոր այն երախտաւորներուն, որոնք հայ մամուլին ճամբով ծառայեցին մեր ժողովուրդին եւ այսօր իրենց յաւիտեանական հանգիստէն կը հետեւին մեր քայլերուն, յաջո-

Հաջեան կարելոր նկատեց «Ազդակ»-ի դերն ու նշանակութիւնը ո՛չ միայն սփիւռքի, այլ նաեւ ամբողջ հայութեան համար: Ան շեշտեց, որ երբ կը խօսինք հայ մամուլի գործիչներուն, թերթերուն համագործակցութեան մասին, ապա Շահան Գանտահարեանը այդ համագործակցութեան կարելոր ուղենիշներէն մէկն է, ապա ընդգծեց, որ «Ազդակ»-ը մնայուն կերպով Արցախով կը շնչէ, ու եթէ բանանք «Ազդակ»-ի որեւէ թիւ, հոն անպայման անդրադարձ կայ Արցախին:

«Բազմաթիւ պարգեւատրումներ կատարուած են, բայց այս մէկը իսկապէս յուզեց, նամանաւանդ, որ Արցախէն է: Արցախը իսկապէս առանցքային դեր ունի մեզի համար: Ասկա ես կը համարեմ «Ազդակ»-ի մեծ ընտանիքին նուէրը, որովհետեւ ես առանձին չեմ կրնար իրականացնել



ղութիւններուն եւ դժուարութիւններուն:

Նարեկ արքեպիսկոպոս իր բարձր գնահատանքը յայտնեց՝ խոնարհելով յիշատակին դիմաց լիբանանահայ մամուլի ննջեցեալ սպասաւորներուն եւ միաժամանակ իր գնահատանքը յայտնեց այսօր հայ մամուլը կենդանի ներկայութիւն դարձնող մեր բոլոր մշակներուն եւ աղօթեց, որ հայ մամուլը մեր ժողովուրդի կեանքին մէջ մնայ իր պատասխանատու դերակատարութեան մէջ, շարունակէ ըլլալ բարութեան, արդարութեան ու ճշմարտութեան մարտահրաւերը՝ մեր բոլորին կեանքը առաջնորդելու համար դէպի մեր հոգեմտաւոր արժէքները:

Եզրափակելով իր խօսքը՝ սրբազան հայրը աղօթեց, որ Աստուած իր երկնային խաղաղութեան մէջ հանգչեցնէ մեր մամուլի ննջեցեալ սպասաւորները, նաեւ ուժ եւ կորով տայ այսօրուան մեր սպասաւորներուն եւ մեզ բոլորս արժանի զաւակները դարձնէ մեր մշակոյթի պահպանման եւ ծաղկման:

➤ 7 դեկտեմբեր 2019-ին լիբանանահայ երեք օրաթերթերու տնօրէնները այցելեցին Արամ Ա. վեհափառ հայրապետին: Այցելութեան նպատակը շնորհակալութիւն յայտնել էր անոր՝ «Հայ մամուլ տարուան» առիթով եւ Լիբանանի ճգնաժամային պայմաններուն մէջ իր կատարած նիւթական աջակցութեան համար՝ լիբանանահայ երեք օրաթերթերուն:

Վեհափառ հայրապետը գնահատելով օրաթերթերուն տարած աշխատանքը՝ վերաշէշտեց հայ մամուլին առաքելութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը՝ հայապահպանման եւ հանրային կարծիքի ճիշդ հունաւորման դերակատարութիւնը ընդգծելով:

Այնուհետեւ խորհրդակցութիւնները կեդրոնացան Անթիլիասի մայրավանքին մէջ գումարուած Հայ մամուլի համահայկական համաժողովէն բխած առաջադրանքները իրականացնելու կարելիութիւններուն վրայ: Տնօրէնները զեկուցեցին տարբեր լրատուամի-

ջոցներու հետ կայացած խորհրդակցական հանդիպումներուն մասին: Գոյացած է արդէն ընդհանուր համաձայնութիւն՝ համաժողովները հերթականութեամբ գումարելու անհրաժեշտութեան շուրջ:

Համաժողովէն բխած համակարգող խորհուրդը իր յառաջիկայ նիստը պիտի գումարէ Անթիլիասի մէջ, 2020-ի փետրուարին: Խորհուրդին մէջ ներառուած էին Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններէն ու սփիւռքէն հետեւեալ մամուլի պատասխանատուները. Արամ Անանեան («Արմէնփրես» լրատու գործակալութեան տնօրէն), Սաթիկ Սէյրանեան (Հայաստանի լրագրողներու միութեան նախագահ), Տիգրան Յարութիւնեան (Լրատուամիջոցներու համահայկական ընկերակցութեան նախագահ), Շահան Գանտահարեան («Ազդակ» օրաթերթի տնօրէն), Սեւակ Յակոբեան («Չարթօնք» օրաթերթի տնօրէն), Անի Եփրեմեան («Արարատ» օրաթերթի տնօրէն), Միքայէլ Հաջեան (Արցախի հանրային ռատիոյի աւագ վերլուծաբան):

○ Լիբանան կատարած այցելութեան ծիրին մէջ, շաբաթ, 26 յունուար 2019-ին, Թուրքիոյ խորհրդարանի եւ ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան անդամ, հայազգի Կարօ Փայլան հանդիպում մը ունեցաւ լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներու հետ, Հայկազեան համալսարանին մէջ:

Կարօ Փայլան ներկայացուց Թուրքիոյ իրավիճակը՝ ներքին եւ արտաքին զարգացումներու լոյսին տակ, կեդրոնանալով Թուրքիոյ հայութեան եւ փոքրամասնութիւն-



ներուն սպառնացող վտանգներուն, Հայոց ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն, հայ-թրքական յարաբերութիւններուն, Արցախի հարցի զարգացումներուն վրայ:

Փայլան շեշտեց, որ Թուրքիա կը խուսափի ամերեսուելու իր անցեալին հետ: Անոր կարծիքով, Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան ամրապնդումը հիմք կրնայ ծառայել արդարութեան հաստատման եւ բազմաթիւ անլոյծ հարցերու լուծման:

Ապա տեղի ունեցաւ միտքերու փոխանակում, որուն ընթացքին Կարօ Փայլան յաւելեալ տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ տուաւ լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներու հարցումներուն:

○ 4 մարտին, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբեկեան՝ ընկերակցութեամբ Նոր Երրորդ քարտուղար Դաւիթ Ալավերտեանի եւ ռազմական կցորդ գնդապետ Ալեքսան Մուշեղեանի, այցելեց «Շաղգոյեան» կեդրոնին մէջ գործող «Ազդակ»-ի խմբագրատուն, «Վանայ ձայն» ձայնասփիւռի կայան, ինչպէս նաեւ հանդիպում ունեցաւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամներուն հետ:

«Ազդակ»-ի խմբագրատան մէջ օրաթերթի գլխաւոր խմբագիրն ու տնօրէնը՝ Շահան Գանտահարեանը, դիտել տուաւ, որ ուրախութիւն է դեսպանը ընդունիլ, մանաւանդ որ ան մօտէն կը հետեւի լրատուական դաշտին, ուր մեծ փորձառութիւն ունի: Ան տեղեկացուց, որ «Ազդակ» նաեւ կը լուսաբանէ հայաստանեան իրադարձութիւնները, տարբեր

առիթներով թերթին լրագրողները այցելած են հարաւ, ուր տեղակայուած միջազգային խաղաղապահ ուժերուն մէջ կան նաեւ խաղաղապահ առաքելութիւն իրականացնող հայ զինուորներ, որոնց համար եւս ուրախալի եղած են նման այցելութիւններ: Շ. Գանտահարեան յայտնեց, որ տեղեկատուական առումով համագործակցութիւնը միշտ մնալուն եղած է թէ՛ Հայաստանի համապատասխան գերատեսչութիւններուն, եւ թէ՛ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան հետ՝ հաստատելով, որ այս հաւաքական ճիգը կը նպատակադրէ սատար կանգնիլ, համագործակցիլ եւ ծառայել Հայաստանի Հանրապետութեան:

Դեսպանը իրայատուկ եւ արտայայտիչ նկատեց թերթին անունը՝ «Ազդակ», որ, անոր համաձայն, հայ ժողովուրդի մշակութային ժառանգութեան եւ լրատուութեան պատմութեան հարուստ կետերէն մեկն է: Ան հաստատեց, որ ինք ամէն առաւօտ կը բանայ օրաթերթը՝ տեսնելու, թէ ինք ինչ ազդակներ կը ստանայ հոնկէ եւ անելցուց, որ Նոյնն է պարագան լիբանանահայութեան եւ սփիւռքահայութեան: «Ազդակ»-ի մէջ շատ բարձր մասնագիտական մօտեցում կայ, դիտել տուաւ դեսպան Աթաբեկեան՝ լուսարձակի տակ առնելով այն իրողութիւնը, որ այսօր ամբողջ աշխարհին մէջ լրատուութիւնը դասական կանոններէն կը շեղի եւ յստակ չէ՛ դեպի ինչպիսի՛ կանոններով կ'ընթանայ: «Ձեր թերթը կրնայ օրինակելի ըլլալ լրատուութեան իմաստով, թէ՛ խորագիրներուն ընտրութիւնը, թէ՛ նիւթերուն առաջնահերթութիւնը շատ փառահեղ, բարձր մասնագիտական մօտեցումներով կատարուած են: Կը հիանամ նաեւ **Եփլիքէյըն**ով, որ շատ լաւ մտածուած ու մատչելի է», հաստատեց ան:

○ Նոր տարուան գիշերը Կեդրոնական Պէյրութի մէջ կազմակերպուած խրախճանքին մասնակցած մեծ թիւով երգիչներ



րու, նուազախումբերու, «Տի. ՃԷյ.»-ներու եւ պարախումբերու ելոյթներէն մէկուն ընթացքին ելոյթ ունեցած է նաեւ պարախումբ մը, որ ներկայացուցած է լիբանանեան աւանդական շուրջպարը (*տասպէ*):



Այդ պարախումբին ելոյթին ընթացքին շուրջ 30 հոգի բեմին շուրջ կանգնած են իրենց ձեռքին ունենալով օրաթերթ մը, որ այս պարագային դարձաւ «Ազդակ»-ը՝ շնորհիւ կազմակերպիչ յանձնախումբին մէջ գտնուող հայ անհատներու անձնական նախաձեռնութեան: Այսպիսով, «Ազդակ»-ը անմասն չմնաց նաեւ Նոր տարուան խրախճանքէն:

○ Կազմակերպութեամբ «Ազդակ»-ին, չորեքշաբթի, 19 յունիս 2019-ին, «Ազդակ»-ի

«Փիւնիկ» սրահին մէջ բացումը կատարուեցաւ «Ազդակ»-ի երիտասարդ աշխատակիցներէն Զրիստ Իսկէնտերեանի գեղանկարչական առաջին անհատական ցուցահանդէսին, որ նուիրուած է Կոմիտասի ծննդեան 150-ամեակին:

Բացման ու բարի գալուստի խօսքը ար-



տասանեց «Ազդակ»-ի խմբագիրներէն Արշո Պալեան, ապա խօսք առաւ եւ երիտասարդ գեղանկարիչի գործերուն մասին խօսեցաւ «Ազդակ»-ի «Արուեստի Էջ»-ի պատասխանատու, արուեստաբան դոկտ. Սովսէս Յերկէեան, իսկ աւարտին իր սրտի խօսքը ուղղեց Զրիստ Իսկէնտերեան:

○ Թուայնացման աշխատանքներու ծիրին մէջ Փարիզի մէջ 1985-էն 2002 լոյս տեսած «Կամք» օրաթերթի հաւաքածոն ամբողջովին թուայնացուեցաւ այս տարի:

«Ազդակ»-ի բարեկամներէն Յակոբ Ենիգոմշեան ո՛չ միայն ամբողջական հաւաքածոն տրամադրեց «Ազդակ»-ին, այլ նաեւ իրականացուց անոր փոխադրութիւնը Փարիզէն Պէյրուս: «Կամք»-ի տպագիր օրինակներու ամբողջութիւնը մաս կազմեցին «Ազդակ»-ի գրադարանին:



○ Հայաստանի Ազգային գրադարանին կազմակերպած մամուլյո գիտաժողովի վերջին նիստին (դեկտեմբեր 2019) Ազգային գրադարանի տնօրենի տեղակալ Հայկանուշ Ղազարեան յայտարարեց, որ Ազգային գրադարանը պիտի ստանձնէ ամբողջ «Ազգակ»-ի հաւաքածոյին մատենագիտութեան պատրաստութեան աշխատանքը:

Ազգային գրադարանը ունի մատենագիտութեան բաժին, ուր մատենագետներ հսկայ աշխատանք կ'իրականացնեն ամենէն գիտական մօտեցումներով՝ ամբողջական տեսքի բերելու համար կարելորագոյն գիտաշխատութիւններու եւ պարբերականներու մատենագիտական ուսումնասիրութիւնները:

«Ազգակ» օրաթերթի, բացառիկի եւ յաւելւածի ժողովածուներու մատենագիտական ուսումնասիրութիւնները պիտի գան համալրելու Ազգային գրադարանի մամուլյո մատենագիտական նիւթերուն հարուստ հաւաքածոն:

**«ԱԶԳԱԿ-ԳԱՂԱՓԱՐԱՐԱՆԱԿԱՆ»
ՅԱՒԵԼՈՒԹՅ 2-ՐԴ ԹԻՒ՝
ՌՈՍՏՈՄԻ ՄԱՐՈՒՄ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹՅ**

ՀՀԴ հիմնադիր երրորդութեան անդամ Ռոստոմի (Ստեփան Զօրեան) մահուան 100-ամեակին առիթով, հինգշաբթի, 27 յունիս 2019-ին լոյս տեսաւ «Ազգակ-գաղափարաբանական» յաւելուածին երկրորդ թիւը՝ 16 մեծադիր էջերով: Այս թիւին իւրայատկութիւնը այն էր, որ կը բացուէր Ռոստոմի տիպարը պատկերող գեղարուեստական գունաւոր



նկարով, որ յատուկ «Ազգակ»-ին նուիրած էր նկարի հեղինակ, լիբանանահայ գեղանկարիչ Արա Ազատ: Յաւելուածը իր աշխատակցութեամբ հարստացուց բացառապէս սփիւռքահայ դաշնակցական մտաւորականներու խումբ մը: Առաջին էջին վրայ հրապարակուած էր Ռոստոմի ընդարձակ կենսագրականը: Հոն տեղ գտած էին նաեւ՝ երեսփոխան Յակոբ Բագրատունիի գրիչով Ռոստոմի տիպարը վեր առնող՝ «Ղեկավարի ռոստոմեան այբուբենը» խորագիրով յօդուածը եւ մտաւորական Յարութիւն Զիրքճեանի ուսումնասիրութիւնը՝ բնագիրներուն ընդմէջէն Ռոստոմի գաղափարական աշխարհին մասին: Յաջորդող էջերուն մէջ կային արխիւային նիւթեր Ռոստոմէն եւ անոր մասին՝ անոր ժառանգ ձգած գաղափարական աւանդը ներկայացնող: Ընդարձակ բաժին մը յատկացուած էր Ռոստոմի նամակ-հրահանգներու սեւագրութիւններուն մէկ մասին: Անոնց ամբողջութիւնը աւելի կանուխ լոյս տեսած էր «ՎԷՄ» համահայկական հանդէսի յունուար-մարտ 2019-ի թիւին մէջ՝ պատմաբան Երուանդ Փամպուքեանի խմբագրութեամբ: Նախանձ Պետրոսեան ներկայացուցած էր ռոստոմեան փորձը միջազգային համերաշխութեան առումով եւ ներկայիս անկէ դասեր քաղելու անհրաժեշտութիւնը: Խաչիկ Տէր Ղուկասեան ընդարձակ յօդուածով մը անդրադարձած էր ՀՀ Դաշնակցութեան ընկերվարական գործին եւ ընելիքներուն: Այս թիւին մէջ ներառուած էր նաեւ 1 մարտ 2019-ին ՀՀԴ «Ռոստոմ» կոմիտէին՝ Ռոստոմի մահուան 100-ամեակին առիթով կազմակերպած ձեռնարկին ընթացքին բանախօս Համբիկ Պիլալեանի արտասանած խօսքը: Միհրան Զիրտօղլեան անդրադարձած էր դաշնակցական գործիչ եւ մտաւորական Վահան Խորէնիի գաղափարական մտածողութեան: Դոկտ. Արա Խանճեան իր յօդուածով անդրադարձած էր Հայաստանի Հանրապետութեան մէջ գիտակից քաղաքացիի տիպարին: «Ազգակ-գաղափարաբանական» յաւելուածին մէջ տեղ գտած էր նաեւ մտաւորական Յակոբ Պալեանի յօդուածը՝ «Ըմբոստութիւն, յեղափոխութիւն, յեղաշրջում. ի՞նչ ըսած է պատմութիւնը եւ ի՞նչ կ'ըսէ ներկան» խորագիրով:

«ԱԶԳԱԿ»-Ի ԱՐԱՔԵՐԵՆ ԿԱՅՔԷՋԸ՝ 10 ՏԱՐԵԿԱՆ

2019-ին «Ազգակ»-ի արաբերեն կայքը թեւակոխեց իր 10-ամեակը: Սեպտեմբեր 2009-ին անհկա ընթացք առաւ՝ դիմակայելով արաբական աշխարհին ներկայանալու կարեւոր մարտահրաւեր մը, նաեւ գիտակցելով, որ այլեւս պարտաւոր ենք արաբական աշխարհին մէջ տարածել հայկական նիւթերը՝ հայկական դիտանկիւնէ, իսկ միւս կողմէ՝ լրատուութիւն տրամադրել արաբական շրջանակներուն եւ գոհացնելով հետաքրքրութիւնը Միջին Արեւելքի մէջ թէ դուրս, արաբական մամուլի ներկայացուցիչներուն, որոնք մնայուն կերպով աղբիւրներ կ'որոնեն հայկական թեմաներու մասին իրենց նիւթերը մշակելու:

Առաջին տարին կայքէջը իր նիւթերուն ներկայացումը կը կատարէր ամսական դրութեամբ, իսկ 2010-ին սկսաւ իր նիւթերը թարմացնել շաբաթական դրութեամբ, իսկ կարճ ժամանակ ետք՝ օրական: Կայքէջին խմբագիրն է դոկտ. Նորա Արիստան:

Կայքէջին հետեւողները եւ ընթերցողները կը կազմեն լայն շերտ մը, որ կ'ընդգրկէ արաբական շրջանակներու եւ Միջին Արեւելքի մէջ ու անկէ դուրս ապրող արաբախօս հայ ընթերցողներ: Միւս կողմէ՝ ներգրաւուածութեան ծիրը ընդարձակ է, լրագրողներ, հետազօտողներ եւ հետեւողներ, յատկապէս՝ Եգիպտոսէն, Լիբանանէն, Սուրիայէն, Յորդանանէն, Պաղեստինէն, Իրաքէն, Եմենէն, Սէուտական Արաբիայէն կայքէջին անբաժանելի համակիրներ են:

Կայքէջի բովանդակութեան առանցքը կը կազմեն՝ հայութեան վերաբերող իրադարձութիւնները, Հայաստանի, Արցախի, սփիւռքի քաղաքական, մշակութային, մարզական լուրերը եւ անոնց վերաբերող վերլուծական յօդուածները, ինչպէս նաեւ՝ Հայ դատին առն-



չուող զարգացումները եւ հայ գրականութեան, մշակոյթի, արուեստի գրութիւնները:

«Ազգակ»-ի արաբերեն կայքէջի նիւթերն օգտուած ու արտատպումներ կատարած են մեծ թիւով պատկերասփիւռի կայաններ, մամուլի գործակալութիւններ, դիմատետրեան էջեր, ինչպէս նաեւ՝ ուսումնասիրողներ, լրագրողներ, համալսարանականներ եւ պատմաբաններ: «Ազգակ»-ի արաբերեն կայքէջի ունի իր Դիմատետրի յատուկ էջը, ուր տեղադրուած նիւթերը հասանելի կը դառնան անհամար ընթերցողներու՝ առիթ ընծայելով նաեւ հայկական թեմաներու հրապարակային քննարկման:

«Ազգակ» արաբերենը անմասն չմնաց նաեւ «Թուիթթըր»-ի արդիական դրութենէն, որուն շնորհիւ անելի լայն տարածում ունեցաւ ան:



«ՊՁՏԻԿ ՄՁՏԻԿ»

□ «Ազդակ»-ի մանկապատանեկան յաւելլուած «Պզտիկ-Մզտիկ»-ի խմբագրական կազմին հրաւերով այս տարի տեղի ունեցան երկու հանդիպումներ լիբանանահայ վարժարաններու նախակրթարանի Դ., Ե. եւ Զ. դասարաններու հայերէնի ու հայոց պատմութեան ուսուցիչ-ուսուցչուհիներուն հետ՝ ուրբաթ, 5 ապրիլ 2019-ին եւ 12 ապրիլ 2019-ին «Ազդակ»-ի խմբագրատան մէջ:

Հանդիպումներուն նպատակն էր ծանօթացնել մանկապատանեկան յաւելլուածին՝ «Պզտիկ-Մզտիկ»-ի անցնող 15 տարուան աշխատանքները եւ լսել ուսուցիչներուն տեսակետներն ու առաջարկները: «Պզտիկ-Մզտիկ»-ի աշխատանքները ներկայացուց յաւելլուածի խմբագիր Սրբուկ Ճենսնեան, խօսք առաւ նաեւ «Ազդակ»-ի տնօրէն Շահան Գանտահարեան:

□ «Պզտիկ-Մզտիկ»-ի խմբագրական կազմին նախաձեռնութեամբ, «Փոքրիկ լրագրողներ»-ու վարժանիստը տեղի ունեցաւ կիրակի, 28 ապրիլ 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ՝ մասնակցութեամբ տասներեք հայկական վարժարաններու չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններու 76 աշակերտներու:

Վարժանիստը սկսաւ առաւօտեան ժամը 10:00-ին ու իր աշխատանքները աւարտեց կէսօրէ ետք ժամը 4:00-ին:

Այս տարուան նիստը նուիրուած էր Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակին: Աշխատանքը սկսաւ Յովհաննէս Թումանեանի կեանքին ու գործունեութեան նուիրուած **փառուրդ փոյն**ով մը, զոր ներկայացուց Սրբուկ Ճենսնեան, ի միջի այլոց անդրադառնալով նաեւ Կոմիտաս վարդապետի ծննդեան 150-ամեակին, Հայոց ցեղասպանութեան ու այդ ծիրին մէջ Թումանեանի տարած աշխատանքին եւ անոր տրուած Ամենայն Հայոց բանաստեղծ կոչումին: Աշակերտները



բաժնուած էին 13 խառն խումբերու, եւ իւրաքանչիւր խումբ կը կրէր հայկական կամ կիլիկեան շրջանի մը անունը: Անոնք առաջին հերթին դիտեցին Թումանեանի «Անբան Հունրիս» գործին գծանկարային կարճ ժապաւենը, ապա, ըստ թելադրանքին, անոնք, երեւակայելով, փոխեցին պատմութեան աւարտը կամ շարունակեցին պատմութիւնը այլ վախճան մը տալով անոր, որմէ ետք գծեցին իրենց շարադրած պատմութեան յարմար պատկերները: Կարգ մը խումբեր պատմութիւնը ներկայացուցին նկարաշարով:

Առաջին բաժնի աշխատանքներու աւարտէն ետք, իւրաքանչիւր խումբէ աշակերտ մը ներկայացուց իր խումբին տարած աշխատանքը: Ճաշէն ետք աշակերտները դիտեցին Թումանեանի գործերէն «Շունն ու կատուն» եւ «Սուտասան»-ը ու իրենց ազատ կամքով





ընտրեցին երկու նիւթերէն մէկը՝ դարձեալ փոխելու պատմութեան աւարտն ու անոր յարմար գծագրութիւնը կատարելու: Իսկ աշխատանքի վերջին բաժինով աշակերտներուն թելադրուեցաւ պատրաստել խաղեր: Վարժանիստի աւարտին մասնակցող փոքրիկները ստացան նաեւ յիշատակի նուէրներ՝ տրամադրուած «Ազգակ»-ի կողմէ:

ԱՊԱԳԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Ազգակ»-ի աշխատակիցները երիտասարդ տարրերով համալրելու նպատակով իրականացուող «Ազգակ»-ի Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրը այս տարի եւս շարունակուեցաւ: Կազմուեցաւ երկրորդ խումբ, որուն մաս կը կազմեն Կայել Ապուստֆեան, Կարեն Պոյաճեան, Կիրո Սերայտարեան, Գեորգ Եագուպեան, Նարոտ Զեչեպաշեան, Կարեն Խուտավերտեան, Յարութ Մարկոսեան, Ռոզալին Պողոսեան, Սարո Սերուժեան եւ Սերուժ Խանճի-հարեան:

□ Ծանօթացման հանդիպումը տեղի ունեցաւ «Ազգակ»-ի խմբա-

գրատան մէջ, ուրբաթ, 17 մայիս 2019-ին: «Ազգակ»-ի Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրի պատասխանատուն Է Արշօ Պալեան: Հանդիպումին ընթացքին ներկայացուեցաւ վարժողական ծրագիրը՝ տեսական-գործնական բաժիններով:

□ Առաջին դասախօսութիւնը տեղի ունեցաւ 24 մայիս «Ազգակ»-ի խմբագրատան մէջ, դասախօսներն էին Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան միջազգային կառոյցներու եւ մարդասիրական համագործակցութեան վարչութեան պետ Արմէն Սարգսեան, եւ նոյն նախարարութեան տեղեկատուութեան եւ հա-



սարակութեան հետ կապերու վարչութեան կցորդ Սամուէլ Սարեան:

Անոնք անդրադարձան Արցախի արտաքին գործոց նախարարութեան կառոյցին եւ գործունեութեան, որուն շրջագիծին մէջ կ'իյնան շատ մը աշխատանքներ, հիմնականին մէջ դիւանագիտական շրջանակներուն մէջ Արցախի կեցուածքներուն պաշտպանութիւնը, Արցախի Հանրապետութեան ճանաչողութեան ապահովումը, ինչպէս նաեւ Արցախի բանակցային հոլովոյթի շրջագիծին մէջ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն այցելութիւններն ու անոնց աշխատանքներու համադրումը:

□ 30 յունիսին անոնք ծանօթացան «Ազդակ»-ին եւ օրաթերթի աշխատանքի եղանակին: Արշօ Պալեան ներկայացուց «Ազդակ»-ի ընդհանուր բովանդակութիւնն ու էջերուն դիմագիծը, տարեկան տարբեր հրատարակութիւնները: Ապագայ լրագրողները այցելեցին խմբագրատուն, ծանօթացան «Ազդակ»-ի էջադրման եւ արհեստագիտական միջոցներուն, վկայեցին, թէ բջիջային հեռախօսի վրայ «Ազդակ»-ի **ԷՎԻՂ** ունեցողը ինչպէ՛ս արագ լրահոս կը ստանայ եւ կը հետեւի անոր:

Անոնք այցելեցին նաեւ «Ժիրայր Պուտազեան» ուսումնասիրական կեդրոն, ուր «Ազդակ»-ի արխիւը ամբողջութեամբ թուայնացուցած պատասխանատու Թալին Գալայճեան բացատրութիւններ տուաւ կատարուած աշխատանքին, ինչպէս նաեւ ուսումնասիրութիւններուն համար թուայնացած արխիւէն փնտռտուք կատարելու ձեւերուն մասին:

□ 7 յունիս 2019-ին ծրագիրին հետեւողները այցելեցին Համազգայինի «Վ. Սէթեան» հրատարակչատուն, ուր դիմաւորուեցան տնօրէն Յակոբ Հաւաթեանի կողմէ, որ բարի գալուստ ու բարի երթ մաղթեց լրագրութեան մարզով հետաքրքրուող երիտասարդներուն եւ անոնց մանրամասն կերպով ներկայացուց հրատարակչատան աշխատանքներու տարբեր փուլերը:

□ 22 յունիսին, «Ազդակ»-ի արուեստի էջի պատասխանատու, արուեստաբան դոկտ. Մովսէս Յերկէլեան ծրագիրի մասնակիցներուն ներկայացուց արուեստը՝ լրագրութեան եւ մամուլին ընդմէջէն:

Պատմական լայն անդրադարձէ եւ տարբեր երկիրներու մէջ լոյս տեսած հրատարակութիւնները ներկայացնելէ ետք, դոկտ. Յերկէլեան ընդգծեց, որ լրագրութիւնը ինքնին արուեստ մըն է: Դոկտ. Յերկէլեան հաստատեց, որ ազգը մշակոյթ է՝ ընդգծելով մշակոյթին կարեւորութիւնը հայ ազգի գոյատեւման եւ անոր հայկական դիմագիծի պահպանու-



մին մէջ: Ան թելադրեց անաչառ կերպով գործել լրագրութեան ասպարեզին մէջ՝ ընդգծելով գիտութեան եւ ուսման մնայուն հետեւորդները ըլլալու կարեւորութիւնը:

□ 28 յունիսին Արշօ Պալեան ներկայացուց լուրին կառոյցը եւ լուր մը գրելու յատկանիշները՝ զայն զատորոշելով տարբեր **ժանրերու** գրութիւններէ: Հանդիպումը եղաւ ներգործօն եւ աշխատանքային՝ նկատի ունենալով, որ ապագայ լրագրողները տեղւոյն վրայ կիրարկեցին իրենց տրուած բացատրութիւնը եւ յաջողեցան գրել լուր մը՝ իր խորագիրով եւ բոլոր մանրամասնութիւններով:

□ 5 յուլիսին Արշօ Պալեան ներկայացուց լուրին կառոյցը եւ լուր մը գրելու յատկանիշները: Հանդիպումը եղաւ ներգործօն եւ աշ-

խատանքային՝ լուր մը գրելու իմաստով:

❑ 7 սեպտեմբերին ծրագիրին հետեւողներուն աշխատանքային հանդիպումը կեդրոնացաւ լուրեր պատրաստելու հոլովոյթին վրայ, որուն ընթացքին ծրագիրին մասնակիցները ցուցաբերեցին լուրջ մօտեցում եւ կատարեցին ողջունելի աշխատանք մը:

❑ 13 սեպտեմբերին «Ազդակ»-ի պատասխանատու խմբագիրներէն Ժագ Յ. Յակոբեան ներկայացուց հայաստանեան լրատուադաշտը՝ իր բոլոր մանրամասնութիւններով եւ ծալքերով: Ան անդրադարձաւ անոր ազատութիւններուն, ենթակայական եւ առարկայական մօտեցումներուն, զանոնք զանազանելու ձեւերուն մասին խօսեցաւ, ինչպէս նաեւ պատկերացում մը տուաւ ընդհանրապէս Հայաստանի մամուլին մասին:

❑ 20 սեպտեմբերին Արշօ Պալեան ներկայացուց լիբանանեան լրատուադաշտը, անդրադարձաւ գրաւոր, բանաւոր, լսատեսողական եւ էլեկտրոնային հարթակներուն, իւրաքանչիւրին գործելաոճին եւ յատկութիւններուն: Ան նաեւ խօսեցաւ լիբանանեան իրականութեան մէջ ՀՅԴ պաշտօնաթերթին ուղեգիծին մասին:

❑ 27 սեպտեմբերին Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրին հետեւողները այցելեցին «Վանայ ձայն», ուր տնօրէն Վիգէն Աւագեանի կողմէ ընդունուեցան: Անոնք ծանօթացան ձայնասփիւռի կայանի աշխատանքներու ամբողջ ընթացքին: Վիգէն Աւագեան ըսաւ, որ հիմնականին մէջ կան հինգ բաժիններ՝ լուրեր, յայտագիրներ, երգ, **թեքնիք** եւ վարչական:

❑ 9 հոկտեմբերին մասնակիցները ծանօթացան հարցազրոյց ընելու օրէնքներուն՝ «Ազդակ»-ի խմբագիրներէն Սիլվի Աբելեանի փորձառութեան եւ բացատրութիւններուն ընդմէջէն: Ան անդրադարձաւ հարցազրոյցի հիմնական կետերուն, անհրաժեշտ պայմաններուն, պատրաստութեան ձեւերուն:

❑ 15 նոյեմբերին «Ազդակ»-ի պատասխա-

նատու խմբագիր Նորա Բարսեղեան Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրի մասնակիցներուն ներկայացուց թղթակցութիւն ընելու ծալքերը, գաղտնիքները, հիմնական սկզբունքները: Ան շեշտեց, որ աշխատանքին լրջութեամբ ու պատասխանատուութեամբ մօտենալը հիմնական է եւ երաշխիք՝ յաջողութեան:

❑ 29 նոյեմբերին Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրի մասնակիցները դարձան «Ազդակ»-ի խմբագիրներ, գրաւեցին անոնց տեղերը եւ փորձեցին կատարել անոնց աշխատանքը՝ լուր պատրաստելով ու խմբագրելով:

❑ 6 դեկտեմբերին «Ազդակ»-ի խմբագրական կազմի անդամ Նարէ Գալեմբերեան խօսեցաւ ճշգրիտ թարգմանութեան կարեւորութեան մասին: Ն. Գալեմբերեան ապագայ լրագրողները թելադրեց հեռու մնալ բառացի թարգմանութիւններէ՝ ընդգծելով, որ որեւէ լուր կամ յօդուած թարգմանելու պարագային պետք է կեդրոնանալ իմաստին վրայ:

❑ 13 դեկտեմբերին ապագայ լրագրողները հանդիպում մը ունեցան «Պատիկ-Մատիկ»-ի խմբագիր Սրբուկ Սարգիս-Ճեանեանի հետ, որ բացատրեց «Պատիկ-Մատիկ»-ին աշխատանքը՝ յատկապէս շեշտը դնելով անոր ծրագրաւորման ու պատրաստութեան հոլովոյթին վրայ:

«Հայ մամուլի տարի»-ն աւարտեցաւ, սակայն երբեք չ'աւարտիր մեր գործունեութիւնն ու առաքելութիւնը, հակառակ ամէն դժուարութիւններուն, գոյատեւելու եւ Նորանոր հարթակներ նուաճելու աշխատանքը՝ միշտ գիտակցելով, որ մեր առաքելութեան հաւատացողները պիտի կանգնին մեր կողքին, որպէսզի կարելի ըլլայ շարունակել եւ հայ գիրը, գրականութիւնը, մշակոյթն ու արժեքները պահպանել եւ փոխանցել նորահաս սերունդներուն:

Ն. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Դիւրին չեղաւ այս տարի: Դիւրին պիտի չըլլար վստահաբար՝ պատերազմական շրջանի մէջ ապրող, տնտեսական տագնապ ունեցող երկրի մը մէջ գոյատեւող, Սուրիոյ մէջ թրջական ներխուժումներ տեսող, Հայ դատի աշխատանք եւ հայապահպանութեան գործ կատարող, սուրիական տագնապի հետեւանքները տակաւին կրող եւ ընկերային-տնտեսական հարցերու ժխտականութիւնն ու անդրադարձը կրող, նաեւ լուծումներ հետապնդող ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին համար: Սակայն, այս բոլորին կողքին, Լիբանանի մէջ բեղուն եղաւ 2019-ի կուսակցական գործունէութիւնը իր բոլոր շերտերով եւ բոլոր մակարդակներու վրայ՝ քաղաքական, մշակութային, ազգային, ներազգային եւ շրջանային: Հայաստանը անմասն չմնաց մեր առօրեայէն: Լիբանանի մէջ սկսած ժողովրդային շարժումը, բողոքի ցոյցերը նոյնպէս ամենօրեայ ապրումներ եղան: Լիբանանի ապագան, անոր տագնապները, ընկերային ու տնտեսական հարցերը մնացին ամենօրեայ հոգեր:

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ունեցաւ զանազան քաղաքական հանդիպումներ՝ կատարելով այցելութիւններ եւ իր կեդրոնին մէջ ընդունելով քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներ, պետական ներկայացուցիչներ, դեսպաններ եւ դիւանագետներ:

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւնները զանազան առիթներով հանդիպումներ ունեցան Լիբանանի նախագահ զօր. Միշել Աունին հետ: Նոյն կապերը՝ այցելութիւններով պահպանուեցան երկրի վարչապետ Սաատ Հարիրիին եւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին, ու տարուան վերջին ամսուան ընթացքին նաեւ նորանշանակ վարչապետ Հասսան Տիապին հետ:

2019-ին շարունակեց գործել «Ազգային ինքնութեան ամրապնդման» ֆոնտը՝ յայտարարութիւններով եւ ամենօրեայ ծառայութիւններով հաշուետուութիւն ներկայացնելով լիբանանահայութեան:

Տնտեսական տագնապը իր կարգին մղեց, որ ՀՀԴ Կեդրոնական կոմիտէն եւ Հայկական երեսփոխանական պլոքը իրենց ուժերը լարեն եւ հասնին հայ համեստ ընտանիքներուն օժանդակութեան:

Այս բոլորին ամփոփումը եւ աւելին կու տանք ստորեւ.

ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՒ

2 սեպտեմբեր 2019-ին, Պաապտայի տնտեսական ժողովին ընթացքին Լիբանանի մէջ յայտարարուեցաւ տնտեսական արտակարգ իրավիճակ:

Նախագահութեամբ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի եւ ներկայութեամբ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի ու վարչապետ Սաատ Հարիրիի, նախագահական պալատին մէջ տեղի ունեցաւ տնտեսական-ելեւմտական խորհրդաժողով մը:

Խորհրդաժողովին ընթացքին նախագահ Աուն

յայտնեց, որ ներկայացուած այս քայլերուն նպատակն է ամբողջացնել 2019-ի պետական ամավարկին մէջ որդեգրուած քայլերը, որոնց նպատակն էր կրճատել պետական պիւտճէի նիւթական բացը: Ան նկատել տուաւ, որ այս հոլովոյթը բնականաբար պիտի դրսեւորուի 2020-ի պետական ամավարկին վաւերացումով՝ սահմանադրական ժամկետը յարգելով:

Նախագահ Աուն նշեց, որ իրենց տուած այս որոշումներուն մէջ նկատի պիտի ունենան համեստ դասակարգը:

Նախագահ Աուն կոչ ուղղեց քաղաքական տարակարծութիւնները շրջանցելու եւ տնտեսական տագնապէն դուրս գալու ճիգերը միասնականացնելու:

Չորս ժամ տեւած նիստէն ետք վարչապետ Հարիրի արտակարգ իրավիճակ յայտարարեց՝ նշե-

լով, որ կազմուած է նաեւ այս իրավիճակին յատուկ յանձնախումբ մը, որ պիտի շարունակէ իր աշխատանքները:

Ան յայտնեց, որ եթէ ոմանք կը մտածեն, թէ երկրին տնտեսական կացութիւնը առողջ վիճակի մէջ է, կը սխալին, որովհետեւ երկիրը տնտեսական դժուար կացութենէ մը կ'անցնի:

Խորհրդաժողովին մաս կազմող երկրին ղեկավարներուն կողքին, ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Յայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի խորհրդաժողովին ընթացքին արտասանեց հետեւեալ խօսքը.

«Արտօնեցէ՛ք ինձի, որ յոռետեսութեամբ մօտենամ այս հանդիպումին՝ նկատի ունենալով, որ ժողովուրդը այլեւս վստահութիւն չունի նման հանդիպումներու եւ ընդհանրապէս քաղաքական ղեկավարութեան նկատմամբ:

Եթէ իրականութիւնը պիտի խօսինք, պէտք է ըսենք, որ երկիրը կը գտնուի տնտեսական եւ ընկերային շատ լուրջ տագնապի դիմաց, եւ այսօր եկած էք մեզմէ պահանջելու անցեալին պատահած փտածութեան անհոգութեան եւ ոչ թափանցիկ գործունէութեան հետեւանքներուն պատասխանատուութիւնը կրել:

Մենք ո՛չ մաս կազմած ենք այս փտածութեան, ո՛չ ալ երկրի հարստութեանց կեղեքման:

Այսուհանդերձ հասած ենք տեղ մը, որ խիզախութեամբ եւ անկեղծութեամբ պէտք է հարցերը դրսևորենք:

Մենք կ'առաջարկենք հետեւեալը.

- 1) Ոչ մէկ յաւելեալ տուրք պարտադրել քաղաքացիներուն:
- 2) Որդեգրել մագլցողական տուրքերու դրութիւն:
- 3) Վերջ տալ մաքսային հարկերէ խուսափելու հոլովոյթին:
- 4) Խիստ միջոցառումներու դիմել ծովափի եւ գետափի հողատարածքները ձրիաբար գործածողներուն դէմ:
- 5) Վերջնական եւ թափանցիկ լուծում գտնել էլեկտրականութեան տագնապին:
- 6) Չարկ տալ արտադրողական ոլորտի մէջ ներդրումներու, յատկապէս՝ ճարտարարուեստի եւ զբօսաշրջութեան մարզերուն մէջ:
- 7) Լիբանանեան արտադրութիւններու հետ



մրցող ներածումներու վրայ յաւելեալ տուրքեր պարտադրել:

8) Բարձրացնել ծխախոտի գինը եւ զայն չպայմանաւորել մաքսանենգութեան դէմ պայքարելու անկարողութեամբ:

Վերջապէս, տնտեսական կայունութիւնը կապուած է քաղաքական կայունութեան հետ: Կոչ կ'ուղղենք, որ սովորական եւ անմիջական քաղաքական շահեր ապահովելու մտահոգութեամբ եղած քաղաքական փոխադարձ հռետորաբանութիւնը դադրի, եւ ճշդենք, որ առաջնահերթութիւնը այս պահուն Լիբանանի եւ լիբանանցի քաղաքացիին օրապահիկի հարցն է»:

Տնտեսական արտակարգ իրավիճակի յայտարարութենէն մէկուկէս ամիս ետք Լիբանանի մէջ բռնկեցաւ ժողովրդային շարժումը եւ բողոքի ցոյցեր կատարուեցան ամբողջ երկրին տարածքին:

ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը ցոյցին առաջին իսկ օրէն՝ 17 հոկտեմբերէն, կատարեց յայտարարութիւն մը, որուն մէջ ժողովուրդին ընդվզումը նկատեց արդարացի՝ հաստատելով, որ իրենք զգուշացուցած էին կառավարութիւնը եւ անկէ պահանջած դիմելու արտակարգ քայլերու:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԱՐԴԱՐԱՑԻ Է ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԸՆԴՎՉՈՒՄԸ. ՄԵՆՔ ՉԳՈՒՇԱՑՈՒՑԱԾ ԷԻՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՅԱՆՁԱԾ ԴԻՄԵԼՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԶԱՅԼԵՐՈՒՆ»

17 հոկտեմբերի գիշերը ՅՅԴ Լիբանանի Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի լիբանանեան մամուլին յղեց հետեւեալ յայտարարութիւնը.

«Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ արձանագրուած քաղաքացիական բողոքի դրսևորում-

ները կը գտնենք արդարացի: Մենք վաղուց է, որ կը զգուշացնէինք կառավարութիւնը՝ քաղաքացիներու պահանջներուն, կենցաղային խնդիրներու ձգձգման քաղաքականութենէն հրաժարելու եւ կոչ կ'ընէինք տազնապին անմիջական լուծումներ բերելու:

ՀՅ Դաշնակցութեան անունով թե՛ խորհրդարանական բեմէն, թե՛ պաշտօնական յայտարարութիւններու եւ հարցազրոյցներու ճամբով մատուցուող զգուշացուցած ենք կառավարութիւնը քաղաքացիներուն պահանջները անարձագանգ ձգելու պարագային քաղաքացիական անհնազանդութեան շարժումի սկսելէն. միաժամանակ մեր նախարարին ճամբով նաեւ կոչ ուղղած ենք քաղաքացիներուն չհանդուրժելու իրենց պատրաստուող ընկերային այս ծանր լուծը եւ փողոց դուրս գալով իրենց արդար ձայնը լսելի դարձնելու:

Խնդիրներու կուտակման եւ անլոյծ մնալուն երեւոյթներով բարդացող կացութիւնը տեղի տուաւ ժողովրդային բուռն, սակայն արդարացի ընդվզումի:

Կը մերժենք քաղաքացիներուն վրայ նոր տուրքերու բարդացումը եւ կառավարութեան կոչ կ'ընենք հրաժարելու նման ձգտումներէ՝ միշտ առաջնային սկստելով բանուոր եւ աշխատաւոր դասակարգի պայմաններն ու յարգելով քաղաքացիներուն ամբողջական իրաւունքները: Միաժամանակ՝ արտակարգ միջոցառումներու դիմելու ընկերային եւ տնտեսական իրավիճակը հարուածած խոր տազնապը յաղթահարելու համար եւ արմատական քայլերու դիմելու՝ փտածութեան եւ պետական պիտոճէի մսխումի երեւոյթները վերացնելու նպատակով»:

**ՀՅԴ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՎԱՐՉԱՊԵՏ
ՀԱՐԻՐԻԻ ՓՈՒԱՆՑԵՑ ԱՐՏԱԿԱՐԳ ԶԱՅԼԵՐՈՒ
ԴԻՄԵԼՈՒ ԱՆՀՐԱՍԺԵՏՈՒԹԻՒՆԸ**

Այս շրջագիծին մէջ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ ընկերակցութեամբ նախարար Ալետիս Կիտանեանին, շաբաթ, 19 հոկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպում մը ունեցաւ վարչապետ Սաստ Յարիրիի հետ, անոր Կեդրոնական Պէյրութի բնակարանին մէջ:



ՀՅԴ պատուիրակութիւնը կարեւորութեամբ շեշտեց ընդառաջել ժողովուրդի արդար պահանջներուն եւ յառաջիկայ տարուան պետական ամսվարկը մշակել այնպիսի ձեւով, որ ոչ մէկ տուրքի յաւելում կատարուի, փտածութեան արմատները քանդուին, մսխումի առաջը առնուի, իւրացուած գումարները պետութեան վերադարձուին եւ ընկերային մարզին վերաբերող յստակ լուծումներ ապահովուին:

Կառավարութեան հրաժարականին մասին ՀՅԴ պատուիրակութիւնը յայտնեց, որ ներկայ փուլին կառավարութեան հրաժարականը աւելիով կը բարդացնէ քաղաքական ճգնաժամը եւ երկիրը կը դնէ անորոշ, աննախատեսելի եւ անհակակշռելի վտանգներու դիմաց:

Ներկայ կացութենէն դուրս գալու համար թե՛ ՀՅԴ պատուիրակութիւնը եւ թե՛ վարչապետ Յարիրի անհրաժեշտ սկստեցին արտակարգ քայլերու դիմել:

**ԵՐԵՍՓՈՒԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՌՒՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ
ՏԱԳՆԱՊՆ ՈՒ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ**

Տնտեսական տազնապին լոյսին տակ, Երեսփոխան Բագրատունի այցելեց հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի:

Պապատայի մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկրին իրադարձութիւններն ու արձանագրուող զարգացումները:

Յ. Բագրատունի անհրաժեշտ սկստեց, որ ամէն ճիգ ի գործ դրուի ժողովուրդը խնայելու ապահովական լուրջ խախտումէ:

Տնտեսական գետնի վրայ, Երեսփոխան Բագրատունի ժողովուրդին դառն իրավիճակը ներկայացուց հանրապետութեան նախագահին՝ աւելցրնելով, որ անյապաղ անհրաժեշտ միջոցառումներուն պէտք է դիմել հաւանական շահագործումներն ու տազնապները կանխարգիլելու համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Յ. Բագրատունի այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի: Հանդիպման ընթաց-



քին կողմերը քննարկեցին երկրին ընդհանուր կացությունը:

Տեսակցութենէն ետք երեսփոխան Բագրատունի լրագրողներուն ըսաւ. «ՀՅ Դաշնակցութիւնը աւելի քան 10 օրէ ի վեր կը հետեւի եւ կը բաժնեկցի ժողովուրդին տագնապը, որ բոլոր զրկուածներուն, երիտասարդներուն, ուսանողներուն եւ ամբողջ Լիբանանի ժողովուրդին ընդվզումն է: Անտարակոյս կացութիւնը տագնապալի է: 2 սեպտեմբեր 2019-ին Պաապտայի մէջ գումարուած տնտեսական համաժողովին, զգուշացուցած էինք բոլորը, թէ Լիբանան կը գտնուի անդունդի սեմին եւ պիտի իյնանք անդունդ, եթէ անյապաղ միջոցառումներու չդիմուի»:

Բագրատունի աւելցուց. «ՀՅԴ-ն իբրեւ հիմնական մէկ մասնիկը այս երկրին, որ նոյնպէս կը տառապի 30-էն 40 տարուան կուտակումներէն, կոչ կ'ուղղէ բոլորին ապաւինելու սահմանադրական կառոյցներուն, սկսած խորհրդարանէն, ուր կան օրէնքներ, որոնք ցարդ գործադրութեան չեն դրուած...»:

Բագրատունի կոչ ուղղեց ժողովուրդին, բոլոր պատասխանատուներուն, քաղաքական ուժերու ղեկավարներուն եւ քաղաքացիական շարժումին դասեր քաղելու անցեալէն, որովհետեւ երկրին ճակատագիրը վտանգի տակ է:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ՝
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ**

Երեսփոխան Յակոբ Բագրատունի 2 դեկտեմբերին հանդիպում մը ունեցաւ պաշտպանութեան նախարար Էլիաս Պու Սաապի հետ՝ նախարարութեան Եարգէի կեդրոնին մէջ:

Երկրի ընդհանուր կացութեան եւ նոր կառավարութեան կազմութեան շուրջ ընդհանուր խորհրդակցութիւններու ծիրին մէջ, Բագրատունի գնահատեց զինեալ ուժերու դերակատարութիւնն ու պահուածքը յատկապէս քաղաքացիներու ազատութիւններու պաշտպանութեան եւ ազատ տեղափոխութեան իրաւունքի պահպանման տեսակէտէն:

Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու նաեւ քաղաքացիներուն կրած դժուարութիւնները յատկապէս տնտեսական այս պայմաններուն մէջ՝ դրամատնային մարզի կիրարկած սեղմումներուն եւ անոնց հետեւանքներուն շուրջ մտահոգութեան արձանագրութեամբ:

Պետական անձնաւորութիւններուն կողքին, Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչը հանդիպումներ ունեցաւ նաեւ լիբանանահայութեան, հայ հոգեւոր պետներուն եւ հայութեան բոլոր շերտերուն հետ:

28 հոկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը լիբանանահայութեան տարբեր շերտերու ներկայացուցիչներուն հետ, որոնք իրազեկ դարձան լիբանանեան վերջին զարգացումներուն՝ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիին կողմէ տրուած մանրամասն բացատրութիւններուն եւ իրավիճակին վերաբերող բոլոր ծալքերուն կատարուած անդրադարձին ընդմէջէն:

Իր խօսքին սկիզբը Յ. Բագրատունի յայտնեց, որ Լիբանանի մէջ իբրեւ քաղաքական ուժ եւ մեր ժողովուրդին կողմէ որոշ չափով վստահութիւն վայելող կուսակցութիւն, պարտաւոր զգացած են բաժնեկցիլ երկրին մէջ գոյութիւն ունեցող մտահոգութիւնները, կուսակցութեան դիրքերը եւ կեցածքները յստակացնել, որովհետեւ, երեսփոխան Բագրատունի դիտել տուաւ, թէ որքան որ դիւրին է կեցուածք որդեգրել, նոյնքան դժուար է այդ կեցուածքը ներկայացնել հանրութեան, բայց մանաւանդ՝ այդ կեցուածքին արձագանգել, դժգոհութիւն եւ առաջարկներ լսել:

Բագրատունիին հաստատեց, որ ժողովրդային բոլոր պահանջները արդարացի են, եւ թէեւ շարժումը տեսանելի ղեկավարող չկայ, բայց վերջին հաշուով բնական է, որ կան ղեկավարներ:

Ան ըսաւ. «Մենք խորհրդակցութիւններ կատարեցինք եւ կը կատարենք նախագահին, խորհրդարանի նախագահին, վարչապետին, քաղաքական տարբեր կողմերու, ապահովական-զինուորական շրջանակներու հետ. այսօր տակաւին լուծում չկայ: Պահանջուածը նախարարական խորհուրդի եւ կառավարութեան հրաժարականն է, բայց ատիկա բաւարար պահանջ չէ»:

Յակոբ Բագրատունիին խօսքի աւարտին ըսաւ. «Օրերը դժուար են, բայց, միասնաբար աշխատելով, պիտի փորձենք մեր համայնքը՝ լիբանանահայութիւնը, խաղաղ նաւահանգիստ հասցնել»:

**ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆ
ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒՆ**





15 նոյեմբերին, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեն ներկայացնող պատուիրակության մը, որուն մաս կազմեցին Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարարի պաշտօնակատար Ալետիս Կիտանեան եւ Կեդրոնական կոմիտէի անդամներ Յակոբ Հաւաթեան, Մելիք Գարագաւորեան եւ Րաֆֆի Աշգարեան, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա. վեհափառին, Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս պատրիարքին եւ Միջին Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան նախագահ՝ վեր. Մկրտիչ Գարակեօզեանին:

Հանդիպումներու ընթացքին խորհրդակցութիւնները կեդրոնացան Լիբանանի մէջ ծայր առած ժողովրդային ընդվզումի շարժումին, երկրին դիմագրաւած ընկերային-տնտեսական ծանր դժուարութիւններուն եւ ընդհանրապէս քաղաքական ու ապահովական կացութեանց վրայ:

Կեդրոնական կոմիտեն հոգեւոր պետերուն ներկայացուց ստեղծուած կացութեան գծով իր արժեւորումներն ու կեցուածքները, ինչպէս նաեւ նոյն այս կացութենէն դուրս գալու իր պատկերացումները:

Նաեւ՝ ՀՀԴ պատուիրակութիւնը Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս պատրիարքին ցաւակցութիւն յայտնեց Գամիշլիի հայ կաթողիկէ Ս. Յովսէփ եկեղեցւոյ ժողովրդապետ Յովսէփ քիւյ. Պետոյեանի՝ ահաբեկիչներու կողմէ անարգ սպանութեան առիթով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Ուրբաթ, 6 դեկտեմբերի երեկոյեան «Շաղգոյեան» կեդրոնին մէջ, Հայկական երեսփոխանական պլոքին հրաւերով հանդիպում մը տեղի ունեցաւ հայրենակցական միութիւններու վարչութիւններուն հետ:

Առաջին առիթով երեսփոխան Յակոբ Բագրատունի զեկուցում մը ներկայացուց քաղաքական եւ գաղութային կացութեանց մասին՝ անդրադարձաւ այն մարտահրաւերներուն, որոնք ստեղծուած են այս փուլին: Ան անդրադարձաւ նաեւ մօտիկ ապագային կատարուելիք աշխատանքներուն: Շեշտը դրուեցաւ այս փուլին հաւաքական ճիգով ու համադրուած աշխատանքով ծրագիրներու մշակման ու աշխատանքային մարզերու ընդարձակման վրայ:

Ժողովականները շեշտեցին լիբանանահայ գաղութի կենսունակութեան ու աշխուժութեան պահպանման անհրաժեշտութիւնը եւ միացեալ ճիգով այս դժուար փուլը շրջանցելու վճռակամութիւնը:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՎԿ-Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆԸ

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի «Շաղգոյեան» կեդրոնի երեսփոխանական գրասենեակին մէջ ընդունեց Ռամկավար ազատական կուսակցութեան Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ Սեւակ Յակոբեանը:

Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու վերջին ժամանակաշրջանին Լիբանանի մէջ կատարուող անցուդարձերը՝ շեշտելով ժողովրդային պահանջներու արդարացիութիւնը եւ արագօրէն ծանրացող խնդիրներուն լուծում գտնելու անհրաժեշտութիւնը:

Արծարծուեցան նաեւ Լիբանանի հայութեան տագնապները ու ներկայ փուլին մեր ժողովուրդին միասնութիւնը պահպանելու հրամայականը:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԵՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՅԵԼԵՑ
ԵՐԵՍՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ**



Ժողովրդային շարժումն պատուիրակություն մը՝ գլխավորությամբ տոքթ. Ռուլան Եունեսի, ուրբաթ, 6 դեկտեմբերին այցելեց «Շաղգոյեան» կեդրոն եւ հանդիպում ունեցաւ ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունիի հետ: Հանդիպման ընթացքին պատուիրակութեան անդամները իրենց պահանջները ներկայացուցին՝ երկրին ներկայ տագնապէն դուրս գալու գծով:

Երեսփոխան Բագրատունի ողջունեց ժողովրդային ցասումին մասնակիցները եւ յայտնեց, որ «առաջին իսկ օրէն ոչ միայն զօրակցեցանք շարժումի հիմնական նպատակները եղող ընկերային արդարութեան կենցաղային պահանջներուն եւ փտածութեան դէմ պայքարի իրաւունքներուն, ինչպէս նաեւ իւրացուած հարստութեանց վերադարձի իրաւունքին, այլ նաեւ մենք նախապէս բազմիցս նման պահանջներ ներկայացուցած էինք»:

Երեսփոխան Բագրատունի նախընտրեց պատուիրակութեան անդամները կոչել «Յեղափոխական երիտասարդներու» փոխարէն «Հայրենիքի գաւակներ», որովհետեւ հայրենիքը թէ՛ յեղափոխութեան եւ թէ՛ քաղաքական դէմքերէն աւելի գերակայ է:

Ապա ան պատուիրակութեան ներկայացուցած յուշագիրին 5 կէտերէն երեքին անվերապահօրէն աջակցութիւն յայտնեց՝ աւելցնելով, որ պէտք է յստականայ «անկախ» եւ «մասնագետ» հասկացողութիւնը կառավարութեան կազմի պարագային, ինչպէս նաեւ կանխահաս ընտրութիւններու կապակցութեամբ անհրաժեշտ գտաւ զանոնք կայացնել ընտրական նոր, արդար եւ արդիական օրէնքով:

**ԼԻԲԱՆԱՆԱԳՅՈՒԹԻՒՆԸ 143.023.000 Լ. Ո.
ՆՈՒԻՐԱԲԵՐԵՑ ԼԻԲԱՆԱՆԱԳՅՈՒԹԵԱՆ**

18 դեկտեմբերին առաւօտեան ժամերէն մինչեւ երեկոյ լիբանանահայութիւնը խուռներամ մասնակցութիւն բերաւ «Միասնաբար ուրախացնենք հայ ընտանիք մը» թեմայով ռատիոթոնին՝ ընդառաջելով Հայկական Երեսփոխանական պլոքի կոչին:

Հերթական անգամ լիբանանահայութիւնը իր հոգեւոր, ազգային, միութենական, կրթական, մշակութային, ուսանողական եւ երիտասարդական շրջանակներով հաւաքաբար զօրակցեցաւ լիբանանահայ համայնքի կարիքներուն հասնելու հրամայականի կատարման նախաձեռնութեան:

Ժողովրդային տարբեր խաւերու ինքնաբուխ մասնակցութիւնը ներհամայնքային առումով ամենէն տպաւորիչ ձեւով յաջողուց իրարօգնութեան հաւաքական զօրակցութիւնը:

Հայկական Երեսփոխանական պլոքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր նուիրատուներուն անխտիր, ռատիոթոնին լծուած կամաւոր փառանգներուն, որոնք անգամ մը եւս ընդառաջեցին հայ ընտանիքներ ուրախացնելու ազգային-մարդկային կոչին՝ վերահամոզելով բոլորս, որ սփիւռքի կեդրոնական հանգամանք վայելող լիբանանահայութիւնը ամբարած է տարբեր տեսակի տագնապներ յաղթահարելու կամքը, ունակութիւնը եւ վճռակամութիւնը:

Նշենք, որ ռատիոթոնին ընթացքին հանգանակուած նախնական գումարը 137.573.000 Լ. ո. էր եւ երկու օր ետք աւելցած էր վերածուելով 143.023.000 Լ. ո.-ի:

Գիտակցելով որոշ թիւով ընտանիքներու կենցաղային դժուարութեանց, Երեսփոխանական գրասենեակը յաջողեցաւ դժուարութեան մէջ եղող ցարդ 1260 ընտանիքներու բաշխել հիմնական կարելորութիւն ունեցող ուսեստեղէնի ծրարներ՝ գէթ մասամբ օգնելու անոնց, երկրին դիմագրւած տնտեսական դժուարութեան այս օրերուն:



**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ՊԼՈՋԸ
ԱՌԱՋԱԴՐԵՑ ՀԱՍՍԱՆ ՏԻԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ**



Վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցություններու շրջագիծին մէջ, Հայկական երեսփոխանական պլոքը 19 դեկտեմբերին հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուսի հետ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ կը զօրակցի Հասսան Տիապի թեկնածութեան:

Հանդիպումէն ետք ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց, որ Հայկական երեսփոխանական պլոքը վարչապետի պաշտօնին համար առաջադրած է Հասսան Տիապի թեկնածութիւնը:

«Այս ամպիոնը այսօր վարչապետի նշանակման համար է միայն եւ ոչ թէ քաղաքական կեցածքներ արտայայտելու կամ կառավարութեան տեսակին թէ չափին մասին խօսելու: Այս դիտանկիւնէն մեկնելով եւ հաւատալով ամենէն արագ միջոցին կառավարութիւն մը կազմելու կարելութեան՝ Հասսան Տիապի անունը կ'առաջադրենք վարչապետի պաշտօնին համար», ըսաւ ան:

Պատասխանելով լրագրողներու հարցումներուն՝ Յ. Բագրատունի յայտնեց, որ ինք ծանօթ է եւ նախապէս բազում հանդիպումներ ունեցած է Հասսան Տիապի հետ: «Համոզուած եմ, որ ատակ եւ կարողութիւն ունեցող անհատներու պէտք է գործելու առիթ ընծայել, յատկապէս նկատի ունենալով, որ Տիապ ակադեմական է, մասնագետ եւ կասկածներէ հեռու անձնաւորութիւն մը», ըսաւ ան:

Նշենք, որ Հայկական երեսփոխանական պլոքի անդամ Ալեքսանտր Մաթոսեան խորհրդակցություններուն ներկայ չգտնուեցաւ երկրէն դուրս գտնուելուն պատճառով, սակայն ան գրաւոր կերպով հանրապետութեան նախագահին փոխանցեց պլոքի որոշումին իր զօրակցութիւնը:

**ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ ՈՉ ՊԱՐՏԱԴՐԻ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԿԱՌՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՉՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Կառավարութեան կազմութեան նպատակով վարչապետ Հասսան Տիապի հետ խորհրդարա-

նական ոչ պարտադիր խորհրդակցություններու շրջագիծին մէջ, Հայկական երեսփոխանական պլոքը իր կարգին հանդիպում մը ունեցաւ վարչապետին հետ:

Հանդիպումէն ետք ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց, որ վարչապետէն խնդրած են արագօրէն կազմել կառավարութիւնը, որովհետեւ Լիբանանն ու լիբանանցիները սպասելու ժամանակ չունին:

«Անհրաժեշտ նկատեցինք երկրին եւ ժողովուրդին դիմագրաւած ընկերային, տնտեսական, դրամատնային եւ ելեմտական տագնապին լուծումներ գտնել, ինչպէս նաեւ պահանջեցինք կազմել կառավարութիւն մը, որ կ'ամրապնդէ լիբանանեան ազգային միասնականութիւնը, կը գործադրէ արմատական բարեկարգումներ, կը պայ-



քարի փտածութեան դէմ, կը վերադարձնէ իւրացած գումարները եւ շահերու վրայ հիմնուած երկրին տնտեսութիւնը կը վերածէ արտադրողական տնտեսութեան», ըսաւ ան:

Յ. Բագրատունի աւելցուց, որ վարչապետէն պահանջած են պետութեան նկատմամբ քաղաքացիին, յատկապէս երիտասարդութեան վստահութիւնը վերականգնել:

«Պլոքը կ'ուզէ մաս կազմել յաջորդ կառավարութեան: Ունինք մասնագետ եւ քաղաքագետ նախարարներ, որոնք որեւէ ատեն խնդրայարոյց անհատներ չեն եղած», եզրափակեց Յ. Բագրատունի:

**ՀՀԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ**

Տարեսկիզբին գումարուեցաւ ՀՀԴ Լիբանանի կեդրոնական կոմիտէութեան 71-րդ Շրջանային ժողովը, որուն աւարտին հրապարակուեցաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«ՀՀԴ Լիբանանի կեդրոնական կոմիտէութեան 71-րդ Շրջանային ժողովը, գումարուած՝ 15-19 փետրուար 2019-ին, հանգամանօրէն քննարկեց

Կեդրոնական կոմիտեի երկամեայ գործունեության բոլոր մարզերը: Կազմակերպական, քաղաքական, տեղեկատվական, ուսանողական, երիտասարդական, պատանեկան, գաղութային կեանքի, ուղեկից միութիւններու յատկացուած օրակարգերը քննարկելով, Շրջանային ժողովը արձանագրեց՝

Ա.- Յարպիփոխ աշխարհի յատուկ այսօրւան մթնոլորտն ու համակարգը բարենպաստ պայմաններ չեն ստեղծեր աւանդական հասկացողութեամբ եւ հաւաքական կեանքով յատկանշուած ազգային արժեքային համակարգ դաւանող կուսակցութիւններուն համար: Հակառակ տիրող եւ զարգացող պայմաններուն, Դաշնակցութեան Լիբանանի ընտանիքը կը շարունակէ ամուր կառուցած մնալ գաղափարախօսական հենքի վրայ ամրակայուած կուսակցական, կարգապահական գործելաճիւղ՝ միշտ ներկուսակցական ժողովրդավար պայմաններու լիարժեք յարգումով պահելով կուռ եւ միասնական կառոյցի եռութիւնը:

Բ.- Երկամեակի քաղաքական կեանքը յատկապէս յատկանշուեցաւ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններով: Առաջին անգամ կիրարկուող ընտրական օրէնքի անկանխատեսելիութեան բոլոր գործօնները յաղթահարելով, Դաշնակցութիւնը քաղաքական բազմակողմ յարաբերութիւններով յաջողեցաւ կարելոր քայլ արձանագրել դէպի Հայկական երեսփոխանական պլոքի վերականգնման յայտարարուած առաջադրանքը: Ներկայ պայմաններն ու անոնցմէ բխած երեւոյթները կը պարտաւորեցնեն մէկ կողմէ վերատեսութեան ենթարկել հայկական քուէի ուժի գործօնի վերածման համար նոր ռազմավարութեան մշակումը, միւս կողմէ քաղաքական գետնի վրայ հետեւողական աշխատանքը շարունակելու համայնքներու իրողական ներկայացուցչութեամբ համապատկերով խորհրդարան ձեւաւորելու:

Գ.- Ուշադրութեան կիզակետ կը շարունակեն մնալ Դաշնակցութեան Լիբանանի կազմակերպութեան ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միաւորները կուսակցական եւ ազգային կեանքի համար մասնագիտական մարդուժ ապահովելու եւ առաւելագոյնս զանոնք մեր հանրային կեանքին մէջ դերակատար դարձնելու ուղղութեամբ: Գաղափարախօսական եռութեամբ նորարար միջոցներու որդեգրումի հրամայականը բոլոր ժամանակներէն աւելի զգալի է այսօր եւ որուն կենսագործումը կ'ակնկալուի մեր երիտասարդութենէն:

Դ.- Համասփիւռքեան եւ համահայկական տարողութիւն եւ հասանելիութիւն ունենալով, ՀՀԴ Լիբանանի լրատուամիջոցները այսօրուան տեղե-

կատուական համակարգի համահունչ նորարարութիւններ որդեգրելու եւ անոնց համապատասխան առանձին բաժանմունքով աշխատելու անհրաժեշտութեան առջեւ են: Տեղեկատուական առումով Լիբանանի մէջ դաշնակցական բեմը պիտի յառաջացնէ բազմակարծութեան հարթակ՝ միշտ առաջնահերթ նկատելով կառուցողական քննարկումներով քաղաքական միտքի զարգացման նպատակը:

Ե.- Ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միաւորներուն առընթեր ՀՀԴ Լիբանանի կոմիտեիները կը մշակեն ծրագիրներ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի մէջ տարբեր բնոյթի աշխատանքներ իրականացնելու: Այս նախադրեալները կը նախանշեն, որ ՀՀԴ Լիբանանի կազմակերպութեան գործադաշտին մէջ հետզհետէ նկատելի տեղ կը գրաւէ հայրենիքը:

Այս ելակետերէն մեկնած, ՀՀԴ Լիբանանի կազմակերպական շրջանը կը հաստատէ, որ՝

- Լիբանանեան քաղաքական բեմին վրայ պիտի շարունակէ լիբանանահայ համայնքի քաղաքական գործօնի ազդեցիկութեամբ պաշտպանել համայնքի բոլոր իրաւունքները:

- Աշխատիլ, որ լիբանանեան պետական կառոյցներուն մէջ հայ համայնքի բաժինները զբաղեցնեն համայնքի ներկայացուցչական դէմքերը:

- Բոլոր միջոցները հայթայթել հանրային կեանքի կառոյցներու ղեկավարման երիտասարդացման, մասնագիտացումին եւ աշխատանքի արդիւնաւորման համար:

- Գիտակցելով լիբանանահայութեան անշըրջանցելի գործօն ըլլալու իրողութեան՝ զարգացնել անոր համասփիւռքեան եւ համահայկական դերակատարութիւնը ինչպէս մարդուժի պատրաստութեան, այնպէս նաեւ պետականութեան հզօրացման աշխատանքներուն:

ՀՀԴ Լիբանանի 71-րդ Շրջանային ժողովը օրակարգի կէտերու քննարկման աւարտին ընտրեց 11 հոգիէ բաղկացած ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի կազմը: Նորընտիր Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչն է Յակոբ Բագրատունի»:

Այս մասին Շրջանային ժողովի որոշումներուն ուղիի թեմայով երեքշաբթի, 5 մարտ 2019-ին, «Վանայ ձայն» ձայնասփիւռի կայանին մէջ տեղի ունեցաւ «Ազդակ»-ի, «Վանայ ձայն»-ի եւ «Օ. Թի. Վի.»-ի հայերէն լուրերու բաժնի միացեալ հարցազրոյցը՝ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի հետ:

Հարցազրոյցին առանցքները հանդիսացան ՀՀԴ Լիբանանի 71-րդ Շրջանային ժողովն ու

անոր ընթացքին լուսարձակի տակ առնուած հիմնական հարցերը, անկէ բխած յայտարարութեան հիմնադրոյթները: Լուսարձակի տակ առնուեցան կուսակցութեան դիմաց գոյութիւն ունեցող մարտահրաւերները, որոնց դիմակայման համար անհրաժեշտ է ստեղծել նոր գործելադաշտեր եւ գործելաոճեր՝ միշտ նկատի ունենալով լիբանանահայութեան գոյատեւման եւ բնականոն կեանքի ապահովման համար հիմնական առաջնահերթութիւնները: Անդրադարձ կատարուեցաւ լիբանանահայութեան կեանքի զանազան բնագաւառներուն՝ քաղաքական, տնտեսական, կրթական, ընկերային, եւ այս բոլորին մէջ ՀՀ-ի ներդրումին եւ դերակատարութեան:

ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը հաստատեց, որ կուսակցութեան հիմնական նպատակն է պաշտպանել լիբանանահայութեան շահերը, գործել այնպէս, որ գաղութը աւելի բարձր կեանք ունենայ, որովհետեւ անոր հիմնական ուժը իր ժողովուրդն է, եւ Դաշնակցութիւնը միշտ գործած է ու պիտի շարունակէ գործել յօգուտ լիբանանահայութեան գոյերթին, Հայաստանի ու Արցախի հզօրացման:

ՀՀ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկուշաբթի, 11 մարտ 2019-ին, Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանն ու Բիւրոյի անդամ Բենիամին Պչաքճեանը այցելեցին Արամ Ա. վեհափառ հայրապետին:

Շուրջ երեք ժամ տեւած հանդիպումի ընթացքին լայնօրէն քննարկուեցան Հայաստան-սփիւռք յարաբերութեանց եւ ընդհանրապէս սփիւռքի առնչուած շարք մը հարցեր: Արժարձուեցան նաեւ Ղարաբաղի ու Հայ դատին հետ աղերս ունեցող հարցեր ու ծրագիրներ:

ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան երեքշաբթի, 12 մարտի կէսօրին պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պուրճ Համուտի քաղաքապետարան, ուր հանդիպում ունեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեանին եւ քաղաքապետական խորհուրդի անդամներուն հետ:

Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց քաղաքապետութիւնը, ծանօթացուց քաղաքապետական խորհուրդի անդամները, շրջանին մէջ կատարուած աշխատանքներու ընդհանուր պատկերացումը տուաւ:

Յակոբ Տէր Խաչատուրեան հաստատեց, որ Պուրճ Համուտը միջևաբերդ է, ունի յատուկ նշանակութիւն հայ ժողովուրդի դիմագիծի պահպանման իմաստով:

Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդին անունով ճորճ Գրիգորեան խօսեցաւ Պուրճ Համուտի մասին՝ դիտել տալով, որ սփիւռքի, Հայաստանի ու Արցախի համար այս շրջանը տուած է ազատամարտիկներ, ուսուցիչներ, մշակութային գործիչներ, խմբագիրներ, գործիչներ, գործարարներ, նուիրատուներ եւ ղեկավարներ:

Նոյն գիշերը Կեդրոնական կոմիտէի հրաւերով Մարաշի հայրենակցական միութեան «Գերմանիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում-ընդունելութիւն՝ ՀՀ Բիւրոյի նորընտիր ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ:

Հրաւիրուած էին տարբեր յարանուանութիւններու, միութիւններու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, քաղաքական, կրթական ու մշակութային մարզերու պատասխանատուներ եւ Դաշնակցութեան զանազան ծրագիրներու աջակցող բարեկամներ:

ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին խօսքը արտասանեց Յակոբ Հաւաթեան, որ անդրադարձաւ ՀՀ-ի 33-րդ Ընդհանուր ժողովին, որուն ընթացքին քննարկուեցան հայութեան եւ Հայաստանի դիմագրաւած դժուարութիւնները, արժեւորում կատարուեցաւ անցնող քառամեայ ուղիին եւ ճշդուեցան յառաջիկայի ռազմավարութիւնն ու մարտավարական հիմնական սկզբունքները, իսկ աւարտին ընտրուեցան ՀՀ Բիւրոյի նոր կազմն ու անոր ներկայացուցիչը՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը:



եանը: Ան լուսարձակի տակ առաւ այս ժողովը Արցախի մէջ գումարելուն կարելորութիւնը՝ հաստատելով, որ անիկա ցուցանիշ է ՀՀ-ին համար արցախեան հարցին եւ Արցախի Հանրապետութեան ունեցած մեծ ու առանցքային կարելորութեան:

Ապա խօսք առաւ Յակոբ Տէր Խաչատուրեան, որ ուրախութիւն յայտնեց Լիբանան գտնուելուն եւ Դաշնակցութեան նեցուկ կանգնած անձերուն հետ հանդիպելու առիթին համար՝ հաստատելով, որ Դաշնակցութեան համար Լիբանանը կը մնայ սփիւռքի բաբախուն սիրտը, ճառագայթող համայնքը, որ որքան ալ պատերազմներու ու արտագաղթի պատճառով նօսրացած թիւ ներկայացնէ, իբրեւ կորիզ, իբրեւ եութիւն ունի հիմնական դերակատարութիւն ո՛չ միայն սփիւռքի կեանքին մէջ, այլ նաեւ համահայկական տարողութեամբ՝ Հայաստանի, Արցախի, Ջաւախքի կեանքին մէջ եւս:

ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը այս ծիրին մէջ անդրադարձաւ Հայաստանի ներկայ վիճակին գծով Դաշնակցութեան ունեցած մտահոգութիւններուն, որոնք կը բխին վերջին ամիսներուն կուսակցութեան ապրած փորձառութենէն՝ հաստատելով, որ այս մտահոգութիւնները արդէն ներկայացուած են բոլոր օղակներուն: «Մենք պետք է ազգովին աշխատինք, որպէսզի այդ մտահոգութիւնները չվերածուին անդառնալի խոչընդոտներու, որոնք կրնան արգելակել Հայաստանի զարգացումը», ըսաւ ան: Մտահոգութիւններէն առաջինը կը վերաբերի Արցախին, որուն իշխանութիւնները եւս մտահոգ են միջազգային մակարդակի վրայ զարգացող այն դեպքերով, որոնք յստակօրէն յատուկ ճնշումի պիտի ենթարկեն Հայաստանը եւ բանակցային հոլովոյթը:

Ան ըսաւ, որ ՀՀ-ի երկրորդ մտահոգութիւնը կը վերաբերի ազգային գաղափարախօսութեան եւ ազգային արժէքներուն: Դաշնակցութեան ունեցած երրորդ մտահոգութիւնը, ըստ ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչին, այն է, որ Հայաստանի ընտրութիւններուն ընթացքին ի յայտ եկաւ բաժանարար գիծեր ստեղծելու, ամէն ինչ սեւ ու սպիտակ տեսնելու մօտեցումը՝ բաժնելու ժողովուրդը ներսի ու դուրսի, անհատներու, մօտեցումներու:

Երեքշաբթի, 30 ապրիլ 2019-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ ՀՀ Լիբանանի երիտասարդական միութեան եւ Ջաւախեան ուսանողական միութեան անդամները հանդիպում մը ունեցան ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչին հետ:

Յ. Տէր Խաչատուրեան ներկայացուց եկող շրջանի ՀՀ Բիւրոյի որդեգրած ուղեգիծը: Ան անդրադարձաւ Հայաստանի ներքաղաքական վիճակին եւ հայաստանեան օրակարգին վրայ



գտնուող հարցերուն նկատմամբ կուսակցութեան պաշտօնական կեցուածքին:

Հանդիպումի ընթացքին Յակոբ Տէր Խաչատուրեան համառօտ ձեւով նաեւ ներկայացուց սփիւռքի տարբեր գաղութներու այսօրուան իրավիճակը՝ կրթական, տնտեսական, քաղաքական եւ ընկերային իմաստով: Ան լուսարձակի տակ առաւ Հայ դատի աշխատանքները եւ անոնց արձանագրած մակընթացութիւնները: ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը նաեւ կեդրոնացաւ արցախեան տագնապին վրայ, ներկայացուց կուսակցութեան կեցուածքը եւ այսօր տեղի ունեցող բանակցութիւններու կարգավիճակը:

Հանդիպումի ավարտին ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Երեքշաբթի, 30 ապրիլ 2019-ի առաւօտեան ժամը 10:00-ին ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը, որուն կ'ուղեկցէր ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բազրատունի, այցելեց Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց Գրիգոր Պետրոս Ի. կաթողիկոս պատրիարքին:

Շուրջ մէկ ժամ տեւած մտերիմ զրոյցը 2022-փեց սփիւռքահայութիւնը յուզող խնդիրներ, հայապահպանութեան մտահոգութիւններ՝ մասնաւորաբար հայ եկեղեցւոյ եւ հայ դպրոցին վերապահուած առաքելութեան կարելորութիւնը սփիւռքահայ սերունդներու քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութեան մէջ:

Հինգշաբթի, 2 մայիսին ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը, որուն կ'ընկերակցէին ՀՀ Լիբանանի



Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Կեդրոնական կոմիտեի անդամ Յակոբ Յաւաթեան, այցելեցին Մերձաւոր Արեւելքի Յայ ւստարանական եկեղեցիներու միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակեօզեանին: Ծանօթացման բնոյթ ունեցող հանդիպման ընթացքին քննարկուեցան համահայկական խնդիրները, կարելորութեամբ շեշտուեցան հայրենիք-սփիւռք յարաբերութիւնը եւ միջարանական համագործակցութիւնը: Վեր. Գարակեօզեան ներկայացուց հայ ւստարանական համայնքի ծառայութիւնները Յայաստանի եւ սփիւռքի մէջ:

Նշենք, որ լիբանանահայ գաղութի հաստատութիւններու եւ միութեանական շրջանակներու հետ կայացած հանդիպումներու շրջագիծին մէջ, ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչը ճանաչողական հանդիպում ունեցաւ լիբանանահայ հասարակական եւ գործարարական մարզերու մէջ յայտնի կարգ մը ծանօթ անձնաւորութիւններու հետ:

Հանդիպումը նախաձեռնած էր նախկին նախարար Վրեժ Սապունճեան, որ իր տան մէջ հիւրընկալեց հանդիպումին մասնակիցները:

Ընթրիք-հանդիպումի ընթացքին կայացան միտքի փոխանակումներ, եղան խորհրդակցութիւններ, ներկայացուեցան պատկերացումներ եւ առաջարկներ համահայկական օրակարգերու՝ Յայ դատի դիմագրաւած խնդիրներուն, Յայաստան-սփիւռք համագործակցութեան եւ հայկական գործօսի միացեալ նախաձեռնութիւններով ուժեղացման առաջադրանքին մասին:

Ներկաները շեշտեցին կայացած հանդիպումին շինիչ եւ կառուցողական բնոյթը՝ շեշտելով ներկայ պայմաններուն մէջ համագային հարցերը միասնաբար քննարկելու համար նման խորհրդակցութիւններու շարունակութեան հրամայականը:

Յակոբ Տեր Խաչատուրեան 10 դեկտեմբերին այցելեց Այնճար եւ ՀՀԴ «Սարգիս Չէյթեան» ակումբին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ ՀՀԴ «Կարմիր լեռ» կոմիտեութեան ընկերներուն հետ: Հանդիպումին ներկայ էին ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան



Յակոբ Բագրատունի եւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի անդամներ Ալպեր Պալապանեան եւ Արմէն Թաշճեան: Յակոբ Տեր Խաչատուրեան զեկուցեց համահայկական աշխատանքներու, Յայ դատի յանձնախումբերու գործունէութեան եւ Յայաստանի ներքին քաղաքական իրադարձութիւններուն մասին: ՀՀԴ «Կարմիր լեռ» կոմիտեի ընկերները իրենց կարգին ներկաներուն զեկուցեցին Այնճարի իրավիճակին, դիմագրաւած դժուարութիւններուն եւ ընդհանրապէս Լիբանանի մէջ տիրող ներկայ կացութեան մասին:

Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Չահլէի «Արամ» կոմիտեութեան ընկերները:

ՀՀԴ ԲԻՐՈՅԻ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՆԱԽԱԳԱՐ ԱՈՒՆԻ



ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան եւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի 2 մայիսին այցելեցին հանրապետութեան նախագահ գօր. Միշել Աունի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան ընդհանուր հարցեր, որոնց շրջագիծին մէջ Յակոբ Տեր Խաչատուրեան շնորհակալութիւն յայտնեց նախագահ Աունին՝ լիբանանահայութեան եւ սփիւռքահայութեան նկատմամբ անոր ցուցաբերած հետաքրքրութեան եւ գուրգուրանքին համար՝ շեշտելով, որ հայութեան նկատմամբ նախագահ Աունի կեցուածքներն ու զգացումները յարգանքի եւ գնահատանքի արժանի են:

ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչը նախագահ Աունի տրամադրութեան տակ դրաւ լիբանանեան ծագում ունեցող բոլոր սփիւռքահայերուն կարողութիւնները՝ ի խնդիր Լիբանանի շահերուն իրականացման:

ՀՀԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԵՒ ՆԱԽԱԳԱՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԻՆԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ

Լիբանան կատարած այցելութեան շրջագիծին



Մեջ, ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան եւ Գերագույն մարմինի նախագահ Սիմոն Սիմոնեան, 30 սեպտեմբերին ընկերակցութեամբ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Մելիք Գարագաւորեանի, առանձին հանդիպում մը ունեցան զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի հետ: Քննարկուեցան զբօսաշրջութեան մարզին մէջ Լիբանան-Հայաստան փոխադարձ գործակցութիւնը ամրապնդելու կարելիութիւնները:

Ապա ընկերակցութեամբ նախարար Աւետիս Կիտանեանի եւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Մելիք Գարագաւորեանի, անոնք այցելեցին տեղեկատուութեան նախարար Ժամալ Ժարրահի, մշակոյթի նախարար Սոհամետ Տաուտի, տեղահանուածներու հարցերու պետական նախարար Սալէհ Ղարիպի եւ արտաքին առեւտուրի պետական նախարար Հասան Մըրատի:

Հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան վերոնշեալ մարզերուն վերաբերեալ Լիբանան-Հայաստան գործակցութեան հեռանկարները՝ լիբանանեան փորձառութիւնը Հայաստանի համապատասխան բնագաւառներուն հետ կիսելու եւ աւելի արդիւնաւետ աշխատանքի յանգելու նպատակով:

ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՉԱՆԳՈՒԾԱՅԻՆ
ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ «ՄԻ՛ՇՏ ՄԻԱՍԻՆ»
ԿԱՐԳԱՆՕՍՈՒԿ ԻՐԱՅԱՏՈՒԿ
ՏՕՆԱՆՄԱՐՈՒԹԻՒՆ**

Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տարբեր մթնոլորտ կը տիրէր 29 սեպտեմբերին, յետմիջօրէի ժամը 5:00-էն մինչեւ կես գիշեր, որովհետեւ անկկա համախմբման վայր դարձաւ լիբանանահայութեան համար՝ առանց տարիքի ու սեռի խտրութեան: Արդարեւ, «Մի՛շտ միասին» խորագիրը կրող ժողովրդային փառատօնին, որ կազմակերպուած էր ՀՀ Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական կոմիտէի Հանրային կապերու մարմինին կողմէ, մասնակցեցան մեծաթիւ հայորդիներ, որոնց իւրաքանչիւրին հետաքրքրութեան եւ ճաշակին համաձայն խաղեր, երաժշտութիւն եւ ուտեստեղէններ տրամադրուած էին:

Սպաւորիչ, ուրախութիւն եւ յուզում առթող էր պատկերը՝ հոն էին մանուկն ու պատանին, մայրերն ու հայրերը, երիտասարդներն ու միջին տարիքի ներկայացուցիչները, հոն էին ծերունիները, գաւազանին յենած քալողները, բոլորը եկած էին միասնաբար, Դաշնակցութեան հետ վայելելու, հաճելի պահեր անցընելու, սրտի խօսքեր լսելու, տարբեր ոճի երգերով ապրելու, զուարճանալու, լիցքաւորուելու եւ բարձր տրամադրութեամբ ու գոհունակ սրտերով տուն վերադառնալու:

Դաշտին կողմերը տեղադրուած էին կրպակներ ուտելիքի, քաղցրեղէնի եւ խմիչքի, որոնց գիւները առաւելագոյն չափով մատչելի էին բոլորին:



Մանկապատանեկան «Ծիածան» խումբը ներկայացուց հետաքրքրական յայտագիր:

Երեկոյեան գործադրուեցաւ գեղարուեստական եւ երաժշտական յատուկ ու ճոխ յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը բերին եւ յաջորդաբար ազգային-հայրենասիրական երգերով մթնոլորտը խանդավառեցին երգիչներ Վիգէն Տիշչեքնեան, Հրաչ Կայծակեան, Չոյա Բարաղամեան եւ Յակոբ Մկրտիչեան:

Ելոյթ ունեցաւ նաեւ «Միհրան» նուագախումբը եւ մեկնաբանեց փունջ մը հայրենասիրական երգեր:

Ուշագրաւ եւ յոյժ հպարտալի երեւոյթ էր այն շուրջպարը, զոր կատարեցին համախմբուած հայորդիները: Անոնք, շրջանակ կազմելով՝ առաջնորդութեամբ պարուսոյցներ Կարէն եւ Ժաքլին Մակինեաններու, պար բռնեցին դաշտի ամբողջ տարածքին եւ հաստատեցին, որ հայ ժողովուրդի գաւազանները ուժեղ են, երբ միասին են, վեհ ու անդրդուելի են, երբ միասնակամ են:

Ձեռնարկի պաշտօնական բացումը կատարեցաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեամբ: Փառատօնին յայտագիրը վարեց Հուրի Փափագեան-Էմմիեան:



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի Հանրային կապերու մարմինն անունով խօսք առաւ Յակոբ Հաւաթեան: Ան խօսքը ուղղելով բազմահազար ժողովուրդին ըսաւ. «Դուք ձեր գործնական մասնակցութեամբ եւ ինքնակամ համոզումով տուած էք փաստը «Միշտ միասին» ըլլալու ըմբռնողութեան, եւ իրերայաշորդ սերունդներ այս բացարձակ իրականութիւնը ու խոր ճշմարտութիւնը քանդակած են հայ կեանքի երկնակամարին վրայ: Այսօր մենք բոլորս՝ ամբողջ լիբանանահայութիւնը, երեկոյեան ժամը 5:00-էն ժամադրուեցաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին մէջ մասնակցելու տօնախմբութեան: Մենք այսօր կ'եզրափակենք տօնախմբութիւնը՝ նշելով Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման տարեդարձը»: Ան խօսքի աւարտին շնորհակալական խօսք ուղղեց բոլոր այն անձնակազմերուն, որոնք անցնող օրերուն, տիւ եւ գիշեր աշխատեցան, որպէսզի ձեռնարկը յաջողութեամբ պսակուի: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ գեղարուեստական յայտագիրի մասնակիցներուն, ինչպէս նաեւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան, որ իր ամբողջ կարողականութիւնը ի սպաս դրաւ՝ յիշատակելի ձեռնարկ մը ունենալու համար:

Ապա խօսք առաւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան, որ նախ իր ուրախութիւնը եւ յուզումը յայտնեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնը Լիբանանի մայրաքաղաք Պեյրութի մէջ նշելուն համար: Ան ըսաւ, թէ պատիւ է իրեն համար ներկայ գտնուիլ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան նուիրած ձեռնարկին, ապա հաստատեց, որ լիբանան-



Photo by Markar

նահայութիւնը անցնող տարիներուն ընթացքին հետեւողական ինքնուրոյն մասնակցութիւն ունեցած է Հայաստանի Հանրապետութեան զարգացման գործին մէջ թէ՛ տնտեսական, թէ՛ ընկերային, թէ՛ քաղաքական, թէ՛ մշակութային եւ թէ՛ միւս բնագաւառներուն մէջ: Լիբանանի հայ համայնքը իր մէկ դարեայ պատմութեան ընթացքին դիմակայած է շարք մը դժուարութիւններ, բայց այդ դժուարութիւնները յաղթահարած է պատուով ու արժանապատուութեամբ եւ պետականութեան բացակայութեան պայմաններուն մէջ միշտ վառ պահած է հայոց պետականութեան եւ պահանջատիրութեան ջահը: Լիբանանի հայ համայնքը նաեւ սրբօրէն պահած ու պահպանած է հայ արժեքները, հայ եկեղեցին, հայոց լեզուն եւ մշակոյթը:

Ապա խօսքը ուղղելով ժողովուրդին Սաղաթէլեան ըսաւ. «Դուք այսօր ձեր հայրենիքին մէջ չէք ապրիր, ցեղասպան թուրքը ձեզ զրկած է ձեր հայրենիքէն, բայց չէ կրցած ձեր մէջ սպաննել հայրենիքը, հայրենիքը ձեր մէջ է, ձեր ծիներուն մէջ է, ձեր արեան եւ եւրթեան մէջ է: Ծիշդ այստեղ բոլորին աչքերուն մէջ կը տեսնեմ մայր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ Արցախը: Ես Հայաստանէն եկած եմ ոչ թէ պատգամներ ըսելու, այլ իմ երախտագիտութիւնս յայտնելու լիբանանահայ հերոսական ժողովուրդին: Լիբանանահայ այն հերոս զաւակներուն, որոնք արցախեան ազատագրական պայքարի ճիշդ առաջին օրերուն նետուեցան սահման՝ մեր հայրենիքը պաշտպանելու համար: Անգամ մը եւս յարգենք, յիշատակենք եւ խոնարհինք Վիգէններու, Սիերներու, եւ միւս բոլոր հայորդիներուն առջեւ, որոնք պաշտպանեցին մեր հայրենիքը:

«Մեր երկրին մէջ կան սպառնացող վտանգներ, կան մեր ժողովուրդը պառակտելու եւ մասնատելու փորձեր: Միաժամանակ կը յայտարարեմ, որ մենք՝ իբրեւ Դաշնակցութիւն, այդ պառակտումը թոյլ պիտի չտանք, մենք պիտի ըլլանք միասնակամ, չկան հին եւ նոր Հայաստաններ, չկայ դարաբաղցի, հայաստանցի, իջեւանցի, գիւմրեցի, լիբանանցի, կայ մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք, մէկ հիմնական նպատակ՝ ազատ, անկախ, միացեալ Հայաստան», շեշտեց Ի. Սաղաթէլեան:

Ապա իր խօսքը արտասանեց ՀՅԴ Լիբանանի



Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, որ շեշտեց, թե միշտ միասին, միշտ կողք կողքի ըլլալը՝ յանուն հայ ժողովուրդին, եղած է ու կը շարունակէ մնալ լիբանանահայութեան գոյութեան իմաստը, պայքարի նպատակը, տասնամեակներու պատմութիւնը, որ փաստօրէն կը պահէ իր հնչեղութիւնն ու խորքայնութիւնը՝ սփիւռքի արիւնատար երակին՝ Պուրճ Յամուտի դաշտը լեցուցած եւ «Մի՛շտ միասին» կարգախօսին ներքեւ համախմբուած ժողովուրդին պարզած տպաւորիչ պատկերով:

Ան դիտել տուաւ, որ պաշտօնական ու քաղաքական անձնաւորութիւններ, հոգեւորականներ, տարբեր կառոյցներու ներկայացուցիչներ, հարազատ ժողովուրդի իւրաքանչիւր անդամ համախմբուած է բաց աչքերով ու ականջներով՝ տեսնելու իրականութիւնը եւ ականջալուր ըլլալու անոր, մինչ ուրիշներ կ'ուզեն մնալ համր ու կոյր՝ մերժելով տեսնել ու լսել ճշմարտութիւնը: Անկէ մեկնած՝ Յակոբ Բագրատունի դիտել տուաւ, որ միասին եղողը, ժողովուրդի միասնականութեան հաւատացողը իրաւունք ունի ժողովուրդի իրաւունքներուն մասին խօսելու, ժողովուրդի պայքարին մէջ դերակատար ըլլալու, քննելու, քննադատելու: «Եւ դուք, սիրելիներ՛, բազմահազար ժողովուրդ, եկած էք հեռաւոր Այնճարէն ու Թրիփոլիէն, Ժպէյլէն եւ Ճիւնիէն, Մեթնի բարձունքներէն, ծովեզերեայ շրջաններէն, Պուրճ Յամուտէն ու Պէյրութէն: Զո՛ւս ենք բոլորս, սիրելիներ՛, միասնութեան լաւագոյն պատկերը տալու, հո՛ւս է Զայաստանի դեսպանութեան ներկայացուցչութիւնը, հո՛ւս են ԶՅԴ Զայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչները, հո՛ւս են հոգեւոր հայրերը, եւ հո՛ւս էք դուք՝ մի՛շտ միասին: Վերյիշեցում է, թէ պարզապէս վերապրում այն հոգիին ու ոգիին, որ տասնամեակներ ամբողջ դրսեւորուած է մեր մէջ, ձեր մէջ, ձեր ու մեր մէջ, այն հոգիին ու ոգիին, որ մենք միշտ միասին եղած ենք», ըսաւ երեսփոխան Բագրատունի:

«Մենք միասին եղած ենք մեր ցաւերուն եւ ուրախութիւններուն մէջ, մեր տխուր ու զուարթ վայրկեաններուն, մեր պարտութիւններուն ու յաղթանակներուն ընթացքին, եկեղեցւոյ մէջ, դաշտին վրայ, մարզական, մշակութային թէ բարեսիրական մեր միութիւններուն մէջ: Մենք միասին եղած ենք, երբ Զայաստանն ու Արցախը արեան կարիք ունեցած են, երբ անոնք վտանգի մէջ եղած են, երբ Լիբանանը վտանգի դէմ յանդիման կանգնած է: Մենք միասնաբար կռուած ենք, մինչ ուրիշներ իրարու դէմ կռուած են, մենք միասնաբար պայքարած ենք, մինչ ուրիշներ իրարու դէմ պայքարած են, մենք միասնաբար պաշտպանած ենք մեր ինքնութիւնը, մինչ ուրիշներ գողութեամբ, քանդումով, ատերով զբաղած են», ըսաւ ան:

Բագրատունի՝ ատելցուց, որ միշտ ալ փորձ կը կատարուի լիբանանահայութիւնը տարբեր ուղղութիւններու մէջ տեսնել, սակայն իսկական ու միակ ուղղութիւնը հայ ժողովուրդի, հայութեան ու Զայաստանի գերագոյն նպատակն է, մեր միակ ուղղութիւնը մեր ժողովուրդի ու հայրենիքի գոյատեւումն է, իսկ հայրենիքի գոյատեւման համար կարեւոր ու առանցքային է լիբանանահայութեան գոյատեւումը:

Յակոբ Բագրատունի իր խօսքը շարունակեց հաստատելով, որ ժողովուրդն ու Դաշնակցութիւնը իրարմով ապրելու պայմանաւորուածութիւն ունին, իրարու հետ ըլլալու երդում տուած են: Ան, որ իր կեանքին գնով մեր ժողովուրդին ծառայելու եւ, ի պահանջել հարկին, նահատակուելու երդում տուած է, դաշնակցական մարդը, իր ժողովուրդը առանձին չի կրնար ձգել, որովհետեւ դաշնակցականը այն մարդն է, որ ամէն օր եւ ամէն վայրկեան կը տառապի, կը ցաւի իր ժողովուրդի հարցերով ու կը պայքարի, կը ճգնի, որպէսզի այդ հարցերը լուծուին:

Ապա ժողովուրդին խանդավառութիւնը իր գագաթնակէտին հասաւ սիրուած երգիչ Գառնիկ Սարգիսեանին կողմէ մեկնաբանուած ազգային ու յեղափոխական երգերով, որոնց միացան նաեւ ներկաները:

Մինչ ան կը մեկնաբանէր Արարատին նուիրուած երգը՝ «Աննման իմ Մասիսին», իսկոյն հայրտօրէն եւ խրոխտ քայլերով բեմ բարձրացան լիբանանահայ այն երիտասարդները, որոնք օգոստոս 21-ին եռագոյնը պարզեցին Արարատի գագաթին՝ իրենց երազը իրականացնելով:

**ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՐՔ՝
ԼԻԲԱՆԱՆՑԻ ՆԱԶԱՏԱԿՆԵՐՈՒՆ**

Նախաձեռնութեամբ Զայ յեղափոխական դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական կոմիտէին եւ Զայկական երեսփոխանական պլոքին, Պէյրու-



թի Նահատակաց հրապարակի յուշարձանին դիմաց կիրակի, 5 մայիս 2019-ի երեկոյեան ժամը 7:30-ին տեղի ունեցաւ հաւաք եւ մոմավառութիւն՝ ի յիշատակ օսմանեան իշխանութեան ժամանակաշրջանին նոյն վայրին մէջ կախաղան բարձրացուած լիբանանցի Նահատակներուն:

Յուշարձանին առջեւ ծաղկեպսակներ գետեղւեցան ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին եւ Հայկական երեսփոխանական պլոքին անունով:

ՀԱԸՄ-ի շեփորահումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու կատարումէն ետք խօսք առաւ Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան, որ նշեց, թէ 6 մայիսը Լիբանանի համար կսկծագին օր է, որովհետեւ Լիբանան այդ օրը կորսնցուց հերոսներ, որոնք իր պատմութիւնը գրեցին ու սիրեցին զայն:

Երեսփոխան Յակոբ Թերզեան հարց տուաւ, թէ ինչպէ՞ս կարելի է չեղեալ նկատել այս տօնը՝ շեշտելով, որ անհկա միասնականութեան ազգային ուխտ է այն ժողովուրդներուն, որոնք օսմանեան բռնութիւններու ու անարդարութիւններու ենթարկուեցան: Ան շարունակեց հարց տալ, թէ կարելի՞ է մոռնալ հոսած արիւնը՝ անմեղներու, հաւաքական սպանուները, 1916 թուականին Լիբանանի մէջ կատարուած ահաւորութիւնները, ինչպէ՞ս կրնանք լռեցնել մեր խիղճերը եւ մոռնալ մեր Նահատակները, որոնք ինկան հազարներով, պայքարեցան անարդարութեան դէմ եւ իրենց Նահատակութեամբ դուռը բացին ազատութեան նոր արշալոյսի դիմաց: Իր խօսքը եզրափակելով՝ Թերզեան կոչ ուղղեց համախմբուելու լիբանանեան շահերուն շուրջ, որոնք ամէն բանէ վեր են:

Աւարտին ներկաները իրենց մոմերը գետեղեցին Նահատակաց յուշարձանին առջեւ՝ լիբանանցի Նահատակներուն հոգիներուն համար:

**ՀՀԴ 128-ԱՄԵԱԿԻ ԺՈՂՈՎՈՐԴՅՈՒՆ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ**

Շաբաթ, 12 յունուար 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Այնճարի հայութիւնը նշեց ՀՀ Դաշնակ-

ցութեան 128-ամեակը՝ ժողովրդային տօնակատարութեամբ մը, որ տեղի ունեցաւ Այնճարի «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ՝ ՀՀԴ «Կարմիր Լեռ» կոմիտէի քարոզչական յանձնախումբին:

Տօնակատարութիւնը բացուեցաւ Լիբանանի, Հայաստանի եւ ՀՀ Դաշնակցութեան քայլերգներու ունկնդրութեամբ: Բացման խօսքով հանդէս եկաւ ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղէն Սեւատայ Անտոնեան:

Օրուան պատգամախօս, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Վիգէն Աւագեան իր



խօսքին սկիզբը նշեց, որ աշխարհի չորս կողմը սովորութիւն է, որ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը իր ժողովուրդին ներկայաւայ տարեկան զեկուցումով, հաշուետուութեամբ: Գործէն ծնած՝ գործի կուսակցութիւնը իր հիմնադրութեան տարեդարձին կը խոնարհի այն ժողովուրդին առջեւ, որ կը հաւատայ իր գործին ու կը մնայ իր կողքին՝ բաժնեկիցը դառնալով իր դժուարութիւններուն եւ իրագործումներուն:

Դաշնակցութեան 128-ամեայ երթին մասին խօսելով՝ Աւագեան նշեց, որ իր ժողովուրդին հետ մեծ ցնցումներէ անցաւ Դաշնակցութիւնը: «Դաշնակցութիւնը կրնակոխ հետեւեցաւ իր ժողովուրդի քայլերուն եւ դաշնակցական բջիջ ու միաւոր ստեղծեց հո՛ն, ուր հայութիւնը համախումբ եւ ազգային կազմակերպ կեանքի հրամայականը զգաց», ըսաւ ան:

Շարունակելով, Աւագեան հաստատեց, որ բնական պայմաններու մէջ չգործեց Դաշնակցութիւնը: Այսօր ալ ան կը գործէ միջազգային ու շրջանային անբնական պայմաններու մէջ:

Վիգէն Աւագեանի պատգամէն ետք, բեմ հրաւիրուեցաւ հայրենի արուեստագետ Արսէն Գրիգորեան-Մըրրօ, որ ազգային-յեղափոխական երգերու շարքով մը պանծացուց ՀՀ Դաշնակցութեան անուանի ֆետայիներուն յիշատակը:

Ժողովրդային եւ ազգային-յեղափոխական երգերու նուագներով ելոյթ ունեցաւ Համազգայինի «Տաւիղ» նուագախումբը՝ ղեկավարութեամբ Մկրտիչ Միքայէլեանի:

**ՇՈՒՇԻ ԱԶՍԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄ**

Կիրակի, 12 մայիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ռաուտայի դաշտին վրայ ոգեկոչուեցաւ Շուշիի ազատագրութեան 27-ամեակը՝ կազմակերպութեամբ ՀՅԴ «Շուշի» կոմիտէին: Բացման խօսքը արտասանեց ՀՅԴ-ԼԵՄ-ի «Բեկոր» մասնաճիւղէն Ժիրայր Զէլէշեան:

«Շուշի» կոմիտէին խօսքը ուղղեց Վիգէն Գունանեան, որ 27 տարի առաջ մղուած պայքարը նկատեց անհաւասար ուժերու միջեւ կռիւ, սակայն յատկանշուած այն հանգամանքով, որ հայ քաջարի երիտասարդները կը մարտնչէին արդարութեան եւ իրաւունքներու տիրացման համար:

Խօսքէն ետք Համազգայինի տիւրախարները հանդէս եկան նուագով եւ մարմնաւորեցին կենդանի պատկեր մը:

Օրուան բանախօսն էր ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Մելիք Գարագաւորեան, որ Շուշիի ազատագրումը բնորոշեց իբրեւ հայոց պատմութեան նորագոյն էջերը իմաստաւորող, ազգային արժանապատուութիւնը վերականգնող, Արցախի ազգային ազատագրական պայքարի խորհրդանիշը հանդիսացող դէպք, որով հայութիւնը առաջին քայլը առաւ պատմական արդարութեան վերականգնման ուղիին վրայ, որովհետեւ մշակութային, կրթական եւ ռազմավարական կարեւորութիւն ունենալու հանգամանքէն անկախ, Շուշին ազատագրեց մեր հոգիները, վերադարձուց ազգային արժանապատուութիւնը, վերակենդանացուց պայքարի ոգին:

Ս. Գարագաւորեան դիտել տուաւ, որ Շուշիի ազատագրութիւնը նշելով պէտք է նաեւ ազգովին՝ Հայաստան, Արցախ, սփիւռք, եկեղեցի, քաղաքական կուսակցութիւններ եւ Հայաստանի իշխանութիւններ, յատկապէս՝ ՀՅԴ-ի մարտունակ երիտասարդները, վերանորոգեն իրենց ուխտը, վերահաստատեն վճռականութիւնը, որ ոչ մէկ բանակցային տարբերակի ճնշումներու տակ պիտի զիջին հերոսներու արեամբ ազատագրուած տարածքներէն:

Ապա Հրակ Մամիկոնեան ապրումով ասմունքեց Շահանդուխտի «Արցախի հերոսներ» բանաստեղծութիւնը: Ազգային երգերով հանդէս եկաւ ազատամարտիկ Սամուէլ Երանեան:

Այս առիթով իր սրտի խօսքը արտասանեց նաեւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ազատամարտիկներու հարցերու յանձնախումբի պատասխանատու գնդապետ Արտաշէս Մխիթարեան, որ խօսեցաւ հայութեան կատարելիք աշխատանքներուն մասին, որպէսզի կարելի ըլլայ պահպանել ձեռք բերուած յաղթանակն ու արձանագրուած նուաճումները:

Այս առիթով ան կոչ ուղղեց աւագ սերունդին ու երիտասարդութեան՝ յառաջ երթալու կողք-կողքի, օգտուելու երեցներուն խորհուրդէն ու փորձառութենէն՝ հաստատելով, որ համայն հայութեան փրկութիւնը իր միասնականութեան մէջ է, աւելի հզօր, աւելի ուժեղ ըլլալուն մէջ է:

Այնուհետեւ երգիչ Վիգէն Տիչչեքենեան մեկնաբանեց ազգային-հայրենասիրական երգեր: Ձեռնարկը եզրափակուեցաւ Լիբանանի թեմի քարոզիչ Անանիա Ծ. վրդ. Գունանեանի պահպանիչով:

**«ՇՈՒՇԻ» ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏԱՆ
ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄԾ ՄՐԱՅԻ
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՅՈՒՄ**



31 յունուար 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Ռաուտայի ՀՅԴ «Շուշի» ակումբին մէջ տեղի ունեցաւ «Շուշի» ժողովրդային տան վերանորոգումած սրահի բացումը, որ կազմակերպուած էր ՀՅԴ «Շուշի» կոմիտէին կողմէ:

Ձեռնարկին ներկայ էին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Լիբանանի զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, երեսփոխան Յակոբ Թերզեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան եւ Պքաքաքայի քաղաքապետ Էլի Մախլուֆ:

ՀՅԴ «Շուշի» կոմիտէին անունով հայերէնով բացման խօսքը արտասանեց Կարօ Պասմանեան, իսկ արաբերէնով բարի գալուստի խօսք արտասանեց Վարդան Աճեմեան:

Խօսք առաւ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, որ հաստատեց, թէ Դաշնակցութեան ակումբները կ'ընկալուին իբրեւ ժողովրդային տուններ, որովհետեւ այնտեղ կը համախմբուին ժողովրդային խաւերը եւ այնտեղ կը կազմակերպուին ժողովուրդին ծառայելու կոչուած աշխատանքները: Ան ըսաւ, թէ երբ ամիսներ առաջ այս ակումբին մէջ համախմբուած էին, յոյս յայտնած էր, որ վերանորոգումը տեղի կ'ունենայ եւ բոլորովին նոր դիմագիծ կը ստանայ Ռաուտայի ժողովրդային տունը: Այդ առաջադրանքը կատար-

լած է շնորհիւ ԶՅԴ «Շուշի» կոմիտէի նախաձեռնութեան, բարերարներու անվերապահ աջակցութեան եւ ժողովուրդի մասնակցութեան:

Երեսփոխան Յակոբ Բագրատունի այս առիթով անդրադարձաւ նաեւ Լիբանանի կառավարութեան կազմութեան՝ ընդգծելով, որ ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ճիգ չխնայեց կազմելիք կառավարութեան մէջ երկու հայ նախարարի նշանակումով լիբանանահայ համայնքի իրաւունքները պահած ըլլալու համար: Ան դիտել տուաւ նաեւ, թէ առաջին անգամն է, որ կառավարութեան մէջ կը նշանակուին երկու հայ նախարարներ, որոնք կ'ունենան նախարարական պաշտօն: Յակոբ Բագրատունի պարզաբանեց, որ վերջին օրերուն երեւցած էր նաեւ միտում զբօսաշրջութեան նախարարութիւնը Դաշնակցութենէն այլ քաղաքական ուժի վերապահելու: Բարձր գնահատելով զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի նախարարական գործունեութիւնը՝ Բագրատունի յայտնեց, որ ճիգերը՝ զբօսաշրջութեան նախարարութիւնը Դաշնակցութեան պահելու, արդիւնաւորուած են: Ապա ան շնորհաւորեց ԶՅԴ «Շուշի» կոմիտէութիւնը, Ռաուտայի ժողովուրդը, նուիրատուներն ու բոլոր անոնք, որոնք սատարեցին ակումբի վերանորոգման աշխատանքներուն:

Երեսփոխան Յակոբ Բագրատունիի խօսքէն ետք, «Շուշի» ժողովրդային տան սրահին մէջ զե-



տեղուեցան Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընթացքին Ռաուտայի «Շուշի» կոմիտէի շրջանին մէջ նահատակուած Կարօ Գոլանճեանի եւ Ժոզեֆ Պիլեզիկճեանի լուսանկարները:

**ԶՅԴ «ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵՏ» ԱԿՈՒՄԲԻ
ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՍՐԱՅԻ
ԲԱՅՄԱՆ ՅԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Չորեքշաբթի, 10 ապրիլ 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, տեղի ունեցաւ ԶՅԴ «Գարեգին



ՆՇՂԵՏ» ակումբի նորակառոյց սրահի բացման հանդիսութիւնը:

Լիբանանի, Յայաստանի եւ «Մշակ բանուոր» քայլերգներու ունկնդրութենէն ետք ԶՅԴ «Գարեգին ՆՇՂԵՏ» կոմիտէին անունով հայերէնով խօսք առաւ տոքթ. Յակոբ Մելեքեան: Ան յայտնեց, որ յարկաբաժինի նորոգութեան համար օժանդակած են բարերարներ եւ բարեկամներ: Ան ըսաւ, թէ սրահ կառուցելու նպատակը շրջանին մէջ երկրորդ սրահ մը ունենալն է՝ օգտակար հանդիսանալու համար շրջանի ժողովուրդին: Իր խօսքի աւարտին ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օգտակար հանդիսացան ծրագիրի յաջողութեան:

Ապա ԶՅԴ «Գարեգին ՆՇՂԵՏ» կոմիտէին անունով արարեղենով խօսք առաւ Ալեքս Պուարի: Ան իր կարգին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնեցան ծրագիրի յաջողութեան:

ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի իր խօսքին սկիզբը ըսաւ. «Անցեալ տարի այս օրերուն էր, երբ տակաւին երեսփոխանական ընտրութիւններէն քանի մը շաբաթ առաջ, այս ակումբին մէջ խոստացայ, որ յառաջիկայ տարի Չալքայի ժողովրդային տունը, ուր կը գործեն «Գարեգին ՆՇՂԵՏ» կոմիտէութիւնը, ԼՕԽ-ը, պատանեկան եւ երիտասարդական միութիւնները, պիտի օժտուի նոր յարկաբաժինով»: Բագրատունի ուրախութիւն յայտնեց, որ խոստումը յարգուեցաւ, եւ շրջանի ընկերները կարճ ժամանակամիջոցի մը մէջ յաջողեցան պատրաստել ակումբը, հակառակ անոր որ նիւթական դժուարութիւններու հանդիպեցան: «Այս ժողովրդային տունը, ակումբը ձեր տունն է: Այս շրջանի մէջ բնակող բոլոր հայերուն տունն է: Երբ բոլոր հայերուն տունը կ'ըսեմ, յատուկէն կ'ըսեմ, որ այս տունը պետք է ըլլայ, այնպէս ինչպէս մեր բոլոր ակումբները, իւրաքանչիւր հայու տուն անկախ իր գաղափարական ուղղութենէն՝ դաշնակցական ըլլայ ան, թէ հնչակեան, ռամկավար, կամ բարեգործական, անկախ իր յանունանութենէն՝ առաքելական, կաթողիկէ կամ

աւետարանական, որովհետեւ մեր հիմնական նպատակը այս ակումբներուն մէջ եւ այս ակումբներուն ճամբով դաշնակցական մարդը պատրաստելը չէ, այլ՝ հայկական ինքնութեան պահպանումը ապահովելն է, իւրաքանչիւր հայու հայկականութիւնը ապահովելն է, իսկ թէ ինքը իր հաւատքին կը ծառայէ, անկախ արդէն այլ ինչիւր է, որուն մէջ մենք չենք մտնել, երբ կը խօսինք ժողովրդային տան մասին», հաստատեց Յ. Բագրատունի՝ աւելցնելով, որ այս ակումբը, ժողովրդային տունը պետք է ապրի, բարգաւաճի: Ամէն օր այստեղ պետք է ժողովուրդ ըլլայ, մեր պատանիներն ու երիտասարդները պետք է գան:

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը նաեւ արաբերէնով շնորհակալական խօսք ուղղեց Չալքա-Ամարթթ Շալիուպի, Ժտէյտէ-Սատ Պաուշրիէի, Ժալ Էլ Տիպի, Անթիլիաս-Նաքքաշի քաղաքապետներուն, որոնք ներկայ էին հանդիսութեան՝ շէշտելով, որ ինք այդ բոլորը մէկ քաղաքապետութիւն կը նկատէ՝ Պուրճ Համուտի քաղաքապետութեան հետ միասին, որովհետեւ բոլորին թիրախը քաղաքացիին եւ մարդուն պահպանումն է:

**ԱՐՑԱԿԵԱՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
31-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**



ՀՀԴ «Է. Ակնունի» կոմիտէին կազմակերպութեամբ, ուրբաթ, 22 փետրուար 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Է. Ակնունի» ակումբին մէջ տեղի ունեցաւ արցախեան ազատագրական պայքարի 31-ամեակի տօնակատարութիւն: Ձեռնարկը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերդներուն ունկնդրութեամբ: Բացման խօսքով հանդէս եկաւ Գօգօ Էքմէքճեան:

Այնուհետեւ Արագ Էլէյճեան ասմունքեց Շահանդուխտի «Արցախի հերոսներուն» կտորը, որմէ ետք ցուցադրուեցաւ տեսերիզ մը՝ արցախեան ազատագրական պայքարի մասին:

Օրուան բանախօսը՝ ՀՀԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պէյքճեան ըսաւ, թէ ՀՀԴ-ն յոյս ներշնչած է Արցախի ժողովուրդին, միջոց տրամադրած Արցախի ժողովուրդին, որ ինքնապաշտպանու-

թեամբ եւ իր բազուկի հզօրութեամբ կարենայ տէր կանգնիլ իր իրաւունքներուն:

Բանախօսը ըսաւ, թէ պատմութիւնը փաստած է, որ մենք արդիւնք տուինք, որովհետեւ հաւատացինք մեր բազուկին, հաւատացինք մեր կարողականութեան, կազմակերպեցինք մենք մեզի եւ դիմադրեցինք ամէն տեսակի ճնշումներու:

«Ղարաբաղը իր անկախութեան 27 տարիներուն ընթացքին կրցաւ ինքզինք հաստատել, կազմակերպել, պետութիւն եւ բանակ կառուցել, սահմանները ամրապնդել, տնտեսութիւնը զարգացնել: Կարելի է հպարտօրէն ըսել, որ Ղարաբաղը այսօր կայացած պետութիւն է: Կայացած է իր ժողովրդավարական կարգերով, իր կուսակցութիւններով, իր ժողովուրդով, իր տնտեսութեամբ: Կայացած է շնորհիւ Հայաստանի պետական մտածողութեան, շնորհիւ սփիւռքին, որովհետեւ Հայաստան-սփիւռք-Արցախ եռեակը միասնաբար ձեռք-ձեռքի տալով է, որ այսօրուան կացութիւնը ստեղծեցին», ըսաւ ան:

Բ. Պէյքճեան յայտնեց, որ Դաշնակցութիւնը միշտ ալ հաւատացած է, որ Արցախի ժողովուրդը իրաւունք ունի որոշելու, իրաւունք ունի ազատ ապրելու: Ան հաստատեց, որ մենք իրաւունք չունինք զիջելու այն, ինչ որ արհիւնով շահած ենք, մենք իրաւունք չունինք զիջելու այն պատմական իրողութիւնները, որ մեր նախահայրերը ապրած են, մենք իրաւունք չունինք զիջելու մեր գալիք սերունդներուն իրաւունքները:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Լիբանանի հայոց թեմի քարոզիչ Անանիա Ծ. վրդ. Գուճանեան: Ան ըսաւ, թէ 31 տարի մենք իբրեւ մեր լեռները սիրող, մեր լեռներուն կառչած ժողովուրդ եւ ազգ, կը նայինք տակաւին նոր յաղթանակներու: «Արցախի ազատագրական պայքարին մենք շռայլօրէն զոհեր տուինք: Եւ տակաւին ունինք երիտասարդներ, որոնք պատրաստ են երթալու կռուի դաշտ: Մեր գերեզմարուած հողերը մեր երազը չեն, այլ մեր իրաւունքն են, եւ զանոնք պիտի ստանանք ուշ կամ կանուխ», նշեց ան:

Ձեռնարկը փակուեցաւ Արցախի քայլերգով:

**ԱՐՑԱԿԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ
31-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԶԵՌՆԱՐԿ**

Ուրբաթ, 10 մայիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Ազդակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ արցախեան շարժման 31-ամեակին նուիրուած ձեռնարկ՝ կազմակերպութեամբ ՀՀԴ «Ռուբէն» կոմիտէի քարոզչական յանձնախումբին: Օրուան բանախօսն էր ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ազատամարտիկներու հարցերու յանձնախումբի պատասխանատու գնդապետ Արտաշէս Մխիթարեան:



Ձեռնարկը սկսաւ Զայաստանի Զանրապետութեան եւ «Մշակ բանուոր» քայլերգներու ունկընդրութեամբ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Անժելա Տաղեան: Այնուհետեւ արցախեան ազատագրական պայքարին մասին պատմող տեսերիզ մը ցուցադրուեցաւ: Ապա Զրակ Մամիկոնեան ասմունքեց Շահանդուխտի «Արցախի հերոսներ» բանաստեղծութիւնը:

Խօսք առաւ օրուան բանախօս գնդապետ Արտաշէս Մխիթարեան: Ան ներկայացուց արցախեան ազատամարտին մէջ ԶՅԴ-ի դերակատարութիւնը: Ան ըսաւ, թէ հայրենիքին ծառայելը ԶՅԴ-ի գոյութեան իմաստն է, անոր առաքելութիւնը: ԶՅԴ 19-րդ դարու վերջին տասնամեակէն սկսած մինչեւ Զայաստանի Զանրապետութեան անկախացումը հայոց բանակի բացակայութեան պայմաններուն մէջ իր վրայ վերցուցած է հայկական զինուած ուժերէն ակնկալուող գործառնոյթներու իրականացումը:

Գնդապետը հաստատեց, որ Զայաստանի մէջ ԶՅԴ-ի ներկայութեան բացայայտումէն ետք 1990 օգոստոսէն դաշնակցականներ, որոնք մինչեւ այդ իրենց մասնակցութիւնը ունեցած են Զայաստանի սահմաններու պաշտպանութեան աշխատանքին մէջ, շարունակած են իրենց գործունեութիւնը ԶՅԴ-ի դրօշին ներքեւ, իսկ հայկական բանակի կազմաւորման ընթացքին ԶՅԴ-ի ջոկատները մաս կազմած են Զայաստանի Զանրապետութեան զինուած ուժերուն եւ աշխուժ մասնակցութիւն ունեցած Արցախի ազատագրման:

Ան խօսելով Շուշիի ազատագրութեան մասին ըսաւ, թէ աւելի քան 300 դաշնակցականներ եւ համակիրներ հաւաքուեցան Ստեփանակերտի մէջ մէկ հրամանատարութեան ներքեւ՝ ԶՅԴ-ի վաշտ անուան տակ, եւ սկսան պատրաստուելու Շուշիի ազատագրութեան գործողութեան: Շուշիի ազատագրումէն ետք վաշտի ստորաբաժանումները հիմնականին մէջ մասնակցած են Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական ազատագրական գործողութիւններուն:

Մխիթարեան հաստատեց, որ բոլոր ճակատներուն վրայ, ուր որ Դաշնակցութեան հրամանատարութեան տակ գործող գումարտակները գոր-

ծունեութիւն ծաւալած են, անոնք փառքով դուրս եկած են:

Արցախի նուիրուած երգերով հանդէս եկաւ ազատամարտիկ Սամուէլ Երանեան: Ձեռնարկի աւարտին «Ռուբէն» կոմիտէի ներկայացուցիչ Վարդան Մամիկոնեան յուշանուէր յանձնեց գնդապետ Արտաշէս Մխիթարեանին եւ ազատամարտիկ Սամուէլ Երանեանին:

Ձեռնարկը փակուեցաւ Արցախի Զանրապետութեան հիմներգով:

**ՀՐԱՅԻ ՄԱՐՈՒԽԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ
90-ԱՄԵԱԿ ԵՒ ՄԱՀՈՒՆ 20-ԱՄԵԱԿ**



Կազմակերպութեամբ ԶՅԴ «Հրայր Մարուխեան» կոմիտէին, երկուշաբթի, 11 մարտ 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեճի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ԶՅ Դաշնակցութեան պատմութեան մէջ իր ներկայութեամբ, դերակատարութեամբ եւ ղեկավարի ուրոյն յատկութիւններով իւրայատուկ դրօշմ ձգած Հրայր Մարուխեանի ծննդեան 90-ամեակին եւ մահուան 20-ամեակին նուիրուած ձեռնարկ:

Լիբանանի եւ Զայաստանի քայլերգներէն ետք բացման խօսքը արտասանեց Շահիկ Կոկոնեան:

Ապա ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որուն մէջ Հրայր Մարուխեան մարդուն, դաշնակցականին, ղեկավարին, անոր դաւանած գաղափարախօսութեան, ներաշխարհին եւ անհատականութեան մասին ապրուած վկայութիւններ տուին Յակոբ Բագրատունի, Երուանդ Փամպուքեան, Մարտիկ Պօղոսեան եւ Տիգրան Ծինպաշեան:

ԶՅԴ «Հրայր Մարուխեան» կոմիտէին խօսքը արտասանեց Ռաֆֆի Մետրոպեան, որ ըսաւ, թէ ձեռնարկին նպատակն է վերյիշել ու վերյիշեցնել Հրայր Մարուխեանի դաւանած սկզբունքներն ու աշխարհահայեացքը, հայութեան եւ Զայաստանի դիմագրուած մարտահրաւերներուն դիմաց անոր ցուցաբերած արի կեցուածքներն ու մաքառումները, նաեւ վերալիցքաւորուիլ գաղափարական այն ուժեղ համոզումներով, որոնք տասնամեակներ շարունակ իրենց արտայայտութիւնը գտան Հ. Մարուխեանի գրիչով, խօսքով ու կեցուածքով:

Յանուն «Յրայր Մարութեան» կոմիտեութեան անդամներուն Րաֆֆի Մեսրոպեան հաստատեց, որ կ'ուխտեն շարունակել Յրայր Մարութեանի եւ հայութեան հերոսներուն գործն ու առաքելութիւնը:

Անկէ ետք ելոյթ ունեցաւ Զամազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի հնգեակը:

Օրուան բանախօսն էր ԶՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, որ Յրայր Մարութեանը բնորոշեց իբրեւ ազգային գաղափարախօսութեամբ եւ հայութեան ծառայելու պատրաստակամութեամբ տոգորուած պայծառամիտ երիտասարդ մը, որ հասակ կ'առնէր այնպիսի փուլի, երբ մեր ժողովուրդը բաժնուած էր խորհրդոյնայնասէր ու հակահամայնավար շերտերու, երբ մեծապետական շահերը հորհրդային Յայաստանն ու սփիւռքի մեծամասնութիւնը տարանջատած էին իրարմէ: Նման պայմաններու մէջ Յրայր Մարութեանին վիճակուած էր հայաշխարհը գլխիվար շրջելու եւ մեր ազգային կեանքը հարածող այդ տխուր էջը փակելու:

«Ընկեր Յրայրը փայլատակեց հայկական երկնակամարին վրայ՝ իբրեւ յեղաշրջող ու աներեր աստղ, որ իր ամբողջ կեանքը նուիրեց հայակերտման, հայրենիքի ազատագրութեան, հայ ժողովուրդի ու մանաւանդ երիտասարդութեան քաղաքականացման եւ Յայ դատի միջազգայնացման պայքարին», հաստատեց Յ. Տէր Խաչատուրեան, որ իր անձնական փորձառութենէն մեկնած վկայեց, որ Յրայր Մարութեան կը գուրգուրար ու կը խթանէր երիտասարդները, որոնք կուսակցական այլազան մարզերուն մէջ կը ցուցաբերէին աշխուժ գործունեութիւն եւ ծառայելու պատրաստակամութիւն: «Մեր ունեցած պաշտօնական յարաբերութիւնները բաւարար հանդիսացած էին, որպէսզի լաւապէս ճանչնամ ու գնահատեմ մեր մեծ ընկերոջ ղեկավարի, մտաւորականի, դաստիարակի, գաղափարապաշտ մարդու եւ Յայ դատի մարտիկի յատկանիշները», յայտնեց ան:

Բանախօսը յատկապէս անդրադարձաւ այն երեւոյթին, որ Յրայր Մարութեան երիտասարդութեան մեծագոյն ջատագովն էր, ունակ էր լսելու երիտասարդութեան եւ անոր հետ խօսելու յատուկ կարողութիւն ունէր, ինչ որ նաեւ այսօր մեծապէս կարելոր է մեր իրականութեան մէջ: Ան աւելցուց, որ Մարութեան գաղափարական քարոզիչ էր ու ընկերվարական հասկացողութիւններ տարածողը, Յայ դատի միջազգայնացման խթանողը՝ իր բոլոր երեսներով, գիտական միտքով, նուրբ զգայնութեամբ, ամբողջական նուիրումով եւ քաղաքական սուր հոտառութեամբ եւ հեռատեսութեամբ օժտուած անձնաւորութիւն, որ ջատագովը եղաւ «Դեպի Երկիր» կարգախօսին, գործեց Յայաստանի, Արցախի եւ սփիւռքի համար:

«Սիրելի՛ ընկեր Յրայր, քու շունչովդ մեծցանք մենք, օրինակովդ փորձեցինք գործել իբրեւ պիւնդ դաշնակցական եւ նուիրեալ հայ, եւ ահա՛ կը շարունակենք մեր սուրբ գործը՝ նոյն համոզումով եւ նուիրումով», եզրափակեց Յակոբ Տէր Խաչատուրեան:

Ապա խօսքը տրուեցաւ Յրայր Մարութեանի դստեր՝ Շաղիկ Մարութեանին, որ ըսաւ, թէ կարելի չէ Յրայր Մարութեան հայրն ու դաշնակցականը իրարմէ գատել: Ան դիտել տուաւ, որ Յրայր Մարութեանի համար ապրելակերպ էր Դաշնակցութեան գաղափարախօսութեան եւ այդ մեծ ընտանիքին



նկատմամբ անսակարկ նուիրումը, իսկ ազնուութիւնը, անկաշառութիւնը, համեստութիւնն ու արդարութիւնը, սեփական եւ հանրային իրաւունքի համար պայքարը եղած են արժանիքներ, որոնք ձգտած է ներարկել իր զաւակներուն, կուսակցական ընկերներուն, գործակիցներուն: Շ. Մարութեան ըսաւ, թէ հայրենիքը վեհագոյն գաղափար ու թիրախ էր իր հօրը համար, իսկ մնացեալ բոլոր երկիրները պարզապէս կացարաններ էին՝ «Դեպի Երկիր»-ի ճամբուն վրայ, հայրենիքին ծառայելը անոր մտասելեռումի հասնող տեսլականն էր, որ փոխանցուեցաւ իր զաւակներուն եւ թոռներուն:

Ապա ան անդրադարձաւ Յայաստանէն Յրայր Մարութեանի արտաքսումին՝ Նշելով, որ իր հօր որոշումէն՝ Յայաստանէն դուրս գալու, ընդվզած էր ինք, որովհետեւ կը հաւատար, թէ ամէն գնով պէտք է ան մնար Յայաստան ու չենթարկուէր Յայաստանի օրուան նախագահին որոշումին, սակայն Յ. Մարութեանին բացատրութիւնն էր, որ այդ պայմաններուն մէջ այդ է ճիշդը, որովհետեւ պէտք չէ առնել քայլեր, որոնք կրնան ապակայունացնել Յայաստանի պետականութիւնը: Անոր համաձայն, Յրայր Մարութեան հաւատաց, որ Դաշնակցութեան գիծը, որդեգրած քաղաքականութիւնը ճիշդ է, եւ ԶՅԴ-ն պէտք է մնայ ուրոյն քաղաքական ուժ, օրակարգ թելադրող, իշխանութեան բացերը լրացնող, քննադատող, սակայն՝ կառուցողական:

Աւարտին քանի մը երգով հանդէս եկաւ Զամազգայինի «Գուսան» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Գրիգոր Ալոզեանի:

Նշենք, որ ձեռնարկին ընթացքին ներկաներուն բաժնուեցան Հրայր Մարուխեանի կեանքին եւ գործունեութեան նուիրուած գրքոյկներ:

ՀՅԴ «Ն. ԱՂԲԱՒԵԱՆ» ԿՈՄԻՏԵԻ ԾԱՇԿԵՐՈՅԹ



Կազմակերպութեամբ ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէին եւ նախագահութեամբ նախկին նախարար Վրէժ եւ Սալմա Սապունճեաններուն, շաբաթ, 23 մարտին տեղի ունեցաւ ժողովրդային ճաշկերոյթ մը «Ռիճընսի փալատ» պանդոկի սրահին մէջ: Այս առիթով ելոյթ ունեցաւ հայրենի տաղանդաւոր արուեստագետ Ռազմիկ Ամեան՝ ընկերակցութեամբ իր նուագախումբին: Յայտագիրին մասնակից դարձաւ հայրենիքէն հրաւիրուած երգչուհի Մոնիքա Նազարեան: Ներկայ էին Հայկական երեսփոխանական պլոքի անդամներ Յակոբ Թերզեան եւ Ալեքսան Մաթոսեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեան, Լիբանանի Կեդրոնական կոմիտէն, քաղաքապետութիւններու եւ դրամատուներու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ բարերարներ ու հոծ թիւով բազմութիւն մը, որուն մէջ ակներեւ էր երիտասարդ խաւի տիրական ներկայութիւնը:

ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէին անունով ձեռնարկին բացումը կատարեց Հուրի Էմմիեան, որ անդրադարձաւ այս ձեռնարկի նպատակին՝ յայտնելով, որ այսպիսի հաւաքներ հայկական ընտանեկան մթնոլորտով եւ մեր մշակոյթի ակունքներէն բխող արուեստի ներկայացումով անպայման մեր բոլորին մէջ հայկականութիւնը քիչ մը աւելի կը խորացնեն:

Ապա ներկաներուն բուն ծափողջոյններուն ներքեւ բեմ բարձրացաւ Ռազմիկ Ամեան, որ իր ձայնով հմայեց սրահը լեցուցած խումներամ բազմութիւնը: Աշուղական եւ ազգագրական երգերով ելոյթ ունեցաւ նաեւ հայրենի երգչուհի Մոնիքա Նազարեան, որուն անդրանիկ այցելութիւնն էր ասիկա Լիբանան: Ձեռնարկի ընթացքին խօսք առաւ նաեւ օրուան նախագահ Վրէժ Սա-

պունճեան, որ բարձրօրէն գնահատեց ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէի եւ ընդհանրապէս բոլոր կոմիտէներուն աշխատանքը՝ լիբանանահայութեան կարիքներուն անսալու իմաստով: Ան կարեւոր նկատեց ժողովուրդի ամբողջական զօրակցութիւնը՝ Հայ յեղափոխական դաշնակցութեան ծրագիրներուն ու աշխատանքներուն, որպէսզի լիբանանահայ համայնքը շարունակէ մնալ աշխուժ եւ պաշտպան՝ իր իրաւունքներուն:

Այս առիթով ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէի տարեկան ծրագիրներուն համար հանգանակուեցաւ 70 հազար ամերիկեան տոլար, իսկ երգն ու պարը եւ հայկական ջերմ մթնոլորտը տեսեցին մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
104-ԱՄԵՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՄ**

Կազմակերպութեամբ ՀՅԴ «Է. Ակնունի» կոմիտէին, երկուշաբթի, 22 ապրիլ 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ֆանարի դաշտին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 104-ամեակի ոգեկոչման ձեռնարկ:

Պաշտօնական խօսքերէն առաջ ՀՄԸՄ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ պաշտօնական հիւրերը, պատկան մարմիններու ներկայացուցիչները ուղղուեցան Ֆանարի շրջափակին մէջ գտնուող Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներուն նուիրուած յուշակոթող, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, եւ ծաղկեպսակներ գետեղուեցան յուշակոթողին վրայ:

ՀՄԸՄ-ի շեփորախումբին կողմէ հնչած Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներէն ետք բացման խօսքով հանդէս եկաւ Յուրի Թալաթիսեան:

Անկէ ետք խօսք առաւ Հօր Լիբանան համալսարանի ընդհանուր քարտուղար, երեսփոխան Իպրահիմ Զանաան: Ան իր խօսքին սկիզբը ըսաւ, թէ յատկանշական զուգահիշութեամբ երէկ կը տօնէինք Յիսուս Զրիստոսի յարութիւնը, իսկ այսօր հաւաքուած ենք նշելու Հայոց ցեղասպանութեան յիշատակը: Այս երկու առիթներուն ալ կը յայտարարենք եւ ականատես կ'ըլլանք կեանքի յաղթանակին՝ մահուան, իրականութեան եւ իրաւունքի յաղթանակին՝ զեղծարարութեան,





ինչպես նաև արդարության յաղթանակին՝ անարդարության վրայ:

Երեսփոխան Իպրահիմ Զանաան ըսաւ. «Յայտնեցէ՛ք զճարտարութեամբ ուզեցին վերջ տալ ազգի մը եւ անոր Դատին, բայց արդիւնքը 104 տարի ետք դուք էք, այս ժողովուրդն է, որ դեռ 104 տարի ետք, այսօր Լեռնալիբանանի մէջ, Լիբանանի ու աշխարհի տարածքին, կ'ըսէ, որ մեր Դատը պիտի չմեռնի, մեր ազգը պիտի չմեռնի: Յայտնեցէ՛ք զճարտարութեան տարելիցը զուգահեռաբար Զրիստոսի յարութեան տօնին, որպէսզի ըսենք նաեւ, որ հայ ժողովուրդի յարութիւնը իրականութիւն է: Յեղասպանութիւնը չկրցաւ հայ ժողովուրդի պահանջատիրական ոգին մեռցնել: Անոնք մոխրացուցին հայ ժողովուրդը, բայց ան պայքարեցաւ եւ յառնեցաւ մեռելներէն, կը շարունակէ եւ պիտի շարունակէ իր պահանջատիրութիւնը յաւիտեան»:

Երեսփոխան Զանաան դիտել տուաւ, որ բացայայտ են հայերուն եւ լիբանանցիներուն միջեւ նմանութիւնները. մենք Լիբանանի մէջ ենք, եւ դուք Լիբանանի հաւատարիմ քաղաքացիներն էք: Մենք կը յարգենք Դաշնակցութեան կազմակերպութիւնը, անոր ուժը, կամքն ու նուիրումը պահելու իր դատը, իր հայրենիքը եւ Լիբանանը:

Խօսքին յաջորդեց Յայտնեցէ՛ք ճարտարութեան նուիրումը կարճ տեսերիզի ցուցադրութիւն:

Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ երեսփոխան Սամի Ժամայէլի խօսքը արտասանեց զայն ներկայացնող երեսփոխան Էլիաս Յանքաշ, որ անդրադարձաւ 1915 թուականին հայ մտաւորականներու, հոգեւորականներու եւ ղեկավարներու ձերբակալութեան ու սպանութեան՝ նշելով, որ այդպիսով թուրքերը կարծեցին, թէ հայութեան մէջ պիտի կարենան սպաննել յոյսը՝ անոր ընտրանի խաւէն ձերբազատելով: «Անոնք չգիտցան, որ հայութեան յոյսը չի խամրիր, իսկ ասոր փաստը այսօր Լիբանանի մէջ գոյութիւնն է հայութեան, որ կը հանդիսանայ այս երկրի կերտման մէջ հիմնական բաղադրիչ սիւներէն մէկը, նոյնիսկ անկախութենէն առաջ: Այսօր աշխարհին մէջ մեծ է թիւը այն նշանաւոր հայերուն, որոնք Յայտնեցէ՛ք ճարտարութեան ետք տարածուեցան տարբեր

երկիրներու մէջ ու ստեղծեցին գաղութներ», ըսաւ ան:

Էլիաս Յանքաշ յիշեցուց, որ նոյն ժամանակաշրջանին, երբ հայութիւնը սպանդի կ'ենթարկուէր, Լեռնալիբանանի մէջ ապրող լիբանանցիները սովաւար եղան, տարբեր տեսակի սպանդի ենթարկուեցան միեւնոյն ոճրագործին՝ օսմանցիին կողմէ: Երեսփոխանը նկատել տուաւ, որ Դաշնակցութեան հետ համադրաբար աշխատանք կը տանին ապրիլ 24-ը Լիբանանի մէջ Յայտնեցէ՛ք ճարտարութեան յիշատակի օր հռչակելու օրինագիծին վերաբերեալ, ինչպէս նաեւ Փաղանգաւոր կուսակցութեան աշխատանքային ծրագիրին մէջ կայ հայերէնն ու ասորերէնը պետական վարժարաններուն մէջ ընտրովի լեզու նկատի առնելու պարագան, որովհետեւ իրենք կը հաւատան, թէ Լիբանանի մէջ այլազանութիւնը հարստութիւն է, իսկ այնքան ատեն որ հայ ժողովուրդին հաւատքը այդքան ամուր է իր Դատին, խաչին եւ մայրիին նկատմամբ, ան չի մեռնիր, անոր յոյսը չի խամրիր, իսկ ջահը միշտ բոցավառ կը մնայ, մինչեւ իր նպատակին հասնիլը:

Երրորդ խօսք առնողը եղաւ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, որ անտեղի գտաւ Յայտնեցէ՛ք ճարտարութեան վերաբերող փաստերու մասին խօսիլը, որովհետեւ այլեւս պարզ ու յստակ իրականութիւն է այն, որ 20-րդ դարու սկիզբը մեծ յանցանք գործուեցաւ, իսկ յանցագործը այս հարցով վերջին հետաքրքրուածներէն մէկն է: Ան հաստատեց, որ այսօր հայութիւնը առերեւոյթ պարզ, սակայն շատ կարեւոր ու խորքային բան մը կը պահանջէ՝ Թուրքիոյ կողմէ Յայտնեցէ՛ք ճարտարութեան ճանաչումն ու մեծ կորուստներու հատուցումը, յատկապէս վերադարձը հայութեան ինչքերուն եւ հողերուն: Նախարարը դիտել տուաւ, որ այսօր միջազգային ընտանիքին հիմնական բաղադրիչները ճանչցան Յայտնեցէ՛ք ճարտարութիւնը, Ֆրանսան ապրիլ 24-ը որդեգրեց իբրեւ Յեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակի օր՝ առանց նկատի ունենալու Թուրքիոյ հետ իր կապերը, հակառակ անոր որ անոնք իրենք կշիռը կրնան ունենալ:

Նախարար Կիտանեան խօսեցաւ վերջին տարիներուն հրապարակի վրայ երեւցած ՏԱՅԵՇ-ի երեւոյթին, անոր գործած ահաւոր արարքներուն ու ոճիրներուն, հրէշութիւններուն, զորս չկրցանք ընդունիլ, բայց եւ այնպէս որոնք պարզապէս մէկ փոքր տոկոսը կը կազմեն 104 տարի առաջ օսմանցիներուն կողմէ հայութեան կրած բազմապիսի չարչարաններուն եւ ոճրագործութիւններուն:

Ապա Աւետիս Կիտանեան շնորհակալութիւն յայտնեց, որ 2000 թուականին Լիբանանի խորհրդարանը ճանչցած է Յայտնեցէ՛ք ճարտարութիւնը՝

դիտել տալով սակայն, որ երկար տարիներ է ի վեր լիբանանեան կառավարութենէն կը խնդրուի ապրիլ 24-ը նկատել ազգային օր՝ Յայոց ցեղասպանութեան զոհերուն ի յիշատակ: Անոր համաձայն, ասոր արժանի է լիբանանահայութիւնը, որ միայն կառուցեց Լիբանանը, երբեք չքանդեց զայն, աշխատեցաւ, տարածուեցաւ, բազմացաւ իբրեւ թիւ եւ գործունէութիւն՝ միշտ ի շահ Լիբանանի, երբեք անոր հաշուոյն:

Գեղարուեստական բաժինով ազգային- հայրենասիրական երգերով հանդես եկան Վիգէն Տիշէ-բէնեան եւ Սերոբ Յակոբեան:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ ՉԱՅԼԵԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԵՋ

Կազմակերպութեամբ ՀՅԴ «Արամ» կոմիտէին շաբաթ, 27 ապրիլ 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Չահլէի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Մեծ եղեռնի ոգեկոչման ձեռնարկ՝ մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի Չահլէի մասնաճիւղի սկաուտներուն, որոնք ներկայացուցին գեղարուեստական ճոխ յայտագիր:

Ձեռնարկը ընթացք առաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով, ապա Խաժակ Բալուէան արտասանեց ձեռնարկին բացման խօսքը եւ «Հայորդիք» երգէն տողեր մեջբերելով անդրադարձաւ իւրաքանչիւր հայու ունեցած հայկական ինքնութեան զգացումին: Ըստ անոր, հակառակ շրջանին մէջ առկայ տարբեր դժուարութիւններուն, Չահլէի, Շթորայի, Ժալալայի եւ Ռայաքի հայութիւնը կը շարունակէ համախմբուիլ եւ ոգեկոչել Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներուն յիշատակը:

Օրուան բանախօսն Եր Աշոտ Բագրատունի, որ դիտել տուաւ, թէ Հայոց ցեղասպանութենէն, մեր պապերուն կրած արհաւիրքներէն եւ անոնց խիզախ վերապարումէն 104 տարի ետք, տակաւին այս ոճիրը կը շարունակէ ներկայութիւն ըլլալ հայկական իրականութեան մէջ, մանաւանդ որ մենք պարզապէս ժառանգորդները չենք այդ նախահայրերուն, այլ՝ հետեւանքն ենք թուրքին սուրին, կրակին, 600 տարուան արեան ծարաւ քաղաքականութեան, եկեղեցիներուն մէջ հրկիզուած ժողովուրդին. «քաղաքակիրթ» կոչուած թուրքին գազանութեան: Ան աւելցուց, որ մենք նաեւ արդիւնքն ենք վերապարումի, Նեմեսիսի, Սարդարապատի, Արդարութեան մարտիկներու եւ Արցախի, արդիւնք ենք ազգիս պատիւը վերականգնած ամէն մէկ հատիկ վառօղի, ամէն մէկ արիւնտ սուրի եւ ամէն մէկ արձակուած փամփուշտի:

Ապա Աշոտ Բագրատունի անդրադարձաւ այսօր հայութեան դէմ ցցուած բազում մարտահրաւերներուն, որոնց կարգին է թուրք պետութիւնն ու



ժողովուրդը իրարմէ անջատելու երեւոյթը, թշնամիին ժառանգորդին հաշտ աչքով նայելու վտանգը:

Օրուան բանախօսին համաձայն, ճիշդ է, որ այսօրուան հայութիւնը արդիւնք է Ցեղասպանութեան, բայց նաեւ վրէժի, եւ ի վերջոյ յաղթանակի, ուստի միշտ ալ պիտի շարունակէ ձգտիլ յաղթանակներու:

Աւարտին իր սրտի խօսքը ուղղեց ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, որ Հայոց ցեղասպանութեան անդրադարձաւ իր ընտանեկան կորուստներէն մեկնած եւ դիտել տուաւ, թէ որքան ալ փորձեն սպաննել հայութիւնը, իլել անոր ինքքերը, գողնալ լեզուն, կրօնն ու մշակոյթը, պիտի չյաջողին: Ան ասոր լաւագոյն ապացոյցը նկատեց գեղարուեստական յայտագիրը ներկայացուցած մանուկներն ու պատանիները, որոնք հաւատքով, համոզումով, ապրումով եւ կատաղութեամբ երգեցին՝ հաստատելով, որ իրենք նահատակ սուրբերուն արժանի զաւակներն էին:

Աւարտին քահանայ հայրերը բարեխօսական աղօթք կատարեցին 1,5 միլիոն սուրբ նահատակներու յիշատակին:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ ԺԻՊԵՅԼԻ ՄԵՋ

ՀՅԴ «Ընդի» կոմիտէին կազմակերպութեամբ, կիրակի, 28 ապրիլ 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Ժիպէյլի Մար Եուհաննա եկեղեցւոյ «Անթաշ»-ի «Հայր Էմմանուէլ Խուրի» սրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի ձեռնարկ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 104-ամեակին:

Ձեռնարկին ներկայ էին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, երեսփոխան Չիատ Հաուաթ, Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար Ժըպրան Պասիլի ներկայացուցիչ, Ժիպէյլի շրջանի պատասխանատու Ատիպ Ժըպրան, Պէյրութի եւ Լեռնալիբանանի շուրի ընկերութեան ընդհանուր տնօրէն Ժան Ժըպրան, Պլաթի քաղաքապետ Աստրէ Ընսսայֆի, Ժիպէյլի



փոխքաղաքապետ Ժուլիան Չղեյա, Ժիպեյլի թաղապետներու խորհուրդի նախագահ Միշել Ժըպրան եւ շրջանի թաղապետները, մարոնի համայնքի Ժիպեյլի առաջնորդ Միշել Աուն Եպիսկոպոս, Ժիպեյլի եւ Զետրուանի միւֆթի Ապտել Էմիր Շամսետտին, Ժիպեյլի իմամ շէյխ Ղասսան Լաքքիսի ներկայացուցիչ շէյխ Ահմետ Լաքքիս, «Անթաշ»-ի նախագահ հայր Շարպել Պէյրութի, Ժիպեյլի մէջ Պետական անվտանգութեան ուժերու գրասենեակի ներկայացուցիչ Ռապիհ Էլիաս, «Զեռի» կոմիտէի ներկայացուցիչ Զլոտ Արեճեան եւ շրջանի կուսակցութիւններու, քաղաքապետական խորհուրդի եւ մարմիններու ներկայացուցիչներ, հոգեւորականներ, զինուորականներ, ինչպէս նաեւ ժողովուրդի հոծ բազմութիւն մը:

Ձեռնարկի պաշտօնական բացումէն առաջ, ներկաները Հայոց ցեղասպանութեան զոհերուն իրենց յարգանքի տուրքը մատուցեցին սրահի մուտքին դրուած Ծիծեռնակաբերդի մանրակերտին ծաղիկներ զետեղելով:

Յիշատակի ձեռնարկը սկսաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն նուագով, ապա բացման խօսքով հանդէս եկաւ Նենսի Արեճեան, որ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը: ՀՀ «Զեռի» կոմիտէին խօսքը ուղղեց Զլոտ Արեճեան:

ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին խօսքը ուղղեց Արշօ Պալեան, որ ըսաւ, թէ հայ ժողովուրդի պատմութեան մէջ Ապրիլ 24-ը կը խորհրդանշէ ցաւալի փուլի մը ժամանակաշրջանը, որուն ընթացքին փորձ կատարուեցաւ բնաջնջելու զայն: Ա. Պալեան ըսաւ, որ լիբանանցի հայերը լաւ գիտեն, թէ երբ այս մասին խօսին իրենց լիբանանցի եղբայրներուն հետ, անոնք

պիտի հասկընան եւ աջակցին Հայոց դատին, որովհետեւ անոնք Լիբանանի մէջ ապրեցան Օսմանեան կայսրութեան գործադրած ոճրային քաղաքականութիւնը՝ Լեռնալիբանանը սովի ենթարկելով: «103-ամեայ ցաւալի պատմութեան յիշատակը ամփոփուած է մայիս 6-ի յիշատակման օրուան մէջ, որ վերածուած է նահատակ լրագրողներու յիշատակի օրուան, եւ յոյս ունինք, որ անիկա շուտով անուանափոխուի եւ ըլլայ Լիբանանի նահատակներու յիշատակի օր», ըսաւ Ա. Պալեան:

Իր խօսքին մէջ Արշօ Պալեան Լիբանանի կառավարութենէն պահանջեց, որ 24 Ապրիլը հռչակէ Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր, որպէսզի ունենանք աւելի լաւ, ցեղասպանութիւններէ զուրկ ապագայ մը: Աւելցնելով. «Չկայ լիբանանցի մը, որ կարենայ ժխտել հայ ժողովուրդին դերը լիբանանեան ընկերութեան մէջ, ճանչնալով յատկապէս ներքին պայքարներու, կռիւներու մէջ չմտնելու յատկութիւնը եւ միշտ հաւասարակշռութիւն պահելու ճիգերը, որ կատարած է հայը»:

Հայ ժողովուրդի եւ լիբանանցիի նմանութիւններուն մասին խօսելով, ան ըսաւ. «Ժիպեյլէն (որ Տեղասպանութեան առաջին որբերը ընդունեց եւ խնամեց), փիւնիկեցիներու երկրէն յիշեցնենք բոլորին, որ հայ ժողովուրդը Հայաստանի անկախ Հանրապետութիւնը կերտեց Տեղասպանութենէն 3 տարի ետք միայն, 2-րդ անկախութիւնը՝ 28 տարի առաջ: Հպարտութեամբ կ'ըսենք, որ ցեղասպանութեան ենթարկուած հայ ժողովուրդը, իր հայրենիք Հայաստանի խաղաղապահ զինուորները ուղարկած է հարաւային Լիբանան, խաղաղութիւն հաստատելու, իր սահմանը թշնամի Իսրայէլէն պաշտպանելու եւ հաւանական նոր ցեղասպանութիւն կանխարգիլելու համար»:

Իր խօսքի աւարտին Ա. Պալեան ըսաւ. «Հայ ժողովուրդը պիտի շարունակէ պայքարիլ, անոր յաջորդ սերունդները պիտի շարունակեն իրենց նախնիներուն իրաւունքները պահանջել խոյնիսկ Էրտողանի թռուներէն»:

Օրուան բանախօսն Էր լրագրող Ղասսան Շամի, որ անդրադարձաւ հայ ժողովուրդի՝ դժբախտութիւններով եւ չարչարանքներով լեցուն անցած ճամբուն, որուն աւարտին անիկա յարութիւն առաւ եւ վերըստին ապրեցաւ:

Շամի անդրադառնալով օսմանցի թուրքերու բարբարոսութիւններուն ըսաւ, թէ անոնք մարդկային պատմութեան մէջ աննախադէպ են: Թիւրտերու ձեռքերով, թուրք օս-





մանցիներու հրահանգով կատարուած գանազան ցեղասպանութիւնները՝ ասորի, յոյն, սուրիացի եւ շրջանի շատ մը այլ ազգերու նկատմամբ, փաստ են կիրարկուած ատելութեան, որ մինչեւ այսօր կը շարունակուի:

Ձեռնարկի գեղարուեստական յայտագիրով մասնակցութիւն ունեցան Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի աշակերտները:

Ձեռնարկի գեղարուեստական յայտագիրով, երգեցողութեամբ, իրենց մասնակցութիւնը բերին ՀՅԴ «Սերոբ Աղբիւր» պատանեկան միութեան պատանիները:

Յուցադրուեցաւ նաեւ Հայոց ցեղասպանութեան մասին վաւերագրական ժապաւեն մը: Աւարտին, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ ՀՅԴ «Թեռի» կոմիտէի ներկայացուցիչ Զլոտ Արեճեան յուշանուէր մը յանձնեցին լրագրող Ղասսան Շամիին:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 104-ԱՍԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

Կազմակերպութեամբ ՀՅԴ «Գ. Նժդէհ» կոմիտէի քարոզչական յանձնախումբին, ուրբաթ, 26 ապրիլ 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Չալքայի «Գ. Նժդէհ» ակումբին մէջ տեղի ունեցաւ կլոր սեղան մը՝ Հայոց ցեղասպանութեան 104-ամ-



-եակին նուիրուած, որուն զեկուցաբերներն էին Եղիա Թաշճեան, Աշոտ Բագրատունի եւ Հեթում վրդ. Տաղլեան:

ՀՅԴ «Գ. Նժդէհ» կոմիտէի քարոզչական յանձնախումբի անդամ Չարեհ Պոյաճեան, ողջունելէ ետք ներկաները, շնորհակալութիւն յայտնեց ընդառաջելու համար այսպիսի ձեռնարկի:

Կլոր սեղանի առաջին զեկուցաբերն էր Եղիա Թաշճեան, որ ներկայացուց Հայոց ցեղասպանութիւնը թուրքիոյ մէջ այսօր, թրքական պետութեան մօտեցումը, կողմնակից շարժումներ եւ ծայրայեղական շարժումներ: Կլոր սեղանի երկրորդ զեկուցաբերն էր Աշոտ Բագրատունի, որուն զեկուցումին հիմնական սիւթն էր Հայ դատի ընկալումը, Հայաստանի պետականութիւնը, հայաստանաբնակ ժողովուրդը, սփիւռքը եւ Արցախը: Իսկ երրորդ զեկուցաբեր Հեթում վրդ. Տաղլեանի սիւթն էր Հայոց ցեղասպանութեան տեսութիւնը այսօր եւ Սիսի կաթողիկոսութիւնը:

ԼՍԱՐԱՆ-ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱՆ ՈՒՉՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ» ՆԻԹՈՎ

Կազմակերպութեամբ ՀՅԴ «Գ. Նժդէհ» կոմիտէի քարոզչական յանձնախումբին ուրբաթ, 31 մայիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Չալքայի ՀՅԴ «Գ. Նժդէհ» ակումբին մէջ տեղի ունեցաւ լսարանային հանդիպում մը՝ «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք» նիւթով, որուն զեկուցաբերն էր ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ, «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք»-ի կազմակերպական կոմիտէի անդամ Մելիք Գարագաւորեան:

ՀՅԴ «Գ. Նժդէհ» կոմիտէի քարոզչական յանձնախումբի անդամ Չարեհ Պոյաճեան ողջունելէ ետք ներկաները, շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն ընդառաջելու այսպիսի հանդիպումներու ներկայ գտնուելու հրաւերին: Պոյաճեան իր խօսքին մէջ նշեց, թէ հանդիպումին սիւթը նաեւ պիտի անդրադառնայ կարգ մը կետերու, որոնք կը վերաբերին Հայաստանի վերջին մէկ տարուան իրադարձութիւններուն:



Օրուան գեկուցաբեր Մելիք Գարագաւորեան իր խօսքը սկսաւ շնորհակալութիւն յայտնելով ԶՅԴ «Գ. Նժդեհ» կոմիտէին եւ անոր քարոզչական յանձնախումբին՝ այսպիսի առիթ մը ստեղծելու համար: Գարագաւորեան շէշտեց, թէ ներկայիս այժմեական կարեւոր նշանակութիւն ունի Արցախի անվտանգութեան գերխնդիրը, որովհետեւ Զայաստանի ամբողջ անվտանգութիւնը կախեալ է Արցախի անվտանգութենէն՝ նշելով, որ Զայաստան եւ Արցախ հաւասարապէս պաշտպան են միմեանց, եւ ոչ թէ միայն Զայաստանի Զանրապետութիւնը պաշտպան է Արցախին: Մելիք Գարագաւորեան յայտնեց, որ հայկական աշխարհին մէջ երկրորդ կարեւոր խնդիրը Զայաստանի Զանրապետութեան մէկ տարուան յարափոփոխ քաղաքական իրավիճակն է, ինչ որ կը վերագրուի իշխանափոխութեան: Գարագաւորեան նշեց, թէ ԶՅ Դաշնակցութիւնը առաջինն էր, որ ձեռք երկարեց Նիկոլ Փաշինեանին՝ նախքան վարչապետական ընտրութիւնները, եւ թէ Դաշնակցութիւնը 20 տարուան ընթացքին առաջին անգամն է, որ դուրս կը մնայ խորհրդարանէն: Գարագաւորեան իր խօսքին մէջ անդրադարձաւ այժմեական ներքին հարցերուն, որոնց շարքին են՝ նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանի ձերբակալուիլը եւ ապա ազատ արձակուիլը, ընկերային ցանցերու վրայ թշնամանքի, ատելութեան մթնոլորտի տարածումը: Մելիք Գարագաւորեան նշեց, թէ ԶՅԴ-ի 33-րդ Ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ Ստեփանակերտի մէջ, առաջնահերթութեամբ քննարկեց Արցախի ապահովութիւնը: Ան յայտնեց, որ ԶՅԴ-ի 33-րդ Ընդհանուր ժողովին որոշուեցաւ նաեւ Արցախի Զանրապետութեան անվտանգութեան եւ միջազգային բանակցային խումբի յարաբերութիւնները արդիականացնելու մասին, ինչ որ անմիջականօրէն կը վերաբերի Զայաստան-Արցախ նազմավարական դաշինքին:

**ՄԱՅԻՍԵԱՆ
ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ
ՆՈՒԻՐՈՒՄԾ ԺՈՂՈՎՐԱՅԻՆ
ՓԱՌԱՍՏ**

Կազմակերպութեամբ ԶՅԴ «Սարդարապատ» կոմիտէի քարոզչական յանձնախումբին, նախագահութեամբ Մարաշի հայրենակցական միութեան, կիրակի 2 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Պուրճ Զամուտի «Աբրահամ Աշճեան» փողոցի «Արին» կեդրոնին կից տեղի ունեցաւ մայիսեան յաղթանակներուն նուիրուած ժողովրդային փառատօն:

ԶՄԸՄ-ի շէփորախումբին կողմէ հնչած Լիբանանի եւ Զայաստանի քայլերգներու ունկնդրութենէն ետք բացման խօսքը արտասանեց Պետիկ Գասպարեան:

ԶՅԴ «Սարդարապատ» կոմիտէին անունով խօսք առաւ Սազօ Մարտիրոսեան, որ անդրադարձաւ այն երեւոյթին, թէ «Սարդարապատ» կոմիտէն կը նշէ մայիսեան յաղթանակները, որովհետեւ Սարդարապատը ինքնին խորհրդանիշն է Զայաստանի Ա. Զանրապետութեան կերտման ու հայոց պետականութեան ծնունդին: Ըստ անոր, Սարդարապատը կը հանդիսանայ ներշնչումի աղբիւր՝ գործելու պայքարի ոգիով ու հերոսներուն շունչով, աշխատելու այնպէս, որ պահպանին հայ ընտանիքը, հայութիւնը եւ հայկական արժէքները:

Մարաշի հայրենակցական միութեան խօսքը արտասանեց Նազարէթ Ապունայեան, որ լուսարձակի տակ առաւ մայիսեան հերոսամարտի կարեւորութիւնը հայութեան համար, որ ծառացաւ, ըմբոստացաւ, դէմ կանգնեցաւ իր դարաւոր թշնամիին եւ արեան գնով կերտեց Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի սրբազան յաղթանակները՝ իրականացնելով ազատ ու անկախ հայրենիք ունենալու դարաւոր երազը: Ան շէշտեց, որ առանց այս անկախութեան եւ Զայաստանի Ա. Զանրապետութեան, մայր հայրենիքը պիտի չգոյատեւէր մինչեւ այսօր՝ աւելցնելով, որ պէտք է կեդրոնանանք ազատ, անկախ ու միացեալ Զայաստանի տեսլականին վրայ:

ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին անունով խօսք առաւ տղոթ. Էլի Թաշճեան, որ ըսաւ, թէ մայիս 28-ի տօնակատարութիւնը մեզ կը մղէ անդրադառնալու անկախութեան, ազատութեան եւ պետականութիւն կերտելու մեծագոյն խորհուրդներուն, նաեւ այն աննախընթաց, գերազանցապէս միասնական ոգիին, որ հրաշք կեր-



տեց եւ փրկեց մեզ իբրեւ ազգ, իբրեւ երկիր եւ իբրեւ պետականութիւն՝ վերապրելու, յարատւելու եւ զարգանալու: Ան դիտել տուաւ, որ հայութիւնը այդ փուլին մղեց իսկական գոյապայքար: «Ու տակաւին ուժ մը, որ ուղիղ հարիւր տարի առաջ, Յեղասպանութենէն միայն չորս տարի ետք, պիտի շտկեր հայութեան ողնաշարը. պիտի որոշէր պատժել Յայոց ցեղասպանութիւնը ծրագրողներն ու գործադրողները եւրոպական քաղաքներու մէջ, օր ցերեկով, ինքն իր ձեռքով կատարելով Նիւրնբերկը», յայտնեց Է. Թաշճեան:

Ապա ան լուսարձակի տակ առաւ այս բոլորին մէջ դերակատարութիւնը ՀՀ Դաշնակցութեան, որուն կը պարտինք ազգի համախմբման, ազգբանակի գոյացման, դիւցազնական կռիւներու կազմակերպման, հայոց պետականութեան կերտման, հայ ազգի նպատակի առաջադրման, Սերի մէջ դիւանագիտական գագաթ նուաճելու, Յեղասպանութեան պատասխանատուները պատժելու եւ իրաւամբ հայ ազգի շարունակականութիւնը ապահովելու ամէն տեսակի նուաճում:

Աւարտին ազգային, հայրենասիրական եւ յեղափոխական երգերով մթնոլորտը խանդավառեցին Ներսիկ եւ Արաթօ Իսպիրեանները՝ «Տարօն» նուագախումբին ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ Սերոբ Յակոբեան՝ Սեդօ Պաղտասարեանի նուագակցութեամբ:

ՊՈՒՐՆ ԶԱՄՈՒՏԻ ԲԱՐԵԶԱՐԴՄԱՆ ԱՐՇԱՒ



Նախաձեռնութեամբ Պուրն Զամուտի քաղաքապետութեան եւ կազմակերպութեամբ Արագածի շրջանի ՀՀԴ «Դրօ» կոմիտէին երեքշաբթի, 6 օգոստոս 2019-ի երեկոյեան ժամը 8:00-ին, հետաքրքրական եւ շահեկան հաւաք մը տեղի ունեցաւ Արագածի ակումբին մէջ՝ ներկայութեամբ քաղաքապետ Մարտիկ Պողոսեանի եւ շրջանի բնակիչ ազգայիններու հոծ բազմութեան:

Հաւաքին բացումը կատարեց կոմիտէի ներկայացուցիչ Պողոս Գազեզեան, որ ողջունելով ներկաները սեղմ գիծերու մէջ պարզեց հաւաքին առիթն ու նպատակը:

Աւելի քան մէկ ժամ տեւողութեամբ Պուրն Զա-

մուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան ներկաներուն պարզեց քաղաքապետութեան ծրագիրը՝ Պուրն Զամուտի բարեգարդման եւ մաքրութեան տեսլականին գծով, որ պիտի սկսի Արագածէն եւ շարունակուի Պուրն Զամուտի այլ շրջաններու մէջ՝ հիմնականին մէջ թիրախ ունենալով շրջանի փողոցներու մաքրութեան արշաւ, շէնքերու ներկ ու նորոգութիւն եւ տանիքներու մաքրութիւն:

ՀԱՒԱՔ՝ «ՍԵՐՈԲ ԱՂՔԻՐ» ԱԿՈՒՄԲԻՆ ՄԵՋ



Պուրն Զամուտի քաղաքապետութեան նախաձեռնած շրջանի բարեգարդման եւ մաքրութեան արշաւի շարունակման ծիրին մէջ չորեքշաբթի, 7 օգոստոս 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին, հաւաք մը տեղի ունեցաւ քաղաքապետարանի ժողովրդային շէնքերու «Սերոբ Աղբիր» ակումբին մէջ՝ Պուրն Զամուտի քաղաքապետութեան պատուիրակութեան եւ նշեալ շէնքերու բնակիչներուն միջեւ:

Հաւաքին բացումը կատարեց Մարալ Միսեան, որ ՀՀԴ «Նիկոլ Դուման» կոմիտէին անունով ողջունելէ ետք ներկաները պարզեց հաւաքին նպատակը: Ան յայտնեց, որ Պուրն Զամուտի քաղաքապետութիւնը 1960-ական թուականներուն կառուցել տուած է ժողովրդային շէնքերը, ուր կան զանազան հարցեր, ինչպէս օրինակ՝ կարգ մը յարկաբաժիններ տակաւին քաղաքապետութեան անունով են ու չեն արձանագրուած անոնց իսկական սեփականատերերուն անունով: «Այս հարցերու լուսաբանման համար այսօր մեզի հետ են Պուրն Զամուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան, քաղաքապետարանի երկրաչափ Յակոբ Սիմոնեան եւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ու Պուրն Զամուտի քաղաքապետական խորհուրդի անդամ Լուի Նատեր», ըսաւ Միսեան եւ խօսքը փոխանցեց երկրաչափ Յակոբ Սիմոնեանին:

Քաղաքապետարանի երկրաչափը պատմական յետադարձ ակնարկով հակիրճ կերպով նշեց Պուրն Զամուտի մէջ քաղաքապետարանի շէնքե-

րու կառուցման սկզբնական քայլերը՝ 1955-ին Յայր Պօղոս Արիսի օրերէն սկսեալ: Սիմոնեան պարզեց ցարդ կառուցուած քաղաքապետարանի շէնքերու իրավիճակը՝ նշելով անոնց տոմարային պաշտօնական թուանշանները, ապա թուեց տակաւին առկախ մնացած կարգ մը մտահոգութիւններ, ինչպէս՝ նշեալ շէնքերու կարգ մը յարկաբաժիններու առուծախի թէ արձանագրութեան գծով թերի քայլեր, կարգ մը յարկաբաժիններու խանութներու վերածումը, կարգ մը յարկաբաժիններու իրար միացումն ու կամրջումը, առանց քաղաքապետարանի հաւանութեան կարգ մը յարկաբաժիններու առուծախի համաձայնագիրներու հարցեր եւ այլն:

Ապա խօսք առաւ քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան եւ թուեց քաղաքապետարանի յարկաբաժիններու արձանագրութեան թէ կառուցումի ապօրինի քայլերու առնչուող հարցերը եւ կոչ ուղղեց դիմելու քաղաքապետարան, որուն անձնակազմը տրամադիր է բոլոր միջոցներով լուծելու առկախ հարցերը: Հին ու նոր տոմարային թուանշաններու միջեւ հաւանական շփոթներէ խուսափելու համար, քաղաքապետ Պօղոսեան ներկաներուն թելադրեց իրենց բացակայ դրացիներուն եւ հարազատներուն փոխանցել այս տեղեկութիւնները եւ անյապաղ դիմել քաղաքապետարան՝ վերահաստատելու համար իրենց կալուածային սեփականութեան իրաւունքը:

Ապա քաղաքապետ Պօղոսեան լսեց ներկաներու արծարծած մտահոգութիւններն ու հարցերը եւ տուաւ անհրաժեշտ լուսաբանութիւններ՝ թելադրելով նաեւ դիմել քաղաքապետարան առկախ որեւէ հարցի գծով:

ՀԱՄԱՔՆՆԱԿՆԻ «ԲԱՐՁԵՆ ՍԻՆԻ» ԱԿՈՒՄԲԻՆ ՄԵՋ

Պուրճ Յամուտի քաղաքապետութեան նախաձեռնած՝ շրջանի բարեգարդման եւ մաքրութեան արշաւը աշխուժ թափով կը շարունակուի: Այս արշաւի նորագոյն կանգառը եղաւ ՅՅԴ «Բարձեն Սինի» ակումբը, ուր դէպի Տըքուանէ առաջնորդող կամուրջի աջ կողմը գտնուող Ժողովրդային շէնքերու բնակիչներ չորեքշաբթի, 14 օգոստոս



2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին հանդիպում-գրոյց մը ունեցան Պուրճ Յամուտի քաղաքապետութեան պատուիրակութեան հետ:

Շրջանի ՅՅԴ «Իշխան» կոմիտէին անունով թաղապետ Մկօ Խտըրլարեան ողջունեց ներկաները եւ բարի գալուստ մաղթեց Պուրճ Յամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանին ու անոր գլխաւորած պատուիրակութեան՝ շնորհակալութիւն յայտնելով շրջանի բարեգարդման գծով քաղաքապետութեան նախաձեռնած արշաւին համար: Ապա ան խօսքը փոխանցեց քաղաքապետարանի երկրաչափին:

Իր կարգին, երկրաչափ Յակոբ Սիմոնեան ներկաներուն թուեց Ժողովրդային շէնքերու եւ յատկապէս 5159 թուակիր կալուածի յարկաբաժիններուն եւ մերձակայքին գծով նկատուած թերութիւնները:

Ապա քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան ներկաներուն պարզեց իրենց բնակած յարկաբաժիններու, շէնքերու եւ փողոցներու բարեգարդման ու մաքրութեան գծով քաղաքապետութեան նախատեսած ու ծրագրած քայլերը, ինչպէս նաեւ՝ կալուածային սեփականութեան վաւերագրման գծով վերոնշեալ դիտումնաւոր թէ պատահական սխալներն ու թերութիւնները, տանիքներու օգտագործման իրաւասութիւնները, ապրիներու թէ փողոցներու մաքրութեան հարցը եւ յարակից հարցեր: Ապա քաղաքապետ Պօղոսեան լսեց ներկաներու արծարծած հարցերն ու մտահոգութիւնները՝ տալով անհրաժեշտ լուսաբանութիւններ:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՐԵԶԱՐԴՄԱՆ ԱՐՇԱՎԻ ԱՐԺԵՒՈՐՈՒՄ

Պուրճ Յամուտի բարեգարդման ու մաքրութեան գծով շրջանի քաղաքապետութեան ցարդ արձանագրած իրագործումներու հետապնդման ու գնահատման նախաձեռնարկներու շրջանում, ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Պուրճ Յամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան, կիրակի, 1 սեպտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:00-էն սկսեալ շրջեցան Պուրճ Յամուտի, յատկա-



պես՝ Արագածի թաղամասերուն մէջ՝ հասնելով մինչեւ Ժողովրդային շէքեր ու Պուրճ Զամուտը Տըքուանէին կապող կամուրջը:

Պատուիրակութիւնը մերթ ընդ մերթ կանգ առաւ Արագածի, ինչպէս նաեւ Պուրճ Զամուտի կամուրջին եւ Ժողովրդային շէքերու մուտքերուն՝ մօտէն ստուգելու եւ գնահատելու գունազարդուած բնակարաններու արտաքին տեսքը, տանիքներու թէ փողոցներու մաքրութիւնը, աղբերու վերացման աշխատանքի կարգաւորումները եւ յարակից իրագործումները՝ բարձր գնահատելով քաղաքապետութեան անձնակազմին ճիգերը:

Երեսփոխան Յակոբ Բագրատունի այս ծիրին մէջ վերահաստատեց Պուրճ Զամուտի կարելորութիւնը Լիբանանի, լիբանանահայութեան եւ առհասարակ համայն հայութեան համար:

Պուրճ Զամուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեան յայտնեց, որ քայլ առ քայլ իրագործուող այս նախաձեռնութիւնը արգասիքն է քաղաքապետութեան տարիներու բժախնդիր ու մեղուաշան աշխատանքին:

Իր կարգին կամուրջի սիւներու գունազարդման աշխատանքը ստանձնած Զրատ Պէպեճեան յայտնեց, թէ ընտրուած գոյները պայծառ են, կը խորհրդանշեն կեանք, երիտասարդութիւն, առողջութիւն, որուն ընդմէջէն Ժողովուրդը պիտի շրջի, պիտի ապրի պայծառ ու առողջ մթնոլորտը:

Քաղաքապետարանի բարգաւաճման գրասենեակի պատասխանատու Կարինէ Պալեան յայտնեց, թէ սիւներու գունազարդ ներդաշնակութիւնը կը խորհրդանշէ շրջանի տարբեր ու գանազան բնակիչներու համերաշխ գոյակցութիւնը:

**ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ - ԶԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
- ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ**

**ՀՅԴ ԿԵՂՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԱՅՅԵԼԵՑ
ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆԻ**

ՀՅԴ Լիբանանի Կեղոնական կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը 19 սեպտեմբեր 2019-ին այցելեց հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աունի՝ ողջունելու համար Մեծն Լիբա-



նանի հռչակման 100-ամեակի ձեռնարկներու մեկնարկին առիթով անոր կատարած յայտարարութիւնները:

ՀՅԴ պատուիրակութեան մաս կազմեցին Կեղոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեան, Զայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերգեան, Կեղոնական կոմիտէի անդամներ Յակոբ Զաւթեան, Էլի Թաշճեան ճորճ Սապունճեան եւ Արշօ Պալեան, «Ազդակ»-ի տնօրէն եւ գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեան եւ «Վանայ Ձայն»-ի տնօրէն Վիգէն Աւագեան:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն վերահաստատեց Մեծն Լիբանանի հռչակման 100-ամեակի ձեռնարկներու մեկնարկին առիթով իր կատարած յայտարարութիւնները եւ ըսաւ. «Օսմանեան կայսրութեան մասին իմ յայտարարութիւնս ճշմարտութիւն է»:

Ան աւելցուց. «Կարելի չէ անդրադառնալ Մեծն Լիբանանի հռչակման՝ առանց նշելու անոր նախօրեակին Լիբանանի մէջ տիրած պայմանները, յատկապէս Լեռնալիբանանի սովը, որ լիբանանցիներուն դժգոծուած սպանդ էր», յայտնեց ան:

Նախագահ Աուն շեշտեց յիշողութիւնը պահպանելու կարելորութիւնը եւ պատմական հակիրճ ակնարկով մը անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան ու մէջբերեց Էնվեր փաշայի կողմէ ճեմալ փաշային յղուած հետեւեալ խօսքը. «Հայերը սուրով ջարդեցինք, իսկ լիբանանցիները սովի պիտի ենթարկենք»:

Նախագահ Աուն անդրադարձաւ նաեւ Գահիրէի մէջ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի կատարած այն յայտարարութեան, թէ բիւզանդական շրջանին Թուրքիա ապրած է խաւարի տարիներ: Ան օրին պատասխանած է, որ եթէ երբեք պատմաճարտարապետական կոթողներ կան Պոլսոյ մէջ եւ արժանի են հիացմունքի, ապա անոնք բիւզանդացիներէն մնացած են:

Նախագահ Աուն ակնարկեց նաեւ ՀՅ Դաշնակցութեան հետ հեզասահ գործակցութեան եւ քաղաքական դաշինքին, որ 2005-էն ի վեր մինչեւ օրս ամբօրէն կ'ընթանայ:

Նախագահ Աուն ընդգծեց Լիբանանի դիմագրաւած տնտեսական ներկայ տագնապէն միասնականութեամբ դուրս գալու կարելորութիւնը: «Բոլորը պետք է ստանձնեն իրենց պատասխանատուութիւնները եւ յանձնառու մնան սեղմումի փուլին, որուն մէջ մուտք գործած է երկիրը», ըսաւ ան:

Նախագահ Աուն հաստատեց, որ երկրին սնանկացումին եւ լիբանանեան թղթօսկիի արժեզրկումին մասին կատարուած արշաւներն ու

տեղեկատուական մարզի քարոզչությունը վտանգաւոր են: Ան ընդգծեց, որ ներկայ տագնապէն դուրս գալու յաջողութիւնը հաստատ է:

ՀՅԴ պատուիրակութեան անունով խօսք առաւ երեսփոխան Բագրատունի.

«ՀՅ Դաշնակցութեան, Լիբանանի եւ արտերկրի լիբանանահայ մեր ընկերներուն, ինչպէս նաեւ ՀՅ Դաշնակցութեան մեծ ընտանիքին անունով, եւ իբրեւ ներկայացուցիչներ մեր ժողովուրդին կը հպարտանանք ձեր ազգային կեցուածքներով, որոնք հիմնուած են իրաւունքի եւ արդարութեան վրայ, ըլլան անոնք մեծ խնդիրներ, լիբանանեան եւ շրջանային մակարդակի վրայ, թէ պետականաշինութեան վերաբերող եւ փտածութենէ ու մսխումէ ձերբազատման քայլեր, ինչպէս նաեւ երկիրն ու քաղաքացին վերականգնելու միջոցներ:

Մենք ձեզի ճանչցած ենք նախքան հանրապետութեան նախագահի պաշտօնի ստանձնումը: Միշտ եղած էք եւ կը շարունակէք մնալ իրաւունքի, ճշմարտութեան, խիզախութեան, զօրութեան եւ անկեղծութեան խորհրդանիշը:

Մեծն Լիբանանի հռչակման 100-ամեակի ձեռնարկներուն մեկնարկին առիթով ձեր պատգամը լիբանանեան խիղճէն քիսած պատգամ մըն էր, որ պատմական ճշմարտութիւններ կը բովանդակէր: Դուք ճշմարտութիւնը ըսիք, իսկ ճշմարտութիւնը կ'ազատագրէ մարդ արարածն ու հայրենիքները, ինչպէս նաեւ մերձեցման եւ երկխօսութեան առիթներ կը ստեղծէ:

Դուք ճշմարտութիւնը խօսեցաք, իսկ ուրիշներ իրենց իսկութիւնը բացայայտեցին՝ մնայուն ուրացման, մշտական ահաբեկչութեան, սպառնալիքի եւ վարկաբեկումի իրականութիւնը: Մենք ձեզ ընտրեցինք Լիբանանի հանրապետութեան նախագահ, որովհետեւ ճշմարտութեան եւ զօրութեան խորհրդանիշն էք:

Մենք ձեր կողքին եղած ենք եւ պիտի մնանք, զօրակցելով ձեր թափած բոլոր ճիգերուն, որոնք կը միտին վերակառուցել լիբանանեան պետութիւնը, ինչպէս նաեւ միասնաբար յառաջ ընթանալ հզօր Լիբանանի կերտումին ի խնդիր:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՆԱԽԱԳԱՅ ԱՌԻՆ ԸՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՕՍԵՑԱԷ, ԻՍԿ ԷՐՏՈՂԱՆ ԸՄՈՒՄԱԿԵՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՆԳԱՓՈՒՆՈՒՄԸ»

Երեսփոխան Յակոբ Բագրատունի 2 սեպտեմբերին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, թէ նորօրեայ սուլթան Էրտողան անգամ մը եւս, այս անգամ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան ճամբով փաստեց, որ Թուրքիոյ հարցը ո'չ միայն հայութեան հետ է, այլեւ ճշմարտութեան եւ ճշմարտութիւնը յայտնողին:

«Այո՛, նախագահ Աուն ճշմարտութիւնը խօսած է: Իսկ Էրտողան անդրադարձած է այն «ճշմարտութեան», որ Օսմանեան կայսրութեան օրերէն մինչեւ ներկայ Թուրքիոյ օրերը կ'երկարի: Այլ խօսքով՝ անիկա պատմութեան խեղաթիւրման, ահաբեկչութեան եւ օսմանեան երազի վերականգնման «ճշմարտութիւն»-ն է: Արդեօք տակաւին պէ՞տք է հաւատալ լիբանանեան-թրքական պատմական եւ բարեկամական յարաբերութիւններուն», հարց տուաւ Յ. Բագրատունի:

Անդրադառնալով իսրայէլեան բռնարարներուն դէմ Դիմադրութեան կատարած գործողութեան՝ երեսփոխան Բագրատունի ընդգծեց, որ ինքնապաշտպանութիւնը սուրբ իրաւունք է, իսկ բռնարարներուն հակադարձութիւնը՝ ազգային պարտականութիւն: «Ո՛վ որ իր հայրենիքը, ժողովուրդը եւ ազգային արժանապատուութիւնը կը պաշտպանէ, հերոս է եւ ամենէն պատուաւորը», հաստատեց ան:

Նշենք, որ Յ. Բագրատունի «Օ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանի հայկական լրատուութեան ընդմէջէն ունեցաւ հարցազրոյց մը, որուն ընթացքին ըսաւ. «Մեզի համար զարմանալին Լիբանանի Հանրապետութեան նախագահին յայտարարութիւնը չէ: Ան խոր համոզումով նախապէս եւս քանիցս Նոյնիմաստ կեցուածքներ ունեցած է: Բնական է այդ մէկը: Չարմանալին սակայն այն է, որ լիբանանցիներ զարմանքով կ'ընկալեն Էրտողանի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութիւնը, որ կը թելադրէ պատմական ճշմարտութիւնը չխեղաթիւրել, որ կ'ըսէ, թէ նախագահ Աուն սխալ ընթացքի մէջ է, եւ անիկա հանրապետութեան նախագահին դէմ իսկապէս վարկաբեկիչ բառամթերք կը գործածէ, հակառակ անոր որ Էրտողան եւ անոր անձնակազմը շատ զգայուն են նմանօրինակ արտայայտութիւններու:

Հիմնական խնդիրը այն է, որ բոլոր անոնք, որոնք Լիբանանի եւ Թուրքիոյ միջեւ բարեկամական կամ պատմական յարաբերութիւններու կը հաւատան, ահա անգամ մը եւս ոսկիէ սպասի վրայ հրամցուեցաւ Լիբանանի հանրութեան, որ ճշմարտութիւնը ոչ մէկ կապ ունի Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Էրտողանի եւ առհասարակ թրքական քաղաքական մտածողութեան հետ», ըսաւ ան:

Յ. Բագրատունի յայտնեց նաեւ, որ այս պարագային խնդիրը Հայոց ցեղասպանութեան չէ կապած, այլ՝ արաբական աշխարհին հետ կապուած է եւ ուղղակիօրէն կապ ունի պատմութեան հետ հաշտուելու քայլին: «Այն ինչ որ կատարուեցաւ Թուրքիոյ կողմէ ո'չ միայն դատապարտանքի առիթ կը ստեղծէ, այլ նաեւ՝ Լիբանանի մօտ անհր-

րաժեշտություն կը ստեղծե, որ անիկա վերանայման ենթարկե այն յարաբերությունները, որոնք կ'ենթադրուին բարեկամական ըլլալ: Անպայմանօրէն չեմ խօսիր տնտեսական եւ այլ յարաբերություններուն մասին, սակայն յստակ է, որ Թուրքիա մը, Օսմանեան կայսրութեան ժառանգորդ մը, Էրտողանը՝ նոր օրերու սուլթանը եւ անոր մեծամիտ կեցուածքները ոչ մէկ ձեւով քաղաքական-դիւանագիտական ընդհանուր մտածողութեան մէջ տեղ կրնան ունենալ», հաստատեց Յ. Բագրատունի:

Ան իր հարցազրոյցի աւարտին շեշտեց, որ Լախագահ Աուն ճշմարտութիւնը խօսեցաւ, իսկ Էրտողան շարունակեց պատմութեան նենգափոխումը, ահաբեկչական երկիր ըլլալու տրամաբանութիւնը եւ Օսմանեան հին երազները վերականգնելու վճռակամութիւնը:

ԴԵՍՊԱՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ «ՇԱՂՈՅԵԱՆ»



Երկուշաբթի, 4 մարտի կեսօրուան ժամը 12:00-ին, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբեկեան՝ ընկերակցութեամբ նոր երրորդ քարտուղար Դաւիթ Ալավերտեանի եւ առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ ռազմական կցորդ գնդապետ Ալեքսան Մուշեղեանի, այցելեց «Շաղոյեան» կեդրոնին մէջ գործող «Ազդակ»-ի խմբագրատուն, «Վանայ ձայն» ձայնասփիւռի կայան, ինչպէս նաեւ հանդիպում ունեցաւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամներուն հետ:

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին հետ կայացած հանդիպումին ընթացքին, որուն մասնակցեցաւ նաեւ ՀՀԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պչաքճեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբեկեան նախ ծանօթացուց իրեն ընկերակցողները, անդրադարձաւ անոնց տանելիք աշխատանքին: Ան հաստատեց, որ կը գիտակցի Դաշնակցութեան ունեցած դերակատարութեան՝ անելցնելով, թէ Հայաստանի վերանկախացումէն առաջ անիկա ունեցած է դեսպանի դերակատարութիւնը: Դեսպանը վստահեցուց, որ իր կարելին

պիտի ընէ աջակցելու լիբանանահայութեան:

Ապա խօսք առաւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ հաստատեց, որ «Շաղոյեան»-ը նաեւ դեսպանատան կը պատկանի, ինչպէս որ դեսպանատունը կուսակցութեան համար տուն մըն է հայրենիքի մէջ:

Հանդիպումին ընթացքին ՀՀԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պչաքճեան անդրադարձաւ համահայկական տարբեր հարցերու, որոնց գծով անհրաժեշտ նկատեց երկխօսութիւնն ու խորհրդակցությունները, որպէսզի լուծման եզրեր գտնուին:

Դեսպանը «Վանայ ձայն»-ի մէջ հանդիպում ունեցաւ կայանի տնօրէն Վիգէն Աւագեանին, ինչպէս նաեւ անձնակազմին հետ ու ծանօթացաւ տարուած աշխատանքին:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ՀԱՄԱՂԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Չբօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեան, ընկերակցութեամբ Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեանի, 3 յունուարին այցելեց Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Պշարա Ասմարի:

Հանդիպումին ընթացքին ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին եւ Հայկական երեսփոխանական պլոքին անունով զօրակցութիւն յայտնելեցաւ՝ Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութեան կազմակերպած ընդհանուր գործադուլին:

Հանդիպումէն ետք Ա. Կիտանեան յայտնեց, որ այս քայլը բաւական ուշ առնուած է՝ անելցնելով, որ ինք քանի մը առիթներով թէ՛ Ասմարի հետ հանդիպումներուն ընթացքին, թէ՛ կատարած հարցազրոյցներուն եւ յայտարարութիւններուն ընդմէջէն կոչ ուղղած է լիբանանցիներուն շարժելու:

Նախարար Կիտանեան շեշտեց, որ ընդհանուր գործադուլին յանձնառու չմնալ կը նշանակէ անտարբեր ըլլալ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԱԿՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ

Հիւսիսային Լիբանանի ղեկավարներուն կատարած իր այցելութեան շրջագիծին մէջ, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի, Ազգային առաջնորդարանի տնօրէն Պարոյր Տէր Ղուկասեանի եւ Ազգային Նուպարեան-Խրիմեան վարժարանի



տնօրեն Վաչէ Զարմանտայեանի, 4 յունուարին այցելեց Պնաշի, ուր հանդիպում մը ունեցաւ Մարատա հոսանքի ղեկավար Սլէյման Ֆրենժիէի հետ:

Ֆրենժիէի հետ տեսակցութիւնը ծանօթացման հանդիպում էր, որ նաեւ եղաւ առիթ մը՝ քննարկելու երկրին ընկերային եւ քաղաքական խնդիրները:

Քննարկուեցան նաեւ հիւսիսային Լիբանանի քրիստոնէաներուն իրավիճակը եւ քաղաքական ուժերուն ու եկեղեցւոյ միջեւ համագործակցութեան կարելիութիւնը:

Հանդիպումը եղաւ առիթ մը նաեւ շեշտելու տարբեր համայնքներուն միջեւ երկխօսութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Հայկական պատուիրակութիւնը այցելեց նաեւ Անկախութեան շարժումի նախագահ, երեսփոխան Միշել Մուաուատի, որուն հետ քննարկեց շրջանի հարցերը:

«ԱՊՐԻԼ 24»-Ը ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԻ ՕՐ ՀՈՉԱԿԵԼՈՒ ՕՐԻՆԱԳԻԾ՝ ՓԱՂԱՆԳԱԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Կեդրոնական կոմիտէի անդամ Վիգէն Աւագեան 11 յունուարին «Շաղգոյեան» կեդրոնին մէջ ընդունեցին Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայելը, որուն ընկերակցեցաւ Փաղանգաւոր կուսակցութեան մէկ



պատուիրակութիւնը: Պատուիրակութեան մաս կազմեցին երեսփոխան Էլիաս Յանքաշ, Փաղանգաւոր կուսակցութեան ընդհանուր քարտուղար Նազար Նաճարեան, կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ Փիեռ Ժալըխ, կուսակցութեան Լեռնալիբանանի պատասխանատու Միշել Հըրաուի եւ իրաւաբանական հարցերու խորհրդրատու Լարա Սաատէ:

Հանդիպումէն ետք երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց, որ հանդիպումին ընթացքին քննարկուած են երկրին տնտեսական կացութիւնը եւ ժողովուրդի ապրուստին վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ կառավարութեան կազմութեան երկար հոլովոյթը:

Իր կարգին, երեսփոխան Սամի Ժեմայել շեշտեց, որ Փաղանգաւոր կուսակցութեան եւ Դաշնակցութեան միջեւ յարաբերութիւնը պատմական է՝ հաստատելով, որ ինք կը փափաքի այդ յարաբերութիւնը պահպանել՝ անկախ ընտրութիւններէն եւ կարգ մը հարցերու շուրջ տարակարծութիւններէն: Ժեմայել նշեց, որ հանդիպումին ընթացքին քննարկած են հիմնական երկու հարցեր, որոնցմէ առաջինը Լիբանանի ներկայ իրավիճակն է, որ պէտք չէ նոյն ընթացքով շարունակուի: Իսկ երկրորդը, որուն մասին քննարկումներ կատարած են, խորհրդարանին ներկայացուելիք օրինագիծ մըն է: «Նախքան այդ օրինագիծին խորհրդարան ներկայացումը, ուզեցինք զայն ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին առաջարկել:

Օրինագիծին հիման վրայ Ապրիլ 24-ը Լիբանանի մէջ պիտի հռչակուի Ցեղասպանութեան յիշատակումի օր, որուն ընթացքին կը յիշուին Հայոց ցեղասպանութիւնը եւ Լեռնալիբանանի սովը, որոնց ենթարկուեցան հայ, ասորի, քաղղէացի, մարոնի եւ շիի փոքրամասնութիւնները, ինչպէս նաեւ բոլոր անոնք, որոնք հալածանքի ենթարկուեցան Լիբանանի դիմագրաւած այդ դժուար ժամանակաշրջանին ընթացքին», շեշտեց Ժեմայել:

Ան աւելցուց, որ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ողջունեց օրինագիծը՝ հաստատելով, որ օրինագիծին գծով նկատի պիտի առնուին երեսփոխան Յ. Բագրատունիի առաջարկած բարեփոխումները:

ԹԵՐԶԵԱՆ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԴԵՍՊԱՆ ԱԹԱԲԷԿԵԱՆԻ

Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան 23 յունուարին այցելեց Հայաստանի դեսպանատուն, ուր հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեանի հետ:

Ծանօթացման բնոյթ ունենալու կողքին, հան-



դիպուվող ուներ նաև աշխատանքային բնույթ: Չանդիպումին ընթացքին ընդգծուեցաւ լիբանանեան-հայկական յարաբերութիւններու ամրապնդումին ընդմէջէն Լիբանանի եւ Չայաստանի շահերը պաշտպանելու կարելորութիւնը:

11 ապրիլին, Լիբանանեան-հայաստանեան բարեկամութեան խորհրդարանական յանձնախումբը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմեն Չայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան եւ երեսփոխան Սելիմ Աուն, այցելեցին Լիբանանի մէջ Չայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեանին: Այս այցելութիւնը տրուեցաւ Լիբանանեան-հայաստանեան բարեկամութեան խորհրդարանական յանձնախումբի աշխատանքներու ծիրին մէջ եւ կը միտեր աշխուժացնել երկու խորհրդարաններուն միջեւ գործակցութիւնը:

Չանդիպումին ընթացքին լուսարձակի տակ անուուեցաւ անհրաժեշտութիւնը ստեղծելու ռազմավարութիւն մը, որուն նպատակն է ստեղծել ամուր ու գործօն կամուրջ մը երկու երկիրներու խորհրդարաններուն միջեւ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՆ ՊՈՒՆԱՐԻՒ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան 30 յունուարին այցելեցին Լիբանանի մէջ Սեուտական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պու-

խարիի, որուն հետ քննարկեցին լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:

Չանդիպումին ընթացքին քննարկուեցան նաև լիբանանեան-սեուտական երկկողմանի յարաբերութիւնները՝ ընդգծելով փոխադարձ գործակցութիւնը ամրապնդելու կարելորութիւնը:

ԴԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Երեսփոխան Յակոբ Բագրատունի «Շաղզոյեան» կեդրոնին մէջ 12 փետրուարին ընդունեց Լիբանանի մէջ Դանիոյ դեսպան Մերիթ Եուլլը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային հարցեր: Դեսպանը միաժամանակ կը վարէ Դանիոյ դիւանագիտական յարաբերութիւնները Սուրիոյ եւ Յորդանանի մօտ, իսկ նախապէս իբրեւ Քիւեյի մէջ դեսպան, նաև համատեղութեան կարգով եղած Է Վրաստանի եւ Չայաստանի դեսպան:

Մէկ ժամ տեւած հանդիպումը առիթ մը եղաւ անդրադառնալու շրջանը յուզող զանազան խնդիրներուն՝ Սուրիոյ տագնապ, պաղեստինցի ժողովուրդի դիմագրաւած դժուարութիւններ, սուրիացի տեղահանուածներու հարց եւ լիբանանեան իրավիճակ:

Յատուկ անդրադարձ կատարուեցաւ նոր կառավարութեան կազմութենէն ետք երկրի տնտեսական կայունացման, փտածութեան կանխարգիլման, կիններու եւ երիտասարդութեան դերի ուժեղացման, ինչպէս նաև մարդկային իրաւունքներու հարցերուն:

Հայ-դանիական պատմական յարաբերութիւններուն քաջածանօթ ըլլալով, դեսպան Եուլլ յատուկ հետաքրքրութիւն ցուցաբերեց Լիբանանի հայութեան եւ ՀՀ Դաշնակցութեան նկատմամբ, որուն մասին լայնօրէն անդրադարձաւ Բագրատունի:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐՑԱԻՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի «Շաղզոյեան» կեդրոնին մէջ ընդունեց Արցախի պատուիրակութիւնը, որուն մաս կազմեց Արցա-

խի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեան, Արցախի Շահումեան շրջանի վարչական կազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսեան եւ Մերձաւոր Արեւելքի մէջ Արցախի Հանրապետության մնայուն ներկայացուցիչ Կարօ Զեպապճեան:

Հանդիպումին ընթացքին երեսփոխան Բագրատունի անդրադարձաւ լիբանանահայութեան իրականութեան:

Ըննարկուեցան նաեւ արցախեան վերջին իրադարձութիւնները եւ յատկապէս լիբանանահայութեան ներգրաւուածութիւնը Արցախի հզօրացման աշխատանքներուն, ինչպէս նաեւ երկկողմանի գործակցութեան ամրապնդման եղանակներուն:

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ «ՇԱՂՉՈՅԵԱՆ» ԿԵՂՐՈՆ



ՀՀԴ Լիբանանի կեղրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի 10 մայիսին իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը իրանահայ համայնքի պատասխանատուներէն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային կեղրոնական վարչութեան անդամ եւ Իրանի թեմական խորհուրդներու մօտ Կեղրոնական վարչութեան կապ թովմաս թովմասեանի, Սպահանի հայոց թեմի թեմական խորհուրդի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ Սպահանի հայոց թեմի կրօնական խորհուրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի:

Հանդիպումին իրանահայ ազգայինները զեկուցեցին համայնքի աշխատանքներուն, երկրի պայմաններուն եւ թեմերու տարած գործունեութեան մասին: Ապա խորհրդակցութիւնները կեղրոնացան շրջանին վերաբերող տնտեսաքաղաքական իրադարձութիւններուն վրայ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԶՈՒՊԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ

ՀՀԴ Լիբանանի Կեղրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, «ՇաղՉոյեան» կեղրոնի իր

գրասենեակին մէջ 23 մայիսին ընդունեց Լիբանանի մէջ Զուպայի դեսպան Ալեքսանտր Փիլիքըր Մորական, որուն հետ քննարկեց Լիբանանի եւ Զուպայի միջեւ քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւններն ու զանոնք զարգացնելու կարելիութիւնները:

Այցելութեան ընթացքին դեսպանին առաջարկով երեսփոխան Բագրատունի լայնօրէն անդրադարձաւ Լիբանանի հայութեան իրավիճակին, ՀՀ Դաշնակցութեան անցեալին եւ դերակատարութեան:

Անդրադարձ կատարուեցաւ նաեւ շրջանային կացութեան:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ ԱԹԱՔԷԿԵԱՆԸ



13 օգոստոսին «ՇաղՉոյեան» կեղրոն այցելեց եւ ՀՀԴ Լիբանանի Կեղրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի հետ հանդիպում ունեցաւ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաքէկեան:

Դեսպան Աթաքէկեան խօսեցաւ Հայաստանի Հանրապետութիւն-Լիբանան միջպետական կապերու ուղղութեամբ իրականացուող վերջին աշխատանքներուն մասին, որմէ ետք խորհրդակցութիւնները ընթացան Լիբանանի հայութեան առնչւած ընդհանուր հարցերուն վերաբերեալ:

Յակոբ Բագրատունի վերահաստատեց կուսակցութեան ամբողջական զօրակցութիւնը Պէյրութ-Երեւան կապերու զարգացման ուղղութեամբ մշակուած ծրագիրներու իրագործման գծով:

ԵՐԵՍՓՈՒՅԱՆ Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՑԵԼԵՑ ԱՊՊԱՍ ԻՊՐԱՀԻՄԻ

Երեսփոխան Յակոբ Բագրատունի 4 մարտին այցելեց Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գօրավար Ապպաս Իպրահիմի:

Հանդիպումն էտք Յ. Բագրատունի յայտնեց, որ Իպրահիմի հետ քննարկած է լիբանանեան իրադարձութիւններն ու երկրին ապահովական կացութիւնը:

Երեսփոխան Բագրատունի նշեց, որ հանդիպումին ընթացքին քննարկուած են հայ համայնքը յուզող հարցեր, ինչպէս նաեւ սուրիացի տեղահանուածներու տունդարձին վերաբերող մանրամասնութիւններ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՉԱՏ ՀՈՍԱՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ «ՇԱՂՈՅԵԱՆ»

Երեսփոխան Յակոբ Բագրատունի 7 մարտին «Շաղոյեան» կեդրոնին մէջ ընդունեց Ազգային ազատ հոսանք կուսակցութեան հիւսիսային Լեռնալիբանանի եւ Պէյրութ Ա.-ի մէջ ընդգրկած գաւառներու աշխատանքը համակարգող Հիշամ Զանժը՝ ընկերակցութեամբ անոր օգնականին՝ Ասատ Սաուայայի, Ազգային ազատ հոսանք Մեթնի պատասխանատու Ապոս Լաթիֆի, Ժպէլի պատասխանատու Ատիպ Ժըպրանի, Քերուանի պատասխանատու Ժուլիեն Հատտատի եւ Պէյրութ Ա.-ի պատասխանատու Իմատ Ժարայի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան գաւառներուն մէջ գործադրուելիք բարգաւաճման ծրագիրները, փոխադարձ գործակցութիւնը, ինչպէս նաեւ երկրին դիմագրաւած տնտեսական դժուարութիւններն ու գանոնք շրջանցելու նպատակով կուսակցութիւններուն դերակատարութիւնը:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԸԶՊԱԼԼԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ



Երեսփոխան Յակոբ Բագրատունի 29 մարտին «Շաղոյեան» կեդրոնի իր գրասենեակին մէջ ընդունեց Հրզպալլայի մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին խորհրդարանի հարցերու պետական նախարար Մահմուտ Քումաթի, Մոհամետ Սայիտ Խանսա եւ տոքթ. Ալի Տահեր՝ ներկայութեամբ Ազգային կուսակցութիւններու եւ

քաղաքական ուժերու համախմբումին մէջ ՀՅԴ-ի ներկայացուցիչ Պարոյր Տեր Ղուկասեանի:

Հրզպալլայի պատուիրակութիւնը շնորհաւորեց Յ. Բագրատունին՝ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ վերընտրութեան առիթով:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Լիբանանի քաղաքական իրադարձութիւնները:

Հանդիպումը աւարտեցաւ ընդգծելով երկու կողմերուն միջեւ քաղաքական յարաբերութիւններուն եւ գործակցութեան կարելորութիւնը, ինչպէս նաեւ լիբանանեան քաղաքական կեանքի, Լիբանանի ու լիբանանցիներու շահերուն նպաստող բոլոր յանձնառութիւններուն պարագային համադրումի աշխատանք կատարելու անհրաժեշտութիւնը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ զբօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեան 3 ապրիլին այցելեցին վարչապետ Սաատ Հարիրիի, որուն հետ քննարկեցին լիբանանեան քաղաքական բեմը յուզող իրադարձութիւնները:

Հանդիպումն էտք երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ վարչապետ Հարիրիին բարի գալուստ եւ ապաքինում մաղթած են, ինչպէս նաեւ քննարկած են ընդհանուր հարցեր:

12 յուլիսին երեսփոխան Բագրատունի եւ նախարար Կիտանեան դարձեալ այցելեցին Հարիրիի: Քննարկուեցան երկրին քաղաքական բեմը յուզող իրադարձութիւնները:

ՀՅԴ-ԸՆԿԵՐՎԱՐ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեան եւ Կեդրոնական կոմիտէի անդամներ Րաֆֆի Ազգարեան, Յակոբ Հաւաթեան եւ Էլի Թաշճեան, 18 ապրիլին «Շաղոյեան» կեդրոնին մէջ ընդունեցին Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան

մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին երեսփոխան Յատի Ապուլ Յըսըն, Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ընդհանուր քարտուղար Չաֆեր Նասեր, կուսակցութեան կեդրոնական խորհուրդի անդամներ Մոհամետ Պասպուս եւ Ուալիտ Սֆէյր, ինչպէս նաեւ Ժողովրդավարական հանդիպում երեսփոխանական պլոքի նախագահ, երեսփոխան Թայմուր Ժոմպլաթի խորհրդատու Յուսամ Արապ:

Հանդիպումէն ետք տրուած մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին երեսփոխան Յ. Բագրատունի ողջունեց Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան պատուիրակութիւնը՝ անելցնելով, որ հանդիպումին ընթացքին վերոյիշած են երկու կուսակցութիւններուն միջեւ պատմական յարաբերութիւնները, որոնք տասնեակ տարիներու յարաբերութիւններ են եւ հիմնական երեք յատկանիշներէ կը բաղկանան՝ պատմական եւ բարեկամական յարաբերութիւններ, քաղաքական յարաբերութիւններ եւ գաղափարախօսական յարաբերութիւններ:

Իր կարգին, Ապուլ Յըսըն յայտնեց, որ ՀՅԴ-ի հետ եղբայրական կապեր գոյութիւն ունին, եւ այս փուլին խորհրդակցութիւնները անելի մեծ կարելորութիւն կը ստանան՝ նկատի ունենալով այն վայրը, ուր կը կայանան ժամանակաշրջանն ու բովանդակութիւնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի, չորեքշաբթի, 24 ապրիլին հանդիպում ունեցաւ Լիբանանի մէջ Սուրիոյ դեսպան Ալի Ապտել Զարիմ Ալիի հետ:

Անկախ քննարկուած քաղաքական հարցերէն հանդիպումը առիթ մը եղաւ վերոյիշելու Յեղասպանութեան օրերուն տեղահանուած հայերու նկատմամբ սուրիացի ժողովուրդին ցուցաբերած վերաբերումին եւ այնուհետեւ մինչեւ այսօր, Սուրիոյ պետութեան կեցուածքին հայ ժողովուրդի իրաւունքներուն նկատմամբ:

Բագրատունի Սուրիոյ դեսպանին միջոցաւ ողջունեց սուրիական խորհրդարանին մէջ զանազան առիթներով դրսեւորուած հայանպաստ կեցուածքներ, որոնցմէ վերջինը՝ պատմութեան գիրքերուն մէջ Յեղասպանութեան նշումը:

Յիշենք, որ ապրիլ 24-ի երեկոյեան Սուրիոյ դեսպանատան հիւպատոս Ժամալ Նաժիպ ներկայ գտնուեցաւ մայրավանքին մէջ կայացած Յեղասպանութեան ոգեկոչման հանդիսութեան եւ դեսպանին անունով ծաղկեպսակ գետեղեց Նահատակաց յուշարձանին դիմաց:

**ՔՈՐԵԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ
Կ'ԱՅՑԵԼԷ «ՇԱՂՉՈՅԵԱՆ»**

Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ Լիբանան-Քորեա խորհրդարանի բարեկամութեան յանձնախումբի նախագահի իր հանգամանքով, 29 ապրիլին «ՇաղՉոյեան» կեդրոնի իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի մօտ Քորեայի նորանշանակ դեսպան Եոնկ Տայ Քոնը, որուն հետ քննարկեց Լիբանանի եւ Քորեայի միջեւ յարաբերութիւններն ու յաւելեալ գործակցութեան կարելիութիւնները թէ՛ խորհրդարանի, եւ թէ՛ տնտեսական ու զբօսաշրջական մարզերուն մէջ:

Հանդիպումը առիթ եղաւ նաեւ դեսպանին ներկայացնելու Լիբանանի հայութեան իրավիճակը եւ անոր դերակատարութիւնը Լիբանանի քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքին մէջ:

ՊԱՍԻԼ Կ'ԱՅՑԵԼԷ ԱՅՆՃԱՐ



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան, ՀՅԴ «Կարմիր Լեռ» կոմիտէն, Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խօշեան, ինչպէս նաեւ Այնճարի հոգեւորական, մշակութային, տնտեսական եւ ընկերային հեղինակութիւնները, 12 մայիսին «Սարգիս Չէյթեան» Ժողովրդային տան մէջ ընդունեցին Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլը, որուն ընկերակցեցան կենսոլորտի նախարար Ֆատի Ժրայսաթի, հանրապետութեան նախագահութեան հարցերու պետական նախարար Սելիմ Ժրայսաթի, արտաքին առեւտուրի պետական նախարար Հասան Մըրատ, երեսփոխաններ Միշէլ Տահեր եւ Սելիմ Աուն, երկրագործութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Լուիս Լահուտ:

Պասիլ Այնճարի մէջ բացումը կատարեց ճարտարարուեստի յատուկ շրջանին:

Այս առիթով «Սարգիս Չէյթեան» Ժողովրդա-

յին տան մէջ տեղի ունեցաւ յատուկ ձեռնարկ մը, որուն ընթացքին քաղաքապետ Վ. Խօշեան ողջունեց ներկաները՝ անդրադառնալով այն իրականութեան, որ հայ եւ լիբանանցի ժողովուրդները տուժած են օսմանեան բռնագրաւումէն:

Ան ակնարկեց նաեւ ՀՀ-ի կեցուածքներուն, որոնք միշտ կը զօրակցին երկրին օրինականութեան եւ յատկապէս հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի իշխանութեան:

Ապա իր խօսքը ուղղեց երեսփոխան Յ. Բագրատունի, որ ողջունեց Պասիլը՝ անոր յայտնելով, որ ան կը գտնուի իր տան մէջ՝ Այնճարի մէջ:

«Լիբանանի մէջ մենք պաշտօններու կարիք չունինք, այլ՝ դաշինքներու, որոնք փոխադարձ շահերու վրայ չեն հիմնուած, այլ՝ իրականութեան եւ ապագային», ըսաւ ան:

Յ. Բագրատունի նշեց, որ ՀՀ-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէն 7 մայիս 2005-էն ի վեր, այն օրէն, երբ զօր. Միշել Աուն Լիբանան վերադարձաւ՝ զօրակցեցաւ եւ կը զօրակցի անոր: «Մենք անոր միակ դաշնակիցն էինք, իսկ այսօր 2019-ին, մենք տակաւին ենք եւ պիտի մնանք դաշնակիցը Ազգային ազատ հոսանք կուսակցութեան եւ պիտի մնանք դաշնակիցը նախագահ Միշել Աունի, որ 7 մայիս 2005-էն ի վեր իր կեցուածքները փոփոխութեան չէ ենթարկած», ըսաւ երեսփոխան Բագրատունի:

Իր կարգին, Պասիլ յայտնեց, որ Այնճարը կը խորհրդանշէ Լիբանանի պատմութեան փուլերէն մէկը, որուն կրկնութիւնը չենք փափաքիր տեսնել: Ան վերահաստատեց երեսփոխան Բագրատունիի այն կեցուածքը, թէ Հայ յեղափոխական դաշնակցութիւնն է Ազգային ազատ հոսանքին միակ դաշնակիցը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՈԱՅԱ ՀԱՍԱՆԻ ԵՒ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒ ՎՊԱՅՈՎԱԿԱՆ ՄԱՐԶԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒՆ



ՀՀ-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտան-

եան, 24 մայիսին այցելեց ներքին գործոց նախարար Ռայա Հասանի, որուն հետ քննարկեց երկրի ապահովութեան ընդհանուր կացութիւնը, քաղաքապետութեանց հետ առնչուող խնդիրները, ինչպէս նաեւ պետական ամրապարկին առնչուող հարցեր:

Անդրադարձ կատարուեցաւ նաեւ հայահոծ շրջաններու կապուած կարգ մը խնդիրներու, որոնց գծով նախարար Հասան անմիջական լուծումներու նախաձեռնեց:

Ան տեսակցութիւններ ունեցաւ նաեւ ընդհանուր ապահովութեան սպասարկութեան Ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Ապպաս Իպրահիմի, Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Իմատ Օսմանի եւ բանակի գաղտնի սպասարկութեան պետ գնդապետ-զօրավար Անթուան Մանսուրի հետ՝ քննարկելով երկրի ապահովութեան ընդհանուր կացութիւնը, սուրիացի տեղահանածներու կապուած խնդիրներ, ինչպէս նաեւ պետական ամրապարկին մէջ զինուորական կառոյցներուն առնչուող հարցեր:

ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՅԵԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ



Երեսփոխան Բագրատունի 18 յունիսին այցելեց հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի:

Երկարատեւ հանդիպումի մը ընթացքին երեսփոխան Բագրատունի հանրապետութեան նախագահին հետ արծարծեց երկրի տնտեսական, քաղաքական եւ ընկերային խնդիրները: Ան նախագահին ներկայացուց ժողովրդային լայն զանգուածներուն մօտ հետզհետէ շեշտուող դժգոհութիւնը, որ կը վերաբերի երկրի ընկերային-տնտեսական վիճակին ու քաղաքական թատերաբեմի արկուած վիճակին՝ ակնկալելով, որ հանրապետութեան նախագահը անհրաժեշտ միջամտութիւնը կը կատարէ սրբազրելու ընդհանուր վիճակը եւ պետութեան վերադարձնելու հարցերը առանց ձգձգումի քննարկելու ու համա-

պատասխան որոշումները կայացնելու կեցուածքը:

Երեսփոխան Բագրատունի նախագահին փոխանցեց նաեւ պետական պաշտօններու եւ գանազան մարզերու համապատասխան վարչութեանց արագ նշանակման անհրաժեշտութիւնը՝ շեշտելով, որ հոն պէտք է յարգուի հայ համայնքի ներկայացուցչական իրաւունքը:

Հանդիպումը առիթ եղաւ կարծիքներու փոխանակման՝ քաղաքական հակադիր ուժերու միջեւ առողջ եւ անկեղծ յարաբերութեանց մշակման ի նկատի:

ԱՉՅԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ ՊԼՈՔԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ Կ'ԱՅՅԵԼԵ «ՇԱՂՈՅԵԱՆ»



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ զբօսաշրջութեան նախարար Ալետիս Կիտանեան 24 յունիսին «Շաղոյեան» կեդրոնին մէջ ընդունեցին Ազատագրում եւ բարգաւաճում երեսփոխանական պլոքի մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին երեսփոխաններ Անուար Խալիլ, Հանի Զպայսի եւ Իպրահիմ Ազար:

Հանդիպումէն ետք երեսփոխան Բագրատունի, որ պատիւը ունին ընդունելու Ազատագրում եւ բարգաւաճում երեսփոխանական պլոքի երեսփոխանները, որոնք ներկայացուցած են ընտրական նոր օրինագիծը, աւելցնելով, որ Կեդրոնական կոմիտէն երեք շաբթուան ժամկէտ պահանջած է Ազատագրում եւ բարգաւաճում երեսփոխանական պլոքէն՝ լաւապէս սերտելու համար այդ օրինագիծը:

Իր կարգին, Խալիլ յայտնեց, որ իրենց համար պատիւ է այցելել ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին, ինչպէս նաեւ ուրախ առիթ մըն է քննարկելու ընտրական նոր օրինագիծն ու անոր վերաբերող դիտողութիւնները՝ նկատի ունենալով խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի այն խորհուրդը, որ տրամաբանական չէ ընտրական օրէնքին վաւերացումը մետասաներորդ պահուն ձգել:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Երեսփոխան Յակոբ Բագրատունի, ընկերակցութեամբ երեսփոխանական գրասենեակի տնօրէն Րաֆֆի Մարգարեանի, 9 օգոստոսին այցելեց աշխատանքի նախարար Զամիլ Ապու Սլէյմանի, որուն հետ քննարկեց ընդհանրապէս երկրին մէջ տիրող ընդհանուր կացութիւնը եւ արձանագրուող բացասական իրավիճակէն դուրս գալու կարելիութիւնները:

Քննարկման նիւթ դարձաւ օտարախառակներու աշխատանքի արտօնագիրներու խնդիրը: Այդ գծով անհրաժեշտ նկատուեցաւ օրինականութեան սահմաններուն մէջ պահելով հանդերձ գործատերերու եւ օտարախառակներու աշխատանքի փոխգործակցութիւնը, նկատի ունենալ ընկերային յատուկ պարագաները եւ համապատասխան լուծումներ որոնելու անհրաժեշտութիւնը:

Նախարար Ապու Սլէյման յատուկ անդրադարձով վեր առաւ լիբանանահայ գործատերերու, պաշտօնէաներու եւ աշխատաւորներու կարողութիւններն ու երկրի վերելքին սատարելու անոնց նախանձախնդրութիւնը:

ԻՐԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ «ՇԱՂՈՅԵԱՆ»



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Կեդրոնական կոմիտէի անդամներ Մելիք Գարագաւորեան, Յակոբ Հաւաթեան եւ Ազգային ուժերու եւ կուսակցութիւններու համախմբումին մէջ ՀՀԴ-ի ներկայացուցիչ Պարոյր Տէր Ղուկասեան, 6 սեպտեմբերին «Շաղոյեան» կեդրոնին մէջ ընդունեցին Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մոհամետ Ժալալ Ֆիրուզնիան եւ անոր ընկերակցող պատուիրակութիւնը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան հայ եւ իրանցի ժողովուրդներուն միջեւ պատմական յարաբերութիւնները, ՀՀ Դաշնակցութեան եւ Իրանի միջեւ յարաբերութիւնները, շրջանին մէջ կայունութիւնը պահպանելու նպատակով Իրանի դերակատարութիւնը, Իսրայէլի դէմ Դիմադրու-

թեան ցուցաբերած զօրակցութիւնը, ինչպէս նաեւ լիբանանեան քաղաքական բոլոր ուժերէն նոյն հեռաւորութեան վրայ գտնուելու իրանի կեցուածքը:

ԵՐԵՍՓՈՒԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԻԱՆ ԶՈՒՊԻԶԸ



Յ. Բագրատունի «Շաղգոյեան» կեդրոնին մէջ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Իան Զուպիչը:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկրին քաղաքական, տնտեսական եւ ընկերային իրադարձութիւնները, յատկապէս քաղաքական կայունութիւնն ու տնտեսական բարեկարգումները, որոնց Լիբանանը կարիք ունի, եւ որոնք «Սետր»-ի խորհրդածողովին ընթացքին խոստացուած են տրամադրել Լիբանանին: Ըննարկուեցաւ նաեւ Լիբանան ապաստանած սուրիացի տեղահանուածներուն թղթածրարը:

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՖՈՒՇԷ ԱՅՅԵԼԵՑ ԵՐԵՍՓՈՒԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Պրուսօ Ֆուշէ Լիբանանի քաղաքական կողմերուն հետ հանդիպումներու ծիրին մէջ, մէկ ժամ տեւողութեամբ այցելութիւն մը տուաւ ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունիի:

Լիբանանի հայութեան եւ դերակատարութեան շուրջ ընդհանուր ակնարկէ մը ետք, լայնօրէն քննարկումի նիւթ դարձան Լիբանանի ներկայ կացութիւնը եւ անոր շարունակութեան պարագային աննախատեսելի հետեւանքները:

Թէ՛ դեսպանը եւ թէ՛ ԶՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը անհրաժեշտ նկատեցին, որ ներկայ ճգնաժամէն դուրս գալու լաւագոյն ձեւը երկխօսութեամբ եւ կառավարութեան արագ կազմութեամբ գոհացում տալն է ժողովրդային պահանջներուն՝ ստեղծելով վստահութեան դաշտ, առաջը առնելու համար յաւելեալ փլուզումի:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՎԱՀԱԳՆ ԱԹԱԲԷԿԵԱՆԸ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի Պուրճ Ճամուտի «Շաղգոյեան» կեդրոնին մէջ հանդիպում մը ունեցաւ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեանի հետ:

Մէկ ժամ տեւած հանդիպումին, լայն քննարկում կատարուեցաւ Լիբանանի մէջ արձանագրուող զարգացումներուն:

Բագրատունի նշեց, որ ՀՀ Դաշնակցութիւնը տարիներէ ի վեր ձայն բարձրացուցած է զանազան բեմերէ եւ քաղաքական ոլորտներու մէջ, ընդդէմ երկրին մէջ տարածուած ընկերային անարդարութեան, տնտեսական շահագործումին, փտածութեան եւ պետական հարստութեանց իւրացումին ու այսօր բնական եւ արդարացի կը գտնէ ժողովրդային պահանջները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՆԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ



ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի «Շաղգոյեան» կեդրոնին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Դանիոյ դեսպան Մերեթ Ճուիլը, որուն հետ մէկ ժամ տեւողութեամբ քննարկեց 17 հոկտեմբերէն ի վեր Լիբանանի զարգացումները:

Յ. Բագրատունի հանդիպում մը ունեցաւ նաեւ Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Չասիփքիսի հետ:

Խորհրդակցութեան առանցքը կազմեց վերջին ժամանակաշրջանին լիբանանեան թատերաբեմին վրայ արձանագրուող իրադարձութիւնները՝ շրջանային կացութեան ընդհանուր շրջագիծին մէջ:

**ՅՅԴ ԼԻՔԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ
ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԶԻՄԻՍԱԱՅԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ
ԿԱՏԱՐՈՒՂ ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեն խստօրեն կը դատապարտէ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններուն մէջ թրքական ուժերուն կատարած յարձակումները՝ նկատել տալով, որ տեղի ունեցած զինուորական գործողութիւնները կը խախտեն Սուրիոյ արաբական հանրապետութեան գերիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը, եւ ճամբայ կը հարթեն արաբական պետութեան բռնագրաւման:

Թրքական իշխանութիւնները այս գործողութիւններուն ընդմէջէն անգամ մը եւս ամբողջ աշխարհին կը փաստեն, որ Թուրքիա Օսմանեան կայսրութեան օրինական ժառանգորդն է եւ կ'իրագործէ բռնագրաւումի եւ տիրապետութեան նոյն տրամաբանութիւնը շրջանին մէջ, եւ չի յարգեր արաբական երկիրներուն սահմանները:

Այն ինչ որ կը պատահի այսօր, մեզ 100 տարի ետ կը տանի, դէպի այն մութ տարիները, որոնք ապրած են արաբական ժողովուրդները Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ:

ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեն միասնութեան կոչ կ'ուղղէ արաբական երկիրներուն եւ շրջանի ժողովուրդներուն՝ աջակցելու իրենց գոյութեան, տարածքային ամբողջականութեան եւ թոյլ չտալու Թուրքիոյ, որ պարտադրէ նոր հաւասարակշռութիւններ եւ օրակարգեր, որոնք Միջին Արեւելքի մէջ յաւելեալ բախումներու պատճառ կը դառնան:

**ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՆՈՅՆԻՍԿ ՍՈՒՐԻՈՅ
ՄԵԿ ՄԱՍԻՆ ԲՈՆԱԳՐԱՌՈՒՄԸ ՃԱՄԲԱՅ
ԿԸ ԶԱՐԹԵ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ
ԲՈՆԱԳՐԱՄԱՆ»**

Երեսփոխան Յակոբ Բագրատունի կատարեց հետեւեալ յայտարարութիւնը.

«Խաղաղութեան աղբիւր»-ը կը բխի ահաբեկչութեան պետութենէն: Թուրքիա կը ներթափանցէ սուրիական տարածք եւ կը բռնագրաւէ, մինչ «քաղաքակիրթ» աշխարհը կը դիտէ:

Ո՛չ դատապարտումը, ո՛չ ալ հաղորդագրութիւնները կը փոխեն բռնագրաւման եւ ահաբեկչութեան իրականութիւնը:

Պահանջուածը արաբական միասնական կեցածք է թրքական գաղութատիրութեան դէմ, ինչպէս նաեւ միասնական կեցուածք՝ արաբական շրջանի ժողովուրդներուն, որոնք տակաւին կը յիշեն օսմանցիներուն պատճառած աղետները եւ արաբական Ալեքսանտրէթի սանճաքին բռնագրաւումը:

Նոյնիսկ Սուրիոյ մէկ մասին բռնագրաւումը,

ճամբայ կը հարթէ բռնագրաւելու արաբական այլ տարածքներ եւ Օսմանեան կայսրութեան վերադարձին:

**ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԳԵԹ ԱՆԳԱՍՏՈՒՄՆ ՄԸ ԶԱՍԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ
ԹԵՐԱՑՈՂՆԵՐԸ»**

Երեսփոխան Յակոբ Բագրատունի իր դիմատետրեան էջին մէջ Լիբանանի անտառները հարածած հրդեհներուն առիթով կատարեց հետեւեալ գրառումը:

«Փա՛ռք ու պատիւ Քաղաքացիական պաշտպանութեան ուժերու անդամներուն, ողջո՛յն իւրաքանչիւր անհատի, որ նպաստեց հրդեհներու աղետի ահաւորութեան մեղմացման: Զեռու՛ ամբոխահաճութենէն եւ քաղաքական շահարկումներէն, պետութենէն գէթ անգամուան մը համար կը սպասենք պատժել յանցագործները եւ պատասխանատուութեան ենթարկել ու մատնանշել թերացումներուն պատասխանատուները:

«Մենք ձմրան սեմին ենք: Վաղը հաւանաբար հեղեղներու ականատես դառնանք...»:

**«ԼԻՔԱՆԱՆ՝ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ
ԵՒ ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆՑ ԶԱՅՐԵՆԻՔ
ԽՈՐԱԳԻՐՈՎ ԶԱՍԱԳՈՒՄԱՐ**

Անցնող երկուշաբթի, 14 եւ երեքշաբթի, 15 հոկտեմբերին «Յիլթոն Զապթուր» պանդոկին մէջ կայացաւ «Ալ Մաշրեք հանդիպում»-ի կազմակերպած առաջին համագումարը՝ «Լիբանան՝ երկխօսութեան եւ քաղաքակրթութեանց հայրենիք» խորագիրով:

Բացման նիստին հանդես եկաւ Լիբանանի Զանրապետութեան նախագահ գոր. Միշել Աուն: Զամագումարին կը մասնակցէին Լիբանանէն, Վատիկանէն, Գերմանիայէն, Զուլգարիայէն, Իրաքէն, Իրանէն, Շուէտէն, Մեծն Բրիտանիայէն, Միացեալ Նահանգներէն, Իստոնեգիայէն, Եգիպտոսէն, Սուրիայէն, Զոլանտայէն, Փաքիստանէն, Յորդանանէն, Պաղեստինէն աւելի քան հարիւր քրիստոնեայ եւ իսլամ պատուիրակներ:

Այս համագումարին, ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի արտասանեց խօսք մը, որուն մէջ շեշտեց, որ Լիբանանի անունը կը յիշենք, ինքնաբերաբար կը յիշենք պատգամ բառը, ազատութեան եւ արժեքներու պատգամը, բազմազանութեան մէջ համերաշխութեան պատգամը, այլազանութեան, յարգանքի եւ զիրար ընդունելու պատգամը:

«Ես՝ իբրեւ լիբանանահայ, քրիստոնեայ եւ արաբականութեան շատագով, կը հաւատամ մէկ ու միացեալ Լիբանանին, եւ միակ քաղաքացիու-

թիւնը, որ կը կրեմ, լիբանանեան քաղաքացիութիւնն է: Ես հպարտ եմ լիբանանեան իմ ինքնութեամբս, հայրենիքովս, եւ կ'աշխատիմ ու կը պայքարիմ պահպանելու համար այս Լիբանանը՝ պատգամ երկիր Լիբանանը, օրինակելի Լիբանանը, ինչպէս նաեւ մերձեցման եւ երկխօսութեան Լիբանանը», ըսաւ ան:

ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՑ ԺՈՄԿՆԱԹԻՆ

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի 13 նոյեմբերին հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոմայլաթի հետ, որուն ցաւակցութիւն յայտնեց Ալա Ապու Ֆախըրի նահատակութեան առիթով:

Երեսփոխան Բագրատունի բարձր գնահատեց ինքնագապումի ենթարկուելու, լարուածութիւնը մեղմացնելու եւ երկրին կայունութեան գրաւակաւը պետութիւնը նկատելու Ժոմայլաթի ուղղած կոչը:

ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԾԱՂԿԵՊՍԱԿ ՄԸ ԶԵՏԵՂԵՑ ՓԻԵՌ ԺԵՄԱՅԷԼԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Լիբանանի անկախութեան 76-ամեակին առիթով, ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երեկ իշխանութեան երեք պետերուն անունով ծաղկեպսակ մը գետեղեց անկախութեան կերտիչներէն՝ Փաղանգաւոր կուսակցութեան հիմնադիր Փիեռ Ժեմայէլի յուշարձանին, Պիքֆայա:

Ծաղկեպսակի գետեղման արարողութեան ներկայ էին նաեւ հանրապետութեան նախկին նախագահ Ամին Ժեմայէլ, Պիքֆայայի եւ Մհայտէի քաղաքապետ Նիքոլ Ժեմայէլ, Միսքի եւ Պիքր-սաֆի քաղաքապետ Միշել Նասըր, գերապայծառ Փիեռ Նահրի եւ այլ անձնաւորութիւններ:

Այս առիթով երեսփոխան Բագրատունի յայտնեց, որ ինք այսօր իր պարտականութիւնը կը կատարե՝ աւելցնելով, որ ինք անձամբ փափաքած է Լիբանանի հանրապետութիւնը ներկայացնել Փիեռ Ժեմայէլի արձանին մօտ, որովհետեւ ան միայն անկախութեան կերտիչներէն չէ, այլ՝ Լիբանանի ակներեւ դէմքերէն մէկը:

Իր կարգին, Ամին Ժեմայէլ մաղթեց, որ ժողովուրդին կամքն ու հաւատքը յաղթանակէ՝ աւելցընելով, որ անիկա է անկախութեան իսկական ճամբան:

Ժեմայէլ յոյս յայտնեց, որ ժողովուրդին պահանջները լսելի դառնան եւ անոր ըմբոստութիւնը փրկէ Լիբանանը:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Կ'ԸՆՏՐՈՒԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐՈՒ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՐԴԻ ԱՆԴԱՄ

Նախագահութեամբ Նեպիի Պըրրիի, խորհրդարանը 6 մարտին գումարեց օրէնսդրական իր լիազումար նիստը, որուն ընթացքին ընտրեց նախագահներու եւ նախարարներու դատավարութեան Դատական գերագոյն խորհուրդի 7 անդամները:

ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի 95 քուէներով ընտրուեցաւ նախագահներու եւ նախարարներու դատավարութեան Դատական գերագոյն խորհուրդի անդամ:

ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՖԷՐ ՊԱՏՐԻԱՐԵԻ ՎԱԽՃԱՆՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի՝ ընկերակցութեամբ Հայկական երեսփոխանական պլոքի անդամներ Յակոբ Թերզեանի եւ Ալեքսանտր Մաթոսեանի, 14 մայիսին այցելեց Պքերքէ:

Մարոնի համայնքի նախկին պատրիարք Նասրալլա Աֆէրի վախճանումին առիթով ՀՀԴ պատկերակութիւնը ցաւակցութիւն յայտնեց Ռայի պատրիարքին:

Երեսփոխան Յ. Բագրատունի յայտնեց, որ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն եւ Հայկական երեսփոխանական պլոքը ցաւակցութիւն կը յայտնեն ազգային դէմք մը նկատուող Աֆէրի պատրիարքին վախճանումին առիթով:

ՀԱՅ ԴԱՏ

ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՆԱՄԱԿ ՄԸ ՅՂԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Երեսփոխան Յակոբ Բագրատունի ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին եւ Հայկական երեսփոխանական պլոքին անունով 8 փետրուա-

րին նամակ մը յղեց Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնին՝ գնահատելով Ֆրանսայի մէջ Հայկական կազմակերպութիւններու աշխատանքները համակարգող խորհուրդի տարեկան ընթրիքին ընթացքին Ապրիլ 24-ը Ֆրանսայի մէջ Հայոց ցեղասպանութեան յիշատակման ազգային օր հռչակելու անոր 2017-ի ընտրական խոստումին վերահաստատումը:

Բագրատունի յայտնեց, որ այդ խոստումին կատարումը տրամաբանական շարունակութիւնը պիտի ըլլայ 2001-ին Ֆրանսայի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ պիտի ամրապնդէ հայ ու ֆրանսացի ժողովուրդներուն միջեւ գոյութիւն ունեցող կապը:

Ան աւելցուց, որ Ապրիլ 24-ի Հայոց ցեղասպանութեան ազգային օր հռչակումը պիտի ըլլայ արդարութեան, ճշմարտութեան եւ ցեղասպանութեան կանխարգիլման պայքարին համար յաղթանակ մը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԽԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԸ ԿՈՉ Կ՛ՈՒՂԴԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՊՐԻԼ 24-Ը ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՍԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐ



Հայկական երեսփոխանական պլոքը 18 ապրիլին գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի եւ ներկայութեամբ պլոքի անդամ երեսփոխաններ Յակոբ Թերզեանի եւ Ալեքսանտր Մաթոսեանի, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի:

Հայկական երեսփոխանական պլոքը կոչ ուղղեց Լիբանանի կառավարութեան Ապրիլ 24-ը յայտարարելու Հայոց ցեղասպանութեան յիշատակի ոգեկոչման լիբանանեան ազգային օր:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ ընդհանուր առմամբ երկրին տնտեսական կացութիւնը, ի մասնաւորի՝ 2019-ի պետական ամսվարկը, ինչպէս նաեւ անոր բովանդակելիք կրճա-

տումի քայլերը՝ նուազեցնելու համար նիւթական բացը եւ ուղղելու պետական գանձարկի հաշիւները: Պլոքը հաստատեց լիբանանցի քաղաքացիին, յատկապէս համեստ եւ միջին դասակարգերուն, ինչպէս նաեւ սահմանափակ եկամուտ ունեցող քաղաքացիներուն ապրուստը պահպանելու կարեւորութիւնը:

Փոածութեան դէմ մղուած պայքարի շրջագծին մէջ, հայկական երեսփոխանական պլոքը զօրակցութիւն յայտնեց համապատասխան իշխանութիւններուն որդեգրած բոլոր քայլերուն՝ հաստատելով, որ պլոքը ամէն ջանք ի գործ պիտի դնէ օժանդակելու այդ պայքարին՝ վարչական գործունեութիւնը արդիւնաւետ դարձնելով, քաղաքացիին ծառայելով, օրէնքը գործադրելով եւ պետական վարչութիւններու գործառնութիւններուն մէջ պարկեշտութեան եւ թափանցիկութեան յանձնառու մնալով:

Հայկական երեսփոխանական պլոքը վերահաստատեց բնակարանային վարկերու ապահովումը վերաշխուժացնելու անհրաժեշտութիւնը:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՑԵԼԵՑ ՈՒՄՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ



Ուաշինկթըն իր կեցութեան ընթացքին ՀՀԴ Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի այցելեց Հայ դատի Ուաշինկթընի գրասենեակ եւ տեսակցեցաւ գրասենեակի պատասխանատուներուն հետ, որոնք հետ քննարկեց Միացեալ Նահանգներ-Լիբանան խորհրդարանական համագործակցութեան ընդհանուր ուղղութիւնները եւ լիբանանեան պատուիրակութեան գործուղման ընթացքին արծարծուած հարցերը:

Ապա Բագրատունի դասախօսութիւն տուաւ Հայ դատի Ուաշինկթընի գրասենեակին կողմէ կազմակերպուած վարժողական ծրագիրին հետեւող երիտասարդներուն, որոնք կը գումարէին սեմինարային վերջին նիստը: Ան դասախօսեց Լիբանանի պետական կառոյցներուն, քաղաքական իրավիճակին եւ արտաքին քաղաքականութեան

մասին. ողջունելով երիտասարդներու ներգրաւ-
ւածութիւնը Հայ դատի աշխատանքներուն մէջ՝
ան շեշտեց Հայ դատի յանձնախումբերու ցանցա-
յին համակարգի կարեւորութիւնը եւ ասպարեզ
եկող նոր ուժերուն իւրաքանչիւր միջավայրի իւ-
րայատկութիւններուն ծանօթանալը: Ան եզրա-
փակեց, որ համագործակցութեան թափ տալը եւ
մեր ուժերու մնայուն երիտասարդացումը հզօր
ազդակներ են Հայ դատի աշխատանքներուն ար-
դիւնաւորման համար:

**ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ՃԱՆՉՑՈՂ ԲԱՆԱԶԵԻՆ ՈՐԴԵՐՈՒՄԸ
ԱՄԵՐԻԿԱԿԱՅԻՆ ԵՐՏՆԱԶԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԱՐԴԻՒՆՔՆ Է»**

«Ալքալիմասնալայն» կայքը անդրադարձած է
Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու
տան կողմէ Հայոց ցեղասպանութեան բանաձեւի
որդեգրման՝ նշելով, որ Միացեալ Նահանգներ
նոր կողմէ նշանակեցին Թուրքիոյ դաշտին մէջ, որմէ
ամենէն շատ օգտուողը Հայաստանն է: Կայքը
ընդգծած է, որ հայ ժողովուրդը միշտ պայքարած
է, որպէսզի բոլոր երկիրները ընդունին Հայոց ցե-
ղասպանութիւնը: Նշուած է նաեւ ցեղասպանու-
թիւնը ընդունող երկիրներուն անունները:

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներ-
կայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի
կայքին հետ ունեցած զրոյցին ընթացքին յայտ-
նեց, որ ճանաչումը կատարուեցաւ արդարութիւն
հաստատելու համար՝ ընդգծելով, որ չի մեռնիր
իրաւունքը, որուն ետին կան պահանջատերեր:
Երեսփոխան Բագրատունի նշեց, որ այս նուաճու-
մը Միացեալ Նահանգներու մէջ բնակող հայերու
քրտնաջան աշխատանքին արդիւնքն է, որ սկսած
է 35 տարի առաջ՝ ընդգծելով, որ Թուրքիոյ հետ
Միացեալ Նահանգներու շահերը շրջանին մէջ
փաստեցին, որ Թուրքիա իսկապէս ահաբեկչա-
կան պետութիւն մըն է:

Երեսփոխան Բագրատունի յոյս յայտնեց, որ
արաբական երկիրները չեն ենթարկուիր թրքական
ճնշումին՝ յայտնելով, որ անոնք կը խուսափին ըն-
դունելէ ցեղասպանութիւնը, որովհետեւ կը վախ-
նան արդարութենէն, իրաւունքէն եւ ունին քաղա-
քական եւ քարիւղային պատճառներ: Ան նշեց, որ
դիմակը ինկած է այսօր, օսմանցիներուն ոճրագոր-
ծութիւնները շրջանցած են պատմութեան հարցը,
եւ ատիկա փաստ դարձած է նոյնիսկ այսօր, երբ
Թուրքիա իր քաղաքականութիւնը եւ ահաբեկչու-
թիւնը կ'իրագործէ նոյնիսկ արաբական երկիրնե-
րուն վրայ: Ըստ Բագրատունիի, Թուրքիոյ Սուրիա
ներխուժելը ո՛չ միայն արաբական պետութեան
բռնագրաւում է, այլ նաեւ արաբական այլ տա-
րածքներ ներխուժելու սկիզբ:

**ԹԵՐԶԵԱՆ. «ՊԱՅՔԱՐԸ ՏԱԿԱԻՆ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»**

Երեսփոխան Յակոբ Թերզեան իր կարգին
գնահատեց Միացեալ Նահանգներու կողմէ Հայոց
ցեղասպանութեան ճանաչումը, թեկուզ ուշացած
եւ անկախ այն պատճառներէն, որոնք մղեցին ճա-
նաչման՝ տրուած ըլլալով, որ այս հարցը պետք չէ
կապուի որեւէ քաղաքական իրադարձութեան:
Թերզեան յայտնեց, որ պայքարը տակաւին կը շա-
րունակուի, մինչեւ որ ոճրագործը ընդունի այս
իրականութիւնը: «Ան, որ կը ժխտէ այս փաստը,
մեղսակից կը նկատուի», շեշտեց Թերզեան: Ան
նաեւ յիշեցուց Թուրքիոյ արտաքին գործոց նա-
խարար Մեւլութ Չաւուշօղլուի այն խօսքը, որուն
մէջ ըսած էր, թէ իր երկիրը օսմանցիներուն ժա-
ռանգորդն է: Թերզեան անելցուց, որ, ուրեմն
անոնք ժառանգած են նաեւ այն «պարտքը», որ
պատճառած է Օսմանեան կայսրութիւնը:

Թերզեան հաստատեց Ներկայացուցիչներու
տան կողմէ անուած այս քայլին կարեւորու-
թիւնը, քանի որ, ըստ անոր, ցեղասպանութիւնը
չճանչնալը խայտառակութիւն է անոնց համար,
հետեւեալ անոնք ճշդեցին այս ընթացքը: Ան
նշեց, որ կը սպասուի նախագահ Թրամփի պաշ-
տօնական ստորագրութիւնը՝ շեշտելով, որ ոչինչ
կը փոխէ պատմութիւնը, եւ փաստերը արձա-
նագրուած են 1915-էն 1923-ի միջեւ գոյութիւն ու-
նեցող հեռագիրներուն մէջ, եւ անկարելի է կեղծել
փաստերը:

**ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Երկուշաբթի, 25 մարտին, կէսօրէ ետք ժամը
1:00-ին, «Շաղոյեան» կեդրոնին մէջ տեղի ունե-
ցաւ հայ քաղաքական երեք կուսակցութիւններու
հերթական հանդիպումը: Ժողովականները անդ-
րադարձան Լիբանանի ներքին քաղաքական բեմի
վերջին զարգացումներուն: Ապա ժողովը քննար-
կեց Հայոց ցեղասպանութեան 104-ամեակը հա-
մագաղութային տարողութեամբ նշելու նախա-
ձեռնութեանց մանրամասնութիւնները:

Որոշուեցաւ 104-ամեակի իբրեւ կեդրոնական
ծրագիր կազմակերպել քայլարշաւ մը: Այս ծիրին
մէջ պետք է նշել, որ երեք քաղաքական կուսակ-
ցութիւններու երիտասարդական եւ ուսանողա-
կան միաւորները պիտի կազմակերպեն նաեւ
միացեալ ծրագիր մը: Ժողովի աւարտին յառաջա-
ցաւ ենթայանձնախումբ մը, որ պիտի կատարէ
քայլարշաւի ծրագրումը, յստակացնէ մանրամաս-
նութիւնները եւ լիբանանահայութիւնը իրազէկ
դարձնէ:

Այս առիթով հայ քաղաքական երեք կուսակ-
ցութիւնները կոչ կ'ուղղեն համայն լիբանանահա-

յութեան խումբերում շարքերով մասնակից դառնալու Հայոց ցեղասպանութեան 104-ամեակի ոգեկոչման բոլոր ձեռնարկներուն:

**ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ԱՅՅԵԼԵՑ ԼԻՔԱՆԱՆ**



16 մարտ 2019-ին Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեանի Լիբանան այցելեց՝ ընկերակցութեամբ պետական նախարարին կ'ընկերակցի Արցախի Շահումեան շրջանի վարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսեանի:

Տարբեր հանդիպումներու կարգին Արցախի Հանրապետութեան պետական նախարարը Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ տեսակցեցաւ հայ աւանդական երեք կուսակցութիւններու՝ Ռամկավար ազատական կուսակցութեան (ՌԱԿ), Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան (ՍԴՀԿ) եւ Հայ յեղափոխական դաշնակցութեան (ՀՅԴ) Լիբանանի ղեկավար մարմիններու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման ընթացքին ներկաները քննարկեցին Արցախի վերջին զարգացումները եւ հայկական սփիւռքի ներգրաւուածութիւնը Արցախի հզօրացման աշխատանքներուն մէջ, ինչպէս նաեւ համագործակցութեան զանազան կարելիութիւնները:

Սոյն հանդիպումէն ետք, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեան հանդիպում մը ունեցաւ Լիբանանահայ օգնութեան խաչի (ԼՕԽ), Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան (ՀՄԸՄ) Կեդրոնական վարչութեան եւ Լիբանանի Շրջանային վարչութեան, Համազգային Հայ կրթական եւ մշակութային միութեան կեդրոնական վարչութեան եւ Լիբանանի Շրջանային վարչութեան, ինչպէս նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան (ԲԲԸՄ) ներկայացուցիչներուն հետ, որոնց հետ քննարկեց Արցախի հասարակական, քաղաքացիական եւ մարզամշակութային ոլորտներուն մէջ եղած վերջին զարգացումները:

**ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԹԱՓՕՆՆԵՐՈՒ
ԹԱՂՄԱՆ ՎԱՅՐԻ ԹՂԹԱԾՐԱՐ**

Տարուան սկիզբը Պուրճ Համուտի թափօններու թաղման վայրի թղթածրարին շրջագիծին մէջ «Օ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանէն ՀՅԴ Կեդրոնական կոմիտէին եւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան հասցէին հնչեցին ամբաստանութիւններ, որոնց ՀՅԴ տեղեկատու գրասենեակը պատասխանեց հետեւեալ նամակով.

«Նամակ՝ «Տարուրի Նըիքի» յայտագիրի հաղորդավարին

Յարգելի՛ տիկին Տալիա Տաղեր,

Նկատի ունենալով պատասխանելու եւ ճշդում կատարելու իրաւունքը, կը խնդրեմք ձեզմէ այս նամակը կարդալ «Տարուրի նըիքի» յայտագիրին ընթացքին:

ՀՅ Դաշնակցութիւնը սովորութիւն չունի պատասխանելու զինք քննադատողներուն կամ դատական հարց յարուցելու լրագրողներու եւ իրեն հակադրուող անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ իր քաղաքականութիւնն ու կեցուածքները դատապարտողներուն դէմ, որովհետեւ կը հաւատայ խօսքի ազատութեան եւ կը յարգէ ազատ կարծիքը:

Բայց եւ այնպէս ՀՅ Դաշնակցութիւնը համոզուած է նաեւ, որ ընկերութիւնները կը փտին եւ հաստատութիւնները կը ձեւախեղուին, երբ անոնք անկեղծութեան եւ բարոյականութեան վրայ հիմնուել կը դադրին:

Ոմանք կը կարծեն, թէ խաբկանքի նենգ ոճին, իրականութեան նենգափոխումին եւ ճշմարտութեան քողարկումին միջոցով կարողութիւն ունին Պուրճ Համուտի բնակիչներուն զգացումներուն հետ խաղալ, հետեւաբար նաեւ անոնց ու ՀՅԴ-ի միջեւ ճեղքեր ստեղծել: Բնակիչներ, որոնք պատմութեան ընթացքին ՀՅԴ-ի զօրակից միջավայրը եղած են, իսկ ՀՅԴ-ի ղեկավարութիւնները հպարտութեամբ կը հաստատեն, որ իրենք այս ազնուական միջավայրին զաւակներն են: Միջավայր մը, որ տասնամեակներ շարունակ մերժած է տարածայնութիւններուն ու գրպարտութիւններուն հաւատալ եւ անպատասխանատու կեցուածքներու հոսանքն ի վար գլորիլ՝ ունենալով ջղային կեցուածքներ, որոնք ո՛չ Հայ յեղափոխական դաշնակցութեան, ո՛չ ալ շրջանի բնակիչներուն համար պատուաբեր են:

ՀՅ Դաշնակցութիւնը, մեկնելով այն համոզումէն, որ ընկերութիւնները կարելի է հիմնել միայն անկեղծութեան, թափանցիկութեան եւ փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած շինիչ երկխօսութեան վրայ, կը մերժէ ուղղակիօրէն թէ անուղ-

դակիօրեն թիրախ դառնալ անհիմն ամբաստանություններու, որոնք անճիշդ են եւ պարզապէս կը միտին քաղաքացիին ու լիբանանեան ընկերութեան ապրած ողբերգութիւնը շահագործել:

Այդ շահագործումը կ'ըլլայ անդրադարձներ եւ քողարկուած ակնարկութիւններ կատարելով աղբերու եւ Պուրճ Յամուտի աղբանոցի հարցին, ՅՅ Դաշնակցութիւնը կ'ամբաստանուի կաշառք ստանալու եւ անոր փոխարէն աղբերը Պուրճ Յամուտի ծովեզերքը թափելու ու ընկերութեան ապահովութիւնը վտանգի ենթարկելու յանցանքով:

Դժբախտաբար այս բոլոր ամբաստանութիւնները լսեցինք «Օ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանէն սփռուող «Տարուրի նըհքի» յայտագիրին ընթացքին իր մասնակցութիւնը բերած լրագրողէ մը, որուն ծանօթ ենք իբրեւ յանդուգն լրագրող՝ անոր գրութիւններուն ընդմէջէն:

Սակայն այս անգամ ան սխալեցաւ յանդգնութեան ու անկրթութեան միջեւ չկարենալ զանազանելու իմաստով, որովհետեւ յանդգնութիւնը այն չէ, որ կանգնիս ու ըսես այն, ինչ որ կը փափաքես ըսել, կամ այն, ինչ որ ուրիշներ կը փափաքին, որ փոխանցես. յանդգնութիւնը նաեւ այն է, որ նստիս ու լսես, թէ ինչո՞րոյ առարկայ կողմը ի՞նչ կ'ըսէ, եւ կանգնելէ ու խօսելէ առաջ վստահ ըլլաս հաղորդելիք տեղեկութիւններէ:

Յետեւաբար, այն լրագրողը, որ ՅՅ Դաշնակցութիւնը ամբաստանեց 110 միլիոն տոլար գանձելու յանցանքով, հիմնուած էր այնպիսի տուեալներու վրայ, որոնք երեւակայածին են: Հաւանաբար ան ինքնիրեն համար հերոսութիւններ կը փափաքէր ապահովել՝ մոռնալով, որ լիբանանեան պետութիւնը բարեսիրական միութիւն մը չէ, որ առանց հսկողութեան, որոշումներու կամ որոշ հեղինակութիւններու ճշդած պաշտօնական օրէնքներու գումարներ կը բաշխէ:

Անխոհեմ այս լրագրողը տեղեակ չէ, թէ Վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդը «Խուրի» ընկերութեան վստահած է 110 միլիոն տոլար արժողութեամբ թափօններու թաղման վայր կառուցելու պարտականութիւնը, իսկ այդ ընկերութեան սեփականատէրերը արձանագրուած են, ծանօթ մարդիկ են եւ անոնք ՅՅԴ-ի հետ ոչ մէկ կապ ունին:

Լրագրողը տեղեակ չէ նաեւ, թէ ինչպէս այլ քաղաքապետութիւններ, Պուրճ Յամուտի քաղաքապետութեան բաժինը՝ ըստ 17 մարտ 2016-ին կառավարութեան կողմէ տրուած թիւ 1 որոշումին, տարեկան ութ միլիոն տոլար է՝ չորս տարուան համար:

Ըստ նախարարաց խորհուրդի որոշումին, քաղաքապետութեան տրուած այդ գումարը կը յատկացուի եւ կը ծախսուի համաձայն այս գծով գո-

յութիւն ունեցող օրէնքներուն եւ գործիքակազմերուն: Անշուշտ աւելի լաւ կ'ըլլար, որ այս լրագրողը՝ ընկերութեան մէջ կասկած եւ սադրանք սերմանելու փոխարէն, Պուրճ Յամուտի բնակչութեան եւ ՅՅ Դաշնակցութեան զօրակցեր, անոնց կողմէ ի գործ դրուած այն ջանքերուն մէջ, որ նախարարաց խորհուրդի որոշումին բոլոր կէտերը գործադրուին, յատկապէս այն պահանջը, որ կառավարութիւնը արագացնէ Պուրճ Յամուտի մէջ հասարակաց օգուտին ծառայող ծրագիրներու իրականացման համար յատկացուելիք 25 միլիոն տոլարի գումարին վճարումը:

Փտածութեան դէմ պայքարը հիմնուած է իրաւունքին եւ ճշմարտութեան վրայ: Պայքար, որ իր ուժը կը ստանայ օրէնքէն ու արդարութենէն, եւ ոչ թէ կ'օգտագործէ մարդոց ու խմբաւորումներու արժանապատուութիւնը խոցող սուր մը՝ խեղաթիւրելով իրականութիւնները եւ տարածելով սուտերը, նպատակ ունենալով ընկերութեան կարծիքը շեղել եւ ամբոխավարական աժան հռչակ ապահովել:

Չարմանալի է, որ ինքզինք իբրեւ քաջ ասպետ ներկայացնող այս լրագրողը, որ փտածութեան դէմ պայքարի դրօշ բարձրացուցած է ու ինքզինք կը նկատէ քաղաքապետութիւններուն, ներառեալ՝ Պուրճ Յամուտի քաղաքապետութեան, փտածութիւններու վերաբերող բոլոր թղթածրարներէն ու փաստաթուղթերէն տեղեակ անձ մը, կը խօսի կասկածելի տրամաբանութեամբ մը, որուն իսկական նպատակները յստակ չեն, սակայն ան կը ջանայ ստեղծել կասկածի մթնոլորտ մը, ինչպէս նաեւ դաւադրութեան տեսութիւններ, որոնք կը ծառայեն միայն իսկական փտածներու եւ անոնց ծրագիրներու շահերուն:

Լիբանանն ու ներկայ իշխանութիւնը այսօր կարիքը ունին այնպիսի ասպետներու, որոնք իրաւունքի դրօշը կը պարզեն: Սուրբ եւ ձիւր չօգտագործել չի նշանակեր, որ այս օրերուն ասպետականութիւն չկայ, սակայն ասպետականութիւնը ամէն ինչէ առաջ բարոյականութիւն եւ արժեքներ ունենալն է, ինչպէս նաեւ անիրաւութիւն տարածող ուժերուն դէմ դնելու նկատմամբ նախանձախնդրութիւնը:

Անիրաւ այս արշաւին դիմաց ՅՅ Դաշնակցութիւնը ինքն իրեն կը վերապահէ բոլոր իրաւունքները՝ դատական հարց յարուցելու բոլոր անոնց դէմ, որոնք կը գրպարտեն եւ լրագրութեան մարզի պարկեշտութենէն հեռու, անճիշդ ամբաստանութիւններ կ'արձակեն:

ՅՅ Դաշնակցութիւնը իր խօսքը ուղղելով այս յայտագիրի յարգարժան հաղորդավար տիկին Տալիա Տաղերին, կը մաղթէ, որ վստահ ըլլայ իր յայտագիրին ընդմէջէն սփռուող որեւէ լուրի՝ իր

յայտագիրին վստահելիության իբրև յանձնառության, ինչպես նաև կը խնդրե այս յստակացումը սփռել իր յայտագիրեն՝ յարգելով պատասխանելու իրաւունքը»:

ՄԵՔՆԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԿԵՆՍՈՒՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Կենսոլորտի նախարար Ֆատի Ժրայսաթի 4 մարտին նախարարության կեդրոնին մէջ ընդունեց Հիւսիսային Մեթնի երեսփոխաններ, որոնց շարքին՝ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Հզօր Լիբանան համախմբումի երեսփոխան Էտի Սաալուֆ, Հզօր հանրապետութիւն պլոքի երեսփոխան Էտի Ապի Լամաա, Փաղանգաւոր կուսակցութեան երեսփոխան Էլիաս Հանքաշ: Ներկայ էին նաև Մեթնի քաղաքապետութիւններու համադաշնակցութեան ներկայացուցիչ Նապիլ Ապու Սամրա եւ կենսոլորտի նախարարի խորհրդատու Մանալ Սաալլեմ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Մեթնի կենսոլորտային հարցերը, յատկապէս աղբերու նոր տազնապը կանխարգիլելու կարելիութիւնները՝ նկատի ունենալով, որ Պուրճ Համուտ-ժտէյտէ թափօսներու թաղման վայրը յառաջիկայ յուլիսին կ'աւարտէ թափօսներ ընդունելու իր կարողութիւնը:

Լիստին ընթացքին երեսփոխանները վերապահութիւն յայտնեցին թափօսներու թաղման վայրը ընդարձակելու գծով՝ հաստատելով, որ վարչապետ Թամմամ Սալամի կառավարութիւնը խոստացած է Մեթնի մէջ աղբահանման արմատական ծրագիր մը մշակել՝ չորս տարուան ժամանակաշրջանի ընթացքին:

Երեսփոխանները կենսոլորտի նախարարէն պահանջեցին իր հայեցողութեամբ նշանակել յարմար պատասխանատու մը՝ ստուգելու համար թափօսներու ծրագիրին գործադրուած կէտերը, յատկապէս ինչ կը վերաբերի Պուրճ Համուտի, ժտէյտէի եւ Պաուշրիէ Սատի խոստացուած իրաւունքներուն:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցաւ նաև աղբը սկիզբէն տեսակաւորելու, ինչպէս նաև շրջանի գործարաններուն, վառելանիւթի կայաններուն եւ սպանդանոցներուն պատճառած ապականումը նուազագոյնի հասցնելու կարելիութիւնները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ՊԼՈՋԸ ԿՈՉ Կ'ՈՒՂԴԵ ԿԱՏԱՐԵԱԸ ԼՐՋՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՈՒԹԵԼՈՒ ԱՂԲԱՅԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՀԵՏ

Հայկական երեսփոխանական պլոքը «Շաղ-գոյեան» կեդրոնին մէջ 26 յունիսին գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ ՀՀԴ Լիբա-



նանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի եւ ներկայութեամբ պլոքի անդամ երեսփոխաններ Յակոբ Թերգեանի եւ Ալեքսանտր Մաթոսեանի, ինչպէս նաև զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցաւ 2019-ի պետական ամսվարկը եւ ընդգծուեցաւ զայն վաւերացնելու կարելիութիւնը, ինչպէս նաև արծարծուեցան լիբանանեան եւ ընդհանուր իրադարձութիւնները, յատկապէս երկրին դիմագրաւած տնտեսական տազնապը, որ սկսած է լիբանանեան ընկերութեան վրայ ճնշել:

Հայկական երեսփոխանական պլոքը զարմանք յայտնեց վերջերս երկրին մէջ արձանագրուող քաղաքական բանավեճերուն համար, որոնք ապարդիւն են եւ միայն երկրին մէջ տիրող իրավիճակը կրնան սրել եւ քաղաքական ուժերուն միջեւ գժտութիւն յառաջացնել:

Պլոքը քննադատեց երկխօսութեան չգոյութիւնը՝ զայն նկատելով ապառոջ իրավիճակ մը, որ քաղաքական ուժերուն միջեւ համերաշխութիւնն ու իմաստուն մօտեցումը չի դրսեւորեր: Մեկնելով այս իրականութենէն՝ Հայկական երեսփոխանական պլոքը կոչ ուղղեց քաղաքական ուժերուն քաղաքական, տնտեսական եւ ընկերային առումով երկրին կացութեան թափ տալ՝ յատկապէս նկատի ունենալով շրջանային խոցելի վիճակը:

Անդրադառնալով Լիբանանեան համալսարանի դասախօսներուն գործադրած դասադուլին՝ Հայկական երեսփոխանական պլոքը շեշտեց, որ անիկա ուսանողներուն շահերուն չի ծառայեր, եւ պէտք է աշխատիլ խնդրոյ առարկաներուն միջեւ երկխօսութեան միջոցով լուծումներ գտնելու ուղղութեամբ, որպէսզի ուսանողները կրթական տարեշրջան մը չկորսնցնեն:

Պլոքը հաստատեց, որ ուսումը երկրին հիմնասիւններէն է եւ դասախօսներուն կամ ուսանողներուն նեղութիւնը պիտի արտացոլայ ամբողջ երկրին կրթական համակարգին, յատկապէս համաշխարհային մեծ վարկ եւ ուսման մակարդակ վայելող Լիբանանի պետական համալսարանին վրայ:

Պլոքը քննարկեց նաեւ աղբահանութեան հարցին լուծման թղթածրարը եւ կոչ ուղղեց պետութեան այդ իմաստով շտապ գործի լծուելու եւ կատարել հոգատարութեամբ, լրջութեամբ եւ ուշադրութեամբ վարուելու անոր հետ՝ նկատի ունենալով ժողովուրդին առողջութեան վրայ անոր ունեցած մեծ ազդեցութիւնը:

Հայկական երեսփոխանական պլոքը անհրաժեշտ նկատեց, որ այդ հարցը քննարկուի եւ անոր շուրջ երկխօսութիւն կատարուի, որպէսզի միացեալ մօտեցումներով կարելի ըլլայ լուծել այդ հարցը եւ ժողովուրդին ներկայանալ փաստերով եւ ոչ թէ մեր վկայած յաւելեալ պառակտումով:

Պլոքը հաստատեց իր յանձնառութիւնը՝ դատական իշխանութեան անկախ գործունեութեան եւ կոչ ուղղեց անսալու դատաւորներուն պահանջներուն՝ երաշխաւորելու համար օրինական ընդհանուր համակարգը:

Հայկական երեսփոխանական պլոքը կարելոր նկատեց դատական իշխանութիւններուն եւ պետութեան միջեւ երկխօսութիւնը խորացնելը՝ ապահովելու համար երկրին, քաղաքացիին եւ ընկերութեան շահերը:

3. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԹԱՓՈՆՆԵՐՈՒ ԹԱՂՄԱՆ ՎԱՅՐԸ ՓԱԿ Է»

Հիմնուելով Վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդին տեղեկագիրին վրայ, կենսոլորտի նախարարութիւնը 26 յունիս 2019-ին հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտնուեցաւ, որ Պուրճ Համուտ-ժտէյտէ թափօններու թաղման վայրը տակաւին կրնայ 82 հազար թոն թափօններ ընդունիլ, եւ հետեւաբար օգոստոս ամսուան վերջը կ'աւարտէ թափօններ ընդունելու իր կարողութիւնը:

Նշենք, որ կենսոլորտի նախարար Ֆատի ժրայսաթիի գրասենեակը օր մը առաջ հրապարակած էր հաղորդագրութիւն մը, որուն համաձայն՝ «յառաջիկայ յուլիսի վերջը Պուրճ Համուտ-ժտէյտէ թափօններու թաղման վայրին թափօններ ընդունելու կարողութեան աւարտին մասին շրջանառութեան մէջ դրուած լուրերուն լոյսին տակ, նախարար ժրայսաթի Վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդի նախագահ Նեպիլ ժսըրէն պահանջեց 2024-ի տուեալներ, որոնց հիման վրայ ի յայտ եկաւ, որ թափօններու թաղման վայրը մինչեւ օգոստոս 2019 տակաւին կարողութիւն ունի 82 հազար թոն թափօն ընդունելու»:

Այս հարցով ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի յայտնեց, որ Պուրճ Համուտի թափօններու թաղման վայրը փակ է:

Ան հաստատեց, որ Պուրճ Համուտի թափօններու թաղման վայրը ժտէյտէի թափօններու թաղ-

ման վայրին հետ ոչ մէկ կապ ունի՝ հաստատելով, որ կենսոլորտի նախարար Ֆատի ժրայսաթի այդ մասին լաւատեղեակ է:

ՎԱՐՋԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒԽԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Վարչապետ Հարիրի 24 յուլիսին վարչապետարանին մէջ ժողով մը գումարեց Մեթնի երեսփոխաններուն հետ:

Ժողովին ներկայ գտնուեցան ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, պաշտպանութեան նախարար Էլիաս Պու Սաապ, կենսոլորտի նախարար Ֆատի ժրայսաթի, Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայէլ, ինչպէս նաեւ երեսփոխաններ Էտկար Մաալուֆ եւ Էտի Ապի Լամաա:

Ժողովարահ մտնելէ առաջ, ներկայ լրագրողներուն հարցումներուն պատասխանելով երեսփոխան Բագրատունի յայտարարեց.

«Պուրճ Համուտի թափօններու թաղման վայրը փակուած է մարտ ամիսէն ի վեր, եւ այսուհետեւ ի վիճակի չէ որեւէ թափօն ընդունելու: Մենք, իբրեւ ընդհանուր լուծումի մէկ բաժին, շալկեցինք մեր պատասխանատուութիւնը, իսկ այժմ կարգը ուրիշներուն է վերցնելու իրենց պատասխանատուութիւնը: Պուրճ Համուտի թափօններու թաղման վայրը կարելի չէ նոյնիսկ բարձրացնել:

Ինչ կը վերաբերի ժտէյտէի թափօններու տարածքին, շրջանը ունի իր քաղաքապետութիւնը եւ այդ շրջանը ինք կ'որոշէ իր ընելիքը:

Իսկ ընդարձակման գծով եղող խօսակցութիւնները մեզի չեն վերաբերիր եւ չեն հետաքրքրեր»:

Ժողովի ընթացքին նախարար ժրայսաթի դիտել տուաւ, որ քննարկուելիք լուծումները չեն վերաբերիր Պուրճ Համուտին՝ անելցնելով, որ անհրաժեշտ է թիւ 80 օրէնքի հիման վրայ կիրարկել ապակեդրոնացման սկզբունքը թափօններու թաղման առնչութեամբ:

Ժողովէն ետք ժրայսաթի յայտնեց, որ աղբահանումի հարցը լիբանանեան ազգային մեծ հարց մըն է, որուն լուծման համար կառավարութիւնը լրջօրէն կ'աշխատի:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԹՎՓՕՆՆԵՐՈՒ ԹԱՂՄԱՆ ՎԱՅՐԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՒ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԿՏՐԱԿԱՆԱՊԷՍ ՄԵՐԺԵԼԻ Է»

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի 13 օգոստոսին ընդգծեց, որ Պուրճ Յամուտի թափօններու թաղման վայրին ընդարձակումը կամ բարձրացումը կտրականապես մերժելի է:

«Մենք պատրաստ չենք յաւելեալ խոստումներ հանդուրժելու, չըսելու համար՝ աղբեր: Այս լուծումը ժամանակաւոր է եւ մասնակի. կարելի չէ յաւելեալ խոստումներու վստահելով համաձայն գտնուիլ բանի մը, եւ յանկարծ մէկը խոչընդոտելով կառավարութեան աշխատանքը, հասնիք անել կացութեան», հաստատեց ան:

Երեսփոխան Բագրատունի նշեց, որ պարզապես որովհետեւ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան նախարարը, այսինքն՝ կենսոլորտի նախարար Ֆատի ժրայսաթին է առաջարկը ներկայացնողը, չի նշանակեր, որ մենք պիտի ընդունինք այդ առաջարկը, որովհետեւ Հզօր Լիբանան համախմբումին մաս կը կազմենք:

«Շատ անգամ կը պատահի, որ մենք տարակարծիք կ'ըլլանք հարցերու շուրջ: Երբեմն մենք կը մերժենք, երբեմն իրենք համաձայն չեն ըլլար», ակնարկեց ան:

ԺՐԱՅՍԱԹԻ. «ՄԵԹՆԻ ԱՂԲԱՅԱՆՈՒՄԻ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԺՏԵՅՏԵԻ ԹՎՓՕՆՆԵՐՈՒ ԹԱՂՄԱՆ ՎԱՅՐԻՆ ՄԵՋ Է ԵՒ ՈՉ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՄԻ»

Միւս կողմէ, կենսոլորտի նախարար Ֆատի ժրայսաթի հարցազրոյցի մը ընթացքին հաստատեց, որ Մեթնի աղբահանումի հարցին լուծումը ժտէյտէի թափօններու թաղման վայրին մէջ է, եւ ոչ Պուրճ Յամուտի:

«Պուրճ Յամուտի թափօններու թաղման վայրը կարելի չէ ընդարձակել կամ բարձրացնել, հետեւաբար լուծումը ժտէյտէի թափօններու թաղման վայրն է», հաստատեց ան:

Ժրայսաթի նշեց, որ նախարարութեան դռները բաց են հաւանական բոլոր լուծումներուն դիմաց: Ան յայտնեց, որ չորս ամիսէ ի վեր Մեթնի քաղաքապետական համադաշնակցութենէն խնդրած են օժանդակել իրենց՝ թափօններու թաղման նոր վայրեր հաստատելու կարելիութեան մասին, սակայն ոչ մէկ ընդառաջում եղած է այդ խնդրանքին:

Յ. ԹԵՐԶԵԱՆ. «ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԱԾ Է, ՈՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՂԲԱՅԱՆՈՒՄԻ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ ՈՒՆԵՆԱՅ»

Հայկական երեսփոխանական պլոքի անդամ,

երեսփոխան Յակոբ Թերզեան թուիթթրեան գրառումի մը ընդմէջէն վերահաստատեց ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի կեցուածքը, որ կը վերաբերէր Պուրճ Յամուտի թափօններու թաղման վայրին:

«Կու գանք հաստատելու, որ աղբահանումի շրջագիծին մէջ Պուրճ Յամուտի բնակչութիւնը տասնամեակներ շարունակ իր ազգային պարտականութիւնը կատարած է: Ժամանակը հասած է, որ Լիբանանի կառավարութիւնը աղբահանումի հարցին լուծման այլընտրանքը ունենայ: Կը մաղթենք, որ այդ լուծումը ըլլայ մնայուն եւ վերջնական, առանց Պուրճ Յամուտի թափօններու թաղման վայրը ընդարձակելու կամ բարձրացնելու մասին մտածելու, որովհետեւ այդ վայրին մէջ յաւելեալ թափօններ կարելի չէ գետեղել», հաստատեց երեսփոխան Թերզեան:

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ ՎԱՐՇԱՅՈՏԵՐՈՒ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ՀԱՐՑԸ



Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան եւ Հզօր Լիբանան համախմբումի երեսփոխան Նիքոլա Սահնաուի 13 յունիսին այցելեցին Վերաշինութեան ու բարգաւաճման խորհուրդի նախագահ Նապիլ ժսըրի, որուն հետ քննարկեցին Պէյրութի եւ շրջակայքի գարշահոտերու արտաբերման հարցը:

Այս հանդիպումին լոյսին տակ երեսփոխան Թերզեանի գրասենեակը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, թէ այդ հանդիպումին ընթացքին յստակ դարձած է, որ Պէյրութի գարշահոտութիւնը տարբեր պատճառներ ունի եւ բոլոր պատճառներն ու օրինազանցութիւնները արձանագրուած են Վերաշինութեան ու բարգաւաճման խորհուրդին մօտ եւ անոնք պիտի հետապնդուին՝ խնդրոյ առարկայ նախարարութիւններուն կողմէ, որպէսզի այս բոլոր հարցերը աստիճանաբար լուծուին:

Նոյն հաղորդագրութեան մէջ նշուեցաւ նաեւ, որ Թերզեան եւ Սահնաուի պահանջած են արագացնել Պուրճ Յամուտի կոյաջուրերու գտման

կայանի ծրագիրին գործադրութիւնը, որպէսզի Պէյրութի եւ Պուրճ Ճամուտի ծովափներէն վնասը կարելի ըլլայ ամէնէն արագ ժամանակամիջոցին վերացնել:

ՀԱՆՂԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԿՈՅԱԶՈՒՐԵՐՈՒ ԶՏԱՐԱՆԻՆ ՈՒՆԵՆԱԼԻՔ ԿԵՆՍՈՒՈՐՏԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպութեամբ Պուրճ Ճամուտի քաղաքապետութեան, 19 օգոստոսին, Ազգային միացեալ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում մը, որուն ընթացքին «Արտ» ընկերութիւնը ներկայացուց Պուրճ Ճամուտ-Տորա շրջանին մէջ կառուցուելիք կոյաջուրերու գտարանին ծրագիրը՝ կատարելով անոր ունենալիք կենսոլորտային ազդեցութեան եւ հետեւանքներուն արժեւորումը:

Հանդիպումին ներկայ գտնուեցան ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Հայկական երեսփոխանական պլոքի անդամ Յակոբ Թերզեան, երեսփոխաններ Նիքոլա Սահնաուի, Ալէն Աուն, Էտկար Մաալուֆ, Էտի Ապի Լամաա եւ Էլիաս Հանքաշ, Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայէի ներկայացուցիչ Շարլ Սապա, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութեան ներկայացուցիչ Խալէտ Նախլէ, նախկին նախարար Վրէժ Սապունճեան, Լեռնալիբանանի նահանգապետ, դատաւոր Մոհամետ Մաքքաուի, Լեռնալիբանանի գաւառապետ Մարլէն Հատտատ, Պուրճ Ճամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան եւ քաղաքապետական խորհուրդի անդամները, Մեթնի քաղաքապետարաններու համադաշնակցութեան նախագահ Սիրնա Սըր, Սին Էլ Ֆիլի քաղաքապետ Նեպիլ

Քահիալէ, Ֆանարի քաղաքապետ Ժորժ Սալամէ, Պիաքութի քաղաքապետ Իսամ Չէյթուն, Մթալլէ-պի քաղաքապետ Փոլ Շոիտ, Պշարրէի քաղաքապետարաններու համադաշնակցութեան նախագահ Էլի Մախլուֆ, «Սոտթել»-ի տնօրէն Փաթրիք Ֆարաճեան, Զբօսաշրջութեան մարզի սենտիքաներու համադաշնակցութեան նախագահ Փիռ Աշքար, Բարգաւաճումի եւ վերաշինութեան խորհուրդի ներկայացուցիչ Ասի Ֆիտաուի, «Արտ» ընկերութեան ներկայացուցիչ Ժոզեֆ Իտ, «Խուրի» ընկերութեան եւ տարբեր ընկերութիւններ ներկայացնող այլ պատասխանատուներ:

Հանդիպումը բացուեցաւ լիբանանեան քայլերգի յօտնկայս ունկնդրութեամբ:

Ապա Պուրճ Ճամուտի քաղաքապետական խորհուրդի անդամ ճորճ Գրիգորեան արտասանեց բացման խօսքը, որուն մէջ ան ողջունեց ներկաները՝ յայտնելով անոնց, որ կենսոլորտը այնպիսի թղթածրար մըն է, որուն սահմանները անծայրածիր են՝ ցամաքամասերու եւ երկիրներու պարագային, իսկ այս պարագային՝ քաղաքապետարաններու սահմաններուն մէջ:



«Ապականումը կը շրջանցէ բոլոր սահմաններն ու շրջանները եւ իր ազդեցութիւնը կ'ունենայ բոլորին կեանքերուն վրայ, եւ անոր սահմանները Լիբանանէն շատ աւելի հեռու վայրեր կ'երթան: Այս պատճառով ալ կը հաստատենք, որ անիկա հաւաքական պատասխանատուութիւն կ'ենթադրէ, որովհետեւ անիկա կը վերաբերի իւրաքանչիւր անհատի, ընկերութեան եւ ամբողջ երկրագունդին: Այս դիտանկիւնէն մեկնելով՝ Պուրճ Ճամուտի քաղաքապետութիւնը կազմակերպած է այս հանդիպումը՝ ներկայացնելու համար կոյաջուրերու եւ անոնց պատճառած գարշահոտութեան թղթածրարը, որ կը վերաբերի նաեւ Պէյրութի եւ անոր արեւելեան ու հիւսիսային շրջաններուն», ըսաւ ան՝ մաղթելով, որ հանդիպումը դրա-



կան արդիւնքներու յանգի եւ գոհ պահէ բոլոր խնդրոյ առարկայ անձնաւորութիւնները:

Ապա ցուցադրուեցաւ կարծ տեսերիզ մը, որ կ'անդրադառնար Պուրճ Զամուտի թափօններու թաղման վայրին, ինչպէս նաեւ ծովեզերեայ շրջանի ապագայ ծրագիրին եւ այդ ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն:

Պուրճ Զամուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան իր խօսքին մէջ շեշտեց, որ երբ երկիրը աղբերու տազնապը կը դիմագրաւեր, հարցը քաղաքական չարաշահումի ենթարկուեցաւ, եւ ոմանք մոռցան, որ կենսոլորտն ու ժողովուրդին առողջութիւնը անգոյն են:

«Աղբերուն հարցը այլեւս մեր ետին կը գտնուի, եւ այսուհետեւ կարելի չէ ժամանակաւոր լուծումներու մասին խօսիլ», ըսաւ Մ. Պօղոսեան:

Ան անդրադարձաւ կոյաջուրերու գտարանին կառուցման՝ հաստատելով, որ Պուրճ Զամուտի քաղաքապետութիւնը յանձնառու է հիմնելու արհեստագիտական իմաստով յառաջացած գտարան մը, որ ժողովուրդին եւ կենսոլորտին վնաս չի հասցներ:

Լեռնալիբանանի նահանգապետ Մոհամետ Մաքքաուի ներկայներուն յայտնեց, որ այս հանդիպումին ընթացքին անոնց դերակատարութիւնը պիտի ըլլայ իրենց դիտողութիւնները ներկայացնել կենսոլորտային եւ ընկերային առումով, որպէսզի կարելի ըլլայ կանխարգիլել գտարանի կառուցման ծրագիրին բերումով ոեւէ անհատի հասնելիք վնասը:



Իր խօսքը ուղղելով գտարանի ծրագրի կառուցումը ստանձնած ընկերութեան՝ Մաքքաուի նշեց, որ անոնք ստիպուած են նկատի ունենալու բոլոր դիտողութիւնները եւ համապատասխան բացատրութիւններ տալու, ինչպէս նաեւ համապատասխան քայլերու դիմելու՝ մեղմացնելու համար կենսոլորտային եւ ընկերային վտանգները, եւ ի հարկին հատուցումներ կատարելու, եթէ ոեւէ մե-



կը տուժէ այդ ծրագիրէն:
Մաքքաուի նշեց, որ այս հանդիպումը լաւ առիթ մըն է՝ թեթեցնելու կենսոլորտին վրայ այդ ծրագիրին ունենալիք վատ ազդեցութիւնները, ինչպէս նաեւ որդեգրելու այնպիսի քայլեր, որոնք կ'երաշխաւորեն ծրագիրին պատճառելիք հաւանական ընկերային վնասները:

Մաքքաուի շնորհակալութիւն յայտնեց Պուրճ Զամուտի քաղաքապետութեան՝ անոր կազմակերպած այս հանդիպումին առիթով, ինչպէս նաեւ դրուատեց անոր կողմէ հանրային կարծիքը նման ծրագիրներու եւ անոնց անցնելիք փուլերուն, յատկապէս առաջին փուլին մասին տեղեակ պահելու օրէնքին գործադրութիւնը:

Մեծն Պէրուի կոյաջուրերու գտարանին ծրագիրը ներկայացուցին Բարգաւաճումի եւ վերաշինութեան խորհուրդի ներկայացուցիչ Ասի Ֆիտաուի եւ «Արտ» ընկերութեան ներկայացուցիչ Ժոզեֆ Իտ, որոնք ներկայացուցին գտարանի ծրագիրը՝ հաստատելով, որ մինչեւ 2022 այդ գտարանի կառուցման առաջին փուլը աւարտած պիտի ըլլայ, իսկ առաւելագոյնը մինչեւ 2030 կարելի պիտի ըլլայ աւարտել գտարանին երկրորդ փուլը, որպէսզի ամբողջական ըլլայ կոյաջուրերու գտման աշխատանքը:



Անոնք նկատել տուին, որ ներկայիս կը կատարուի գտարանի կառուցման նախապատրաստական աշխատանքը, որ պիտի աւարտի 2020-ին:

ԼԻԲԱՆԱՆԸ՝ 2019-ԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՀԱՒՈՐ ՏԱԳՆԱՊՈՎ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԻ ԺԱՅԹՔՈՒՄՈՎ ԲՆՈՐՈՇՈՒՈՂ ՏԱՐԻՆ

Լիբանանի մեջ 2019-ի առաջին կիսուն տիրած լաւատեսութիւնը եւ դրական մթնոլորտը իր հակապատկերը ստացաւ տարուան երկրորդ կիսուն:

Վեցերորդ ամսուան վերջին օրը Լեռնալիբանանի մէջ արձանագրուած զինեալ միջադէպով սկսած երկրին ապահովական խախտումի նշոյլները շարունակուեցան Պէյրութի հարաւային արուարձաններուն վերեւ յայտնուած անօդաչու թռչող սարքերով, որոնք շրջանը ռմբակոծումի թիրախ դարձուցին, ապա յոռետեսական մթնոլորտը շարունակուեցաւ տնտեսական պատերազմով:

2020-ին իր ջուրերուն մէջ բնական կազի ու նաւթի իր հարստութեան պեղման սկսիլ փափաքող Լիբանանը սեպտեմբեր ամսուան սկիզբը յայտարարեց տնտեսական արտակարգ վիճակ, որ անմիջական լուծումներու չարժանացաւ, ընդհակառակն՝ սրումի, ինչպէս է երկրին մէջ անգիր օրէնքով հաստատուած վարժութիւնը:

2 սեպտեմբերին երկրին մէջ յայտարարուեցաւ տնտեսական արտակարգ իրավիճակ, որուն նկատմամբ սակայն շատ քիչեր լուրջ վերաբերում ցուցաբերեցին:

Քաղաքական ներքին տարակարծութիւններն ու մթնոլորտի սրումը, ինչպէս նաեւ պետական մակարդակի վրայ գործուած անընդունելի սխալները պատճառ դարձան, որ հոկտեմբերի կիսուն (17 հոկտեմբեր) Լիբանանի փողոցը բռնկի, բազմամարդ ցոյցեր

կազմակերպուին եւ սպառնան ամբողջ պետական համակարգին՝ հիմնական նշանաբան ունենալով «Բոլորը՝ այսինքն բոլորը» կարգախօսը:

Լիբանանի մէջ ստեղծուած տնտեսական այս ծանր իրավիճակը պատճառ դարձաւ լիբանանեան դրամանիշի անկայունութեան, դրամատնային համակարգի ցնցումին, ինչպէս նաեւ Հարիրիի կառավարութեան հրաժարականին ու նոր վարչապետի՝ Հասսան Տիապի նշանակումին:

Ժողովրդային շարժումը փշրեց բացարձակ արգելքները, յատկապէս ղեկավարները աստուածացնելու կեցուածքները:

Լիբանանցիները տասնեակ տարիներու իրենց համբերութեան բաժակը յորդեցուցին փողոցին մէջ եւ բարձրաձայն պահանջեցին բարեկարգումը եւ արժանապատիւ կեանք մը ապրելու իրենց իրաւունքը:

Տարին աւարտեցաւ կառավարութեան կազմութեան Տիապի ջանքերով:

ՀԱՐԻՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՉՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

31 յունուարին վարչապետ Սաատ Հարիրի կրցաւ կազմել 30 հոգիւնոց ազգային միասնականութեան կառավարութիւն մը, որուն մէջ լիբանանահայութիւնը առաջին անգամ ըլլալով ունեցաւ պաշտօններ ունեցող երկու նախարարներ, որոնք էին Աւետիս Կիտանեան՝ զբօսաշրջութեան նախարար եւ Ռիշար

Գույումճեան՝ ընկերա-
յին հարցերու նախա-
րար:

Կառավարութիւնը
կազմեց նախարարա-
կան յանձնախումբ մը եւ
անմիջապէս մշակեց
կառավարութեան աշ-
խատանքային ծրագի-
րը, որ շուտով վաւերաց-
ւեցաւ:

15 փետրուարին
խորհրդարանը քննար-
կեց կառավարութեան
անդրանիկ յայտարա-
րութիւնը եւ վաւերաց-
ուց զայն՝ անոր շնորհելով իր վստահու-
թեան քուէն:

Հարիրիի «Դէպի աշխատանք» կառավա-
րութիւնը 8 ապրիլին վաւերացուց ելեկտրա-
կանութեան տազնապի լուծման ծրագիրը,
որ քանի մը օր ետք արժանացաւ նաեւ
խորհրդարանի վաւերացումին:

30 ապրիլին կառավարութիւնը սկսաւ
քննարկել 2019-ի պետական ամսականը եւ
շուրջ ամիս մը ետք՝ 29 մայիսին վաւերացուց
զայն, առանց յաւելեալ տուրքեր պարտադրե-
լու համեստ դասակարգին վրայ:

19 յուլիսին խորհրդարանը 83 թեր քուէնե-
րով վաւերացուց 2019-ի պետական ամս-
վարկը:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

2 սեպտեմբեր 2019-ին, Պաապտայի
տնտեսական ժողովին ընթացքին Լիբանանի
մէջ յայտարարուեցաւ տնտեսական արտա-
կարգ իրավիճակ:

Նախագահութեամբ հանրապետութեան
նախագահ զօր. Միշել Աունի եւ ներկայու-
թեամբ խորհրդարանի նախագահ Նեպիի
Պըրրիի ու վարչապետ Սաատ Հարիրիի, նա-
խագահական պալատին մէջ տեղի ունեցաւ
տնտեսական-եկեւմտական խորհրդաժողով
մը:

Խորհրդաժողովին ընթացքին նախագահ
Աուն յայտնեց, որ ներկայացուած այս քայլե-
րուն նպատակն է ամբողջացնել 2019-ի պե-



տական ամսվարկին մէջ որդեգրուած քայլե-
րը, որոնց նպատակն էր կրճատել պետական
պիւտճէի նիւթական բացը: Ան նկատել
տուաւ, որ այս հոլովոյթը բնականաբար պի-
տի դրսեւորուի 2020-ի պետական ամսվար-
կին վաւերացումով՝ սահմանադրական ժամ-
կետը յարգելով:

Նախագահ Աուն նշեց, որ իրենց տուած
այս որոշումներուն մէջ նկատի պիտի ունե-
նան համեստ դասակարգը:

Նախագահ Աուն կոչ ուղղեց քաղաքական
տարակարծութիւնները մէկդի դնելու եւ
տնտեսական տազնապէն դուրս գալու ճիգե-
րը միասնականացնելու:

Չորս ժամ տեւած նիստէն ետք վարչապետ
Հարիրի արտակարգ իրավիճակ յայտարա-
րեց՝ նշելով, որ կազմուած է նաեւ այս իրավի-
ճակին յատուկ յանձնախումբ մը, որ պիտի
շարունակէ իր աշխատանքները:

Ան յայտնեց, որ եթէ ոմանք կը մտածեն, թէ
երկրին տնտեսական կացութիւնը ամողջ վի-
ճակի մէջ է, կը սխալին, որովհետեւ երկիրը
տնտեսական դժուար կացութենէ մը կ'անց-
նի:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՑԱՍՈՒՄ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ
ՑՈՅՑԵՐ, ՈՐՈՆՑ ՀԵՏԵԱՆՔՈՎ ՀԱՐԻՐԻ
ՀՐԱԺԱՐԵՑԱՒ ԵՒ ՀԱՍՍԱՆ ՏԻԱՊ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՈՒԹԵՑԱՒ**

Հակառակ անոր որ վարչապետ Սաատ
Հարիրիի կառավարութեան կատարելիք աշ-
խատանքին մասին յոյսերը բարձր էին, եւ



անոր նկատմամբ երրոպական երկիրներն ու Միացեալ Նահանգները հաստատած էին իրենց աջակցութիւնը շարունակել, ինչպէս նաեւ շեշտած էին իրենց յանձնառութիւնը՝ երկրին ապահովական իսկական կայունութեան առումով, սակայն տարեսկիզբին կազմուած Զարհրիի կառավարութիւնը սեպտեմբերի կիսուն սկսած էր քննարկել նաեւ 2020-ի պետական ամսավարկը՝ առանց սակայն նկատի ունենալու տնտեսական յստակ բարեկարգումներ:

Սղաճն ու փտածութիւնը, որոնց պատճառով լիբանանցին աղքատացած է, անիրաււած, անգործ մնացած ու սնանկացած, օրըստօրէ սկսած էին ճնշել ժողովուրդը, իսկ 15 հոկտեմբերին ժողովուրդին գուրջ շարժեցաւ, երբ արձանագրուեցաւ երկրին անտառային հրդեհներու աննախընթաց աղետը:

Փտածութեամբ գոյատեւող լիբանանեան պետութիւնը կատարեալ անճրկած իրավիճակով յայտնուեցաւ քաղաքացիին, որ բարկութեան եւ զգուանքի արտայատութիւններով լեցուեցաւ պետութեան նկատմամբ:

Երկու օրեր ետք, 2020-ի պետական ամսավարկը քննարկելու շրջագիծին մէջ եւ բազմաթիւ հաստատումներէ ետք, որ այդ ամսավարկը լիբանանցիներուն վրայ յաւելեալ տուրքեր պիտի չպարտադրէ, իբրեւ տեղեկութիւն սպրդեցաւ հաղորդակցութեան միջոց-

ներու նախարար Սոհամետ Շքէյրի այն առաջարկը, որուն համաձայն՝ «Ուաթսափ» Էփլիքէյշնի գործածութեան համար լիբանանցի քաղաքացիին վրայ ամսական 6 ամ. տուարի յաւելեալ տուրք պիտի պարտադրուէր:

Տնտեսական ծանր տագնապէ տառապող քաղաքացին, որուն մօտ շիկացած էր նաեւ երկրին ու պետութեան նկատմամբ ցասումը, 17 հոկտեմբերին իջաւ փողոց՝ բողոքելու համար տիրող իրավիճակին դէմ:

Լիբանանցի քաղաքացիները երկու ամիս շարունակ ողողեցին լիբանանեան տարբեր շրջաններուն փողոցները եւ հրապարակները՝ պահանջելով կառավարութեան հրաժարականը եւ ընկերային ու տնտեսական արմատական բարեկարգումներ:

Լիբանանցի ժողովուրդին արդարացի ընդվզումին իբրեւ պատասխան՝ վարչապետ Զարհրի յայտնեց հետեւեալը. «Եթէ իշխանութեան մէջ գործընկերներս ընդառաջեն բարեկարգումներու գործադրութեան, 72 ժամ ետք հանդէս պիտի գամ տարբեր բովանդակութիւն ունեցող ուղերձով մը»:

Զարհրիի յայտարարութեան յաջորդող օրերուն աննախընթաց տարողութեամբ հարիւր հազարաւոր ցուցարարներ չորրորդ օրն ըլլալով ողողեցին լիբանանեան քաղաքները, հրապարակներն ու ճամբաները:

Յոյցերը հիմնականին մէջ կեդրոնացան



Պեյրուֆի Ռիատ Սոլի եւ Նահատակաց հրապարակներուն, Ռինկի կամուրջին, Սեսին հրապարակին, Ժալ Էլ Տիպի եւ Չուքի մայրուղիներուն, Նահր Զալպի փապուղիին, Ժիպէլի մայրուղիին, Թրիփուլիի Նուր հրապարակին, Աքքարի, Տըննիէի, Խալտէի եւ Նաամէի մայրուղիներուն, Սայտայի Էլիա հրապարակին, Սուրի եւ Նապաթիէի շրջաններուն, Պեքաայի տարբեր շրջաններուն, ինչպէս՝ Սաատնայէլի, Պաալպէքի, Թաալպայայի, Տահր Պայտարի, ինչպէս նաեւ Լեռնալիբանանի տարբեր շրջաններուն մէջ:

Ցուցարարները փակեցին ճամբաները եւ գրեթէ անդամալուծեցին ամբողջ երկիրը:

Պետական բոլոր հաստատութիւնները, դրամատուներն ու դպրոցները եւս մնացին փակ:

Լիբանանեան բանակը բազմիցս փորձեց վերաբանալ ճամբաները, ինչ որ բուռն բախումներու դուռ բացաւ ապահովական ուժերուն եւ ցուցարարներուն միջեւ:

Փողոցը շարունակեց կառչած մնալ իր պահանջներուն, եւ բողոքի ցոյցերուն բանեցուցած ճնշումին ներքեւ կառավարութիւնը եռօրեայ ժամկետին ընթացքին վաւերացուց տնտեսական բարեկարգումներու փաստաթուղթը եւ 2020-ի պետական ամսվարկը ստորագրեց՝ առանց տուրքերու յաւելումի եւ 0,6 առ հարիւր նիւթական բացով:

Միջազգային ընտանիքը զօրակցութիւն յայտնեց Լիբանանի կառավարութեան որդեգրած բարեկարգումներուն՝ շեշտելով խա-

ղաղ ցոյցերու պաշտպանութեան կարեւորութիւնը:

Լիբանանի հոգեւոր պետերը իրենց կարգին զօրակցեցան ժողովուրդին արդար պահանջներուն:

Անտեսելով 2020-ի պետական ամսվարկին եւ տնտեսական բարեկարգումներու փաստաթուղթին վաւերացումը՝ ցուցարարները անշեղ մնացին իրենց պահանջներէն՝ մերժելով հեռանալ իրենց հաւաքավայրերէն:

Բողոքի ցոյցերուն կառչած մնալն ու «Բոլորը՝ այսինքն բոլորը» կարգախօսին մնալուն կրկնութիւնը իրենց կարգին ընդվզեցուցին այն քաղաքացիները, որոնք կը մերժեն իրենց ղեկավարներն ու հոգեւոր պետերը, յատկապէս Յըզպալլայի ընդհանուր քարտուղար սէյիտ Ջասան Նասրալլան եւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրին փտած նկատել:

Այս իրականութիւնը պատճառ դարձաւ, որ Դիմադրութեան եւ Յըզպալլայի ու Ամալ շարժումի հետեւորդներ իրենց կարգին իջնեն փողոց եւ բախումներ ունենան բոլորին դէմ գոռացող ցուցարարներուն հետ:

Արձանագրուեցան քաղաքացիական պատերազմ յուշող պատկերներ:

Ցոյցերու 12-րդ օրուան ընթացքին երկրին հիմնական ճամբաները մնացին փակ:

Չանգուածային բողոքի շարժումներուն 13-րդ օրը՝ 29 հոկտեմբերին, վարչապետ Յարիրի ներկայացուց իր հրաժարականը:

Նոյն գիշերուան ընթացքին Ռինկի կա-



ունեցան ժողովրդային շարժումներուն մէջ:

13 նոյեմբերին Խալտէի մայրուղիին վրայ կը զոհուի ժողովրդային շարժումի ցուցարարներէն Ալա Ապու Ֆախըր՝ բանակի կրակոցին պատճառով:

Յանցագործ բանակայինը կը յանձնուի Չիւնուորական ատեանին:

Մինչ ժամանակը կ'անցնէր, ցուցարարները հանրապետութեան նախագահէն կը պահանջէին երեսփոխանները հրաւիրել Նոր վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններու՝ միաժամանակ պահանջելով կազմել մասնագետներէ եւ պարկեշտ անհատներէ բաղկացած կառավարութիւն մը, որ կազմակերպէր կանխահաս երեսփոխանական ընտրութիւններ:

19 նոյեմբերին խորհրդարանին գումարելիք օրէնսդրական նիստին օրը, ցուցարարները փակեցին խորհրդարան տանող բոլոր մուտքերը: Հետեւաբար օրէնսդրական նիստը յետաձգուեցաւ՝ օրինաթիւի չգոյութեան պատճառով, հակառակ այն իրողութեան, որ խորհրդարանը պիտի վաւերացնէր փտածութեան դէմ պայքարի յատուկ օրինագիծեր:

Նշենք, որ ցոյցերուն ընթացքին երկրին մէջ սկսաւ ամերիկեան տոլարի տագնապ մը, որ պատճառ դարձաւ, որ լուծմայափոխները չարաշահէն կացութիւնը եւ խախտեն պետութեան կողմէ ճշդուած 1500 լ. ոսկիի սակը՝ զայն հասցնելով մինչեւ առաւելագոյնը 2300 լ. ոսկիի:

Դրամատուներուն պարագային ալ արձանագրուեցաւ մեծ հարց, որ շարունակուեցաւ մինչեւ տարեվերջ, երբ ամերիկեան տոլարով կամ լիբանանեանով պահ գումար ունեցող քաղաքացին խայտառակ դարձաւ՝ դրամատուներուն կողմէ իրեն տրամադրուող սահմանափակ գումարներուն պատճառով:

28 նոյեմբերին ծագեցաւ նաեւ վառելանիւթ ներածելու տագնապ մը, երբ պենզինի կայարանները բաց գործադուլ յայտարարե-

մուրջի շրջանին մէջ արձանագրուեցան բախումներ եւ քառսային վիճակ:

Նախագահ Աուն ընդունեց վարչապետ Հարիրիի հրաժարականը եւ անկէ խնդրեց շարունակել ընթացիկ աշխատանքները:

Հանրապետութեան նախագահը խոստացաւ աշխատիլ կազմելու այնպիսի կառավարութիւն մը, որ կարենայ վերականգնել պետութեան նկատմամբ ժողովուրդին վստահութիւնը:

Այս անգամ սակայն, ցուցարարներուն սլաքները սկսան ուղղուիլ դէպի նախագահ Աունը եւ զայն մեղադրել երկրին սահմանադրութիւնը խախտելու յանցանքով:

Իրենց ղեկավարները պաշտպանող լիբանանեան քաղաքական ուժերուն կարգին եղաւ նաեւ Ազգային ազատ հոսանք կուսակցութիւնը, որ իր հետեւորդներով ու համակիրներով պաշտպանեց իր հիմնադիրը՝ նախագահ Աունը, հաւատարմութիւն յայտնելով անոր:

Նախագահ Աուն ընդգծեց հրապարակները իրարու դէմ չլարուելու կարելոթիւնը: Ան կոչ ուղղեց ցուցարարներուն միասնաբար գործելու եւ բարեկարգումները գործադրելու, սակայն անոր կոչերը մնացին անպատասխան:

Ժողովրդային շարժումի ցոյցերուն 20-րդ օրը լիբանանեան բանակը ուժի դիմեց՝ բանալու համար ճամբաները:

Այս քայլէն ետք աշակերտութիւնը եւ ուսանողութիւնը հիմնական դերակատարութիւն

ցին եւ մերժեցին վառելանիւթ վաճառել քաղաքացիին՝ բողոքելով այն իրողութեան դէմ, թէ իրենք տուարով կը գնեն վառելանիւթը եւ լիբանանեան դրամանիշով գայն կը ծախեն քաղաքացիներուն, հետեւաբար կրելով նիւթական վնասներ:

Երկու օր ետք այդ գործադուլը վերջ գտաւ՝ շնորհիւ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարի պաշտօնակատար

Նատա Պուլթանիի եւ Վառելանիւթի կայարաններու սեփականատերերու սենտիքայի նախագահ Սամի Պրաքսի միջեւ խորհրդակցութիւններուն:

Պուլթանի նախաձեռնեց քայլի մը, որուն հիման վրայ լիբանանեան պետութիւնը ինք պիտի սկսի պենզին ներածել:

Ժողովրդային շարժումի ամենէն հետաքրքրական իրականութիւններէն եղաւ Լիբանանի անկախութեան 76-ամեակի նշումը՝ Նահատակաց հրապարակին վրայ, երբ ցուցարարները կազմեցին ժողովրդային տարբեր տեսակի «ջոկատ»-ներ, եւ իւրաքանչիւրը ուրոյն դրօշակը կրելով տողանցեց հրապարակին վրայ՝ հանդիսութիւնը եզրափակելով սիրուած տի. ճէյ. Ռոճի նուագներու համադրումին վրայ արձանագրուած երգերով ու պարերով:

Սակայն 22 նոյեմբերէն ետք, արձանագրուեցաւ աղէտալի դէպք մը, երբ Նաամէի մայրուղիէն Պէյրութ ուղղուող քաղաքացիական ինքնաշարժ մը բախելով մայրուղին փակած արգելքին բռնկեցաւ ու անոր հրդեհէն հրկիզուեցաւ ընտանիք մը:

Այս դէպքէն ետք ապահովութեան ուժերուն յստակ թելադրանք ուղղուեցաւ ճամբաները բաց պահելու եւ յարգելու քաղաքացիներուն երթելէկի ազատութեան իրաւունքը:

Ռինկի կամուրջին վրայ ցուցարարներուն եւ Յըզպալլայի ու Ամալի համակիրներուն միջեւ արձանագրուած բախումներուն ի տես՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը կոչ ուղ-



ղեց պաշտպանելու ցոյցերուն խաղաղ բնոյթը:

Արտաքին այս միջամտութեան յաջորդ օրը՝ 26 նոյեմբերին, Այն Ռըմմանէ, Շիյահ, Պաապտա, Պիքֆայա, Պաալպէք եւ Թրիփոլի վերածուեցան լիբանանցի քաղաքացիներու միջեւ բախումներու թատերաբեմերու:

Բախումներու տեսարանները սարսափ առթեցին լիբանանցի քաղաքացիներուն, եւ պատերազմի դառն յիշողութիւնը մղեց գանոնք, որ բախումներէն նուազ քան 24 ժամ ետք իջնեն փողոց եւ նոր շրջաններու մէջ վարդեր բաժնելով մերժեն վերադառնալ պատերազմի օրերուն:

Պարտադիր խորհրդակցութիւններու ճշդումին հարցը երկար ատեն մնաց անորոշ:

Խօսուեցաւ վարչապետի հաւանական թեկնածուներու շարքի մը մասին, սկսեալ՝ Սոհամետ Սաֆատիէն, մինչեւ Սամիր Խաթիպ:

Թէեւ Հարիրի բազմիցս կրկնեց, թէ վարչապետը ինք պիտի չըլլայ, այլ ուրիշ մը, սակայն աւելի ուշ յստակ դարձաւ, որ Հարիրիի վարչապետ վերանշանակուելու պայմանը այն էր, որ նախարար ժըպրան Պասիլ նոր կառավարութեան մաս չկազմէ եւ կառավարութիւնը ըլլայ մասնագետներէ բաղկացած նախարարաց խորհուրդ մը:

Պասիլի կողմէ կատարուած այն յայտարարութենէն ետք, որ Լիբանանի շահերը ամէն բանէ վեր են, եւ հիմնուելով իր պաշտօնը զոհելու պատրաստակամութեան վրայ,



դարձեալ վարչապետ նշանակուելու Յարիրիի յոյսերը բարձրացան, սակայն անոնք մետասաներորդ պահուն ի դերել ելան, երբ Լիբանանեան ուժեր կուսակցութեան երեսփոխանական պլոքը որոշեց ի նպաստ Յարիրիի չքուէարկել՝ վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններուն ընթացքին:

Նշենք, որ նախագահական պալատը երեք անգամ խորհրդակցութիւններու թուական ճշդեց, առաջինը՝ 2 դեկտեմբերին, երկրորդը՝ 9 դեկտեմբերին, իսկ երրորդը՝ 16 դեկտեմբերին: Իսկ վերջին յետաձգումը կատարուեցաւ Յարիրիի պահանջին ընդառաջելով, սակայն ինչպէս նշեցինք, Յարիրի վարչապետ նշանակուելու իր յոյսերը կորսնցուց եւ վերահաստատեց, որ ինք վարչապետի պաշտօնի թեկնածու չէ:

Նկատի ունենալով այս իրողութիւնը՝ նախագահ Աուն եւ արտաքին գործոց նախարար Գաբրիէլ Սիսան Տիպապ նշանակուեցաւ երկրին տարածապետը՝ 69 երեսփոխաններու ձայներով:

Ան նշեց, որ ինք նպատակադրած է կազմել անկախօրէն գործող սեղմ կառավարութիւն մը:

Երեքշաբթի, 24 դեկտեմբերին Տիպապ այցելեց նախագահ Աունի եւ բաւարարուեցաւ ըսելով, որ այդ հանդիպումը դրական է:

Յայտնենք, որ ժողովրդային շարժումը առաջին իսկ օրէն մերժեց Տիպապի նշանակումը եւ անոր տան դիմաց մերթ ընդ մերթ բողոքի ցոյցեր կազմակերպեց:

Ս. Ծննդեան տօնին առիթով ժողովրդային շարժումի ցոյցերը վերջ գտան՝ 2020-ի սկիզբը աւելի հզօր թափով վերադառնալու անպաշտօն տեղեկութիւններու սպրդեցումով:

ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆԻ ԱՆԵՐԵՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նախագահ Աուն եւ արտաքին գործոց նախարար Ժըպրան Պասիլ բազմիցս եւ միջազգային բոլոր ամպիոններէն հաստատեցին, որ Լիբանան կը մերժէ տեղահանուածներու վերադարձին համար քաղաքական լուծումի սպասել:

Անոնք մնայուն կերպով շեշտեցին, որ Լիբանան կը մերժէ պաղեստինցի գաղթականներուն եւ սուրիացի տեղահանուածներուն բնակեցումը:

Նախագահ Աուն ամէն ջանք ի գործ դրաւ նաեւ Լիբանանը վերածելու Մերձեցման եւ երկխօսութեան մարդու ակադեմիայի կեդրոնատեղիի եւ այս իմաստով արժանացաւ միջազգային զօրակցութեան:

31 մարտին նախագահ մասնակցեցաւ Արաբական լիկայի վեհաժողովին, որ կայացաւ Թունուզի մէջ:

Վեհաժողովին ընթացքին նախագահ Աուն շեշտեց, որ Լիբանան կառչած կը մնայ եւ յանձնառու է տեղահանուածներու գծով որդեգրուած կեցուածքին: Ան շեշտեց նաեւ, որ Լիբանան կը փափաքի ՄԱԿ-ի հետ ամբողջական գործակցութիւն ծաւալել՝ սուրիացի տեղահանուածներու տունդարձին առումով:



Նշենք, որ Նախագահ Աուև սեպտեմբերի կիսուն մասնակցեցաւ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին, ուր առաջարկեց Լիբանանի մէջ Մերձեցման եւ երկխօսութեան մարդու ակադեմիայի հիմնումը՝ ստանալով 165 թեր քուէներ: Թուրքիա եւ Միացեալ Նահանգներ դեմ քուէարկած էին այս առաջարկին:

ՄԵԾՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀՈՉԱԿՄԱՆ 100-ԱՄԵԱԿ

Մինչ Լիբանանի Նահատակաց տօնը՝ 6 մայիսը, քայլ առ քայլ կը վերադառնայ պետութեան կողմէ պաշտօնապէս նշուելու աւանդութեան, Լիբանան այս տարի կը նշէ «Մեծն Լիբանանի հռչակման» 100-ամեակը:

100-ամեակի տօնակատարութեանց մեկնարկին առիթով՝ հանրապետութեան Նախագահ գոր. Միշել Աուև շաբաթ, 31 օգոստոս 2019-ին, լիբանանեան լսատեսողական լրատուամիջոցներուն ընդմէջէն պատկերասփռուած պատգամ մը ուղղեց լիբանանցիներուն:

Իր խօսքին մէջ Նախագահ Աուև շեշտեց, որ իրենք Մեծն Լիբանանը կը փափաքին ունենալ յառաջիկայ հարիւրամեակին, եւ ինչու չէ՛ յառաջիկայ հազարամեակին եւս, որովհետեւ անկա ազատութիւններու եւ քաղաքակրթութիւններու, ժողովրդավարութեան, բազմազանութեան, նորարարութեան, ինչպէս նաեւ հաւատքի եւ աւանդներու հայրենիքն է:

«Պատահական չէ, որ Լիբանան իր աշխարհագրական փոքր տարածքով ժողովրդավարութեան փարոսն է, ազատ մտքի ամպիոնը, քաղաքակրթութիւններու փոխադարձ գործակցութեան դաշտ մը, ինչպէս նաեւ ստեղծագործութիւններու կեդրոն մը», ըսաւ Նախագահ Աուև:

Նախագահ Աուև նշեց, որ 1 սեպտեմբեր 1920-ին Մեծն Լիբանանի յայտարարութեան առիթով Լիբանան յունուար 2020-ին պիտի սկսի կազմակերպել շարք մը ձեռնարկներ:

Ան նկատել տուաւ, որ օրին Մեծն Լիբանանի յայտարարութիւնը լիբանանեան գոյացութեան մասին միջազգային թանկարժէք ճանաչում մըն էր, եւ անոր շնորհիւ Լիբանան այսօր իր ներկայ սահմաններով կը գոյատեւէ՝ իբրեւ ազատ, անկախ եւ գերիշխան երկիր:

«Մեր Նախահայրերը մեծաթիւ զոհողութիւններով եւ տառապանքով կրցան հասնիլ անկախութեան, եւ մենք Մեծն Լիբանանի հռչակման 100-ամեակը նշելու արժանի չենք դառնար, եթէ չփաստենք, որ կարողութիւնը ունինք հզօրագոյն բանակները տապալելու, Լիբանանի անկախութիւնն ու պատգամ երկիր ըլլալու ճշմարտութիւնը պաշտպանելու», ըսաւ ան:

Նախագահ Աուև կարելոր նկատեց անդրադառնալ Լիբանանի պատմութեան վերջին տասնամեակներուն՝ հաստատելով, որ երկրին պատմութիւնը յիշելը կարելոր է, «որովհետեւ այն ժողովուրդները, որոնք կը մոռնան իրենց պատմութիւնը, կը կրկնեն Նոյն սխալները, կը լուսանցքայնացնեն իրենց դերակատարութիւնը եւ կը վտանգեն իրենց ապագան», շեշտեց ան:

Նախագահ Աուև ընդգծեց, որ 1516-1918՝ չորս դար եւ երկու տարիներու ընթացքին, Լեռնալիբանանը ապրեցաւ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ, եւ հակառակ իրենց ապրած որոշ ինքնավարութեան, լիբանանցիք տառապեցան, որովհետեւ օսմանեան վարչական բաժանումներուն պատճառով փոփոխութեան ենթարկուեցաւ Լեռնալիբանանի աշխարհագրական տարածութիւնը, մինչ Լիբանանի միւս շրջանները անջատուեցան եւ ենթակայ մնացին օսմանեան ուղղակի տիրապետութեան:

Ան հաստատեց, որ օսմանեան իշխանութեան ճիրաններէն ազատագրուելու իւրաքանչիւր փորձի դիմաց կ'արձանագրուէին բռնարարքներ, վայրագութիւն, ոճիր, ինչպէս նաեւ համայնքային սադրանքներ: «Օսմանեան կայսրութեան կողմէ լիբանանցիներուն դեմ գործուած պետական ահաբեկչութիւնը, յատկապէս Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին, պատճառ դարձաւ, որ հարիւր հազարաւոր լիբանանցիներ զոհերը դառնան սովի, զինուորագրումի եւ բիրտ ու վայրագ այլ արարքներու: Պետք չէ մոռնալ նաեւ Օսմանեան կայսրութեան բարձրացուցած կախադանները, որոնց ընդմէջէն անոնք փորձեցին ճգմել ազատատենչութեան ու պայքարի կամքը: Այս բոլորին կողքին պետք է աւելցնել նաեւ ապահովական եւ վարչական բոլոր հաստատութիւններուն եւ կազմակերպու-

թիւներուն դեմ հասած հարուածը, երբ ճեմալ փաշան պաշտօնագրկեց Լեռնալիբանանի կառավարիչ Յովհաննէս փաշան: Այդ պատերազմէն ետք, օսմանցիներուն ձախողութեամբ է, որ Լիբանան մուտք գործեց ֆրանսական հոգատարութեան ներքեւ եւ սկսաւ իր պատմութեան նոր փուլը, որուն շնորհիւ կրցաւ հասնիլ 1920-ի Մեծն Լիբանանի հռչակումին, եւ ապա՝ անկախութեան», շեշտեց Նախագահ Աուն:

Ան կոչ ուղղեց նորահաս սերունդներուն սորվեցնելու Լիբանանի պատմութիւնը՝ աւելցնելով, որ երկիրները կը գոյատեւեն, երբ անոնց գերիշխանութիւնը կը գոյատեւէ:

«Մենք ամբողջ աշխարհին կ'ըսենք, որ Լիբանան խաղաղութիւնը սիրող երկիր է եւ բնաւ պատերազմ չի սանձագերծեր, բայց եւ այնպէս լիբանանցիները օր մը օրանց չեն նահանջած եւ պիտի չզլանան պաշտպանելու իրենց հայրենիքը, եթէ անոր գերիշխանութեան կամ անոր ազգային արժանապատուութեան դեմ որեւէ ոտնձգութիւն կատարւի: Լիբանան որեւէ բռնագրաւումի եւ հոգատարութեան դիմաց տեղի պիտի չտայ», ըսաւ Նախագահ Աուն:

Ան աւելցուց, որ Լիբանանի դեմ գործուած իսրայելեան վերջին բռնարարքին դիմաց ցուցաբերուած լիբանանեան համախոհութիւնը, ինչպէս նաեւ հայրենիքը պաշտպանելու իրաւունքին ընդգծումը մեծագոյն փաստերն են, որ Լիբանան կառչած կը մնայ իր պետականութիւնը եւ իրաւունքները պաշտպանելու սկզբունքներուն:

Նախագահ Աուն իր պատգամը եզրափակեց հաստատելով, որ երկրին պետական հաստատութիւններն են, որոնք կ'երաշխաւորեն երկիրը, ինչպէս նաեւ անոնք հիմնասիւններն են, որոնց վրայ կանգուն կը մնայ հզօր եւ կարող հայրենիքը:

Նախագահ Աուն անհրաժեշտ նկատեց համայնքային վարչակարգէն անցնիլ քաղաքացիական արդիական պետութեան, ուր պատկանելիութիւնը նախ հայրենիքին է եւ ոչ թէ համայնքային ղեկավարներուն:

Հանրապետութեան նախագահը շեշտեց, որ այսօր Լիբանանի մղած մեծագոյն պայքարը փտածութեան դեմ պայքարն է, նոյնիսկ եթէ ոմանք մտածեն, թէ կարելի չէ այդ պայ-

քարը իրականացնել եւ յաջողութեամբ պսակել: «Մենք պիտի պայքարինք փտածութեան դեմ, ինչպէս նաեւ պիտի չեզոքացնենք այդ պայքարը արգելակող բոլոր խոչընդոտները, որպէսզի Լիբանանի ապագային նկատմամբ լիբանանցի երիտասարդները յոյսով լեցուին եւ չմտածեն արտագաղթի մասին», ըսաւ Նախագահ Աուն՝ աւելցնելով, որ այդ պայքարին արձանագրելիք փոփոխութեան եւ յաղթանակի նշոյլները արդէն իսկ սկսած են հորիզոնի վրայ երեւիլ:

Նախագահ Աուն հաստատեց, որ Լիբանան այնքան մեծ է, որ կարելի չէ զայն կոլ տալ, միաժամանակ ան այնքան փոքր է, որ զայն կարելի չէ մասնատել:

**ԹՈՒՐԵՒՅՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՎԱԶՂԷ**

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ դատապարտեց նախագահ Աունի կատարած յայտարարութիւնները՝ զանոնք նկատելով Լիբանանի մէջ Օսմանեան կայսրութեան դերակատարութեան դեմ քիւնախընդիր սլաքներ ուղղող պատգամ մը, որ կը պարփակէ նաեւ օսմանեան իշխանութեան դեմ ուղղուած՝ պետական ահաբեկչութիւն գործելու ամբաստանութիւնը, որ բացարձակապէս մերժելի է:

Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուր Զաւուշօղլուի Լիբանան այցելութենէն շաբաթ մը ետք նախագահ Աունի կատարած յայտարարութիւնները կը հարուածեն երկկողմանի մտերմիկ եւ հեզասահ յարաբերութիւնները:

«Նախագահ Աունի կեցուածքները ցաւալի են եւ անպատասխանատու: Թուրքիոյ Հանրապետութիւնը հպարտութիւնը ունի Օսմանեան կայսրութեան ժառանգորդը ըլլալուն համար», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութիւնը չանդրադարձաւ օսմանեան իշխանութիւններուն գործած բռնարարքներուն՝ Լիբանանի վրայ իրենց իշխանութեան ամբողջ ընթացքին, եւ հաստատեց, որ օսմանեան իշխանութիւններուն վերազրուող պետական ահաբեկչութիւնը խստիւ մերժելի է:

Հաղորդագրությունը ընդգծեց, որ օսման-եան ժամանակաշրջանը եղած է Միջին Արեւելքի մէջ ապահովական կայունութեան ամրապնդման ժամանակաշրջանը, ինչպէս նաեւ ազգային միասնականութեան ժամանակաշրջանը, որուն ընթացքին տարբեր ընկերություններ ներողամտութեան մթնոլորտի մէջ ազգային գոյակցութիւն իրականացուցին:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յանդգնութիւնը ունեցաւ նախագահ Աուլը ամբաստանելու պատմութիւնը նենգափոխելու, ինչպէս նաեւ օրին Լիբանանի դիմագրաւած փորձանքներուն պատասխանատուութիւնը Օսմանեան կայսրութեան վերագրելու յանցանքով:

«Նախագահ Աուլի անգիտակից այս մօտեցումը պատմութեան առարկայականութեան եւ շրջանի ժողովուրդներուն խիղճին չի համընկնիր», ընդգծուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութեան մէջ երբեք անդրադարձ չէր կատարուած օսմանցիներուն գործած ջարդերուն, ինչպէս նաեւ ճեմալ փաշայի բարձրացուցած կախաղաններուն, որոնց վրայ նահատակուեցան լիբանանցի մտաւորականները:

Հաղորդագրութիւնը անտեսած էր նաեւ լիբանանցիներուն միջեւ սադրանքներ նախապատրաստելու եւ զանոնք իրարու դէմ լարելու օսմանեան իշխանութեան արարքները:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵ

Լիբանանի արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ խստիւ դատապարտեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութիւնը եւ հանրապետութեան նախագահին դէմ անոր բովանդակած վարկաբեկիչ արտայայտութիւնները:

«Նախագահ Աուլի խօսքին մէջ արտասանուած բառերը պատմական դէպքերու իսկությունը կը ներկայացնեն. անոնք կը նշեն օսմանեան իշխանութեան ընթացքին Լիբանանի դիմագրաւած պատմական ճշմարտութիւնները, որոնք սակայն լիբանանցի եւ թուրք ժողովուրդներուն կողմէ շրջանցուած

են՝ նկատի ունենալով, որ երկու ժողովուրդներն ալ ապագայի առումով քաղաքական եւ տնտեսական լաւագոյն յարաբերութիւններուն կը ձգտին: Չոյգ երկիրները միացնող իրականութիւնները շատ անելի են, քան զանոնք բաժնող իրականութիւնները: Մարտահրաւերները մեծ են ու միացեալ. անոնք կ'ենթադրեն միասնաբար աշխատիլ եւ ոչ թէ բաժանում սերմանել», նշուեցաւ արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութեան մէջ հաստատուեցաւ նաեւ, որ հանրապետութեան նախագահին նկատմամբ գործածուած վարկաբեկիչ այս ոճը մերժելի է եւ դատապարտելի: Իսկ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը պետք է սրբազրէ իր գործած այս սխալը, որովհետեւ լիբանանեան-թրքական յարաբերութիւնները շատ անելի խոր են եւ անելի բարձր, քան չափազանցուած հակազդեցութիւն մը, որ անտեղի է: Նախարարութիւնը պիտի շարունակէ իր միջոցառումները, մինչեւ որ դիւանագիտական կանոններուն համարժէք սրբագրում կատարուի եւ երկկողմանի յարաբերութիւններուն հասած վնասը արգիլուի:

Նշենք, որ արտաքին գործոց նախարարութեան քաղաքական հարցերու տնօրէն, դեսպան Ղատի Խուրի Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպան Հաքան Չաքըլը կանչեց հաշուետուութեան՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան հրապարակած հաղորդագրութեան բովանդակութեան մասին պարզաբանումներ խնդրելով:

ԱՊԱՅՈՎԱԿԱՆ

Տարին սկսաւ Արսալի մէջ ՏԱՅԵԾ-ի բջիջի մը անդամներուն ձերբակալումով: Բջիջ մը, որ կը պատրաստուէր Լիբանանի տարածքին ահաբեկչական գործողութիւններ կատարելու:

Ապահովական բացառիկ կայունութիւն վայելող Լիբանանը 30 յունիսին ապրեցաւ ցնցում մը, երբ Լեռնալիբանանի որոշ շրջաններ մերժեցին Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլի այցելութիւնը:

Ի տես այս մերժումին եւ հետզհետէ սրող



ապահովական իրավիճակին, Պասիլ Լեռնալիբանանեն հեռացաւ՝ ընդգծելով, որ կարելի չէ զիրենք տիրոգի-քրիստոնեայ դաւադրութեան ենթակայ դարձնել:

Բայց եւ այնպէս Լեռնալիբանանի մէջ ներքաղաքական լարուածութիւնը վերածուեցաւ զինեալ բախումի, երբ տեղահանուածներու հարցերու պետական նախարար Սալէի Ղարիպի շքախումբին վրայ կրակ բացուեցաւ՝ Զապըր Շմունի մէջ:

Կրակոցներուն պատճառով զոհուեցան Ղարիպի երկու ընկերակիցները՝ Ռամի Սալման եւ Սամեր Ապի Ֆրաժ:

Դէպքին յաջորդ օրն իսկ Պաշտպանութեան գերագոյն խորհուրդը գումարեց արտակարգ նիստ մը, որուն ընթացքին քննեց Զապըր Շմունի իրադարձութիւնները եւ որոշեց շրջանին մէջ ապահովական կայունութիւնը վերահաստատել:

Չինեալ միջադէպին մասնակիցները ապահովական կառոյցներուն յանձնելու ճիգերը շարունակուեցան, եւ կարճ ժամանակ ետք յանցագործները յանձնուեցան դատական իշխանութիւններուն:

Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Ապպաս Իպրահիմ ստանձնեց Լեռնալիբանանի միջադէպին յառաջացուցած լարուածութիւնը մեղմացնելու եւ միջտիրոգիական, ինչպէս նաեւ տիրոգի-քրիստոնեայ հաշտութիւն մը կատարելու պարտականութիւնը, որ սակայն շատ դժուար ու բարդ էր:

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն անձամբ հետեւեցաւ այդ թղթածրարին հետապնդումին՝ նկատի ունենալով, որ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ ժոմպլաթ եւ Լիբանանեան ժողովրդավարութիւն կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Թալալ Արսլան մերժեցին հաշտուիլ:

Արսլան պնդեց, որ Զապըր Շմունի միջադէպը նախարար Սալէի դէմ գործուած մահափորձ է եւ իբրեւ այդպիսին այդ թղթածրարը պետք է ստանձնուի Արդարութեան խորհուրդին կողմէ, իսկ ժոմպլաթ մերժեց այդ վարկածը՝ հաստատելով, որ այդ թղթածրարին արդար լուծումը կարելի է ապահովել նաեւ Չինուորական ատեանին ընդմէջէն:

Լիբանանի իշխանութեան երեք պետերը հաստատեցին, որ Լիբանանի մէջ ամէն ինչ կարելի է հանդուրժել, բացի երկրին միասնականութեան խախտումէն:

9 օգոստոսին Թալալ Արսլան եւ Ուալիտ ժոմպլաթ հաշտուեցան:


Այս առիթով, նախագահ Աուն հաստատեց, որ Լեռնալիբանանի հաշտութիւնը ցնցումներու պիտի չենթարկուի, նոյնիսկ եթէ քաղաքական տարակարծութիւններ արձանագրուին: Ապա ան ուղղուեցաւ Պէյթետտիկ նախագահական ամարանոց, ուր ընդգծեց, որ Լեռնալիբանան գտնուելուն նպատակն է մտահոգութիւնները փարատել եւ ազգային միասնականութիւնը ամրապնդել:

ԻՍՐԱՅԷԼ

Լիբանան-բռնագրաւուած պաղեստինեան հողեր սահմանագիծին վրայ Իսրայել տարեսկիզբին շարունակեց կառուցել քարաշէն պատնէշը. իսրայելացիք Ատայսէի բարձունքներուն վրայ գետնդեցին փշաթելեր եւ որդեգրեցին ապահովական խիստ միջոցառումներ:

Մինչ Իսրայել իր ոտնձգութիւնները կը շարունակէր, Յրզպալլայի ընդհանուր քարտուղար սէյիտ Յասան Նասրալլա շեշտեց, որ սիոնականները կրնան անակնկալի գալ, եթէ իրենք յանկարծ Գալիլիոյ մէջ յայտնուին: Ան յայտնեց նաեւ, որ Դիմադրութիւնը ստացած է թիրախահար հրթիռներ:

Լիբանանի Պաշտպանութեան գերագոյն խորհուրդը պատնէշը նկատեց լիբանանեան գերիշխանութեան դէմ գործուած ոտնձգութիւն:



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի բազմիցս զգուշացուց իսրայելեան ոտնձգութիւններէն, յատկապէս նկատի ունենալով շրջանային պատերազմի մասին շշուկներու հաւանականութիւնը:

Քապըր Շմունի գիտեալ միջադէպէն ետք, Լիբանանի համար ապահովական երկրորդ լուրջ խախտումը կարելի է նկատել Պէյրութի հարաւային արուարձանները ականահարումի թիրախ դարձուցած իսրայելեան անօդաչու թռչող սարքերը:

25 օգոստոսին, շաբաթէն կիրակի լուսնոյ գիշերուան ընթացքին, Յարաւային արուարձանները թիրախ դարձան իսրայելեան անօդաչու թռչող երկու սարքերու յարձակումին:

Անոնցմէ մէկը խանգարուեցաւ եւ ինկաւ, իսկ միւսը ականահարեց շրջանի Մուաուատ փողոցը՝ հսկայական վնասներ պատճառելով Յրզպալլայի տեղեկատուական գրասենեակին, ինչպէս նաեւ փշրելով անոր շրջակայքը գտնուող շէնքերուն ապակիները:

Նախագահ Աուն Լիբանանի մէջ գործուած իսրայելեան այս բռնարարքը պատերազմի համազօր նկատեց՝ հաստատելով, որ Լիբանան իրաւունք ունի պաշտպանելու իր անկախութիւնն ու գերիշխանութիւնը:

Վարչապետ Յարիրի կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ մերժելու լիբանանեան գերիշխանութեան դէմ Իսրայելի գործած բացայայտ ոտնձգութիւնը:

Կառավարութիւնը հաստատեց, որ թիւ 1701 բանաձեւի խախտումը կը սպառնայ Լիբանանի կայունութեան:

Պաշտպանութեան գերագոյն խորհուրդը ընդգծեց լիբանանցիներուն ինքնապաշտպանութեան իրաւունքը՝ առկայ բոլոր միջոցներով:

Յրզպալլայի ընդհանուր քարտուղար սէյիտ Յասան Նասրալլա շեշտեց, որ սահմանին կանգնած իսրայելացի զինուորները արդէն իսկ անապահով վիճակի մէջ պէտք է ըլլան եւ պէտք է սպասեն Դիմադրութեան պատասխանին:

1 սեպտեմբերին Դիմադրութիւնը պատասխանեց իսրայելեան բռնարարքներուն՝ Աւիվի մէջ ջախջախելով իսրայելեան գրահապատ մը:

**ԱՐԱՔԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ
Դ. ՎԵՅԱԺՈՂՈՎ**

20 յունուարին Արաբական տնտեսական Դ. վեհաժողովը գումարւեցաւ Պեյրուսի մէջ:

Թէեւ արաբական երկիրներու իշխանութեանց պետերուն աննըշան ներկայութիւնը ինքզինք պարտադրեց վեհաժողովին վրայ, սակայն անոր յաջողութիւնը շօշափելի դարձաւ վեհաժողովէն

բխած «Պեյրուսի յայտարարութեան» ընդմէջէն, որ յատկապէս Լիբանանի համար շահեկան եր՝ գաղթականներու եւ տեղահանուածներու տունդարձին քաջալերման գծով գոյացած արաբական համախոհութեան շնորհիւ:

Պետութիւններու ղեկավարներու մակարդակով վեհաժողովին մասնակցեցան Մաւրիտանիոյ նախագահ Մոհամետ Ուըլտ Ապտելազիզ եւ Զաթարի Թամիմ պըն Յամատ Ալ Թանի իշխանը, որ բաւարարուեցաւ միայն բացման նիստին իր մասնակցութեամբ:

Արաբական լիկայի ընդհանուր քարտուղար Ահմետ Ապուլ Ղեյթ գովաբանեց վեհաժողովի կազմակերպումը, իսկ արաբ արտաքին գործոց նախարարներու նիստի նախագահ Ժըպրան Պասիլ իր արտասանած խօսքին մէջ կոչ ուղղեց Սուրիոյ Արաբական լիկայ վերադարձին:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՆ



Յունուարի առաջին կիսուն Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Միչին Արելեքի հարցերու օգնական Տէյվիտ Յէյլ ժամանեց Պեյրուս, ուր ան մտահոգութիւն յայտնեց Յրզպալլայի գործունեութեան առնչութեամբ՝ հաստատելով հանդերձ Լիբանանի հանդէպ Մ. Նահանգներու զօրակցութիւնը:

22 մարտին Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեօ այցելեց Լիբանան, ուր հանդիպումներ ունեցաւ իշխանութեան պետերուն եւ լիբանանցի բարձրաստիճան պատասխանատուներու հետ:

Լիբանանի մէջ Փոմփեօ լիբանանցիներուն ձգտումները խոչընդոտելու յանցանքով դատապարտեց Յրզպալլան եւ զօրակցութիւն յայտնեց տեղահանուածներու տունդարձին:

3 մայիսին ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կուրթերես պահանջեց Յրզպալլայի ապազինումը:

Մայիսի կիսուն Տէյվիտ Սաթըրֆիլտ այցելեց Լիբանան՝ ծովային սահմանագծումին շուրջ խորհրդակցելու երկրին իշխանութեան պետերուն հետ:

Սաթըրֆիլտ կատարեց Լիբանանի եւ Իսրայելի միջեւ սահմանագծումի միջնորդութիւնը:

Երկարատեւ շարունակելէ ետք ծովային սահմանագծումի բանակցութիւնները, Սաթըրֆիլտ իր առաքելութեան մէջ ձախողեցաւ:

**ՉՔՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ**



Պետք է արձանագրել սակայն, որ կառավարության մեջ աշխուժ կերպով գործող հազուադիւտ նախարարութիւններէն եղաւ զբօսաշրջութեան նախարարութիւնը:

Փետրուարի սկիզբը կազմուած կառավարութեան մէջ զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ ինք յանձնառու կը մնայ իր ստանձնած պատասխանատուութեան եւ պիտի աշխատի զբօսաշրջութեան նախարարութիւնը հասցնել այն մակարդակին, որ ան աշխուժացնէ երկրին տնտեսութիւնը:

Յօր Լիբանան համախմբումին կողմէ իր նախարարները հաշուետուութեան կանչելու մասին յայտարարութիւններուն լոյսին տակ, ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Երեսփոխան Յ. Բագրատունի հաստատեց, որ նախարար Կիտանեան ՅՅԴ Դաշնակցութեան նախարարն է եւ հաշուետու է միայն Դաշնակցութեան:

Իր գործունէութեան շրջագիծին մէջ նախարար Կիտանեան ջանաց ամեն իմաստով բարելաւել զբօսաշրջութեան մարզը՝ Լիբանանը դարձնելով տարբեր ցամաքամասերու զբօսաշրջիկներուն կիզակետը:

14 մարտին նախարար Կիտանեան մասնակցեցաւ Մոսկուայի զբօսաշրջական ցուցահանդէսին:

19 մարտին նախարարութեան կազմակերպութեամբ եւ վարչապետ Յարիրիի հովանաւորութեամբ տեղի ունեցաւ զբօսաշրջական խորհրդաժողով մը, որուն ըն-

թացքին Ա. Կիտանեան շեշտեց, որ զբօսաշրջութիւնը կրնայ երկիրը փրկել իր դիմագրաւած տնտեսական տագնապէն:

Ան ընդգծեց նաեւ, որ զբօսաշրջութեան մարզը վերածնունդ պիտի ապրի:

16 ապրիլին նախարար Կիտանեան յայտարարեց կառավարութեան զբօսաշրջութեան ծրագիրը՝ հաստատելով, որ Լիբանան զբօսաշրջական բազմազանութեան երկիր է:

9 յուլիսին Ա. Կիտանեան նախագահ Աունի ներկայացուց զբօսաշրջութեան մարզին մէջ 2019-ի Ա. կիսուն արձանագրուած արդիւնքները: Ան նշեց, որ բաղդատած նախորդ 7 տարիներուն՝ 2019-ն զբօսաշրջութեան լաւագոյն տարին է Լիբանանի մէջ:

ԼԻՔԱՆԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ



Լիբանանեան խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու եւ պաշտպանութեան խորհրդարանական մնայուն յանձնախումբերը վաւերացուցին

Լիբանանի եւ Հայաստանի միջեւ գործակցութեան համաձայնագիրները:

Նշենք, որ 1 մարտին պաշտպանութեան նախարար Էլիաս Պու Սաապ պաշտպանութեան նախարարութեան կեդրոնին մէջ ընդունած էր Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեանը, որ շնորհաւորեց զինք՝ պաշտպանութեան նախարար նշանակուելուն առիթով:

Հանդիպումին ընթացքին քննարկուած էին երկկողմանի գործակցութեան ամրապնդման հեռանկարները, ինչպէս նաեւ վերջերս Լիբանանի եւ Հայաստանի բանակներուն միջեւ

ստորագրուած պաշտպանութեան մարզի վերաբերող համաձայնագիրը գործադրելու քայլերը:

20 սեպտեմբերին Նախարար Էլիաս Պու Սաապ պաշտօնակալն այցելութեամբ մը մեկնեցաւ Չայաստան:

Չայաստանի Չանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեան հիւրընկալեց Լիբանանի պաշտպանութեան Նախարար Էլիաս Պու Սաապի գլխաւորած պատուիրակութիւնը՝ ներկայութեամբ Չայաստանի պաշտպանութեան Նախարար Դաւիթ Տօնոյեանի:

Նախագահ Սարգսեան ողջունեց լիբանանեան պատուիրակութեան այցելութիւնը Չայաստան եւ երկու բարեկամ երկիրներուն միջեւ յարաբերութիւններու ընդլայնման ու զարգացման ուղղուած ջանքերը: Չանրապետութեան Նախագահը ընդգծեց, որ կը քաջալերէ փոխադարձ գործակցութեան խորացումը՝ ո՛չ միայն պաշտպանական եւ զինուորական, այլեւ տարբեր ոլորտներու մէջ, որոնց շարքին՝ բարձր արհեստագիտութիւններու, զբօսաշրջութեան եւ մշակոյթի:

Նախարար Էլիաս Պու Սաապ համակարծիք եղաւ, որ երկու երկիրները տարբեր ոլորտներու մէջ փոխշահաւետ համագործակցութիւնը խորացնելու կարելիութիւններ ու մեծ ներուժ ունին եւ այնպիսի կապող կամուրջ, որ լիբանանահայ համայնքն է: Ան նշեց, որ լիբանանահայ շատ ընկերներ ունի, եւ Չայաստանն ու հայկական մշակոյթը հարգատ էն իրեն:

Չրուցակիցները ընդգծեցին լիբանանահայ համայնքի առանձնայատուկ դերը՝ համակարծիք ըլլալով, որ անոր ներկայութիւնը ամուր հիմք կը ստեղծէ բոլոր ուղղութիւններով երկկողմանի յարաբերութիւններու զարգացման համար:

Նախագահ Սարգսեան պատրաստակամութիւն յայտնեց աջակցելու երկու բարեկամ երկիրներուն միջեւ փոխադարձ գործակցութեան խորացման ուղղուած իւրաքանչիւր Նախաձեռնութեան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան իր կարգին ընդունեց Պու Սաապը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ողջունեց Լիբանանի պաշտպանութեան Նախարարին այցելութիւնը, եւ վերջիշեւով 2018-ի աշնան Լիբանան կատարած իր այցելութիւնը, երկրի բարձրագոյն ղեկավարութեան հետ հանդիպումները, ընդգծեց, որ բարձրաստիճան պաշտօնակալն փոխադարձ այցելութիւնները կը Նպաստեն երկկողմանի գործակցութեան խորացման: Վարչապետը նշեց, որ երկու ժողովուրդներուն կը կապէ դարաւոր բարեկամութիւնը, Լիբանանի մէջ կը գործէ կենսունակ հայկական համայնք, երկու երկիրներուն միջեւ առկայ է բարձր մակարդակի քաղաքական երկխօսութիւն, եւ Չայաստանը կարեւոր կը նկատէ Լիբանանի հետ յարաբերութիւններու շարունակական սերտացումը՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային, մարդասիրական եւ այլ ոլորտներու մէջ:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար՝ Պու Սաապ նշեց, որ մեծ պատիւ է գտնուիլ Չայաստան եւ Չայաստանի գործընկերներուն հետ քննարկել փոխադարձ գործակցութեան խորացման հեռանկարները: Անոր համաձայն, Չայաստանն ու Լիբանանը մեծ ներուժ ունին զարգացնելու համագործակցութիւնը պաշտպանական, տնտեսական, մշակութային, զբօսաշրջութեան եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ ոլորտներու մէջ:



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA
www.gov.am



Հանդիպումի ընթացքին զրուցակիցները միտքեր փոխանակեցին պաշտպանության ոլորտին մէջ փոխադարձ գործակցութեան ամրապնդման, փորձառութեան փոխանակման, միացեալ նախագիծերու իրականացման շուրջ, անդրադարձան նաեւ միջազգային եւ շրջանային անվտանգութեան մարտահրաւերներուն:

Վարչապետը անդրադարձաւ Սուրիոյ մէջ Հայաստանի մարդասիրական առաքելութեան նպատակներուն եւ Լիբանանի հարաւը ՄԱԿ-ի ՖԻՆԻԼ-ի առաքելութեան հայ խաղաղապահներու մասնակցութեան՝ ընդգծելով, որ Հայաստանը կարելոր կը նկատէ շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատումը: Պու Սաապ ողջունեց Հայաստանի մարդասիրական գործողութիւնները Սուրիոյ մէջ եւ երախտագիտութիւն յայտնեց Լիբանանի մէջ հայ խաղաղապահ անձնակազմի մասնակցութեան համար:

Ապա Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական հանդիպում Հայաստանի եւ Լիբանանի պաշտպանութեան նախարարներ Դաւիթ Տոնյեանի եւ Էլիաս Պու Սաապի միջեւ, որմէ ետք անոնք տուին միացեալ մամլոյ ասուլիս մը:

Նախարար Տոնյեան յայտնեց, որ հայ-լիբանանեան երկկողմանի պաշտպանական համագործակցութիւնը հիմնուած է երկու երկիրներու ժողովուրդներու երկարամեայ բարեկամութեան, փոխադարձ օգնութեան պատրաստակամութեան եւ ընդհանուր մօտեցումներու վրայ, ուստի ունի լուրջ հեռանկարներ:

Ան յիշեցուց, որ 9 նոյեմբեր 2018-ին՝ նախարար Տոնյեանի Լիբանան տուած այցելութեան ընթացքին ստորագրուած է Հայաստանի Հանրապետութեան եւ Լիբանանի Հանրապետութեան միջեւ համագործակցութեան համաձայնագիր, որ ներկայիս երկու երկիրներու խորհրդարաններուն մէջ վաւերացման փուլի մէջ է: «Տեղեկացնեմ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ վաւերացումը աւարտած է, եւ մօտիկ ապագային Հայաստանի նախագահը պիտի ստորագրէ զայն: Այս համաձայնագիրը 2001 թուականէն գործող համաձայնագրի արդիական տարբերակն է եւ պիտի ընձեռն ռազմական եւ ռազմական-թեքնիք համագործակցութեան աւելի լայն կարելիութիւններ», շեշտեց Տոնյեան:

Ըստ անոր, նախարար Էլիաս Պու Սաապի հետ ըննարկուած են համագործակցութեան



առկայ վիճակը եւ գայն ընդարձակելու կարելիութիւնները:

«Չամաձայնեցանք համագործակցութիւն իրականացնել կանոնաւոր եւ ծրագրաւորած ձեւաչափով: Չամագործակցութեան հեռանկարային ոլորտներ կը նկատենք փորձառութեան փոխանակումը ռազմական-թեքնիք տարբեր ուղղութիւններով, միացեալ մարզումները, կրթութիւնը եւ վերապատրաստութիւնը եւ, ամենէն կարելորը, ճգնաժամային իրավիճակներու մէջ հետախուզական տեղեկատուութեան փոխանակումը: Յատուկ կարելորութիւն կու տանք երկու երկիրներու ռազմական մշակոյթի եւ պատմութեան փոխադարձ իրազեկման նախաձեռնութիւններու կազմակերպման», շեշտեց Տօնոյեան:

Լիբանանի պաշտպանութեան նախարարը իր կարգին կարելոր նկատեց Չայաստանի հետ հետախուզական տեղեկութեան փոխանակման ոլորտին մէջ համագործակցութիւնը:

Ան դիտել տուաւ, որ Չայաստան եւ Լիբանան ունին սահմաններու եւ դրացիներու կապուած մարտահրաւերներ, եւ հետախուզական տեղեկութեան փոխանակումը անպայման օգտակար պիտի ըլլայ ամրապնդելու երկու երկիրներու զինուած ուժերը: «Կը կարծեմ, թէ մեր համագործակցութիւնը, իրօք, կը զարգանայ, քանի որ անիկա կը կատարուի ո՛չ թէ քաղաքական եւ այլ շահերէ մեկնելով, այլ սրտանց: Կը կարծեմ, թէ լաւ ապագայ կը սպասէ մեզ», նշեց նախարարը:

Պու Սաապ յայտնեց, որ ասիկա Չայաստան տուած իր առաջին այցելութիւնը չէ, Չայաստան այցելած է 2015-ին՝ Չայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, նաեւ աւելի ուշ՝ Լիբանանի նախագահի պատուիրակութեան մաս կազմելով: Ան աւելցուց, որ Չայաստան կը գտնուի ընտանեօք, քանի որ ընտանեկան կապեր ունի Չայաստանի եւ հայութեան հետ:

«Սակայն այժմ եկած եմ քննարկելու, թէ՛ ինչպէ՛ս կրնանք զարգացնել պաշտպանական երկկողմանի համագործակցութիւնը: Չիմա արդէն հասած է ժամանակը, որ մենք կեանքի կոչենք Չայաստանի Չանրապետութեան եւ Լիբանանի Չանրապետութեան միջեւ համագործակցութեան համաձայնագիրով նախատեսուած ուղղութիւնները», ընդօժեց Պու Սաապ:

Նախարարը աւելցուց, որ, իր կարծիքով, պէտք է ստեղծուի յանձնախումբ մը, որուն մէջ ընդգրկուած պէտք է ըլլան նաեւ այլ նախարարութիւններ, ու համագործակցութիւնը բազմաոլորտ դառնայ: Շնորհակալութիւն

յայտնելով ՄԱԿ-ի առաքելութեան ծիրին մէջ Լիբանանի հարաւը հայկական խաղաղապահ ուժերու առաքելութեան համար, Էլիաս Պու Սաապ ընդգծեց, որ իրենք լաւապէս կը գիտակցին, թէ ասիկա Հայաստանի համար զուտ միջազգային առաքելութիւն չէ, այլ յատուկ առաքելութիւն է: Ան բարձր գնահատեց եւ «խելացի որոշում» բնութագրեց Սուրիոյ մէջ հայկական խաղաղապահ առաքելութիւնը՝ նկատել տալով, որ երիտասարդ սերունդները մարդասիրական, խաղաղութեան ամրապնդման առաքելութիւններ կ'ակնկալեն:

Պու Սաապ մասնաւորապէս ընդգծեց. «Լիբանանը եւ Հայաստանը իրենց սահմաններուն վրայ կը դիմագրաւեն միեւնոյն հարցերը եւ մարտահրաւերները: Իսրայէլը միշտ ոտնձգութիւններ կը գործէ մեր հողերուն նկատմամբ, ինչպէս նաեւ շարունակական կերպով կը խախտէ միջազգային որոշումները, որոնցմէ կարելորագոյնն է թիւ 1701 բանաձեւը: Վերջերս ան երկու անօդաչու թռչող սարքեր դրկած էր Պէյրութ, մէկը պայթեցաւ, իսկ միւսը վար առնուեցաւ եւ գրաւուեցաւ լիբանանցիներուն կողմէ: Նոյնպէս Հայաստանը կը դիմագրաւէ Ազրպէյճանի կողմէ իր սահմաններուն եւ հողերուն նկատմամբ անօդաչու թռչող սարքերով ոտնձգութեան մարտահրաւերը: Եւ ասիկա յաւելեալ պատճառ մըն է, որ ապահովական մարզին մէջ իրարու հետ համագործակցինք՝ ապահովական եւ հետախուզական տեղեկութիւններու փոխանակման միջոցով»:

Էլիաս Պու Սաապ օր մը առաջ՝ 19 սեպտեմբերին շրջագայեցաւ Երեւանի կեդրոնը՝ շեշտելով, որ, 2015-ի հետ բաղդատելով, դրական փոփոխութիւններ արձանագրուած են: Ան համոզում յայտնեց, որ Հայաստան «մեծ եւ պայծառ» ապագայ ունի՝ մանաւանդ երկրի անկախութեան, ինքնուրոյնութեան այն տեսլականներով, զորս իրեն հետ կիսած է Հայաստանի պաշտպանութեան նախարարը:

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեան իր կարգին ընդունեց Լիբանանի պաշտպանութեան նախարարը:

Ողջունելով լիբանանեան պատուիրակու-

թիւնը՝ նախարար Մնացականեան բարձր գնահատանքով արձանագրեց, որ Հայաստանը եւ Լիբանանը միահիւսուած են ամուր պատմական բարեկամական կապերով՝ հիմնուած փոխադարձ վստահութեան եւ յարգանքի վրայ: Երկուստեք ընդգծուեցաւ փոխադարձ պատրաստակամութիւնը՝ քայլեր ձեռնարկելու տարբեր մակարդակներու վրայ առկայ աշխուժ երկխօսութեան պահպանման, փոխադարձ գործակցութեան տարբեր ոլորտներ ընդգրկող օրակարգի յաւելեալ ամրապնդման եւ հարստացման ուղղութեամբ: Այս առնչութեամբ գրուցակիցները կարելոր նկատեցին նախապատրաստական աշխատանքները հայ-լիբանանեան միջկառավարական յանձնախումբի երկրորդ նիստին, որուն կազմակերպումը Նոր լիցք պիտի հաղորդէ երկու երկիրներուն միջեւ պաշտպանութեան, քաղաքական, մշակոյթի, զբօսաշրջութեան, տեղեկատուական արհեստագիտութիւններու, գիւղատնտեսութեան եւ բազմաթիւ այլ ոլորտներու մէջ համագործակցութեան ընդլայնման հեռանկարները ուղենշելու համար:

Փոխադարձաբար բարձր գնահատուեցաւ Լիբանանի հասարակական-քաղաքական կեանքին մէջ աշխուժ գործունեութիւն ծաւալող հայ համայնքի դերակատարութիւնը՝ իբրեւ երկու երկիրներու եւ ժողովուրդներու միջեւ կամրջող օղակ եւ հայ ինքնութեան պահպանման յառաջամարտիկ:

Հանդիպումին միտքեր փոխանակուեցան շրջանային եւ միջազգային օրակարգի շարք մը արդիական հարցերու շուրջ: Նախարար Մնացականեան նշեց, որ պայմանաւորուած Միջին Արեւելքի մէջ պատմական կապերով եւ հայկական ներկայութեամբ՝ Հայաստանը միշտ ուշադիր կը հետեւի շրջանի հոլովոյթներուն:

Երկուստեք բարձր գնահատուեցաւ Հայաստանի աշխուժ ներգրաւուածութիւնը Լիբանանի մէջ խաղաղապահ եւ շրջանին մէջ մարդասիրական առաքելութիւններուն:

ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐԶ ՎԱԽՃԱՆԵՏԱՒ

Լիբանանեան ազգային հաշտութեան եւ համերաշխութեան պատրիարքը՝ Նասրալլա Սֆէյր, վախճանեցաւ 12 մայիս 2019-ին:

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը յայտնեց, որ ան մարոնի եկեղեցւոյ հիմնասիւններ, ինչպէս նաեւ Լիբանանի Բ. անկախութեան եւ հաշտութեան անկրկնելի պատրիարքը:



Ֆրանչիսկոս պապը իր կարգին յայտնեց, որ Սֆէյր պատրիարքը պիտի մնայ Լիբանանի պատմութեան փայլուն դէմքը:

**ԸՆԿԵՐ ՏՈՋԹ. ԳՐԻԳՈՐ ԷԾԻՏԵԱՆ
ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ
ՍԵՆՏԻՔՍԻ ԱՆԴԱՄ**

9 յունիսին տեղի ունեցան Բժիշկներու սենտիքայի խորհուրդի ընտրութիւններ: 16 հոգի հաշուող խորհուրդի 8 թափուր տեղերուն համար տեղի ունեցած ընտրապայքարին ամբողջութեամբ յաղթեց Ազգային ազատ հոսանք կուսակցութեան, ԶՅԴ-ի, Լիբանանեան ուժեր կուսակցութեան, Փաղանգաւոր կուսակցութեան, «Օթել Տիւ» հիւանդանոցի բժիշկներու համախմբումի, Զրգալալայի, Երկխօսութեան կուսակցութեան եւ Պեքայի բժիշկներու համախմբումի զօրակցութիւնը վայելող ցանկը:



Սոյն ցանկին մաս կը կազմեր եւ Բժիշկներու սենտիքայի խորհուրդի անդամ ընտրուեցաւ Լիբանանահայ բժշկական միութեան թեկնածու եւ ԶՅ Դաշնակցութեան զօրակցութիւնը վայելող ընկեր տողթ. Գրիգոր Էծիտեան:

**ԸՆԿԵՐ ՐԱՖֆԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱՒ ԹԱՂԱՊԵՏՆԵՐՈՒ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ
ՍՆՏՈՒԿԻ ԱՆԴԱՄ**

17 սեպտեմբերին կառավարութեան գումարած նիստին ընթացքին կատարուած նշանակումներուն ծիրին մէջ, թաղապետ Րաֆֆի Մարգարեան նշանակուեցաւ թաղապետներու համագործակցութեան սնտուկի անդամ:



**ՀՅԴ-Ի ԹԵԿՆԱԾՈՒ ՊԵՏՐՈՍ ԳՈՒԼԱԾԵԱՆ՝
ՊԷՅՐՈՒԹԻ ԹԱՂԱՊԵՏՆԵՐՈՒ
ԼԻԿԱՅԻ ԱՆԴԱՄ**

Կիրակի, 22 դեկտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 9:00-ին տեղի ունեցաւ Պէյրութի թաղապետներու լիկայի ընտրութիւններ:

107 թաղապետներէն 101-ը իրաւունք ունեին ընտրութեան մասնակցելու, իսկ անոնցմէ քուէարկեցին միայն 91-ը:

Հայ յեղափոխական դաշնակցութեան թեկնածուն՝ թաղապետ Պետրոս Գուլաճեան ստացաւ 84 քուէ եւ վերընտրուեցաւ Պէյրութի թաղապետներու լիկայի անդամ:



ԱՐՇՕ ՊԱՆԵԱՆ

ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՏԻՐԷ ՄԻՋԻՆԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ

2019 թուականը, մասնաւորաբար անոր վերջին ամիսները պիտի յատկանշուին քաղաքական տագնապներով, որոնք տապալեցին կառավարութիւններ՝ Լիբանանի եւ Իրաքի մէջ: Շրջանային դիտանկիւնէ մեկնած՝ ասիկա քաղաքական ճնշում մըն էր Իրանի վարած քաղաքականութեան դէմ, միւս կողմէ՝ Սուրիոյ տագնապը ա՛լ աւելի մեկուսացուց Թուրքիան Արեւմուտքի մէջ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Լիբանանեան տագնապը, հակառակ իր ներքին տնտեսական եւ ընկերային արմատներուն, օրերու ընթացքին առաւ շրջանային եւ միջազգային գունաւորում: 17 հոկտեմբէ-

րի ժողովրդային շարժումը ցնցեց Լիբանանի քաղաքական եւ կրօնական վերնախաւը: Քաղաքական վերնախաւը մտահոգուած էր, որ այս շարժումը կրնայ տապալել իր շահերը, եւ բազմաթիւ ղեկավարներ, որոնք փտածութեան հետ առնչուած էին, կրնան դատի կանչուիլ, իսկ կրօնական վերնախաւը, մասնաւորաբար քրիստոնեայ կրօնապետները վախ ունէին, որ Թաեֆի համաձայնութեան տապալումով համայնքային դրութիւնը վերանայ, իսկ քրիստոնեաները կորսնցնեն իրենց քաղաքական դերը: Անշուշտ ապագայ Լիբանանը պիտի չըլլայ այն, որ կար 17 հոկտեմբերէն առաջ, որեւէ նոր կառավարութիւն հաշուի պիտի առնէ գետնի վրայ գոյութիւն ունեցող քաղաքական իրավիճակը, մասնա-





ւորաբար՝ ցուցարարներուն պահանջները: Սակայն չեմ կարծեր, որ այս պահանջները բոլորը պիտի իրականանան: Եթէ փտածութեան առումով պիտի դատենք, նկատի պիտի ունենանք բոլոր անոնք, որոնք 1992-էն մեղսակից դարձած են դրամներու իւրացման, իսկ ասիկա կը նշանակէ, որ ամբողջ վերնախաւի մը տապալման մասին կը խօսուի, հետը ըլլալով նաեւ դրամատիրական ցանցը: Միւս կողմէ, ներկայ վերնախաւը ամէն ջանք պիտի թափէ ազատելու երկիրը ներկայ տնտեսական ճգնաժամէն, որովհետեւ այդ վերնախաւը եւս կը վնասուի, երբ անոր տնտեսական շահերը վնասուած ըլլան: Ինչպէս Քարլ Մարքս կ'ըսէ՝ քաղաքականութիւնը արտացոլում մըն է երկրի մը տնտեսական վիճակին, իսկ Լիբանանի պարագային տնտեսութիւնը կարելի չէ անջատել քաղաքական վիճակէն: Սակայն Լիբանան անջատուած չէ նաեւ շրջանային եւ միջազգային մրցակցութենէն:

Միացեալ Նահանգներ առաջին օրէն իսկ ցուցարարներուն պահանջին ի նպաստ յայտարարութիւններ հրապարակեցին: Ուաշինկթընէն դիտուած՝ այս բոլորը հակաիրանական ժողովրդային շարժումներ են: Ամերիկացի քաղաքական գործիչներ եւ վերլուծաբաններ սկսան Լիբանանի, Իրաքի եւ Իրանի մէջ ծայր առած ժողովրդային շարժումները իրարու կապել: Ասիկա մտահոգիչ էր Ռուսիոյ համար, որուն հիմնական նպատակն է կայունութիւնը ամուր պահել շրջանին մէջ:

Ռուսիա ամէն ջանք կը թափէ Սուրիոյ մէջ կայունութիւն հաստատելու եւ շուտափոյթ լուծում մը գտնելու տազնապին: Մոսկուայէն դիտուած, Լիբանանի եւ Իրաքի ցոյցերը «գունաւոր յեղափոխութիւններ» են՝ տապալելու համար շրջանին մէջ գոյութիւն ունեցող վարչակարգեր, որոնք կը դիմադրեն ամերիկեան շահերուն: Այս վերլուծումը նաեւ կը կիսէ Թեհրանը, սակայն վերջինս աւելի նեղութեան մատնուած է, որովհետեւ տնտեսական պատժամիջոցներու ենթարկուած է Միացեալ Նահանգներուն կողմէ:

«ՌՈՇԱՒԱ»-Ի ԱՆԿՈՒՄԸ

9 հոկտեմբերին թրքական բանակը եւ սուրիացի ընդդիմադիր զինեալները «Խաղաղութեան աղբիւր» գործողութեան անունին ներքեւ ներխուժեցին Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանը, որ «Ռոժաւա» կը կոչուի քիւրտերուն կողմէ: Թուրքիոյ հիմնական նպատակն էր «ապահով գօտի» մը ստեղծել Սուրիոյ հիւսիսը՝ մաքրելու համար շրջանը քիւրտ զինեալներէն: Թուրքիոյ համար Սուրիոյ մէջ քրտական հարցը կենաց մահու հարց է, եւ ան պատրաստ է նոյնիսկ գործակցելու սուրիական պետութեան հետ՝ վերջ դնելու համար քրտական զինեալ խմբաւորումներու գործունեութեան: Գաղտնիք մը չէ նաեւ, որ այս քայլը կը բխէր Ռուսիոյ եւ սուրիական շահերէն: Քիւրտերուն հետ համաձայնելով՝ սուրիական բանակը 2011-էն ետք առաջին անգամ ըլլալով իր հակակշիռին ենթարկեց քիւրտերու տիրապետութեան տակ մնացած Ռաքքան, Արաբունարը եւ Յասաքէի ու Տէր Չօրի մէջ հսկայ տարածքներ: Իսկ այն տարածքները, որոնք քարիւղով հարուստ են, տակաւին կը մնան ամերիկեան բանակի վերահսկողութեան տակ:

Միւս կողմէ, հիւսիսարեւելեան Սուրիոյ մէջ, թրքական բանակն ու դաշնակից զինեալ խմբաւորումները՝ ղեկավարութեամբ թիւրքմենական ջոկատներուն, հազիւ Թել Ապիա-

տը քրտական ջոկատները գրավեցին, արդեն սկսան թրքացնել շրջանը: Նոյեմբեր ամսուն անոնք աւելի քան 70 թիրքմեն ընտանիքներ վերաբնակեցուցին շրջանին մէջ, որպէսզի քրտական ազդեցութիւնը նուազի: Միւս կողմէ, գրաւեալ Աֆրինի մէջ, թրքամետ զինեալները սկսան վտարել քիւրտ բնակչութիւնը եւ շրջանին մէջ օգտագործել սկսան թրքական լիրան՝ փոխան սուրիական թղթոսկիին. դպրոցներուն մէջ անոնք աշակերտներուն պարտադրեցին



թրքերէն եւ թրքական պատմութիւն սորվիլ: Աշակերտները սկսան սորվիլ Թուրքիոյ քայլերգը եւ նշել Թուրքիոյ պետական տօները: Ֆրանսական «Ֆրանս Փրես» (ԱՖՓ) լրատու գործակալութեան համաձայն, թրքամետ ուժերը քիւրտ բնակիչներուն կ'արգիլեն իրենց գիւղերը վերադառնալ: Ըստ նոյն լրատու գործակալութեան, թրքական ուժերը 120 քմ երկարութեան տարածք մը գրաւած են Թել Ապիատէն մինչեւ Ռաս Ռւլ Այն, եւ թրքական կառավարութիւնը կը միտի վերաբնակեցնել շրջանը աւելի քան 3 միլիոն սուրիացի գաղթականներով: Մինչ այդ, մօտ 200.000 քիւրտ եւ ասորի գաղթականներ հեռացան իրենց տուներէն՝ թրքական զօրքի յառաջխաղացքին պատճառով: Այսպիսով, Թուրքիան կը փորձէ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանին մէջ ժողովրդագրական պատկերը փոխել: Սակայն տակաւին յստակ չէ, թէ ո՞ր պիտի տեղափոխուին քիւրտ գաղթականները, արդեօք պիտի վերադառնա՞ն իրենց տուները, իսկ եթէ ոչ, ուրեմն ո՞ր երթան: Այստեղ կարելոր է շեշտել, որ կան բազմաթիւ քիւրտեր, որոնք չունին սուրիական անձնագիր, հետեւաբար շատեր պիտի ստիպուին լքել Սուրիան եւ ուղղուին կա՛մ Իրաքի Զրտական ինքնավար մարզ, կա՛մ ալ՝ Եւրոպա: Միւս կողմէ, Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողան յայտարարեց, որ թրքական ուժերը պիտի չհեռանան հիւսիսային Սուրիայէն, մինչեւ որ շրջանը մաքրուի ահաբեկիչներէն: Այստեղ շատեր հարց տուին, թէ Էրտողանի

համաձայն, որո՞նք են ահաբեկիչները՝ քիւրտ զինեալները, թէ ամբողջ քիւրտ բնակչութիւնը: Թուրքիա սուրիացի քիւրտներուն նկատմամբ ցոյց կու տայ ցեղապաշտական վերաբերմունք, այդ վերաբերմունքին թիրախը ուղղակի պարզ քիւրտ մարդիկն են եւ ոչ թէ քրտական զինեալ խմբաւորում մը:

Զրտական հարցը Սուրիոյ մէջ ունեցաւ միջազգային գունաւորում. Էրտողան Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնին քրտամետ արտայայտութիւններուն համար գայն կոչեց խելագար: Ասիկա գայրացուց ֆրանսական կողմը, որ ՕԹԱՆ-ի վեհաժողովին թրքական կողմը ամբաստանեց քիւրտերու ցեղային մաքրագործում կատարելու եւ ՏԱՅԵՇ ահաբեկչական կազմակերպութեան օժանդակելու յանցանքով: Մաքրոն նաեւ յայտարարեց, որ ան քրտական ուժերը չի նկատեր իբրեւ ահաբեկչական կազմակերպութիւն, որովհետեւ Սուրիոյ մէջ ֆրանսացի զինուորները թեւ-թեւի կռուեցան քիւրտներուն հետ ՏԱՅԵՇ-ի ահաբեկիչներուն դէմ: Իբրեւ հակադարձութիւն, Էրտողան յայտարարեց, որ Անգարա ՕԹԱՆ-ի՝ Արեւելեան Եւրոպայի ծրագիրներուն նեցուկ պիտի չկանգնի, եթէ դաշինքը չընդունի Զրտական աշխատաւորական կուսակցութիւնը ահաբեկչական կազմակերպութիւն նկատել: Այստեղ նաեւ կարելոր է հաստատել, որ Թուրքիան ճնշում բանեցնելով եւրոպական երկիրներուն վրայ, կը փորձէ գանոնք համոզել, որ քրտական շարժումները ահաբեկչական են, որպէսզի նաեւ դիւանա-

գիտական եւ հետախուզական պայքար մղել եւրոպայի մէջ քիւրտ քաղաքական գործիչներու եւ կազմակերպութիւններու դէմ: Այս առնչութեամբ ռուսական մամուլը հրապարակեց վերլուծումներ՝ յայտնելով, որ այս պառակտումը կրնայ ՕԹԱՆ-ի քայքայման առաջնորդել: Շատեր կը կարծեն, որ Ռուսիոյ քաղաքական մերձեցումը Թուրքիոյ հետ կը միտի հարուածել Թուրքիոյ դերը ՕԹԱՆ-ի մէջ եւ ճեղք մը ստեղծել արեւմտեան դաշինքին մէջ՝ տկարացնելու համար Միացեալ Նահանգներու դերը Արեւելեան Եւրոպայի մէջ:

ԻՐԱՆԻ ՎՐԱՅ ՅԱԲԵԼԵԱԼ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Իրանի համար 2019-ը տնտեսապէս դժուար տարի մըն էր, որ շատ հաւանաբար շարունակուի մինչեւ Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւնները, որոնք տեղի պիտի ունենան 3 նոյեմբեր 2020-ին: Նախագահ Թրամի եւ անոր խորհրդականները ամէն ջանք ի գործ դրին պարտադրելու Միացեալ Նահանգներու քոնկրետին տնտեսական պատժամիջոցներ որդեգրել Իրանի դէմ: Ասիկա նպատակ ուներ քաղաքական իմաստով ծունկի բերել Իրանը եւ նոր բանակցութիւններու սկսիլ Իրանի հիւլեական ծրագիրին շուրջ՝ ամերիկեան նախապայմաններով: 2018 մայիսին, երբ նախագահ Թրամի չեղեալ նկատեց Իրանի հետ ստորագրուած հիւլեական համաձայնագիրը, Միացեալ Նահանգներ կը հաւատային, որ Եւրոպական Միութիւնը իրենց պիտի աջակցեր եւ Իրան շուտով պիտի մեկուսանար ու ստիպուէր նստելու բանակցութեան, սակայն ասիկա տեղի չունեցաւ: Այլ ընդհակառակն՝ Իրան դիմադրութիւն ցոյց տուաւ, Եմէնի մէջ անոր դաշնակիցները յարձակեցան Սեւտական Արաբիոյ վրայ եւ թիրախ դարձուցին ռազմական ու քարիւղի կեդրոններ: Աւելին, Չինաստանի հետ «տնտեսական պատերազմը» մղեց չինական կառավարութիւնը, որ աւելի սերտ եւ ռազմավարական յարաբերութիւններ մշակել Թեհրանի հետ: Չինական կողմը խոստացաւ օգոստոս 2019-ին 400 միլիար տոլար արժողութեամբ ներդրումներ կատարել Իրանի տնտեսական տարբեր բնագաւառներուն մէջ, բան մը, որ ձախողութեան մատնեց ամերիկեան պատժամիջոցներուն

ազդեցութիւնը Թեհրանի վրայ: Այս բոլորին մէջ եւ հակառակ վերջերս ծայր առած ցոյցերուն Իրանի տարբեր շրջաններուն մէջ, Թեհրան տակաւին կը շարունակէ դիմադրել ամերիկեան ծրագիրներուն, մինչեւ որ երկու կողմերը յանգին համապատասխան գործակցութեան մը, որ կրնայ թարգմանուիլ Միջին Արեւելքի այլ երկիրներու մէջ:

ԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՅԸ ԴԵՊԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Արաքական ծոցին մէջ Զաթարի եւ Սեւտական Արաբիոյ միջեւ 2017-էն սկսած տագնապը հաւանաբար կրնայ լուծումի մը յանգիլ: Երբ սեպտեմբեր 2019-ին Սեւտական Արաբիոյ քարիւղի ընկերութիւններուն վրայ յարձակումներ կատարուեցան, Ռիատ սկսաւ վերատեսութեան ենթարկել իր արտաքին քաղաքականութիւնը շրջանին մէջ: Ըստ թրքական «Թ. Ռ. Թ.» պատկերասփիւռի կայանին (7 դեկտեմբեր 2019), քաթարեան բարձրաստիճան պատուիրակութիւն մը այցելեց Ռիատ, որպէսզի երկու պետութիւնները համաձայնութեան յանգին: Ըստ այնմ, Սեւտական Արաբիոյ կողմէ Զաթարի դէմ հաստատուած տնտեսական պատժամիջոցները պիտի վերանան եւ բնականոն յարաբերութիւնները պիտի վերահաստատուին: Այս քայլով Սեւտական Արաբիան կ'ուզէ վերամիաւորել Արաքական ծոցի կազմակերպութիւնը, ինչպէս նաեւ Եմէնի տագնապին շուտափոյթ լուծում մը գտնել՝ հաշուի առնելով, որ ամերիկեան քաղաքականութիւնը շրջանին մէջ նահանջի մէջ է:

ՉԻՆԱՍՏԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ

Չինական քաղաքականութիւնը շրջանին մէջ վերամշակուեցաւ, երբ Չինաստանի նախագահ Չի ժիմփինկ 2013-ին յայտարարեց իր «ՄԷԿ ճանապարհ, մէկ գօտի» տեսլականը, որ Եւրասիոյ առեւտրական ճանապարհները իրար կապելով հսկայ տնտեսական ցանց մը պիտի ստեղծեր շրջանին մէջ: Այս ծրագիրին մէջ Միջին Արեւելքը, մասնաւորապէս Իրանը եւ Թուրքիան կամուրջի դերը պիտի խաղային՝ կապելով Ասիոյ ճանապարհները Եւրոպայի ճանապարհներուն: Այս տեսլականին մէջ, որ տակաւին ծրագրի տեսքով չէ թարգմանուած, այս երկու երկիրները հիմ-

նական դերակատարություն ունին, սակայն չինական կողմը նաեւ մարտահրավերներ ունի:

Թուրքիան, որ այսօր մեկուսացուած է արեւմտեան աշխարհին մէջ, իր հայեացքը ուղղած է դէպի Ասիա, մասնաւորապէս Ռուսիա եւ Չինաստան: Չինաստանի հետ քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները զարգացնելը Էրտողանի իշխանութեան համար ներքին քաղաքական իմաստով բաւական դժուարութիւններ կը ստեղծէ: Երբ թրքական մամուլը եւ ազգայնական տարրերը կը քննադատեն չինական կառավարութիւնը ուլղուրներուն իրաւունքները ոտնակոխելու հարցով, Էրտողան կ'անտեսէ այս դէպքերը, պարզապէս որպէսզի չինական պետական ներդրումներ ներգրաւէ իր երկրին համար: Բան մը, որ դժուար վիճակի մէջ կը դնէ «Արդարութիւն եւ բարգաւաճում» կուսակցութիւնը:

Իրանի համար առաջնահերթութիւն ունի մասնակցիլը ապագայի այսպիսի ծրագիրներու, որոնք կրնան զայն ազատել քաղաքական մեկուսացումէ: Ամերիկեան տնտեսական պատժամիջոցները, որոնք աւելի եւս խստացուեցան Նախագահ Տանըլտ Թրամի կողմէ, քայքայեցին Իրանի տնտեսական ուժը: Չինաստան ամենէն կարելի տնտեսական գործընկերն է Իրանի, եւ Թեհրան չինական ընկերութիւններուն շնորհիւ կ'արտածէ իր քարիւղը դէպի չինական շուկայ: Սակայն Իրան-Չինաստան յարաբերութիւնները նաեւ ալեկոծումներու կ'ենթարկուին շրջանային իրադարձութիւններուն պատճառով, որոնք կախեալ են Արաբական ծոցին մէջ Իրան-Սեւտական Արաբիա բախումէն եւ Եմենի մէջ ընթացող պատերազմէն: Չինաստանի համար քաղաքական կայունութիւնը, որ կը թարգմանուի ուժանիւթային կայունութեամբ, առաջնահերթութիւն է՝ ամրապնդելու եւ տարածելու իր ուժանիւթային եւ տնտեսական ներդրումները շրջանին մէջ: Դետեալբար, եթէ ապագային չինական տեսլա-



կանը պիտի թարգմանուի ծրագիրի մը շուրջ, ապա խաղաղութիւն պետք է հաստատուի այս շրջանին մէջ, բան մը, որ մօտիկ ապագային անկարելի է: Սակայն Փեքին չի կրնար զանց առնել Միջին Արեւելքը իր «Մէկ ճանապարհ, մէկ գօտի» տեսլականէն, հետեւաբար յառաջիկայ տարիներուն շրջանին մէջ պիտի տեսնենք չինական քաղաքական աշխուժ թափանցում, որ հեզասահ պիտի ընթանայ ռուսական քաղաքականութեան հետ: Այս տեսլականը կրնայ չհամապատասխանել ամերիկեան շահերուն, որոնք արդէն իսկ Նախանջի մէջ են շրջանին մէջ:

2020 թուականը կրնայ ըլլալ այն տարին, երբ Արաբական ծոցին մէջ խաղաղութիւնը պիտի վերահաստատուի եւ Քաթարի ու Սեւտական Արաբիոյ միջեւ տագնապին վերջ պիտի դրուի, սակայն միւս կողմէ Իրաքի եւ Լիբանանի տագնապները, որոնք ունին ներքին եւ շրջանային գունաւորումներ, կրնան երկարաձգուիլ, մինչեւ որ Իրան եւ Միացեալ Նահանգներ համաձայնութեան հասնին՝ շրջանի քաղաքական քարտէսը վերատեսութեան ենթարկելու առումով:

ԵՂԻԱ ԹԱՇՃԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ՝ 2019-ԻՆ

2019-ը մարտահրաւերներով լեցուն տարի մը եղաւ եւրոպական ընկերվար-ժողովրդավարական շարժումին համար:

Մարտահրաւերներով լեցուն տարի մը կ'ըսենք, որովհետեւ ընկերվար-ժողովրդավարութիւնը դիմագրաւեց (ու տակաւին կը շարունակէ դիմագրաւել) բազմաթիւ ճակատագրական հարցեր, ինչպէս՝ ընկերային դասակարգերու միջեւ անհաւասարութեան ճեղքի լայնացում, որ ի յայտ եկաւ նոր-ազատական քաղաքականութիւններէ ծնունդ առած սեփականաշնորհումներէն, խստամբերութենէն, հարկային փախուստներէն, ազատ առեւտրական համաձայնագիրներէն, անարդար հարկային համակարգերէն եւ պիտոճեական ծախսերու նուազումներէն:

Աշխարհի նաեւ դիմագրաւեց (ու տակաւին կը շարունակէ դիմագրաւել) սեռային անհաւասարութեան հարցը, որ ծնունդ առած էր տարիներ շարունակ պահպանողականներու կողմէ վարուած հայրիշխանական քաղաքականութիւններէն, որոնց ընկերացան նաեւ այսօրերուն աջակողմեան ամբոխավար կուսակցութիւններու կողմէ թմբկահարուած՝ երկու սեռերու միջեւ աշխատավարձի անհաւասարութիւնը, ընկերութիւն-

ներու խորհուրդներուն մէջ սեռային անհաւասարութիւնը, սեռային եւ ծինային բռնութեան բարձր տոկոսները, վիժումի արգիլումը, պատմութեան ընթացքին ընկերայնօրէն կառուցուած ծինային կարծրատիպերու շարունակումը եւ այլն:

Աշխարհի նաեւ դիմագրաւեց (ու տակաւին կը շարունակէ դիմագրաւել) կլիմայական փոփոխութեան հարցը, որ ծնունդ առած է շուկայամուլ քաղաքականութիւններէն, ինչպէս՝ քարիւղի հանքերու հորատումը, կլիմայական փոփոխութեան վերաբերեալ գիտական փաստերու ժխտումը, հանքերու շահագործումը, անտառներու ծառերը անհաշիկերպով կտրելը, բնածուխի ու ածխաթթու կազի արտանետումը եւ հանրային փոխադրամիջոցներու անտեսումն ու անոնց փոխարէն մեծաքանակ ինքնաշարժներու օգտագործումէն յառաջացած օդի ապականումը,

անտառներու հրկիզումը, բեւեռներու սառեցումն հալիլը, բարձր ջերմաստիճաններու արձանագրումը:

Եզրակացնելով ընկերվար-ժողովրդավարական կուսակցութիւններու կողմէ դիմագրաւուած վերը նշուած մարտահրաւերները, կը նկատենք, որ անոնք կը դիմագրաւեն նոր-ազատական, ամբոխավարական, ցեղապաշտ, օտարատեսաց, կնատ-



եաց, կլիմայական փոփոխությունը հերքող եւ փոքրամասնություններուն նկատմամբ ատելություն սերմանող հոսանքները:

Այս բոլորէն անդին, ի՞նչ է ընկերվար-ժողովրդավարներուն այլընտրանքային տեսլականը: Անիկա յստակ է անշուշտ՝ կերտումը ընկերային-տնտեսական արդար կարգերով օժտուած, համերաշխ, բաց, կանաչ աշխարհի մը, ուր մարդ անհատը առանց իր ազգային, կրօնական, սեռային, գոյնի կամ ընկերային-դասակարգային պատկանելիութեան նկատմամբ որեւէ խտրականութեան, կարելիութիւն կ'ունենայ կրթութեան, առողջապահութեան, մաքուր օդ շնչելու եւ կ'ազատագրուի ամէն տեսակի շահագործումէ ու զրկանքներէ:

2019-ին տեղի ունեցած Եւրոպայի խորհրդարանական ընտրություններուն ընթացքին, Եւրոպայի ընկերվարականներու կուսակցությունը գծեց Եւրոպական ցամաքամասին մէջ գործող կեդրոն ձախ, յառաջդիմական եւ ընկերվար-ժողովրդավարական կուսակցություններու քաղաքական, ընկերային, տնտեսական եւ բնապահպանական քաղաքականություններուն ճամբու քարտէսը:

Եւրոպայի ընկերվարականներու կուսակցությունը այս ընտրութեանց ընթացքին որդեգրեց «Ընկերային նոր պայմանագիր մը Եւրոպայի համար» նշանաբանը եւ հրապարակեց **մանիֆեստ** մը, որ կ'ընդգրկէր 2019-ին դիմագրաւուած բոլոր մարտահրաւերներուն լուծումները: 2008-ի տնտեսական ճգնաժամներուն հետեւանքները կրելէն ժառանգուած ընկերային-տնտեսական հարցերը, ինչպէս՝ անգործությունը, աղքատությունը, փոքր եւ միջին ձեռնարկություններուն հասցուած ծանր հարուածը, պարտքերուն աւելնալը եւ տնտեսություններու սնանկացումն ու անկումը մեծ տեղ գտան ընկերվարականներու նախընտրական ծրագիրին մէջ: Ընկերվարականները խոստացան վերջ տալ մեծահարուստներու, մեծ ընկերություններու եւ դրամատուներու առանձնաշնորհումներուն եւ դիմել հարկերէ փախուստի միջոցներու փակման, հարկային յառաջատուական համակարգին, ընկերային բարօրութեան եւ արժանապատիւ աշխատավարձի, առողջապահութեան ու թոշակի, որակաւոր հանրա-

յին ծառայութեանց ապահովման:

Ընկերվարականներու նախընտրական ծրագիրին մէջ նշուած է, որ իրենց տեսլականն է կերտել «Եւրոպա մը մեծամասնութեան համերաշխութեամբ եւ ոչ թէ յօգուտ փոքրաթիւ մարդոց. մենք պիտի չխոնարհիկք չվերահսկուած շուկայի ուժերուն, եւ վերջապէս՝ վերջ պիտի տանք խստամբերական քաղաքականություններուն»: Ընկերվարականները կը ձգտին հաստատել ընկերային պայմանագիր եւ ներառականություն, ուր տեղ չեն ունենար աղքատութեան, անգործութեան եւ ամէն տեսակի խտրականութեան երեւոյթներ:

Ահաւասիկ տեսանք Եւրոպայի ընկերվարականներու կուսակցութեան տեսլականը՝ Եւրոպական ցամաքամասին կամ աւելի ճիշդ՝ Եւրոպական խորհրդարանին ու Եւրոպական միութեան հաստատություններուն վերաբերեալ: Բայց այդ կազմակերպութեան անդամակցող կուսակցությունները ի՞նչ յաջողություններ արձանագրեցին 2019 թուականի ընթացքին, ինչպիսի՞ միջոցներու դիմեցին իրենց պետություններուն մէջ՝ դիմագրաւելու ընկերային-տնտեսական մարտահրաւերները, նախորդ տարիներուն ընթացքին իրենց ժողովրդականութեան մակարդակին անկումն ու ընտրություններու ընթացքին պարտություններ կրելը ինչպիսի՞ ազդեցություն ունեցան 2019-ին: Կ'արժէ անդրադառնալ այս բոլոր հարցադրումներուն:

Ինչպէս գիտենք, նախորդ դարու 80-ական թուականները (մանաւանդ Ռոնալտ Ռիկընի՝ Միացեալ Նահանգներու նախագահ ընտրութեամբ եւ Մարկրեթ Թաչըրի՝ Բրիտանիոյ վարչապետ դառնալով) ծնունդ տուին նորազատականութեան: Նորազատականությունը ապահսկողութեան ենթարկեց շուկան ու դրամատնային հատուածը, սեփականաշնորհումի ենթարկեց հանրային ծառայություններն ու ռազմավարական նշանակություն ունեցող հաստատությունները եւ կիրարկեց խստամբերական դրամական-ծախսողական քաղաքականություն: Նշեալ բոլոր միջոցառումները աստիճանաբար, ժամանակի ընթացքին հասարակութեան մէջ յառաջացուցին ընկերային-դասակարգային անհավասարություններ: Կրնանք ըսել, որ 80-ական

եւ 90-ական թուականներուն պահպանողական կուսակցութիւններուն կողմէ՝ Նոր-ազատականութեան որդեգրումը դարձած էր Նորածեւութիւն: Նոր-ազատականութիւնը Նորութիւն մըն էր մարդկութեան համար, եւ այդ պատճառով ալ պահպանողական կուսակցութիւնները իշխեցին եւրոպական քաղաքական թատերաբեմին վրայ՝ 80-ականներէն սկսեալ մինչեւ 90-ականներու աւարտը:

Ընկերվար-ժողովրդավարները զգալով, որ իրենց ծրագիրները այլեւս մարդոց սրտերուն չեն խօսիր, որդեգրեցին Նոր եզր մը՝ «Երրորդ ուղի» անունով. «Երրորդ ուղին» մասամբ ընդունեց տնտեսական ազատական քաղաքականութիւններ, ինչպէս՝ շուկայական մրցակցութիւն, ցած հարկեր, ազատ առեւտուր եւ հաւասարակշռուած պիւտճէ: Քաղաքականութիւններ, որոնք ընկերվար-ժողովրդավարական կուսակցութիւններու գլխաւոր ընտրազանգուածը՝ բանուոր դասակարգը օտարացուցին իրենց քաղաքական գիծէն ու հետզհետէ անոնց հաւատարմութիւնը փոխադրեցին տարբեր ուղղութեամբ՝ ամբոխավար աշակողմեան ուղղութեամբ, ինչ որ աւելի ի յայտ եկաւ 2008-ի տնտեսական ճգնաժամէն ետք:

2019-ը եղաւ այն տարին, երբ եւրոպական ընկերվար-ժողովրդավարական շարժումին մէջ շարունակուեցաւ 2015-էն Բրիտանիոյ Աշխատաւորական կուսակցութեան ղեկավարի պաշտօնին ճերեմի Քորպինի ընտրութեամբ սկսած ընթացքը, որ ընկերվար-ժողովրդավարական ամբողջ շարժման մէջ վերադարձ յառաջացուց դէպի ձախակողմեան ակունքներ, դէպի հարստութեան արդար վերաբաշխում, արհեստակցական միութիւններ, յառաջատուական հարկեր եւ շուկայի ու դրամատնային հատուածի հսկողութիւն:

Գաղափարաբանական-տեսական մակարդակի վրայ կարելոր իրադարձութիւն մը արձանագրուեցաւ միջազգայնօրէն ամէնէն հին ընկերվար-ժողովրդավարական կուսակցութեան՝ Գերմանիոյ Ընկերվար-ժողովրդավարական կուսակցութեան մէջ: Ըլլալով աշխարհի առաջին ընկերվար-ժողովրդավարական կուսակցութիւնը, Գերմանիոյ Ընկերվար-ժողովրդավարական կուսակցութեան ղեկավարները «Երրորդ ուղի»-էն խորհրդա-

նշական մեծ նշանակութիւն ունեցաւ ընկերվար-ժողովրդավարական ամբողջ շարժումին համար: 1999-էն մինչեւ այս տարուան 10 փետրուար 2019-ը (այն թուականը, երբ Գերմանիոյ Ընկերվար-ժողովրդավարական կուսակցութեան ղեկավարութիւնը հրապարակեց «Երրորդ ուղի»-էն հրաժարելու եւ ընկերային բարօրութեան արժեքներուն վերադարձի ուղղութիւնը), գերմանացի ընկերվար-ժողովրդավարները կ'օժտուէին «Երրորդ ուղի»-ի ուղղութեամբ եւ որոշ չափով համաձայնութեամբ՝ Քրիստոնեայ-ժողովրդավարական միութեան տնտեսական քաղաքականութեանց հետ, ինչպէս՝ շուկայի ապահովողութիւն, ազատ առեւտուր եւ Յունաստանին պարտադրել խստամբերական խիստ միջոցներ: Հրաժարելով «Երրորդ ուղի»-էն՝ Գերմանիոյ ընկերվար-ժողովրդավարները վերըստին սկսան արձարծել շուկայի ու դրամատնային հատուածի հսկողութեան, աշխատավարձերու բարձրացման եւ աշխատուծի միութեանականացման հարցերը: 30 Նոյեմբեր 2019-ին տեղի ունեցած՝ կուսակցութեան ղեկավարութեան ընտրութիւններուն՝ ձախակողմեան թեւի թեկնածուներ ընտրուեցան համանախագահներ: Անոնք տարիներ շարունակ պայքարած էին ընդդէմ կուսակցութեան «Երրորդ ուղի»-ի գիծին եւ Քրիստոնեայ դեմոկրատական միութեան հետ գործակցութեան: Երկու համանախագահներն են՝ Սասքիա Էսքեն (իգական սեռէն) եւ Նորպերթ Վալթեր-Պորեանս (արական սեռէն):

Իտալիոյ մէջ, Դեմոկրատական կուսակցութիւնը, հանդիսանալով երկրին մեծագոյն ձախակողմեան կուսակցութիւնը, 2018-ի խորհրդարանական ընտրութիւններուն իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով գրաւեց երրորդ դիրքը: Ընտրութիւններուն ձախող արդիւնքներ արձանագրելը կու գայ այն իրողութենէն, որ Դեմոկրատական կուսակցութիւնը գաղափարական նահանջի ընթացքի մէջ էր: Սաթթեօ Ռենցիի կառավարման ժամանակաշրջանին (2014-2016) որդեգրուեցաւ «Երրորդ ուղի»-ի քաղաքականութիւնը, մասնաւորաբար աշխատանքային բարեփոխման օրէնքին ընդմէջէն, որ իր կարգին ջնջեց աշխատանքային օրէնսգիրքը (որ կը փրկեր աշխատաւորները՝ աշխատանքէ

չպատճառաբանուած արձակումներէն): Քայլ մը, որ նախ դատապարտուեցաւ Լոյսինքն Դեմոկրատական կուսակցութեան անդամներուն կողմէ եւ լուրջ հարցեր ստեղծեց անոր գլխաւոր ընտրագանգուածին՝ աշխատաւոր դասակարգին հետ: 2019-ին Նիքոլա Ցիլնարեթին ընտրուեցաւ դեմոկրատականներու ընդհանուր քարտուղար. Ցիլնարեթիի առաջնահերթութիւններն էին՝ վերահաստատել դեմոկրատականներու եւ արհեստակցական միութիւններու միջեւ յարաբերութիւնը եւ դիմագրաւել ծայրայեղ աջի վտանգը: Ան յաջողեցաւ Դեմոկրատական կուսակցութիւնը վերամղել դէպի իր դասական գիծը՝ դէպի քաղաքական ձախի ուղղութիւն:

Դանիոյ բարեկեցիկ համակարգի գլխաւոր կերտիչ Ընկերվար-Ժողովրդավարական կուսակցութիւնը 2019-ի քարոզարշաւին ընթացքին կեդրոնացաւ իր դասական արժէքներուն՝ ընկերային բարօրութեան սկզբունքներուն վրայ՝ մերժելով «Երրորդ ուղի»-ն: Ան իբրեւ նշանաբան որդեգրելով «Նախ բարօրութիւնը»՝ վերադարձաւ կառավարութեան՝ անկէ 4 տարի բացակայելէ ետք: Ընկերվար-Ժողովրդավարները «վստահութիւն եւ մատուցում»-ի հիման վրայ կառավարութիւն կազմեցին Ընկերային ազատական կուսակցութեան, Ընկերվարական ժողովուրդի կուսակցութեան (արմատական ձախ) եւ Կարմիր-կանաչ դաշինքին (կազմուած համայնավարներէ եւ կանաչներէ) հետ: Համաձայնական դաշինքի կազմութեան համաձայնագիրին կետերը կեդրոնացան բարեկեցիկ համակարգի հզօրացման, առողջապահական ու կրթական համակարգերու ամրացման եւ կլիմայական փոփոխութեան մարտահրաւերի դիմագրաւման վրայ: Դանիոյ կեդրոն-ձախ կառավարութեան կողմէ նախաձեռնուած 2020-ի պիւտճէն կեդրոնացաւ գոյքի ու ժառանգութեան հարկերու բարձրացման, առցանց բախտախաղերու վրայ բարձր հարկերու հաստատման, անշարժ գոյքի փոխանցման հարկի յաւելման, կերպընկալէ տոպրակներու եւ իրեղէններու վրայ եռակի վճարումի հարցերուն վրայ:

Լեհաստանի մէջ, չորս տարի բացակայելէ ետք թէ՛ սէյմէն (խորհրդարան) եւ թէ՛ ալ ծե-



րակոյտէն, ընկերվար-ժողովրդավարական «ժողովրդավար ձախ» կուսակցութիւնը յաջողեցաւ միացնել երկրին մէջ գործող ձախակողմեան տարբեր կուսակցութիւններ մէկ դաշինքի մէջ՝ «Ձախ» անունով: 2019-ի խորհրդարանական ընտրութիւններուն, ձախը մարտահրաւեր կարդաց Լեհաստանի պահպանողական ու յետամնաց օրէնքներու դէմ եւ իր քարոզարշաւը ամբողջովին տանելով ընկերային-յառաջդիմական ոգիով, կեդրոնացաւ կիներու եւ սեռային փոքրամասնութիւններու ազատագրման, լիիրաւ աշխարհիկականացման եւ պետական կառոյցներու արդիականացման վրայ: 2019-ին տեղի ունեցած լեհական խորհրդարանի ընտրութիւններուն, ժողովրդավար ձախ կուսակցութիւնը (Ձախ դաշինքին մաս կազմող գլխաւոր կուսակցութիւնը) վերադարձաւ թէ՛ սէյմ եւ թէ՛ ծերակոյտ:

20 տարի բացակայելով կառավարութիւնը գլխաւորելէ, Ֆինլանտայի ընկերվար-ժողովրդավարները 2019-ին խորհրդարանական ընտրութիւններուն վերստանձնեցին իշխանութիւնը: Ընտրութիւններուն ընկերվար ժողովրդավարներուն առաջին դիրքի գրաւման գլխաւոր պատճառն էր անոնց կեդրոնացումը ընկերային բարեկեցիկ համակարգի զարգացման վրայ, ինչպէս՝ ձրի դարձնելով արհեստից դպրոցները, յաւելեալ ներդրումներ կատարելով գիտական եւ հետազօտական մարզերուն մէջ, հաւասար աշխատավարձ ապահովելով երկու սեռերու աշխատողներուն, ցած հարկեր պարտադրելով փոքր ձեռնարկութիւններուն վրայ, ձրի դարձնելով երեխաներու կանուխ շրջանի

կրթությունը՝ երեք տարեկան են սկսեալ եւ բարձրացնելով ցած եկամուտ ունեցող թոշակառուներու թոշակները: 6 յունիս 2019-ին, ընկերվար-ժողովրդավարները կազմեցին համաձայնական կառավարութիւն մը Ձախ դաշինքի (արմատական ձախ), Կանաչ լիկայի, Կեդրոն կուսակցութեան (ազատական) եւ Շուէտի ժողովուրդի կուսակցութեան (Ֆիւլանտայի մէջ շուէտցի փոքրամասնութեան հարցերը արծարծող կուսակցութիւն, ազատական) հետ: 10 դեկտեմբեր 2019-ին, ընկերվար-ժողովրդավար վարչապետ Անթի Ռիննէն դիմագրաւելով արհեստակցական միութիւններու կողմէ կազմակերպուած գործադուլ մը, հրաժարեցաւ: Իր կուսակցութիւնը Սանա Մարինը նշանակեց վարչապետ: Վերջինս դարձաւ աշխարհի ամենէն երիտասարդ վարչապետը՝ ըլլալով միայն 34 տարեկան:

2019-ը նաեւ հանդիսացաւ խստամբերութենէն ազատագրող եւ համերաշխութեան վերահաստատող ընկերվարական կուսակցութիւններու վերընտրութեան տարին Սպանիոյ եւ Փորթուգալի մէջ: Սոյն երկիրներուն ընկերվարական կուսակցութիւնները վերատեսութեան ենթարկեցին թէ՛ իրենց ընկերային-տնտեսական գիծը եւ թէ՛ իրենց պետութեանց դրամական քաղաքականութիւնները: 2015-ին Սպանիոյ Ընկերվար բանուորներու կուսակցութեան ընդհանուր քարտուղար ընտրուեցաւ Փետրո Սանչեզը. Սանչեզի առաջին առաքելութիւնը եղաւ նախ սրբագրել իր կուսակցութեան սխալը՝ 2008-ին տնտեսական ճգնաժամի ընթացքին վարած խստամբերական քաղաքականութեամբ, ապա 2011-էն սկսեալ պահպանողական կառավարութեան շարունակական քաղաքականութիւնը նոյն գիծին վրայ: 2018-ին «վստահութիւն եւ մատուցում»-ի հիման վրայ Սպանիոյ ընկերվարականները կառավարութիւն կազմեցին արմատական ձախ «Փոտեմոս» եւ քաթալանական ու պասքերու ազգայնական կուսակցութիւններուն հետ: Ընկերվարականները մէկ տարուան ընթացքին յաջողեցան վերջ տալ խստամբերութեան, վերահաստատել պետութեան սեփականատիրութիւնը՝ առողջապահական մարզին նկատմամբ, վերջ տալ հանրային բնակարաններու սեփականաշնորհման, անբուժելի

հիւանդութեամբ տառապող մարդիկը ցաւերէ փրկելու համար կեանքէ զրկելը ապաքրեականացնել եւ հաստատել Սպանիոյ պատրաստակամութիւնը, որ վերջ տրուի որոշ ընկերութիւններու հարկային ներումներուն, ինչպէս նաեւ՝ աշխատիլ, որպէսզի փակուին հարկերէ խուսափումի միջոցներն ու կեդրոնները եւ ֆաշական ամբողջատէր Ֆրանքոյի աճիւնները դուրս հանուին գերեզմանէն: Յիշեալ քաղաքականութիւնները որդեգրելով՝ ընկերվարականները յաջողեցան վերընտրուիլ 2019-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն՝ իբրեւ Սպանիոյ թիւ մէկ կուսակցութիւնը:

Ինչ կը վերաբերի Փորթուգալին, հոն ալ պայմանները տարբեր չէին Սպանիոյ պայմաններէն: Թէ՛ ընկերվարականները եւ թէ՛ անոնց յաջորդող պահպանողական կառավարութիւնը տնտեսական ճգնաժամի ընթացքին որդեգրած էին խստամբերական քաղաքականութիւններ: Անթոնիօ Քոշթայի գլխաւորութեամբ, ընկերվարականները հրաժարեցան «Երրորդ ուղի»-ի տնտեսական ազատական քաղաքականութիւններէն եւ յաջողեցան լեզու գտնել ձախակողմեան միւս կուսակցութիւններուն հետ: Քոշթայի կողմէն կազմուած ընկերվարական կառավարութիւնը նախորդ չորս տարիներուն ընթացքին (2015-2019) կազմած էր «վստահութիւն եւ մատուցում»-ի հիման վրայ կառավարութիւն՝ արմատական ձախ «Ձախ պլոք»-ին եւ «Միաւորուած ժողովրդավարական դաշինք»-ին (կազմուած՝ համայնավարներէ եւ կանաչներէ) հետ: Չորս տարիներու ընթացքին ընկերվարականներու կառավարութիւնը յաջողեցաւ Փորթուգալը դուրս հանել տնտեսական ճգնաժամէն, նուազագոյն աշխատավարձը բարձրացնել, անգործութեան տոկոսը նուազեցնել եւ խստամբերութեան փոխարէն պետական ծախսը աւելցնել ընկերային ծառայութիւններուն վրայ: 2019-ին կայացած Փորթուգալի խորհրդարանական ընտրութիւններուն ընթացքին, ընկերվարականները ո՛չ միայն շահեցան առաջին դիրքը, այլ նաեւ աջակողմեան կուսակցութիւնները մատնեցին ամենէն վատ պարտութեան: Վերջիններս ամենէն նուազ քուէները ստացան Փորթուգալի ժողովրդավարացման հաստատումէն

ետք՝ վերջին 45 տարիներու ընթացքին:

Մարդկությունը արդեն իսկ պիտի թեւակոխէ 21-րդ դարու 20-րդ տարին. տարի մը, որ համաշխարհայնացումի շնորհիւ օժտուած պիտի ըլլայ ճարտարարուեստի նոր փուլով մը, շուկայի թուայնացումով, տուեալներու յեղափոխութեամբ: Չենք կրնար ըսել, թէ այս հոլովոյթին մէջ նոր-ազատականութիւնը իր դերակատարութիւնը չունի: Անկէկա մարդ անհատին կեանքը վերածած է շուկայի, ուր համամարդկային արժէքները զիջած են դրամատնային հաշիւներուն, համացանցի ընկերութիւններու բաժանորդագրութեան ամսավճարներուն եւ դրամատուներէն փոխառութիւն ստանալուն եւ ելեկտրոնային դրամարկղներէն գումար քաշելուն: Վերեւ յիշուած մարտահրաւերները, նկատուելով իբրեւ հասարակ ժողովուրդի առօրեայ կեանքի գլխաւոր հարցեր, գերծ չմնացին ընկերվարականներու ուշադրութենէն: Նկատի ունենալով, որ համացանցը գլխաւոր դեր կը խաղայ ներկայ ճարտարարուեստական դարուն մէջ, Բրիտանիոյ Աշխատաւորական կուսակցութիւնը, 12 դեկտեմբեր 2019-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու նախընտրական ծրագիրին մէջ, նպատակ ունենալով վերջ տալ մէկ կողմէ մեծ քաղաքներուն ու ծայրամասերուն եւ գիւղերուն, իսկ միւս կողմէ ալ մեծահարուստներուն եւ միջին ու աղքատ դասակարգերուն միջեւ համացանցի բաժանորդագրութեան գումարի անարդարութեան եւ համացանցի արագութեան անհաւասարութեան՝ խոստացաւ մասամբ հանրային սեփականատիրութեան յանձնել Բրիտանական բազմազգեան հաղորդակցական «BT Group» ընկերութիւնը՝ աւելի աժան եւ աւելի արագ համացանցային ծառայութեան մատուցումով: Նոյն ծիրին մէջ, «Ֆրետրիշ Էպլըթ» հիմնադրամը (Գերմանիոյ Ընկերվար ժողովրդավարական կուսակցութեան հիմնադրամը) 2019-ի հոկտեմբեր ամսուան ընթացքին երկօրեայ համաժողով մը կազմակերպեց «Թուային դրամատիրութիւն» խորագիրով, ուր քննարկուեցան թուային կրթութիւն, թուայնացած շուկայի մենաշնորհներու, արդիւնաբերութեան թուայնացումը, թուային ընկերութիւններու հարկման, թուա-



յին աշխատանքային շուկայի աշխատաւորներու իրաւունքները:

129-ամեայ ամբողջ պատմութեան ընթացքին, եթէ որեւէ ուսումնասիրութիւն կատարենք ԶՅԴ-ի ծրագրային-գաղափարաբանական բաժինին գծով, պիտի տեսնենք, որ ան մեծամասնութեամբ ազդուած է Եւրոպայի ընկերվար-ժողովրդավար շարժման տեսական ժառանգութենէն. 1892-ի ծրագրի մէջ նարոդնիկականութեան ու ուղղափառ մարքսականութեան խառնուրդը, 1907-ին վերատեսականութիւնը, 1978-ին մարքսականութենէն հրաժարումը, իսկ 1998-ին՝ ընկերային-շուկայական տնտեսութեան որդեգրումը: Այսինքն՝ դաշնակցական ընկերվարական մտածողութեան զարգացման հոլովոյթը զուգահեռ ընթացք ունեցած է Եւրոպայի ընկերվար-ժողովրդավարութեան հետ: Ընկերային-դասակարգային անհաւասարութիւնը, սեռային անհաւասարութիւնները, կլիմայական փոփոխութիւնն ու ճարտարարուեստականացումը լոկ եւրոպական հարցեր չեն, եւ միայն եւրոպացին չի դիմագրաւեր զանոնք, այլ նաեւ Զայաստանն ու ամբողջ հայութիւնը: Զետեւաբար, ժամանակն է հայկականացնելու եւրոպական ընկերվարութեան որդեգրած ուղեգիծը՝ դիմագրաւելու համար վերեւ յիշուած մարտահրաւերները, ժամանակն է վերանորոգման ենթարկելու ընկերվարութիւնը հայկական իրականութեան մէջ:

ՆԱԹԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ - ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆՊՈՒԹԻՒՆ ARMENIAN PERIODIC DISEASE

Այս հիւանդութեան մասին գրած էինք երեք տարի առաջ: Սակայն կարողալէ եւ լսելէ ետք հայրենի բժիշկ՝ Յայկ Մանասեանի «Յայկական պարբերական հիւանդութեան աշխարհագրութիւնը» ուսումնասիրութիւնը եւ հոգեբուժ Արմէն Ներսիսեանի հոգեբանական վերլուծումները՝ Յայոց ցեղասպանութեան եւ «Յայկական պարբերական հիւանդութեան» վերաբերեալ, որոշեցի դարձեալ գրել այս հիւանդութեան մասին, հիմնուելով նախորդ յօդուածիս եւ բժիշկ Մանասեանին ու հոգեբուժ Ներսիսեանին ներկայացուցած խիստ հետաքրքրական ու առարկայական տեղեկութիւններուն, վերլուծումներուն ու տուեալներուն հիման վրայ:

«Յայկական հիւանդութիւն» կամ «Յայկական պարբերական հիւանդութիւն (ՅՊԳ)» անւանումը ոչ գիտական է: Անիկա այսպէս կոչուած է հայերու կողմէ, որովհետեւ յաճախակի երեւոյթ մըն է հայերուն մէջ: «Յայկական պարբերական հիւանդութեան» բժշկական-գիտական անունը հետեւեալն է՝ «Միջերկրականեան ընտանեկան տենդ» (Mediterranean familial fever), «Միջերկրականեան պարբերական հիւանդութիւն» (Mediterranean periodic disease) եւ կամ «Ընտանեկան պարբերական հիւանդութիւն» (familial periodic disease): Իսկ Յայաստանի մէջ ան յաճախ կը կոչուի՝ «Երեւանեան հիւանդութիւն կամ տենդ»:

Այս հիւանդութիւնը ժառանգական հիւանդութիւն մըն է, որ կը փոխանցուի ծինային թաքուն ժառանգականութեամբ: Այսինքն, երբ հայր եւ մայր ունին այս հիւանդութեան ծինը, անոնց զաւակներէն իւրաքանչիւրը 25 տոկոսով կարելիութիւնը կ'ունենայ զարգացնելու այս հիւանդութիւնը: Իսկ երբ ծնողներէն մէկը միայն ունի այդ ծինը, անոնց զաւակները կը

ժառանգեն ծինը, սակայն ոչ հիւանդութիւնը: ՅՊԳ կը պատահի մէկ սերունդէ յաջորդ սերունդ 60 տոկոս համեմատութեամբ երկու ծիւներու փոխանցումով՝ մէկը հօրմէն եւ մէկը մօրմէն, 30 տոկոս համեմատութեամբ՝ մէկ ծիւնով հօրմէն կամ մօրմէն եւ 10 տոկոս համեմատութեամբ՝ ոչ ծինային փոխանցումով: Շատ մը բժշկական ուսումնասիրութիւններու հեղինակներ հասած են այն եզրակացութեան, որ կարգ մը հրահրիչ ազդակներ պատճառ կը դառնան այս հիւանդութեան յայտնաբերումին: Ծանր ֆիզիքական աշխատանք-յոզութիւն, գերճշուածութիւն, մտահոգութիւն, անձկալից վիճակ, յուզումնալից դէպք-պատահար, մահ, նկատուած են հրահրիչ ազդակներ:

Ընտանեկան պարբերական հիւանդութիւնը կը յայտնուի Միջերկրական ծովու շրջապատի երկիրներուն մէջ, մասնաւորապէս՝ Իսրայէլ, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Թուրքիա, եւ հազուադէպօրէն Յունաստան ու Յիւսիսային Ափրիկէի երկիրները: Ան կը յայտնուի առաւելաբար Յայաստանի մէջ: Ան հրեաներու, արաբներու, թուրքերու եւ յոյներու, բայց առաւելաբար հայերու մէջ տեսնուած հիւանդութիւն մըն է: Կարգ մը աղբիւրներու համաձայն, վերոյիշեալ ժողովուրդներուն 1/200-ը կը տառապի այս հիւանդութենէն եւ անոնց 1/5-1/7-ը կ'ունենայ անոր թաքուն ծինը:

Այս հիւանդութիւնը որպէս որովայնային հիւանդութիւն յիշատակուած է յոյն փիլիսոփաներու կողմէ: Յոյներէ ետք արաբական շրջանին Իպն Սինա յիշած է այս հիւանդութիւնը իր բժշկարաններուն մէջ: Առաջին անգամ ըլլալով այս հիւանդութիւնը մանրամասնօրէն նկարագրուած է 1802-ին Յեպերմենի

կողմէ: Այս թուականն են տարբեր թուականներով տարբեր բժիշկներ եւ գիտնականներ՝ 1895-ին Ուիլիլմ Օսլըր եւ 1908-ին Թեոտոր Քոլտուել ճէյնուէյ նկարագրած են այս հիւանդութիւնը: 1945-ին Շեփըրտ Սիկալ նկարագրած է հիւանդութիւնը եւ զայն կոչած՝ «որովայնամիզի բորբոքում» (peritonitis) եւ գրած է, որ ան **երնիք**-ցեղային պատկանելիութիւն ունի: Ֆրանսացի եւ ամերիկացի ծիւսբաններ գտած են անոր պատճառ եղող ծիւնը եւ եկած են այն եզրակացութեան, որ որոշ ծիւնային ալլափոխութիւն (mutation) տեղի կ'ունենայ թիւ 16 երփնամարմինին (chromosom) վրայ գտնուող մէկ ծիւնին մէջ:

Երեւանաբնակ բժիշկ Յայկ Մանասեան այս հիւանդութիւնը կ'անուանէ «Յայկական պարբերական հիւանդութիւն»: Ան պատրաստած է երկարաշունչ բժշկական-պատմական-քաղաքական ուսումնասիրական «Յայկական պարբերական հիւանդութեան աշխարհագրութիւնը» ուսումնասիրութիւնը, որուն մէջ կը փաստարկէ, որ այս հիւանդութիւնը հայկական է, հակառակ թուրքերուն կողմէ հրամցուած այն պնդումներուն, թէ ան զուտ թրքական ծիւնային հիւանդութիւն մըն է: Բժիշկ Մանասեան կը ներկայացնէ նաեւ այն համոզումը, որ նոյնիսկ բժշկական միջազգային գրականութեան շատ մը հեղինակներ կը փորձեն այս հիւանդութիւնը հեռու պահել հայկական ծիւնային իրականութենէ: Բժիշկ Մանասեան իր ուսումնասիրութեան մէջ կը ներկայացնէ խիստ կարեւոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ, որոնցմէ մի քանին կը յիշենք հոս՝

1. Աշխարհի չորս ծագերուն ապրող բոլոր հայերու մօտ յայտնուած է այս հիւանդութիւնը:

2. Ան Յայաստանի մէջ շատ ընդհանրացած է եւ զուտ ծիւնային հիւանդութիւն մըն է: Յոն արձանագրուած են մօտաւորապէս 20 հազար Յայկական հիւանդութեան պարագաներ:

3. Ան կը յայտնուի Թուրքիոյ եւ կարգ մը այլ երկիրներու այն շրջաններուն մէջ, ուր ժողովուրդը ունի հայկական ծագում եւ կամ հայերու հետ խառն ամուսնութիւններ ունեցած է:

4. 1950-ական թուականներուն Յոլլանդիա Ռէյման Լիբանանի մէջ կատարած է ուսումնասիրութիւն մը այս հիւանդութեան ամենուրեքեամբ: Ան Լիբանանի 1.300.000 քաղաքացիներուն մէջ գտած է 72 պարագաներ, որոնցմէ

49-ը հայ եւ 23-ը արաբ եղած են: 49 հայ պարագաները յայտնաբերուած են Լիբանանի 100.000 հայ բնակչութեան մէջ: Ռէյման Այնճարի մէջ մեծ համեմատութեամբ պարագաներ գտած է Այնճարի հայ բնակչութեան մէջ:

5. 1950-ական թուականներուն Թուրքիոյ մէջ թուրք բժիշկներ փաստարկած են, որ այս հիւանդութիւնը զուտ միջերկրականեան հիւանդութիւն է:

6. 1958-ին Իսրայէլի մէջ հրեայ բժիշկ-գիտնական՝ Յերի Յելըր ուսումնասիրութիւն մը կատարած է այս հիւանդութեան վրայ եւ զայն անուանած է՝ «Անտանեկան պարբերական միջերկրականական հիւանդութիւն»: Սակայն այս անուանումը հիմք չէ ունեցած ըստ բժիշկ Մանասեանի, որովհետեւ բժիշկ Յելըր նկատի չէ առած, որ հայերը եւ Յայկական լեռնաշխարհը շատ հեռու են Միջերկրականէն:

7. Թուրքերը կ'աշխատին եւ կը փորձեն հաւատացնել, որ այս հիւանդութիւնը միայն թրքական ծագում ունի եւ համաթրքական երկիրներու կը պատկանի, ինչպէս նաեւ ան ոչ մէկ կապ ունի հայերու հետ: Յակառակ այս ըսուածներուն, փաստարկուած է, որ թուրքերուն մէջ շատ քիչ համեմատութեամբ գոյութիւն ունի ան: Տեսնուած է նաեւ, որ Թուրքիոյ արեւմտեան շրջանի մասնաւորապէս Իզմիրի շրջանի՝ 16.700 թուրքերէն միայն մէկը եւ Տեւիզի շրջանի 3 700 թուրքերէն մէկը ունեցած են այս հիւանդութիւնը: Յակառակ այս թիւերուն՝ Թուրքիոյ արեւելեան շրջաններուն մէջ 16.700 անհատներէն 35-150 հոգին ունեցած են այս հիւանդութիւնը, Սվազի 400 անհատներէն մէկը, Չարայի 113 անհատներէն մէկը եւ Թոքթաթի շրջանի 122 անհատներէն մէկը ունեցած են այս հիւանդութիւնը:

8. Յայոց ցեղասպանութեան պատճառով Թուրքիոյ մէջ հայերու եւ թուրքերու միջեւ եղած են մեծ թիւով հայերու խառն ամուսնութիւններ եւ իսլամացում: Ասոնց հետեւանքով հայերը այս հիւանդութեան ծիւնը փոխանցած են իրենց թուրք զաւակներուն եւ թոռներուն: Վանը, որ թրքացած-քրտացած հայերու շրջան է, ունի 1 միլիոն բնակչութիւն: Յոն 400 հոգիի վրայ մէկը ունեցած է այս հիւանդութիւնը: Յամշենահայերուն մէջ նոյնպէս մեծ համեմատութեամբ տեսնուած է այս հիւանդութիւնը:

9. Ազրայէյճանի մէջ արգիլուած է խօսիլ այս

հիւանդութեան մասին, նկատի առնելով, որ ան հայերու հետ առնչուած հիւանդութիւն մըն է: Զոն Յայկական հիւանդութեան մասին խօսիլը եւ Յայկական հիւանդութիւն ունենալը նկատուած է դաւաճանութիւն: Ըստ ազրպէյճանցիներուն, իրենց համար վայել չէ ունենալ «Յայկական հիւանդութիւն»-ը: Ոչ մէկ ուսումնասիրութիւն կատարուած է եւ կամ եթէ կատարուած է արդիւնքները չեն բացայայտուած ու մնացած են թաքուն:

10. Վրաստանի մէջ «Յայկական հիւանդութիւն»-ը տեսնուած է միայն այն շրջաններուն մէջ ուր հայեր կը բնակին:

11. Պարսկաստանի հիւսիսային շրջաններուն մէջ եւ մասնաւորապէս Ուրմիոյ լիճին հիւսիս արեւմտեան շրջաններուն մէջ այս հիւանդութիւնը շատ տեսնուած է: Այս շրջաններու ազրպէյճանցիները, որոնք թուրք չեն, ունեցած են այս հիւանդութիւնը:

Եզրափակելով բժիշկ Մանասեան կ'ըսէ. «70 միլիոն բնակչութիւն ունեցող Թուրքիոյ մէջ արձանագրուած են մօտաւորապէս 100 հազար Յայկական հիւանդութիւն ունեցողներ, որոնց մեծամասնութիւնը եղած են ներքին արեւելեան սահանգներէն: Այս շրջաններուն մէջ, ինչպէս յիշուեցաւ նախապէս 120-150 տեղացիներէն մէկը ունեցած է այս հիւանդութիւնը: Այս տուեալներուն համաձայն, կարելի է ըսել, որ Արեւելեան սահանգներու մէջ այսօր կ'ապրին մօտաւորապէս 15 միլիոն բնակչութիւն, որոնց մեծամասնութիւնը հայկական ծագում ունին՝ իսլամացած հայեր են եւ կամ ամուսնացած են թուրք իսլամներու հետ»:

Յայրենաբնակ հոգեբուժ Արմէն Ներսիսեան 2006-ին Պոլսոյ մէջ կայացած համաշխարհային բժշկական համագումարին համարձակօրէն ներկայացուցած է Յայոց ցեղասպանութեան հետեւանքով ազգային ճնշուածութեան եւ իւրայատուկ ընկճուածութեան իրականութիւնը, ինչպէս նաեւ անժխտելի առնչութիւնը Յայոց ցեղասպանութեան եւ «Յայկական պարբերական հիւանդութեան» միջեւ: Ան կը փաստէ, որ պարբերական հիւանդութիւնը հետեւանքն է, եւ կամ՝ արտացոլացումն է Ցեղասպանութեան պատճառով յառաջացած հոգեկան խանգարումներուն, յատկապէս ընկճուածութեան եւ ճնշուածութեան: Այս հոգեբանական խանգարումները կ'ազդեն մարդու հոգեբանութեան եւ ֆիզի-

քական առողջութեան վրայ: Ցեղասպանութեան պատճառով հոգեբանական նուազագոյն խանգարումները կ'ազդեն մեր ծիներուն վրայ եւ կրնան յառաջացնել ծիւային անբնական երեւոյթներ, որոնց պատճառով կը յառաջանան զանազան մարմնական հիւանդութիւններ, ինչպէս՝ Յայկական պարբերական հիւանդութիւնը: Ան կը նշէ, որ այն հայ երեխաները, որոնք այս հիւանդութենէն կը տառապին, կը տեսնեն մղձաւանջային երազներ՝ Ցեղասպանութեան տեսարաններով: Երբ այս երեխաները հոգեբանական քննութիւններու ենթարկուին, կը նկարեն տարբեր նկարներ, պատկերներ եւ դէմքեր, օգտագործելով վառ կարմիր գոյնը: Պարբերական հիւանդութիւնը տեսնուած է թուրքերու մօտ ալ, որոնք կամ կրօնափոխ հայեր եղած են եւ կամ հայերու հետ ամուսնացած թուրքեր: Ըստ բժիշկ Ներսիսեանին, այս հիւանդութեան դարմանումը կը կարօտի մարմնական-ֆիզիքական եւ հոգեբուժական դարմանամիջոցներու:

Բժիշկ Յայկ Մանասեանի եւ հոգեբուժ Արմէն Ներսիսեանի վերոյիշեալ մատնանշումներէն ետք, ես պիտի շարունակեմ անուանել այս հիւանդութիւնը «Յայկական պարբերական հիւանդութիւն» (ՅՊԿ):

ՅՊԿ-ը ոչ մանրեական բորբոքում մըն է, որ հիմնականօրէն տեսնուող կը յայտնուի: Ան կը յայտնուի որեւէ տարիքի, առաւելաբար՝ անչափահաս անհատներու մօտ: Ախտաբանականօրէն մարմինի որոշ օրկաններու շճաթաղանթը (serosa) կ'ախտահարուի եւ տեղի կ'ունենայ շճաթաղանթի ոչ-մանրեական բորբոքում (serositis): Այս մէկը տեղի կ'ունենայ մարմին կողմէ արտադրուած փիրին (Pyrin) սպիտակուցի նուազումով: Փիրինը կ'օգնէ բորբոքումներէ զերծ մնալու համար: Ախտահարումը կը յառաջանայ արեան ճերմակ գնդիկներէն՝ հատիկաւոր եւ բազմակորիզ գնդիկներու (neutrophils) կուտակումով օրկաններու շճաթաղանթին մէջ: Մասնաւորապէս կ'ախտահարուին որովայնամիզը (peritoneum), թոքամիզը (pleura), սրտապատեանը (pericardium) եւ յօդապատեանները (synovium): Այս օրկաններու շճաթաղանթները կ'ախտահարուին միասնաբար կամ անջատաբար: Միասնաբար ախտահարումի պարագային կը յառաջանայ բազմաշճաթաղանթաբորբ (polyserositis):

ՀԴՀ-ի զարգացումի ընթացքին մարմինին մեջ սխալմամբ եւ առատօրէն կ'արտադրուի յատուկ բնասպիտ (protein) մը, որ ամիլոյտ (amyloid) կը կոչուի: Այս բնասպիտը կը կուտակուի որոշ օրկաններու մեջ, մասնաւորապէս երիկամներուն մեջ: Ամիլոյտի կուտակումը երիկամներուն մեջ կը յառաջացնէ երիկամներու քայքայում եւ աշխատանքի թերացում:

ՀԴՀ-ը կը յայտնուի չորս ձեւերով՝ որովայնային, թոքային, սրտային եւ խառն, այսինքն՝ որովայնային, թոքային եւ սրտային միասնաբար:

ՀԴՀ-ի բոլոր ձեւերը կը բնորոշուին երկարատեւ եւ կրկնուող ընթացքով: Ախտանշանները կը սկսին 5-15 տարեկան անձերու հետ: Յատկանշական ախտանշաններն են՝ շատ թեթեւ կամ ուժգին ցաւ եւ անբացատրելի բարձր ջերմ ու դող: Իւրաքանչիւր նոպայի տեւողութիւնը եւ նոպաներու յաճախականութիւնը կը տարուբերին նոյն անձին մօտ: Ամէն մէկ նոպա ընդհանրապէս կը տեւէ 12-72 ժամ եւ կը պատահի ամէն 3 կամ 4 շաբաթը մէջ մը: Կը կարծուի, որ որոշ ազդակներ պատճառ կը դառնան նոպաներուն յառաջացման, ինչպէս՝ ֆիզիքական հարուած (trauma), յոգնութիւն եւ զգացական-հոգեբանական ճնշումներ: Նոպայի մը ընթացքին ենթական կ'ունենայ հիւանդագին ծանր վիճակ:

Որովայնային ձեւը կը յատկանշուի որովայնապարկաբորբի (peritonitis) ախտանշաններով՝ տեղային (localized) կամ տարածուն (diffuse) սուր եւ նոպայական փորի ցաւով: Անիկա յաճախ կը շփոթուի կոյր աղիքի որդանման ելունի բորբոքումի (appendicitis) հետ: Որովայնային ձեւը ամէնէն յաճախակի տեսնուած ձեւն է:

Թոքային ձեւը կը բնորոշուի թոքամիզաբորբի (pleuritis) ախտանշաններով՝ չոր կամ խիսաւոր հագ, շնչահեղձութիւն եւ ջերմ:

Սրտային ձեւը կը բնորոշուի սրտապատեանի բորբոքումի (pericarditis) ախտանշաններով՝ կրծքացաւ, ջերմ եւ դող:

ՀԴՀ-ի բոլոր ձեւերուն ընդհանրապէս կ'ուղեկցին.

1. Յօդերու պատեաններու բորբոքումի ախտանշաններ՝ յօդացաւ եւ յօդերու կարմրութիւն.

2. 5-15 սմ մեծութեամբ մորթային կարմրագոյն եւ ուռած բիծեր (rash), մասնաւորապէս

սրունքին յառաջամասը կամ ոտքին վրայ.

3. Մկանային ցաւ, որ կը տեւէ 1-2 օր:

ՀԴՀ-ի ախտաճանաչումը յաճախ կը դժուարանայ: Ախտաճանաչումը կը կատարուի նկատի առնելով.

1. Հիւանդին ունեցած ախտանշանները.

2. Ծիւնային մասնագիտական քննութիւններուն արդիւնքները.

3. Արեան ճերմակ գնդիկներու, մասնաւորապէս՝ հատիկաւոր եւ բազմակորիզ գնդիկներու բարձրացումը:

ՀԴՀ-ը հիմնական դարման չունի, քանի որ ան ծիւնային հիւանդութիւն մըն է: Սակայն կան միջոցառումներ, որոնք կը մեղմացնեն հիւանդութեան ընթացքը եւ ցաւը: Այդ միջոցառումներն են.

Դեղամիջոցներ՝ Cholchicin դեղը: Ան կը փոխարինէ փիրին սպիտակուցը եւ կ'օգնէ ջերմին եւ ցաւին նուազումին: Անոր գործածութեամբ նոպաներու յաճախականութիւնը զգալիօրէն կը նուազի կամ բնաւ տեղի չ'ունենար: Անիկա նաեւ արգելք կը հանդիսանայ ամիլոյտի կուտակումին եւ ամիլոյտոսիսի (amyloid-dosis) զարգացումին: Այս հիւանդութենէն տառապող անհատը շարունակ պէտք է գործածէ Cholchicin-ը: Ան ունի իր կողմնակի վնասները, որոնցմէ կարելորագոյններն են՝ փորհարութիւն, նողկանք, փորի փքուածութիւն եւ արեան կարգ մը բջիջներու նուազում:

Հոգեբուժներ կը յանձնարարեն նաեւ հոգեբուժական դարմանումի միջոցներ, օրինակ՝ հայրենաբնակ բժիշկ Արմէն Ներսիսեան կ'օգտագործէ «Մատեան ողբերգութիւն» գիրքէն հատուածներ:

Ինչպէս յիշուեցաւ նախապէս, հայկական հիւանդութեան ընթացքին ամիլոյտ բնասպիտի կուտակումով երիկամները կը դադրին գործելէ ու տեղի կ'ունենայ երիկամներու թերացում եւ նոյնիսկ փճացում: Այս պարագային ենթական պարտադրաբար կ'ենթարկուի երիկամներու հերթական տրամալուծումի (kidney dialysis) եւ կամ երիկամներու փոխպատաստումի:

Բժիշկ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Մոնրեալ, 30 նոյեմբեր 2019

ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԸ

Մեր մոլորակին ցաւերը թեթեւցնելու համար, աշխարհի չորս կողմերէն պատանիներ եւ երիտասարդներ լուծումներ գտնելու միջոցներ կը փնտռեն:



Այս բնապահպանումի ահագանգին առջեւ 16 տարեկան Կրեթա Թունպըրկ երիտասարդներու մեծ շարժումի մը մղում տուաւ: Ամէն ինչ սկսաւ 21 օգոստոս 2018-ին, երբ ան դիրք առաւ շուէտական խորհրդարանին առջեւ, հարցապնդելու համար երեսփոխանները կլիմային մասին անոնց առած կեցուածքներուն շուրջ: Ապա ան դասադուլի դիմեց,



ամէն ուրբաթ օր խորհրդարանին առջեւ իր տեղը գրաւելու եւ երեսփոխաններուն մղելու, որ գործադրեն 2015-ին Փարիզի մէջ կենսալորտի գծով տրուած որոշումները: Փարիզի համազումարին մասնակցած էին 195 երկիրներ եւ անոնք ստորագրած էին համաձայնագիր մը, կլիմային ջերմաստիճանի սահմանը պահելով 2 աստիճանէն պակաս:

Կրեթայի կողմէ «Ֆրայտէյզ Փոր Ֆյուչըր» (Ապագայի համար ուրբաթ օրերը) շարժումը ստեղծելէն ետք, անոր սկսան մասնակցիլ աշխարհին շուրջ հազարաւոր աշակերտներ եւ ուսանողներ:

Սակայն Կրեթա միևնաճյեղ չէ իր այս պայքարին մէջ: Աշխարհին շուրջ բազմաթիւ երիտասարդներ, իւրաքանչիւրը իր նախասիրած ճիւղին մէջ, մեծ ճիգեր կը թափէ մեր մոլորակին օգնութեան հասնելու:

ՊՈՅԵԱՆ ՍԼԱԹ՝ ԿԸ ՅՆԱՐԷ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԶՏԻՉԸ



Փոքր տարիքին, Պոյեան կը ցնցուի երբ կը տեսնէ ովկիանոսին մէջ գտնուած կերպընկալէ տոպրակներու քանակը: Այդ վայրկեանէն սկսեալ անոր նպատակը կ'ըլլայ ստեղծել դրուօթիւն մը՝ ծովերը նման աղէտէ ձերբազատելու համար:



Օշըն Զլինափ ովկիանոսները մաքրելու անհաւատալի դրութիւն մըն է, զոր հնարած է հոլանտացի Պոյեան Սլաթ, 16 տարեկանին: Անոր հնարած ծփացող հսկայական գօտին հետը կը քշէ ընդծովեայ վարագոյրեր, որոնք կրնան կերպընկալները հաւաքել: Ան իր այս ծրագիրը կը ներկայացնէ 2012-ին իր ներկայացումին մէջ նշելով, որ «Պրոնգի շրջանէն եւ երկաթի շրջանէն ետք, մենք կ'ապրինք կերպընկալի շրջանին մէջ: Քանի մը ամիսէն անոր գաղափարը կը տարածուի աշխարհի չորս կողմը համացանցին շնորհիւ, եւ ան կարելիութիւնը կ'ունենայ հաւաքելու բաւարարացափ դրամ՝ շինելու համար իր մեքենան: Օշըն Զլինափ կը ծնի:

Այժմ, 24 տարեկան Պոյեան Սլաթ փորձեր կը կատարէ իր մեքենայով. 600 մեթր երկար փրկողակներէ կազմուած գօտի մը, որուն 3 մեթր խոր իջած ցանցերուն վրայ կը կառչին աղբերը:

**ՌԻՉՐԵՑ ԹԻՐԵՐ՝ ԽԱՂԱՂՈՐԵՆ ԱՊՐԻՆ
ՎԱՅՐԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒՆ ՅԵՏ**



20 տարեկան քեփացի Ռիչըրտ Թիւրեր հնարած է մեքենական դրութիւն մը, որ փրկած է բազմաթիւ վայրի անասուններ: Ան այս գաղափարը յղացած է փոքր տարիքին, երբ գիշերները առիւծները կը յարձակէին իրենց կովերուն վրայ: Յաջորդ առաւօտ, գայրացած ժողովուրդը կ'որսար այդ վայրի անասունները: Այս ահաւոր դրութիւնը վերջ չունէր: Ելեկտրոնային աշխարհի սիրահար Ռիչըրտ կը յղանայ գիշերային լուսաւորումի ձեւ մը, որուն լոյսերը կը վառին ու կը մարին փոխն ի փոխ: Ռիչըրտ նշմարած էր, թէ առիւծները կը վախնային շարժող լոյսերէն: Այս ձեւով, անոնք այլեւս չէին համարձակիր մօտենալ անասուններուն: Ռիչըրտ իր այս լուսաւորումի դրութիւնը արդէն հաստատած է Նայրոպիի մօտ բազմաթիւ անասնաբուծական շրջաններու մէջ:

**ԵՈՒՆԵՍ ՏՐԻՍԻ ԹԱՆԻ՝
«ԹՐԵՇԹԵՎ ԶԵԼԸՆՃ»**

Եունես բնապահպանման համար բանող ալճերիացի երիտասարդ մըն է: Ան բնաւ չէր մտածեր, թէ կրնար մեծ թիւով անձերու վրայ ազդեցութիւն ունենալ, երբ համացանցին վրայ ցուցադրած էր «առաջ/ետք» պատկեր մը: Ան նկարած է անտառէն աղբերով նկար-





լած անկիւն մը. ապա երեք օր տեւող մաքրութեան աշխատանքներէ ետք, ան դարձեալ նկարած է այդ նոյն շրջանը՝ մաքուր վիճակով: Ան ուզած է այս մարտահրաւերը ուղղել աշխարհին՝ զանոնք մղելու, որ կենսոլորտին հանդէպ իւրաքանչիւրին վարուելակերպը փոխեն: Ամերիկացի Պայրըն Ռոմըն այս գա-

ղափարը տարածած է «Թրեշթեկ Չելընճ» մարտահրաւերը ուղղելով աշխարհին, իւրաքանչիւրին հրաւիրելով երկու նկարներ առնել նոյն վայրէն սկիզբը եւ զայն մաքրելէ ետք:

ՖԵԼԻՔՍ ՖԻՆԵՊԱՅՆՆԸՐ՝ ԾԱՌԵՐ ՏՆԿԵՆՔ




Առաւելագոյն ձեւով բնածխային կազ քաշելով ջերմաստիճանին բարձրանալը սահմանափակելու համար, այս 21 տարեկան գերմանացի երիտասարդը կը քաջալերէ մեծ թիւով ծառեր տնկել: Անոր կարգախօսն է «Խօսելէ դադրեցէք, տնկել սկսէք»:

Ան այս գաղափարը կը յղանայ 2007 թուականին, 9 տարեկանին: Ան կը ստեղծէ «Փլենթ ֆոր տը փլանեթ» շարժումը, երիտասարդներուն քաջալերելու համար ծառեր տնկել: Շատ արագ, հազարաւոր ուսանողներ կ'ընդառաջեն իր կոչին, եւ 2010 թուականին կը տնկեն 1 միլիոն ծառեր: Նոյն տարին, Ֆելիքս ճառ մը կը ներկայացնէ Եւրոպական Միութեան խորհրդարանին մէջ, եւ ապա Միացեալ Ազգերու ընդհանուր ժողովին ընթացքին:


Այժմ Ֆելիքսի կազմակերպութիւնը ունի 130 պաշտօնէայ եւ 75 հազար կողմնակիցներ: Ան կը շարունակէ իր պայքարը նոր մարտահրաւերով մը՝ «Տը թրիլիոն թրի»: Անոր նպատակն է 1 եռիլիոն ծառեր տնկել եկող 30 տարուան ընթացքին: Ֆելիքս կը նախատեսէ, թէ անոնք պիտի կարենան քաշել մարդոց արտադրած բնածխային կազին 25 առ հարիւրը եւ սահմանափակել ընդհանուր կլիմայի ջերմաստիճանին բարձրացումը 2 աստիճանի սահմանին մէջ:


ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս օգնել Կաղանդ պապային գտնելու համար իր տարազին ճամբան:


Կրնա՞ս օգնել Կաղանդ պապային գտնելու իր եղջերուին հասցնող ճամբան:






Կրնա՞ս Կաղանդ պապաները շարել
ամենեն մեծեն ամենեն փոքրը:


Կրնա՞ս գտնել Կաղանդ պապային
համապատասխանող շուրջը:





Կրնա՞ս օգնել Կաղանդ պապային գտնելու նուէրին հասցնող ճամբան:

Կրնա՞ս տախտակէն դուրս ելլել միշտ նոյն շարքին հետեւելով:



ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ՝ 2019 ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

2 019 տարին, նախորդ տարիներուն նման, հարուստ եղաւ մարզական իրադարձութիւններով, ըլլա՛յ լիբանանեան, ըլլա՛յ հայկական եւ ըլլա՛յ միջազգային գետնի վրայ:

Դժբախտաբար սակայն, 2019 տարուան վերջին երեք ամիսներուն, լիբանանեան մարզաշխարհը սառեցաւ, երկրին մէջ տիրող ցոյցերուն եւ անապահով կացութեան պատճառով:

Լիբանանեան գետնի վրայ, ՀՄԸՄ Անթիլիասի պասքեթպոլի խումբը, կատարեց կարելոր նուաճումներ, ինչպէս նաեւ՝ ՀՄԸՄ Պէյրութի փինկ փոնկի աղջկանց խումբը:

Ամոռանալի եղաւ հայազգի ֆութպոլիստ՝ Եուրի ճորքայէֆի այցելութիւնը՝ Լիբանան:

Դժբախտաբար սակայն, 2019-ը տխուր տարի մը եղաւ ՀՄԸՄ-ի ֆութպոլի ներկայացուցչական խումբին համար, որ փոխադրուեցաւ Գ. դասակարգ:

Տեղի ունեցան Լիբանանի ճատրակի ֆետերասիոնիս ընտրութիւնները, մինչ բացառիկ արդիւնքներ արձանագրեց, Մեսրոպեան վարժարանը, որ հանդիսացաւ՝ Լիբանանի ճատրակի կրկնակի ախոյեան:

Հայաստանի մէջ տեղի ունեցան համահայկական ամառնային 7-րդ խաղերը, մինչ Հայաստան ունեցաւ՝ ֆութպոլի նոր ախոյեան մը՝ Արարատ-Արմենիա, որ տիտղոսին տիրանալէ բացի պատմական արդիւնք մըն ալ արձանագրեց՝ միջազգային գետնի վրայ:

Անշուշտ, պէտք չէ մոռնալ նաեւ, հայրենի մարզիկներուն ձեռք ձգած միջազգային նուաճումները՝ տարբեր տեսակի մարզաձեւերու մէջ:

Ստորեւ՝ 2019 տարուան ընթացքին, արձանագրուած կարելոր մարզական իրադարձութիւնները:

ՈՒԱՊԱ-ԱՂՋԿԱՆՋ ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ.

ՀՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՍ՝ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Կիրակի, 21 ապրիլին, Ամմանի մէջ (Յորդանան) իր աւարտին հասաւ ՈՒԱՊԱ-ի՝ Արեւմտեան Ասիոյ պասքեթպոլի աղջկանց ախոյեանութիւնը, երբ տեղի ունեցաւ վերջին՝ աւարտականի ճակատումը՝ ՀՄԸՄ Անթիլիասի եւ յորդանանեան Ֆըհէյս խումբին միջեւ:

ՀՄԸՄ Անթիլիասի աղջկանց խումբը առաջին անգամ ըլլալով տիրացաւ տիտղոսին՝ հանդիսանալով Արեւմտեան Ասիոյ ախոյեան, երբ մրցաշարքը աւարտեց առանց



պարտութեան՝ իր կատարած այս վերջին մրցումին յաղթելով իր մրցակիցին՝ 94-67 արդիւնքով:

Խումբը Յորդանանեն վերադարձին, Պեյ-րուֆի միջազգային օդակայանին մեջ արժանացաւ շատ մեծ եւ ջերմ ընդունելութեան:

**ԱՂՋԿԱՆՑ ՊԱՍԵԹՊՈԼ.
ՅՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՍ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂՋԿԱՆՑ
ԲԱԺԱԿԱԿԻՐ**



Շաբաթ, 9 մարտին, Ղազիրի դաշտին վրայ տեղի ունեցաւ Լիբանանի պասքեթպոլի աղջկանց բաժակի մրցաշարքի 2018-2019 տարեշրջանի աւարտական մրցումը, որուն ընթացքին իրարու դէմ մրցեցան ՅՄԸՄ Անթիլիաս եւ Ռիատի Պեյրուֆ:

Լիբանանի գործող ախոյեանը՝ ՅՄԸՄ Անթիլիաս, տիրացաւ տիտղոսին, իր մրցակիցին յաղթելով 17 կետի բաւական մեծ տարբերութեամբ մը՝ 67-50 արդիւնքով (13-10, 16-13, 21-16 եւ 17-11):

Ինչպէս նկատելի է չորս քորթըրներուն, ՅՄԸՄ տիրապետեց իր մրցակիցին վրայ մինչեւ մրցումին աւարտը, հակառակ անոր, որ քանի մը առիթներով մրցակիցը ունեցաւ քանի մը կետի առաւելութիւն:

Մրցումին աւարտին Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի նախագահ Աքրամ Յալապի բաժակը յանձնեց ՅՄԸՄ Անթիլիասի խմբապետ Մեդրի Թորոսեանին:

**ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻԲԱՆԱՆԻ Ա. ՂԱՍԱԿԱՐԳԻ
ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ.
ՅՄԸՄ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ
ՅԱՆԴԻՍԱՅԱՆ ՓՈՒՍԿԱՆՈՅԵԱՆ**

Կիրակի, 21 յուլիսին, Մոն Լա Սալի մէջ (Այն Սաատ) իրենց աւարտին հասան Լիբանանի փինկ փոնկի տղոց եւ աղջկանց Ա. դասակարգի խմբային ախոյեանութեան մրցումները, որոնց արդիւնքներուն լոյսին տակ յստակացան Լիբանանի ախոյեաններն ու փոխախոյեանները:



սակարգի խմբային ախոյեանութեան մրցումները, որոնց արդիւնքներուն լոյսին տակ յստակացան Լիբանանի ախոյեաններն ու փոխախոյեանները:

Աղջկանց տիտղոսը իր մօտ պահեց Նատուա Զամաթիէ՝ աւարտականին 3-0 արդիւնքով յաղթելէ ետք ՅՄԸՄ Պեյրուֆին:

Մարիանա Սահակեան (Զամաթիէ) յաղթեց Նոել Զէշիշեանին (3-0), Մալաք Խուրի՝ Լարա Զէչեպաշեանին (3-0), իսկ Միրիամ Յապաշ՝ Միրեյ Պոյաճեանին (3-1):

Ատապ Ուալ Ռիատա Զֆարշիմա հանդիսացաւ երրորդ՝ 3-0 արդիւնքով յաղթելէ ետք Շարիթիէ Տար Նուրին:

Ինչ կը վերաբերի տղոց մրցաշարքին, Ժընուպ Թուլ, որ տիտղոսը պահեց իր մօտ, 7-րդ անգամն ըլլալով հանդիսացաւ Լիբանանի ախոյեան՝ 3-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք Աիլի Սայտայի դէմ:

ՅՄԸՄ Պեյրուֆի տղոց կազմը գրաւեց վեցերորդ դիրքը, մինչ Պարադիմ Նապաթիէ, որ գրաւեց ընդհանուր դասաւորման 12-րդ եւ վերջին դիրքը, փոխադրուեցաւ Բ. դասակարգ:

Աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւնը:

**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ.
ՅՄԸՄ 4-3 ԱՐԴԻՆԵՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՍԲ ՍԸ
ՅՐԱԺԵՇՏ ՏՈՒՄԻ Բ. ՂԱՍԱԿԱՐԳԻՆ**

Շաբաթ, 6 ապրիլին, Լիբանանի ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութիւնը աւարտեցաւ, երբ տեղի ունեցան 22-րդ եւ վերջին հանգրուանի մրցումները:

ՅՄԸՄ-ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը, որ 2019-2020 տարեշրջանին մաս ախտի կազմէ Գ.դասակարգին, 4-3 արդիւնքով յաղթեց Գ.դասակարգին, 4-3 արդիւնքով:



քով պարտուեցաւ Իսլահ Պըրժ Շիմալիէն: ԶՄԸՄ-էն Սեմի Պիայ **հեթըրիք** մը իրագործեց:

ԶՄԸՄ-ի ընտանիքին համար ի մասնաւորի եւ լիբանանեան ֆութպոլի համար՝ առհասարակ, այդ օրը տխուր օր մը եղաւ՝ նկատի ունենալով, որ լիբանանեան մարզաշխարհին մէջ անցեալ ունեցած եւ մարզական պատմութեան մէջ իր անունը ոսկեայ տառերով արձանագրած ԶՄԸՄ-ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը փոխադրուեցաւ... Գ. դասակարգ:

Այսպիսով, ԶՄԸՄ-ի հետ Գ. դասակարգ փոխադրուեցաւ Շապապ Արապի, մինչ Պըրժ ստացաւ ախոյեանութեան իր տիտղոսը:

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը.

	ԿԵՏ
1.- Պըրժ	55 (42-9)
2.- Շապապ Պըրժ	47 (48-21)
3.- Ահլի Սայտա	45 (44-27)
4.- Սաժես	29 (29-37)
5.- Իժթիմահի	27 (43-41)
6.- Ահլի Նապաթիէ	26 (37-45)
7.- Նահտա Պար Էլիաս	26 (24-30)
8.- Նասեր Պար Էլիաս	25 (26-34)
9.- Իսլահ Պըրժ Շիմալի	25 (29-43)
10.- Սապարրա	25 (20-23)
11.- Շապապ Արապի	20 (24-35)
12.- ԶՄԸՄ	15 (34-55)

ՄԵՏՐՈՊԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՆՈՅԵԱՆ

Հայ կաթողիկէ Մետրոպեան բարձրագոյն վարժարանի աշակերտները, կիրակի, 7 ապրիլ 2019-ին, կատարեցին աննախընթաց իրագործում մը՝ յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով, շահելով Լիբանանի ճատրակի դպրոցական ախոյեանութեան առաջնութիւնը:



Մետրոպեանը, իր ետին ձգեց լիբանանեան 80 դպրոցներ, որոնցմէ մասնակցելու եկած էին 432 երկսեռ աշակերտներ:

Այս ախոյեանութիւնը, որ տեղի ունեցաւ Շուէյֆաթի Ամժատ մարզասրահին մէջ, կը վայելէր հովանաւորութիւնը՝ Լիբանանի ճատրակի ֆետերասիոնին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶՄԸՄ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԷԼԻ ԶՈՒԼԻՇԵԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԱՆՂԱՍ



Շաբաթ, 23 նոյեմբերին, «Սփորց - սիթի»-ի մէջ (Թուլայի շրջան, Պէյրութ), տեղի ունեցան Լիբանանի ճատրակի նոր ֆետերասիոնին ընտրութիւնները:

Ֆետերասիոնի անդամ ընտրուեցաւ Նաեւ, ԶՄԸՄ-ի ներկայացուցիչը՝ Էլի Զուլիշեան, որ միեւնոյն ժամանակ ալ արդէն, ճատրակի միջազգային իրաւարար է:

Նոր ֆետերասիոնին մաս կազմեցին 11 անդամներ, թեկնածու ներկայացած էին 13 անհատներ:

ԵՈՒՐԻ ԾՈՐԸԱՅԵՖԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆ

Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին



հետ 1998-ի մոնտիալի տիտղոսին տիրացած, հայազգի Եուրի Ճորջայէֆ, երկուշաբթի, 14 հոկտեմբերին այցելեց Պուրճ Յամուտի քաղաքապետութիւն, ընկերակցութեամբ՝ Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնին մօտ ՅԱԸՄ-ի ներկայացուցիչ Վահրամ Պարսումեանի եւ «Ազդակ» օրաթերթի մարզական բաժնի խմբագիր՝ Վարդիվառ Գասապեանի:

Ան մաս կը կազմէր Լիբանան այցելած «ՖԻՖԱ»-ի նախագահ՝ Ճիանի Ինֆանթինոյի գլխավորած պատուիրակութեան:

Պուրճ Յամուտի քաղաքապետութեան մէջ, ան շուրջ կէս ժամ տեւած հետաքրքրական գրոյց մը ունեցաւ ներկաներուն հետ, ապա շրջագայեցաւ Պուրճ Յամուտի թաղամասերուն մէջ:

Անոր այս այցելութեան առիթով, «Ազդակ» եւս յաջողեցաւ ստեղծել կարճ ժամանակ մը, (անոր գերիճողուած ըլլալուն պատճառով), անոր հետ կատարելով շահեկան հարցազրոյց մը:



Ճորջայէֆ ըսաւ, որ ինքզինք գերերջանիկ զգացած է՝ գտնուելով Լիբանանի եւ մանաւանդ Պուրճ Յամուտի հայահոծ շրջանները:

Ան յաջողութիւն մաղթեց լիբանանահայու-

թեան եւ «Ազդակ» օրաթերթին՝ կատարելու իր առաքելութիւնը, յատկապէս նկատի ունենալով օրաթերթի համաշխարհային տազնապը եւ աշխարհի տարածքին օրաթերթ ընթերցողներուն թիւին նուազումը:

ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ 2019-Ի ՄՐՑԱՇԱՐՔ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ՝ ԱՐՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ



Վերջին տարիներուն, Լիբանանի ախոյեան հանդիսացած՝ Ահտ, երեքշաբթի, 4 նոյեմբերին, պատմական իրագործում մը կատարեց, երբ հանդիսացաւ լիբանանեան առաջին խումբը, որ կը տիրանայ Ասիոյ ֆութպոլի բաժակի մրցաշարքին տիտղոսին:

Քուալա Լամփուրի մէջ (Մալեզիա) տեղի ունեցած 2019-ի այս ակադեմիական մրցումին, Ահտ, 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Էյփրըլ-25 խումբը (Յիւսիսային Քորեա):

ՊԱՍԵՆԹՊՈՒ

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՅԱՆԴԻՍԱՅԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ

Երկուշաբթի, 13 նոյեմբերին, Մարոքի մէջ տեղի ունեցաւ Արաբական ակումբներու աղջկանց պասքէթպոլի 21-րդ ախոյեանութիւնը, երբ տեղի ունեցաւ ակումբներու միջին ճակատումը, լիբանանեան Պէյրութ խումբին եւ թունուզեան Ամալի միջեւ:



Լիբանանի ներկայացուցիչը տիրացավ այս տիտղոսին՝ 66-54 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով:

Անիկա մրցաշարքը աւարտեց, առանց պարտութիւն մը կրելու:

**ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ ԱՂՋԿԱՆՑ
ՊԱՍԵԹՊՈՒԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ.
ԼԻԲԱՆԱՆ ԶԱՆԴԻՍԱՑԱՒ ԱԽՈՅԵԱՆ՝
ԱՄԱՐՏԱԿԱՆԻՆ 74-48 ԱՐԴԻՒՆԵՈՎ
ՅԱՂԹԵԼԷ ԵՏԶ ՍՈՒՐԻՈՅ**

Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ տեղի ունեցած Արեւմտեան Ասիոյ աղջկանց պասքեթպոլի ախոյեանութիւնը, երկուշաբթի, 26 օգոստոսին, հասաւ իր աւարտին, երբ Օրթոտոքսի ակումբի դաշտին վրայ տեղի ունեցաւ աւարտական մրցումը՝ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ:

Լիբանանի աղջիկները այս ախոյեանութիւնը աւարտեցին առանց պարտութեան,



երբ 26 կէտի տարբերութեամբ՝ 74-48 արդիւնքով (24-17, 37-30, 59-35 եւ 74-48) յաղթանակ մը արձանագրեցին իրենց մրցակիցին դէմ:

Այսպիսով, լիբանանեան պասքեթպոլը եկաւ Լիբանանի դրօշակը բարձր պահելու Արաբական աշխարհին մէջ:

Լիբանանէն ամէնէն շատ կէտը նշանակեց խմբապետ Ռեպեքքա Աքըլ (18), ապա՝ Լամա Մուքատտեմ (16) եւ Շիրին Շերիֆ (12):

Այս մրցումին աւարտին, յաղթական կազմը իր բաժակը ստացաւ Արեւմտեան Ասիոյ եւ Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոններու ընդհանուր քարտուղար Շարպել Ռըզքէն:

Այս առիթով Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի նախագահ Աքրամ Զալապի եւ ֆետերասիոնին բոլոր անդամները շնորհաւորեցին աղջկանց կազմը:

**ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ ԱԹԼԵԹԻՉՄԻ
ԿՐՏԵՐՆԵՐՈՒ 3-ՐԴ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ.**

**ԼԻԲԱՆԱՆ ԶԱՆԴԻՍԱՑԱՒ ԱԽՈՅԵԱՆ՝
ՏԻՐԱՆԱԼՈՎ 30 ԳՈՒՆԱՒՈՐ ՄԵՏԱՆԵՐՈՒ**



15-18 օգոստոսին տեղի ունեցաւ Արեւմըտեան Ասիոյ կրտսերներու աթլեթիզմի 3-րդ ախոյեանութիւնը Ժամհուրի դաշտին վրայ:

Հիւրընկալ երկիրը՝ Լիբանան, հանդիսացաւ ախոյեան, տիրանալով 30 գունաւոր մետալներու (11 ոսկի, 9 արծաթ եւ 10 պրոնզ):

Լիբանանցի մարզիկները մեծապէս արդարացուցին իրենց վրայ դրուած յոյսերը:

Ախոյեանութեան աւարտին Լիբանանի աթլեթիզմի ֆետերասիոնի նախագահ Ռուլան Սաատէ շնորհաւորեց լիբանանցի երկ-

սեռ մարզիկները այս բացառիկ յաջողութեան համար:

Սուրիա հանդիսացաւ երկրորդ, իսկ Սեուտական Արաբիա՝ երրորդ:

Ախոյեանութեան մասնակցեցան տասը երկիրներ:

ԼԻԲԱՆԱՆԻ 42-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԵԼԻ.

ՔԱԹԱՐՅԻ ՆԱՍԵՐ ՍԱԼԵՅ ԱՌԱԶԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ՏԻՐԱՅԱՒ ՏԻՏՂՈՍԻՆ... ԵՐԿԱՐ ՍՊԱՍԵԼԷ ԵՏԶ



Կիրակի, 1 սեպտեմբերին, իր աւարտին հասաւ Լիբանանի 42-րդ միջազգային ռելին, որ կ'իյնայ Միջին Արեւելքի ռելիներու ախոյեանութեան 3-րդ հանգրուանին ծիրին մէջ:

Շաբաթ, 31 օգոստոսին սկսած այս ռելիին 14 անգամ տիրացած (մրցակիշ մը) լիբանանցի Ռոժէ Ֆըղալի, որ իր օգնականին՝ ժոզեֆ Մաթարի հետ կը վարէր «Սքոտա Ֆապիա Ար.-5» ինքնաշարժը, անբախտ դուրս եկաւ: Ան իր ունեցած ինքնաշարժի արկածին պատճառով ռելին չկրցաւ շարունակել:

Այս արկածը առիթ ընձեռեց տարիներով այս ռելիին տիրանալ ուզող քաթարցի Նասեր Սալէի Աթիէին, որ ի վերջոյ իր երազը իրականացնէ, երբ օգոստեւոյ Ռոժէ Ֆըղալիի բացակայութենէն (անոր թիւ 1 մրցակիցը), տիրացաւ Լիբանանի 42-րդ միջազգային ռելիին: Աթիէ, իր ֆրանսացի օգնականին՝ Մեթիու Պոմելի հետ («Վոլֆսվակըն-Փոլօ, Ճի.Թի. Այ.») արձանագրեց 2 ժամ 06՝ 19՝ արդիւնք մը:

Ռելիին աւարտին տեղի ունեցաւ մրցանա-

կաբաշխութիւնը՝ «Ա. Թէ. Սէ. Էլ.»-ի կեդրոնատեղիին մէջ (Զասլիք), Ներկայութեամբ մեծաթիւ հանդիսատեսներու:

ԱՍԻՈՅ «ՄԱՌՆԹԸՆ-ՊԱՅՔ»-Ի 25-ՐԴ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ.

ԼԻԲԱՆԱՆ. ԵՐԿՈՒ ԶԻՆԱՑԻՆԵՐ ԱՊԱՅՈՎԵՑԻՆ ԹՈՔԻՕ-2020-Ի ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ ԻՐԵՆՑ ՏՈՄՍԵՐԸ



Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի կազմակերպած՝ Ասիոյ «Մաութըն-Պայք»-ի 25-րդ ախոյեանութիւնը կիրակի, 28 յուլիսին, հասաւ իր աւարտին երբ կատարուեցան յայտագիրին վրայ գտնուող վերջին մրցումները:

Այս ախոյեանութիւնը տեղի ունեցաւ հովանաւորութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սոհամետ Ֆընէյշի, հսկողութեամբ Ասիոյ հեծելարշաւի ֆետերասիոնին եւ հովանաւորութեամբ «Սքոթ» ընկերութեան:

Ուարտէի հրապարակին վրայ (Զֆարգէպիան, Զեսրուան) վերջին օրուան յայտագիրին մրցումը ընթացաւ բաւական սուր պայքարի մթնոլորտի մը մէջ, նկատի ունենալով, որ մարզիկները կը փորձէին ամէն գնով Թոքիօ-2020-ի ողիմպիականի խաղերուն տոմս մը ապահովել:

Չինացի Յաօ Մա յաջողեցաւ ապահովել Թոքիոյի իր տոմսը՝ 14 երկվայրկեանի առաւելութեամբ գերազանցելով ճափոնցի իր մրցակիցը՝ Զոհի Եամամոթոն: Անկէ առաջ չինացի մը՝ Եան Եա Ուաօ իր կարգին ապահոված էր իր տոմսը՝ աղջկանց մրցումներուն:

Աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշ-

խութիւնը՝ ներկայութեամբ Լիբանանի ողիմպիական կոմիտէի նախագահ Ժան Զամմամի, Զֆարգէպիանի քաղաքապետ Պասսամ Սալամէի, Լիբանանի մէջ գտնուող «Սքոթ» ընկերութեան ներկայացուցիչ Իսամ Մուպաաքի, Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահ Վաչէ Ծատուրեանի եւ ֆետերասիոնի այլ անդամներու, ինչպէս նաեւ՝ մեծ թիւով հանդիսատեսներու:

ՆԱՐԵԿ ՓԱՆՈՍԵԱՆ ԶԱՍՄԻ ՄՈՆ ՊԼԱՆԻ ԳԱԳԱԹԸ



Կիրակի, 25 օգոստոսին, Նարեկ Փանոսեան կարելոր իրագործում մը կատարեց իրեն, իր ընտանիքին եւ լիբանանահայութեան համար, երբ բարձրացաւ Ալպեան լեռներու ամենէն բարձր գագաթը, որ կը կոչուի Մոն Պլան:

Ան մագլցելով հասաւ 4810 մետր բարձրութիւն ունեցող այդ գագաթը, որ ձիւնածածկ էր եւ պաղ՝ մշտական ձիւնին պատճառով:

Բնականաբար, ան այդ նուաճումը իրագործեց կատարելով լեռ մագլցելու յատուկ փորձ, որ կը կոչուի Ալփինիզմ եւ լեռ մագլցողներուն կու տայ յատուկ ցուցմունքներ ու կարելոր գիտելիքներ՝ իրենց ճամբան հեզասահ դարձնելու համար:

Նախքան Մոն Պլանի գագաթը հասնիլը, ան շրջանցեց նաեւ Այկուիլ Տիւ Թուրը, որուն բարձրութիւնն է 3540 մետր:

Զասնելով Մոն Պլանի գագաթը՝ ան այդտեղ պարգեց լիբանանեան դրօշը եւ հայկական եռագոյնը:

ԹԵՐՈՒԱՆՏՕ. ԱԼԵՔՍԻԱ ԱՒԱԳԵԱՆ՝ ԱԽՈՅԵԱՆ. ԶԱՐԼ-ՄԻՇԵԼ ԱՒԱԳԵԱՆ՝ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ



Կազմակերպութեամբ Լիբանանի թեքուանտոյի ֆետերասիոնին 9-10 մարտին, երկու օրերու տեւողութեան վրայ, Մոն լա Սալի մէջ (Այն Սաատէ) տեղի ունեցան Լիբանանի թեքուանտոյի ախոյեանութեան մրցումները:

Աղջկանց (կրտսերներ) 46 քլ դասակարգին մէջ, Ալեքսիա-Մարիա Աւագեան (Մոն լա Սալ) հանդիսացաւ ախոյեան՝ 2 մրցում յաղթելէ ետք Այա Տարուպի (Ռիատի), իսկ աւարտականին արձանագրելէ ետք տպաւորիչ յաղթանակ մը՝ Ռիթա Զատտատի դէմ (Սքաուտրա):

Տղոց (կրտսերներ) 51 քլ դասակարգին մէջ, Զարլ-Միշել Աւագեան (Շանվիլ), յաջորդաբար յաղթելէ ետք Լորենզօ Քարամի (Պուտտա) եւ Էնտրու Իտի (Մոն լա Սալ), հասաւ աւարտականին, ուր սակայն պարտուեցաւ Ռաֆայել Զուտսիէն (Մոն լա Սալ)՝ հանդիսանալով փոխախոյեան:

ԶԱՄԱԳԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐՈՒ ԶԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՅՈՒՄ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐԱԶԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 6 օգոստոսին, Արցախի Զանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ սկիզբ առին 20 տարուան պատմութիւն ունեցող համահայկական 7-րդ խաղերը:

Բացման հանդիսաւոր արարողութեան



PRESS OFFICE OF THE
GOVERNMENT OF ARMENIA
www.gov.am



PRESS OFFICE OF THE
GOVERNMENT OF ARMENIA
www.gov.am



սկիզբը, թատերական ձեռով ներկայացուցան հայոց պատմության ամենևն վառ էջերը:

Ապա, պատուոյ շքախումբին ընկերակցութեամբ մարզադաշտ բերուեցան Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն պետական դրօշակները, որմէ ետք սկսաւ պատւիրակութիւններուն շքերթը, որուն մասնակցեցան աշխարհի տարբեր քաղաքներու հազարաւոր մարզիկներ:

Համահայկական 7-րդ խաղերուն ամենևն մեծ պատուիրակութիւնը ուներ Երեւանի խումբը՝ 373 մարզիկ:

Այնուհետեւ բերուեցաւ Համահայկական խաղերուն դրօշակը, որմէ ետք խաղերուն կրակը վառեցին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեան եւ ուրիշներ:

Ներկաներուն ողջոյնի խօսք ուղղեց Համահայկական խաղերու կազմակերպիչ կոմիտէի նախագահ Իշխան Չաքարեան, որ շեշտեց, թէ խաղերը հիմք կը ծառայեն համահայկական մտածողութեան:

Արցախի հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան իր խօսքը ներկաներուն ուղղելով ըսաւ.

«Այստեղ բոլորդ ձեր տան մէջ էք, ձեր պայենական օճախին մէջ: Համահայկական խաղերուն այս օրերը անմոռանալի հետք պիտի ձգեն, մեզ մօտ: Այս խաղերուն պիտի յաղթէ մեր ժողովուրդը»:

Իսկ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Համահայկական խաղերուն մասնակցողներուն մաղթեց արդար մրցակցութիւն՝ շեշտելով, որ մենք կը դառնանք անպարտելի, երբ միասնական կ'ըլլանք: Ապա ան բացուած յայտարարեց խաղերը:

**5244 ՄԱՐԶԻԿԱՆԵՐ 14 ՕՐ ԱՊՐԵՑԱՆ
ԱՆՍՈՈՒՆԱԼԻ ՊԱՅԵՐ.
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈՆ ՓԱՇԻՆԵԱՆ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԱՄԱՌՆԱՅԻՆ
ԽԱՂԵՐԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՓԱԿՈՒԾ**



Շաբաթ, 17 օգոստոսին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ մեծ հանդիսութեամբ անարտեցան համահայկական 7-րդ ամառնային խաղերը:

20-ամեայ խաղերուն փակման հանդիսութեան խօսք առաւ Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Չաքարեան, որ շնորհակալութիւն յայտնեց խաղերուն իրենց աջակցութիւնը ցուցաբերած բոլոր պետական եւ ոչ պետական կառոյցներուն, մասնակցողներուն, իրաւարարներուն, ինչպէս նաեւ լրագրողներուն:

«Խաղերը հաստատուն կամուրջ դարձան Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի միջեւ», նշեց Չաքարեան:

Ապա ան Հայաստանի փոխվարչապետ

Տիգրան Աւինեանը պարգեւատրեց Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի պատուոյ շքանշանով:

Ներկաներուն հրաժեշտի խօսքը ուղղեց Համահայկական խաղերու հիմնադիր անդամներէն Ալպերթ Պոյաճեան: Ապա ան կոմիտէին անունով Իշխան Չաքարեանին շնորհեց պատուոյ շքանշան:

«Միս համահայկական խաղեր» ճանչցուեցաւ ռուսահայ վոլիպոլ խաղացող Աննա Թունեան: Լաւագոյն մարզական պատուիրակութիւնը՝ Ռուսիա: «Արդար խաղի» (**Ֆէր փլէյ**) մրցանակը ստացաւ Հալէպի պասքէթպոլի աղջկանց խումբը: Համահայկական խաղերուն յայտնութիւնը դարձաւ Տուպայի պատուիրակութիւնը: Կարգապահութեան եւ մարզական ոգիի մրցանակը ստացաւ Վիեննայի խումբը:

Համահայկական խաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով լաւագոյն քաղաքներու պատուիրակութիւններ ճանչցուեցան Էջմիածինի եւ անտրալիական Սիտնիի պատուիրակութիւնները:

Բոլոր մրցանակակիրներուն պարգեւատրեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ապա ան իր արտասանած խօսքին մէջ ըսաւ.

«Համահայկական խաղերուն 14 օրերուն ընթացքին մենք վայելեցինք միասին ըլլալու բերկրանքը: Ապացուցեցինք, որ մենք եւք եւ միասնական ենք: Փակման արարողութիւնը կը խորհրդանշէ, որ աշխարհի բոլոր հայերուն համար կայ մէկ մայրաքաղաք՝ Երեւանը: Անկախ քաղաքական եւ կուսակցական պատկանելիութենէն, մենք միշտ միասնական պիտի ըլլանք: 8-րդ խաղերը անելի մեծ պիտի ըլլան»:

Վարչապետը շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակցողներուն եւ կազմակերպիչներուն, որմէ ետք խաղերը փակուած յայտարարեց:

Այս տարի Համահայկական 7-րդ խաղերուն մասնակցեցան 5244 մարզիկներ՝ աշխարհի 35 երկիրներու 161 քաղաքներէն:

Քանի մը մարզաձեւերու մրցումները տեղի ունեցան Ստեփանակերտի, Մարտակերտի եւ Ասկերանի մէջ, իսկ հիմնական պայքարը

տեղի ունեցաւ Երեւանի մէջ:

Այս տարի Համահայկական խաղերուն կը մասնակցէր 3 նոր երկիր. Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Իրաք եւ Չեխիա:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ.
ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՑԱՒ ՆՈՐ ԱՆՈՅԵԱՆ ՄԸ՝
ԱՐԱՐԱՏ - ԱՐՄԵՆԻԱ**



Հինգշաբթի, 30 մայիսին, տեղի ունեցան Հայաստանի ֆուտպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 2018-2019 տարեշրջանի 32-րդ եւ վերջին հանգրուանի մրցումները:

Բարձրագոյն դասակարգի նորեկ Արարատ-Արմենիա իր նորամուտի տարեշրջանը աւարտեց ախոյեանութեան տիտղոսով:

Վարդան Մինասեանի գլխաւորած խումբը, որ հիւրը եղաւ Բանանցի, 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով հռչակուեցաւ Հայաստանի ախոյեան՝ կէտի մը տարբերութեամբ միայն գերազանցելով Փիւնիկ-Երեւանին, որ տարեշրջանը աւարտեց 60 կէտով:

Արարատ-Արմենիա հիմնուած է 2017-ին:

**«ԵՐՐՈՊԱՅԻ ԼԻԿԱ». ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ
ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՅ**

Իսկ, չորեքշաբթի, 14 օգոստոսին, Արարատ - Արմենիա արձանագրեց պատմական յաղթանակ մը, երբ պարտութեան մատնեց Վրաստանի ախոյեան Սապուրթալոն՝ 2-0 արդիւնքով «Եւրոպայի Լիկա»:

Երթին Արարատ Արմենիա Երեւանի մէջ կրած էր 2-1 արդիւնքով պարտութիւն մը:

Այսպիսով, Վարդան Մինասեանի գլխաւոր-

րած խումբը յաջողեցաւ պատմութիւն կերտել՝ նկատի ունենալով, որ առաջին անգամ ըլլալով հայկական ակումբ մը կը մասնակցի **ՖԻԼԵՅ-ՕՖԻ** հանգրուանին (Դ. հանգրուան):

Արարատ-Արմենիայի այս յաղթանակը շնորհաւորեցին վարչապետ Նիկոլ Փաշինեան, Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնի նախագահ Արթուր Վանեցեան, Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի, երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեան եւ շատ ուրիշներ:

**2019 ՏԱՐՈՒՄԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՐ ՏԻՏՂՈՍՆԵՐ ԵՒ ՄԵՏԱԼՆԵՐ
ԱՊԱՀՈՎԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**



Հայաստանի մարզիկները, 2019 տարուան ընթացքին, իրենց արձանագրած բաւական տպաւորիչ արդիւնքներուն շնորհիւ, տարբեր տեսակի մարզածէւերու մէջ, Հայաստանի համար ապահովեցին բազմաթիւ տիտղոսներ եւ մետալներ:

Ստորեւ՝ անոնց ցանկը.

Արթուր Ալեքսանեան (յունահռոմեական ըմբշամարտ). Եւրոպական խաղերու ախոյեան, աշխարհի ախոյեանութեան արծաթե մետալակիր:

Ռուբէն Ալեքսանեան (ծանրաբարձութիւն). աշխարհի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր, Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Կարէն Ասլանեան (յունահռոմեական ըմբշամարտ). Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Արթուր Ալեւտիսեան (մարմնամարզու-

թիւն). Համաշխարհային ուսանողական խաղերու ախոյեան:

Արսէն Բաղդրեան (ուշու). աշխարհի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Յովհաննէս Պաշքով (կռփամարտ). Եւրոպական խաղերու ախոյեան, աշխարհի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Սլաւիկ Գալստեան (յունահռոմէական ըմբշամարտ). աշխարհի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Սամուէլ Գասպարեան (ծանրաբարձութիւն). Եւրոպայի ախոյեանութեան արծաթէ մետալակիր:

Դաւիթ Գրիգորեան (սամայօ). Եւրոպական խաղերու փոխախոյեան, աշխարհի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Արթուր Դաւթեան (մարմնամարզութիւն). Եւրոպական խաղերու ախոյեան:

Վահագն Դաւթեան (մարմնամարզութիւն) - Եւրոպական խաղերու փոխախոյեան, Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Տիգրան Կիրակոսեան (սամայօ). Եւրոպական խաղերու ախոյեան, Եւրոպայի ախոյեան:

Արսէն Յարութիւնեան (ազատ ոճի ըմբշամարտ). Եւրոպայի ախոյեան:

Արթուր Յովհաննիսեան (կռփամարտ) Եւրոպական խաղերու ախոյեան:

Դաւիթ Յովհաննիսեան (ծանրաբարձութիւն).- Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

Արսէն Ղազարեան (սամայօ)-Եւրոպական խաղերու փոխախոյեան:

Սաքսիմ Մանուկեան (սամայօ)-Եւրոպայի ախոյեանութեան արծաթէ մետալակիր

Արսէն Ղազարեան (սամայօ). Եւրոպական խաղերու փոխախոյեան:

Սիմոն Մարտիրոսեան (ծանրաբարձութիւն). աշխարհի ախոյեան, Եւրոպայի ախոյեան:

Գոռ Մինասեան (ծանրաբարձութիւն). աշխարհի փոխախոյեան:

Յակոբ Մկրտչեան (ծանրաբարձութիւն). աշխարհի ախոյեան, Եւրոպայի ախոյեան:

Գրիգոր Մխիթարեան (սամայօ). Եւրոպայի ախոյեանութեան արծաթէ մետալակիր:

Կարապետ Չալեան (յունահռոմէական ըմբշամարտ)-Եւրոպական խաղերու փոխախոյեան:

Վահագն Չալեան (սամայօ). Եւրոպայի ախոյեանութեան արծաթէ մետալակիր:

Արսէն Զուլֆալակեան (յունահռոմէական ըմբշամարտ). Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր:

ԿՈՓԱՄԱՐՏ.

ԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ԵՐՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ



Կիրակի, 17 մարտին, Հայաստանի ներկայացուցիչ Անուշ Գրիգորեան հանդիսացաւ Եւրոպայի կռփամարտի 18-22 տարեկան դասակարգի ախոյեան, Վլատիքաւքազի մէջ (Ռուսիա) տեղի ունեցած ախոյեանութեան ընթացքին:

51 քլ դասակարգին մէջ, ան իր մղած 3 **ռաունտսոց** պայքարին մէջ յաղթեց ռուս Կելուսիա Կալիւեային:

Գրիգորեան 2014-ին Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ հանդիսացած էր աշխարհի երիտասարդական ախոյեան:

Իսկ 64 քլ դասակարգին մէջ, Անի Յովսէփեան տիրացաւ արծաթ մետալին՝ աւարտականին պարտութիւն մը կրելով ռուս Էքաթերինա Տիննիքէն:

Հայրենի կազմը Վլատիքաւքազ մեկնած էր 10 կռփամարտիկներով:

ՍԱՄՊՕ.

ՏԻԳՐԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ՝ ԵՐՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Սպանական Խիխոն քաղաքին մէջ տեղի ունեցած Եւրոպայի սամայոյի ախոյեանութեան (18-22 մայիս), 52 քլ դասակարգի մրցումներու աւարտականին Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Կիրակոսեան հանդիսացաւ ախոյեան՝ 2-1 արդիւնքով գերա-



զանցելով իր ռուս մրցակիցը՝ Եւգենի Երիովինը:

Այս յաջորդաբար երրորդ տարին ըլլալով կը հռչակուի Եւրոպայի ախոյեան:

Հայաստանի կազմը այս ախոյեանութեան մասնակցեցաւ 19 մարզիկով:

ՀԵՆՐԻԿ ՄԻԽՅԱՐԵԱՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ԻՐ ՀՕՐ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՄԱՐԶԱԴԱՇԻՆ



Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականին միջնապահ Հենրիխ Միխյարեան Շիրակի մարզի Սպանդարեան համայնքին մէջ, կիրակի, 2 յունիսին բացումը կատարեց իր հօրը՝ Երեւանի Արարատի նախկին խաղացող Համլետ Միխյարեանի անունը կրող ֆուտպոլի մարզադաշտին:

Այս մարզադաշտի բացումին նախաձեռնողն էր Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Սամուէլ Ֆարմանեան, որուն ծննդավայրն է Սպանդարեանը:

«Շատ շնորհակալ եմ բոլորին, շնորհակալ եմ, որ կը յիշէք հայրս եւ անոր խաղը: Յոյս ունիմ, որ այստեղ տեղի կ'ունենան արիեստա-

վարժ մրցումներ, եւ մարզը կ'ըլլայ մարզական միջոցառումներու վայր մը: Կը կարծեմ, որ այս մարզադաշտէն լաւ ֆուտպոլիստներ դուրս պիտի գան», ըսաւ Միխյարեան:

Սպանդարեան համայնքի ղեկավար Ալեւտիք Միխյարեան նշեց, որ մարզադաշտին բացումը որոշուեցաւ կատարել Հենրիխ Միխյարեանի Հայաստան գտնուած ժամանակամիջոցին:

Իսկ Ֆարմանեան ըսաւ, որ՝ «Թէեւ այս մարզադաշտին բացումը այդքան ալ մեծ իրադարձութիւն մը չի նկատուիր, սակայն անկա կարելիութիւն պիտի ընձեռէ համայնքի երեխաներուն աւելի մեծ ոգեւորութեամբ մարզուելու»:

Մարզադաշտը վերանորոգուեցաւ պետական պիւտճէի միջոցներով: Անոր համար ծախսուեցաւ 37 միլիոն դրամ:

«ԸՈՆԻՖԱ-2019» ՀԱՐԱՄԱՅԻՆ ՕՍԵԹԻԱ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ ՅԱՂԹԵՑ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Կիրակի, 9 յունիսին, Արցախի մէջ աւարտեցաւ «Ըոնիֆա-2019»-ի Եւրոպայի չճանչցուած երկիրներու ֆուտպոլի ախոյեանութիւնը, երբ տեղի ունեցաւ աւարտական մրցումը:

Հարաւային Օսեթիա 1-0 արդիւնքով յաղթանակ արձանագրեց Արեւմտեան Հայաստանի հաւաքականին դէմ: Մրցումին վերջին վայրկեանին հարաւային Օսեթիոյ բերդապահը զսպեց Արեւմտեան Հայաստանի մէկ փենալթին:

Աբխազիա 3-րդ դիրքի մրցումին յաղթեց Չամերիոյ՝ փենալթիններով (5-4):

Անոր, բացման պաշտօնական հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ, շաբաթ, 1 յունիսին, Ստեփանակերտի մէջ:

Առաջին դիրքին եւ տիտղոսին համար



պայքարեցան 12 խումբեր, որոնք ներկայացուցին Արցախի, Աբխազիոյ, Սեբեյի Լանտի, Նիսի Կոմսուրեան, Տոնեցքի, Սափմիի, Արեւմտեան Հայաստանի, Խամերիայի, Լուկանսքի, Սարտինիոյ, Հարաւային Օսեթիոյ, Պատանիոյ ֆուլթպոլի ֆետերասիոնները:

ԻՆՖԱՆՏԻՆՈ ՎԵՐՈՆՏՐՈՒԵՑԱՒ ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՅ



Փարիզի մէջ տեղի ունեցած ՖԻՖԱ-ի 69-րդ համագումարին, հինգշաբթի, 6 յունիսին, ճիւղերի ինֆանթինո վերընտրուեցաւ ՖԻՖԱ-ի նախագահ:

Ինֆանթինո, որ միակ թեկնածուն էր, իր այդ պաշտօնին վրայ պիտի շարունակէ մնալ մինչեւ 2023:

Չուիցերիական եւ իտալական քաղաքացիութիւն ունեցող 49 տարեկան ինֆանթինո ՖԻՖԱ-ի նախագահ ընտրուած էր փետրուար 2016-ին:

ԱԼԵՔՍԱՆՏՐ ՉԵՖԵՐԻՆ ՎԵՐՈՆՏՐՈՒԵՑԱՒ «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-Ի ՆԱԽԱԳԱՅ

Հինգշաբթի, 7 փետրուարին, 51 տարեկան



սլովենիացի Ալեքսանտր Չեֆերին վերընտրուեցաւ «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-ի նախագահ՝ Հռոմի մէջ տեղի ունեցած «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-ի համագումարին ընթացքին:

Ան այդ պաշտօնին համար առաջադրուած միակ թեկնածուն էր:

Ան սեպտեմբեր 2016-ին ստանձնեց այս պաշտօնը՝ դառնալով «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-ի 7-րդ նախագահը:

Նախապէս ան Սլովենիոյ ֆուլթպոլի ֆետերասիոնին նախագահն էր:

ՄԱՅԱՑԱՒ «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-Ի ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՅԸ



Հինգշաբթի, 6 յունիսին, «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-ի պաշտօնական կայքը հաղորդեց, որ կազմակերպութեան շուտօրոյցի նախկին նախագահ Լենարթ Եոհանսըն մահացաւ: ՖԻՖԱ-ի նախկին փոխնախագահը 89 տարեկան էր:

Եոհանսըն, որ «ԵՈՒ. Ե. ԷՖ. Ա.»-ի նախագահ եղաւ 1990-էն 2007, մրցանիշ մը հաստատեց պաշտօնավարման իմաստով:

2007-ին անոր պաշտօնը վստահուեցաւ ֆրանսացի Միշել Փլաթինիին:

**«ՔՈՓԱ ԱՄԵՐԻԶԱ».
ՊՐԱԶԻԼ ՏԻՏՐՈՍԱԿԻՐ՝
9-ՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ**

Կիրակի, 7 յուլիսին, իր աւարտին հասաւ Պրազիլի մէջ տեղի ունեցած «Քոփա Ամերիքա» ֆուլթպոլի մրցաշարքը, երբ տեղի ունեցաւ աւարտական ճակատումը հիւրընկալ երկրին՝ Պրազիլի եւ Փերուի միջեւ:

Ռիօ տը Ժանէյրոյի «Մարաքանա» մարզադաշտին վրայ տեղի ունեցած այս մրցումին յաղթական դուրս եկաւ Պրազիլ, որ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը, 9-րդ անգամ ըլլալով դարձաւ տիտղոսակիր:

Այսպիսով, Պրազիլի մարզիչ Թիթէի գլխա-



ւորած կազմը բարձրացուց բաժակը՝ 2007-Էս ետք առաջին անգամ ըլլալով:

Երրորդ դիրքի մրցումին, Արժանթին 2-1 արդիւնքով յաղթեց Չիլիին:

**2019-Ի ԱՂԶԿԱՆՑ
ՄՈՆՏԻԱԼ.
ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ՏԻՏՐՈՍԸ**

ՊԱՅՏՅԻՆ ԻՐԵՆՑ ՄՕՏ

Կիրակի, 7 յուլիսին, Լիոնի մէջ (Ֆրանսա) իր աւարտին հասաւ 2019-ի աղջկանց մոնտիալը, երբ տեղի ունեցաւ աւարտական ճակատումը՝ գործող ախոյեան Միացեալ Նահանգներու եւ Հոլանտաի միջեւ:

Միացեալ Նահանգներ տիտղոսը պահեցին իրենց մօտ՝ արձանագրելէ ետք 2-0 արդիւնքով յաղթանակ մը: Այսպիսով, 2015-ին տիտղոսակիր դարձած Միացեալ Նահանգներ չորրորդ անգամ ըլլալով բարձրացուցին աշխարհի ախոյեանութեան տիտղոսը:

Մրցումին ներկայ էին շուրջ 58 հազար հանդիսատեսներ, որոնց կարգին էին նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ



աշխարհի ախոյեան, Ֆրանսայի եւ Փարիզ Սեն Ժերմենի յառաջապահ Բիլիան Մպափէ:

ՎԱՐԴԻՎԱՌ ԳԱՍԱՊԵԱՆ

ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ - ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ 2020

2020-ը յոբելենական տարեդարձներով հարուստ տարի մըն է: Ան կը նշէ Հայ ճեմարանի, Լիբանանահայ Օգնութեան Խաչի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մէջ հաստատման եւ Դպրեվանքի հիմնադրութեան 90-ամեակները: Միաժամանակ, ան կը նշէ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան 25-ամեակը:

2020-ը նաեւ 100-ամեակն է ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի պատմական փաստաթուղթի՝ Մելրի դաշնագրի ստորագրութեան:

- 200-ամեակ հայագետ Ղեւոնդ Ալիշանի ծննդեան
- 195-ամեակ լեզուաբան եւ բանասէր հայր Արսէն Այտընեանի ծննդեան
- 195-ամեակ թատերագիր Գաբրիէլ Սունդուկեանի ծննդեան
- 190-ամեակ բանաստեղծ Ռաֆայել Պատկանեանի ծննդեան
- 185-ամեակ գրագետ Ռաֆֆիի ծննդեան
- 180-ամեակ գրագետ Ղազարոս Աղայեանի ծննդեան
- 160-ամեակ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանեան) ծննդեան
- 160-ամեակ գեղանկարիչ Վարդգէս Սուրենեանցի ծննդեան
- 155-ամեակ ազգագրագետ Ստեփան Լիսիցեանի ծննդեան
- 155-ամեակ լեզուաբան, գրականագետ Մանուկ Աբեղեանի մահուան
- 155-ամեակ Չօր. Անդրանիկի ծննդեան
- 150-ամեակ մանկագիր Խնկո Ապերի (Աթաբէկ Խնկոյեան) ծննդեան
- 150-ամեակ գրագետ Երուխանի ծննդեան
- 150-ամեակ գեղանկարիչ Եղիշէ Թադէոսեանի ծննդեան
- 150-ամեակ դաշնակցական գործիչ Արամ Արամեանի ծննդեան
- 145-ամեակ դաշնակցական գործիչ, գրականագետ Նիկոլ Աղբալեանի ծննդեան
- 145-ամեակ բանաստեղծ Ինտրայի ծննդեան
- 140-ամեակ Խրիմեան Հայրիկի ծննդեան
- 140-ամեակ գեղանկարիչ Մարտիրոս Սարեանի ծննդեան
- 140-ամեակ իմբավար, մանկավարժ եւ երաժշտահան Անտոն Մայիլեանի ծննդեան
- 135-ամեակ հայ երաժշտութեան մէջ բազմաձայնութեան սկզբնաւորման
- 135-ամեակ գրագետ Կոստան Չարեանի ծննդեան
- 135-ամեակ բանաստեղծ Վահան Տերեանի ծննդեան, 90-ամեակ մահուան
- 135-ամեակ գրագետ Ռուբէն Սեւակի ծննդեան
- 130-ամեակ Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադրութեան եւ 30-ամեակ հայրենիքի մէջ կազմակերպական ներկայութեան բացայայտման
- 120-ամեակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի մահուան
- 120-ամեակ արդարահատոյց Արշաւիր Շիրակեանի ծննդեան
- 115-ամեակ ՀՅ Դաշնակցութեան հիմնադիրներէն Զրիստափոր Միքայելեանի նահատակութեան
- 115-ամեակ երաժշտագետ եւ երգահան Մակար Եկմալեանի մահուան
- 115-ամեակ բեմադրիչ Վարդան Աճեմեանի ծննդեան
- 115-ամեակ գրագետ Վախթանգ Անանեանի ծննդեան
- 110-ամեակ գեղանկարիչ Յարութիւն Կալենցի ծննդեան
- 110-ամեակ գրագետ Խաչիկ Դաշտենցի ծննդեան
- 105-ամեակ Հայոց Ցեղասպանութեան
- 105-ամեակ հնչակեան 20 պատասխանատուներու կախաղան բարձրացման

- 105-ամեակ գրագետ Սերո Խանգադեանի ծննդեան
- 105-ամեակ բանաստեղծ Մարո Մարգարեանի ծննդեան
- 100-ամեակ Սելրի դաշնագիրի ստորագրութեան
- 100-ամեակ գեղանկարիչ Ժանսեմի (Յովհաննէս Սեմերճեան) ծննդեան
- 95-ամեակ տուտուկահար Վաչէ Յովսէփեանի ծննդեան
- 95-ամեակ գրագետ Ադասի Այվազեանի ծննդեան
- 95-ամեակ գեղանկարիչ Գեորգ Բաշինջաղեանի մահուան
- 95-ամեակ դաշնակցական գործիչ իշխան Յովսէփ Արղութեանի մահուան
- 90-ամեակ Լիբանանահայ Օգևութեան Խաչի հիմնադրման
- 90-ամեակ Համազգայինի Պէյրութի ճեմարանի հիմնադրման
- 90-ամեակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մէջ հաստատման
- 90-ամեակ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի հիմնադրման
- 90-ամեակ երաժշտահան Էտկար Յովհաննիսեանի ծննդեան
- 90-ամեակ դերասան Խորէն Աբրահամեանի ծննդեան
- 90-ամեակ դերասան Միեր Սկրտչեանի ծննդեան
- 85-ամեակ երաժշտագետ Կոմիտաս վարդապետի վախճանման
- 85-ամեակ երգահան Ռոմանոս Մելիքեանի մահուան
- 85-ամեակ Հայաստանի պատմութեան պետական թանգարանի բացման
- 80-ամեակ դաշնակցական գործիչ, Համազգայինի հիմնադիրներէն՝ Ստեփան Եսայեանի մահուան
- 80-ամեակ դաշնակցական գործիչ Արշակ Զամալեանի մահուան
- 75-ամեակ Բ. Աշխարհամարտի աւարտի
- 75-ամեակ Հայաստանի Ա. Հանրապետութեան վարչապետ Ալեքսանտր Խատիսեանի մահուան
- 70-ամեակ երաժշտահան Արմէն Տիգրանեանի մահուան
- 65-ամեակ բանաստեղծ Վահան Թէքէեանի մահուան
- 65-ամեակ Գարեգին Նժդէի մահուան
- 60-ամեակ դաշնակցական գործիչ Հրաչ Փափագեանի մահուան
- 60-ամեակ արդարահատոյց Սողոմոն Թեխլիրեանի մահուան
- 55-ամեակ ժողովրդական երգիչ Շարա Տալեանի մահուան
- 55-ամեակ երգիծաբան Լեռ Կամսարի մահուան
- 45-ամեակ նորագոյն շրջանի հայ զինեալ պայքարի սկզբնաւորման
- 45-ամեակ Լիբանանի քաղաքացիական պատերազմի (1975-1990) սկզբնաւորման
- 45-ամեակ գեղանկարիչ Մինաս Աւետիսեանի խորհրդաւոր պայմաններու մէջ մահուան
- 40-ամեակ գրագետ Մուշեղ Գալշոյեանի մահուան
- 40-ամեակ գրագետ Վախթանգ Անանեանի մահուան
- 35-ամեակ Սարգիս Չէլթեանի անարգ առեւանգման եւ սպանութեան
- 35-ամեակ Սարգիս Ազնաւորեանի անարգ սպանութեան
- 35-ամեակ Թաթուլ Սուրեանի անարգ սպանութեան
- 30-ամեակ գրագետ Մուշեղ Իշխանի մահուան
- 30-ամեակ Հայ Դատի նուիրեալ Շաւարշ Թորիկեանի մահուան
- 30-ամեակ Պաքուի հայութեան ջարդի
- 25-ամեակ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի գահակալութեան
- 20-ամեակ գեղանկարիչ Գրիգոր Խանջեանի մահուան
- 15-ամեակ վաստակաշատ կրթական գործիչ Մանուշակ Պոյաճեանի մահուան
- 5-ամեակ Ներսէս-Պետրոս ԺԹ. Պատրիարքի վախճանման
- 5-ամեակ բանաստեղծ Չարեհ Խրախունիի մահուան
- 5-ամեակ բանաստեղծ Սարգիս Կիրակոսեանի մահուան
- 5-ամեակ հրապարակագիր, խմբագիր Արփիկ Միսաքեանի մահուան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1 Դեպի Սելրի 100-ամեակ՝ այժմեական հնչեղություն

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏ

3 Ճգնաժամի մեջ՝ իրատեսություն

եւ հաւաքական պատասխանատուություն

6 105-ամեակ ցեղասպանության 130 ամեակ ՀՀ Դաշնակցության

12 Անցեալի եւ ապագայի սահմանագծում

19 Արցախը՝ իբրեւ ՀՀ Դաշնակցության համահայկական
օրակարգի առաջնահերթ կետ

23 Եռամիասնական ջանքերով

25 Փոփոխության հրամայականը

28 Անցնող տարուան մեր բացթողումները

33 Ի պատասխան օրուան պահանջին

36 Արցախի «ինքնավարությունը՝ Պաքուի մատուցմամբ»

40 Հայ դատը 2019-ին

42 Թուրքիա. ճշմարտության ժամը՝ Արիան Պոնզոն

50 Ցեղասպանության փաստերը մարդկության յիշողության դաշտում

56 Սպանության հրամաններ Թալեաթ փաշայի

հեռագիրներն ու Հայոց ցեղասպանությունը

63 Հայ «Նեմեսիս»-ն ու ազգային-պետական գործիչ

Հրաչ Փափագեանը

70 Թուրք եւ գերման վերնախաւը՝ հայոց դահլիճ ու վերացնող

73 Սելրի դաշնագիրը եւ Նախագահ Ուիլսոնի իրաւարար վճիռը

79 Ամերիկացի ժողովուրդին, ներկայացուցիչներու տան

եւ ծերակոյտին մօտ արդէն զարգացած էր

ազատ անկախ Հայաստանի գաղափարը 1895-ին

84 Խելքի գալու եւ Արամի Հայաստանը վերականգնելու ժամանակը

86 Փոստիւթեան քաղաքականութիւն

88 Բարենորոգումի հրամայականը

Յ. Բագրատունի

Ս. Մահերեճեան

Արտակ Սարգսեան

Յակոբ Ուռնայեցի

Արա Պուլուզեան

Վ. Աւագեան

Դոկտ. Մարի Ռոզ Աբուսէֆեան

Վրէժ Արմէն

Վլադիմիր Յովսէփեան

Վահրամ Էմմիեան

Յ. Պալեան

Միքայէլ Հաջեան

Սալբի Գասպարեան

Աւօ Գաթըրճեան

Յարութիւն Իսկահատեան

Ասպետ Մանճիկեան

Յարութ Չեքիճեան

Սերժ Մուրատեան

Դոկտ. Հրայր Ճեպեճեան

Սերժ Գ. Տերտերեան

ԱՆԴՐԱԴԱՐՁ

93 Մեր սրահները

98 Ճնճողուկներու քարանձաւի վարագոյրէն անդին

102 «Ժամանակը արա՞գ կ'անցնի,

կա՞մ ես պարզապէս այդպէս կը զգամ»

106 «Շաքֆէթ Էրմէն». կտոր մը հայ

109 Երանելի Իգնատիոս Մալոյեանի ծննդեան 150-ամեակը

111 Ամենայն հայոց բանաստեղծ՝

Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակը

Կարօ Վ. Մանճիկեան

Մարիանա Պերթիզիլեան-Ղազարեան

Նարե Գալեմբերեան

Սիրուն Սիսեռեան-Հաճեթեան

Տիգրան վրդ. Փիլիպոսեան

Սօսէ Փիլաւճեան

116 Երուանդ Օտեան եւ ընկեր Փանջունին
118 Խաչատուր Աբովեանի ծննդեան 210-ամեայ
յոբելեանին առիթով

Յակոբ Միքայելեան

Ֆատի (Պարգեւ) Պաշխընճի

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻՆ

120 Լիբանանահայութեան ազգային կեանքը 2019-ին
164 «Յառուըրտ Գարակեօզեան» հաստատութեան
2019-ի գործունեութիւնը

Սիլվի Աբելեան

Ժանին Դանիէլեան-Մարգարեան

«ԱԶԴԱԿ»-Ի ՏԱՐԻՆ

168 «Յայ մամուլի տարի»-ն՝ տնտեսական դժուարութեանց
շրջանցման պայքարով յատկանշուած

Ն. Բարսեղեան

186 ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏԱՐԻՆ

236 Տնտեսական ահաւոր տագնապով եւ ժողովրդային շարժումի
ժայթքումով բնորոշուող տարին

Արշօ Պալեան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻՆ

255 Անկայունութիւնը կը տիրէ միջինարեւելեան քաղաքական դաշտին
260 Երոպական ընկերվարական ընտանիքի նուաճումները՝ 2019-ին

Եղիա Թաշճեան

Նաթան Պետրոսեան

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ

266 Յայկական - պարբերական հիւանդութիւն
- Armenian periodic disease

Բժիշկ Կարպիս Յարպոյեան

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

270 Պահպանենք մեր մոլորակը

Շողիկ Տեր Ղուկասեան

ՄԱՐԶԱԿԱՆ

276 Լիբանանեան, հայկական եւ միջազգային
մարզական կեանքը՝ 2019 տարուան ընթացքին

Վարդիվառ Գասապեան

ՏԱՐԵՂԱՐՁՆԵՐ

290 Տարեդարձներ եւ ոգեկոչումներ

Խմբագիր՝ Արշո Պալեան

Էջադրում՝ Անի Փեղիվանեան-Սարգիսեան

Կողքի պատրաստութիւն՝ Գօգօ Զաւանճեան

ՈՒՐԲԱԹ, 3 ՅՈՒՆՈՒԱՐ 2020

الجمعة ، 3 كانون الثاني ٢٠٢٠

ԱԶԴԱԿ ԲԱՅԱՌԻԿ

عدد خاص

93րդ Տարի Թիւ 238 (26225)

عدد ٢٣٨ (٢٦٢٢٥)

ԱԿԿ՝ 5000 Լ.Ո./ՍՈՒՐԻԱ՝ 200 Ս.Ո. **أزتاك** جريدة يومية سياسية وأدبية - المدبرة المسؤولة ايضا درويشيان

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE, TEL.: (01) 258526 - Email: info@aztagdaily.com



Տպագրութիւն՝ Զամազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան